Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

Հրայր Գևորգյան

Երբ լռենք, բայերը կմատնվեն

ԵՎԻՐՈՎՈՒՄ Է
ՄԵԾ ԵՂԵՄՆԻ
ՁՈՀԵՐԻ ՀԻԾԱՅՏԱԿՈՆ

ՀՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԵԹԵ ԼՌԵՆՔ, ՔԱՐԵՐԸ ԿԱՂԱՂԱԿԵՆ

(վեպ – հուշագրություն)

ԵՐԵՎԱՆ
«Լիմուշ» հրատարակչություն
2014

ՀՏԴ 891.981-31 Գևորգյան
ԳՄԴ 84Հ-44
Գ 479

Տեքստը հրատարակության
պատրաստեց **ՀԱՍՄԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ**

Խմբագիրներ՝
Հասմիկ Բաղդասարյան, բ.գ.թ., դոցենտ
Փառանձեմ Մեյթիխանյան, բ.գ.թ., դոցենտ

ԳԵՎՈՐԳՅԱՆ Հ.Մ.

Գ 479 ԵԹԵ ԼՈԵՆՔ, ՔԱՐԵՐԸ ԿԱՂԱՂԱԿԵՆ: Վեպ - հուշագրություն/ Հ. Գևորգյան.- Եր.: Լիմուշ, 2014.- 500 էջ + 4 էջ ներդիր:

Գիրքը պատմում է Վանի նահանգի բնակչության տեղահանության ու կոտորածների մասին: Հեղինակը իր կյանքի պատմության էջերը ներկայացնում է իրական-պատմական իրադարձությունների կիզակետում:

Փաստագրական հարուստ նյութի հիման վրա հեղինակը նկարագրում է ոչ միայն իր ծննդավայրի, այլև հարևան գյուղերի հայ բնակչության դաժան կյանքը թուրք և քուրդ ավազակների տիրապետության տակ քսաներորդ դարի առաջին տասնամյակում, Թուրքիայի պարտադրանքով հայ բնակչության մասնակցությունը Առաջին համաշխարհային պատերազմին, հայերի տեղահանության ու կոտորածների մանրամասները, Սարդարապատի ճակատամարտը, փրկված հայերի կյանքը էջմիածնում:

ՀՏԴ 891.981-31 Գևորգյան
ԳՄԴ 84Հ-44

ISBN 978-9939-64-188-1

© Միսակ Մխիթարյան, 2014

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Աշխարհով մեկ սփռված յուրաքանչյուր հայի հոգում կա մի չսպիացող վերք. դա քսաներորդ դարասկզբին թուրքերի կողմից Արևմտյան Հայաստանի հայերի տեղահանությունն ու ջարդերն են, որն այլ կերպ երբեք չես որակի, եթե ոչ՝ ցեղասպանություն:

Իմ պապերն այդ կոտորածների ու գաղթի այլևս արդեն հուշ և հիշողություն դարձած լուռ վկաներն են:

Հորական պապս՝ Միսակ Մխիթարյանը, ծնվել ու ապրել է Արևմտյան Հայաստանի Էրզրումի (Կարնո) նահանգի Բաբերդ (Բայբուրդ) բերդաքաղաքում: Եղեռնից հրաշքով փրկվել, ապաստանել է Բուլղարիայում, այնտեղից՝ ներգաղթել մայր հայրենիք: Պապս, ցավոք, շատ վաղ է մահացել՝ երեսնական թվականների սկզբին. ունեցել է մեկ զավակ՝ Գարեգին Մխիթարյանը, որի որդին էլ ես եմ ու կրում եմ պապիս անունը՝ Միսակ Մխիթարյան:

Մորական պապս՝ Հրաչյա Գևորգյանը, ծնվել է Արևմտյան Հայաստանի Վանի նահանգի Նորդուզ գավառակի Դիմ գյուղում, եղել է մեկն այն երջանիկներից, որ ջարդերից մազապուրծ փրկվեց (ընտանիքի տասնհինգ անդամներից ընդամենը երկուսը) ու ապաստանեց մայր հայրենիքում: Հնարավորություն ունենալով մեկնել Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ նա հրաժարվեց ու մնաց հայրենի երկրում, հետագայում հաստատվեց Երևանում ու ողջ կյանքը նվիրեց իր երկրի բարգավաճման գործին: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, ծառայել է Թամանյան 89-րդ դիվիզիայում որպես առանձին սակրավոր գումարտակի զինվորական կոմիսար, այնուհետև որպես նույն գումարտակի հրամանատարի քաղգծով տեղակալ: Պարգևատրվել է 5 շքանշաններով և 11 մեդալներով՝ Կարմիր դրոշի շքանշան, Հայրենական պատերազմի I և II աստիճանի շքանշաններ, «Պատվո նշան» շքանշան և այլն: 1946 թվականին զորացրվելուց հետո նշանակվել է կոմունալ-

կենցաղային ու թեթև արդյունաբերության բանվորների արհմիության հանրապետական կոմիտեի նախագահ: Պապս եղել է հանրապետական կարգի անհատական թոշակառու: Մահացել է 1987-ին՝ 84 տարեկան հասակում: Որդիս կրում է նրա անունը՝ Հրաչյա Մխիթարյան:

Հրաչ պապս ոչ միայն փրկվեց, այլև ուժ գտավ իր մեջ թղթին հանձնելու այն դաժան օրերի սարսափելի դեպքերի նկարագրությունները՝ զարմանալի մանրամասներով հիշելով բոլոր բնակավայրերը, ուր հայերին ենթարկել էին դաժան բռնագաղթի, հիշելով բոլոր մարդկանց՝ իր ընտանիքի անդամներին, հարազատներին, համագյուղացիներին, բոլոր ընկերներին, և բոլորին անուն առ անուն:

Հնարավոր չէ առանց հուզմունքի ընթերցել այս գիրքը սկզբից մինչև վերջ. երբեմն ծիծաղում ես պապիս միամիտ ու անկեղծ պատմությունների վրա, իսկ որոշ հատվածներում չես կարող զսպել արցունքներդ:

Ինձ մնում է միայն շնորհակալություն հայտնել բոլոր նրանց, ովքեր ջանք չխնայեցին իմ պապի ձեռագրերը գիրք դարձնել. առաջին հերթին իմ տիկնոջը՝ Հասմիկ Բաղդասարյանին, որը երկար ժամանակ աշխատեց ձեռագրերի վրա՝ վերծանելով որոշ տեղերում անընթեռնելի կամ դժվարընթեռնելի խունացած էջերը՝ կորստից փրկելով մեր ժողովրդի համար այնքա՜ն կարևոր այս վավերաթուղթը:

Մեր բոլոր զրույցների ժամանակ կենսախինդ, պայծառ ուղեղով պապս միշտ անհուն կարոտով էր հիշում իր հայրենի երկիրն ու հարազատներին և հիշեցնում էր, որ հայ մարդը իր նահատակներին երբեք չպետք է մոռանա, հայ մարդը պահանջատեր է:

Թող այս գիրքը Մեծ Եղեռնի 100-ամյակին ընդառաջ հուշարձան լինի մեր բոլոր նահատակներին:

ՄԻՍԱԿ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՀՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՈՒՇԱԳՐԱՎ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայ գրականության մեջ հուշագրական բնույթի աշխատություններ շատ են գրվել: Հատկանշական է, որ դրանց մեջ առանձնահատուկ տեղ ունեն մեր ժողովրդի պատմության շրջադարձային ժամանակաշրջանին՝ XIX դ. վերջին և XX դ. սկզբին վերաբերող հուշագրությունները: Եվ դա պատահական չէ. այդ շրջափուլը նշանավորվում է հայ իրականության մեջ ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության արմատավորմամբ, օսմանյան տիրապետության դեմ հայ ազատամարտի ծավալմամբ: Հենց այդ ժամանակաշրջանին են վերաբերում նաև այն մեծ փորձությունները, որոնց միջով անցավ հայ ժողովուրդը: Նախ՝ Սուլթան Համիդ II-ը, ապա նաև երիտթուրքերը՝ ի պատասխան հայկական հարցի լուծման՝ մեծ տերությունների պահանջի և հայ ժողովրդի ակնկալիքների, ձեռնամուխ եղան հայ ժողովրդի նկատմամբ ցեղասպանության ու հայության հայրենազրկման դիվային ծրագրի կենսագործմանը:

Այսօր հրապարակի վրա կան Մեծ եղեռնի բազմաթիվ վերապրողների հուշագրություններ, որոնք մեկ անգամ ևս փաստում են ինչպես հայության, այնպես էլ մարդկության դեմ XX դարում իրագործված առաջին ցեղասպանության անհերքելի իրողությունը: Այդ իմաստով հատկապես դրվատանքի է արժանի պատմագիտության դոկտոր Վերժինե Սվազլյանի շնորհակալ աշխատանքը: Երկարամյա հետազոտությունների շնորհիվ նա կարողացել է հավաքել ու տարբեր լեզուներով հրատարակել եղեռնի հազարավոր վերապրողների հուշերը: 2013 թ. լույս է տեսել Հայաստանի ազգային արխիվի պատրաստած «Հայերի ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում» ծանրակշիռ եռահատոր ժողովածուն, որում զետեղված են Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից Արևելյան Հայաստանում, Անդրկովկասում և այլուր հաստատված հայ գաղթականներից հիմնականում 1916 թ. գրի առնված ուշագրավ վկայություններ: Մեծ եղեռնի թեմայով ահռելի հուշագրական գրականություն է ստեղծվել հատկապես սփյուռքում:

Ինչպես առհասարակ գենոցիդի, այնպես էլ հայոց ցեղասպանության ուսումնասիրության բնագավառում ստեղծված բազմաբնույթ ու հսկայական նյութի պայմաններում իսկ, վերապրողների թողած հուշա-

գրություններն այսօր էլ շարունակում են մնալ որպես կարևոր սկզբնաղբյուրներ հրեշավոր այդ հանցագործության նորանոր մանրամասների լուսաբանման հարցում: Ահա Հայոց մեծ եղեռնի 100-րդ տարելիցի նախօրյակին այդօրինակ խիստ արժեքավոր ու ուշագրավ հերթական մի աշխատանք ընթերցողի դատին է ներկայացվել Երևանի պետական համալսարանի ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ Հասմիկ Բաղդասարյանի նախաձեռնությամբ: Ինքնատիպ այդ հուշագրության հեղինակը Արևմտյան Հայաստանի Վանի նահանգի Նորդուզ գավառակի Դիմ գյուղում ծնված, 1915-ի հայոց գեհենով անցած Հրաչյա Գևորգյանն է:

Նմանատիպ հրատարակությունների մեջ Հ. Գևորգյանի հուշերն աչքի են ընկնում մի շարք առանձնահատկություններով: XX դարասկզբի Վան-Վասպուրականի մի գողտրիկ հայկական լեռնային գյուղի բնաշխարհի, բնակիչների կենցաղի, սովորությունների, հարևան քրդական աշիրեթների հետ ունեցած փոխհարաբերությունների, երկրամասի ծանր սոցիալ-տնտեսական իրադրության ու հայ գյուղացիության իրավաքաղաքական կարգավիճակի լայն խորապատկերի վրա ներկայացվում է արևմտահայության կյանքը՝ իր ուշագրավ մանրամասներով:

Հեղինակը սույն աշխատանքի ստեղծմանը ձեռնամուխ է եղել արդեն խորհրդային տարիներին՝ հասուն տարիքում: Լինելով բանիմաց ու շրջահայաց մտավորական՝ Մեծ հայրենականի վետերան Գևորգյանը մեծ հմտությամբ մանկության ու պատանեկության տարիներին իր տեսածն ու լսածը ոչ միայն պարզապես թղթին է հանձնել, այլ նաև խորը վերլուծության ենթարկել, կոնկրետ փաստերի հիման վրա տվել ժամանակի բարդ ու խրթին իրադարձությունների հստակ գնահատականներ: Այդ իմաստով, առանց վարանելու կարելի է պնդել, որ տվյալ դեպքում ընթերցողը գործ ունի սկզբնաղբյուրի արժեք ունեցող հետազոտության հետ:

Այսպես՝ հայրենի Դիմ գյուղը մշտապես ներկայացվում է հարևան քրդական ցեղերի բնակավայրերի հետ համեմատության մեջ: Դրա շնորհիվ հնարավոր է դառնում ահռելի նյութ մատուցել ինչպես հայկական, այնպես էլ քրդական կենցաղի վերաբերյալ: Պատանի Հրաչյան՝ Սևուկը, ինչպես փաղաքշորեն նրան կոչում էին ընտանիքում և ընկերների շրջանում, ճակատագրի բերումով հաճախ հայտնվում է իր հասակակից քուրդ պատանիների շրջապատում, յուրացնում քրդերենը, ճաշակում մահմեդականների կողմից իրեն «գյավուր»՝ անհավատ համարելու իրողության դառնությունները, զարմանք ապրում իսլամ քրդուհիներին ամուսնացնելիս ծնողին կալիմ՝ հարյուրավոր ոչխարներ վճարե-

լու սովորույթի առիթով, խորհելու հայ ընտանիքի բարոյական բարձր նկարագրի մասին:

Իրավամբ անհամար բարեմասնություններով օժտված հայ նահապետական ընտանիքի կերպարը կազմում է Հ. Գևորգյանի աշխատանքի ողնաշարը: Տնտեսապես անապահով, իրավական առումով անպաշտպան վիճակը բնավ խոչընդոտ չէ, որ հայ ընտանիքում գերիշխի մարդկային փոխհարաբերությունների հայեցի ու սրբակենցաղ ընկալումը: Մանուկ տարիքում մորից զրկված Հրաչին մայրություն անելու առաքելությունն իրենց վրա են վերցնում ավագ եղբոր՝ Բադալի կին Աչանը և քույր Աննան, որոնք ներկայանում են որպես արևմտահայ կնոջ իսկական տիպարներ:

XX դարի սկզբի բազմահազար հայ գյուղացիական ընտանիքների ծանր վիճակի, մեծահարուստ քրդերից նրանց կախվածության մասին Հ. Գևորգյանը վկայում է. «Չունենալով ապրուստի այլ միջոցներ, նրանք ստիպված էին, դեռ ծմեռը դուրս չեկած, մեկ-երկու ջվալ գարի կամ կորեկ պարտքով վերցնել հարուստից՝ հետագայում կրկնակի չափով վերադարձնելու պայմանով: Այդ կարգի գյուղացիների շարքին էր դասվում նաև մեր ընտանիքը» (էջ 110):

Հ. Գևորգյանը խորը ցավով խոսում է հայության իրավազուրկ վիճակի մասին: Պատմում է, թե ինչպես իր հասակակից քրդերը փորձել են իրեն Ղուրանը համբուրել պարտադրելով, «իսլամադավան» դարձնել: Խիզախ պատանին ոչ միայն հրաժարվել է այդ պահանջից, այլև հանդուգն քայլով պաշտպանել իր արժանապատվությունը և կարողացել փախուստի դիմել: Բայց միշտ չէ, որ հնարավոր է եղել խուսափել օտարների բռնություններից: «Ի՞նչ կարող էր անել (հայ գյուղացին – Ա.Մ.) բարբարոսներին, որոնք յուրաքանչյուր քայլափոխի կողոպտում, հափշտակում, անգամ սպանում էին հայ մարդկանց ու մնում անպատիժ» (էջ 47): Պատանին ցավով հիշում է, թե ինչպես քրդերն իր քրոջն առևանգում են՝ փախցնելով Պարսկաստան և մնում անպատիժ:

Անկասկած, հուշագրության ամենաարժեքավոր մասը Առաջին աշխարհամարտի տարիները ներկայացնող հատվածն է: Ամենայն մանրամասնությամբ ներկայացվում է հայկական գյուղի պատմության տագնապալի տարեգրությունը՝ զորահավաքի հայտարարում, ոստիկանական մշտական ներխուժումներ, սպառնալիքներ, խուզարկություններ, երիտասարդության հավաքագրում, աշխատուժի պակասի պատճառով գյուղատնտեսական աշխատանքների ձախողումներ, դաժան ու կամայական հարկահանություն, ընդհանուր վախի ու սարսափի մթնոլորտ:

12-ամյա Հրաչի պատանեկան տարիների պայծառ հիշողության մեջ մտապահվել է զորահավաքի նպատակով գյուղ մտած թուրք ոստիկանի սպառնալից խոսքը. «…եթե որևէ մեկը ժամանակին չներկայանա հավաքատեղի, ապա նա կհամարվի դասալիք, սուլթանի թշնամի և օրենքի հիման վրա կենթարկվի գնդակահարության, իսկ ծնողներին տանջամահ անելուց հետո կբռնագրավվի նրանց ունեցվածքը» (էջ 138): Վերոհիշյալից գյուղացիների համար պարզ է դառնում, որ հայերի նկատմամբ կա շեշտված անվստահություն, իշխանությունները հայկական բնակավայրերը զորահավաքի միջոցով երիտասարդ ուժից զրկելուց հետո առիթ են փնտրում անցնելու նաև խաղաղ բնակչության տեղահանության ու կոտորածին: Սկսվում է համընդհանուր զորահավաքը, բանակ է զորակոչվում նաև Սևուկի ավագ եղբայր Բադալը: Որոշ ժամանակ անց Բադալը, ռազմաճակատում ազգությամբ հայ գերմանական սպայից լուր ստանալով, որ շուտով հայ զինվորներին կոտորելու են, ստիպված փախուստի է դիմում և վերադառնում գյուղ, ամիսներ շարունակ մյուս եղբոր՝ Մարկոսի հետ թաքնվում իրենց տան թաքստոցում:

Ընթերցողն առանց սարսուռի չի կարող ընթերցել գյուղի բնակչության տեղահանության ու կոտորածի մասին պատմող տողերը: Ջարդին զոհ է գնում նաև Մարկոս եղբայրը: Եղբայրներից Վարդանին և իրեն՝ Հրաչին հաջողվում է մեծ դժվարությամբ ազատվել ոստիկանների ճիրաններից՝ բարեկամ քուրդ Բաժդինի օգնության ու քրոջ՝ Աննայի անդուլ ջանքերի շնորհիվ: Բայց դրանով Հրաչի, Վարդանի և Աննայի ու վերջինիս ընտանիքի ոդիսականը չի ավարտվում: Գյուղից փախուստի դիմած Բադալը թուրք և քուրդ ելուզակների դեմ անհավասար մարտում քաջաբար զոհվում է: Նրա մարմինը կինը՝ Աչանը, Աննան, Հրաչը և Բաժդինը հողին են հանձնում: Փախստականներն ուղևորվում են դեպի Վան քաղաք, ուր հասել էին ռուսական զորքերն ու հայ կամավորականները: Հրաչը թղթին է հանձնում երբեմնի «հզոր» քրդական աշիրեթների անկանոն փախուստի նկարագրությունը, որի ժամանակ քրդերը նահանջելիս իրենց համար ճանապարհ էին հարթում յուրայիններին տրորելով ու սպանելով:

1915 թ. հուլիսին Վանից ռուսական զորքերի անակնկալ նահանջի ու Վասպուրականի հայության ողբերգական գաղթի դրվագների ուսումնասիրության տեսանկյունից ականատես Հրաչյա Գևորգյանի պատմածներն ունեն բացառիկ նշանակություն: Սահմռկեցուցիչ են Բերկրի գետի կիրճում և Աբաղայի դաշտում հայ գաղթականների կոտորածների նկարագրությունները: Այս դաժան տեսարանների կողքին հեղինակը

չի մոռանում խոսել նաև հայ կամավորականների, իր համագյուղացիների, այդ թվում՝ մանկության ընկեր Մնոյի հետ պատանի ընկերներով թշնամու դեմ իրականացրած խիզախ ձեռնարկումների, անգամ՝ վրիժառության մասին:

Բազմահազար գաղթականների նման Հրաչը հասնում է Արևելյան Հայաստան՝ Օրգով, Իգդիր, էջմիածին, Երևան, պատահաբար գտնում եղբորը՝ Վարդանին, կրկին նրան կորցնում, լուր ստանում հայրենի գյուղ Աննայի և նրա ընտանիքի վերադառնալու մասին, մտնում վարժարան ուսանելու, դառնում Սարդարապատի ճակատամարտի ու Առաջին հանրապետության ծննդի ականատեսը: Այսքանով Հրաչյա Գևորգյանի հուշագրության եղեռնապատում էջը, որը տեղ է գտել սույն գրքում, ավարտվում է:

Եղեռնը վերապրած հայ մարդը գրի է առել նաև Խորհրդային Հայաստանում ստեղծած իր կյանքի ևս մեկ տարեգրություն, որի մեջ առանձնակի տեղ ունի Հայրենական մեծ պատերազմում նրա փառապանծ մասնակցության պատմությունը: Կարծում ենք, որ կենդանի լեգենդի վերածված Հ. Գևորգյանի կյանքի այդ անտիպ էջերը ևս արժանի են ուշադրության և առաջիկայում նույնպես կտպագրվեն:

Ամփոփելով մեր խոսքը, ընդգծենք, որ սույն արժեքավոր փաստագրական աշխատության հրապարակումով գրքի հեղինակի թոռ Միսակ Մխիթարյանը, խմբագիրներ Հասմիկ Բաղդասարյանն ու Փառանձեմ Մեյթիխանյանը Հայոց մեծ եղեռնի 100-րդ տարելիցի նախօրյակին հանրությանը հնարավորություն ընձեռեցին մի հայ ընտանիքի կյանքի օրինակով էլ ավելի հստակ պատկերացում կազմելու XX դարի սկզբին մեր ժողովրդի հետ տեղի ունեցած մեծագույն ողբերգության մասին: Սույնով նաև հարստացան մասնագետ-պատմաբանների գիտելիքները՝ խնդրի վերաբերյալ մեր համազգային հայեցակարգային մոտեցուները հստակեցնելու և բռնազավթված հայրենիքն իր օրինական տիրոջը վերադարձնելու հայոց ազգային պայքարի ճանապարհին:

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

Քելե՛, լաո՜

Գիշեր-ցերեկ նույն երգն է իմ ունկերում,
Ձայնի տեղակ ծուխ է ելնում այդ երգից,
Ու ծխի մեջ կսկծում է մի ծերուկ.
«Քելե՛, լաո՜, քելե՛ էրթանք մըր էրգիր»:

Արնոտել է ոտքը ճամփից քարքարոտ,
Մանգաղն ուսած, գաղթի մախաղը մեջքին՝
Դեռ քայլում է սարով, ձորով, աշխարհով.
«Քելե՛, լաո՜, քելե՛ էրթանք մըր էրգիր»:

Աչքերի մեջ համառ մի ուխտ, մի հարցում
Ու մի զարմանք, խեղճ մի զարմանք անմեկին՝
Հարցնում է նա իրեն, բախտին, Աստըծուն.
«Իմա՞լ կեղնի, իմա՞լ չերթանք մըր էրգիր»:

Իր ի՞նչ գործն է, թե կա սահման, ու կա վեճ,
Իր ի՞նչ գործն է, թե կան ռումբեր ու հրթիռ,
Հողի, հոգու միամիտ կանչն է իր մեջ.
«Իմա՞լ կեղնի, իմա՞լ չերթանք մըր էրգիր»:

Իմա՞լ կեղնի, ինքը՝ այստեղ, հողն՝ այնտեղ,
Արտը կծղել, սպասում է իր ձեռքին.
Ինչպե՞ս թողնենք տունն ու ջաղացը անտեր.
«Իմա՞լ կեղնի, իմա՞լ չերթանք մըր էրգիր»:

Ինչպե՞ս խեղդենք խև խռովքը Սասնա տան,
Ինչպե՞ս մարենք այսքան կարոտ, վառք ու կիրք,
Այսքան երազ ինչպե՞ս թաղենք գետնի տակ.
«Իմա՞լ կեղնի, իմա՞լ չերթանք մըր էրգիր»:

Թե աշխարհում արդարություն կա վերուստ,
Ու թե դաշն են Աստված, երկիր ու երկինք,
Պիտի փլվի՛ ամեն պատնեշ, ամեն բան.
Պիտի երթա՛նք, պիտի երթա՛նք մըր էրգիր:

ՄԵՐ ԳՅՈՒՂԸ

Դիմ գյուղը, որտեղ ծնվել են պապիս պապերը և ես, գտնվում է Վասպուրականի աշխարհի Նորդուզ գավառակի հարավարևմտյան շրջանում՝ հեռու-հեռու, ձյունածածկ լեռների մեջ, այնտեղ, որտեղ մեր նախնիները հերոսական պայքար են մղել օտար զավթիչների դեմ իրենց գոյությունը պահպանելու համար, այնտեղ, որտեղ թուրք և քուրդ բարբարոս ցեղապետների մշտական հարձակումների ու կոտորածների թատերաբեմ է եղել, այնտեղ, որտեղ գեղեցիկ լեռնաշխարհը ներծծված է ոչ միայն իմ հարազատների, այլև հազարավոր հայերի քրտինքով ու անմեղ արյամբ:

Սքանչելի էր իմ գյուղը շրջապատող բնությունը. հարուստ էր ձյունածածկ լեռներով, արագավազ գետերով ու բազմաթիվ ջրվեժներով, մանավանդ լայնածավալ արոտավայրերով, որտեղ ամառվա ընթացքում սնունդ էին գտնում ոչ միայն հայերի, այլև թափառաշրջիկ քուրդ քոչվորների հազարավոր մանր եղջերավոր անասունների հոտերն ու արաբական ձիերը:

Իմ հայրենի Դիմ գյուղը սփռված էր Կավասարի ստորոտի մի փոքր հարթավայրում՝ երեք կողմից շրջապատված թանձր կանաչապատ սարերով: Գյուղից ոչ հեռու հոսում էր հորդառատ Տիգրիս գետը, որի երկու վտակներն առատորեն ոռոգում էին շրջապատի արգավանդ հողերը:

Գետի աջ կողմում՝ գյուղի դեմ դիմաց, գտնվում էր մի հսկա գորշագույն քարաժայռ: Վերջինս, սովորական սև ամպին հավասար, օրվա որոշ ժամերի խափանում էր արևի ճառագայթների թափանցումը մարգագետինների վրա:

Տիգրիս գետի ձախ կողմում դեպի երկինք էր խոյացել սքանչելի Ծաղկասարը, որի լանջերը զարդարված էին մշտադալար ու փարթամ բույսերով, իսկ նրա գագաթը տարվա տասնմեկ ամիսներին մշտապես ծածկված էր ձյան հաստ շերտով:

Ծաղկասարի հակառակ կողմում՝ Կապուտակ լճից քիչ ցած, գտնվում էին գյուղի զովաշունչ ու գեղատեսիլ ամառանոցներն իրենց բազմաթիվ աղբյուրներով, հայելանման լճերով: Սարն իր ընդարձակ շրջապատով տարվա երեք եղանակներին մշտապես զարդարված էր խիտ կանաչով, բազմահազար հոտավետ ծաղիկներով:

Գյուղի շրջակայքում կային հին ավերակներ, քանդված վանքեր, անցած դարերի ընթացքում արշավանքների հետևանքով խորտակված բերդերի բեկորներ, սրբապատկերներ, մեծ տապանաքարեր, որոնց վրա պարզ նշմարվում էին մեսրոպյան այբուբենի հետքերը: Կային նաև բազմաթիվ այլ հնություններ, որոնք հիշեցնում էին մեր նախնիների գիտության ու արվեստի ծաղկման մասին, ինչպես նաև նրանց հերոսական անցյալից մնացած անմոռանալի հուշարձաններ:

Այդ հնությունները ցույց էին տալիս, որ մի ժամանակ այդտեղ եղել են հոյակապ շենքեր, ինքնապաշտպանության համար անխորտակելի բերդեր, վանքեր, որոնք կառուցվել են մի ժողովրդի կողմից, որը դարերով ապրել է այս հողի վրա և ապրել է ազատ ու անկախ:

Գյուղի երկու թաղամասերն իրարից բաժանվում էին մի ոլորապտույտ փողոցով, որի աջ ու ձախ կողմերի մեծ քարաբեկորներից շարված ցանկապատերի արանքով անցնում էին արոտից վերադարձող անասունները, իսկ ձմեռվա ընթացքում փողոցը լցվում էր տանիքներից մաքրված ձնակույտերով:

Գյուղի ներքին թաղամասն ամբողջովին պատկանում էր հայերին. նրանց խրճիթներն ավելի մեծ էին ու ընդարձակ՝ իրենց հարթ կտուրներով կպած մեկը մյուսին: Վերին թաղամասում տեղավորված էին գլխավորապես չքավորներին պատկանող խրճիթները, այդ թվում նաև քուրդ բնակչության՝ մեկը մյուսից անջատված գետնափոր խրճիթները, որոնք ավելի փոքր էին ու աղքատիկ:

Քուրդ Օմար աղայի նոր շենքը, որը կառուցվել էր հայերի ուժերով, գտնվում էր երկու թաղամասերից քիչ հեռու՝ փոքրիկ բարձրության վրա: Վերջինս իր դիրքով գրեթե իշխում էր գյուղի բոլոր խրճիթներին ու շրջակայքին:

Գյուղի երկու կողմերից ցած էին հոսում բազմաթիվ սառնորակ աղբյուրներ, իսկ աջ կողմում եղած մեծ քարաժայռի բարձունքից թափվում էր մի ջրվեժ, որը սկիզբ էր առնում Ծաղկասարի լանջերով դեպի մարգագետինները հոսող մայր ջրանցքի պարզ ջրից:

Ջրվեժից ոչ հեռու վեր էր խոյացել 300 տարեկանից ավելի, խիտ ճյուղավորված մի կաղնի, որի ծավալը հավասար էր գորշ ժայռին ու դրա բարձրությանը:

Որքան մեծ էր Շերասվար կոչվող հաստ ծառի տարիքը, այնքան էլ լայն էր դրա բունը, որը մեր պատանիների խաղերի ու զվարճություններ-ի մշտական վայրերից մեկն էր: Օ՜, որքա՜ն հաճելի և քաղցր հիշողութ-

յուններ են կապված այդ ծառի ու նրա փչակի հետ, որոնք անկարելի է մոռանալ:

Գյուղից ոչ հեռու՝ Ծաղկասարի լանջերից, ամեն օր՝ արևածագի հետ, լսվում էին հայ գութանավորների հորովելը, հովիվների սրնգի մելամաղձոտ ձայները, կաքավների կվկվոցը, գառների մայոցը, մանդակ քաղող երիտասարդ կանանց ու աղջիկների երգ ու ծիծաղը:

Գեղեցիկ էր երկու սարերի միջև ընկած կանաչ հովիտը. այն հրաշալի էր մանավանդ գարնան վերջին ամսին, երբ հայերի ամենածաղկուն մասը պատրաստվում էր ամառանոց մեկնելու:

Չնայած միջավայրի գեղեցկությանն ու շրջապատի քաղցրությանը՝ այնուամենայնիվ գյուղի հայ բնակչությունը մշտապես գտնվում էր թուրք բարբարոսների և քուրդ ցեղապետների ու ավազակախմբերի ահ ու սարսափի տակ:

Որքան գեղեցիկ ու հարազատ էր մեր գյուղն իր բնությամբ, նույնքան էլ հարուստ էր բազմաթիվ արտակարգ դեպքերով:

Կտրված լինելով հայաշատ շրջաններից ու քաղաքներից՝ գյուղի հայ ազգաբնակչությունը մեծ մասամբ շրջապատված էր լեռնային շրջաններում բնակվող քուրդ աշիրեթներով[1], իսկ ժամանակ առ ժամանակ՝ նաև քոչվորական ցեղերով:

Մի կողմից թուրքական զավթիչները, մյուս կողմից քուրդ բեկերն ու թալանչիները հանգիստ ու դադար չէին տալիս հայերին: Հայ աշխատավորը երբեք և ոչ մի ժամանակ լրիվ չափով տերը չէր իր հալալ քրտինքով ձեռք բերած բարիքին:

Գտնվելով սեփական մայր հողի վրա՝ մի օր թուրք մյուդիրի[2] հրամանն էր գալիս՝ հարկը կրկնակի գանձելու, մյուս անգամ քուրդ ցեղապետների կողմից թալանվում էր հայ աշխատավորների ոչխարների հոտը, կամ էլ ավազակների կողմից կողոպտվում էր հայ ճանապարհորդը. ամենուր սպանելու ահ ու սարսափն էր, որը երբեք չէր վերանում: Ահա այդ միջավայրում մի օր՝ ուժեղ հրաձգության ժամանակ, մայրս, աղբյուրից դողդողալով տուն վերադառնալիս, երկունքի ցավերից տանջված, ժամանակից շուտ լույս աշխարհ է բերել ինձ:

---

[1] աշիրեթ *(արաբ.)* – քրդական ցեղ, որ ենթարկվում է մի ցեղապետի:
[2] մյուդիր – թուրք կառավարիչ

ՄԱՅՐԻԿԻՍ ՄԱՀԸ

Գյուղական մեծ խրճիթի անկյուններից մեկում խաղում էի նորածին գառնուկի հետ. հանկարծ տեսա անսովոր իրարանցում, կանանց ու աղջիկների բազմություն, լսեցի հեկեկոցներ, կանչեր. «Մեռա՜վ, մեռա՜վ խեղճ մայրս»,– բղավում էր իմ մեծ քույրը՝ Աննան:

Չպատկերացնելով դեպքի լրջությունը՝ ես համառորեն շարունակում էի խաղալ գառնուկի հետ, որը դեսուդեն էր թռչկոտում: Նա թոկով կապված էր. դրա համար էլ հանգիստ չուներ իմ չարաճճի հետապնդումից: Խեղճ անասունը ազատվեց միայն այն պահին, երբ մեր հարևանուհին՝ Ռեհանը, գրկեց ինձ ու դուրս տարավ, իսկ ես զայրացած չէի հնազանդվում նրան ու անընդհատ խփում էի երեսին:

– Ինչո՞ւ, ինչո՞ւ ինձ բաժանեցիր իմ գառնուկից,– բղավում էի ես դառնացած:

– Մայրիկդ քնած է, չպետք է խանգարել,– համոզում էր նա՝ արտասուքն աչքերին:

Նկատելով նրա աչքերից թափվող արտասուքը՝ ես նույնպես սկսեցի լաց լինել, բայց ոչ թե մայրիկիս մահվան, որի մասին պատկերացում անգամ չունեի, այլ գառնուկից բաժանվելու պատճառով:

Իրարանցումը, լացն ու ողբը երկար տևեցին, բայց ես դեռևս չէի պատկերացնում, թե, վերջիվերջո, ինչ բան է մահը: Միայն մի քանի օր հետո, երբ ընկերներիս հետ պատահմամբ մտանք մեր հարևանի խրճիթը, որտեղ մի խումբ կանայք խոսում էին մայրիկիս մահվան մասին, նոր միայն հասկացա անցած օրերի իմ հարազատների լաց ու սուգի իսկական պատճառը: Տանտերը, որին ես լավ ծանոթ էի, խոսում էր այն մասին, թե խեղճ Նարգիզը իր մուրազին չհասավ, տղաներին չամուսնացրեց, իսկ թե ով կխնամի նրանց, միայն Աստծուն է հայտնի: Նստած կանանցից մեկը, որին նույնպես ճանաչում էի, կարեկցանքով ասաց.

– Մեծերը կապրեն, բայց ո՞վ կխնամի նորածին երեխային, որն ընդամենը տասն օրական է:

– Ասում են՝ տղա է և շատ նման փոքրիկ Սևուկին,– ասաց նա՝ չնկատելով, որ հաստ սյան հետևից լսում էի նրանց խոսակցությունը:

– Առո՞ղջ երեխա է, – հարցրեց Շատախից հյուր եկած կանանցից մեկը:

– Չնայած ժամանակից շուտ է աշխարհ եկել, բայց շատ առողջ է,– պատասխանեց Ռեհանը՝ խորը հոգոց հանելով:

– Ինչո՞ւ է ժամանակից շուտ ծնվել,– հարցրեց անծանոթ կինը:

– Թուրք ավազակների հրացանների կրակոցների ու իրեն հետապնդելու պատճառով,– պատասխանեց Ռեհանը:

Հրացան բառը լսելով և մի պահ կարծես թե ուշքի գալով՝ զգաստացա: Չէ՞ որ ես էլ փայտից պատրաստված հրացան ունեի. երեխայական մեծ ավյունով կրակում էի ընկերներիս վրա, «սպանում» Վարդանին, նրա գառնուկին:

Կանանց պատկերավոր զրույցից հետո վերջիվերջո հասկացա, որ իրոք, մայրս մահացել է. մի պահ դադարեցի նրանց լսել, արտասվալի աչքերով դուրս եկա հարևանի խրճիթից ու «մայրի՜կ» կանչելով՝ վազեցի դեպի մեր տուն: Լսելով իմ ձայնը՝ քույրս դիմավորեց ինձ, հուզմունքից ինքն էլ արտասվեց. հենց այդ ժամանակ էլ մեծ ցավով հասկացա, որ մնացել եմ առանց հարազատ մայրիկի:

*
* *

Մեր ընտանիքը բազմանդամ էր՝ հինգ եղբայր ու երկու քույր՝ Աննա և Վարդանուշ: Ծնողներիս յոթ զավակներից ամենասիրված երեխան ես էի: Մեր ընտանիքի բոլոր անդամներն ամենից շատ ինձ էին սիրում, մանավանդ հայրս: Նա սիրում էր ինձ խենթի պես և շատ էր երես տալիս, այդ պատճառով էլ չէի կտրվում նրանից, մայրիկիս մահից հետո կպչում էի նրան ու պոկ չէի գալիս:

Մեր տունը համարյա թե մնացել էր անտեր, երեխաներին խնամող չկար. այդ պատճառով էլ մայրիկիս մահից մի քանի օր անց ամուսնացրին իմ մեծ եղբորը՝ Բադալին. նա կլիներ 18 տարեկանից ոչ ավելի: Հարսանիք չեղավ հասկանալի պատճառով. ամենքս տխրության մեջ էինք, իսկ ամուսնությունը հետաձգել հնարավոր չէր:

Բադալը շատ գեղեցիկ տղա էր՝ բարձրահասակ ու հաղթանդամ, ջլուտ բազուկներով, դուրեկան դիմագծերով: Նրա երեսը դեռ նոր էր ծածկվել նուրբ սև մազերով: Նա այնքան ուժեղ էր, որ գյուղի երիտասարդ տղաներից ոչ մեկը ըմբշամարտի մեջ նրան չէր կարող հաղթել: Նա դեռ տասներկու տարեկան հասակից Գևորգ պապի հետ սկսել էր աշխատել սեփական տնտեսության մեջ և ամենուրեք աչքի ընկել:

Մեր հարսը գյուղի աղջիկ էր, անունը՝ Աչան: Նա գեղեցիկ էր, խելոք, վերին աստիճանի համեստ ու տնարար: Ամուսնության առաջին իսկ օրից մեր բազմանդամ ընտանիքի ամբողջ հոգսը փաստորեն ծանրացավ նրա ուսերին:

Նա իր ամուսնության երրորդ օրը տունը կարգի բերեց, լվացք արեց, լողացրեց ինձ ու ինձնից հետո՝ մեծ եղբորս՝ Վարդանին, և հենց այդ օրվանից մինչև իր եղերական մահը Աչանը փոխարինեց իմ հարազատ մորը: Նրա մայրական գուրգուրանքի շնորհիվ շատ շուտով ընտելացա Աչանին: Նրա հետ գնում էի բանջար քաղելու, ոչխարները կթելու, աղբյուրից ջուր բերելու, տան աշխատանքներում օգնում էի նրան, պանիր, չորթան պատրաստում, միաժամանակ դարձել էի նրա հուշարարը մեծերի հետ խոսելիս: Ըստ սովորության, որպես նորահարս, նրա երեսը միշտ ծածկված էր մետաքսյա կարմիր շալով, իսկ բերանը կապված էր սպիտակ չամբարով[3]: Խոսակցությունը մեծերի հետ կատարվում էր գլխի կամ ձեռքի նշաններով, իսկ շատ ժամանակ հուշարարի դեր ինքս էի կատարում: Դեռ փոքր հասակից ես սիրում էի կատակներ անել: Հայրիկիս հետ խոսելու համար Աչանն ականջիս հուշում էր իր միտքը, իսկ ես հայտնում էի բոլորովին ուրիշ բան. այն ժամանակ նա զայրացած ոտքը խփում էր գետնին, ձեռքերը թափահարում՝ հասկացնելով, որ ճիշտ չեմ հաղորդում իր ասածները:

Մի օր էլ շշուկով ասաց.

– Հայրիկին ասա, որ իր սպիտակեղենը փոխի. վաղը լվացք եմ անելու:

Լսելով մեր խոսակցությունը՝ հայրս հարցրեց.

– Ի՞նչ է ուզում հարսը:

– Ասում է, թե պարսիկները պարկերով չամիչ են բերել մեր հարևան Պտուտանի տուն և բրդով փոխարինում են, թու՛յլ տուր՝ գնանք առնելու, – պատասխանեցի ես՝ լիաթոք ծիծաղելով:

Տեսնելով, որ կեղծում եմ իր ասածը, Աչանն այս անգամ խիստ զայրացած ստիպեց, որ ճիշտն ասեմ: Ի պատասխան նրա պահանջի՝ ես էլ իմ հերթին նրա ականջին հուշեցի.

– Խոստացի՛ր, որ այսօր ևեթ չամիչ կգնես, հակառակ դեպքում միշտ կեղծելու եմ քո ասածները:

Հայրս, լսելով մեր խոսակցությունները, ըստ երևույթին հասկացավ իմ խորամանկությունը և սկսեց ծիծաղել, միաժամանակ հորդորում էր, որ հարսի ասածները ճշտորեն հաղորդեմ իրեն:

Մեր խրճիթը շատ մեծ էր՝ հարթ տանիքով: Կենտրոնում ուներ մի մեծ երդիկ, որտեղից արևի շողերը շեղությամբ թափանցում էին ներս: Խրճիթի կենտրոնում գտնվում էր կլոր մեծ թոնիրը, որը մշտապես

---

[3] չամբար *(ժող.)* – գլխաշոր

ծածկված էր քուրսիով[4], իսկ վերջինս՝ մայրիկիս ձեռքով գործած վարդագույն կարպետով: Ծածկված քուրսին միաժամանակ ծառայում էր որպես ճաշասեղան, որի չորս կողմերում, ըստ հասակի, նստում էին մեր տնեցիները:

Խրճիթի ծածկի երկար հեծաններին ամրություն տալու նպատակով դրանց տակ որպես հենարաններ կանգնեցված էին ութից ավելի հաստ սյուներ: Թոնրից ոչ հեռու մեծ սյունից կախված էր ձեթի ճրագը, որի խավար լույսը հազիվ մի կերպ լուսավորում էր քուրսին և շրջապատը: Երբ տղամարդիկ տանն էին լինում, Աչանը՝ որպես նորահարս, իր կարճլիկ հասակով մշտապես կանգնած էր մնում անկյունում: Հետևելով մեծերի շարժումներին՝ նա սպասում էր, թե ով ինչ կհրամայի իրեն: Այսպես էր եղել Գևորգ պապի ժամանակներում, և այդպես էլ շարունակվում էր այդ հին սովորությունը մինչև մեր օրերը:

Մայրիկիս մահը մեծ ցավ էր պատճառել մեր ընտանիքին. վերևում նկարագրված մեծ տունը ասես օտար էր դարձել բոլորիս համար: Իմ եղբայրներն ու երկու քույրերը միշտ տրտմության մեջ էին, և դա ավելի սաստկացավ, երբ մահացավ իմ փոքրիկ եղբայրը՝ Միրաքը, որի ծծմայրն էր մեր հարևան Ռեհանը: Չնայած երեխային խնամելու համար նա հենց սկզբից անվերադարձ ստացել էր մեկ կթան կով իր հորթով և էլի ամսական որոշակի գումար, սակայն ագահ կինը դժգոհ էր ու վատ էր խնամում երեխային, որի պատճառով եղբայրս, դեռ մեկ տարին չլրացած, մահացավ: Վերջին դժբախտությունից հետո մի օր էլ լսեցինք, որ հայրս մտադրվել է հեռանալ հարազատ գյուղից՝ տանելով նաև մեզ բոլորիս, բայց թե ուր, դեռ չգիտեինք:

ՕՏԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայրս գյուղի գրագետ մարդկանցից մեկն էր. սովորել էր Վանի քաղաքային վարժարանում: Սկզբում Գևորգ պապը որոշել էր տղային քահանա դարձնել, բայց վերջինս կտրականապես հրաժարվել էր և չէր ցանկացել սև սքեմ հագնել: Քաղաքից վերադառնալով տուն՝ նա հայտնել էր, որ ուզում է ուսուցիչ դառնալ, սակայն նրա ցանկությունը մնացել էր անկատար՝ գյուղում դպրոց չլինելու պատճառով: Ի վիճակի չլի-

[4] քուրսի – քառակուսի երեսով մեծ աթոռ, որի տակ տաք օջախն է, իսկ վրան ծածկված է վերմակով կամ ծածկոցով: Ցրտին հավաքվում են քուրսու շուրջ, ոտքերը դնում վերմակի տակ և այդպես տաքանում:

նելով իր մասնագիտությամբ զբաղվելու՝ նա ստիպված էր ժամանակավորապես ծառայության մտնել շրջկենտրոնում՝ որպես թարգմանիչ: Որպես գրագետ ու զարգացած մարդու՝ նրան շատ դեպքերում դիմում էին Աղբակի քուրդ աշիրեթները. այդ պատճառով հաճախակի բացակայում էր գյուղից: Քուրդ ավազակապետ Մերհեի կողմից շարունակ հետապնդվելու պատճառով նա փոխել էր իր մտադրությունը և պատրաստվում էր մեր ընտանիքը տեղափոխել Աղբակի հարուստ քուրդ Հասան բեկի մոտ՝ նրան պատկանող գյուղերից մեկում բնակվելու: Իհարկե, բեկին ձեռնտու էր տարբեր լեզուներ իմացող ու գրագետ մի հայ ունենալ իր կալվածքում, ինչպիսին իմ հայրն էր:

Այդ կապակցությամբ բեկը խոստացել էր ապահովել մեր ընտանիքի անվտանգությունը, միայն թե շուտ փոխադրվեինք: Մենք բոլորս հավաքվել և սպասում էինք հայրիկիս, որը դեռ չէր վերադարձել շրջանից:

Եղբայրներս շշուկով խոսում էին ինչ-որ բանի մասին, բայց թե ինչի մասին, սկզբում ինձ հասկանալի չէր: Նրանց դեմքերից էլ երևում էր, որ դժգոհ են գյուղից հեռանալու հայրիկիս մտադրությունից: Աննան, որ այդ երեկո մեզ մոտ էր եկել, նույնպես դժգոհ էր. խեղճ քույրս արտասվելուց ուղղակի չէր կարողանում խոսել: Սակայն նա ոչինչ անել չէր կարող, քանի որ հայրիկիս որոշումը վերջնական էր, և այլևս ոչ ոք այն փոխել չէր կարող:

Վերջապես հայրս եկավ: Որպես հարգանքի նշան՝ բոլորս վեր կացանք, իսկ Աչանը, իր սովորության համաձայն, երեսը ծածկելով, փախավ մեծ սյան հետևը: Հայրս նստեց. նստեցին նաև մյուսները, բացի Աչանից:

– Պատրաստվե՞լ եք մեկնելու,– հարցրեց նա:

– Ո՛չ, հայրի՛կ, մենք գտնում ենք, որ մեր գնալը նպատակահարմար չէ. դրա համար էլ չենք պատրաստվել,– պատասխանեց Բադալը:

– Վճռված է. պետք է վաղը ևեթ հեռանալ գյուղից. քուրդ բեկի պահանջը մերժել չեմ կարող,– ասաց նա և հորդորեց պատրաստվել մեկնելու:

– Հայրի՛կ, եթե կարելի է, Վարդանուշ քույրիկիս և Վարդանին թողե՛ք ինձ մոտ, ես նրանց կխնամեմ մինչև ձեր վերադարձը,– խնդրեց Աննան:

– Լավ կլիներ,– ասաց հայրս,– բայց Աչանին մենակ թողնել չենք կարող. նրանց նույնպես պետք է տանել, իսկ վարուցանք անելու համար գյուղում ժամանակավորապես կմնան երկու եղբայրներդ,– շարունակեց հայրս,– լավ կլինի՝ նրանց խնամես:

Աննան ուրախացավ, որ երկու մեծ եղբայրները մնալու են գյուղում՝ իր մոտ, բայց միաժամանակ արտասվեց, որ բաժանվելու է մնացածներից:

*
* *

Թուրք և քուրդ ավազակախմբերի շարունակվող հետապնդումներից ու կողոպուտներից ազատվելու նպատակով մեր գյուղի բնակչությունը դեռ վաղուց դիմել էր Հասան բեկին՝ խնդրելով երաշխավորել իրենց անվտանգությունը, իսկ վերջինս, իր հերթին խոստանալով այդ, միաժամանակ առաջարկել էր գյուղի բնակչությանը տեղափոխվել Իլ գյուղ՝ բնակություն հաստատելու: Բեկի խոստման համաձայն՝ մեկ տարի առաջ գյուղացիների առաջին խմբերը սկսել էին գաղթել դեպի նշանակված վայրը, բայց դարանակալ թշնամին, իր ավազակախմբով շրջապատելով հայերին, առաջին իսկ հանդիպման պահին սպանել էր նրանց առաջնորդ Դելոյին ու թալանել նրանց ամբողջ ունեցվածքը: Այդ զազրելի դեպքի պատճառով էլ հայրս կտրականապես հրաժարվել էր Աղբակ մեկնել: Սակայն Հասան բեկը նորից էր պահանջել արագացնել մեր ընտանիքի տեղափոխությունը, հակառակ դեպքում վատ կլիներ մեզ համար: Այս անգամ մերժել բեկի առաջարկը նշանակում էր վտանգի ենթարկել ոչ միայն հորս, այլև մեր ամբողջ ընտանիքին: Հետագա բարդություններից խուսափելու համար նա վճռել էր միառժամանակ գյուղից հեռանալ, իսկ հետագայում հարմար առիթ լինելու դեպքում Աղբակից կարճ ճանապարհով տեղափոխվել Ռուսաստան:

Չնայած դեռ փոքր էի, բայց արդեն շատ ընկերներ ունեի: Թեև անունս Հրաչ էր, բայց բոլորն ինձ Սևուկ էին կանչում: Ահա այդ ընկերներիս հետ էլ անց էի կացնում իմ մանկության լավ օրերը: Ուստի և հաջորդ առավոտ, երբ մերոնք պատրաստվում էին ճանապարհվելու, մի պահ վազեցի իմ ընկերների մոտ՝ վերջին անգամ մնաս բարով ասելու: Բարեբախտաբար ես նրանց տեսա սովորական հավաքատեղիում՝ մեր խրճիթից ոչ հեռու, շերտավոր կողով մեծ ծառի փչակում: Իհարկե, նրանք մեկ օր առաջ իմացել էին, որ մենք գյուղից հեռանալու ենք, բայց ճիշտ օրը չգիտեին, և ահա այդ օրը եկել էր մեր բաժանման ժամը:

Տղաների հետ վերադարձանք տուն այն ժամանակ, երբ եղբայրս ինձ էր որոնում:

Շատ սրտառուչ էր մեր բաժանումը բարեկամների և հարևանների հետ: Աննային ուշքի բերել հնարավոր չէր. նա ամուր գրկել էր ինձ և ան-

վերջ համբուրում էր: Նրա աչքերից թափվող արցունքներից խոնավացել էին այտերս, իսկ իմ մանկական ընկերները, տխրությամբ շրջապատելով մեզ, նույնպես չէին ուզում բաժանվել ինձանից:

Մեր ճանապարհն անցնում էր քրդական գյուղերով, այնպես որ չորս օրվա ընթացքում ոչ մի հայ մարդու չհանդիպեցինք: Հանգստանալու համար կանգ էինք առնում միայն քրդական գյուղերում: Չքավոր գյուղացիները շատ սիրալիր մեզ ընդունում էին, իսկ պատվելուց հետո նույն կարգով ճանապարհ դնում:

Վերջապես չորրորդ օրվա երեկոյան հասանք թուրք-պարսկական սահմանագլխի Բաշկալա քաղաքից դեպի հարավ-արևելք գտնվող Իլ գյուղը, որը փաստորեն պատկանում էր Հասան բեկին:

Հայրս ծանոթ էր գյուղին, նրա բնակչությանը: Նա մեզ ուղիղ տարավ այն խրճիթը, որտեղ պետք է բնակվեինք: Մեզ հատկացված խրճիթը տեսքով նույնն էր, ինչպես մեր հայրենական տունը, բայց վերջինս ավելի փոքր էր, խոնավ ու շատ օտար:

Մեր ապագա հարևան քրդերն օգնեցին մեզ բեռներն իջեցնելու և խրճիթի ներս տեղափոխելու գործում:

Ես ու Վարդանը երկար ճանապարհորդությունից շատ էինք հոգնել, որի պատճառով շուտ քնեցինք:

Հաջորդ օրը՝ առավոտյան, բոլորս էլ վաղ արթնացանք: Բադալն Աչանի հետ սկսեց տեղավորել տան իրերն ու կարգի բերել մեր նոր, բայց օտար տունը:

Հայրս վաղ առավոտյան տնից դուրս էր եկել, բայց շուտով վերադարձավ՝ իր հետ բերելով մի հասակավոր, նիհար տղամարդու: Նա գյուղի հովիվն էր, անունը՝ Շամո:

Շամոն մեզ բոլորիս բարևեց և լուռ նստեց պատի տակ՝ լսելով իրեն անհասկանալի մեր խոսակցությունը:

– Այսուհետև քրիվո[5] Շամոն իր հետ տանելու է նաև մեր ոչխարի հոտը,– ասաց հայրս:

– Իսկ մնացած անասուններն ո՞ւմ խնամքին ենք հանձնելու,– հարցրեց Բադալը:

– Խոշոր եղջերավոր անասունները կխառնենք գյուղի նախրին, իսկ ձին կխնամեմ ինքս իմ շրջագայության ժամանակ,– պատասխանեց նա:

Մինչ հայր ու որդի կորոշեին մեր անասունների խնամքի հարցը, Աչանը տաշտից վերցրեց գիշերվա թխած մի քանի լավաշ հաց և ման-

[5] քրիվո *(քրդ.)* – քավոր, բարեկամ

դակով պատրաստված պանրի հետ դրեց Շամոյի առաջ, սակայն վերջինս ուտելու փոխարեն այն դրեց իր հովվական պայուսակն ու դուրս եկավ տնից, նրան հետևեց Բադալը՝ ոչխարի հոտը նրան հանձնելու:

Նոր բնակավայրում տասն օր մնալուց հետո Բադալը շուտով վերադարձավ հայրենի գյուղ՝ իմ միջնեկ եղբոր՝ Մարկոսի հետ ցանքսերը մշակելու, իսկ մեր ընտանիքի վեց անդամներն այդ օրվանից օտարության մեջ մնացին մենակ:

Հայրս վաղ առավոտյան դուրս էր գալիս, ըստ երևույթին Հասան բեկի կողմից տրված հանձնարարությունները կատարելու համար, իսկ մեր ընտանիքի մնացած անդամները փաստորեն մնում էին խրճիթում և չգիտեին, թե ուր գնան: Միայն ես ու Վարդանն ամեն վաղ առավոտ, մեր ոչխարի հոտը գոմից դուրս բերելով, հանձնում էինք հովիվ Շամոյին, իսկ կովը՝ նախրչի Մստոյին. նույն կարգով էլ երեկոները՝ արոտից վերադառնալիս, ընդունում նրանցից:

Մեր ընտանիքի մենակությունը երկար չշարունակվեց. շատ շուտով մենք ընտելացանք մեր նոր հարևաններին: Նրանք բոլորն էլ չքավոր գյուղացիներ էին. հող և անասուն չունենալու պատճառով աշխատող ձեռքի մի զգալի մասն իրենց գոյությունը պահպանելու նպատակով մեկնել էր Պարսկաստան՝ աշխատելու, իսկ մնացածները՝ որպես հովիվներ ու մշակներ, աշխատում էին Հասան բեկի կալվածքում:

Հովիվ Շամոն հոգատար ու բարի մարդ էր, ինքը պահում էր իր սեփական և չքավոր գյուղացիների ոչխարների հոտն առանց որևէ վարձատրության:

Շամոն ուներ չորս տղա, որոնցից երեքն աշխատում էին Հասան բեկի կալվածքում՝ որպես մշակներ, իսկ մեծը՝ իրենց սեփական տնտեսության մեջ:

Շամոյի կինը և երկու հարսները ընտելացել էին մեզ. համարյա թե ամբողջ օրը մեր տանն էին և օգնում էին Աչանին՝ տնային աշխատանքները կատարելու: Շամոն ուներ նաև յոթ թոռ, որոնցից չորսը ինձ հասակակից տղաներ էին: Մենք փոխադարձաբար այցելում էինք մեկս մյուսի տուն, խաղեր կազմակերպում: Ես նրանց սովորեցնում էի մեր հայկական պարսանետությունը, շինում էի նետ ու աղեղ, իսկ նրանք փայտից հրացաններ և կեռ դաշույններ էին պատրաստում: Իհարկե, վերջինս ինձ համար նորություն չէր. ես նրանցից ավելի լավերն էի պատրաստում:

Մեր խրճիթի շրջապատն այլևս ինձ չէր բավարարում, ուստի Շամոյի թոռների հետ սկսեցի ավելի հեռուները գնալ:

*
* *

Աղբակի շրջանում նույնպես կային գետեր, աղբյուրներ, նաև անտառներ, այն էլ մրգատու ծառերով: Սակայն այստեղ բնությունը այն հրապույրը չուներ, ինչպես մեր հայրենի գյուղում: Մի օր՝ անտառ գնալու ժամանակ, հանդիպեցինք Հասան բեկի տղաներին, որոնք նույնպես մեզ հասակակից էին: Մեր խումբը տեսնելուն պես նրանք անմիջապես շրջապատեցին մեզ: Շամոյի թոռները վախից կամաց-կամաց իրար հետևից չքացան: Իսկ ես տեղիցս չշարժվեցի: Մեզ շրջապատողներից մեկը, որն ուներ իսկական կեռ դաշույն, ձեռքը դրել էր նրա դաստակին ու մեկ նայում էր ինձ, մեկ էլ Շամոյի փախչող թոռներին: Ըստ երևույթին նա ճանաչում էր իր համագյուղացիներին. դրա համար էլ նրանց փախուստին կարևորություն չտալով՝ աստիճանաբար մոտեցավ ինձ:

Դաշույնի դաստակը բռնած տղան, որը բոլորից մեծն էր երևում, հարցրեց.

– Շամոն քո ի՞նչն է:

– Ես բարեկամ չունեմ, Շամոն մեր հարևանն է,– պատասխանեցի ես:

– Ո՞ւմ տղան ես,– հարցրեց նա՝ ձեռքը դաշույնի դաստակից հեռացնելով:

– Հայ եմ՝ Մխիթարի տղան,– պատասխանեցի:

– Ի՞նչ է, դու երկու հա՞յր ունես:

– Ո՛չ, իմ հայրը Մխիթարն է:

– Հայը ո՞վ է,– կրկին հարցրեց նա՝ ավելի մոտենալով ինձ:

Չկարողանալով նրա վերջին հարցին ճիշտ պատասխանել՝ հարկ համարեցի լռել:

Մեր մեջ եղած հարց ու պատասխանից հետո նրանք մեկնեցին դեպի գյուղի ամառանոցները, իսկ ես ճանապարհը չկորցնելու նպատակով հետևում էի նրանց: Քիչ գնալուց հետո նրանցից մեկը՝ տեսնելով, որ հետևում եմ իրենց, հետ-հետ նայելով, կանգ առավ. ըստ երևույթին սպասում էր, որ մոտենամ իրեն: Ճիշտն ասած, այդ պահին խիստ վախեցա. չէ՞ որ նա Հասան բեկի տղան էր՝ Իլ գյուղի տերն ու տնօրենը, և ինչ որ ուզեր, կարող էր անել: Սակայն իմ կարծիքը սխալ դուրս եկավ. շուտով նա մոտեցավ ինձ, ցույց տվեց գյուղի ճանապարհը ու վազելով հասավ իր եղբայրներին, որոնք գնում էին դեպի անտառ, որտեղ գտնվում էր բեկի ամառային պալատներից մեկը:

Թեքվելով դեպի գյուղի ճանապարհը՝ վերջապես հանդիպեցի Շամոյի թոռներին, որոնք ահից թաքնվել էին մոտակա մացառների մեջ: Տեսնելով ինձ՝ Շամոյի մեծ թոռը հարցրեց.

– Ինչո՞ւ մեզ հետ չփախար:

– Ես հո ձեզ պես վախկոտ չեմ,– պարծենկոտությամբ պատասխանեցի ես:

– Նրանք բեկի տղաներն են, աղքատներին հանդիպելիս ծեծում են, դրա համար էլ փախանք,– ազնվորեն խոստովանեց Շամոյի թոռ Գարզին:

– Իսկ ինչո՞ւ ինձ չծեծեցին,– հարցրի ես:

– Դու դեռ նոր ես եկել մեր գյուղ. մի քիչ սպասի՛ր, հետո կտեսնես,– պատասխանեց նա:

Այսպես բեկի տղաների մասին խոսելով՝ մենք խմբով հասանք գյուղ և ցրվեցինք մեր տները:

ՔՈՒՐԴ ԲԵԿԻ ԱՄԱՌԱՆՈՑՈՒՄ

Ամառվա սաստիկ շոգերի պատճառով Հասան բեկի ընտանիքն իրենց ամբողջ ցեղով վաղուց բարձրացել էր ամառանոց: Մոտակա օբաներ[6] էին մեկնել նաև քուրդ գյուղացիների մի զգալի մասը, այդ թվում նաև մեր հարևան Շամոյի եղբայրներն ու բարեկամները: Գյուղում մնացել էին միայն ծայրահեղ չքավոր քուրդ գյուղացիները, որոնք չէին կարող կտրվել գյուղատնտեսական աշխատանքներից: Ամառվա այդ շոգ եղանակներին գյուղում էինք մնացել նաև մենք: Չունենալով հասակակից ընկերներ՝ ես ամբողջ ժամանակ թրև էի գալիս մոտակա անտառներում և վայրի պտուղներ հավաքելուց հետո վերադառնում էի տուն: Այդպես զրկված լինելով ինչ-որ բանով զբաղվելու հնարավորությունից՝ ես կարոտով հիշում էի հարազատ գյուղի իմ հին ընկերներին, որոնց հետ անց էի կացրել իմ մանկության լավ օրերը:

Մի քանի օր ոչ մի տեղ չէի գնացել ընկեր չունենալու պատճառով, իսկ այդ ժամանակ հայրս պատրաստվում էր մեկնել Հասան բեկի ամառանոց: Իմանալով այդ մասին՝ կպել էի նրան ու պոկ չէի գալիս. ուր որ գնում էր, կրնկակոխ վազում էի հետևից՝ պահանջելով, որ ինձ էլ տանի:

---

[6] օբա – 1. ժամանակավոր բնակության տեղ, հիմնականում վրանների տակ 2. վրան 3. ամառանոց

Վերջապես իմ աղաչանք-պաղատանքը իզուր չանցավ: Նա խոստացավ, բայց այն պայմանով, որ դա լինի վերջին անգամ: Բեկն իր մշակներից մեկին ուղարկել էր՝ հայրիկիս ուղեկցելու ըստ երևույթին կարևոր գործի կապակցությամբ՝ հետն էլ բերելով երկու ձի: Չնայած հայրս ձի ուներ, բայց նա ուժեղ չէր, ուստի մենք նստեցինք բերած ձիերը և վաղ առավոտյան՝ դեռ լույսը չբացված, ճանապարհվեցինք բեկի ամառանոց:

Գյուղից դուրս գալով՝ անցանք խոպան մնացած արտերի միջև եղած նեղ արահետով, ապա անտառի միջով անցնող միակ ճանապարհով օրվա կեսին հասանք երկու հանդիպակաց ձյունածածկ սարերի միջով հոսող արագավազ Իլիս կոչվող գետին: Անցնելով գետի հակառակ կողմը՝ մեզ ուղեկցող քուրդ Համզոն խնդրեց մի քիչ հանգստանալ, իսկ ինքը իր հարազատներին տեսնելու համար բարձրացավ ձյունածածկ սարի հակառակ կողմը, որտեղ գտնվում էին չքավոր գյուղացիների օբաները:

Մենք բավական ժամանակ հանգստացել էինք և անհամբեր սպասում էինք Համզոյի վերադարձին: Վերադառնալով օբաներից՝ նա իր հետ բերել էր սաջի[7] վրա թխած բարակ հաց և նոր պատրաստած թարմ պանիր: Հյուրասիրելով մեզ՝ Համզոն խնդրեց ճաշակել իր մայրիկի թխած հացն ու սեփական ոչխարների անուշահամ պանիրը:

Հայրս գիտեր, որ ուտելով Համզոյի տան թխած հացը՝ մենք մշտապես բարեկամանում ենք նրա հետ: Այդպես էր աշխատավոր քուրդ գյուղացու հին պապական սովորությունը: Քուրդ գյուղացու հացն ու պանիրը ուտելուց հետո մենք շուտով ճանապարհվեցինք բեկի ամառանոց: Գնալով մեր ձիերը դժվարությամբ էին բարձրանում սարալանջի թեք ճանապարհով. այնուամենայնիվ, նույն օրվա երեկոյան, երբ արևը դեռ մայր չէր մտել, մենք արդեն բեկի ամառանոցում էինք:

Հասան բեկի սև վրաններն աջից դեպի ձախ, երկու շարքով դասավորված էին մի ընդարձակ, կանաչ հարթ տարածության վրա. այդտեղից ոչ հեռու հոսում էր լայն ճյուղավորված Իլիս գետը՝ որը սկիզբ առնելով Ֆարաշինի լեռներից ցած թափվող գետակներից և պտտվելով ամառանոցի շուրջ, ի վերջո խառնվում էր Տիգրիս գետի ներքին հոսանքին:

Մեր ձիերը կանգ առան աջից երրորդ վրանի առջև, որտեղ մեզ դիմավորեց հովիվ Շամոյի տղան՝ Միրմահմուդը՝ Հասան բեկի մշակներից

---

[7] սաջ *(թրք.)* – երկաթե թիթեղ, որի վրա հաց են թխում կամ հատիկներ աղանձում

մեկը: Մեզ տեղավորելուց հետո նա գնաց բեկի մեծ վրանը՝ մեզ թողնելով անծանոթ միջավայրում:

Շուտով ամառանոցը ամբողջովին ընկղմվեց խավարի մեջ, բացի բեկի մեծ ու սպիտակ վրանից, որի կենտրոնում վառվող խարույկը լուսավորում էր մեզնից ոչ հեռու կապված ձիերին, իսկ շատ հեռվում երևում էին նաև հովիվների վառած օջախների բոցերը, որոնք ընդմիջումներով հանգչում ու նորից թեժանում էին: Օրվա երկարատև ճանապարհորդությունից խիստ հոգնած՝ պատրաստվեցինք քնելու, բայց այդ պահին էլ պղնձե մեծ ու լայն մատուցարանով հարևան վրանից բերեցին մեր ընթրիքը:

Ուտելուց հետո հայրս դուրս եկավ, իսկ ես մենակ, վրանի անկյունում պառկած, լսում էի հովիվների՝ հեռվից եկող կանչերը, անասունների բառաչը, շների հաչոցը, նժույգների խրխինջը, իսկ շատ մոտիկից լսվում էին նաև կանանց շշուկները:

Այդ ընդհանուր ձայների ու գետից փչող զով քամու մեղմ ազդեցության տակ ընկղմվել էի խոր քնի մեջ՝ ընկնելով խայտաբղետ երազների աշխարհը:

Վաղ առավոտյան, երբ գեղեցիկ հորիզոնից դեռ նոր էր թափանցել արևի առատ ճառագայթների առաջին փունջը, մենք արդեն գտնվում էին վրաններից ոչ հեռու՝ կանաչապատ բլրի լանջին, որտեղից պարզ երևում էր Հասան բեկի ամբողջ հարստությունը:

Հազարավոր մանր եղջերավոր անասունների հոտերը փռվել էին բարձրադիր սարերի լանջերով մեկ, իսկ գետի երկու կողմերի հարթ տարածության վրա արածում էին հազարից ավելի արաբական ձիեր ու ջորիներ: Հասան բեկն աշիրների[8] ցեղից էր և շատ հարուստ:

Նա ուներ վեց կին, քսանյոթից ավելի տղա: Նրա մեծ կինը՝ Փարիշան խանումը, Ֆարաշինի հայտնի Օման բեկի աղջիկն էր՝ մնացած բոլոր կանանցից ամենաազդեցիկը, ու միշտ «բռի» մեջ էր պահում մյուսներին: Փարիշանը ուներ մեծ տղա՝ Սադղ անունով. նա բոլոր տղաների մեջ նույնպես ամենից ազդեցիկն էր համարվում: Այդ երկուսը, փաստորեն, իրենց կամքն էին թելադրում մյուս կանանց և երեխաներին:

Բեկի վերջին կինը չնայած հարուստի աղջիկ չէր, բայց ամենից երիտասարդն ու գեղեցիկն էր: Մնացած հինգ կանայք խորապես նախանձում էին և մի շարք անհիմն պատճառներով ուզում էին սևացնել ու վարկաբեկել նրան: Սակայն Զինեն իր գեղեցկությամբ, աշխատասի-

[8] աշիր(ա) – տվյալ դեպքում հեղինակը նկատի ունի Հասան բեկին ենթակա տարածքը ընդարձակ լինելու՝ աշիրեթի հանգամանքը

ությամբ, մանավանդ համեստությամբ վայելում էր ամենքի համակրանքը: Հասան բեկն իր հերթին բոլոր կանանցից ամենաշատը նրան էր սիրում: Բեկի յուրաքանչյուր կին ուներ իր անձնական վրանը, որտեղ տեղավորվում էին իրենց երեխաներով ու սպասարկող աղախիններով: Նրանք, խանդելով միմյանց, թշնամաբար էին տրամադրված մեկը մյուսի նկատմամբ: Նույնպիսի վերաբերմունք ունեին միմյանց հանդեպ նաև նրանց երեխաները:

Մեր գնալու հաջորդ առավոտյան հայրս ինչ-որ տեղ էր գնացել՝ ինձ թողնելով քրդերից մեկի մոտ: Չնայած քաղցած էի, բայց ճաշ բերող կնոջից ամաչելով՝ հրաժարվեցի որևէ բան ուտել:

Հայրս ուշանում էր, իսկ քուրդ Միրմահմուդի մոտ մենակ մնալ չէի կարող, մանավանդ ամեն ինչ անծանոթ էր, բոլորը՝ օտար. կծկվել էի վրանի խոր անկյուններից մեկում և տեղիցս շարժվել չէի կարող: Ասենք, տեղից հեռանալ նույնպես հնարավոր չէր, քանի որ վրանների չորս կողմերում կապված էին մեծ թվով գամփռեր, ուստի դուրս գալու փորձ անելու դեպքում նրանք անմիջապես ինձ կծվատեին:

Այնուամենայնիվ, քուրդ Միրմահմուդի ուղեկցությամբ շուտով դուրս եկա, որպեսզի գտնեի հայրիկիս: Վրանների երկրորդ շարքի առջևով անցնելիս մենք մոտեցանք մի ընդարձակ վրանի, որը մնացածների համեմատ բավականին անշուք էր երևում: Տեսնելով ներսում երևացող կանանց՝ մանկական ամաչկոտությամբ սկսեցի հետ քաշվել, որ հետ փախչեմ, սակայն հենց այդ պահին գորգերի վրա նստած կանանցից մեկը փակեց ճանապարհս ու ներս տարավ: Դա Շամոյի եղբոր աղջիկ Զեյնալն էր՝ Հասան բեկի փոքր կնոջ՝ Զինեի սպասուհին: Տեսնելով նրան՝ նոր միայն հասկացա, որ մենք մտել ենք Զինեի վրանը: Ես դեռ կանգնած էի, երբ վրանում խաղացող երեխաներից մեկը մոտենալով իր մայրիկին, ինչ-որ բան շշնջաց նրա ականջին՝ միաժամանակ հայացքն ուղղելով դեպի ինձ ու Միրմահմուդին: Դա այն տղան էր, որն անտառում Շամոյի թոռների փախուստից հետո, բեկի մյուս տղաներից հետ մնալով, ինձ ցույց տվեց գյուղի ճանապարհը:

– Դու իմ տղաների հետ ծանո՞թ ես,– հարցրեց Զինեն:

– Այո՛,– պատասխանեցի ես:

– Այդ դեպքում միասի՛ն խաղացեք,– ասեց Զինեն՝ միաժամանակ կանչելով մեծ որդուն ինձ ուղեկցելու համար:

Շատ ժամանակ չէր անցել, իսկ ես արդեն ընտելացել էի Զինեի երեք տղաներին: Որպեսզի ակտիվ մասնակցություն ունենայի նրանց

խաղերին, նրանք իմ ցանկությամբ գարմաշոյի[9] դալար շիվեր բերեցին, որոնցից հայկական ձևի նետ ու աղեղ պատրաստեցի, երկու անգամ էլ նետերն ուղղեցի վրանի առջև կապված գամփռի վրա. դրանք հեշտությամբ նպատակին հասան: Նետերից մեկը կպել էր շան աչքին, դրա համար էլ խեղճ անասունը սկսեց գազազել ու քիչ էր մնացել գետնին խփված սեպը տեղահան աներ: Իհարկե, երեխաները շատ զարմացան իմ հնարամտության վրա, ուստի նրանք նույնպես սկսեցին նետեր արձակել, բայց ոչինչ չստացվեց:

Արևն արդեն մայր էր մտնում, իսկ ամառանոցի բնակիչներն ինչ-որ եռուզեռի մեջ կարգի էին բերում վրանների շուրջբոլորը, շտապ կերպով հեռացնում էին շղթաներով կապված շներին: Կանայք զարդարվում էին նոր զգեստներով, իսկ տղամարդիկ՝ իրենց զենքերով: Դեպի հարևան վրանն էին բերում երկուկանթանի մեծ պղինձներ, իսկ բեկի մշակներն արդեն սկսել էին օջախներ պատրաստել: Թե դա ինչ նախապատրաստություն էր, չհասկացա և շարունակում էի խաղալ Ձինեի տղաների հետ, թեև ամեն ինչ շատ տաղտկալի էր, և ոչինչ չէր շարժում իմ հետաքրքրությունը: Ակամայից մտաբերում էի իմ հին ընկերներին՝ Մնոյին, Սարգսին, Արբակին, Ատոմին, որոնց հետ անցկացրած կարճ, բայց քաղցր օրերը հազարապատիկ անգամ ավելի հետաքրքիր էին մեր հայրենի գյուղում, քան օտարության մեջ՝ քուրդ բեկի ամառանոցում: Մեր խաղը շուտով ավարտվեց, բեկի տղաները հեռացան. ըստ երևույթին նրանք իրենց մոր հետ նույնպես պատրաստվում էին Հասան բեկի մեծ վրան գնալու համար: Նրանք տոնական զգեստներ հագած Ձինեի ուղեկցությամբ դուրս եկան ու խմբով շարժվեցին դեպի Հասան բեկի սպիտակ մեծ վրանը, որը գտնվում էր ամառանոցի կենտրոնում:

Բեկի վրանը շատ մեծ էր, որի մեջ կարող էր տեղավորվել երեք հարյուրից ավելի մարդ՝ չհաշված անկյուններում վարագույրներով ծածկված առանձին ննջարանները:

Այդ օրը բեկի ցեղակիցներն ու մոտիկ մարդիկ հավաքվել և սպասում էին մի այլ ցեղապետի, որը գալիս էր Հասան բեկի մեծ աղջկան՝ Զարեին ուզելու: Վրանում շարք-շարք նստած էին զենքերով զինված բազմաթիվ տղամարդիկ և սպասում էին հյուրերի գալուն:

Արևն արդեն մայր էր մտնում, երբ հեռվից երևաց ձիավորների մի մեծ խումբ: Վրանում նստածների մեջ սկսվեց իրարանցում: Ոմանք զին-

[9] գարմաշո *(բրբ.)* – մի տեսակ բույսի ցողուն, որն օգտագործվում է որպես ճիպոտ, կամ որից նետ ու աղեղ են պատրաստում

ված էին հրացաններով, ոմանք կեռ դաշույնները խրել էին իրենց գոտկատեղերը. թվում էր, թե մենամարտի էին պատրաստվում, իսկ Հասան բեկը հանգիստ նստել էր գետնին փռված գորգի վրա՝ փափուկ բարձերին թիկնած: Տասը րոպե չանցած՝ վրանից քիչ հեռու արդեն կանգնեցին երկու հարյուրից ավելի ձիավորներ: Նրանցից մեկը, կեռ դաշույնը գոտկատեղում խրած, աջ ձեռքը դրել էր փղոսկրյա դաստակին, իսկ ձախով բռնել էր պատյանի վերջավորությունը: Նա համարձակորեն մոտեցավ նստածներին և գլուխ տալով Հասան բեկին՝ հարցրեց:

– Նորդուզի Շաքր աղայի հեծյալները ցանկանում են հյուր լինել և խնդրում են Ձեր համաձայնությունը:

– Ղոնաղները[10] ալլահի որդիներն են, մեր գլխի վրա տեղ ունեն, եթե բարի մտադրությամբ են եկել,– պատասխանեց Հասան բեկը:

Ձիուց իջած քուրդն առանց որևէ խոսք փոխանակելու նույն դիրքով հետ գնաց և, իր տիրոջ ձիու սանձը բռնելով, հայտնեց բեկի պատասխանը:

Շաքր աղան, որը դեռ նժույգից վայր չէր իջել, ձեռքի նշանով հասկացրեց ձիավորներին իջնել: Այդ նույն պահին Հասան բեկի մշակները վազեցին դեպի ձիավորները՝ բռնելու մեծավորների արաբական ձիերի սանձերը, իսկ տանտիրոջ միջնեկ եղբայրն առաջնորդեց եկածներին դեպի վրանի կենտրոն, որտեղ նստած էր ինքը՝ Հասան բեկը:

Հյուրերը Շաքր աղայի գլխավորությամբ գլուխ տվեցին բեկին և անմիջապես նստեցին իրենց համար նախօրոք դասավորված բարձերի վրա՝ առանց որևէ խոսք փոխանակելու:

Նստած հյուրերի առաջին շարքերը զինված էին կեռ դաշույններով, երկրորդ շարքում տեղավորված մարդիկ ունեին ոչ միայն սառը, այլև տաք զենքեր, իսկ Շաքր աղայի մնացած մարդիկ վրանից ոչ հեռու մնացին կանգնած:

Եկածներից ամենահասակավորը՝ երկար մորուքով շեյխը, հակիրճ կերպով հայտարարեց, թե իրենք եկել են Հասան բեկի աղջկա՝ Զարեի ձեռքը խնդրելու Շաքր աղայի որդու համար, և նորից նստեց իր տեղը:

Ըստ քրդերի պապական սովորության՝ աղջկա ազգականների կողմից որևէ մեկը պետք է պատասխան տար հարս ուզողներին: Եվ ահա այդ դժվարին պարտականությունը հանձնարարված էր իմ հայրիկին: Նա, լավ տիրապետելով ասիացի ժողովուրդների մի քանի լեզուների և իմանալով նրանց սովորությունները, առաջին անգամ չէր, որ

[10] ղոնաղ *(բրբ.)* – հյուր

ծառայություն էր մատուցում քուրդ բեկերին: Նա, շեյխին պատասխան տալու համար Հասան բեկի նշանով երկու քայլ առաջ գալով, հայտարարեց.

– Հարգելի՛ աշիրներ, մեր թանկագի՛ն հյուրեր, բարով եք եկել, հազար բարով, մեր գլխին տեղ ունեք, բեկի թանկագին աղջկա գլուխը արժե հինգ հարյուր ոչխար, քսանյոթ արաբական ձի, հիսուն ջորի, հազար հատ օսմանյան ոսկի և բեկի քսանյոթ տղաներին՝ մեկական քուչաչափ հրացան:

Այս ամենն ասելով՝ նա հետ գնաց ու կրկին նստեց իր տեղը:

Ի նշան իր համաձայնության՝ Շաքր աղան գլուխը խոնարհեց. դա նշանակում էր, որ համաձայնությունը կայացված էր, և երկու աշիրյան ցեղերի մեջ թշնամություն չէր լինի:

Քրդերի նշանդրեքի արարողությանը մասնակցելուց հետո ես ու հայրս հեռացանք:

Առավոտյան սովորականից շուտ հայրիկիս հետ դուրս եկանք վրանից՝ նայելով, թե ինչ է տեղի ունենում ամառանոցի առջև փռված լայն հրապարակում, որտեղ երկու քուրդ աշիրների զինվորներն իրենց ղեկավարների գլխավորությամբ կազմակերպել էին ջիրիդ[11]: Այդ օրն ամբողջ դաշտը կորել էր փոշու մեջ: Մրցողները բացի ձիարշավից, նաև կրակում էին օդի մեջ, սրերը շպրտում մեկը մյուսի վրա: Չնայած կռիվ չէր, բայց և այնպես երկու կողմերից էլ կային բավականին թվով վիրավորներ:

*
* *

Բեկի աղջիկ Զարեն տասնհինգ տարեկան էր՝ սև աչքերով, բարակ հոնքերով. նրա երկար մազերը հասնում էին մինչև ոտքերի սրունքները, իսկ ինքը բավականին սև էր և ոչ այնքան գեղեցիկ: Հետաքրքրությամբ նայելով Զարեին՝ ակամայից մտածում էի, թե այդ փոքրիկ սև աղջիկն ինչ առավելություն ուներ մեր հարս Աչանի նկատմամբ, որին մեր տուն բերելիս գոնե մի մաքի էլ չտվեցինք, այլ ընդհակառակը, ինքն էր բերել մի շարք նվերներ: Վերջապես Զարեն ինչո՞վ էր լավ իմ քույր Վարդանուշից, որն ավելի գեղեցիկ էր և աշխատասեր: Այդ հարցի պատասխանը սկզբում չէի գտնում, բայց հաջորդ օրը, երբ վերադառնում էինք գյուղ, հայրիկս մանրամասն բացատրեց, որ աղջիկ ծախելը քրդերի

[11] ջիրիդ – ձիարշավ՝ հեծյալ տղաների մրցախաղ, որի ժամանակ ձիերը քշելով իրար մականներով հարվածում են

պապական սովորությունն է: Չէ՞ որ նրանք աշիրներ են՝ հարուստ քոչ-վորներ, նրանցից ամեն մեկն ուներ անհաշիվ ոչխարների հոտեր, հա-զարավոր արաբական ձիեր, ջորիներ, որոնք ձեռք էին բերված ուրիշնե-րից կռվի ու կողոպուտի միջոցով:

Հասնելով մեր տուն՝ ես շատ էի ուրախացել. առաջինը, որ շուտ ազատվեցինք անծանոթ միջավայրից, մանավանդ անտանելի ժխորից, և երկրորդ՝ մեզ մոտ էր եկել Աննայի ամուսին Բալաբեկը, որին սրտա-տրոփ սպասում էինք բոլորս:

*
* *

Բարի սիրտ ունեցող Շամոյի օգնությամբ այդ ձմռանից շատ դժվա-րությամբ, բայց դուրս եկանք. մինչդեռ ինձ թվում էր, թե այն տասը տա-րի տևեց:

Վերջապես եկավ գարունը, և ես նորից սկսեցի դուրս գալ, բայց առանց առնչվելու քուրդ երեխաների, հատկապես բեկի տղաների հետ: Ամառանոցից վերադառնալիս մենք ընդհարվել էինք միմյանց հետ, և եթե չլիներ Զինեի եղբայր Ահմեդը, ապա բեկի տղաները ինձ կսպա-նեին: Այդ պատճառով էլ Աչանն արգելեց ինձ որևէ տեղ գնալ:

Ես արդեն հաշտվել էի մենակությանս ու մնում էի տանը՝ օգնելու Աչանին՝ մեր անասունները խնամելու: Մի օր էլ, երբ հայրս զբաղված էր իր սովորական գործերով, Շամոյի թոռները Զինեի մեծ տղայի հետ ինձ խաբելով տարան անտառ ու ստիպեցին կատարել այն, որից ավելի շատ էի սարսափում, քան թե մահից:

– Դե՛, համբուրի՛ր Ղուրանը, որպեսզի մահմեդական դառնաս,– առաջարկեց Զինեի տղան:

Իհարկե, ես տեղում կմեռնեի, բայց այդպիսի բան անել չէի կարող: Այնուամենայնիվ, քիչ խորհելուց հետո դանդաղորեն մոտեցա Շամոյի թոռան ձեռքին գտնվող հաստ գրքին և նայեցի չորս կողմս՝ որոնելով, թե որտեղից կարելի էր փախչել: Մի պահ կանգ առա, հետո խոնարհվե-լով «սուրբ» Ղուրանի վրա, իբր թե կարդում եմ, միանգամից թքեցի վրան ու դիմեցի փախուստի:

Քուրդ տղաները սկզբում ապշեցին. նրանց մտքով անգամ չէր անցնի, թե մի աղքատ հայ տղա համարձակություն կունենա թքել իսլա-մի սուրբ գրքի վրա: Մինչ նրանք ուշքի կգային, խիտ անտառի միջով ես արդեն բավականին տարածություն էի անցել՝ արագ փախչելով դեպի տուն: Իհարկե, նրանք ինձ ներել չէին կարող. հինգ տղաները, իրենց

սուրբ Ղուրանը թողնելով անտառում, միասին հետապնդում էին ինձ: Ծանոթ լինելով տեղանքին՝ նրանք կարճ ճանապարհով շուտով կարողացան փակել իմ փախչելու միակ ուղին, և ես փաստորեն մնացի հետապնդողների օղակի մեջ: Փախչելու ուրիշ ելք չունենալով՝ ստիպված էի դիմել ինքնապաշտպանության:

Շամոյի թոռները, ինչպես միշտ, այս անգամ էլ վախկոտությունից չհամարձակվեցին մոտ գալ, իսկ Զինեի տղան կամաց-կամաց մոտեցավ և ձեռքում բռնած մեծ քարը նետեց դեպի ինձ, բայց վրիպեց: Իհարկե, ես կարող էի պատասխան հարված տալ նրան, եթե այդ պահին չլիներ թիկունքից մոտեցող Զինեի եղբայր Ահմեդը: Նա առաջարկեց ձեռքիս բռնած քարերը վայր գցել և մի շեղ հայացք էլ գցեց Շամոյի թոռներին՝ հասկացնելով նրանց, որ անմիջապես հեռանան, իսկ Զինեի տղային համոզելով տուն տարավ:

Այդ դեպքից հետո երկար ժամանակ փակված մնացի խրճիթում՝ չհամարձակվելով դուրս գալ: Վախենում էի ոչ թե Շամոյի թոռներից, այլ բեկի տղաներից, որոնք հաստատ որոշել էին ինձ գյուղի շեյխի մոտ տանել՝ դավանափոխ անելու, դրա համար էլ ամեն կերպ խուսափում էի նրանց հանդիպելուց:

Մի օր էլ նախրչի Մստոն մեր կովը արոտի չէր տարել. խեղճ անասունը մնացել էր ծարավ ու շարունակ բառաչում էր:

– Սևո՛ւկ, կովը ծարավ է, տա՛ր աղբյուրը՝ ջուր խմելու,– առաջարկեց Աչանը:

– Մենակ չեմ տանի,– պատասխանեցի ես:

– Ինչո՞ւ, չլինի՞ թե վախենում ես,– հարցրեց նա:

Անշուշտ, ես վիրավորվեցի, քանի որ այդպիսի խոսք դեռ ինձ ոչ ոք չէր ասել: Դրա համար վրդովված դուրս եկա և, արձակելով կովին ու առաջս առնելով, տարա աղբյուր: Ձեռքումս բռնել էի եղբորս հովվական մեծ կոպալը[12], որը մինչ այդ մեզանից ոչ մեկը տնից դուրս չէր հանել: Գնալով դեպի աղբյուր՝ ես հաստատ վճռել էի, որ եթե Շամոյի տղաները կամ որևէ մեկ ուրիշը համարձակվեին հարձակվել ինձ վրա, ապա ձեռքիս բռնած կոպալով ջարդելու էի գլուխները: Բարեբախտաբար, մինչև աղբյուրին հասնելը ոչ ոք ինձ չպատահեց:

Կովը մի ամբողջ օր ջուր չէր խմել, ուստի հանգիստ իր ծարավն էր հագեցնում: Հանկարծ աննկատ աղբյուրին մոտեցավ շեյխ Խդիրը: Ես անհամբեր սպասում էի, թե անասունը երբ կհագեցնի իր ծարավը, որ-

[12] կոպալ – ծայրը գունդ, բռունցքի պես հաստ գլխով մահակ, ձեռնափայտ, բիր

պեսզի շուտ հեռանամ աղբյուրից, բայց ուշ էր արդեն. մինչ կշրջվեի, նա փակեց իմ վերադարձի ճանապարհը:

– Ա՛ռ, գյավուրի՛[13] որդի, լի՛ց իմ լուլկան[14],– հրամայեց շեյխը:

Ես ստիպված էի կատարել հրամանը, սակայն իմ անզգուշության հետևանքով լուլկայի կանթը բռնելիս բթամատս կպավ նրա ձեռքին: Հենց այդ էլ պատճառ դարձավ մեծ հավատացյալի կատաղությանը: Մինչ շեյխը զբաղված էր նամազով, մի պահ փորձեցի հեռանալ, սակայն նա իր ազդու հայացքով ինձ կանգնեցրեց:

– Դե՛, աղոթի՛ր ալլահին, որ մահմեդական դառնաս,– ասաց շեյխը՝ միաժամանակ իր գավազանով երկու անգամ հարվածելով ինձ:

Ձայրույթից սիրտս բաբախում էր. թոկով կապված նորածին հորթի պես սկսեցի պտտվել նրա գավազանի շուրջն ու միանգամից պոկվելով գազանից՝ մի շնչով փախա մինչև մեր տուն՝ աղբյուրի մոտ թողնելով իմ եղբոր մեծ կոպալը:

ՕՏԱՐ ՔԱՂԱՔՈՒՄ

Հաջորդ առավոտ Աչանը հայտնեց, որ հայրս կարևոր գործով մեկնելու է Բաշկալա քաղաք և երեք օր մնալու է այնտեղ: Իմանալով այդ մասին՝ սկզբում մի պահ տխրեցի՝ մանավանդ զգալով, որ մնալու եմ մենակ, այն էլ թշնամիների մեջ: Երեկոյան՝ հորս տուն գալուն պես, սկսեցի արտասվել՝ խնդրելով, որ ինձ էլ տանի Բաշկալա: Իհարկե, ինչպես միշտ, այս անգամ էլ չեմուչում արեց, սակայն իմ ձեռքից պրծնել չկարողացավ: Գիշերն անգամ հանգիստ չտվեցի նրան, ուստի տեսնելով, որ շատ եմ նեղում, վերջիվերջո համաձայնվեց: Վաղ առավոտյան թամբելով մեր ձին՝ երկուսով ճանապարհ ընկանք դեպի քաղաք:

Իլ գյուղից դեռ ոչ մի տեղ չէի գնացել. առաջին անգամ էի լինում օտար քաղաքում: Բաշկալա քաղաքը մեր գյուղին նման չէր. այստեղ մեկ-երկուհարկանի տներ կային, որոնք շրջապատված էին կավե պարիսպներով, խրճիթների երդիկները չէին երևում, ունեին ապակե լուսամուտներ. այդպիսին մինչ այդ չէի տեսել, դրա համար էլ չտեսի պես աչքերս չռած՝ նայում էի դեսուդեն՝ ինձ վրա հրավիրելով երթևեկող քաղաքացիների ուշադրությունը:

---

[13] գյավուր – մահմեդականների կողմից ոչ մահմեդականներին, հատկապես հայերին ասվող նախատական բառ, անհավատ

[14] լուլկա, *նույնն է՝* լուլիկ – սափոր

Ձիուց իջնելով, նրա սանձից բռնած՝ ծուռումուռ փողոցներով առաջացանք դեպի քաղաքի շուկան: Փողոցը շատ նեղ լինելու պատճառով անցնող մարդիկ բեռներով բարձած ավանակների հետ, իրար հրելով, դժվարությամբ էին առաջ շարժվում: Առաջին անգամ ինձ համար շատ հետաքրքիր էր մարդկային այդ իրարանցումը: Փողոցով դեպի շուկա գնացող մարդիկ տարբեր ձևի ու գույնի հագուստներ էին հագել՝ նեղ շալվարներ, կարմիր գլխարկներ, որոնք մեր հագուստներին բոլորովին նման չէին: Անցուդարձ անողների թվում նաև կանայք կային, որոնք ծածկված էին սև չադրաներով: Առաջին հայացքից ինձ թվաց, թե նրանք կարծես մտել են սև մազից գործված ջվալի մեջ:

Մենք մեծ դժվարությամբ հասանք քաղաքի խառնիճաղանջ շուկայի կենտրոն: Հայրս, ձիու սանձը հանձնելով ինձ, մտավ խանութներից մեկը, որի տերն ըստ երևույթին ծանոթ էր նրան: Դռան մոտ կանգնած լինելով՝ ես նկատեցի, թե ինչպես նա մոտեցավ ծղոտե բազկաթոռին նստած, կարմիր ֆեսը գլխին խանութպանին, որը թուրքերեն լեզվով հաճախորդներին հրավիրում էր՝ իր ապրանքները գնելու: Հայրս մայրենի լեզվով բարևեց նրան, վերջինս նույնպես հայերեն պատասխանեց: Իհարկե, վերջին մեկ տարվա ընթացքում ես ոչ մի հայ մարդու չէի հանդիպել, ուստի շատ ուրախացա՝ լսելով մայրենի լեզվով թեկուզ մեկ բառ: Խանութի տերը մեր ձին դռան օղակից կապելուց հետո մեզ հրավիրեց նստել պատի երկայնքով դրած փայտե նստարանին: Հայրս նստեց, իսկ ես կանգնած մնացի նրա կողքին՝ հայացքս գցելով խանութում եղած ապրանքներին: Խանութպանը, վերջացնելով իր առևտուրը հաճախորդներից մեկի հետ, մոտեցավ հայրիկիս ու սկսեց երկար ու բարակ խոսել: Նրանք թուրքերեն էին խոսում, իսկ որևէ մեկի՝ խանութ մտնելու պահին խոսակցությունը փոխարինում էին մայրենի լեզվով, բայց թե ինչի մասին էին խոսում, ես այդպես էլ չէի հասկանում:

Մի կողմից նրանց խոսակցությունը, մյուս կողմից էլ հաճախորդների հարցուփորձը ինձ համբերությունից հանեցին, որի պատճառով ստիպված էի խանութից դուրս գալ: Հետաքրքրության համար առանց հայրիկիս թույլտվության հեռացա ու սկսեցի շրջել շուկայի խանութները: Քանի առաջ էի անցնում, այնքան շատ էի հետաքրքրվում իմ տեսածներով: Շուկայում ամեն ինչ խառնիճաղանջ վիճակում էր՝ ծածկված խանութներում վաճառում էին տարբեր տիպի կտորներ, կանանց և տղամարդկանց հագուստ, գլխի շալեր, կարմիր մետաքսից գործած դուգուրներ,[15] սև մահուդից մեծ թոփերով կտորներ և այլն: Մեկ ուրիշ

[15] դուգուր – ճակատին կապվող ասեղնագործ կտոր, որի վրա շարվում էին հուլունքները

տեղ վաճառում էին մատնոցներ, կոճակներ, թել ու ասեղ, իսկ դրսում՝ ուղղակի գետնին, փռված էին չամիչ, խուրմա, ընկույզ, ձմերուկ, սալոր և այլևայլ հատապտուղներ: Իհարկե, մինչ այդ ես քաղաք չէի գնացել, ուստի պատկերացում անգամ չունեի նրանց բնակիչների մասին, իսկ շուկա բառը բոլորովին անծանոթ էր ինձ: Այդ պատճառով էլ չտեսի պես աչքերս չռած՝ դիտում էի տարբեր տեսակ հագնված մարդկանց, իրենց ապրանքները գովող առևտրականներին, սեղանների վրա կուտակված մրգերը, ջուր ծախող երեխաներին, թմբուկ զարկող դերվիշներին և գետնին փռված ուղտերին:

Շրջելով շուկայում՝ մանկական մեծ հետաքրքրությամբ ուզում էի ամեն ինչ տեսնել, միաժամանակ լսել մարդկանց խոսակցությունները: Խանութներից քիչ հեռու՝ շուկայի հրապարակում, մեծ բազմություն էր հավաքվել. մարդիկ, մեկը մյուսին հրելով, մոտենում էին ինչ-որ բոշա ծաղրածուի: Տեսնելով նրանց՝ ես նույնպես գնացի այնտեղ: Չնայած մարդկանց բազմությանը՝ կարողացա ճեղքել նրանց շղթան, մի կերպ հասա այն հրապարակը, որտեղ մի հսկա արջ, հետևի ոտքերի վրա կանգնած, պար էր գալիս և թաթերով խաղացնում էր հովվի կեռ կոպալը:

Արջի պարը, հավաքված ժողովրդի խայտաբղետ խոսակցությունն ու ծիծաղը ապշեցրել էին ինձ, որի պատճառով բոլորովին մոռացել էի այն խանութը, որտեղ գտնվում էր հայրիկս: Շուտով բոշան իր արջին տարավ, իսկ ժողովրդի մեծ մասը գնաց նրա հետևից. հետաքրքրությունից դրդված՝ ես էլ հետևեցի նրանց մինչև արջի անհետանալը: Ես վերադարձա, բայց թե ուր էր այն խանութը, որտեղ նստել էր հայրիկս, կորցրել էի: Երկար փնտրեցի, սակայն չկարողացա գտնել: Արևն արդեն մայր էր մտնում, խանութներն սկսել էին փակել, իսկ ես դեռ անմիտ կերպով թափառում էի աստիճանաբար դատարկվող շուկայում: Կորցնելով հայրիկիս՝ մի պահ սկսեցի արտասվել, բայց ամաչում էի որևէ մեկից հարցնել կորած խանութի տեղը: Բաշկալա քաղաքի շուկայում հարյուրավոր խանութներ կային, թե որն ում էր պատկանում, ոչ ոք չէր կարող որևէ ճիշտ բան ասել ինձ, մանավանդ չգիտեի խանութպանի անունն ու նրա ով լինելը:

Վերջապես շուկան դատարկվեց. ամեն մեկը շտապում էր իր տուն, իսկ ես մենակ օտար քաղաքում, թափառում էի դեսուդեն: Հայրիկիս գտնելու հույսը կորցնելով՝ արդեն սկսել էի հեկեկալ: Լսելով իմ ձայնը՝ փողոցով անցնող մարդիկ մոտենում էին՝ ըստ երևույթին իմանալու իմ արտասվելու պատճառը: Չստանալով իրենց հարցի պատասխանը՝ նրանք ստիպված էին լուռ հեռանալ:

Ես արդեն դուրս էի եկել շուկայից և շարունակում էի գնալ առաջին իսկ հանդիպած ծուռումուռ փողոցով: Գնալով իմ աչքին ոչինչ չէր երևում, բացի երկու կողմից ձգված կավե բարձր ցանկապատերից և տարբեր գույներով ներկված դռներից, իսկ ես դեռ շարունակում էի առաջ գնալ, բայց թե ուր, ինքս էլ չգիտեի: Չնայած մութ էր արդեն, բայց որոշ դռների առաջ՝ քարերի վրա, դեռ նստած էին տղամարդիկ, իսկ թե ինչ ազգից էին, չգիտեի:

Արևը վաղուց մայր էր մտել. քաղաքն աստիճանաբար թաղվում էր խավարի մեջ: Զգալով, որ գիշերը դուրսն եմ մնալու, առանց օթևանի, սկսեցի ավելի բարձր հեկեկալ և հայրիկ-մայրիկ կանչելով՝ շարունակեցի փողոցի երկայնքով առաջ գնալ: Հասնելով քաղաքի կենտրոն՝ մթության մեջ հանկարծ նկատեցի մարդկանց ստվերներ, որոնք նստել էին փողոցի վրա բացվող դռան առջև. նրանցից երկուսը տղամարդ էին, իսկ երրորդը՝ կին: Փողոցը շատ նեղ լինելու պատճառով ստիպված էի դռան մոտով անցնել, որտեղ նստած էին նրանք: Մոտենալով անծանոթներին՝ հանկարծ լսեցի ինձ համար հասկանալի մի քանի բառ. այդ պատճառով էլ դանդաղեցրի քայլերս ու ավելի բարձրացրի իմ լացի ձայնը: Նստած կինը, որը հետաքրքրությամբ նայում էր ինձ, կողքին նստած տղամարդուն ասաց.

– Տե՛ս, Վազգե՛ն, լացող մանչը շատ կնմանի հայի, գնա՛, հարցրո՛ւ՝ ինչո՞ւ կուլա:

– Ես նրա հոր տեղը ըլլայի, մորը կսպանեի. անխիղճ կնիկն այս մութ գիշերին ինչո՞ւ է դուրս թողել խեղճ մանչին,– պատասխանեց Վազգեն անունով մարդը:

Նրանց խոսակցությունը հասկանալու նպատակով մի պահ դանդաղեցրի քայլերս, ինչպես նաև կտրեցի լացս: Դժբախտաբար ձայնս կտրելն ու նրանց ներս մտնելը մեկ եղավ: Հետ դարձա, որ խոսեմ հետները, բայց կարմիր դուռը հետևից ամուր փակված էր: Կանգնելով այնտեղ՝ մի պահ ընկա մտածմունքի մեջ. էլ ո՞ւր կարող էի գնալ այդ մութ, խավար գիշերով, այն էլ անծանոթ քաղաքում: Սակայն ինձ հույս ներշնչողն այն դուռն էր, որտեղ քիչ առաջ նստած էին հայ բնակիչները: Մտածում էի, որ այդ գեղեցիկ, կամարակապ դարպասը հայ մարդուն էր պատկանում, ուստի վճռեցի այդ դռնից չհեռանալ: Դադարեցնելով կես կեղծ, կես անկեղծ հեկեկոցս՝ ստիպված էի նստել դռան մոտ դրված գերանին, որն ըստ երևույթին ծառայում էր որպես նստարան: Բավական ժամանակ նստեցի, բայց դժբախտաբար դռնից ներսուդուրս անող չեղավ: Միայն գիշերվա հազվադեպ անցորդները փողոցով անցնելիս,

ըստ երևույթին ինձ տանտիրոջ զավակներից մեկի տեղը դնելով, բարևում էին, սակայն չստանալով պատասխան՝ անմիջապես անհետանում էին մթության մեջ:

Համբերությունս հատեց. ստիպված էի վեր կենալ և կավե պարսպի երկարությամբ երթևեկել դեսուդեն՝ նպատակ ունենալով դիտելու տանտիրոջ բակը՝ որևէ մեկին տեսնելու հույսով: Դժբախտաբար բացի պարտեզում եղած ծառերի ճյուղերից, ուրիշ ոչ մի բան չերևաց: Հետո անցա փողոցի հակառակ կողմը՝ նպատակ ունենալով որևէ բան նշմարել, սակայն տունը փողոցից անջատող բարձր պարիսպը թույլ չէր տալիս որևէ բան տեսնել: Այս անգամ քայլեցի պարսպի երկարությամբ՝ ուշադրությամբ դիտելով նրա բարձրությունը: Վերջապես ինձ հաջողվեց ցածրիկ տեղ գտնել, որտեղով հնարավոր էր մի կերպ անցնել պարսպի հակառակ կողմը՝ տանտիրոջ պարտեզն ընկնելու համար: Սակայն այստեղ նույնպես դժվար էր, քանի որ բարձրանալու համար ոտք դնելու տեղ չկար: Այդ պատճառով ես ստիպված էի գիշերվա մթության մեջ փողոցից քարեր հավաքել՝ որպես հենարան ոտքիս տակ դնելու:

Չնայած ես դեռ փոքր էի, բայց հայրենի գյուղում իմ ընկերների հետ հաճախ էի բարձրանում պարիսպների վրա, այնտեղից թռչում ցած, այնպես որ ճարպկությամբ ընկերներիցս հետ չէի մնում: Վերջապես փորձեցի բարձրանալ, բայց հաջողություն չունեցա: Անհաջող փորձից խեղճացած՝ հանկարծ մտաբերեցի Ղուրանի վրա թքելու օրը, թե ինչպես անտառից ծլկեցի՝ խուսափելով թուրք լամուկների[16] հետապնդումից, ինչպես դեն հրեցի աղբյուրի մոտ նամազ[17] անող շեյխի կեռ գավազանը ու փախա մեր տուն: Հիշելով այդ դեպքերը՝ կարծես թե ուժ առա: Բարձրացա քարերի վրա, ձեռքս դրի պատին, և ուժ տալն ու բարձրանալս մեկ եղավ:

Վերջապես պարսպի հակառակ կողմում էի, բայց շարժվել չկարողացա: Ինձնից քիչ հեռու գտնվող շունը սկսեց գազազել ու թռչկոտել դեսուդեն, սակայն ոչ իմ կողմը, որտեղ կծկվել էի ես: Շղթայի օղակների շարժման ձայնից հասկացա, որ շունը կապված է, ուստի ինձ վրա հարձակվել չի կարող: Գամփռի գռմռոցից պատշգամբից ցած իջնող տղամարդկանց ստվերներ նկատեցի: Ըստ երևույթին նրանք ստուգում էին կապված շան անհանգիստ լինելու պատճառը, բայց շունն արդեն դադարել էր գռմռալ, իսկ ես սուսուփուս գիշերային խավար մթության մեջ

[16] լամուկ – թուրքի, քրդի տղա
[17] նամազ – մահմեդականների աղոթք

կծկվել էի պարտեզի պարսպի տակ ու չէի համարձակվում տեղիցս շարժվել: Իրականում մնացել էի անելանելի վիճակում. չէի կարող գնալ դեպի տուն, քանի որ վախենում էի գամփռից, իսկ տան բնակիչներին կանչել չէի համարձակվում: Շատ մտածելուց հետո վերջապես վճռեցի նստած մնալ մինչև լուսաբաց, որից հետո գնալ հայրիկիս փնտրելու: Այս մտածմունքի մեջ էի, երբ փողոցի կողմից դուռը թակեցին.

– Ո՞վ է,– ներսից ձայն տվեց երեկոյան դեմ իմ տեսած կինը:

– Ես եմ, մայրի՛կ, դուռը բա՛ց արա,– դրսի կողմից եղավ պատասխանը:

– Ո՞ւրդեն կուգաս այս ուշ ժամին,– հարցրեց մայրը:

– Պետրոս աղայի կարգադրությամբ ման կուգայինք, հայի մանչ մը կորսվել է, շատ փնտրեցինք, բայց չկրցանք գտնել,– պատասխանեց տղան՝ դռնից ներս մտնելով:

Չնայած ես լրիվ չհասկացա նրանց խոսակցության բովանդակությունը, այնուամենայնիվ պարզվեց, որ գտնվում եմ հայերի շրջապատում, դրա համար էլ ավելի սրտապնդվեցի:

– Ա՜խ, քոռանամ ես, իրիկնադեմին մի հայ մանչ մը մեր կուչով լաց ըլլալով անցավ, իսկ մենք ուշ չդարձուցինք,– խոսում էր մայրը:

– Ո՞ւրկեն կանցներ, ո՞ւր կերթար,– հարցրեց տղան,– մենք կեսօրից մինչև իրկուն ման կուգանք, բայց չկրցանք գտնել,– շարունակում էր խոսել նա:

Այդ հարց ու պատասխանից հետո ես լրիվ համոզվեցի, որ նրանք իմ մասին են խոսում, մանավանդ երբ տղան Պետրոս աղայի անունը տվեց: Պետրոս աղան այն խանութի տերն էր, որին հայրիկիս հետ այդ օրը հանդիպեցի շուկայում: Այն ժամանակ, երբ նրանք խոսում էին կորած տղայի մասին, հենց այդ նույն պահին կարծես թե մեկը ստիպեց ինձ տեղից վեր կենալ ու պատի տակով մոտենալ դռանը, սակայն շունը նկատել էր ինձ և նորից սկսեց գազազել՝ կախ ընկնելով շղթայի օղակներից: Տղան ու մայրը զարմանքից դեսուդեն նայեցին՝ իմանալու հաչելու պատճառը, բայց նրանք ինձ չտեսան և շարունակեցին փայտյա աստիճաններով բարձրանալ շենքի երկրորդ հարկ:

Դրանից հետո վճռեցի դռան մոտ նստել մինչև առավոտ: Դժբախտաբար շունն ինձ հանգիստ չէր տալիս և ավելի էր վնգստում ու քիչ էր մնում շղթան կտրատեր: Այս անգամ կրկին տանից դուրս եկան երեք հոգի.

– Վազգե՛ն, մեր պարտեզը անօրեն մտած է,– խոսեց կինը՝ միաժամանակ աստիճաններով ցած իջնելով:

– Անօրենն ո՞ւրկեն կարող է մտնել պարտեզ,– պատասխանեց Վազգեն անունով տղան և ծառերի միջով անցավ դեպի վերջին ցանկապատը, շրջվեց դռան կողմը՝ փակը ստուգելու:

Զարմանալին այն էր, որ տղան անցավ իմ կողքով, բայց ինձ չնկատեց: Նա դուռը բացեց, դուրս եկավ փողոց՝ կարծելով, թե դրսում մարդ կա, սակայն չնկատելով ոչ ոքի՝ կրկին վերադարձավ: Հենց ուզում էր դռնից հեռանալ, ես փակեցի նրա անցնելու ճանապարհը: Հանկարծակիի գալով տղան վախից հետ-հետ գնաց, իսկ ես առաջ գնացի դեպի դուռը:

– Ո՞վ ես,– թուրքերեն հարցրեց տղան՝ միաժամանակ կանչելով Վազգենին:

– Հայ եմ՝ Մխիթարի տղան, ցերեկվանից կորցրել եմ հայրիկիս,– լացակումած պատասխանեցի ես:

Լսելով իմ կցկտուր պատասխանները՝ նրանք վերցրին ինձ ու բարձրացան շենքի երկրորդ հարկ:

Կինը իմանալով, որ ես հայ եմ, սկսեց ինքն իրեն խոսել ու դեսուդեն գնալ, սակայն ես նրա խոսակցության բովանդակությունը չէի հասկանում, միայն երկու բառ իմացա՝ քոռանա քու մայրիկը, որ էս գիշերով քեզ թողել է անօրեն քաղաքի մեջ:

– Մայրիկ չունեմ, նա մահացել է, – լացակումած պատասխանեցի ես՝ հայացքս գետնից չհեռացնելով:

– Իսկ քո հայրիկը որտե՞ղ է,– հարցրեց այն տղան, որը Պետրոս աղայի կարգադրությամբ ինձ էր փնտրել:

– Հայրս մնաց խանութում, իսկ ես դուրս եկա ու այլևս չվերադարձա,– պատասխանեցի ես:

Տղան մինչ այդ չէր հասկացել իմ բացատրությունը. դրա համար էլ շշմածի պես կանգնած էր կողքիս, բայց իմ վերջին պատասխանից հետո գլխի ընկավ, որ ես հենց իր փնտրած տղան եմ, ուստի առանց որևէ մեկին հարցնելու՝ դուրս եկավ ու գնաց Պետրոս աղայի տուն: Տանտերը, իմանալով իմ ով լինելը, կարգադրեց կողքիս կանգնած երիտասարդ աղջկան անմիջապես ուտելու բան բերել:

Շատ ժամանակ չէր անցել, երբ ներս մտան հայրս ու տնից դուրս եկած տղան իր ընկերների հետ: Հայրիկիս դեմքից երևում էր, որ նա շատ զայրացած է, բայց իրեն զսպելով՝ հարցրեց.

– Ո՞ւր կորար, անիրա՛վ,– դիմեց ինձ՝ ձեռքը դնելով գլխիս, խառնելով իմ երկար ու սև մազերը:

– Արջը իր հետևի թաթերի վրա գնում էր, ես էլ հետևից գնացի ու կորա, – պատասխանեցի կմկմալով:

– Ո՞վ բերեց քեզ և ինչպես ընկար այս տունը,– հարցրեց նա:

Ես սկզբից մինչև վերջ մանրամասն պատմեցի: Իմ ծիծաղելի պատմությունը շատ ուրախացրեց նստածներին, մանավանդ հայրիկիս:

Մեզ պատվելուց հետո տանտերերը այլևս չքողեցին մեզ ուշ գիշերով իրենց տանից հեռանալ: Շատ հոգնած էինք և անմիջապես երկուսով գնացինք մեզ հատկացված սենյակը:

Առավոտյան շուտ հայրիկս գնացել էր Պետրոս աղայի խանութ՝ գնումներ կատարելու և իր սկսած գործը վերջացնելու: Նա եկավ այն ժամանակ, երբ պարտեզում տանտիրոջ աղջկա հետ սալոր էինք քաղում: Աղջիկը շատ գեղեցիկ էր, սև աչքերով, կարճ ու գանգուր մազերով, տասներկու տարեկանից պակաս կլիներ: Նա ուրախ-ուրախ խոսում էր ինձ հետ, սակայն ես նրա ասածների իմաստը լրիվ չէի հասկանում. հասկացա միայն այն, որ նա շուտով գալու էր մեր կողմերը, բայց թե ինչու էր գալու, այդ մասին չասաց: Երեկոյան խոսակցության ժամանակ իմացա, որ հայոցձորցիները եկել էին՝ նշան դնելու: Աղջկա և տղայի ծնողները պայմանավորվել էին երկու տարուց հետո նրանց ամուսնացնել. դրա համար էլ Վարդիթերը ուրախ էր, որ նորից հանդիպելու է ինձ և պատմելու է երեկվա իմ արկածների մասին՝ չիմանալով, որ ես հայոցձորցի չեմ: Մենք միասին մանկական հրճվանքով վազվզում էինք պարտեզի ծառուղիներում՝ երևակայելով ապագա մեր հանդիպման մասին:

Հայրս շնորհակալություն հայտնեց բաշկալացի հայ բնակիչներին ցույց տված հյուրասիրության համար, միաժամանակ խոստացավ հաջորդ անգամ քաղաք գալու դեպքում բերել մանդակով պատրաստած պանիր և ոչխարի սպիտակ բուրդ: Մենք դուրս եկանք, իսկ տանտերերը մեզ ջերմորեն ճանապարհ դրեցին մինչև քաղաքի այգիները, որից հետո մենք հեռացանք և նույն օրը՝ մայրամուտին, հասանք տուն, որտեղ անհամբեր մեզ էին սպասում Աչանն ու Պետին:

ԱՌԵՎԱՆԳՈՒՄ

Խրճիթի երկար ու խոր միջանցքով ներս մտնելուն պես մեզ դիմավորեց իմ միջնեկ եղբայրը՝ Մարկոսը, որը նոր էր եկել հայրենի գյուղից:

Հանդիպելով նրան՝ համարյա թե ճչալով ընկա իմ սիրելի եղբոր գիրկն ու ագահաբար համբուրեցի արևից վառված նրա գեղեցիկ այտերը: Իմ ուրախությանը չափ ու սահման չկար. ավելի քան մեկ տարի չէի

տեսել նրան, ուստի կարոտով գրկել էի ու անջատվել չէի ուզում: Միայն հայրիկիս միջամտությամբ հազիվ մի կերպ պոկվեցի նրա կրծքից:

– Հիմա հերթն իմն է,– ասաց հայրս ու երկուսով գրկախառնվեցին՝ համբուրելով մեկը մյուսին:

Մինչ հայր ու որդի կողջագուրվեին, ես վազեցի դեպի այն խուրջինը, որը հենց նոր ձիուց վայր դրվեց, և որի մեջ լցված էին մեր տնեցիների համար քաղաքից բերված նվերները: Բացելով խուրջինը՝ ես ինքնագլուխ սկսեցի բաժանել նվերները, իսկ Մարկոսին հանձնեցի հովվական մի գեղեցիկ շվի, որը բոլոր նվերներից ամենանվիրականն ու թանկագինն էր: Նվերները բաժանելուց հետո մեր ընտանիքի բոլոր անդամները սովորականի պես նստեցին տան կենտրոնում դրված քուրսու շուրջն ու սկսեցին զրուցել: Մարկոսը հայտնեց, որ Բադալի ու Աննայի հանձնարարությամբ եկել է՝ մեր ընտանիքը հայրենի գյուղ տեղափոխելու:

– Ինչո՞ւ Բադալն ինքը չի եկել,– հարցրեց հայրս:

– Նպատակահարմար համարեց ինձ ուղարկել,– պատասխանեց Մարկոսը:

– Հասան բեկը մեզ բաց չի թողնի, իսկ նրա կամքին հակառակ գնալը նշանակում է վտանգի ենթարկել մեզ բոլորիս,– պատասխանեց հայրս:

– Մի՞թե մշտապես օտարության մեջ ենք մնալու,– տխրությամբ արտահայտվեց Մարկոսը:

– Առայժմ մնալու ենք,– պատասխանեց հայրս:

– Այդ դեպքում թույլ տուր Վարդանուշին տանել Աննայի մոտ,– խնդրեց եղբայրս:

– Եթե Աչանը համաձայնի, ես դեմ չեմ լինի,– ասաց հայրս ու դիմեց Աչանին՝ իմանալու նրա կարծիքը:

Չնայած Աչանն արդեն մեկ երեխայի մայր էր, բայց որպես չխոսկան՝ սկեսրայրի ներկայությամբ չէր արտահայտվում, ուստի մոտենալով ինձ՝ ասաց.

– Հայրիկին ասա՛, որ եթե Մարկոսն ու Վարդանը չվերադառնան մեզ մոտ, ապա Վարդանուշին տանելու իմ համաձայնությունը չեմ տա:

Այդ երեկո եղբորս գալու կապակցությամբ տրամադրությունս շատ բարձր էր. ամեն կերպ ուզում էի ուրախանալ, թռչկոտել, հանաքներ անել: Պետք էր նաև որևէ առիթ գտնել, որ հայրիկիս ու Մարկոսին նույնպես ուրախացնեի, դրա համար էլ որոշեցի հարսի ասածները կեղծել:

– Ի՞նչ է ասում հարսը,– հարցրեց հայրս՝ սպասելով պատասխանին:

– Աչանն ասում է, որ ինքը դեմ չէ Վարդանուշին գյուղ ուղարկելուն թեկուզ այսօր, միայն թե Բաղալը շուտ վերադառնա իր մոտ, որովհետև առանց նրա ինքը շատ տխուր է, – ասացի ու ծիծաղելուց չկարողացա մտքումս սերտած նախադասությունը մինչև վերջ արտահայտել:

Հայրս նույնպես ծիծաղեց, բայց իհարկե հասկացավ, որ կեղծում եմ հարսի ասածները, իսկ Աչանը ամոթից կարմրեց ու բարկությամբ դուրս եկավ միջանցք:

– Էլի դավաճանեցիր հարսին,– զայրացած ասաց Վարդանուշը՝ վազելով Աչանի հետևից:

Անհարմար զգալով իմ հանդուգն սրամտության համար՝ ես նույնպես կարմրեցի ու ցանկացա ուղղել թույլ տված սխալս: Սակայն ուշ էր արդեն. մինչև կարտահայտվեի, Վարդանուշը հայտնեց հարսի միտքը:

– Հայրի՛կ, մ՛ի հավատա Սևուկին, նա քեզ խաբեց: Աչանը համաձայն է, որ ես գնամ Աննայի մոտ, միայն թե Մարկոսն ու Վարդանը շուտ վերադառնան այստեղ,– ասաց քույրս ու իմ թևը մի լավ կճմտեց:

Այդ խոսակցությունից հետո՝ հենց նույն երեկոյան, հայր ու որդի որոշեցին Վարդանուշին տեղափոխել հայրենի գյուղ՝ Աննայի մոտ, իսկ իրենք պետք է վերադառնային Իլ մինչև հաջորդ գարուն. գուցե հնարավոր լիներ որևէ առիթով ազատվել Հասան բեկի հովանավորությունից ու վերջապես որոշել մեր ընտանիքի բնակության ու ապագայի հարցը:

*
* *

Դեռ նոր էր լրացել Մարկոսի տասնութ տարին, սակայն վերջին մեկուկես տարվա ընթացքում այնքան էր առնականացել ու գեղեցկացել, որ տեսնողներն ուղղակի հիանում էին նրանով: Չնայած հասակով նա ավելի փոքր էր, բայց աշխատանքի մեջ ոչ մի բանով հետ չէր մնում մեծ եղբորից:

Դեռ փոքր հասակից Մարկոսը խնամում էր մեր սեփական անասուններին, մնալով հայրենի գյուղում՝ աշխատում էր տնտեսության մեջ ու կանոնավոր կերպով կատարում էր իր վրա դրված պարտականությունները: Գալով Իլ գյուղը՝ նա հենց սկզբից աչքի ընկավ նաև նվագելու ու երգելու իր շնորհքով. այդ պատճառով էլ նրա ձայնը, առաջին իսկ օրվանից, մեր խրճիթի սահմաններից դուրս էր եկել: Նրա գալու հաջորդ օրը գյուղացիների զգալի մասը հավաքվել էր մեր տանը՝ լսելու նրա երգն ու նվագը, իսկ երկրորդ օրն արդեն Հասան բեկի կարգադրությամբ համարյա թե ուժով նրան տարան տիրոջ պալատ: Լսելով

նրա երգ ու նվագը՝ բեկը հրամայեց հայրիկիս՝ որդուն չթողնի, որ գյուղից հեռանա: Իհարկե, հայրս շատ համոզեց բեկին՝ խնդրելով եղբորս ազատել իրեն ոչ հատուկ պարտականություններից, բայց վերջինս շատ համառ գտնվեց. նա համարյա թե սպառնալիքով պահանջեց կատարել իր կարգադրությունը: Այդպես էլ եղբայրս չկարողացավ քրոջս հետ վերադառնալ հայրենի գյուղ և փաստորեն դարձավ բեկի համար մշտական նվագող ու երգող մարդկանցից մեկը:

Հաշտվելով ստեղծված դրության հետ՝ հայրս որոշեց ինքն ուղեկցել աղջկան: Սակայն մինչ նա կնախապատրաստվեր մեկնելու, Վարդանուշին տանելու մասին իմացան Շամոյի ընտանիքն ու մեր բոլոր հարևանները, և հենց այդ լուրն էլ դարձավ քրոջս դժբախտության պատճառը:

Քրոջս գաղտնի կերպով հետևելիս էր եղել Զինեի միակ եղբայր Ահմեդը, սակայն այդ մասին ո՛չ մենք գիտեինք և ո՛չ էլ ինքը՝ Վարդանուշը: Ահմեդը չքավոր գյուղացու զավակ էր, բայց գյուղի շատ հեղինակավոր ու ճանաչված երիտասարդներից մեկը: Լինելով բեկի կնոջ եղբայրը՝ նա երբեք չէր չարաշահում իր քրոջ դիրքն ու անունը, չէր հաճախում նրանց տուն, ամառանոցներ: Ընդհակառակը, մշտապես գտնվում էր չքավոր գյուղացիների ու հովիվների շրջանում: Ահմեդի ծնողները շատ անգամ առաջարկել էին նրան ամուսնանալ Զամալ աղայի մեծ աղջկա հետ, որը բավականին գեղեցիկ էր և հարուստ: Ահմեդը համաձայնվել էր կատարել ծնողների և աղջկա հոր պահանջը, բայց հետագայում կտրականապես հրաժարվել էր, որի պատճառով երկու քուրդ ընտանիքների միջև խիստ լարվածություն էր ստեղծվել, իսկ հետագա ամիսների ընթացքում այդ լարվածությունը վերածվել էր բացահայտ թշնամության:

Ահմեդը, լինելով մեզ հարևան, ծանոթ էր մեր ընտանիքին, հաճախ այցելում էր հովիվ Շամոյի տուն, որտեղ մշտապես լինում էինք ես ու Վարդանուշը: Գալով Շամոյի տուն՝ Ահմեդն անկեղծորեն զրուցում էր բոլորի հետ, խաղում երեխաների հետ, հանաքներ անում, սակայն մեզանից ոչ մեկի մտքով անգամ չէր անցնում, թե Զինեի եղբայրը՝ Ահմեդը, կարող էր հայ աղջկա նկատմամբ որևէ մտադրություն ունենալ: Հետագայում պարզվեց, որ հրաժարվելով Զամալի աղջկա հետ ամուսնանալուց՝ նա վճռել էր տիրանալ Վարդանուշին: Վերջին անցուդարձի ժամանակ մեր հարևաններից տեղեկություններ ստանալով Վարդանուշի հեռանալու մասին՝ Ահմեդը դիմում է խորամանկության: Հայրս բացակայում էր գյուղից, Մարկոսը հրավիրված էր բեկի տուն՝ նվագելու, իսկ մենք մնացել էինք մենակ ու սրտատրոփ սպասում էինք նրանց վերադարձին:

Մութ երեկո էր, սյունից կախված ճրագի ծխախառը փոքրիկ բոցը հազիվ լուսավորում էր խրճիթի կենտրոնում դրված քուրսին, որտեղ նստած լսում էինք հայերին թալանելու մասին Աչանի պատմությունը: Դժբախտաբար Աչանը դեռ իր պատմությունը չէր վերջացրել, երբ հանկարծ խրճիթի դուռը բացվեց, ու ներս մտավ Շամոյի մեծ տղայի կինը: Ըստ երևույթին նա ինչ-որ բանից անհանգստացած էր, բայց թե ինչի համար, սկզբում գլխի չընկանք:

– Աչա՛ն ջան, երեխաս հիվանդացել է, գնանք, գուցե միասին մի ճար անենք,– ասաց նա՝ հայացքը գցելով Վարդանուշին:

Իհարկե, Աչանը չէր կարող մերժել նրա խնդրանքը, ուստի ստիպված էր հետևել նրան: Չանցավ մի քանի րոպե, երբ դրսից լսվեց ձիերի խրխնջոց և սմբակների դոփյուն: Վարդանուշը վախենալով մտավ քուրսու տակ, իսկ ես համարձակորեն դուրս եկա դեպի խրճիթի դուռը: Դրսում երևացին երեք ձիավոր. նրանցից մեկն էլ Ահմեդն էր: Անշուշտ, ես նրան ճանաչեցի. նա մեկ անգամ չէր, որ ինձ ազատել էր բեկի գազազած տղաների հետապնդումից, դրա համար էլ չկասկածելով, թե ձիավորները որևէ վնաս կարող են պատճառել մեզ, դուռը թողնելով բաց, անմիջապես վերադարձա Վարդանուշի մոտ: Քիչ անց, խրճիթի դուռը ճռռաց ու շխկոցով նորից փակվեց: Նկատելով դա՝ կրկին մոտեցա դռանը, բայց այս անգամ սիրտ չարեցի առաջ գնալ ու վերադարձա: Դժբախտաբար հենց այդ պահին էլ իմ հետևից ներս մտան Ահմեդն ու միջահասակ մի կին, որին մինչ այդ չէի տեսել:

– Վարդանու՛շ, շուտ վե՛ր կաց, Աչանը քեզ կանչում է,– ասաց ներս մտած կինը՝ աստիճանաբար մոտենալով մեզ:

Լսելով նրան՝ Վարդանուշը նստած տեղից վեր կացավ ու միամտորեն ձեռքիցս բռնելով՝ միասին քայլեցինք դեպի դուռը:

– Սևուկը թող մնա տանը,– ասաց Ահմեդը՝ մոտենալով ինձ:

– Չէ՛, չէ՛, ես իմ եղբորը մենակ չեմ թողնի,– ասաց քույրս՝ վերադառնալով:

– Դու գնա՛,– առաջարկեցի քույրիկիս,– մինչև առավոտ էլ մենակ կմնամ, – պարծենկոտությամբ հայտարարեցի ես ու նստեցի տեղս:

– Դե համբուրի՛ր Սևուկին, որ քաջ է և քո փոխարեն մնալու է տանը,– ժպտալով ասաց Ահմեդը՝ փաղաքշանքով շոյելով գլխիս մազերը:

Լսելով Ահմեդին՝ Վարդանուշը համարյա թե առանց առարկելու նրանց հետ դուրս եկավ ու այլևս չվերադարձավ: Այդպես Ահմեդը իր խորամանկ բարեկամների օգնությամբ աշնանային այդ խավար գիշերը խաբեությամբ առևանգեց իմ քույր Վարդանուշին:

Շամոյի մեծ հարսի տնից ուրախ-ուրախ վերադարձավ Աչանը, բայց երբ լսեց իմ պատմությունը, գլխին տվեց ու նոր միայն հասկացավ հարևան քուրդ կանանց խաբեությունն ու սկսեց տնով մեկ բղավել:

Կեսգիշերին տուն վերադարձան հայրս ու եղբայրս. վերջիններս գյուղը տակնուվրա արեցին, բայց ուշ էր արդեն, Վարդանուշն այլևս չկար: Ահմեդը նրան փախցրել էր Պարսկաստան:

ՎԵՐԱԴԱՐՁ ՀԱՅՐԵՆԻ ԳՅՈՒՂ

Մենք այլևս Իլ գյուղի քրդերի միջավայրում մնալ չէինք կարող. թեկուզ կյանքի գնով պետք է հեռանայինք, և որքան շուտ, այնքան լավ մեր հետագա անվտանգության համար:

Հաջորդ օրը՝ դեռ լույսը չբացված, առանց Հասան բեկին հայտնելու, ճանապարհ ընկանք դեպի հարազատ ծննդավայր՝ մեր հայրենի Դիմ գյուղ: Հայրս վճռել էր ճանապարհին ոչ մի բնակավայրում կանգ չառնել, անգամ գիշերները քրդական գյուղեր չմտնել: Այդպիսի վատ տրամադրությամբ հնարավոր էլ չէր որևէ մեկին հյուր լինել, դրա համար էլ չորս օրվա սովորական ճանապարհը անցանք երկու օրում:

Ես նստել էի ձին, իսկ մյուսները, անասուններն առաջներն արած, մռայլ դեմքով ոլորապտույտ ճանապարհով շարժվում էին առաջ՝ յուրաքանչյուր քայլափոխի նայելով չորս կողմը պատահական հանդիպումներից խուսափելու համար: Մեզնից ոչ մեկը չէր խոսում. բոլորս էլ տխրության մեջ էինք: Երկու տարվա ընթացքում շատ զրկանքներ էինք կրել ու մեծ կորուստներ ունեցել: Մահացել էին հարազատ մայրս ու փոքրիկ եղբայրս, իսկ երեկ քրդերը առևանգեցին իմ քրոջը. առևանգումը հավասար էր մահվան: Մեզնից ոչ ոք չգիտեր՝ նա կենդանի էր, թե մեռած. մանավանդ երեկվա որոնումներից պարզվել էր, որ փախստականների՝ գիշերվա խավարում Իլիս գետն անցնելու ժամանակ աղջիկը բղավելով ձիուց իրեն գետն էր նետել, իսկ նրա հետագա վիճակի մասին ձիավորներին հանդիպած պարսիկ ականատեսներից ոչ մեկը ճիշտ տեղեկություն չտվեց:

Մեր ճանապարհը քարքարոտ էր և դժվարին: Գնում էինք անմարդաբնակ վայրերով, զառիվայր ճանապարհներով, իսկ հաճախ էլ նեղ արահետներով, որտեղից անասունները չափազանց դժվարությամբ էին առաջ շարժվում: Ծանոթ լինելով ճանապարհներին՝ հայրս, որի սիրտը

լի էր դառնությամբ, առանց հետ նայելու, տխուր-տրտում առաջ էր գնում, իսկ ես, ձին նստած հետևելով նրան, չէի համարձակվում անգամ մի բառ ասել:

Չնայած բոլորն էլ տխուր էին ու մռայլ, բայց ես անձամբ շատ ուրախ էի, որ հեռանում էինք մեզ համար խորթ և օտար միջավայրից: Չէ՞ որ գնում էինք հարազատների՝ Աննայի, Բադալի, Վարդանի ու մեր արյունակիցների մոտ, որոնց ավելի քան երկու տարի չէի տեսել և անսահման կարոտել էի: Երկարատև ու հոգնեցուցիչ ճանապարհորդության երկրորդ օրվա վերջին մեր փոքրիկ քարավանը մոտենում էր մեզ հանրածանոթ հորդառատ Տիգրիս գետին, որը միաժամանակ երկու հարևան գյուղերի միջև սահման էր համարվում: Շատ դժվարությամբ անցնելով գետի հակառակ կողմը՝ վերջապես գիշերվա կեսին հասանք հարազատ գյուղ ու անսպասելիորեն մտանք մեր տուն: Հոգնածությունից ոտքի վրա չէի կարող կանգնել, ուստի խրճիթի խավար մթության մեջ պառկել ու քնելս մեկ եղավ, իսկ մոտիկ բարեկամները, հավաքվելով մեր տանը, մխիթարում էին հայրիկիս տեղի ունեցած կորստի համար:

Հաջորդ առավոտ կարծես թե ամեն ինչ խաղաղվել էր, և մեր տնեցիներին ուրիշ ելք չէր մնում, քան հաշտվել իրավիճակին, սակայն դա միայն արտաքուստ էր այդպես: Հայրս տանջվում էր. մենք բոլորս զգում էինք, թե ինչպես է ալեկոծվում նրա հոգին, բայց ձեռքում ճար չկար: Ի՞նչ կարող էր անել բարբարոսներին, որոնք յուրաքանչյուր քայլափոխի կողոպտում, հափշտակում, անգամ սպանում էին հայ մարդկանց ու մնում անպատիժ: Այնուամենայնիվ, հայրս ուզում էր գաղտնի մեկնել թուրք-պարսկական սահման, այնտեղ, որտեղ հավանականորեն թաքնված պետք է լիներ Ահմեդը հափշտակված քրոջս հետ:

*

* *

Ազատվելով չափազանց խորթ միջավայրից՝ ես այլևս վախ չունեի ո՛չ Հասան բեկի տղաներից և ո՛չ էլ շեյխ Խդիրից, որոնք մշտապես հետապնդում էին ինձ դավանափոխ անելու նպատակով: Չնայած քույրիկիս հափշտակելու պատճառով մեր տնեցիները դեռ տրտմության մեջ էին, բայց ես անսահմանորեն ուրախ էի, որ գտնվում էի իմ հասակակից նախկին ընկերների շրջապատում, որոնց շատ էի կարոտել: Վերադառնալով հարազատ ծննդավայր՝ տարվել էի հայ տղաներով այնպես, որ ամբողջ օրվա ընթացքում թեկուզ մեկ ժամ անգամ չէի կտրվում նրանցից:

Վաղ արևածագին դուրս գալով գյուղից՝ շրջում էինք ամեն տեղ, որտեղ աչքներս կտրում էր և միայն ուշ երեկոյան, վայրի պտուղներով բեռնավորված, ուրախ-ուրախ տուն էինք վերադառնում: Որքա՜ն հաճելի էր գտնվել հարազատների շրջանում և շնչել ազատ, այն էլ սեփական ծննդավայրում, որտեղ ծնվել էին պապիս պապերը և ես:

Կրկին գտնվելով ընկերներիս շրջանում՝ ես հաճախ հիշում էի օտարության մեջ՝ բռնակալ Հասան բեկի կալվածքում, իմ անցկացրած տխուր օրերը: Իսկապես, ինչքա՜ն տհաճ ու ծանձրալի էր գտնվել ուրիշի հարկի տակ, այն էլ մի բռնակալի հպատակության ներքո, որին համարում էիր քեզ թշնամի, իսկ այժմ, երբ ազատվել էինք մեզ բոլորովին խորթ միջավայրից, իմ ուրախությանը ուղղակի չափ ու սահման չկար:

Վերադառնալով հարազատ ծննդավայր՝ հրճվանքից մի վայրկյան անգամ տանը նստել չէի ցանկանում: Ուզում էի տեսնել ամեն ինչ և ուրախանալ այն ամենով, ինչ հարազատ էր ինձ, ինչ անսահման կարոտով հիշում էի օր ու գիշեր Հասան բեկի կալվածքում գտնվելիս:

*
* *

Ձմեռվա եղանակներին գյուղի երեխաների մեծ մասը սառնամանիքների պատճառով խրճիթներից դուրս չէր գալիս, բացի մեծ տղաներից, որոնք օգնում էին իրենց ծնողներին՝ օրվա որոշ ժամերին անասուններին կերակրելու, իսկ մնացածներն իրենց ժամանակն անց էին կացնում գյուղական օդաներում[18]: Նրանք խաղում էին միմյանց հետ, լսում մեծերի զրույցները, հեքիաթներ պատմում, մասնակցում հարսանիքների և այլ զվարճանքների:

Ձմռանը պառկում էի ինձանից մեծ եղբորս՝ Վարդանի հետ թոնրի կողքին, իսկ տարվա շոգ օրերին բոլորս քնում էինք տան կտուրին: Անկողինները դասավորում էին շարքով, մեկը մյուսից քիչ հեռու: Իմ ու Վարդանի անկողինները սովորաբար գտնվում էին դրանց կենտրոնում:

Ընդհանրապես կտուրին քնելը շատ հետաքրքիր էր ու հաճելի: Օրը մթնելուց անմիջապես հետո երեխաները մտնում էին իրենց անկողինները և, պառկելով մեջքի վրա, դիտում պարզ ու կապույտ երկինքը: Նայելով հորիզոնին՝ ես կարծում էի, թե երկինքը նստել է գյուղը շրջա-

---

[18] օդա *(թրք.)* – 1.հին տներում այն հատվածը, որ նախատեսված էր հյուրեր ընդունելու, ճաշելու համար, հյուրասենյակ 2. գյուղական տներում այն հատվածը, որտեղ հյուրեր են ընդունում 3.գոմին կից սենյակ

պատող սարերի կատարներին, ինչպես մեր խրճիթի հաստ հեծանները՝ սյուների ու պատերի վրա: Ինձ թվում էր, թե հորիզոնից այն կողմ աշխարհ չկա. միայն մեր գյուղն է, ու մենք ենք, որ կանք, ուրիշ աշխարհ ու մարդիկ գոյություն չունեն:

Ուշ երեկոները պառկելիս հաճախ համրում էինք երկնքի աստղերը, սխալվում ու կրկին հաշվում, բայց և այնպես բան չէր ստացվում: Աչանը, որը գտնվում էր մեզանից ոչ հեռու, երեխայի հետաքրքրությամբ նույնպես մասնակցում էր մեր խոսակցություններին: Նա մեզ համոզում էր, թե ինչքան մարդ կա աշխարհում, նույնքան էլ՝ աստղ. յուրաքանչյուր մարդ ունի իր աստղը: Ես ու Վարդանը աստղերը բաժանում էինք գյուղի բնակիչների և հեռավոր բարեկամների միջև, իսկ մնացածները մնում էին օդից կախված: Սովորաբար լուսաշող աստղերը տալիս էինք լավ ու բարի մարդկանց, իսկ խավարները թողնում չարերին և գյուղի անաշխատ թուրք և քուրդ աղաներին՝ հույս ունենալով, որ խավար աստղերը շուտով կմարեն, իսկ դրանց տերերը կմեռնեն: Ես՝ որպես տան փոքր, միաժամանակ զոռբա[19], կռվելով Վարդանի հետ, տիրեցի լուսաշող աստղին, որը բոլոր աստղերից ամենից վառ ու փայլունն էր երևում:

Գիշերային զով քամու ներքո երկնքի աստղերը հաշվելիս և նրանց բաժանելիս քունս համարյա տարել էր, երբ հանկարծ լսեցի մի երկար ու խուլ ձայն՝ հարա-հա՜յ-հարա՜յ, շու՛տ հասեք, թուրքերը մեր ոչխարների հոտը տարան: Այդ պահին ինձ թվում էր, թե երազ եմ տեսնում, բայց ահա նորից կրկնվեց նույն ձայնը՝ հարա՜յ-հա՜յ, հարա՜յ, շու՛տ հասեք, ոչխարները տարան: Կանչողը գյուղի հովիվներից մեկն էր, որը հազիվ էր ազատվել թուրք ավազակների ճանկերից և հասնելով Ծաղկասարի գագաթին՝ այնտեղից օգնություն էր խնդրում:

Այս անգամ հարևան կտուրից լսեցի բարձր կանչեր՝ վե՛ր կացեք, թուրքերը մեզ թալանեցին:

Ես դեռևս մեծ Լուսաստղին տիրանալու տպավորության տակ էի, երբ գլուխս բարձրացրի և տեսա, որ տնեցիք արդեն վեր են կացել: Ոմանք վազում էին դեպի արտերն ու մարգագետինները՝ այնտեղ աշխատող տղամարդկանց իմաց տալու, իսկ Վարդանն ու Աչանը, թողնելով ինձ մենակ, գնացել էին գյուղի կենտրոն, ուր հավաքվել էր ժողովուրդը: Ես արթնանալով՝ հարբած մարդու պես կանգնել էի ու չգիտեի՝ ուր գնամ: Գյուղի մարդիկ դաշտերից արագ հավաքվել էին. ոմանք գե-

[19] զոռբա (*հնց.*) – այստեղ՝ համառորեն իր պահանջը առաջ տանող

ռանդիներով ու բահերով, ոմանք էլ վճռական օրվա համար թաքցրած մարտական զենքերով շտապում էին դեպի Ծաղկասար, որտեղ չարագործները թալանել էին հայ գյուղացիների ոչխարների ամբողջ հոտը:

Հայ տղաները հաջորդ օրվա վերջին, հանդիպելով թուրք ավազակներին, կտրել էին թալանչիների փախուստի ճանապարհն այն պահին, երբ հոտի որոշ մասը անցել էր Տիգրիս գետի հակառակ կողմը: Մի խումբ հայ տղաներ, շրջապատելով ավազակներին, կապկպել էին նրանց ձեռքերը, որպեսզի զրկեն վերջիններին զենք գործածելու հնարավորությունից: Թալանչիների մեծ մասը, թաքնվելով ոչխարների արանքներում, փորձել էին դիմադրություն ցույց տալ, բայց անհաջող. նրանք նույնպես բռնվել էին օգնության հասած հայերի երկրորդ խմբի կողմից:

Այդպես երկու տասնյակ հայ կտրիճների հնարամտության շնորհիվ հետ էր վերադարձվել գյուղի հարստությունն ավազակների հափշտակումից:

Այդ բոլորից հետո չարագործներին հետապնդող հայերը փոխանակ պատժեին ձերբակալվածներին, ընդհակառակը, իրենց մեծահոգությունն էին ցուցաբերել և ազատ արձակել նրանց:

ԱՐՋԻ ՈՐՍ

Աչանը, մոտակա մարգագետնից վերադառնալով ու բարձրանալով կտուր, ինձ գտավ ուժեղ տենդի մեջ:

– Ի՞նչ է պատահել քեզ,– անհանգստացած հարցրեց նա:

Չստանալով իր տված հարցի պատասխանը՝ Աչանը սկսեց օգնություն կանչել՝ ենթադրելով, թե վախից ուշաթափվել եմ: Միամի՜տ կին. չէր իմացել, որ իմ հիվանդության իսկական պատճառը ոչ թե վախից էր, այլ իմ չարությունից: Գարնան առաջին իսկ օրերից ես այնքան էի տարվել լողալով, որ ժամերով սառը ջրից դուրս չէի գալիս: Ըստ երևույթին հենց այդ էլ ազդել էր իմ առողջության վրա, որի հետևանքով երկար ժամանակ հոդացավով գամվեցի անկողնուն: Իհարկե, հոդացավից ես վաղուց էի տրտնջում, բայց որևէ մեկին չէի հայտնել, և միայն այդ գիշերվա արտակարգ դեպքն արագացրեց, ինչպես նաև բացահայտեց իմ հիվանդության բարդությունը:

Վիճակս լավ չէր. բժշկություն գոյություն չուներ: Գյուղում պատկերացում անգամ չունեին բժշկի մասին, իսկ «պառավական» դեղերը,

հոգևորականների աղոթքն ու սրբաթղթերը ոչ մի օգուտ չտվեցին: Հայրս ու մեծ եղբայրս շատ էին մտահոգված, բայց հնար չէին գտնում: Մի օր էլ հարևան գյուղից մեր տուն եկավ մի պառավ կին. ասում էին, թե նա տարբեր բույսերի միջոցով բուժում է ամենածանր հիվանդներին: Վերջինս խորհուրդ էր տվել ինձ արջի միս ուտեցնել, իսկ մորթին փաթաթել հոդերիս: Աչանն ու Աննան շատ էին ուրախացել պառավի հնարամտությունից, սակայն նրանց կարծիքով հնարավոր չէր արջի միս ճարել, ուստի փորձեցին պառավական այլ միջոցների դիմել:

Հաջորդ օրը՝ երեկոյան, երբ մեծ եղբայրս աշխատանքից նոր էր վերադարձել տուն, Աչանին հարցրեց իմ հիվանդության մասին.

– Սևուկի բուժման համար ի՞նչ խորհուրդ է տալիս Շատախից եկած պառավ կինը:

– Ասում էր՝ պետք է արջի միս ճարել,– կիսաձայն պատասխանեց Աչանը:

– Ինչի՞ համար:

– Որպեսզի ուտեցնենք Սևուկին, իսկ մորթին փաթաթենք ոտքերին. դա անպայման կլավացնի նրան,– ավելացրեց չխոսկան հարսը՝ ուշադրությամբ նայելով ամուսնու կոշտացած ձեռքերին:

– Ա՜խ, ի՜նչ լավ կլիներ,– ժպտալով ասաց եղբայրս և մոտենալով անկողնուս՝ իր կոշտացած ձեռքերով հարդարեց գլխիս մազերը:

– Լավ կլիներ, բայց որտեղի՞ց ճարել արջի միս,– շարունակեց Աչանը:

– Ի՜նչ միամիտ կին ես,– պատասխանեց Բադալը,– մեր լեռները լիքն են արջերով, իսկ դու ասում ես, թե որտեղից ճարել: Միայն թե ճիշտ լինի պառավի ասածը, թե չէ արջ ճարելը դժվար չէ,– ավելացրեց ու տանից անմիջապես դուրս գնաց՝ չասելով, թե ուր:

Ուշ երեկոյան նա տուն վերադարձավ մի քանի տղաների հետ: Նրանք նստեցին խրճիթի անկյունում ու սկսեցին խորհրդակցել, բայց թե ինչի մասին էր նրանց խոսակցությունը, սկզբում չհասկացա: Ուշադրությունս սրելով՝ սյունից կախված ճրագի կիսախավար լույսի տակ մի պահ նկատեցի, թե ինչպես եղբայրս պատի հիմքից դուրս հանեց շորով փաթաթված մի կապոց ու հանձնեց Մովսեսին: Հետաքրքրությունից գլուխս բարձրացրի, որ տեսնեմ, և հենց այդ ժամանակ էլ լսեցի նաև չխկչխկոց:

– Այդ ի՞նչ բան է Մովսեսի ձեռքում,– հարցրի կողքիս նստած Աչանին:

– Գերանդի է,– անտարբերությամբ պատասխանեց նա:

Սակայն դա գերանդի չէր, այլ ուրիշ բան, որը, չգիտեմ թե ինչու, Աչանը թաքցնում էր ինձանից: Ուզեցի վեր կենալ անկողնուց ու գնալ նրանց մոտ, բայց կողքիս նստած Աչանը արգելեց: Նկատելով մեր երկուսի վեճը՝ եղբայրս ինքը մոտեցավ ինձ՝ հետն էլ բերելով այդ փայլուն առարկան, որը Աչանը գերանդի էր անվանում: Դա գերանդի չէր, այլ իսկական հրացան, որ մինչ այդ չէի տեսել: Նրանք մաքրել էին իրենց զենքերն ու նախապատրաստվում էին ինչ-որ տեղ գնալու:

Լուսաբացին արթնացա, նկատեցի, որ երեկոյան կողքիս պառկած Բադալը չկար, չկար նաև նրա հրացանը. Աչանը հայտնեց, որ եղբայրս իր ընկերների հետ գիշերվա կեսին բարձրացել էին լեռներ՝ արջ որսալու:

Այդ օրը Աննան կրկին ինձ տեսության էր եկել, առավոտից նստել էր կողքիս՝ ինչ-որ բանից անհանգստացած, խոսում էր Աչանի հետ:

– Աննա ջան, ինչո՞ւ չեկավ եղբայրդ, – համարյա թե դողդողալով՝ հարցրեց Աչանը՝ գրկելով տալին:

– Մի՛ վախենա, շուտով կգա,– պատասխանեց Աննան՝ հանգստացնելով հարսին:

– Նրանք իրենց հետ տարան նաև հրացաններ, սրեր, վախենում եմ՝ թուրք անօրենների հետ կռվի մեջ չմտնեն,– ավելացրեց Աչանը:

– Այդ անիրավներն ամեն տեղ վխտում են՝ հետևելով հայերի յուրաքանչյուր քայլին, որպեսզի որևէ պատճառ գտնեն մի բան պոկելու համար: Բայց դու մի՛ մտածիր. նրանք Բադալին ձեռք տալ չեն կարող, քանի որ նրանից վախենում են,– համոզում էր Աննան:

Նրանց խոսակցությունը երկար տևեց, իսկ ես երազում էի, թե երբ կմեկնեմ Վան՝ հայկական վարժարանում սովորելու: Այդ երազանքով էի տարվել, երբ հանկարծ մեր խրճիթի մեծ դուռը ճռռալով բացվեց և ուրախ-ուրախ ներս խուժեցին մի քանի տղաներ՝ բղավելով.

– Ա՛րջ, ա՛րջ բերին:

Լսելով պատանիների ուրախալի լուրը՝ երկու կանայք ընդհատեցին իրենց խոսակցությունն ու անմիջապես վազեցին դեպի բացված դուռը, որտեղից առատորեն ներս էր հոսում Ծաղկասարից փչող զով քամին: Հաջորդ վայրկյանին ներս մտավ նաև Բադալն իր երեք ընկերներով՝ հետն էլ բերելով արջի երկու ձագուկներ, որոնք կապկպված էին մազից գործած թոկերով:

Արջուկներին խրճիթի անկյունում կապելուց հետո Բադալը հրավիրեց իր ընկերներին նստել թոնրին դրված քուրսու շուրջ, որը միաժամանակ մեր ճաշասեղանն էր: Ես այդ վայրկյանին իմ եղբոր վերադար-

ձով այնքան էի ուրախացել, որ ինձ թվում էր, թե ոտքերս երբևիցե չեն ցավացել: Այդ մտքով էլ ցանկացա տեղից վեր կենալ, մոտենալ արջուկներին, շոշափել նրանց, բայց զուր. այս անգամ էլ հոդացավից չկարողացա տեղիցս շարժվել:

– Բաբանի՛ աղջիկ, ասում էիր, թե որտեղից կարելի է ճարել արջի միս, հիմա կարող ես ոչ միայն եղբորս բուժել, այլև նրա ճարպից սապոն պատրաստել,– ծիծաղելով ասաց Բադալը:

– Աչանի հոգին դուրս եկավ, երեք գիշեր չի քնել ձեր պատճառով,– կշտամբեց նրան Աննան:

– Ինչո՞ւ,– հարցրեց Բադալը՝ հայացքը ուղղելով Աչանի կողմը:

– Մտածում էր՝ չլինի թե որևէ դժբախտություն պատահած լինի,– պատասխանեց Աննան՝ միաժամանակ հետաքրքրությամբ նայելով Բադալի ընկերոջ ձեռքին, որը կապված էր սև շալով:

Ընկերները, լսելով Աննային, մեկը մյուսին նայելով, սկսեցին ծիծաղել:

– Ի՞նչ է պատահել, Ապրո՛ եղբայր,– հարցրեց Աննան՝ հետաքրքրությունից ավելի մոտենալով նրան:

– Մի փոքր քերծվել է,– պատասխանեց Ապրոն և ժպտալով նայեց ընկերներին:

Աննան ճիշտ էր նկատել. Ապրոյի ձախ ձեռքի մատները վնասվել էին քարայրում արջի հետ կռվելիս, սակայն իր համեստության պատճառով լռել էր, օգնություն անգամ չէր խնդրել:

– Սոված ենք, Բաբանի՛ աղջիկ, ուտել ենք ուզում,– ասաց եղբայրս՝ նայելով դեպի Աչանը, որն իր հերթին սյան հետևում սեղան պատրաստելու գործով էր զբաղված:

Աննան, որ մինչև այդ խոսում էր եղբորս հետ, նույնպես վեր կացավ՝ Աչանին օգնելու: Երկու կանայք ուրախ-ուրախ թոնրից հանեցին պուտուկով լիքը ծավարե փլավը և, լցնելով կավե մեծ քասաների[20] մեջ, դրեցին որսորդների առջև:

Տղաները ճաշեցին, երկար զրուցելուց հետո վեր կացան խրճիթից դուրս գնալու, սակայն հենց այդ պահին էլ դուռը բացվեց, ու ներս մտավ հայրս: Տեսնելով սկեսրայրին՝ Աչանն անմիջապես ծածկեց իր երեսն ու վազեց սյան հետևը, սակայն նկատելով այնտեղ կապված արջի ձագուկներին՝ վախից հանկարծակի բղավեց: Նրա բղավոցն այնքան սարսափելի եղավ, որ նստածները թուլացան ծիծաղից: Չէ՞ որ Աչանը չխոսկան էր

[20] քասա *(բրբ.)* – կերակրի խոր ափսե

և հանկարծ սկեսրայրի ներկայությամբ բարձր ձայնով անիծեց արջի քոթոթներին: Այդ օրը առաջին անգամ հայրս լսում էր Աչանի ձայնը, և ինքն էլ սկսեց ծիծաղել, իսկ Աննայի ուրախությանը չափ ու սահման չկար: Նա խնդալու հետ համոզում էր հարսին այդ օրվանից վերջ տալ չխոսկանությանը, բայց վերջինս, ամոթից կարմրած, համարյա թե վազելով, փախավ դուրս՝ կրկին անիծելով արջի ձագուկներին:

Որսորդները հայրիկիս մանրամասն պատմեցին, թե ինչպես են որսացել արջին: Գյուղից դուրս գալով՝ լուսնկա գիշերվա պարզ լույսի տակ նրանք նկատել էին հրացաններով զինված երկու անհայտ մարդկանց, որոնք Բաբանիս գյուղ տանող սարալանջի նեղ արահետով մոտենում էին ձորում եղած ջրաղացին: Կասկածելով նրանց՝ տղաներից երկուսը թաքնվել են թփերի մեջ, իսկ Բադալն ու Մովսեսն էլ հետևել են զինված մարդկանց մինչև ջրաղաց մտնելը: Մինչ վերջիններս մթության մեջ կգտնեին ջրաղացպանին, Բադալն ու Մովսեսը նրանց հետևից կարողացել են աննկատ ներս մտնել և հետևել անծանոթներին:

Ջրաղացպանի և զինված մարդկանց միջև եղած խոսակցությունից տղաները հասկացել էին, որ երկու ժամ առաջ չորս քուրդ ավազակներ թալանել էին հայ գութանավորներին, խլել նրանց լծկան անասունները, որից հետո մտադրվել էին ջրաղացպանին խեղդել, եղած հացահատիկն ու ալյուրը հափշտակել: Ջրաղացի տերը մեծ համառությամբ դիմադրել է նրանց, սակայն ուժը չներելու պատճառով թուլացած վայր է ընկել: Բարեբախտաբար հենց այդ պահին էլ Բադալն ու Մովսեսը, մի ակնթարթում թաքնված տեղից դուրս գալով, հարձակվել են ավազակների վրա և խլել նրանց զենքերը: Ուշքի եկած ջրաղացպանը չի կարողացել ճանաչել իրեն փրկողներին:

Փակելով կապկպված ավազակների աչքերը՝ հայ տղաները նրանց դուրս են բերել ջրաղացից և ուղևորվել դեպի Տիգրիս գետը, որտեղ նրանց սպասելիս են եղել Ապրոն և Իսրայելը:

Արձակելով քուրդ ավազակների աչքերն ու թևերի կապանքները՝ հայ տղաները առաջարկել են նրանց բարձրանալ Տիգրիս գետի ափին եղած մեծ քարաժայռի գագաթը:

– Ինչո՞ւ եք ստիպում մեզ վեր բարձրանալ,– հարցրել է նրանցից մեկը:

– Գնալու եք ալլահի մոտ,– պատասխանել է Ապրոն:

Կռահելով որսորդների մտադրությունը՝ ավազակներն աղերսել են խնայել իրենց կյանքը՝ խոստանալով փող ու հարստություն, միայն թե իրենց ազատ արձակեն:

– Ձեր փողը, հարստությունը ձե՛զ պահեք, միայն թե ուրիշի ունեցվածքին ձեռք մի՛ տվեք,– պատասխանել է Բադալը:

– Այո՛, այո՛, ձեռք չենք տա,– երդվել են նրանք:

– Այդ դեպքում ձեր զենքերը կնետվեն գետը, ա՛յ այստեղ,– ասում են՝ ցույց տալով գետի փրփրուն ալիքները, որոնք, զարնվելով քարաժայռի հիմքերին, պտտվելով կրկին հոսում էին դեպի գետի կենտրոնը:

– Դուք արդեն նետեցիք,– պատասխանել է այն ավազակը, որի ներկայությամբ հրացանները իրոք գետը նետվեցին:

– Ուրեմն համոզվեցիք, որ ձեր զենքերը ջրի հատակում են:

– Այո՛, համոզվեցինք,– միաբերան պատասխանել են նրանք:

Արձակելով ավազակների կապանքները՝ որսորդները պահանջել են նրանց անցնել գետի հակառակ կողմը, որտեղից եկել էին:

Այսպիսով՝ հայ տղաները կրկին մեծահոգաբար ազատ էին արձակել քուրդ ավազակներին՝ թողնելով նրանց անպատիժ:

*

* *

Ահա այդ դեպքի պատճառով տղաները ուշ էին հասել Արջաձոր, որտեղ որ արջեր էին լինում:

Դժվարությամբ անցնելով թփուտների ու քարաժայռերի միջով՝ նրանք օրվա կեսին միայն հասել էին Արջասար՝ սպիտակ քարաժայռի հակառակ կողմը, որտեղ գտնվում էին գազանների որջերը:

Քարաժայռերի ճեղքերում երկար թաքնվելուց հետո՝ վերջապես երեկոյան դեմ, երբ արևը նոր էր մայր մտել, հանկարծ Արջասարի անդնդախոր ձորից դուրս է գալիս մի հսկա արջ, բարձրանում դեպի քարայր ու անմիջապես մտնում իր որջը:

Գազանն այնքան արագ է մտնում քարայր, որ որսորդները դժվարանում են նրան հետապնդել, անգամ կրակ արձակել:

Գիշերվա խավարում արջի որջ մտնելը ոչ միայն վտանգավոր է, այլև արդյունքի հասնել հնարավոր չէ, այդ իսկ պատճառով որսորդները ստիպված են լինում չորս կողմից շրջապատել քարայրի անցքը ու համբերությամբ սպասել գազանի դուրս գալուն:

Տեսնում են՝ երկար սպասելուց բան դուրս չի գալիս, վերջապես որոշում են երկուսով մտնել քարայր՝ ստիպելով գազանին իր որջից դուրս գալ: Ձինված Բադալն ու Մովսեսը թաքնվում են քարայրի անցքի մոտերքում՝ սպասելով գազանի երևալուն, իսկ Ապրոն և Իսրայելը իրենց հերթին կրակի մեծ պատրույգներով մտնում են քարայր՝ ստիպելու գազանին դուրս գալ իր որջից:

Քարայրը մտնելուն պես փորձված որսորդները սկսում են վառել իրենց հետ տարած նավթով թրջված պատրույգը՝ այնտեղ լցնելով թանձր ծխակույտ: Բնության մաքուր օդում թափառող գազանը, չդիմանալով քարայրում կուտակված թանձր ծխամպին, ոռնալով առաջ է գալիս՝ հանդիպելով զինված որսորդներին: Նկատելով որջից դուրս եկած արջին՝ Ապրոն իր ձախ ձեռքը, որը խնամքով փաթաթված է լինում խոնավացած թաղիքով, անմիջապես մտցնում է գազանի երախը, իսկ Իսրայելը սկսում է սուր դաշույնով հարվածել:

Վիրավորված արջը գազազելով կրծոտում է Ապրոյի ձեռքը, իսկ թաթի հարվածով գետին է գլորում Իսրայելին ու որջից դուրս փախչում:

Մի ակնթարթում նա կարող էր հոշոտել ու ժայռից շպրտել Բադալին, եթե նույն վայրկյանին երկու ընկերների համատեղ կրակոցները չտեղային նրա վրա: Ավելի քան տասներկու գնդակ հազիվ թուլացնում են գազազած արջին, և միայն Մովսեսի հրացանի վերջին գնդակը ստիպում է նրան քարաժայռից գլորվել դեպի Արջաձորի խոր անդունդը:

*
* *

Այն քարայրը, որը համարվում էր արջերի որջ, վաղուց հայտնի էր գյուղացիներին որպես շատ վտանգավոր վայր, ուստի անգամ օրը ցերեկով որևէ մեկը սիրտ չէր անում մտնել այնտեղ, ուր մնաց, ազատ շրջել:

Քարայր ասվածը մի ընդարձակ և դատարկ տարածություն էր, որտեղ կարելի էր տեղավորել հազարից ավելի անասուն, միայն թե հնար լիներ հոտը բարձրացնել քարաժայռի անմատչելի բարձունքը:

Ամբողջ ժայռի մեջ դատարկ էր. տեղ-տեղ կային մեծ հաստությամբ սյունանման հենարաններ, որոնք իրենց վրա էին վերցրել հազարավոր դարերի ընթացքում կազմավորված քարաժայռի հսկա ծանրությունը:

Կամարակապ քարայրը այնքան մեծ էր և ընդարձակ, որ անծանոթը կարող էր կարծել, թե դա պատրաստվել է հազարավոր քարտաշ ու որմնադիր վարպետների կողմից:

Վիրավորված Ապրոյին և Իսրայելին այդ զարհուրելի քարայրից դուրս բերելուց հետո որսորդներն ուղևորվել էին դեպի ձորը, որտեղ գլորվել էր սպանված գազանը: Չորս ընկերներով ահռելի գազանին տեղից շարժել չէին կարողացել. այդ պատճառով էլ նրանք դիմել էին այն գութանավորների օգնությանը, որոնց լծկան անասունները իրենք ավազակներից հետ էին խլել:

Իհարկե, գութանավորները մեծ հաճույքով կատարել էին որսորդների խնդրանքը, և հաջորդ օրվա երկրորդ կեսին սպանված արջն իր երկու ձագուկներով արդեն փոխադրվում է գյուղ:

Վերջացնելով արջ որսալու իրենց պատմությունը՝ որսորդները վեր կացան, բայց հայրս խնդրեց նրանց շարունակել դեպքերի պատմությունը:

– Պատմելու առանձնապես բան չկա,– պատասխանեց Մովսեսը, – անհրաժեշտ է Ապրոյին հեքիմի մոտ տանել,– ավելացրեց նա:

– Ի՞նչ է պատահել,– հարցրեց հայրս:

– Քարայրի մեջ մտնելու ժամանակ արջն է կրծոտել:

– Այդ լավ է, որ արջն է կրծոտել, այլ ոչ թե ավազակները:

– Ավազակները ժամանակ չունեցան, թե չէ ոչ միայն կարող էին կրծոտել, այլև սպանել:

– Ջրաղացպանին խեղդող ավազակները ձեզ ճանաչեցի՞ն,– հարցրեց հայրս՝ դիմելով եղբորս:

– Չնայած լուսնյակ գիշեր էր, բայց չնկատվելու համար մենք ծածկել էինք մեր դեմքերը, ուստի նրանք մեզ ճանաչել չէին կարող,– պատասխանեց Բադալը:

– Իսկ դուք նրանց ճանաչեցի՞ք:

– Միայն մեկին, բայց մեզ չմատնելու նպատակով չուզեցինք ցույց տալ:

– Ո՞վ էր այդ մեկը:

– Մեր գյուղի ոչխարների հոտը թալանող ավազակներից մեկը:

– Ուրեմն Հասան բեկի ցեղի քրդերից են եղել և անպայման քեզ ճանաչած կլինեն,– ասաց հայրս՝ ակնարկելով Բադալին:

– Դժվար թե ճանաչած լինեն,– պատասխանեց եղբայրս:

– Համենայնդեպս զգո՛ւյշ եղեք, նրանք արնախում ավազակներ են և հեշտությամբ վիրավորանքը կուլ չեն տա,– խրատում էր հայրս:

*
* *

Այդ խոսակցության հաջորդ օրը լուր տարածվեց, թե անցած գիշեր գազանները մտել են Բաբանիս գյուղի հարուստ քուրդ Սմկո աղայի գոմը և վնասել երկու հարյուրից ավելի մանր եղջերավոր անասուն: Այդ պատճառով Սմկո աղան նախ խստորեն պատժել էր իր հովիվներին, ապա պահանջել, որ նրանք հետապնդեն ու ոչնչացնեն գազաններին, իսկ մորթիները՝ որպես ապացույց, ներկայացնեն իրեն:

Բաբանիսը մեր հարևան քրդական գյուղերից մեկն էր և գտնվում էր Տիգրիս գետի հակառակ ափին՝ մի հսկա սև քարաժայռի ներքևում: Գյուղը հարուստ էր խոտհարքներով: Գյուղի դեմ դիմաց հառնում էր կանաչին տվող բարձրադիր Ծաղկասարը, իսկ ձախ կողմում գտնվում էին մեր գյուղի ամառանոցները:

Բաբանիսի քրդերի մեծ մասն աղքատ էր. հարուստ էր միայն Սմկո աղան, որը տիրում էր համարյա թե ամբողջ գյուղին ու անխղճորեն շահագործում նրա բնակիչներին:

Աղայի մանր եղջերավոր անասունների գոմերը գտնվում էին գյուղից ոչ հեռու՝ երկու հանդիպակաց սարերի արանքում: Անցած լուսնկա գիշերվա կեսին մի հսկա արջ իր ձագուկներին սնունդ ճարելու նպատակով անցնում է Տիգրիս գետի հակառակ կողմը, բայց ոչխարների հոտի մեջ մտնելու որևէ մուտք չի գտնում: Շատ որոնելուց հետո վերջապես նրան հաջողվում է ցածրիկ ցանկապատի վրայով բարձրանալ տանիքն ու հոտոտելով մոտենալ գոմի երդիկին:

Արջը երանության դրախտն էր ընկել. նա մոտավոր հաշվով հոշոտել էր Սմկո աղայի երկու հարյուրից ավելի ոչխար: Լուսաբացին, երբ Սմկո աղայի հովիվն անասուններին արոտ տանելու նպատակով բաց է անում գոմի դռները, նկատում է մի գազանի: Սկզբում նա կարծում է, թե դա Հասոյի գորշ եզն է, սակայն երբ լսում է խեղդվող շների վնգստոցը, նոր միայն գլխի է ընկնում, որ դա Արջասարի մեծ արջն է: Հովվական երկար ցուպը ձեռքին բռնած՝ վազում է դեպի արջը, բայց զուր, արջը հեռանում է գոմից՝ իր հետևից թողնելով ոչխարների հոշոտված մարմիններն ու Մստոյի խեղդված երկու մեծ շներին:

Այն ժամանակ, երբ Մստոն իր ընկերներով հաշվում էր գոմերում քրքրված ոչխարների թիվը, այդ նույն պահին ոչխարի մսից կշտացած գազանը հանգիստ բարձրանում էր դեպի Արջասարի քարայրը, որտեղ նրան էին սպասում չորս հայ որսորդները: Երբ Սմկո աղայի զինված մշակները, սարերը ընկած, Արջասարի արջին էին որոնում, այդ նույն պահին էլ մեր հարևանները միևնույն արջի ճարպից սապոն էին պատրաստում:

*

* *

Արջի միսն ուտելուց կտրականապես հրաժարվեցի. Աննան ու Աչանը իրենց աղաչանք ու պաղատանքով ոչ մի արդյունքի չհասան: Իմ զայրացկոտ «չէ» ասելը բավական էր, որպեսզի նրանք ձեռք քաշեին ինձանից:

Տեսնելով իմ համառությունը՝ երկու կանայք բավարարվեցին նրանով, որ արջի յուղոտ կաշվից մի մեծ կտոր փաթաթեցին հոդերիս, որի ծանրությունից ուղղակի տեղիցս շարժվել չէի կարողանում: Աչանն ու Աննան կարծում էին, թե արջի կաշին ոտքերիս փաթաթելով՝ ես հրաշքով մի օրից պառկած տեղից կարող եմ վեր կենալ՝ բոլորովին առողջացած: Իհարկե, նրանց կարծեցյալ հրաշքը չկատարվեց: Երկու օր անցնելուց հետո ոտքերիս ցավն էլ ավելի սաստկացավ: Չէի դիմանում ոչ միայն կաշվի ծանրությանը, այլև նրա գարշելի հոտին: Ամբողջ մարմինս քոր էր ընկել. այդ պատճառով էլ չէի քնում ո՛չ գիշերը, ո՛չ էլ ցերեկը, իսկ Աչանն ուրախանում էր՝ կարծելով, թե արջի կաշին բուժել է վախի հետևանքով առաջացած հիվանդությունս: Միամիտ կինը իր հույսը դրել էր գազանի մորթու հրաշքի վրա և ոչ մի այլ օգնություն ցույց չէր տալիս ինձ ցավերս մեղմացնելու համար: Իսկ ես տանջվելով սպասում էի հայրիկիս, որը երեք օր առաջ էր գնացել Շատախ ու դեռ չէր վերադարձել:

Վերջապես հայրս եկավ, իսկ երեկոյան տուն մտավ նաև Բադալը: Տեսնելով հայրիկիս և մեծ եղբորս՝ մի պահ կարծեցի, թե ցավերս մեղմացան: Այնուամենայնիվ պահանջեցի, որ ոտքերիցս պոկեն արջի գարշահոտ կաշին: Հայրս ոչ միայն համաձայնվեց, այլև խոստացավ միասին գնալ Տիգրիս գետի տաք ջրերում լողանալու:

Չնայած գիշերը տանջանքով լուսացրի, բայց և այնպես մի կերպ դիմացա: Իմ ուրախությանը չափ չկար, երբ առավոտյան հայրիկիս հետ ուղևորվեցինք դեպի Տիգրիս, որտեղ տաք աղբյուրներ կային:

Աղբյուրի՝ սպիտակին տվող ջրային շիթը ցայտում էր ժայռի տակից՝ իր փրփուրները տարածելով ամեն կողմ: Այն գետի ջրերից անջատված էր մի մեծ քարաժայռով, իսկ տեղ-տեղ էլ ավազակույտերով, որոնք արգելակում էին գետի ափերի հոսանքը դեպի տաք աղբյուր:

Հանքային ջուրը չպղտորելու նպատակով լճի մեջ լցված էր գետի մանր ավազ, որի առանձին հատիկները մարգարիտի հատիկների նման շողշողում էին ջրի հատակում:

Լճի երկու կողմերում դրված էին քարե սալիկներ, որոնք ծառայում էին որպես նստարաններ, իսկ լճի շուրջբոլորը զարդարված էր բազմատեսակ հոտավետ ծաղիկներով ու բույսերով:

Ջուրը մտնելու առաջին իսկ րոպեներին ամբողջ մարմինս հանգստացավ, ցավերս մեղմացան. ինձ թվում էր, թե երբևէ ցավեր չեմ ունեցել: Հանքային ջուրը տաք էր և հաճելի: Ավազանի պարզ ջրի հատակից մարգարիտի հատիկների նման պղպջակները բարձրանում էին դեպի վեր ու պայթելով կրկին անհետանում:

Վեցերորդ օրվա լոգանքից հետո հոդերիս ցավերը կրկին սաստկացան, որի պատճառով յոթերորդ օրը հրաժարվեցի լիճ մտնել:

Աննան և Աչանը ստիպում էին, որ արջի ձագուկներից մեկը մորթեն և նրա կաշին նորից փաթաթեն հոդերիս, բայց մեծ եղբայրս արգելեց՝ համարելով դա ավելորդ:

– Եթե մեծ արջի կաշին չօգնեց եղբորս, ապա մեկ տարեկան ձագուկի կաշին բոլորովին չի օգնի,– ասաց Բադալն՝ առաջարկելով կրկին մեկնել Տիգրիս՝ գետի տաք ջրերում լոգանք ընդունելու:

Այդպիսով՝ մեկ շաբաթվա ընդմիջումից հետո հաջորդ օրվա կեսին Բադալի հետ նորից մեկնեցինք տաք ջրեր՝ հետներս տանելով նաև իմ հասակակից ընկերներին:

Գալով Տիգրիս գետի ափ՝ նրանք առավոտից մինչև ուշ երեկո լող էին տալիս, բարձրանում քարաժայռի գագաթը, կրկին նետվում գետի փրփրած ալիքների մեջ, իսկ ես նախանձով դիտում էի նրանց: Այդ օրերին իմ միակ զբաղմունքն էր պառկել տաք ջրում, թավալվել հոտավետ ծաղիկների մեջ, շնչել ծաղկազարդ բնության այդ հրաշալի օդն ու բույրը և ընկերներիս հետ մթնադեմին վերադառնալ տուն:

ԹՈՒՐՔ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԻ ՊԱՏԻԺԸ

Արթնացա այն ժամանակ, երբ առավոտյան պայծառ արևի շողքը երկար ու հաստ գերանի նման խրճիթի մեծ երդիկից կախվել էր ներս՝ ուղիղ ընկնելով անկողնուս վրա: Գլուխս բարձրացնելով՝ ես շողից իմացա, որ ուշ եմ արթնացել. մերոնք բոլորն էլ գնացել էին աշխատանքի, ամեն մեկը՝ իր գործին: Իսկ Աչանը՝ որպես տանտիրուհի, վաղուց վառել էր թոնիրն ու պատրաստվում էր հաց թխել: Աչանի թխած առաջին տաք հացն ուտելուց և սյան հետևում կապկպված արջուկներին կերակրելուց հետո անմիջապես տանից դուրս եկա, համարյա թե վազելով հասա մեր ամենօրյա հավաքատեղին: Մեծ ծառի փչակում հավաքվել էին իմ բոլոր ընկերները, որոնց հետ անցկացրել էի անցած ամբողջ օրը:

Մեր խմբի անդամների կարճ խորհրդակցությունից հետո, վերցնելով օրվա ուտելիքի անհրաժեշտ պաշարը, առավոտյան այդ վաղ ժամին մեկնեցինք Տիգրիս գետ: Այդ օրը մենք սովորականից քիչ լողացանք, քանի որ պայմանավորվել էինք բարձրանալ սարալանջ՝ վայրի պտուղներ հավաքելու:

Մեր խմբի բոլոր անդամները համարյա թե հասակակիցներ էին: Մանուկ հասակից ընկերներ լինելով՝ մենք անկեղծորեն սիրում էինք մեկս մյուսին: Մեկ տարի առաջ հավաքվելով «սուրբ» ծառի մեծ փչակում՝ մենք ընտրել էինք մեր խմբի ղեկավարին, որի առջև հանդիսավոր երդվել էինք հավատարիմ մնալ միմյանց ու երբեք չդավաճանել խմբի անդամներից թեկուզ որևէ մեկին: Մենք խոսք էինք տվել նաև լինել կարգապահ, հատկապես մեր հակառակորդների հետ կռվելիս լինել քաջ ու համարձակ:

Իհարկե, մեր հանդիսավոր երդումը պատահական երևույթ չէր: Խմբի անդամների պատանեկան այդ անմեղ երդումը այնքան անկեղծ էր, որ դարձավ հարատև ու մշտական անգամ 1915 թվականի թուրքական դաժան կոտորածների ահավոր օրերին: Մենք՝ կենդանի մնացածներս, հավատարիմ մնալով մեր երդմանը, հետագա տարիներին էլ հոգով ու սրտով կապված մնացինք միմյանց հետ:

Մեր խմբի ղեկավարը Մնոն էր՝ լեռներում ապրած գյուղացու զավակ: Նա ոչ միայն շատ չար էր, այլ նաև ճարպիկ էր ու համարձակ: Մնոյի կարգադրությունը մեզ բոլորիս համար խիստ պարտադիր էր. նա ինչ որ հրամայեր, այն էլ պետք է կատարվեր, իսկ չկատարողները դուրս կմնային մեր խմբից:

Տաք ջրերից վերադառնալու կես ճանապարհին խմբի ղեկավարը հրամայեց թեքվել դեպի սարալանջի խոտհարքները:

Դուրս գալով Տիգրիս տանող նեղ արահետից՝ մենք մտանք մի անդնդախոր ձոր կրկին վեր բարձրանալու նպատակով:

Ձորն այնքան առատ էր խոտաբույսերով, որ երկու քայլի վրա մեկը մյուսին տեսնել չէր կարող: Այնուամենայնիվ, հաղթահարելով խիտ մացառուտ ճանապարհը, մենք շատ դժվարությամբ հասանք սարալանջի խոտհարքները, որտեղից պետք է հավաքեինք մեզ անհրաժեշտ վայրի պտուղները:

Մեզ հետ վերցրած հաց ու պանիրն ուտելուց և աղբյուրի մոտ քիչ հանգստանալուց հետո տղաները խոտհարքով մեկ ցրվեցին:

Յուրաքանչյուրը հավաքում էր այն, ինչ շատ էր սիրում: Ոմանք հավաքում էին խավրծիլ, ծառապտուղներ, իսկ մյուսներն առաջին հերթին սկսել էին սարի ծամոն պատրաստել: Սարալանջն այնքան հարուստ էր վայրի պտուղներով, որ յուրաքանչյուրն առանց երկար որոնումների շատ արագ կարողացավ հավաքել իր ցանկացածը ու նույնիսկ պատրաստել ծաղկեփնջեր՝ որպես նվեր տուն տանելու: Վերցնելով մեր պայուսակները՝ Մնոյի սուլոցի ազդանշանով կրկին հավաքվեցինք աղբյուրի մոտ:

Օրը հազիվ կես էր դարձել, բայց մենք դեռ բավականին ժամանակ ունեինք, որ նորից իջնեինք ձոր՝ ձեռնափայտեր պատրաստելու:

Վերադառնալով տուն՝ մեր խումբը երգելով, ուրախ-ուրախ իջնում էր ձորի անտառը, սակայն դեռ ծառերին չհասած՝ հանկարծ լսեցինք Մնոյի հրամայական ձայնը.

– Կա՛նգ առեք:

– Ինչո՞ւ,– հարցրի ես:

– Թաքնվե՛ք, թուրք ոստիկաններ են գալիս,– պատասխանեց նա՝ առաջարկելով անմիջապես թաքնվել:

Իսկապես, մեր թաքնվելու վերաբերյալ Մնոյի կարգադրությունն իզուր չէր. Շատախի կողմից դեպի Տիգրիս էին գալիս խուրջինները շալակած չորս թուրք ոստիկաններ: Հրացաններով զինված թուրքերը, շեղվելով դեպի քրդական գյուղը տանող ճանապարհից, ուղիղ շարժվեցին մեր կողմը, որտեղ քիչ առաջ ինքներս թաքնվեցինք: Թե ինչու և ինչ նպատակով էին շեղվել իրենց ճանապարհից, սկզբում գլխի չընկանք, այնուամենայնիվ նրանցից թաքնվելու համար մեր խումբն իր տեղից քիչ հետ քաշվեց՝ մտնելով անանցանելի ալաշների[21] մեջ, հետևելով թուրք ոստիկանների կասկածելի առաջշարժմանը:

Մոտենալով խիտ թփուտներին՝ ոստիկանները կանգ առան: Վայր դնելով խուրջինները՝ սկսեցին խոտհարքի չորս կողմը հետազոտել: Մի պահ կանգնեցին, ապա համոզվելով, որ մոտակայքում կողմնակի մարդ չկա, ոստիկանները խուրջինները թաքցրին խոտերի մեջ և խնամքով քողարկելուց հետո անմիջապես հեռացան: Ակնհայտ էր, որ խուրջիններ-ը թաքցնելու մեջ անպայմանորեն մի գաղտնիք կար, բայց թե ինչ գաղտնիք էր, անհրաժեշտ էր պարզել: Զգուշության նպատակով մեր խմբից երկու հոգի աննկատ հետևեցին հեռացող թուրք ոստիկաններին այնքան ժամանակ, մինչև նրանք անցան Տիգրիս գետի հակառակ կողմն ու անհետացան գյուղի ծառուղիներում: Համոզվելով, որ թուրք ոստիկանները շուտ հետ չեն վերադառնա, մենք վճռեցինք նրանց թաքցրած խուրջինները տեղափոխել մի այլ վայր՝ համոզված լինելով, որ դրանք թալանված էին հայ գյուղացիներից:

Բացելով լիքը խուրջինները՝ ի զարմանս բոլորիս, նրանց մեջ տեսանք մեծ քանակությամբ հարսանյաց նվերներ, կանացի զարդեր, զանազան կտորներ, մետաքսյա շալեր, կանացի կոշիկներ, գլխի զարդեր, իսկ մի խուրջինը լիքն էր շաքարով: Ըստ երևույթին վերջինս գնված էր հարսանիքի մասնակիցներին շարբաթով հյուրասիրելու համար:

---

[21] ալաշ – փշոտ թփաբույս

Ուշադիր տնտղելով ավարը՝ մենք որոշեցինք ոչ մի բանի ձեռք չտալ և ոստիկանների թաքցրած խուրջինները ժամանակավորապես մի այլ ապահով տեղ թաքցնել: Շալակելով ծանր խուրջինները՝ մենք դուրս եկանք թփուտներից և անցնելով անդնդախոր ձորից հոսող արագավազ գետակն ու արևը դեռ մայր չմտած՝ հասանք Կավասարի հակառակ կողմը, որտեղ տարվա համարյա բոլոր եղանակներին հազվագյուտ էր մարդ երևում:

Կավասարի հակառակ կողմն իր դիրքով նմանվում էր Արջասարին, որտեղ բացի վայրի գազաններից ու մարդասպան ավազակներից, ուրիշ ոչ ոք չէր լինում: Գալով այդտեղ՝ մենք գողացած խուրջինները արագորեն թաքցրինք քարափների մեջ այնպես, որ դժվար թե որևէ մեկը կարողանար հեշտությամբ գտնել: Քողարկելով ձեռք բերված թանկագին ավարը՝ մենք մի մեծ շրջանց կատարեցինք Կավասարի շուրջը հետքերը կորցնելու նպատակով և բոլորովին նոր ճանապարհով երեկոյան մթնադեմին հասանք գյուղ:

Բաժանվելով տղաներից, կարծես թե մեծ բեռից թեթևացած, ուրախ-ուրախ վազելով՝ մտա մեր տուն: Փոքրիկ Միրաքի մոտ նստած Աչանը ինձ տեսնելուն պես մի պահ ուրախացավ, բայց միաժամանակ բարկանալով՝ հարցրեց.

– Ո՞ւր էիր, հայրդ ու եղբայրդ վաղուց քեզ են որոնում:

Իհարկե, ես մեղավոր մարդու պես կանգնել էի նրա դեմ՝ առանց որևէ պատասխան տալու:

– Ասա՛, ասա՛, ո՞ւր էիր գնացել, ինչո՞ւ չես պատասխանում,– զայրացած հարցնում էր նա:

– Գնացել էի տաք ջուր՝ լողանալու,– վերջապես պատասխանեցի ես:

– Ճիշտ չես խոսում. եղբայրդ գնացել է Տիգրիս, դու այնտեղ չես եղել,– ասաց նա ավելի չարացած:

Լսելով զայրացած Աչանին՝ ես քար լռությամբ կանգնել էի սյան ստվերում՝ չպատասխանելով նրա հարցերին:

– Չես ասում, հա՞,– երրորդ անգամ կրկնեց նա, բայց ես հարկ համարեցի դարձյալ լուռ մնալ, մինչև նա կհանգստանար:

Ժողովրդական առածն ասում է. «Գող, սիրտը՝ դող»: Եթե ուրիշ անգամ լիներ, ես Աչանի կշտամբանքի տակ մնացողը չէի, ընդհակառակը, կպատասխանեի ավելին, բայց այդ օրը հակաճառելու ոչ մի պատճառ չունեի:

Վերջապես Աչանը դադարեց հարցեր տալ, իսկ ես առանց ընթրիքի, քաղցած փորով մտա անկողին: Չնայած շատ էի հոգնել, բայց օրվա

անսովոր դեպքերի տպավորությունների ներքո ոչ մի կերպ չկարողացա քնել: Վերմակի տակ պառկած՝ ես մտածում էի այն մասին, թե ինչ կասի հայրս. չէ՞ որ, դեռ հիվանդությունից լրիվ չկազդուրված, առանց նրա գիտության, սկսել էի թափառել սարեր ու ձորեր, հատկապես այդ օրը կատարել էի վտանգավոր և անթույլատրելի արարք:

Հայրս և Բադալը դեռ չէին վերադարձել տուն. թե ուր էին գնացել այդ ուշ ժամին, չկարողացա իմանալ, իսկ Աչանին կրկին չբորբոքելու համար չուզեցի հարցնել նրանց մասին:

Այդ սպասողական վիճակի մեջ վերջապես լսեցի մեծ դռան ճռռոցը ու ներս մտնողների ձայները: Դա հայրիկս էր. մեծ որդու հետ խոսելով՝ ներս մտավ: Այդ պահին ես այնքան էի սրել լսողությունս, որ ականջիս հասնող նրանց հատուկենտ բառերից անգամ հասկացա, թե խոսակցությունն ում է վերաբերում:

Մոտենալով թոնրի վրա դրված քուրսուն՝ նրանք ինձ տեսան անկողնում պառկած:

– Շո՞ւտ է վերադարձել,– հարցրեց հայրս:

Ի պատասխան սկեսրայրի հարցին՝ Աչանը գլխով արեց՝ հասկացնելով, որ շուտ է եկել:

– Չիմացա՞ր՝ ուր էր գնացել:

– Ո՛չ, – գլուխը օրորեց հարսը:

Քնած ձևանալով՝ ես վերմակի տակից ծպտված հետևում էի նրանց շարժումներին՝ լսելով, թե ով ինչ է խոսում:

Իմ մասին շարունակվող խոսակցությունը դեռ չէր վերջացել, երբ մեր տուն մտան ինչ-որ մարդիկ, որոնցից ճանաչեցի Մովսեսին, իսկ մնացածները անծանոթներ էին, որոնց երբեք չէի տեսել:

Հայրս նրանց հրավիրեց նստելու, իսկ վերջիններս առաջ գալով, ծալապատիկ նստեցին գետնին փռված կարպետին:

– Բարով եք եկել, հազար բարով, գլուխներիս վրա տեղ ունեք,– ողջունեց նրանց հայրս:

– Շնորհակալ ենք, Մխիթա՛ր եղբայր, Աստված թող քո որդիներին երկար կյանք տա:

– Հիշողաց,– պատասխանեց հայրս:

Մի քանի րոպեում Աչանը սեղան գցեց՝ բերելով հաց, պանիր, յուղով շաղախած փոխինձ, ու դնելով սեղանին՝ կրկին հեռացավ մեծ սյան մոտ՝ հետևելով սեղանի շուրջ նստածներին:

Ուտելու ժամանակ ոչ ոք չէր խոսում. բոլորը մտահոգված էին: Հյուրերից մեկը խմելու ջուր ուզեց: Աչանը անմիջապես վազեց դեպի

միջանցք, որտեղից ջրի փոխարեն բերեց կավե փարչով լիքը մածնաթանը ու դրեց սեղանին: Հագեցնելով իր ծարավը՝ շատախցին խախտեց լռությունը.

– Մենք ձեր գյուղը չէինք եկել, այսօր բախտի բերմամբ տեսանք, տեսանք նաև սարալանջի խոտհարքները, պետք է խոստովանել, որ շատ դժվարությամբ դուրս եկանք այնտեղից:

– Ձորից դուրս գալն ավելի դժվար էր, ուղղակի ժամեր տևեց, մինչև դուրս եկանք Տիգրիս տանող ճանապարհը,– ավելացրեց երկրորդ հյուրը:

– Ի՞նչն էր ստիպել ձեզ մտնել այդ անանցանելի ձորի մեջ,– հարցրեց հայրս: Քիչ խորհելուց հետո առաջին խոսողը շարունակեց.

– Երկու օր առաջ իմ հայրը երկու եղբայրներիս հետ քաղաքում առևտուրը անելուց հետո՝ տուն վերադառնալիս, կես ճանապարհին հարձակման է ենթարկվել զինված ոստիկանների կողմից: Այդ անիրավները բռնի կերպով թալանել են հարսանիքի համար քաղաքից գնված չորս խուրջիններ՝ լիքը ապրանքով, ու մթության մեջ անհայտացել:

– Իսկ ձերոնք ինչո՞ւ են լռել,– հարցրեց հայրս:

– Ի՞նչ կարող էին անել զինված ավազակներին:

– Պետք էր դիմադրել:

– Մերոնք շատ հոգնած են եղել, գիշերվա մթության մեջ չեն կարողացել հետապնդել փախչող ավազակներին, մանավանդ ծեր հորս մենակ թողնել չեն ուզել:

– Իմանալով տեղի ունեցածի մասին,– շարունակեց շատախցին,– անցած առավոտից դուրս ենք եկել մեր գյուղից, ճանապարհին տեղեկացանք, որ թալանչիները եկել են ձեր կողմը, բայց թե ուր, չկարողացանք իմանալ:

Որպեսզի հնարավոր լիներ թուրք ոստիկաններին հասնել, շատախցիները որոշել էին շրջանցել մեր գյուղը, Արջասարի լանջերով անցնել Տիգրիս գետի հակառակ կողմն ու գետանցքի մոտ հանդիպել նրանց:

Կտրելով երկու օրվա ճանապարհ՝ նրանք այդ օրն առավոտյան հասել էին որոշված վայրը՝ սպասելով ոստիկանների երևալուն:

– Հանդիպեցի՞ք,– հարցրեց հայրս:

– Մենք Տիգրիսի գետափի շրջանում թաքնված տեղից հետևում էինք շրջապատի անցուդարձին, դժբախտաբար ոչ ոքի չտեսանք, բացի մի քանի երեխաներից, որոնք, սարալանջի խոտհարքներից դուրս գալով, մտան մեծ ձորը ու միանգամից անհետացան, բայց թե ուր գնացին, չկարողացանք իմանալ:

Լսելով շատախցու վերջին խոսքերը՝ ես վերմակի տակ ավելի ծգվեցի՝ սրելով լսողությունս, որպեսզի նրա ասածներից ոչ մի բառ բաց չթողնեի, մանավանդ, որ վերջին խոսքը վերաբերում էր ինձ և իմ ընկերներին: Նստածների խոսակցությունից պարզվեց, որ շատախցիները, հետապնդելով թալանչիներին, ի վիճակի չեն եղել գտնել նրանց, որի պատճառով ստիպված են եղել վերադառնալ, սակայն ոչ թե Շատախ, այլ ուղիղ դեպի մեր գյուղ, այն էլ մեր տուն: Իհարկե, այդ փաստն իմ մեջ ավելի մեծ կասկած առաջացրեց. ինձ թվում էր, թե տեսնելով մեզ՝ նրանք կհայտնեին մեր խմբի գաղտնիքը: Այդ կասկածանքով էլ ընկա խոր մտատանջության մեջ՝ դադարելով նրանց հետագա խոսակցությունները լսելուց. քունը հաղթեց ինձ, իսկ շատախցիները գիշերվա կեսին էին հեռացել մեր գյուղից:

*
* *

Առավոտյան սովորականից շուտ արթնացա, նայելով խրճիթի չորս կողմը՝ բացի օրորոցում քնած երկու փոքրիկներից, ուրիշ ոչ ոքի չտեսա:

Շտապելով հագնվեցի, որպեսզի տանից դուրս փախչեմ, սակայն դռան առաջ կանգնած Աչանը ինձ պահեց:

– Կա՛ց, հայրիկդ կարգադրել է, որ այսօր ոչ մի տեղ չգնաս:

– Ինչո՞ւ,– զարմացած պատասխանեցի ես:

– Չես գնա մինչև նրա գալը,– ասաց նա ու դրսի մեծ դուռը փակելով՝ հեռացավ:

Չնայած Աչանի այդ օրվա անսովոր վարմունքին՝ ես բոլորովին չէի հավատում, թե հայրս պատժելու նպատակով կարգադրած լիներ ինձ տնային բանտարկության ենթարկել, մանավանդ որ երկարատև հիվանդությունից դեռ նոր էի սկսել կազդուրվել: Այնուամենայնիվ հնազանդվելով Աչանին՝ ստիպված էի հեռանալ երկար միջանցքից և նստել դեռ չհավաքված անկողնուս վրա՝ սպասելով դռան բացվելուն:

Անցել էր բավական ժամանակ, բայց դուռը շարունակում էր փակ մնալ, ըստ երևույթին Աչանը մտադրություն չուներ ինձ դուրս թողնելու, իսկ ես տանը մնալ չէի կարող: Անհրաժեշտ էր որևէ հնարքով դուրս գալ, որ ընկերներիս պատմեի հայ գյուղացիներից թալանված խուրջինների վերաբերյալ հայրիկիս և շատախցիների միջև եղած գիշերվա խոսակցությունը: Հանկարծ մտքովս անցավ դուրս գալու մի հնարք. չէ՞ որ մեր պատի միջով անցք էր բացված դեպի հարևանի խրճիթը: Այնտեղից ես հանգիստ կերպով կարող էի դուրս գալ փողոց, մանավանդ որ ծանոթ

էի ոչ միայն մեր, այլև հարևանների ու մնացած գյուղացիների խրճիթների միջև եղած գաղտնի անցքերին:

Ինձ հայտնի էր, որ հայ գյուղացիները իրենց ապահովության համար մեկը մյուսին շտապ օգնություն ցույց տալու կամ թշնամուց առանձին մարդկանց թաքցնելու նպատակով պատերի հիմքերից գաղտնի անցքեր էին բացել իրար հետ կապ հաստատելու համար: Այդ գաղտնի անցքերով ուզած ժամանակ գյուղի մի ծայրից մյուսը կարելի էր տեղափոխել մեծ թվով հայ մարդկանց, որոնց հաճախակի հետապնդում էին թուրք ոստիկանները կամ ավազակ քրդերը: Նշված անցքերից մեկով մյուսին էին հաղորդվում նաև տագնապալի լուրեր, որի մասին հնարավոր չէր դրսից իմանալ:

Դուրս գալու վճռականությամբ մոտեցա պատին, բայց դժբախտաբար անցքն այդ օրը փակված էր մեծ քարերով: Ուզեցի անցքից անցնել հարևանի խրճիթը և այնտեղից մի կերպ դուրս պրծնել, բայց իզուր էր չարչարանքս. մեծ քարերը տեղից շարժել չկարողացա, ուստի ստիպված էի մտնել ոչխարների գոմը երդիկից դուրս գալու ակնկալությամբ: Սակայն երդիկը բարձր էր. առանց կողմնակի օգնության նույնպես ինձ չհաջողվեց վեր բարձրանալ: Այդ անհաջողությունից հետո, չգիտեմ թե ինչու, բնազդաբար մտա խոշոր եղջերավոր անասունների գոմը, որտեղ կապված էր մեր ձին: Անասունը հանգիստ կանգնել էր ու տեղից չէր շարժվում. մեկն ասես ինձ դրդեց բարձրանալ անթամբ ձիու մեջքին: Նա տեղից չշարժվեց, բայց գլուխս այնպես խփեցի ծածկի գերաններից մեկին, որ ինձ թվաց, թե աչքերս տեղից դուրս թռան: Սարսափելի ցավից տանջվելով՝ դուրս եկա միջանցք, կրկին հրեցի մեծ դուռը, բայց իզուր, այն դեռ ամուր փակված էր փայտից պատրաստված փակով:

Չնայած դուրս գալու իմ բոլոր անհաջող փորձերին, այնուամենայնիվ, ես դեռ հույսս չէի կտրել տանից դուրս փախչելու մտադրությունից: Շատ մտածելուց հետո վերջապես դուրս պրծնելու հնարք գտա: Վազեցի մեծ գոմ, արձակեցի սյանը կապած ձին, քաշեցի նրան ոչխարների գոմ ու կանգնեցրի ուղիղ երդիկի տակ: Շոյելով անասունին՝ ես առանց դժվարության բարձրացա նրա մեջքին՝ միաժամանակ ձեռքս պարզելով դեպի կլոր երդիկի խաչաձև փայտերը: Վարժված ձիավորի պես ուղղելով մեջքս՝ գլուխս հեշտությամբ դուրս հանեցի երդիկից, մեկ էլ ուժ տվի ու այս անգամ վանդակից ազատվող թռչունի նման ամբողջովին դուրս թռա լույս աշխարհ: Պրծնելով տնային բանտարկությունից՝ ես առանց կանգ առնելու վազեցի դեպի մեր ամենօրյա հավաքատեղին՝ սուրբ ծառի փչակը, որտեղ հավաքված էին իմ ընկերները:

*
* *

Կաղնու մեծ ծառը կլիներ մի քանի հարյուր տարեկան: Նրա ծավալն այնքան մեծ էր, որ գյուղի ամբողջ նախիրը շոգ ժամանակ պատսպարվում էր չորս կողմը տարածվող ճյուղերի շվաքում, իսկ նրա բնի փչակում կարելի էր տեղավորել ավելի քան 20 մարդու:

Հասնելով նշված տեղը՝ ինձ դիմավորեց մեր խմբի ղեկավար Մնոն:

– Ինչո՞ւ ուշացար,– հարցրեց նա:

– Ինձ բանտարկել էին:

– Ո՞վ, ինչի՞ համար,– զարմացած հարցրեց նա:

Ես պատմեցի նրան շատախցիների և հայրիկիս միջև եղած խոսակցության մանրամասնությունները, միաժամանակ պարծենկոտությամբ ավելացրի, թե ինչ հնարքով եմ փախել տնային բանտարկությունից:

Դուրս գալով մեծ ծառի փչակից՝ ութ ընկերներով գյուղին հարակից փոքր ձորակով աննկատելիորեն ուղևորվեցինք դեպի ջրաղացի անտառը: Տեղ հասնելու համար մեզ անհրաժեշտ էր առաջին հերթին հետազոտել դեպի Կավասար տանող ճանապարհները. դրա համար էլ խմբի ղեկավար Մնոն բարձրացավ անտառի բարձր ծառերից մեկի կատարին՝ ստուգելու մեր ճանապարհները, սակայն նրա բարձրանալն ու վայր իջնելը մեկ եղավ, շուտով մեր դեմ դիմաց կանգնեցին չորս թուրք ոստիկաններ:

– Ի՞նչ եք անում, գյավուրի՛ լակոտներ,– հարցրեց ոստիկաններից մեկը:

– Եկել ենք այստեղ կողով շինելու համար շիվեր կտրելու, – պատասխանեց Մնոն:

– Ի՞սկ ուր են ձեր կտրած շիվերը,– շարունակեց հարցումը ոստիկանը:

– Նոր ենք եկել,– պատասխանեց մեր ղեկավարը:

– Ինչո՞վ եք կտրում ալաշները:

– Դանակներով:

– Ցույց տուր քո դանակը,– դիմելով ինձ՝ ասաց ոստիկանը:

– Դանակ չունեմ,– պատասխանեցի ես՝ միաժամանակ մի պահ հիշելով, որ իմ դանակը անցած օրը խուրջինների կապերը կտրելու ժամանակ մոռացել էի խոտերի մեջ ու չէի վերցրել: Ոստիկաններից մեկը, ավելի մոտենալով ինձ, միաժամանակ ձեռքը տանելով դեպի իր գրպանը, ինչ-որ բան հանեց: Աչքի տակով նայելով՝ ես անսպասելիորեն նրա

ձեռքում տեսա իմ կորցրած դանակը, բայց չտեսնելու տալով՝ ուզեցի հեռանալ:

– Ա՛ռ, քո դանակն է, հայրիկիցդ եմ վերցրել, խոստացա վերադարձնել,– ասաց ոստիկանը՝ դանակը մեկնելով ինձ:

– Ո՛չ, սա իմը չէ. ես այդպիսի դանակ չեմ ունեցել, – պատասխանեցի:

Իմ պատասխանից հետո նա դանակը ցույց տվեց նաև ընկերներիս, սակայն նրանք նույնպես հրաժարվեցին դանակին տեր լինելուց: Ոստիկանները կատաղել էին. նրանք Բաբանիսից վերադառնալուց հետո գնացել էին իրենց թալանած ապրանքը թաքցրած տեղից վերցնելու, բայց տեղում ոչինչ չէին գտել, բացի իմ դանակից: Ոստիկանները սկզբում խորամանկորեն ուզում էին իմանալ, թե ով է եղել թաքցրած իրերի վայրում, բայց տեսան, որ մենք բոլորովին անմեղ ենք ձևանում, սկսեցին ծեծել Մնոյին, Արբակին, Սարգսին, քաշեցին նաև իմ ականջները, բայց և այնպես ոչ մի արդյունքի չհասան:

Թողնելով անտառը՝ ոստիկանները ուղևորվեցին դեպի գյուղ: Մենք լավ գիտեինք, որ նրանք ոչ մեկից չէին կարող իմանալ իրենց թաքցրած ապրանքի տեղը. չէ՞ որ բացի մեզնից ուրիշ ոչ ոք չգիտեր այդ, և վերջապես ո՞վ կարող էր կասկածել, թե ոստիկանների թալանած ապրանքը կարող է պահված լինել Կավասարի քարաժայռերի մեջ: Դրա համար էլ մենք շատ հանգիստ ճանապարհ ընկանք դեպի տուն:

Գյուղ հասանք այն պահին, երբ աշխատավոր մարդիկ, գործիքները ուսերին դրած, օրվա ծանր աշխատանքից հոգնած, դաշտերից վերադառնում էին իրենց տները, իսկ թուրք ոստիկանները, նրանց ճանապարհները կտրած, ստուգում էին բոլորի խուրջինները՝ հույս ունենալով գտնել կորցրած ավարի հետքերը: Վերջացնելով դաշտերից վերադարձող մարդկանց ստուգումները՝ այս անգամ նրանք մտան խրճիթները. մանրազնին խուզարկություններ կատարելուց հետո գազազած գայլերի նման մութ գիշերով ձեռնունայն հեռացան:

Ոստիկանների գալն ու գնալը շատ հանկարծակի եղավ. նրանց կողմից կատարված խուզարկությունների նպատակը այդպես էլ մութ մնաց գյուղացիներին, և ոչ ոք չիմացավ, թե ինչու եկան ու անսպասելիորեն հեռացան: Գյուղացիների հետաքրքրությունը ավելի ուժեղացավ, երբ հաջորդ օրը՝ երեկոյան, լուր տարածվեց այն մասին, թե չորս ոստիկաններ Արջասարի ճանապարհով անցնելիս քարաժայռերի բեկորների հետ ձորն են գլորվել, որոնցից երկուսը սատկել են, իսկ մեկը շատ անհուսալի վիճակում է գտնվում:

Այսպիսով՝ գյուղում կատարված խուզարկության և թուրք ոստիկանների հանկարծակի անհայտանալու փաստը ոչ մեկին հայտնի չեղավ, բայց մենք շատ ուրախ էինք, որ մեր մեծ ջանքերի շնորհիվ ոչ միայն հետ խլվեց հայ գյուղացու հալալ քրտինքով ձեռք բերված ապրանքը, այլև դաժանորեն պատժվեցին թուրք թալանչիները:

*
* *

Ոստիկաններին հետապնդող շատախցիները, որոնք մեր տուն հյուր էին եկել, քիչ հանգստանալուց հետո կեսգիշերին դուրս էին եկել մեր գյուղից՝ ուղղություն վերցնելով դեպի Արջասար: Հասնելով ձորի կարմրաքար ժայռի նեղ անցքին՝ նրանք հասել էին ժայռի բարձունքը, որի ներքևի նեղ արահետով պետք է անցնեին թուրք ոստիկանները: Քարափների մեջ պահ մտած շատախցիները սպասել էին մինչև եկողների երևալը և այն պահին, երբ ոստիկանները, մեկը մյուսին բռնած, նեղ արահետով փորձել էին բարձրանալ վեր, շատախցիների կողմից բաց թողնված քարաբեկորները իրենց հետ ձորն էին գլորել թուրք անիրավներին: Այսպիսով՝ քարաժայռի խարխլված բեկորների փլուզման հետևանքով իրենց հոգին սատանային էին հանձնել երկուսը, իսկ երկուսն էլ անհուսալի վիճակում տեղափոխվել էին իրենց տերերի մոտ: Իհարկե, Արջասարում տեղի ունեցած դժբախտ դեպքը շրջանի ազգաբնակչության մեջ խոսակցության մեծ առարկա դարձավ, սակայն երկու ոստիկանների մահվան իսկական պատճառն այդպես էլ անհայտ մնաց:

*
* *

Դեպքից անցել էր ավելի քան մեկ ամիս, բայց մենք երդվել էինք այդ մասին ոչ ոքի չհայտնել, նաև որոշել էինք մի որոշ ժամանակ հեռուները չգնալ, մանավանդ այն սարը, որտեղ թաքցված էր մեր ավարը: Շատախցիների՝ խուրջինները թալանելու և ոստիկանների՝ ձորը գլորվելու մասին խոսակցությունները դեռ շարունակվում էին բոլոր խրճիթներում, իսկ մենք սովորականի պես ամեն առավոտ հավաքվում էինք սուրբ ծառի փչակում ու որոշում մեր անելիքները:

Մի օր էլ սովորականից շուտ, երբ գյուղի նախիրը դեռ նոր էր հավաքվում ծառի տակ, հայրս ինձ տեսավ փչակ մտնելիս:

– Ի՞նչ գործ ունես այս վաղ ժամին ծառի փչակում,– հարցրեց նա:

– Կովը բերեցի նախիր,– պատասխանեցի ես:

– Բերեցիր, իսկ այժմ վերադարձի՛ր տուն,– ասաց հայրս ու իր երկու ընկերների հետ մեկնեց դեպի Կավասարի կողմերը:

Նրանց հեռանալուց հետո մենք գնացինք կալերը և ամբողջ օրը աշխատեցինք մարագներում՝ օգնելով Շուշանիկի հորը՝ իրենց անասունները տեղավորելու:

Երեկոյան տուն վերադառնալիս Աչանից իմացա, որ հայրս իր երկու ընկերներով կարևոր գործով մեկնել է Շատախ, և որպեսզի ժամանակից շուտ հասնեն Թաղ գյուղը, նրանք մեկնել էին Արջասարի կարճ ճանապարհով: Հասնելով Կարմրաքարի ժայռի նեղ անցքին՝ ճանապարհորդները հետաքրքրության համար իջել էին այն ձորը, ուր գլորվել էին մեզ հանրածանոթ ոստիկանները: Ձննելով տեղանքը՝ նրանք նկատել էին արյան հետքեր, տարբեր իրեր, այդ թվում նաև մի ժանգոտ դանակ: Գետնից վերցնելով նշված դանակը՝ հայրս զարմանքից ապշում է. «Ի՞նչ գործ ունի Սևուկի դանակը Արջասարում», – հարցնում է ինքն իրեն, սակայն զգուշանալու նպատակով հարկ է համարում լռել:

Վերջացնելով իր գործերը՝ հայրս հաջորդ օրը վերադարձավ տուն: Ընդհանրապես նրա վերադարձը միշտ ուրախություն էր պատճառում ինձ, ուստի այս անգամ ևս ուրախ-ուրախ դիմավորեցի նրան՝ դեռ խրճիթի մեծ դռան շեմին չհասած, իսկ նա սովորականի պես գրկեց ինձ, համբուրելուց հետո հարցրեց իմ առողջությունից:

– Ի՞նչ ես բերել ինձ համար,– հարցրի ես:

– Շատ լավ բաներ եմ բերել,– պատասխանեց նա:

– Ո՞ւր է, ցու՛յց տուր,– մանկական հրճվանքով փարվեցի նրա վզով:

– Համբերությո՛ւն ունեցիր, կտամ,– ասաց՝ միաժամանակ նայելով մեր հարևանի կնոջ՝ Ռեհանի ուղղությամբ, որը նստած էր փոքրիկ Միրաքի օրորոցի մոտ:

Ըստ երևույթին Ռեհանի ներկայությունը ճնշում էր նրան. այդ իսկ պատճառով էլ նստելուց հետո նա լռեց ու սպասում էր նրա հեռանալուն: Իհարկե, Աչանին հայտնի էր, որ հայրս ատելով ատում է Ռեհանին այն օրվանից, երբ նրա վատ խնամքի հետևանքով մահացավ իմ փոքրիկ եղբայրը: Սակայն աներես կինը, հակառակ մեր տնեցիների ցանկության, շարունակում էր հաճախել մեր տուն՝ բամբասանքներով հանգիստ չտալով խեղճ Աչանին: Տեսնելով հայրիկիս դժգոհ դեմքը՝ Ռեհանը մոտեցավ Աչանին և ինչ-որ բան ասելուց հետո հեռացավ:

Պառավի գնալուց հետո հայրիկս գրպանից հանեց մի բան ու բռի մեջ պինդ պահեց. դա այն հավանական լավ բանն էր, որը խոստացավ ինձ տալ:

Նա գրպանից հանած «լավ» բանը, փոխանակ ինձ տալու, ուղղակի դրեց սեղանին.

– Ա՛ռ քո դանակը, քեզ համար եմ բերել,– ասաց նա՝ ուղիղ նայելով իմ աչքերին:

– Որտեղի՞ց ես բերել,– հարցրի ես զարմացած:

– Քո՞ դանակն է,– հարցրեց նա:

– Իմն է,– պատասխանեցի ես:

– Իսկ ինչպե՞ս է ընկել Արջածոր:

– Ոստիկաններն են վերցրել:

– Ե՞րբ, որտեղի՞ց:

– Ձրաղացի անտառում, երբ նրանք մեզ տեսան,– կմկմացի, սակայն զգացի, որ սուտ ասելով չեմ պրծնի, սկսեցի կակազել, կարմրել ու միանգամից լռեցի: Նա էլի հարցեր տվեց, բայց իմ կողմից անպատասխան թողնվեց Բադալի ներս մտնելու պատճառով:

Տեսնելով սեղանին դրված դանակը՝ եղբայրս ինձ հարցրեց.

– Ե՞րբ ես գտել դանակդ:

– Դանակը ես եմ գտել,– պատասխանեց հայրս:

– Որտեղի՞ց,– հարցրեց Բադալը:

– Արջածորից, որտեղ ծորն էր ընկել շրջանի ոստիկանապետի օգնականը՝ իր երեք ոստիկաններով:

– Ինչպե՞ս էր ընկել այնտեղ:

– Սևուկին հարցրո՛ւ, նա քեզ կպատմի,– պատասխանեց հայրս:

– Երևի էլի չարություն ես արել,– ասաց եղբայրս:

– Ոչ մի անգամ էլ չարություն չեմ արել,– խիստ զայրացած՝ պատասխանեցի ես:

– Լա՛վ, լա՛վ, հանգստացի՛ր, գնա՛ դուրս, քեզ համար խաղա՛, իսկ դանակը թող մնա ինձ մոտ,– ասաց հայրս:

Իհարկե, ես չէի կարծում, որ այդպես էժան կպրծնեմ, ուստի ուրախացած տանից դուրս եկա և գնդակի արագությամբ վազեցի ընկերոջս տուն:

Լսելով դանակի հետ կապված պատմությունը՝ Մնոն առաջարկեց ինձ հավաքել մեր մնացած ընկերներին, որպեսզի բոլորի ներկայությամբ որոշվի մեր կողմից թաքցված խուրջինները վերադարձնելու հարցը: Հավաքվելով սուրբ ծառի փչակում՝ ես նրանց մանրամասն պատմեցի դանակիս գտնվելու եղելությունը: Եվ մենք բոլորս միասին վերջնականապես որոշեցինք թաքցված ապրանքի մասին տեղյակ պահել Բադալին և իր երեք ընկերներին, ինչպես նաև հայրիկիս:

Այդ որոշումից հետո նույն երեկոյան՝ տուն մտնելուն պես, մոտենալով հայրիկիս, սկզբից մինչև վերջ մանրամասն պատմեցի ոստիկանների թալանած ապրանքների հետ կապված եղելությունը: Հայրս ու եղբայրս ապշած նայում էին ինձ, իսկ ես իմ հերթին, շշմածի պես կանգնած, նայում էի Բադալի լայն բացված սև աչքերին:

ՀԱՐՍԱՆՅԱՑ ՆՎԵՐՆԵՐ

Կավասարի լեռնանցքում թուրք թալանչիներին խիստ պատժելուց հետո շատախցիները այլևս մեզ մոտ չեկան՝ ըստ երևույթին իրենց վրեժը լուծած համարելով, նրանք գոհ վերադարձել էին Շատախ, ամեն մեկն իր գործին:

Աշնան լավ օրերն արդեն անցել էին. մոտենում էր ձմեռվա վերահաս սառնամանիքը: Իհարկե, ձմեռը որոշ չափով մեզ՝ պատանիներիս համար իր յուրահատուկ քաղցրությունն ուներ, մանավանդ որ շուտով սկսվելու էր հարսանիքների երկար շրջանը, որին սպասում էին շատ երիտասարդ աղջիկներ ու տղաներ:

Չնայած աշնան վերջին օրերի խոնավացած ցուրտն իրեն խիստ զգացնել էր տալիս, բայց և այնպես ձյուն դեռ չէր եկել. միայն գյուղը շրջապատող բարձր լեռները ծածկված էին մառախուղով, թխպոտ ամպերով, իսկ կատարները՝ թարմ ձյունով: Հենց այդպիսի ամպամած օրերից մի օր մեր տղաների խումբը հավաքվել էր Շերասվար կոչվող Սուրբ ծառի փչակում, որպեսզի որոշեր, թե Կավասարի քարափներում թաքցրած խուրջինները ինչպես և ում միջոցով հանձնվի իսկական տերերին:

Տղաների միջև տեղի ունեցած երկար վիճաբանություններից հետո վերջապես մենք միաձայն որոշեցինք, որ փոխադրումը կատարվի ամենավստահելի մարդկանց՝ Բադալի, Մովսեսի, Իսրայելի և Ապրոյի միջոցով, մեր խմբի երկու անդամների ակտիվ մասնակցությամբ:

Անշուշտ, մեր՝ Կավասար գնալը գաղտնիք էր. այդ մասին ոչ ոք չպետք է իմանար, բացի վերը նշված մարդկանցից:

Հաջորդ օրը առավոտյան, հավաքվելով նախօրոք պայմանավորված վայրում, մենք վեց հոգով ուղևորվեցինք դեպի Կավասարի քարափները այն նույն արահետով, որտեղով մի ժամանակ անցել էին թուրք ոստիկաններն ու այնտեղ էլ գլորվել:

Մեր ճանապարհը քարքարոտ էր ու դժվարին, բայց և այնպես, մեկս մյուսին օգնելով, մոտավորապես օրվա կեսին հասանք Կավասա-

որի քարայրից ոչ հեռու անանցանելի թփուտներ: Իհարկե, թաքնված խուրջինների տեղը ես ու Մնոն լավ գիտեինք, սակայն լեռան այն մասը, որտեղ գտնվում էին խուրջինները, արդեն ծածկված էր ձյունով: Ճեղքելով աշնան վերջին օրերի թարմ ձյան ոչ հաստ շերտը՝ մենք հեշտությամբ գտանք այն քարակույտը, որի տակ թաքցված էին շատախցիների խուրջինները: Քարերի վրա իջած ձյան բարակ շերտը մաքրելուց հետո Բադալն ու Մովսեսը դեն հրեցին դրանց վրա կուտակված մեծ քարաբեկորներն, ու ահա երևացին մեր կողմից խնամքով քողարկված չորս խուրջինները:

– Սա՞ է ձեր թաքցրած ավարը,– հարցրեց Բադալը:

– Սա է, որ կա,– պատասխանեցի ես:

– Ի՞նչ կա սրանց մեջ:

– Ինչ որ ուզեք:

– Կարելի՞ է տեսնել ձեր ավարը,– հարցրեց Մովսեսը:

– Ժամանակ չկա, ուշ է արդեն, տանը կտեսնենք,– պատասխանեց եղբայրս՝ միաժամանակ շտապեցնելով տղաներին քարափներից շուտ դուրս գալ:

Շալակելով թանկագին իրերով լի խուրջինները՝ Բադալն ու իր երեք ընկերները, քարաժայռերի սուր քերծերից բռնելով, սկսեցին իջնել դեպի ձոր, իսկ ես ու Մնոն հետևեցինք նրանց: Վայրի անասունների երթևեկից առաջացած նեղ արահետները թարմ ձնով ծածկված լինելու պատճառով լեռան ստորոտից ձորն իջանք շատ մեծ դժվարությամբ, մանավանդ նրանք, ովքեր տեղանքին ծանոթ չէին:

Ձոր հասնելով՝ տղաները վայր դրին իրենց շալակած խուրջիններն ու նստեցին հանգստանալու:

– Ի՞նչ հնարքով եք հասել այս քարաժայռի բարձունքին,– հարցրեց Մովսեսը:

– Շատ հեշտությամբ,– պատասխանեց Մնոն:

– Ձեզ ո՞վ է ցույց տվել քարայրի ճանապարհը:

– Մենք ինքներս գիտեինք դեռ վաղուց:

– Ուրեմն դուք էլ ուրիշ գործ չունեի՞ք, բացի լեռները թափառելուց,– հարցրեց Բադալը:

Սակայն Մնոն չլսելու տալով խույս տվեց հարցին պատասխանելուց ու ժպտալով վազեց դեպի ձոր՝ հոսող գետակից ջուր խմելու: Եվ այսպես զրուցելով՝ մենք դեռ նստած շարունակում էինք հանգստանալ՝ սպասելով մութն ընկնելուն: Շուտով աշնանային կարճ օրվա եղանակը խիստ խառնվեց, թուխ ամպերը կուտակվեցին Կավասարի գագաթին,

իսկ ձյան փաթիլները սկսեցին դանդաղ թափվել՝ սպիտակեցնելով արևից խանձված խոտերը: Բադալը, որն այդ օրը ղեկավարում էր բոլորիս, առաջարկեց մեզ շարժվել, որ ժամանակին հասնենք գյուղ:

Դուրս գալով Կավածորի խոր անդունդից՝ մենք շուտով ընկանք հարթ ճանապարհի վրա, որն ուղիղ մեզ տանում էր դեպի ջրաղացի անտառը: Բարեբախտաբար, մինչև որոշված տեղը հասնելը մեզ տեսնող չեղավ:

Արևը վաղուց մայր էր մտել, սակայն այդ ժամն էլ դեռ վաղ էր գյուղ մտնելու համար, այդ իսկ պատճառով Բադալն առաջարկեց տղաներին քիչ սպասել անտառում, իսկ ինքը Մովսեսի հետ մեկնեց անտառի եզրին գտնվող ջրաղացը՝ գյուղ տանող ճանապարհը հետախուզելու: Ծանր բեռները վայր բերելով՝ մենք՝ մնացածներս, երկար ճանապարհից հոգնած, ծմակը մտնելուն պես անմիջապես պառկեցինք անձրևաջրերից խոնավացած տերևների մեջ՝ հանգստանալու, իսկ ոմանք էլ նստելուն պես անմիջապես աչքերը փակեցին ու սկսեցին խռմփացնել:

– Մի՛ քնեք, կսառեք,– զգուշացրեց Ապրոն:

– Չեմ սառչի, տե՛ս, շապիկս թրջվել է քրտինքից,– պարծենկոտությամբ պատասխանեցի ես:

– Քրտնած մարդը ավելի շուտ է մրսում,– զգուշացրեց Իսրայելը:

Դա լսելով՝ Մնոն վայրկենապես նստած տեղից վեր կացավ, հավաքեց ծառերի չորացած ճյուղերը՝ դարսելու իրար վրա. այն էր՝ ուզում էր կրակ վառել, Իսրայելը արգելեց:

– Օրվա այս ժամին անտառում խարույկ սարքելը վտանգավոր է ոչ միայն մեզ համար, այլև անտառի տիրոջ,– համոզում էր Իսրայելը:

Երկու ընկերներով ոչ միայն հոգնել էինք, այլև ոտքից գլուխ ջուր էինք դարձել, ուստի այս խոնավ ծմակում տերևների մեջ երկար պառկել չէինք կարող. դա նկատի ունենալով՝ Մնոն՝ որպես հոգատար ընկեր, ամեն կերպ ուզում էր ինձ օգնած լինել թրջված հագուստներս չորացնելու համար, սակայն լսելով ավագ ընկերոջ խրատը՝ ես ու Մնոն ստիպված էինք խոնավ վիճակում սպասել մինչև Բադալի և Մովսեսի վերադարձը: Աշնան վերջին օրերի այդ ցուրտ ու մութ երեկո նստած տեղում համարյա թե սառեցի, բայց ինքնասիրությունից դրդված՝ բոլորովին ձայն չհանեցի:

Երկար սպասելուց հետո վերջապես երկու ընկերները ուրախուրախ վերադարձան անտառ:

Հետազոտելով ճանապարհները՝ նրանք բացատրեցին, որ երեկոյան գյուղ մտնելը վտանգավոր է, ուստի առաջարկեցին գնալ ջրաղաց

և սպասել այնտեղ, իսկ հարմար պահին հասնել տուն: Այդպես էլ արեցինք. վերցնելով խուրջինները՝ մենք բոլորս մի քանի րոպեից հասանք ջրաղաց, որտեղ մեզ սպասում էր Բալաբեկի տաք օթևանը:

*
* *

Բալաբեկը, որին պատկանում էր ջրաղացը, մեծ ուրախությամբ մեզ ընդունեց ու սկսեց անմիջապես հյուրասիրել ջրաղացի թարմ կլոճով[22]: Մինչև ջրաղացպանը կպատրաստվեր հաց թխել, մենք, օգտվելով թոնրի թեժ կրակից, տաքանալով մեկտեղ, լավ չորացրինք մեր թրջված հագուստները:

Ջրաղացպանի թարմ հացն ու նրա հոգեպահուստը՝ կարագ, պանիր, անուշ անելուց հետո բոլորս պառկեցինք գետնին փռված խսիրի վրա՝ Բալաբեկին խնդրելով պատմել եկեղեցի չհաճախելու կապակցությամբ գյուղի տանուտեր Մանուկի ու տեր Օհանի հետ իր ընդհարվելու պատմությունը:

Բալաբեկն արդեն երեք երեխայի հայր էր և իր ընտանիքում միակ աշխատողը: Նա շատ աշխատասեր էր, համեստ, մանավանդ հոգատար իր ընտանիքի նկատմամբ: Որպես Աննայի ամուսնու՝ նրան մեր ընտանիքի բոլոր անդամները սիրում էին, ինչպես եղբայրներիցս մեկը մյուսին կվերաբերվեր, իսկ նա իր հերթին սիրում էր մեզ բոլորիս, մանավանդ ինձ ու Վարդանին:

Չնայած իր ծանրաբեռնվածությանը՝ այնուամենայնիվ չէր զլանում հաճախակի այցելել մեր տուն՝ հետն էլ բերելով ջրաղացի թխած հաց: Լինելով իր ընտանիքի միակ աշխատողը՝ կառավարում էր ոչ միայն ջրաղացը, այլև ապահովում էր տնտեսության մնացած բոլոր աշխատանքները: Նա շատ լուրջ էր, քիչ էր խոսում, գյուղի հավաքներին ու հարսանիքներին չէր մասնակցում, իսկ եկեղեցու աղոթքներին բոլորովին չէր լինում:

Իհարկե, ամեն ինչում կարելի էր Բալաբեկին ներել, ընդհուպ մինչև քսանժամյա ֆիզիկական ծանր աշխատանքը, բայց եկեղեցի չհաճախելը մեծ հանցանք էր համարվում, այդ պատճառով էլ նախատինքի էր արժանանում մոլի հավատացյալների կողմից:

Մեր գյուղը քահանա չուներ. որպես հոգևոր հայր մեզ սպասարկում էր հարևան գյուղի քահանան, որին անվանում էին տեր Օհան: Մեր գյուղի բնակիչներին ծանոթ լինելով՝ տեր Օհանն արդեն գիտեր Բալա-

[22] կլոճ (*գվռ.*) – բաղարջ

բեկի բացասական վերաբերմունքը եկեղեցու նկատմամբ, ուստի մշտապես որոգայթներ էր լարում նրա դեմ:

Իր կրոնական համոզմունքները անխախտ պահելու, յուրաքանչյուր անհավատին եկեղեցուն ենթարկելու համար տեր Օհանը դեռ վաղուց նախապատրաստել էր գյուղի տանուտեր Մանուկին՝ որպես ազդեցիկ մարդու, Բալաբեկին պատժելու:

Կիրակի օրը՝ Սուրբ Խաչին, գյուղի հավատացյալները եկեղեցում աղոթք էին անում: Բալաբեկը գնացել էր աշխատանքի, իր չորացած առուն վերանորոգելու, և հենց դա էլ պատճառ դարձավ, որ տանուտեր Մանուկն ու տեր Օհանը պատժեն նրան: Եկեղեցուց դուրս գալուց հետո տանուտերը երկու հոգու ուղարկեց Բալաբեկին կանչելու. իհարկե, վերջինս, թողնելով իր գործերը, ժամանակին ներկայացավ նրանց:

– Որդյա՛կս, ինչո՞ւ չես հաճախում եկեղեցի՝ աղոթք հղելու առ Աստված,– հարցրեց քահանան:

– Բա իմ աշխատանքն ո՞վ անի, տե՛ր հայր,– պատասխանեց Բալաբեկը:

– Աղոթի՛ր, որդյա՛կս, Աստված կօգնի քեզ և ամենքիս:

– Քո կողքին կանգնածներն ամեն օր աղոթում են, բա ինչո՞ւ Աստված նրանց չի օգնում. չէ՞ որ նրանց ցանքերը բոլորովին չորացել են,– բարձրաձայն պատասխանեց Բալաբեկը:

– Դու ոչ միայն այսօր սուրբ պատարագին չես եկել, այլև ամեն օր խուսափում ես եկեղեցում աղոթելուց,– ավելացրեց տանուտեր Մանուկը:

– Դե դուք աղոթում եք, բավական է, էլ ես ի՞նչ աղոթեմ,– կոպտությամբ պատասխանեց Բալաբեկը:

– Մի՛ ուրացիր, Աստված քեզ կպատժի, Բալաբե՛կ:

– Ի՞նչ եմ արել, որ Աստված ինձ պատժի:

– Ուրացել ես Աստծուն, եկեղեցի չես հաճախում,– ասաց տեր Օհանը:

Բայց Բալաբեկն այս անգամ գերադասեց լռել, քան թե պատասխանել միևնույն հարցերին: Սակայն մեղադրվող Բալաբեկի լուռ մնալն ավելի զայրացրեց նրանց, այդ իսկ պատճառով տանուտեր Մանուկը, երկու քայլ առաջ գալով, զայրացած ասաց.

– Լսի՛ր, անաստվա՛ծ, եթե այսուհետև չհաճախես եկեղեցի՝ աղոթելու, ապա կպատժվես հասարակության կողմից:

– Եթե մեղք եմ գործել, թող պատժեն:

Բալաբեկի վերջին պատասխանից ափերից դուրս եկած տանուտեր Մանուկն իր ձեռքում եղած մեծ մահակով մի քանի ուժգին հարված հասցրեց նրա թիկունքին: Ինձ թվաց, թե փեսայիս ոսկորները ջարդուփշուր եղան, սակայն, առանց տեղից շարժվելու, նա հպարտ ու հանգիստ կանգնած մնաց իր տեղում՝ հեգնական հայացք գցելով մեկ տանուտերին, մեկ էլ կողքին կանգնած տեր Օհանին:

Չկարողանալով Բալաբեկի համառությունը կոտրել՝ տանուտերը նրան ահաբեկելու, ինչպես նաև տեր Օհանին սիրաշահելու նպատակով որոշեց նրան երկու օրով կալանավորել:

Տանուտերի կարգադրությունը կատարելու համար գյուղի գզիրն ու էլի երկու մարդ մոտեցան Բալաբեկին՝ բռնելով նրա թևերից, բայց վերջինս հրեց նրանց՝ մի հեգնական հայացք ձգելով հրապարակում կանգնած տանուտերին, ու հանգիստ քայլելով՝ գնաց դեպի այն մարագը, որտեղ պետք է բանտարկված մնար:

Բալաբեկի բանտարկության հետ կապված այդ հետաքրքիր պատմությունը լսելուց հետո, վերցնելով մեր խուրջինները, անմիջապես դուրս եկանք ջրաղացից և գիշերվա առաջին իսկ աքլորականչին հասանք գյուղ:

*
* *

Սկսվել էր ձմեռային սառնամանիքը. գյուղն ամբողջապես ծածկված էր ձյան հաստ շերտով, իսկ ցրտաշունչ փոթորիկների հետևանքով սարերում հուսիներ[23] էին գոյացել՝ փակելով գյուղից գյուղ տանող ճանապարհները: Գյուղի բնակչությանը պատկանող հոտը վաղուց գոմավորել էին, խոշոր եղջերավոր անասունները բոլորովին դուրս չէին գալիս, իսկ մանր եղջերավոր անասունները օրվա որոշ ժամերին դուրս էին բերվում խոտի դեզերի մոտերքը ձյունից պատրաստված չափարներում կերակրելու համար: Ձմեռվա այդ եղանակին տղամարդիկ իրենց ազատ ժամերը մեծ մասամբ անց էին կացնում գոմերի տաք օդաներում, իսկ օրվա որոշ ժամերին էլ զբաղվում էին անասունների խնամքով ու կտուրները ձյունից մաքրելով: Օդաներում հավաքվածներից աչքի ընկնողներն ու հեղինակություն վայելողները միշտ նստում էին լավ ու պատվավոր տեղերում, իսկ նրանց զրույցները լսում էին խոր լռությամբ: Իհարկե, գյուղի այդ օդաների մշտական հաճախորդներն էինք նաև մենք՝ պատանիներս:

---

[23] հուսին *(բրբ.)* – ձնհալի ժամանակ ձյան և սառույցի կուտակվելը սարերում, որի պոկվելը մեծ վտանգ է իրենից ներկայացնում:

Լսում էինք գրագետ մարդկանց, որոնց խոսքը մեծ հետաքրքրություն էր առաջացնում ներկա գտնվողների շրջանում:

*
* *

Մոտենում էին Բարեկենդանի օրերը. հենց այդ օրերին էլ սկսվում էր հարսանիքների երկար շրջանը, որին սրտատրոփ սպասում էին վաղօրոք նշանված շատ զույգեր: Այդ օրերը մեծ ուրախություն էր պատճառում մեզ՝ պատանիներիս: Ընդհանրապես գյուղում ձմեռվա ամենաերջանիկ ժամանակը հարսանիքների օրերն էին, որոնց մասնակցում էին ոչ միայն կանայք ու տղամարդիկ, այլև գյուղի բոլոր պատանիներն ու աղջիկները:

Ճիշտ է, մեր տանը հարսանիք չէր եղել. եղբայրս մայրիկիս մահից անմիջապես հետո ամուսնացավ առանց հարսանիքի, սակայն մեր գյուղի յուրաքանչյուր ընտանիքում կատարված հարսանիք ուրախություն էր պատճառում բոլորին՝ անկախ նրանից, թե ում տանն է դա կատարվում:

Գյուղի ամենամեծ խրճիթը նախկին տանուտեր Դելոյինն էր, որտեղ կատարվում էին հայ երիտասարդ տղաների ու աղջիկների հարսանիքները: Խրճիթն իրենից ներկայացնում էր մի հսկա կլորածև մեծ դահլիճ. մեկ պատից մյուսը տանող հաստ և երկար գերաններին ամրություն տալու համար որպես հենարաններ քառանկյան ձևով դրված էին մի շարք հղկված հաստ սյուներ: Առաստաղի բարձրությունը սկսվում էր քարով շարված պատերից ու աստիճանաբար կամարաձև բարձրանում էր դեպի կենտրոնական մասը, որտեղ գտնվում էր լուսավոր մեծ երդիկը:

Դահլիճի վերին պատի ամբողջ երկարությամբ պատրաստված էին մեծ սալերով ծածկված թարեքներ[24], որոնց վրա դասավորվում էին անկողինները: Հացատանը կից կար մի ընդարձակ մառան, որտեղ պահվում էին մեծ պղինձներով և պուտուկներով լիքը սննդամթերքը, կահկարասին ու այլ ամանեղեն:

Հարսանիքների ժամանակ խրճիթում եղած ավելորդ իրերը դուրս էին բերվում, իսկ դահլիճին տոնական տեսք տալու նպատակով առաստաղի երկար ու հաստ գերանները նախշվում էին սպիտակ գույնով: Խրճիթում գյուղի բնակչության զգալի մասը կարող էր տեղավորվել:

---

[24] թարեք *(բրբ.)* – պատին ամրացված տախտակ՝ վրան զանազան իրեր դնելու համար, դարակ

Ահա հենց այդտեղ էլ ամեն տարի՝ տոն օրերին, տեղի էին ունենում հարսանիքները: Դժբախտաբար, վերջին երեք տարվա ընթացքում սգի պատճառով այդտեղ հարսանիքներ գրեթե չէին լինում, դրանք կատարվում էին այլ շենքում, և շատ անշուք էր անցնում միջոցառումը:

Այդ ձմեռ Բադալի ամենամոտ ընկերը՝ Մովսեսը, ամուսնանալու էր շատախցի աղջիկներից մեկի հետ. այդ նպատակով էլ նրա ծնողներն ու բարեկամները դեռ վաղուց նախապատրաստվել էին՝ իրենց հարսնացուին բերելու, սակայն հարս ու փեսայի զգեստների բացակայության պատճառով նրանց գնալը օր օրի հետաձգվում էր:

Գյուղում երիտասարդ փեսայի հայրը հողազուրկ էր, քիչ էին նաև նրա անասունները. հասկանալի էր, որ հող ու անասուն չունենալու դեպքում գյուղի բնակիչը միշտ աղքատ է լինում, այդ իսկ պատճառով էլ Կարոն չէր կարողացել մինուճար տղայի հարսնացուի համար ձեռք բերել անհրաժեշտ նվերներ: Չնայած Մովսեսն աղքատի զավակ էր, բայց իր գեղեցկությամբ և աշխատասիրությամբ ավելի հարուստ էր, քան գյուղի ունևոր մարդկանց զավակներից որևէ մեկը: Նա խիզախ էր և համարձակ, ընկերոջ համար գլուխը կտար, միայն թե որևէ բանով օգնած լիներ նրանց, հատկապես այն մարդկանց, ովքեր օգնության կարիք ունեին: Վերջապես նա քաջ երիտասարդ էր, մանավանդ անողոք էր թուրք թալանչիների նկատմամբ:

Գյուղի երիտասարդությունը այդ օրերին հարսանիքներից աչք բացել չէր կարող, որովհետև մի զույգի հարսանիքը տևում էր 3-4 օր և ավելի:

Մի օր էլ եղբայրս, կանչելով մեր ութ ընկերներին, հայտնեց.

– Գիտե՞ք տղաներ, որ Մովսեսի հարսնացուի հայրը անցած տարվա մեր տան հյուրերից մեկն էր:

– Թուրք ոստիկաններին պատժողնե՞րը,– հարցրի ես:

– Զգո՛ւյշ, հենց նրանք են, որ կան,– պատասխանեց Բադալը,– միաժամանակ զգուշացի՛ր, որ այսուհետև թուրք ոստիկանների մասին չխոսես:

Լսելով Բադալի հաղորդած լուրը Մովսեսի և շատախցիների բարեկամության մասին, մենք ընկերներով շատ ուրախացանք՝ զգալով, որ օգտակար գործ էինք կատարել ոչ միայն շատախցիների, այլև Մովսեսի համար, որին մենք բոլորս շատ էինք սիրում: Զրույցի ժամանակ նկատեցի, որ մեր ուրախությունը Բադալի սրտով եղավ, ուստի դիմելով մեզ՝ նա հայտարարեց.

– Եթե մինչև այսօր ի վիճակի չենք եղել շատախցիների սեփականությունը վերադարձնել, ապա այժմ հնարավոր է և անհրաժեշտ՝ դուք ինքներդ ուղարկեք ձեր կողմից թաքցված խուրջինները:

Լսելով Բադալին՝ մենք բոլորս միանգամից համաձայնվեցինք նրա արած առաջարկին և խնդրեցինք, որ ինքը՝ Բադալը, իր երեք ընկերներով անձամբ հանձնեն նշված խուրջինները թուրք ոստիկաններին պատժող շատախցիներին:

*
* *

Շատախցիները ցնծությամբ էին դիմավորել Մովսեսին, Բադալին և նրանց հետ մեկնած մյուս հարսանքավորներին, որոնք ձմեռվա այդ ցրտաշունչ օրերին գնացել էին Մովսեսի հարսնացուին բերելու: Մեր գյուղի հարսանքավորների գնալու առաջին իսկ երեկոյան, երբ տանտիրոջ ազգականներն ու բարեկամները հավաքվել էին հարսանքատանը՝ օրվա ուրախությանը մասնակցելու, Բադալն ու Մովսեսը շատախցիներին հանդիսավոր հանձնել են նվերներով լի չորս խուրջինները՝ մեր կողմից ուղարկված: Զարմանքը մեծ էր եղել, երբ խուրջինների միջից հանվել էին դեռ վեց ամիս առաջ հարսանիքի համար գնված և թուրք ոստիկանների կողմից հափշտակված թանկագին նվերները:

– Այդ ինչպե՞ս և ի՞նչ հնարքով եք ձեռք բերել,– հարցրել է հարսի հայրը, այն մարդը, որն անցած տարի իր ընկերներով հետապնդել էր թուրք ոստիկաններին՝ ի վերջո Կավասարի լեռնանցքում պատժելով նրանց:

– Հալալ քրտինքով ձեռք բերված ապրանքը չի կորչի,– պատասխանել էր Բադալը:

– Դա ճիշտ է, բայց դուք ասե՛ք, ինչպե՞ս եք գտել խուրջինները, թե չէ թուրք և քուրդ ձրիակերները, առանց մեր հալալ քրտինքով ձեռք բերած բարիքները թալանելու, ապրել չեն կարող:

– Հին առածն ասում է.«Գողը գողից գողացավ, Աստված վերից զարմացավ»,– ծիծաղելով ասել էր Մովսեսը:

– Ինչպե՞ս,– հարցրել էր շատախցին:

– Խուրջինները ոստիկաններից խորամանկորեն խլել էին այն տասը երեխաները, որոնց անցյալ տարի դուք ինքներդ տեսել էիք Ծաղկասարի խոտհարքներում,– պատասխանել էր եղբայրս:

– Իսկապե՞ս:

– Շատ պարզ, ոստիկանները թալանել էին ձերոնց, իսկ մեր երեխաներն էլ՝ նրանց:

– Ինչպե՞ս, ի՞նչ հնարքով,– հարցրեց շատախցին, սակայն հարց ու պատասխանին վերջ տալու նպատակով Բադալը մանրամասն պատմել էր այն, ինչ տեղի էր ունեցել կես տարի առաջ:

Այսպիսով, խուրջինների հայտնաբերման լուրը կրկնակի ուրախություն էր պատճառել շատախցիներին, դրա համար էլ նրանք երեք օր չէին թողել մեր գյուղի հարսանքավորներին հեռանալու և միայն չորրորդ օրվա առավոտյան՝ մի մեծ խումբ տղաների ուղեկցությամբ ճանապարհ էին դրել մինչև մեր և Շատախի միջև ընկած լեռները:

*
* *

Նույն օրը՝ երեկոյան, մեր գյուղի ամբողջ երիտասարդությունը հարսանքավորներին դիմավորեց դեռ ջրաղացի անտառ չհասած: Առանձնապես սրտառուչ էր Մովսեսի ու նրա խաչեղբայր Բադալի հետ հանդիպելու պահը: Ծուռ վռշիկները[25] գրկախառնվելով գլորվում էին բուք ու բորանի հետևանքով կուտակված ձյան մեջ:

Չնայած ձմեռվա սառնամանիքին՝ այնուամենայնիվ հարսանքավորների մեծ մասը քրտինքից ջուր էր դարձել, միայն նորահարս Սաթենիկը փաթաթվել էր Մովսեսի սև յափնջու մեջ՝ դողդողալով հազիվ մի կերպ ոտքի վրա մնալով: Վերջապես հարսանքավորներն ու նրանց դիմավորող ժողովուրդը սազանդարների երգ ու նվագի տակ մտան Կարոյի աղքատիկ խրճիթը: Կանայք հարսին տարան նախօրոք պատրաստված վարագույրի հետևը, իսկ տղամարդիկ ծալապատիկ նստեցին հատակին փռված կարպետների ու խսիրների վրա, ոմանք էլ տեղ չլինելու պատճառով կանգնած մնացին պատերի երկայնքով: Մովսեսի հայր Կարոն չնայած աղքատ էր, բայց մեծ սրտաբացությամբ դիմավորեց շեմից ներս մտնողներին: Ուրախության ժպիտը երեսին՝ նա գրկում էր ամենքին, իսկ շատերին էլ համբուրում:

Խրճիթ մտած բոլոր տղամարդկանց տեղավորելուց հետո նա սկսեց հերթով հյուրասիրել հարսանքավորներին քաղցր շարբաթով: Ես նախկինում էլ շատ էի հաճախել մեր գյուղի գրեթե բոլոր հարսանքատները, բայց այնպիսի սրտաբաց ու ուրախ հարսանքատեր, ինչպիսին Կարոն էր, երբեք չէի տեսել: Մի որպե անգամ հանգիստ չուներ. անընդ-

[25] վռշիկ – *այստեղ*՝ ռամիկ, շինական

հատ շարժման մեջ էր, և իր հյուրընկալ ու բարեհամբույր վարմունքով ուրախացնում էր բոլորին:

Իհարկե, ձմեռվա ցրտաշունչ ճանապարհորդությունից հետո հարսանքավորները շատ էին հոգնել, առանձնապես հարսն ու Շատախից եկած կանայք, այդ իսկ պատճառով ժողովուրդը նույն օրը սովորականից շուտ ցրվեց:

Կարոյի խրճիթից դուրս եկանք նաև մենք՝ տասը ընկերներս. մենք նույնպես դիմավորել էինք հարս ու փեսային և առանց որևէ հրավերքի ներս մտել նրանց տուն:

Դուրս գալով փողոց՝ ես ու Մնոն թեքվեցինք դեպի մեր տուն, բայց հենց այդ պահին Մովսեսը, մեր երկուսի ձեռքից բռնելով, համարյա թե հրելով կրկին ներս մտցրեց: Շուտով Բադալի ուղեկցությամբ ներս եկան նաև իմ մյուս ընկերները: Մովսեսը մեզ ներկայացրեց հարսի եղբորը և մյուս շատախցիներին, այն մարդկանց, որոնք անցյալ տարի պատժել էին թուրք ոստիկաններին: Ներս մտնելով, մենք բոլորս, չգիտեմ թե ինչու, հասակի կարգով կանգնեցինք նրանց դեմ դիմաց:

– Սրա՞նք են,– հարցրեց շատախցիներից մեկը, որի ձայնը անցած տարի մեր տանը եղած ժամանակ լսել էի, բայց առերես չէի տեսել:

– Այո՛, սրանք են, որ կան,– ծիծաղելով պատասխանեց Մովսեսը՝ մատնացույց անելով մեզ բոլորիս:

– Ապրե՛ք, տղանե՛ր, զորանա՛ք, շատախցիները ձեզ պարտական են,– ասաց նրանցից հասակով մեծ մարդը:

– Մենք էլ ձեզ ենք պարտական,– անսպասելիորեն պատասխանեց Մնոն՝ կարմրելով մինչև ականջները:

– Ինչի՞ համար,– հարցրեց շատախցին:

– Թալանչիներին պատժելու համար,– պատասխանեցինք ես ու Մնոն:

– Հարսանյաց նվերները ոստիկաններից հետ խլելու և այն խնամքով թաքցնելու համար մենք երախտապարտ ենք ձեզ և հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը,– ասաց նա ու ձեռքը տարավ դեպի խուրջինը, որի միջից հանեց մի մեծ կապոց:

– Առե՛ք, տղանե՛ր, սրանք Շատախից բերված մեր համեստ նվերներն են,– հայտարարեց հարսի մեծ եղբայրը՝ ամեն մեկին հանձնելով Շատախի աղջիկների ձեռքերով գործված պարսետներ,[26] գեղեցիկ գուլպաներ, իսկ ինձ ու Մնոյին լրացուցիչ սև մախմուրից[27] կարված մե-

[26] պարսետ – պարսատիկ
[27] մախմուր*(ժող.)* – թավիշ

կական ժիլետ նվիրեց, որոնց վրա շարված էին սադաֆե փայլուն կոճակներ: Վերցնելով մեզ տրված նվերները՝ մենք ուրախ-ուրախ դուրս եկանք բոլորիս սիրելի Մովսեսի տնից:

Երկրորդ օրը՝ հարևան գյուղի քահանա տեր Օհանի գալուց հետո, հարսանքավորները հարս ու փեսին տարան եկեղեցի՝ ամուսնական ծիսակատարություն կատարելու: Մովսեսը հագել էր զոլավոր շալի կտորից կարված Նորդուզի տարազի նախշուն լայն շալվար, գունավոր կարճ թևերով քյազախա՝ ժիլետ, ոտքերին ուներ ճտքավոր կարմիր կոշիկներ, իսկ գլխին դրված էր Պարսկաստանից բերված տարբեր գույների մետաքսյա փուշիներով[28] փաթաթված քոլոզ[29]. վերջինս իր հերթին զարդարված էր գեղեցիկ փետուրներով:

Հարսը հագնվել էր ավելի շքեղ, քան թե փեսան: Գունավոր կտորից կարված լայն զգեստը հասնում էր մինչև գետին, երեսը ծածկված էր վառ կարմիր գույնի մետաքսե մեծ դուգուրով, որի տակից պարզ երևում էին ճակատին ամրացված չորս շարք արծաթյա կանթավոր դրամներ, իսկ բերանը ծածկված էր սպիտակ մետաքսից գործած փոքրիկ լամբարով[30]: Հարսի կողքով և հետևից գնում էին երիտասարդ սիրուն աղջիկներ, իսկ Բադալը՝ որպես փեսայի խաչեղբայր, գնում էր Մովսեսի հետ կողք կողքի:

Տեր Օհանը, եկեղեցու խորանի հարթակում կանգնած, ժամից ավելի սպասում էր հարս ու փեսին: Վերջապես, երբ հարսանքավորները եկեղեցու դռնից ներս մտան, տեր Օհանը իր խռպոտ և բաս ձայնով սկսեց աղոթքը: Նա անընդհատ շրջվում էր հետ ու առաջ, իսկ վերջում էլ մի հին կողերով քրքրված գիրք մոտեցրեց հարս ու փեսին համբուրելու համար: Իհարկե, երկուսն էլ կրոնական մոլեռանդությամբ համբուրեցին իրենց մոտեցրած Ավետարանի նմանվող գիրքը: Երկու ձեռքով բռնած գիրքը բարձրացնելով՝ տեր Օհանը սկզբում այն մոտեցրեց Մովսեսին:

– Կողակիցդ կույր է, կաղ է, համաձա՞յն ես,– հարցրեց քահանան:

– Այո՛,– պատասխանեց Մովսեսը,– այնուհետև տեր Օհանը, դիմելով նորահարսին, կրկնեց միևնույն հարցը՝ համաձա՞յն ես, որդյա՛կս:

Հարսը գլխով նշան արեց՝ հասկացնելով, որ, այո՛, համաձայն է:

Տեր Օհանը մի քանի այլ հարցեր էլ տվեց, որոնց հաջորդեցին հարս ու փեսայի կամացուկ, բայց անխախտ պատասխանները: Այսպի-

---

[28] փուշի *(պրսկ.)* – մետաքսյա փայլուն թաշկինակ
[29] քոլոզ – գլխարկ
[30] լամբար *(բրբ.)* – բերանը ծածկող գործած բարակ երիզ

սով տերտերի խաչն ու աջը համբուրելուց հետո փեսային մատուցեցին կավե փարչով լի քաղցր շարբաթ: Մովսեսն իրեն տրված շարբաթը քիչ խմելուց հետո մնացած մասը պարզեց հարսնացուին, սակայն վերջինս, ըստ երևույթին անհարմար զգալով ժողովրդի ներկայությամբ երեսը բացելուց, ձեռքի թեթև հրումով հետ տվեց փարչն ու գլխի շարժումով հասկացրեց, որ խմել չի ցանկանում: Տեսնելով, որ հարսը հրաժարվում է խմելուց, տեր Օհանը այն վերցրեց Մովսեսի ձեռքից և մի շնչով գլուխը քաշեց, իսկ դատարկ փարչը դրեց քարից պատրաստված գրակալի վրա:

Ամուսնական այդ արարողության ավարտից հետո հարս ու փեսան շարժվեցին դեպի դուռը և ժողովրդի հետ եկեղեցուց դուրս եկան:

Երկուսից երեք օր պետք է տևեր նրանց հարսանիքը, բայց որտե՞ղ, ո՞ւմ տանը՝ ըստ երևույթին դեռ որոշված չէր: Դելոյի տանը հարսանիք անել հնարավոր չէր, քանի որ զոհվածի ընտանիքն ու բարեկամները դեռ մեծ սուգի մեջ էին, ուստի փեսայի հայրը՝ Կարոն ու Բադալը որոշեցին եկեղեցուց դուրս եկած թափորը տեղափոխել մեր տուն և այնտեղ էլ կատարել Մովսեսի հարսանիքը:

Դելոյի և մեր խրճիթները գրեթե նմանվում էին մեկը մյուսին, միայն մեկ տարբերությամբ. Դելոյի տունը ավելի մեծ էր ու շքեղ, հարմարություններով շատ, բայց միշտ մռայլ էր ու դեպքերով հարուստ: Մեր տունը շքեղություն ու հարմարություններ չուներ, սակայն մեր տունը միշտ ուրախ էր ու զվարթ, առանց կռվի ու արտակարգ դեպքերի:

Եկեղեցուց դուրս գալով՝ հարսանքավորները ուղևորվեցին ուղիղ մեր տուն. մենք նրանց դիմավորեցինք մեծ ուրախությամբ, և ահա երեք օր ու գիշեր թնդում էր հարսանյաց խաղուպարը:

ՀԱՐԿԱՀԱՎԱՔՆԵՐ

Ձմեռվա ցրտաշունչ սառնամանիքն աստիճանաբար մեղմանում էր: Երկնակամարից թափանցող արևի վառ ճառագայթների ջերմությունից աստիճանաբար սևանում էին գյուղամիջյան ճանապարհները, ձյունից բեռնաթափված աթարի[31] ամրոցները, խոտի դեզերն ու աղբակույտով պարարտացված արտերը: Այդ օրերի ցերեկվա ժամերին սևացած

[31] աթար *(բրբ.)* – անասունների չորացրած աղբ, որ գործածում էին որպես վառելիք

հողից բարձրանում էր մառախուղանման տաք գոլորշին: Տարվա նույն եղանակին տղամարդիկ դուրս էին գալիս խրճիթներից ու նստում դեռ խոնավությունից չչորացած պատերի տակ՝ իրենց հայացքներն ուղղելով երկնքում փայլող պայծառ արևին: Ձմեռվա բուք ու բորանի պատճառով խրճիթներում երկար ժամանակ թաքնվելուց հետո հաճելի էր նստել պատերի տակ՝ ստանալով մայր արևի ջերմությունը:

Առանձնապես գարնան զարթոնքը հաճելի էր մեզ՝ պատանիներիս: Հավաքվում էինք խոնավությունից չորացած հարթ կտուրների վրա, զբաղվում ըմբշամարտով, պարսանետությամբ և այլ զվարճալի խաղերով, իսկ հաճախ էլ մեկս մյուսին հրում արևի ջերմությունից փուխրացած ձյան մեջ: Այդ տարի մենք բոլորս՝ մեծից փոքր, զգում էինք, որ ընթացիկ ձմեռն ավելի ուրախ անցավ, քան թե անցած տարիները, որովհետև այն անցավ առանց թալանի և մարդասպանության՝ չհաշված թուրքական իշխանությունների կողմից նշանակված հարկահավաքների անմարդկային արարքներն ու անօրինականությունները հայ գյուղացիների նկատմամբ:

Դեռ հիշողությանս մեջ թարմ է այն օրը, երբ վաղ առավոտյան ոստիկանների մի մեծ խումբ հանկարծակի մտավ մեր գյուղ: Եկողները թուրք հարկահավաքներն էին: Գալով գյուղ՝ նրանք շտապ ցրվեցին հայերի խրճիթներով, իսկ նրանցից երեք հոգի վայրի գազանների պես ներխուժեցին մեր տուն:

Փակելով խրճիթի դռները՝ նրանք սկսեցին քրքրել մեր ունեցվածքը, ցուցակագրեցին այն ամենը, ինչ որ պատահեց, հետո անցան գոմերը, հաշվեցին բոլոր անասունները, անգամ մեկ ժամ առաջ ծնված գառնուկին նույնպես գրանցեցին իրենց ցուցակներում՝ որպես անասնագլուխ: Չնայած մեր խրճիթը մեծ էր, բայց մենք աղքատ էինք. հող քիչ ունեինք, մեր անասունները նույնպես քիչ էին, դրա համար էլ հարկահավաքները շատ դժգոհ մնացին թե՛ մեզնից և թե՛ իրենց կազմած աղքատ ցուցակից:

– Էլ ի՞նչ ունեք, ցու՛յց տվեք, քանի շուտ է,– հրամայեց հարկահավաքների ղեկավարը:

– Բացի մի զույգ լծկան եզներից, մեկ կովից ու 30 ոչխարից ուրիշ էլ ոչինչ չունենք,– պատասխանեց մեծ եղբայրս:

– Չի կարող պատահել, որ այսպիսի մեծ խրճիթ ունեցողը շատ անասուն չունենա,– գոռգոռում էր ավագ հարկահավաքը:

– Էլ բան չունենք,– կրկնեց եղբայրս:

– Դռան առաջ կանգնած ձին ո՞ւմն է,– հարցրեց դրսից ներս մտնող զապթիան[32]:

– Մերն է,– պատասխանեց Բադալը:

Իմանալով, որ դրսում կապված ձին մեզ է պատկանում, կատաղած հարկահավաքն ավելի գազազեց:

– Ուրեմն դուք թաքցրել եք մեծ թվով անասուններ և չեք ուզում տեղն ասել,– բղավում էր կառավարության ներկայացուցիչը:

– Ինչպե՞ս կարող ենք թաքցնել անասունները, երբ նրանք ձեր աչքի առաջ կանգնած են,– ասաց Բադալը՝ ձեռքը պարզելով դեպի գոմ, որտեղ մսուրի երկարությամբ, մեկ շարքով կապված էին խոշոր եղջերավոր անասունները:

Ուշադրություն չդարձնելով եղբորս պատասխաններին՝ ավագ հարկահավաքը, շրջվելով իր օգնականի կողմը, կարգադրեց:

– Ցուցակագրե՛ք ևս մեկ ձի՝ իր երկու քուռակներով:

– Ձին որձ է, քուռակներ չունի,– ծիծաղելով պատասխանեց եղբայրս:

Լսելով Բադալի հեգնանքով տրված պատասխանը՝ թուրքն ավելի կատաղեց:

– Նշանակում է՝ դուք թաքցրած քուռակների տեղը նույնպես չեք ուզում ասել:

– Մենք ցույց տված անասուններից բացի ուրիշ ոչինչ չունենք:

– Այդ դեպքում կհաշվեմ մինչև քսան. թաքցված անասունների տեղը չասելու դեպքում քանդելու ենք ձեր խրճիթի կասկածելի բոլոր անկյունները,– բացուխուփ անելով իր ձեռքի մատները՝ ասաց թուրքը:

– Ինչքան ուզում եք, հաշվեք,– գոմում եղած անասուններից բացի ուրիշ ոչինչ չունենք,– ասաց եղբայրս ու հետ քաշվեց դեպի տան կենտրոն, որտեղ դրված էր փոքրիկ Միրաքի օրորոցը:

Մոտենալով Բադալին՝ հարկահավաքը նրան ահաբեկելու նպատակով իր կեղտոտ մատների վրա հաշվեց ոչ թե քսան, այլ հարյուրից էլ ավելի, սակայն մենք թաքցնելու ոչինչ չունեինք և ուրիշ բան ցույց տալ չէինք կարող: Այնուամենայնիվ անիծվածները մեզ չհավատացին. նրանք կրկին խուզարկեցին ամեն տեղ, քրքրեցին խրճիթի անկյուններում ցրիվ տված բոլոր իրերը, անկողինները, բայց և այնպես ոչ մի բանի հետք չգտան: Ըստ երևույթին գոհ չմնալով իրենց խուզարկություններից՝ նրանք սկսեցին թոնրի սուր շշերով ծակծկել խրճիթի հատակը,

[32] զապթիա *(թրք.)* – թուրք ոստիկան

անշաղախ շարված պատերի ճեղքվածքներն ու մութ անկյունները: Խուզարկու շների նման հոտոտելով՝ նրանք դուրս եկան լայն միջանցք, որի անկյուններից մեկում դարսված էին ձմեռվա մեր վառելիքի մնացորդները: Զգալով, որ հարկահավաքները մտադրվել են այնտեղ նույնպես քրքրել, եղբայրս զգուշորեն հետ քաշեց անկյունում դարսված փշոտ կյազերը[33]՝ նպատակ ունենալով ցույց տալ ոստիկաններին, որ այնտեղ նույնպես թաքցրած բան չունենք: Ճիշտ է, որ մենք այդ անկյունում ունեինք հացահատիկ պահելու մի մեծ հոր, սակայն այն վաղուց դատարկվել էր, իսկ բերանը ծածկված էր բարակ ճյուղերով ու փշոտ կյազերի կապոցներով: Բադալի այդ զգույշ շարժումն ըստ երևույթին կասկածանքի տեղիք տվեց, որի պատճառով ավագ հարկահավաքը ոգևորված դեն հրեց Բադալին: Վերցնելով նրա ձեռքում եղած երկճղանի փայտե եղանը՝ ինքն անձամբ սկսեց քրքրել անկյունում իրար վրա կուտակված փշոտ կյազերի կապոցները: Դեսուդեն շպրտելով վառելիքի մնացորդները՝ զայրացած հարկահավաքն էլի մի քայլ առաջ գնաց ու հենց այդ վայրկյանին էլ հասակով մեկ ընկավ բարակ ճյուղերով ծածկված դատարկ մեծ հորի մեջ՝ իր գլխին թափելով փշալարերի նման սուր ու ծակող կյազի խրձերը:

Դա տեսնելով՝ մյուս հարկահավաքները, վախից ահաբեկված, հետ-հետ քաշվեցին, իսկ փոսն ընկնողը բղավելով օգնություն էր պահանջում:

Տեղում կանգնած Բադալը ցանկացավ օգնության հասնել, բայց մի պահ կանգ առավ. ըստ երևույթին միտքը փոխելով՝ ցանկացավ, որ հարկահավաքն ավելի շատ տանջվի գլխին թափված սուր փշերի ծակոցներից:

Հանկարծ եղբայրս խորամանկությամբ ոտքը բռնեց ու կաղալով հեռացավ՝ հասկացնելով, որ ոտքը փուշ մտնելու պատճառով օգնել չի կարող: Չնայած հորն ընկնողը գազանի պես մռնչում էր, բայց և այնպես առաջին իսկ պահին նրան օգնողներ չեղան: Ուշքի եկած հարկահավաքներից մեկը, որ մյուսներից տարբերվում էր իր հաստ փորով և շլդիկ աչքերով, երկու քայլ առաջ գալով, ավելի մոտեցավ հորին, սակայն նրա մոտենալն ու Մարկոսի ձեռքում եղած ճրագի լույսի հանգչելը մեկ եղավ: Մնալով խավարում՝ շլդիկը փորձեց հետ քաշվել, բայց իզուր. նա ևս սայթաքեց ու գլխիվայր ընկավ հորի մեջ: Այս անգամ երկու թուրքերն էլ, Արջասարի վիրավոր արջի պես ոռնալով, միասին օգնություն էին կանչում:

[33] կյազ – որպես վառելիք օգտագործվող չոր մացառներ

Հարկահավաքների՝ մեր տուն մտնելու առաջին իսկ պահից մինչև հացահատիկի դատարկ հորն ընկնելը ես ներկա էի ու ականատես այն ամենին, ինչ կատարվեց, բայց և այնպես թուրք զապթիաների գորգոռոցը ոչ մի ազդեցություն չթողեց ինձ վրա: Մեր գյուղի մարդկանց նման ես էլ նույնպես վաղուց էի ընտելացել թուրք ոստիկանների այդ կարգի ահաբեկումներին, մանավանդ որ այդ դեպքերը սովորական երևույթներ էին: Ահա թե ինչու այդ օրն էլ հորն ընկած հարկահավաքների ոռնոցներն ու օգնության կանչերը միայն ուրախություն էին պատճառում ինձ և ոչ թե վախ կամ կարեկցանք:

Իսկապես, անխիղճ հարկահավաքներն իրենց չարության պատճառով շատ տեղին պատժվեցին: Հորն ընկած երկու թուրքերի ոռնոցներից համարյա թե կտրվել էր նրանց ձայնը. ինձ թվում էր՝ թե նրանք հոգի են տալիս սատանաներին:

– Վե՛ր կաց, գյավո՛ւր, չե՞ս տեսնում, որ մեր պետը մեռնում է,– ասաց երրորդ հարկահավաքը, որի ձեռքում գտնվում էր ցուցակների մեծ թղթապանակը:

– Հիմա կօգնեմ,– ասաց եղբայրս:

– Էլ ինչո՞ւ ես նստել,– բարկացավ հարկահավաքը:

– Ոտքս փուշ է մտել:

– Քո ոտքը մի փուշ է մտել, իսկ իմ պետի մարմինը ծակծկվել է հազար փշերով:

– Ես ի՞նչ մեղք ունեմ:

– Դուք դիտավորյալ թակարդ եք պատրաստել:

– Դա մեր հացահատիկի հորն է:

– Իսկ որտե՞ղ է հացահատիկը:

– Վաղուց կերել ենք: Մնացածն էլ ցանել ենք, որ աշունը ձեզ տանք,– պատասխանեց եղբայրս:

– Էլ շատ մի՛ խոսիր, շուտ օգնի՛ր էֆենդի չավուշին՝[34] թակարդից հանելու,– բղավեց զավթիչը:

Եղբայրս դանդաղ վեր կացավ, մոտեցավ հորին. նա սկսեց հարկահավաքների վրա թափված փշոտ վառելիքը զգուշորեն դեն հրել և իր աժդահա բազուկներով վիրավորված գազաններին մեկ-մեկ դուրս հանեց ու ձեռքերից բռնած՝ քարշ տվեց խրճիթի կենտրոն: Երդիկից թափանցող արևի շողքի տակ ես պարզ տեսնում էի նրանց արյունլվա, կեղտոտ դեմքերը: Շլդիկ հարկահավաքի աչքերը բոլորովին չէին երևում. ինձ թվում

[34] չավուշ – ոստիկան, տասնապետ

էր, թե դրանք դուրս են թռել իրենց բներից: Նստեցնելով գետնին փռված խալու վրա՝ Բադալը սկսեց մեկ-մեկ հանել նրանց մարմնի մեջ խրված կարմիր կյազի սուր փշերը, իսկ երրորդ հարկահավաքը իր կեղտոտ թաշկինակով սրբում էր նրանց երկուսի արյունոտ դեմքերը:

Վերջապես չարացած հարկահավաքները իրենց կարգի բերելուց հետո վեր կացան, լույսը մոտեցրին հորին, որի մեջ քիչ առաջ ոռնում էին: Զգուշորեն ստուգեցին հորի չորս կողմերը, որն արդեն մաքրված էր վառելիքի մնացուկներից. համոզվելով, որ այնտեղ նույնպես թաքցված բան չկա, հետ դարձան՝ վերցնելով պատի տակ դրված փայտե մեծ մահակը, ու պատրաստվեցին Բադալին ծեծելու: Բայց իզուր, Բադալն իր աժդահա բազուկներով երկուսին էլ գամեց պատին: Զգալով Բադալի ուժը՝ նրանք այլևս չհամարձակվեցին ձեռք բարձրացնել, ուստի ստիպված եղան իրենց կազմած ցուցակները վերցնել ու հայհոյելով հեռանալ: Հարկահավաքների հորն ընկնելը, իհարկե, մեր վրա էժան չնստեց. մի քանի օրից հետո պարտք վերցնելով՝ մենք կրկնակի վճարեցինք ընթացիկ տարվա մեր տուրքերը:

ԳՈՄԵՇՆԵՐԻ ԿՌԻՎԸ

Արդեն գարուն էր, սևին էին տալիս գյուղը շրջապատող հարթավայրերը: Վարարել և ափերից դուրս էին եկել սառույցի հաստ շերտով ծածկված գետերն ու առվակները՝ իրենց հետ տանելով ապակու նմանվող փայլուն սառցաբեկորները: Կանաչել էին գետափնյա ընդարձակ հարթ չիմանները[35], խոտհարքները, երևում էին հոտավետ ծաղիկների առաջին բողբոջները: Արևի վառ ջերմությունից աստիճանաբար հալվում էր սարալանջերին նստած ձյան հաստ շերտը, հոսում դեպի խորխոր ձորեր՝ ի վերջո թափվելով հորդացած Տիգրիս գետի մեջ: Այնպես որ մեզնից ոչ մեկը՝ որպես մարդ արարած, գարնանային այդ հրաշալի տեսարանից ու ծաղիկների հոտավետ բուրմունքից արբեցած, այլևս տանը նստել չէր կարող: Գարնան այդ նույն օրերին հովիվները իրենց հոտով բարձրացել էին մոտակա սարալանջերը, իսկ նախրչին[36] իր նախրով իջել էր գետափնյա չիմանները:

Այդ տարի ինձնից մեծ եղբայրս՝ Վարդանը, թողել էր գութանը և դարձել գառնարած: Վարդանը շատ խելոք և աշխատասեր տղա էր. դեռ

---

[35] չիման *(գվռ.)* – մարգագետին
[36] նախրչի – *նույնն է՝* նախրապան

ութ տարեկանից սկսել էր աշխատել. սկզբում օգնում էր միջնեկ եղբորս՝ Մարկոսին, մեր անասունները խնամելու գործում, իսկ վերջին երկու տարիների ընթացքում դարձել էր իսկական գառնարած:

Ես դեռ փոքր հասակից շատ էի սիրում գառներին, ուղղակի երազում էի, թե երբ կդառնամ գառնարած, դրա համար էլ չէի կտրվում Վարդանից: Մենք երկու եղբայրներով ամեն օր վաղ առավոտ դուրս բերելով մեր գառներին, բարձրանում էինք մոտակա սարալանջերը՝ մի արոտավայրից մյուսն անցնելով, մի խոտհարքից՝ երկրորդը՝ աշխատելով, որքան հնարավոր է, լավ կշտացնել փոքրիկ անասուններին:

Գնալով եղբորս հետ՝ ես ամբողջ օրը հանգիստ չունեի. չարաճճի ուլիկների հետևից ընկնելով՝ այնքան շատ էի վազում դեսուդեն, որ երեկոյան՝ տուն հասնելուն պես, հոգնածությունից անմիջապես քուն էի մտնում:

Դժբախտաբար այդ նույն գարնան հենց սկզբից հանկարծ հիվանդացավ Վարդանը, իսկ մի քանի օրից հետո ավելի ծանրացավ ու միանգամից ընկավ անկողին: Ծաղիկ հիվանդությունը պատեց նրա ամբողջ մարմինը, և դրությունն այն աստիճան լրջացավ, որ մեր տնեցիները հույսները կորցրած օրեցօր սպասում էին վատ հետևանքի: Եղբայրներս ստիպված էին գառների խնամքը ժամանակավորապես ինձ հանձնել՝ սպասելով, թե հետագայում ինչպես կզարգանան իրադարձությունները: Այսպիսով՝ գառնարած դառնալու իմ երազանքը փաստորեն իրականացավ: Ամեն օր՝ արևածագին, քնաթաթախ, հովվական կեռ կոպալը ձեռքիս, գառներն առաջս արած, գնում էի Ծաղկասարի լանջերը, որը հարուստ էր արոտավայրերով, սառնորակ աղբյուրներով, հոտավետ ծաղիկներով, սնդարար գետնապտուղներով:

Սարալանջն իր բարձր դիրքով իշխում էր ողջ գյուղին ու նրա շրջապատին, այնտեղից տեսնում էի դաշտերում կատարվող ամեն ինչ՝ արորի ռանչպարներին, արտերը ջրող ջրկիրներին, արահետներով անցնող միայնակ մարդկանց, չիմաններում թափառող անասնապահներին և բանջար քաղող կանանց ու աղջիկներին: Դիտելով նրանց՝ ինձ թվում էր, թե ես էլ եմ աշխատում, արդար քրտինքով ձմեռվա մեր հացն եմ վաստակում: Այսպես, գտնվելով բնության այդ հրաշալի միջավայրում, այն էլ իմ սիրած գառնուկներին խնամելիս, մանկական հրճվանքից ուղղակի սիրտս էր բաբախում: Այնուամենայնիվ, գառնարած դառնալու առաջին երկու օրերի ընթացքում փոքրիկ անասուններն ինձ հանգիստ ու դադար չէին տալիս. թռչկոտում էին դեսուդեն, մտնում ամեն տեսակ թփերի մեջ, իսկ ես վազում էի հետևներից: Մինչև մեկին հետ էի վերադարձնում,

մյուսն էր փախչում՝ ստիպելով ինձ արտասվելու չափ զայրանալ: Զայրանում էի ոչ թե չարչարվելուս համար, այլ վախենում էի, որ կորչեն կամ ժայռերից վայր ընկնեն, դրա համար էլ չսպասելով արևի մայր մտնելուն՝ օրը ցերեկով վերադառնում էի տուն, իսկ ինքս փախչում էի ընկերներիս մոտ, որոնք օրվա այդ ժամերին գտնվում էին մեծ ծառի փչակում՝ սպասելով դաշտերից վերադարձող իրենց ընկերներին:

Մի օր էլ սովորականից շուտ արթնացա և առանց հաց ուտելու գնացի՝ գառներին դուրս բերելու: Մոտեցա գոմի դռանը թե չէ, անասունները սկսեցին բառաչել այնպես, որ ոչ մի կերպ հնարավոր չեղավ նրանց ձայնը կտրել: Խոշոր եղջերավոր անասունների գոմից դուրս եկող Աչանը, տեսնելով ինձ, ասաց.

– Գառներդ ամբողջ գիշեր բառաչել են, Սևո՛ւկ ջան:

– Կուշտ են, դրա համար էլ բառաչում են,– պատասխանեցի:

– Կուշտ լինելու դեպքում չեն բառաչում. երևի երեկ արոտից շուտ ես տուն բերել, դրա համար էլ սովածությունից բառաչում են:

– Ի՞նչ անեմ. ուլերը փախչում էին դեսուդեն. վախենում էի՝ քարաժայռերից վայր ընկնեն, դրա համար էլ շուտ բերեցի,– կարմրելով պատասխանեցի ես ու առանց հետ նայելու, գառներն առաջս առած, դուրս եկա ընդհանուր միջանցքից:

Այդ օրը մեր սովորական արոտավայր տանող ճանապարհին մեծ խառնաշփոթ էր ու իրարանցում: Գյուղի կալերի մոտ մեծ բազմություն էր հավաքվել՝ ականատես լինելու երկու ուժեղ գոմեշների կռվին:

Մեր գյուղում շատ գոմեշներ կային, բայց նրանց մեջ ամենաուժեղը նախկին տանուտեր Դելոյի գոմեշն էր, որին անվանում էին Շիրին: Երկրորդը նրա հորեղբոր որդի Դավիթի գոմեշն էր՝ Մարատ անունով: Այդ երկու անասունները իրար հակառակորդներ էին և անգամ պատահական հանդիպելիս մի ակնթարթում կռվի էին բռնվում, և եթե մարդիկ երկար չմիջամտեն, ապա դժվար թե հնարավոր լինի նրանց բաժանել: Ընդհանրապես այդ երկու անասունները լավ էին խնամվում տերերի կողմից, և պատահական չէր, որ նրանց հավասար, ուժեղ անասուն չկար մեր գյուղում:

Այդ տարի՝ ամբողջ ձմեռվա ընթացքում, անասունները գոմերից դուրս չէին բերվել, արտակարգ խնամվել էին: Ձմեռվա օրերին շաբաթական մեկ անգամ ջրով լողացնելուց հետո նրանց մարմինը տրորվում էր կտավատի ձեթով, և գարնան սկզբներին, ըստ հին սովորության, երբ գոմեշին առաջին անգամ դուրս էին բերում գոմից, տղամարդիկ ու երեխաները հում հավկիթները խփում էին նրանց ճակատներին:

Շիրինի ու Մարատի նկատմամբ այդ արարողությունը արդեն կատարվել էր, սակայն այդ օրը պատահմամբ երկու ուժեղ ախոյանները գութանավարի գնալու ճանապարհին՝ կալերի մոտ, հանդիպել էին միմյանց:

Նրանց կռիվը սարսափելի էր. գլխների հարվածից դղրդում էր գետինը, իսկ կոտոշների չխկչխկոցների ձայնը հասնում էր մինչև գյուղ: Գութանավորներն ու գյուղից օգնության հասած լրացուցիչ տղամարդիկ կռվի առաջին իսկ րոպեից սկսել էին իրարից բաժանել, սակայն իզուր էր նրանց չարչարանքը: Շիրինի և Մարատի կռիվը հասարակ գոմեշների կռիվ չէր, և մեկին մյուսից բաժանելն այնքան էլ հեշտ չէր: Նրանք դեռ նոր էին տաքացել, և ոչ մի պարանի կամ գերանի միջամտություն չէր կարող երկու հսկաներին միմյանցից անջատել: Գյուղում շատ ուրիշ գոմեշներ էլ կային, որոնք կռվի ընթացքում իրենց ուժերը քիչ չափելուց հետո վայր էին ընկնում կամ փախուստի դիմում, բայց վերջիններս այդ կարգի գոմեշներից չէին: Շիրինը և Մարատը փախչելու սովորություն չունեին. իրար հանդիպելիս մեկը մյուսից չէր պոկվում: Շիրինը գյուղի ամենաուժեղ գոմեշն էր. նա տարիների ընթացքում շատ անգամ էր կռվել, բայց երբեք չէր պարտվել: Շիրինը սովորություն ուներ ուժեղների հետ կռվել մինչև վերջ. դեռ ախոյանին փախուստի մատնելուց հետո էլ մի քանի կիլոմետր կհետապնդեր:

Պատահել էին դեպքեր, երբ նա կռվել էր իրենից թույլ գոմեշների հետ և հաղթելուց հետո չէր հետապնդել. թվում էր, թե արհամարհում էր հակառակորդին: Երկար տարիներ նա այդպես էր իրեն պահել, սակայն այդ օրը նրա ախոյանը՝ Մարատը, մեծ ճիգերով դիմադրում էր նրան: Երկու կռվող գոմեշների ոտքերի տակ ամբողջովին տրորվել էին գյուղացիների կալերն ու մոտակա մարգագետինը: Նրանք շատ ուժգին հարվածում էին մեկը մյուսին: Շիրինը, հրելով Մարատին, նրան հասցրել էր գետնափոր, այն էլ դատարկված մարագների կտուրների մոտ, և եթե տեղում կանգնած մի քանի ուժեղ տղաները պարաններով չքաշեին նրանց, ապա երկուսն էլ վերևից կընկնեին դատարկ մարագի մեջ:

Տարվելով գոմեշների կռվով՝ ես հետաքրքրությունից բոլորովին մոռացել էի իմ գառներին և ընդհուպ մոտեցել նրանց բաժանող մարդկանց: Իսկ իմ փոքրիկ անասունները վաղուց հեռացել էին, բայց թե ուր, հետաքրքրվել անգամ չուզեցի: Տեղում հավաքվածները շարունակ վիճում էին, թե ում գոմեշն է հաղթելու: Իհարկե, ներկա գտնվողների զգալի մասը կողմնակից էր Շիրինի հաղթանակին: Չէ՞ որ նա հարուստի գոմեշ էր, ուստի նրա պարտվելն էլ վիրավորական կլիներ տիրոջ համար, այդ իսկ պատճառով էլ ականատեսներից շատերը շահագրգռված էին նրա հաղթանակով: Առաջներում ես նույնպես կողմնակից էի, որ կռվի

դեպքում միշտ նա լիներ հաղթողը՝ համոզված լինելով, որ Շիրինը ոչ միայն կռվող էր, այլև լավ լծկան անասուն: Օրինակ՝ գութանավարի ժամանակ նրա վզին դրվում էր գերանից ավելի հաստ լուծը, իսկ վերջինս ամրացվում էր գարմաշոյի հաստ ճյուղերից պատրաստված երկար սամիներով[37]: Չնայած գութանն ուներ չորս լուծ, բայց ամոլի[38] հետ լծված Շիրինը փաստորեն մենակ էր քաշում, հասկանալի է, որ նման ուժեղ անասունին բոլորն էլ կսիրեին:

Գութանավարի ժամանակ ընդհանրապես Շիրինին զսպել հնարավոր չէր, մանավանդ ճիպոտ կպցնելու դեպքում. նա կարող էր գութանը մենակ քաշել, իսկ զայրացնելու դեպքում տեղահան անել: Դելոյի գութանը շատ մեծ էր, մեծ էր նաև նրա պողպատե խոփը: Շիրինի հսկա ուժով առաջ տարվող գութանի այդ խոփը, ճեղքելով սև հողի կուրծքը, իր հետևից թողնում էր առվից էլ լայն ու մեծ ակոս, որի մեջ կարող էին տեղավորվել ոչ միայն երեխաներ, անգամ գեր մարմին ունեցող մարդիկ: Մենք՝ պատանիներս, շատ էինք վազել Շիրինին լծած գութանի հետևից:

Մեծ և ուժեղ էր Շիրինը, սակայն Մարատը նույնպես պակաս ուժ չուներ: Նա շատ երիտասարդ էր. որպես լծկան անասուն՝ նոր էր հանդես եկել: Այդ օրն առաջին անգամ հանդիպելով Շիրինին՝ նա համառորեն դիմադրելով, ոչ մի քայլ հետ չէր մնում նրանից:

Օրն արդեն կես էր դարձել, բայց երկու ախոյանները դեռ շարունակում էին համառորեն կռվել՝ չբաժանվելով միմյանցից, իսկ ես տեղից չէի շարժվում՝ սպասելով Մարատի վճռական հաղթանակին: Մարատի հաղթելու իմ ցանկությունը մոտալուտ էր, նա արդեն անցել էր գրոհի, և քիչ էր մնացել, որ ախոյանին մեջքի վրա շուռ տա, սակայն անասուններին բաժանող տղամարդիկ նրան թոկերով հետ քաշեցին՝ Շիրինին հնարավորություն տալով հարձակման անցնել: Ավելորդ էր մարդկանց անտեղի միջամտությունը. Շիրինի ուժն արդեն սպառվում էր, իսկ Մարատը, էլ ավելի ոգևորված, կոտոշների հրումով նրան հասցրել էր մինչև տիրոջ կալը: Մի քանի րոպեից հետո ներկա գտնվող մարդկանց միջամտությամբ գոմեշների կռիվը տեղափոխվեց գյուղին մոտ արտը, որի տերը նույնպես ներկա էր այդ հետաքրքիր տեսարանին: Նա վայ տալով բնազդաբար մոտենում էր կռվող անասուններին, իսկ վերջիններս իրենց հուժկու, հաստ ոտքերով կրկնակի վարում էին խեղճ մարդու մի քանի օր առաջ ցանած հողամասը:

---

[37] սամի – լծի երկու ծայրերի զույգ անցքերից անցկացվող և եզան պարանոցը երկու կողմից գրկող փայտե զույգ ձողիկներից յուրաքանչյուրը

[38] ամոլ – միասին լծվող լծկաններից յուրաքանչյուրը, լծակից

Մարատը էլի զոռեց՝ իր կեռ կոտոշները խրելով Շիրինի ձախ թևի տակ, բարձրացրեց նրա առջևի ոտքերը, մեկ էլ հուպ տվեց. այս անգամ Շիրինը լրիվ թուլացավ և դիմեց փախուստի: Երկար տարիների ընթացքում դա Շիրինի առաջին պարտությունն էր: Տեսնելով անասունի փախուստը՝ բաժանողները տխրությամբ հեռացան կռվի դաշտից, իսկ ես ուրախ-ուրախ վազեցի դեպի Ծաղկասարի արոտավայրերը՝ գառնուկներիս հասնելու:

*
* *

Մարատի հաղթանակի առթիվ իմ ուրախությունն իր պատճառներն ուներ, բայց այդ մասին իմ ընկերներից ոչ մեկին չէի ասել. ամաչում էի նրանց իմ գաղտնիքը բացել:

Մարատի տերը՝ Դավիթը, չնայած նախկինում հարուստ էր եղել, բայց վերջին տարիների ընթացքում աշխատող ձեռք չունենալու պատճառով աղքատացել էր: Նա չորս աղջիկ ուներ. նրանցից ամենամեծը տասնվեց տարեկան էր՝ Մսրե անունով: Դավիթի ամենասիրելի աղջիկը իր գեղեցկության շնորհիվ գրավել էր գյուղի երիտասարդության ուշադրությունը և փաստորեն դարձել նրանց կռվախնձորը: Պատահական չէր, որ նրա գեղեցկությունը երեք տարուց հետո դարձավ իր ու ամուսնու դժբախտության պատճառը:

Դավիթի ամենափոքր աղջիկը՝ Շուշանը, ընդամենը յոթ տարեկան էր: Նա ավելի գեղեցիկ էր, քան թե մնացած երեքը, բայց փոքր լինելու պատճառով դեռևս ոչ ոք չէր հետաքրքրվում նրանով:

Քրոջս ամուսինը՝ Բալաբեկը, Դավիթի մտերիմ ազգականն էր. երկու բարեկամ ընտանիքները մշտական այցելում էին միմյանց, իսկ նեղ պահերին էլ օգնության հասնում մեկը մյուսին: Նրանց բարեկամական կապերի շնորհիվ ես դեռ հինգ-վեց տարեկան հասակում միշտ հաճախում էի նրանց տուն և տարբեր առիթներով խաղում Շուշանիկի հետ: Առաջներում, ըստ պապական հին սովորության, շատ ծնողներ առիթ լինելու դեպքում իրենց զավակներին նշանում էին համարյա թե մանուկ հասակում, իսկ որոշ դեպքերում էլ հենց օրորոցում եղած ժամանակվանից:

Այդպիսի մի դեպք էլ պատահեց ինձ հետ, երբ ես դեռ փոքր էի, ընդամենը յոթ տարեկան: Անցած տարիների ձմեռվա մի օր հայրիկիս հետ գնացել էինք Աննայի ամուսնու հորեղբոր՝ Դավիթի՝ որպես մեր հեռու բարեկամներից մեկի տուն: Դավիթը մի ամրակազմ ու աշխատանքի

մեջ կոփված տղամարդ էր՝ 35-40 տարեկանից ոչ ավելի, իր աշխատասիրությամբ և համեստությամբ վայելում էր գյուղացիների սերն ու հարգանքը: Այդ իսկ պատճառով էլ հայրս երբեք չէր զլանում և հաճախակի այցելում էր Դավիթին: Մտնելով Դավիթի տուն՝ մենք այնտեղ գտանք նաև Աննային՝ փայտե մեծ դազգահի առջև նստած գորգ գործելիս:

Դավիթն ու հայրիկս ողջագուրվելուց հետո նստեցին թոնրի վրա դրված քուրսու շուրջն ու սկսեցին իրենց սովորական զրույցը, իսկ ես անմիջապես վազեցի Աննայի մոտ, որի կողքին նստած էին տանտիրոջ չորս աղջիկները, այդ թվում՝ նաև Շուշանիկը: Զգալով, որ խանգարելու եմ իրենց աշխատանքներին, գորգագործները ստիպված թողեցին դազգահը ու մոտեցան քուրսու շուրջ նստածներին: Նրանց զրույցին մասնակցում էր նաև Դավիթի կին Մարիամը: Թողնելով մեծերին՝ ես ու Շուշանիկը սկսեցինք սովորական մեր խաղը՝ մեզ վրա հրավիրելով նստածների ուշադրությունը: Վազում էինք դեսուդեն՝ մտնելով խրճիթի մութ անկյունները, քաշքշում միմյանց մազերից, կրկին մոտենում նստածներին, փաթաթվում Աննայի վզով:

Հայրս նստել էր Դավիթի դեմ դիմաց. իր զրույցի ժամանակ դիմելով նրան՝ հարցրեց.

– Այս տարի վարուցանք անելու համար ո՞ւմ հետ ես միանալու:

– Դեռ չեմ մտածել. հարևաններից ով ցանկանա, նրան էլ կմիանամ,– պատասխանեց Դավիթը՝ հարդարելով իր ծնկներին նստած Շուշանիկի երկար շեկ մազերը:

– Քո լծկան անասունները լավ են խնամված. յուրաքանչյուր հարևան ուրախությամբ կմիանա քեզ,– ասաց հայրս:

– Մենակ անասունները բավական չեն. հարկավոր է նաև աշխատող ձեռք ունենալ, իսկ ես այդպիսին չունեմ,– տխրությամբ պատասխանեց Դավիթը:

– Վարուցանք անելու գործում կարևորն այն է, թե ով ինչքան լծկան անասուն ունի, մնացածը երկրորդական է,– ասաց հայրս:

– Ո՛չ, Մխիթա՛ր եղբայր, առանց աշխատավոր մարդու լծկան անասունները արժողություն չունեն. մարդ պետք է լինի, որ նրանց պահի, պահպանի ու ժամանակին էլ աշխատեցնի տնտեսության մեջ, ինչպես, օրինակ, քո տղաներն են. Բաղալը վարուցանք է անում, Մարկոսը դարձել է հովիվ, իսկ Վարդանը սկսել է արդեն գառներ արածեցնել, շուտով կմեծանա նաև Սևուկը: Չորս եղբայր քո գլխավորությամբ կարող են մի մեծ սար շրջել, իսկ ես մենակ ի՞նչ կարող եմ անել, – վերջացրեց Դավիթը:

– Աստված թող քո չորս աղջիկներին երկար կյանք տա, նրանք նույնպես կաշխատեն, ինչպես իմ տղաները, միայն քո Մսրեն իր գեղեցկությամբ, աշխատասիրությամբ երկու տղա արժե,– ժպտալով ասաց հայրս:

– Տանողի աչքը լույս լինի,– միջամտեց Աննան:

– Ես Մսրեին տանից դուրս չեմ թողնի, թեկուզ ինչքան լավ տղա էլ լինի,– ասաց Դավիթի կին Մարիամը:

– Ա՜յ կնիկ, ո՞ր մեկին պահես տանը. չորսն էլ նույնն են, չորսն էլ քաղցր, բնական օրենքին հակառակ գնալ չես կարող, չորսին էլ պետք է ճանապարհ դնենք,– ասաց Դավիթը՝ նայելով կնոջ զայրացկոտ դեմքին:

– Չէ՛, չէ՛, ես իմ աղջիկներին տանից դուրս հանող չեմ, տանջանքով պահեմ, մեծացնեմ ու հետո էլ տամ խալխի տղաներին, այդ բանը ես չեմ անի,– կրկնում էր Մարիամը:

Նստածները շարունակում էին խոսել, առանձին կատակներ անել, իսկ ես ու Շուշանիկը քաշքշում էինք Դավիթի ձեռքից վերցրած տերողորմյան: Շատ քաշքշելուց վերջապես իմ մեղքով տերողորմյայի թելը կտրվեց, իսկ մարգարիտի նման փայլուն հուլունքները թափվեցին գետնին փռված կարպետի վրա: Հավաքելով այն՝ ես ու Շուշանիկը տվեցինք Աննային՝ խնդրելով, որ հուլունքները շարի նոր թելի վրա: Մարիամից վերցնելով նոր թել՝ քույրս խնամքով շարեց հուլունքները՝ միաժամանակ թելի երկու ծայրերի վերջավորության վրա հագցրեց իր վզից հանված արծաթյա մեծ հուլունքը՝ որպես Դավիթին նվեր: Մինչ Աննան շարված տերողորմյան կհանձներ Դավիթին, ես անմիջապես նրա ձեռքից վերցրի ու կախեցի Շուշանիկի վզին՝ միաժամանակ միամտաբար ձեռքով խառնելով նրա գեղեցիկ ու երկար մազերը:

Նստողները նկատելով իմ այդօրինակ համարձակ քայլը՝ սկսեցին ծիծաղել, իսկ Աննան, դիմելով Մարիամին, հայտարարեց.

– Տե՛ս, Սևուկն արդեն իրեն հարսնացու ընտրեց ու նշանն էլ կախեց վզից. դե հիմա արի՛ ու արգելի՛ր, որ Շուշանիկը ձեր տանից դուրս չգա:

– Աննա՛ ջան, ես Սևուկի նման լավ տղային աղջիկ տալ չեմ մերժի, միայն թե թող մեծանան,– ասաց Մարիամը՝ ձեռքը գցելով Շուշանիկի և իմ վզով ու երկուսիս էլ համբուրելով:

Չնայած այն ժամանակ ես դեռ հարս ու փեսայի իմաստը չէի հասկանում, բայց և այնպես աղոտ կերպով հիշում էի հարսանիքի օրերը, երբ հարս ու փեսան թևանցուկ արած մեր խրճիթի տանիքով գնում էին դեպի եկեղեցի, բայց թե ինչու էին գնում, չէի պատկերացնում:

Մարիամը դեռ շարունակում էր ինձ գովել, իսկ ես միամտորեն մնացել էի կանգնած՝ չիմանալով նրանց ուրախության պատճառը: Աննայի այդ խոսքից հետո մի պահ պատկերացրի, որ ես ու Շուշանիկն էլ հարս ու փեսայի պես, իրար ձեռքից բռնած, գնալու էինք եկեղեցի՝ տեր Օհանի մոտ: Այդ մտածմունքի մեջ էի, երբ Աննան իմ ձեռքից բռնեց ու քաշեց իր մոտ, որտեղ նստած էր նաև Շուշանիկը: Նստողները դեռ շարունակում էին ծիծաղել. անգիտակցաբար ծիծաղում էր նաև Շուշանիկը, սակայն երբ հասկացա, որ ծիծաղը ինձ է վերաբերում, անմիջապես հրեցի իմ ուսին դրված Մարիամի ձեռքը ու առանց հետ նայելու՝ դուրս փախա:

Այդ օրվանից անցել էր մոտ չորս տարի, սակայն նրանց խոսակցությունը մեր երկուսի մասին դեռ մնում էր ուժի մեջ: Հասան բեկի կալվածքից վերադառնալուց հետո ես մի քանի անգամ հանդիպել էի Շուշանիկին, բայց չէի համարձակվում հիշեցնել երկուսիս մասին մեր ծնողների միջև եղած խոսակցությունը: Ահա թե ինչու այդ օրը՝ գոմեշների կռվի ժամանակ, ես անհամբեր սպասում էի Մարատի հաղթանակին:

*
* *

Հեռանալով կալերից՝ ես շատ դժվարությամբ գտա իմ կորցրած գառներին: Նրանք, տրորելով ուրիշների ցանած արտերը, հասել էին Ծաղկասարի լեռնալանջերից ոչ հեռու՝ Դավիթին պատկանող խոտհարքները: Հասնելով խիտ կանաչների մեջ՝ անասունները լավ կշտանալուց հետո, ըստ երևույթին արդեն հոգնած, նստել էին խոտհարքում եղած թփուտների մեջ՝ սկսելով իրենց անմեղ որոճը:

Հաշվելով գառներս՝ պարզեցի, որ նրանց կեսից ավելին չկան, բայց թե ուր էին գնացել, անմիջապես պարզել չկարողացա:

Շատ որոնեցի քարերի հետևում, խիտ թփուտների մեջ, ամբողջ սարի լանջը տակնուվրա արեցի, բայց և այնպես չկարողացա գտնել կորած գառներիս:

Արևն արդեն մայր էր մտնում, իսկ դաշտում մնալ չէի կարող, ուստի ստիպված էի, գառներս տխուր ու տրտում քշելով, բերել գյուղ: Գտնված գառներին տեղավորելուց հետո ես վճռեցի տուն չվերադառնալ, մինչև մնացածներին չգտնեմ: Դուրս գալով գոմից, առանց Աչանին տեղյակ պահելու՝ անմիջապես վերադարձա դեպի կալերը, որտեղ առավոտյան

գոմեշների կռվի պատճառով բաժանվեցի գառներիցս: Սկզբում չէի կողմնորոշվում, թե նրանց գտնելու համար որ ճանապարհով կարելի էր գնալ, բայց երբ թեքվեցի դեպի կալերի ու ջաղացի միջև ընկած ցանված հողամասը, նոր միայն հասկացա նրանց գտնելու գաղտնիքը:

Մտնելով կանաչած արտերի մեջ՝ ես պարզ նկատեցի խոնավ հողամասի միջով տարբեր ուղղություններով գնացած գառների ոտնահետքերը: Նրանց մի մասի հետքը տանում էր դեպի Ծաղկասարի ճանապարհը, իսկ երկրորդը՝ հակառակ կողմ՝ Բալաբեկի ջրաղացի անտառը: Շարունակելով խորանալ կանաչների մեջ՝ ես ավելի պարզ նշմարեցի սև արաբի ոտքերի տեղը: Նրա չորս ոտքերից մեկը վերք լինելու պատճառով կապված էր թաղիքի կտորով. հենց դրանից էլ իմացա նրանց շարժման ուղղությունը:

Չնայած արևն արդեն մայր էր մտել, մութը սկսել էր թանձրանալ դաշտերի վրա, բայց ես վճռեցի հետ չդառնալ ու շարունակում էի վազել դեպի ջրաղացի անտառը: Հասնելով ճանապարհի եզրին կանգնած մենածառին՝ հանկարծ նկատեցի, որ անտառի եզրով անցնող ջրաղացի մեծ ու լայն առվակը լիքն էր ջրով: Դա նշանակում էր, որ գառներս այդ մեծ ու լայն առվակով հեշտությամբ անցնել չէին կարող:

Մի պահ ընկա մտատանջության մեջ. չէ՞ որ ինձ համար ամոթալի էր մեծ թվով գառներ կորցնելը: Ընդամենը մի քանի օր էր, որ դարձել էի գառնարած, բայց և այնպես չկարողացա նրանց պահել, և այդ օրն ինձ հանձնված գառների կեսից ավելին կորել էր: «Ուրեմն, ես չկարողացա ինձ վրա դրված հույսերն արդարացնել,– մտածում էի,– իմ մասին ի՞նչ կասեն մեր տնեցիները, հարևանները, հատկապես Շուշանիկը»: Այդ օրը իմ անուշադրությամբ փաստորեն ես կորցնում էի իմ հանդեպ վստահությունը, և եթե չգտնեի կորած գառներին, ապա ամոթից կմեռնեի:

Շատ մտածելուց հետո վճռեցի վերադառնալ, շրջանցել ջրաղացն ու հակառակ կողմից մտնել անտառ. գիտեի, որ ջրաղացից ոչ հեռու անցնող ջուրը սաղրիկ էր, և այնտեղից հեշտությամբ կարող էին անցնել գառները: Շրջանցելով Բալաբեկի ջրաղացը՝ մտա անտառի խորքը՝ կորած գառներին որոնելու: Չնայած մթնադեմ էր, ու անտառի խորքը՝ ավելի խավար, և խիտ ծառերի արանքից որևէ բան նշմարել հնարավոր չէր, այնուամենայնիվ շարունակեցի առաջ գնալ՝ նպատակ ունենալով շուտ հասնել անտառի եզրը, որտեղ Բալաբեկի ցանված հողամասն էր: Առաջանալով, համարյա թե հասել էի անտառի վերջավորությանը, որտեղից պարզ երևում էր ցորենի կանաչ արտը: Մի պահ կանգ առա՝

սրելով լսողությունս, սակայն ծառի տերևների խշշոցից բացի ուրիշ ձայներ չլսվեցին:

Չգտնելով անասուններին՝ ես արդեն սկսել էի հուսահատվել՝ մտածելով, թե չլինի գառներին տարած լինեն քուրդ տղաները, որոնց հետ մենք ընկերներով միշտ կռվի մեջ էինք: Մեկ էլ հիշեցի, որ նրանք վախկոտներ են և դժվար թե առանց հայ տղաների օգնության, տարվա այդ եղանակին սիրտ անեն գյուղի սահմաններից դուրս գալ: Այդ մտածմունքի մեջ հանկարծ շատ անսպասելի կողքիս տեսա իմ շանը՝ էկանին: Մոտենալով ինձ՝ շունը սկսեց վնգստալ, լիզել ձեռքերս, դեմքս. այնպես էր փաթաթվել ոտքերիս, որ պոկվել չէի կարողանում: «Որտեղի՞ց էր անտառ եկել այդ մութ գիշերով»,– մտածում էի ես: Իհարկե սկզբում չկարողացա մտաբերել, բայց երբ հիշեցի առավոտյան դեպքերը, նոր միայն գլխի ընկա, թե շունը ինչու է եկել անտառ: Նույն օրը առավոտյան՝ գոմեշների կռվի ժամանակ, երբ ես հետ մնացի գառներից, շունը նստած էր իմ կողքին, իսկ թե հետագայում ուր գնաց, այլևս չհետաքրքրվեցի: Ահա այժմ, երբ ես անտառում էի, կարծես թե հրաշքով հավատարիմ անասունը փռվեց ոտքերիս տակ: Շունը վեր կացավ փռված տեղից ու շարժվեց դեպի Բալաբեկի ցանված արտը, իսկ ես հետևեցի նրան: Ըստ երևույթին նա ինձ տանում էր իմ կորցրած անասունների հետքերով, և, իրոք, դեռ հիսուն քայլ չէի արել, երբ երևացին իմ կորած տասնհինգ գառները: Տեսնելով գառներիս՝ այս անգամ ուրախությունից փաթաթվեցի էկանին՝ գրկելով հավատարիմ կենդանու մեծ գլուխը, իսկ նա, իր հերթին փռվելով մեջքի վրա, անընդհատ լիզում էր ձեռքերս: Իմ ուրախությանը չափ չկար. չէ՞ որ ինձ վրա այլևս խոսողներ չէին լինի: Այս բարձր տրամադրությամբ, գառներս առաջս առած, անտառի եզրով դուրս եկա ճանապարհի վրա և երեկոյան ուշ ժամին հասա տուն միայն այն ժամանակ, երբ եղբայրներս երկար որոնումներից հետո վերադարձել էին տուն՝ անհամբեր սպասելով իմ գալուն:

– Ո՞ւր էիր, Սևո՛ւկ,– հարցրեց մեծ եղբայրս:

– Գնացել էի գառներիս հետևից,– պատասխանեցի ես:

– Ո՞ւր էիր թողել նրանց:

– Ձրաղացի անտառում:

– Ո՞ւմ մոտ էիր թողել:

– Մեր շան՝ էկանի մոտ,– պատասխանեցի ես:

Իհարկե, իմ վերջին պատասխանից աշխուժացած, նրանք սկսեցին ծիծաղել, իսկ ես առանց գլուխս բարձրացնելու, դժգոհ դեմքով նստեցի թոնրին դրված քուրսու շուրջ՝ չնայելով ոչ ոքի:

– Գառներին դո՞ւ ես պահել, թե՞ էկանը,– հարցրեց միջնեկ եղբայրս:

– Առավոտյան գոմեշների կռվի պատճառով գառների կեսը, հեռանալով կալերից, էկանի հետ մտել էին անտառ,– պատասխանեցի ես:

– Իսկ ո՞ւր էին գնացել մնացած գառները,– կրկին հարցրեց Մարկոսը:

– Մեր բոլոր գառներն իրենց տեղում են, գնա՛, համբարի՛ր,– զայրացած պատասխանեցի ես:

– Դա լավ է, որ գայլերը չեն կերել,– ծիծաղելով ասաց նա:

– Բա էկանը որտե՞ղ էր, որ գայլերը նրանց ուտեին:

– Գայլերը չէին ուտի, թուրքերը կուտեին,– խոսակցությանը խառնվեց հիվանդությունից դեռ չկազդուրված Վարդանը:

– Հա՛, դու էիր մնացել, որ խոսեիր,– պատասխանեցի ես՝ միաժամանակ ցույց տալով նրան իմ բռունցքը:

Մեր վեճը դեռ կշարունակվեր, եթե Աչանը ժամանակին թոնրից չհաներ մեծ կճուճով եփած ձավարով լիքը փլավը, որի ուտելուն էին սպասում դաշտային աշխատանքից վերադարձած եղբայրներս:

Հաջորդ առավոտյան՝ սովորականից շուտ, Վարդանը, իր օրվա ուտելիքը Աչանից վերցնելով, դուրս գնաց՝ ըստ երևույթին գառներին արոտ տանելու: Դա տեսնելով, համարյա թե կիսահագնված՝ վազելով հասա նրան, պինդ բռնեցի օձիքից:

– Ո՞ւր ես տանում գառներիս,– հարցրի ես:

– Էլ չեմ թողնի, որ տանես ու սոված էլ հետ բերես,– պատասխանեց Վարդանը՝ միաժամանակ բացելով գոմի դուռը:

Վարդանի այդ վարմունքից սաստիկ զայրացած՝ ես անմիջապես խլեցի նրա ձեռքից մահակն ու պատրաստվեցի հարվածելու, սակայն մտաբերելով նրա հիվանդության ծանր օրերն ու նիհարած դեմքը՝ ինձ պահեցի, բայց կոտր չընկնելու համար սկսեցի հետ տալ գառներին: Փակելով գոմի դուռը՝ մենք երկուսով սկսեցինք վիճել, թե վերջապես երկուսիցս ով է գառների իսկական տերը, և ով պետք է պահի նրանց: Մեր վեճը շարունակվեց բորբոքվել ու տեղի տվեց տուրուդմփոցի, և եթե չլիներ վրա հասնող հորս միջամտությունը, ապա ես հիվանդությունից նոր կազդուրված Վարդանին մի լավ կդնգստեի: Մեզ իրարից բաժանելուց հետո հայրս, ձեռքիցս բռնելով, տուն մտցրեց, իսկ Վարդանը, սոված գառներին առաջն արած, բարձրացավ դեպի Ծաղկասարի արոտավայրերը:

ԻՄ ԽՈՐԹ ՄԱՅՐԸ

Լսելով հայրիկիս ամուսնանալու մասին՝ մենք չորս եղբայրներով ուրախացանք, որ վերջապես մայր կունենանք. մանավանդ ես՝ որպես հայրիկի կողմից սիրված ամենափոքրիկ զավակ, հրճվանքի մեջ էի:

Չէ՞ որ ես մայր չէի տեսել, չէի ճաշակել մայրական գուրգուրանք: Հարազատ մայրս մեռավ, երբ դեռ չէր լրացել իմ երեք տարին. աչքս բացելով՝ ես տեսա միայն Աչանին և Աննային, որոնք փոխարինեցին մորս: Ես մայրիկ էի կանչում միայն երազում և արտասվելիս. մնացած ժամանակ լսում էի իմ ընկերների սրտաբուխ կանչերը՝ ուղղված իրենց մայրիկին, իսկ ինքս բարի նախանձով լսում էի նրանց: Չնայած մայր չունեի, բայց «մայր» բառը մեխվել էր հոգուս մեջ և դուրս չէր գալիս: Հիշում էի այն սոսկալի օրը, երբ քույրերս ու եղբայրներս արտասվելով մայրիկ էին կանչում: Իհարկե, այդ օրվանից շատ տարիներ էին անցել, բայց «մայր» բառը այդպես էլ մնաց իմ սրտում և դեռ կմնա մինչև մահ ու գերեզման:

Հասան բեկի կալվածքից հարազատ գյուղ վերադառնալուց հետո հայրիկս ամուսնացավ հանգուցյալ Առաքելի այրի կնոջ՝ Զոզանի հետ: Հարևանների ու մոտիկ բարեկամների խոսակցությունից պարզ էր դարձել, որ Զոզանը՝ որպես ճարպիկ կին, վաղուց էր մտադրվել տիրանալ հայրիկիս, բայց կանացի ինքնասիրությունից դրդված՝ բացահայտորեն չէր ցուցադրում իր զգացմունքները: Գուցե նրանց սերը փոխադարձ էր, միգուցե դա հայտնի էր շատերին, բայց և այնպես մենք տեղեկություն չունեինք այդ մասին:

Նրանք ամուսնացան հանկարծակի, սակայն իմ երազած մայրիկը չկար ու չկար: Նա մեր տուն չեկավ և շուտով ստիպեց հորս բաժանվել իր հարազատ, սիրված զավակներից: Իհարկե, զարմանալի ոչինչ չկար. ասում էին՝ օտար կին է, կարող է լինել և այդպես, բայց այն անհանդուրժելի վերաբերմունքը, որ հենց սկզբից դրսևորեց մեր չորս եղբայրների նկատմամբ, ցույց տվեց, որ մայրական ոչինչ չկար նրա մեջ:

Ամուսնությունից հետո թեկուզ մեկ անգամ ոտք չդրեց մեր տուն. չէր խոսում ոչ մեկիս հետ, իսկ հանդիպելիս էլ չտեսնելու էր տալիս, երես դարձնում: Նա մայր չէր, այլ իսկական մի աստծու պատիժ. չար էր ու համառ, տեղն ընկած դեպքում էլ, չգիտես ինչու, կոպտում էր ամենքիս աջուձախ: Մենք՝ չորս եղբայրներս, անսահմանորեն սիրում էինք հայրիկիս. ես առանց նրան հանդիպելու ու գրկախառնվելու թեկուզ մեկ օր չէի կարող մնալ: Նույնն էր նաև նրա հայրական սերն ու հար-

գանքը մեր նկատմամբ, ինչպես առաջներում, այնպես էլ ամուսնանալուց հետո: Սակայն հոր և հարազատ զավակների հենց այդ սիրո ու հարգանքի անխորտակելի կապը ըստ երևույթին դուրս էր բերել Զոզանին իր հավասարակշռությունից ու տեղիք տվել նրա չարանենգությանը:

Մի անգամ՝ աղբյուրից տուն վերադառնալիս, երես առ երես հանդիպեցի նրան: Տեսնելով Զոզանին, ես, մանկական ամաչկոտությամբ գլուխս կախ գցելով, սպասում էի լավ խոսքերի, բայց իզուր. իմ սպասածին հակառակ՝ նա, չուխիցս[39] բռնելով, խիստ չարությամբ հայտարարեց.

– Չտեսնեմ այսուհետև հորդ հետևից ընկնես, թե չէ ականջներդ տեղից կպոկեմ…

Լսելով իմ խորթ մոր այդ նախազգուշացումը՝ ես առանց ձայն հանելու տրտմությամբ հեռացա ու արտասվելով մտա մեր տուն:

– Ի՞նչ է պատահել, Սևո՛ւկ ջան,– հարցրեց Աչանը՝ տեղից վեր կենալով ու մոտենալով ինձ, սակայն չստանալով իր հարցի պատասխանը՝ նա նույնպես սկսեց արտասվել՝ քաջ գիտենալով, որ իմ տրտմության միակ պատճառը մեր խորթ մոր վատ վերաբերմունքն էր:

Իհարկե, ես չուզեցի միանգամից նրան պատմել խորթ մորս ասածները և առանց խոսելու, խոնավացած աչքերով փռվեցի երեսնիվայր մինչև ուշ երեկո, մինչև եղբայրներիս վերադարձը: Աշխատանքից տուն վերադառնալով՝ Բադալն ինձ գտավ անխոս պառկած, մոտեցավ Աչանին ու հարցրեց.

– Ի՞նչ է պատահել Սևուկին, չլինի՞ թե հիվանդ է:

– Զգուշացրել է, որ հայրիկին չհանդիպի:

– Ո՞վ:

– Զոզանը:

– Ինքը՞ պատմեց,– հարցրեց Բադալը:

– Ո՛չ, հարևանները պատմեցին, թե ինչպես ականջները քաշելով՝ վախեցրել է խեղճ տղային:

– Ինչի՞ համար, ի՞նչ է արել նա:

– Իսկ մենք ի՞նչ ենք արել, որ ամեն օր հանդիպելիս անպատվում է աջուձախ,– պատասխանեց Աչանը:

– Ոչինչ, հայրիկի պատվի համար պետք է լռել,– պատասխանեց եղբայրս ու մոտեցավ ինձ՝ ստիպելով պառկած տեղիցս վեր կենալ:

---

[39] չուխա *(հնց.)* – 1.բրդյա նուրբ գործվածք՝ մահուդ 2.այդ կտորից կարված երկար վերարկու

Հաջորդ օրը Զոզանին չհանդիպելու նպատակով աղբյուր գնալու ճանապարհս փոխեցի, այնուամենայնիվ նրանից պրծնել հնարավոր չեղավ: Նա հետապնդում և հալածում էր ոչ միայն ինձ, այլև մեր ընտանիքի բոլոր անդամներին, անգամ Աննային, որը նրանից շատ հեռու էր և ոչ մի առնչություն չուներ նրա հետ:

Այդպիսով՝ իմ երազանքները նոր մայրիկի մասին ի չիք դարձան, և ես ախ էի քաշում, որ այդպիսին երբեք չպիտի ունենայի: Խորհելով մայրիկների մասին՝ ես հաճախակի հարցնում էի. էլի կա՞ այնպիսի մայր, ինչպիսին է Զոզանը:

Մի օր էլ, երբ ես ու Աչանը մենակ էինք մնացել, հարցրի.

– Մեր գյուղում ուրիշ խորթ մայր կա՞, թե՞ ոչ:

– Կա,– պատասխանեց նա:

– Ո՞վ է,– հետաքրքրությամբ հարցրի ես:

– Արբակի մայրը՝ Գյուլիզարը,– ասաց Աչանը և միաժամանակ զգուշացրեց ինձ, որ այդ մասին Արբակին ոչինչ չասեմ:

– Ինչո՞ւ,– հարցրի ես:

– Որովհետև այդ մասին Արբակն էլ չգիտի,– ասաց Աչանը ու շարունակեց,– Ախթամարը մեռավ, երբ Արբակն ընդամենը մեկ տարեկան էր, իսկ մեծ քույրը՝ երեք:

– Հետո՞,– հետաքրքրվեցի ես:

– Հետո Արբակի հայրն ամուսնացավ Գյուլիզարի հետ, իսկ վերջինը դարձավ տղայի ու աղջկա մայրը:

Լսելով Աչանի այդ կարճ պատմությունը՝ ես բարի նախանձից համարյա թե տրտմության մեջ ընկա. որպես մոտիկ ընկեր՝ գրեթե ամեն օր լինում էի Արբակենց տանը, խաղում էի նրա հետ, միասին ուտում, միասին քնում էինք այնպես, ինչպես մեկ մորից ծնված երկու հարազատ զավակներ: Ես իմ սեփական աչքերովս տեսնում ու զգում էի, թե ինչպես Գյուլիզարն անհուն սիրով գուրգուրում ու փայփայում էր մեզ երկուսիս, մանավանդ Արբակին՝ որպես իր հարազատ զավակի: Գյուղում չկար մեկը, որ չգովաբաներ Գյուլիզարին՝ որպես աշխատասեր, տնարար, առաջին հերթին, որպես հոգատար ու ազնիվ մոր: Վերջապես ո՞վ կարող էր կարծել, թե Արբակին ու Այծեմնիկին անհուն սիրող այդ հրաշալի կինը կարող է խորթ մայր լինել: Անցել էին տարիներ, բայց մեր տասը ընկերներից ոչ մեկը, այդ թվում Արբակն ու Այծեմնիկը չգիտեին, որ Գյուլիզարը խորթ մայր էր:

Շատ էր պատահել, երբ մենք երկու ընկերներով հանդից տուն էինք վերադառնում, դեռ գյուղից ոչ հեռու գտնվող աղբյուրին չհասած՝ ես փո-

խում էի ճանապարհս, միայն թե խորթ մորս չտեսնեի՝ հաստատ գիտենալով, որ նրան հանդիպելիս կրկին արտասվելով տուն պետք է մտնեմ: Ա՜խ, որքան հրճվանք էր պատճառում Գյուլիզարը, երբ դեռ գյուղ չմտած՝ դիմավորում էր իր Արբակին, գրկախառնվելով տուն տանում: Այդպես էր ամեն օր. երկու հակապատկերներց մեկը գրկախառնվելով էր ընդունում իր որդուն, իսկ երկրորդը՝ չարությամբ:

Առաջ ես խորթ մոր մասին գաղափար չունեի, սակայն երբ տեսա և ճաշակեցի այդ դառնությունը, նոր միայն հասկացա, որ մենք ընկել ենք ոչ թե Գյուլիզարի նման բարի ու ազնիվ կնոջ ձեռքը, այլ բնականից չար ծնված Զոզանի:

*
* *

Չնայած հայրս մեզնից չէր բաժանվել և տնից էլ ոչինչ չէր տարել, այնուամենայնիվ Զոզանի պայքարի արդյունքում աստիճանաբար մեզնից կտրվեց ու վերջապես դադարեց մեզ հետ ապրել: Իրագործելով իր չար դիտավորությունը՝ Զոզանը, այնուամենայնիվ, չկարողացավ կտրել այն սերտ կապը, որը գոյություն ուներ հորս ու մեր միջև: Հայրս բոլորովին ցույց չէր տալիս, որ բաժանված է զավակներից. տուն էր գալիս սովորականի պես, կարգադրություններ անում ու ղեկավարում եղբայրներիս այնպես, ինչպես մինչև ամուսնանալը: Տարբերությունը միայն նրանում էր, որ նա արդեն ոչ մի առնչություն չուներ մեզ հետ. ո՛չ առնում էր և ո՛չ էլ տալիս: Մեր խրճիթները շատ մոտ էին, և անկախ մեզնից, օրական տասն անգամ կարող էինք հանդիպել իրար: Եթե Զոզանը մեր տանեցիներից որևէ մեկին հանկարծակի հանդիպեր, ապա չտեսնելու տալով՝ անմիջապես հեռանում էր: Բայց ես հայրիկիցս կտրվել չէի կարող. նա առաջվա պես սիրում էր ինձ:

Խորթ մորս չհանդիպելու նպատակով շատ դեպքերում դիմում էի զանազան խորամանկությունների, միայն թե նրանց տուն չգնայի, բայց դա ոչ բոլոր դեպքերում էր ինձ հաջողվում:

Մի օր էլ, երբ աղբյուրից տուն էի վերադառնում, հանկարծ երկուսն էլ հայտնվեցին իմ դիմաց: Զոզանը, ըստ իր սովորության, երեսը շուռ տվեց, իսկ հայրս, ձեռքիցս բռնելով, համարյա թե զոռով տուն տարավ: Մտնելով նրանց փոքրիկ, բայց մաքուր խրճիթը՝ ես համարյա թե հարկադրաբար նստեցի հայրիկիս մոտ՝ աչքիս տակով դիտելով մեր երկուսի շուրջ պտտվող Զոզանին:

– Ինչո՞ւ հայրիկիդ տուն չես գալիս,– կեղծ ժպիտով հարցրեց խորթ մայրս:

– Ամեն օր էլ հայրիկիս տուն եմ գալիս,– ճարպկորեն պատասխանեցի ես՝ գլուխս ավելի կախ գցելով, միաժամանակ հասկացնելով, որ հորս տունը մեր տունն է, այլ ոչ թե այստեղ:

– Այդ ինչպե՞ս է պատահում, որ ամեն օր տուն ես գալիս, բայց մայրդ քեզ չի տեսնում,– հարցրեց հայրս:

– Մայրիկս մահացել է, ես ուրիշ մայր չունեմ,– բնազդաբար պատասխանեցի ես:

– Իսկ այժմ ո՞վ է քո մայրը,– հարցրեց Զոզանը և իր չար հայացքն ուղղեց դեպի ինձ:

– Այժմ իմ մայրիկն Աչանն է. ես ուրիշ մայր չունեմ,– կրկին պատասխանեցի ես:

– Այդ խոսքերը ո՞վ է քեզ սովորեցրել, արջի՛ քոթոթ,– զայրացած հարցրեց Զոզանը:

– Ինձ մարդ չի սովորեցրել, ես ինքս եմ տեսնում, թե ով է մայրս,– պատասխանեցի ես՝ միաժամանակ հայացքս ուղղելով դեպի դուռը՝ նպատակ ունենալով դուրս փախչել:

– Տեսա՞ր,– դիմելով հայրիկիս՝ ասաց Զոզանը,– սա էլ քո սիրած զավակն է, որին ծոցումդ դրած, փայփայելով ման ես գալիս, ինձ էլ մեղադրում ես, որ ես տեր չեմ լինում այդ ապերախտ զավակներիդ:

Ըստ երևույթին իմ ճիշտ պատասխանները Զոզանին դուրս էին բերել հավասարակշռությունից, ուստի սկսեց գոռգոռալ, անիծել ոչ միայն ինձ, այլև մեր հեռու ու մոտիկ բարեկամներին, այդ թվում նաև մեռածներին: Այնպես էր գոռգոռում, որ ինձ թվաց, թե կխելագարվեմ:

Այդ խոսակցությունից հետո հայրիկս նույնպես զայրացավ, բայց իրեն պահեց: Հանգստացնելով Զոզանին՝ նա, թեքվելով դեպի ինձ, ոչ սովորականի պես առաջարկեց:

– Այսուհետև ամեն օր կգաս մորդ մոտ և ինչ-որ կասի, կլսես նրան:

– Իմ մայրը Աչանն է, ես այստեղ չեմ գա,– համարյա թե կիսաձայն պատասխանեցի ես:

– Ինչպես թե չես գա,– զայրացած հարցրեց հայրս, ծնոտիցս բռնած՝ բարձրացրեց գլուխս՝ ուղիղ նայելով աչքերիս մեջ:

– Չեմ գա,– կրկին պատասխանեցի:

– Ինչո՞ւ:

– Վախենում եմ:

– Ումի՞ց:

– Նրանից:

– Ո՞վ է նա,– հարցրեց հայրս:

Բայց նրան պատասխանելու փոխարեն ես գերադասեցի լռել, քան թե ասել՝ մայր:

Նա կրկին նայեց աչքերիս ու մի պահ լռեց. ես նրա հայացքից հասկացա, որ նա իմ պատասխաններից խիստ ազդվեց, բայց այլևս չխոսեց: Իսկ Զոզանը ավելի չարացավ, ձայնը գցեց գլուխը, մոտեցավ ինձ ըստ երևույթին տանից դուրս վռնդելու նպատակով, բայց նկատելով հայրիկիս զայրացկոտ հայացքը՝ կանգ առավ ու շարունակեց իր գոռգոռոցը:

Ես արդեն նստած տեղիցս վեր էի կացել՝ սպասելով հարմար պահի տանից դուրս փախչելու համար: Մեր հարց ու պատասխանները որքան էլ տհաճ էին հայրիկիս համար, այնուամենայնիվ նա ինձ չկոպտեց, ընդհակառակը, վեր կենալով տեղից՝ մոտեցավ թարեքին՝ ըստ երևույթին քաղաքից գնված նոր զգեստները ինձ հանձնելու: Սակայն մինչ նա արկղից կհաներ ինձ հանձնելիք նվերները, ես մի ակնթարթում շրջվեցի դեպի դուռն ու գնդակի արագությամբ դուրս փախա:

Դուրս գալով Զոզանի խրճիթից՝ ես մեր տուն գնալու փոխարեն նույն արագությամբ փախա Աննայի մոտ՝ որպես հարազատի, որ պատմեմ պատահածի մասին:

Սկզբում թաքնվելու համար վազելով մտա Սուրբ ծառի փչակը՝ կարծելով, որ հայրս ինձ կհետապնդի, բայց երբ դա տեղի չունեցավ, դուրս եկա այնտեղից ու գնացի քույրիկիս տուն: Ճանապարհին մտածում էի իմ արարքի մասին. մի՞թե կարելի էր այդպիսի պատասխաններ տալ հայրիկիս հարցերին, չէ՞ որ Զոզանը իմ մայրն էր, անկախ նրանից, որ խորթ էր, ու ես զղջացի արածիս համար: Այդպիսի վարմունք չպետք է ցույց տայի հայրիկիս. չէ՞ որ ես անսահման սիրում էի նրան, իսկ ինքը՝ առավել: Նա լավ գիտեր Զոզանի չար վարմունքը և ատելությունը մեր տնեցիների նկատմամբ, դրա համար էլ ներում էր ինձ իմ համարձակ պատասխանների համար:

Աննայի հետ երեկոյան մտանք մեր տուն, երբ դաշտային աշխատանքներից վերադարձած եղբայրներս հենց նոր էին նստել թոնրին դրված քուրսու շուրջ և սպասում էին ընթրիքին: Տեսնելով մեզ՝ եղբայրներս աշխուժացան. չգիտեմ որտեղից էին իմացել Զոզանի տանից իմ փախչելու մասին:

– Այսօր ո՞ւր էիր գնացել, Սևո՛ւկ,– հարցրեց մեծ եղբայրս:

– Հայրիկն ինձ տարավ իրենց տուն:

– «Մայրիկդ» ինչպե՞ս ընդունեց քեզ:

– Ես նրանց տանից փախա:

– Ինչո՞ւ փախար, չէ՞ որ նա մեր մայրն է,– ասաց Բադալը՝ հեգնական ժպիտը երեսին:

– Մեկ էլ նրա անունը չտաս, թե չէ արյունս խփում է գլխիս,– զայրացած պատասխանեց Մարկոսը:

– Հայրիկի պատվի համար չպետք է սրել մեր հարաբերությունները Զոզանի հետ,– համոզում էր Բադալը:

– Ի՞նչ հարաբերություն ունենք, որ սրենք:

– Խուսափել նրան հանդիպելուց:

– Ուրեմն տանից դուրս չգանք, աշխատանքի չգնանք, որպեսզի նրա անեծքները չլսենք,– պատասխանեց Մարկոսը:

– Ինչ որ կասի, խուսափի՛ր պատասխանելուց,– ծիծաղելով ասաց Աչանը:

– Այդ դու կարող ես, հա՛րս, բայց ես՝ ո՛չ:

– Բոլորս էլ պետք է խուսափենք, որովհետև նա մեր մայրն է,– ասաց մեծ եղբայրս՝ զգուշացնելով, որ այսուհետև նրա մասին չխոսենք:

– Ո՛չ, պետք է խոսենք, պետք է պատասխանենք, որ նա հասկանա՝ մենք իր գերիները չենք, – զայրացած պատասխանեց Աննան:

– Այսօր Սևուկը պատասխանել է և մի լավ էլ գժվեցրել է նրան,– հայտարարեց Աչանը ու ժպտալով գրկեց ինձ ու պինդ-պինդ համբուրեց:

– Ո՞վ ասաց,– հարցրեց Բադալը՝ երեսը շրջելով դեպի ինձ:

– Մեր հարևան Ռեհանը լսել է նրանց խոսակցությունը և Զոզանի գոռգոռոցները,– պատասխանեց Աչանը:

– Ճիշտ է արել Սևուկը,– ասաց Աննան:

– Պատմի՛ր, ի՞նչ ես արել,– պահանջեց Բադալը՝ մոտենալով ինձ, ուղիղ նայելով աչքերիս:

Իհարկե, ես՝ որպես օրվա մեղավորը, ստիպված էի պատմել այն, ինչ տեղի էր ունեցել Զոզանի տանը հայրիկիս ներկայությամբ, որի մասին մինչև այդ լռել էի՝ կարծելով, որ բացի ինձնից ուրիշ ոչ ոք տեղեկություն չունի:

Իմ պատմությունը շատ զայրացրեց Բադալին, բայց ուրախություն պատճառեց մյուսներին, հատկապես Աչանին: Լսելով, որ ես հայրիկիս ներկայությամբ հայտարարել եմ, թե իմ մայրը Աչանն է, ուրիշ մայր չունեմ, նա ոչ միայն ուրախացավ, այլև մայրական սիրո զգացմունքով կրկին գրկեց ինձ ու պինդ-պինդ համբուրեց աչքերս: Աչանի գրկախառնությունն ու համբույրներն այնքան ջերմ էին ու անկեղծ, որ ես նույնպես իմ հերթին փաթաթվեցի նրա վզով ու համբուրեցի ուրախության արտասուքից թրջված նրա այտերը:

– Ճիշտ է արել Սևուկը,– կրկնեց Աննան, միաժամանակ ավելացրեց,– թող հայրիկն իմանա կնոջ արարմունքի մասին, թող իմանա, որ մենք էլ ինքնասիրություն ունենք:

Հետագա օրերին Զոզանի և իմ եղբայրների հարաբերություններն ավելի սրվեցին և փաստորեն տեղիք տվեցին անախորժ բանավեճերի: Բադալին, Աննային հայտնի էր, որ մեր խորթ մոր կռվի միակ նպատակն էր, որ առիթներ ստեղծի վատացնելու մեր և հայրիկիս միջև եղած լավ հարաբերությունները, որ դեռ շարունակվում էին նրանց ամուսնությունից հետո էլ:

Չնայած Զոզանի սարսափելի, ոչ մարդկային վերաբերմունքին մեր նկատմամբ, այնուամենայնիվ մեր տնեցիներից ոչ մեկը չհանդգնեց թեկուզ մի անգամ բողոքել հայրիկիս կնոջ կողմից մեզ հասցված վիրավորանքների համար:

Իմանալով Զոզանի չար և ոչ մարդկային վերաբերմունքը՝ հայրս ըստ երևույթին ի վիճակի չէր ստիպելու կնոջը փոխել իր վերաբերմունքը մեր նկատմամբ: Այսպիսով՝ խորթ մայրս, օգտագործելով ամուսնու լավ վերաբերմունքն իր նկատմամբ, էլ ավելի ուժեղացրեց վաղուց սկսած պայքարը՝ նպատակ ունենալով շուտափույթ կերպով կտրել ամուսնու հայրական կապը հարազատ զավակներից:

Այսպիսով իմ խորթ մայրը, չնայած բաժանեց մեզնից մեր սիրած հայրիկին, բայց և այնպես չկարողացավ կտրել այն սերն ու ամուր կապը, որը շարունակվեց մինչև նրա ողբերգական մահը:

ԱՐՈՐ

Բուրավետ գարուն էր. լեռնաշխարհի բնության հմայիչ տեսարանները գերում էին ամենքին: Այդ օրերին ձնհալից սևացած հանդերը մագնիսական ուժով իրենց էին ձգում հայ աշխատավոր գյուղացուն: Տղամարդիկ, պատրաստելով իրենց երկրագործական գործիքները, դուրս էին եկել դաշտերը՝ վարուցանք անելու:

Գյուղի հովիվները իրենց հոտերով վաղուց բարձրացել էին ձյունապատ սարալանջերն ու ձորերը՝ հետները տանելով ձմեռվա ընթացքում թմրած գամփռ շներին:

Երիտասարդ կանայք ու աղջիկները, քաղելով սարերի անուշահամ բանջարները, վաղ գարնանից սկսած հաջորդ ձմեռվա պաշար էին պատրաստում: Եռուզեռի մեջ էինք նաև մենք՝ պատանիներս. տարվելով բնության հրաշալի տեսարաններով՝ թափառում էինք սարերում ու ձորերում, միայն երեկոյան ուշ ժամերին սևացած դեմքերով, ծաղկեփնջեր ձեռքներիս, վերադառնում էինք տուն:

Գարնանային աշխատանքների եռուն շրջանն էր. աշխատավոր ժողովուրդը գտնվում էր դաշտերում, ոմանք վարում էին սևահող արտերը, ոմանք էլ՝ ցանում, իսկ շատերն էլ վերականգնում էին հեղեղված մայր առուները հենց նոր ցանված արտերին ջուր տալու համար:

Գյուղի մեջ մեր ընտանիքը չքավորների դասին էր պատկանում, ընդամենը չորս հողակտոր ունեինք, սակայն դրանք փոքր էին ու քարքարոտ, իսկ որոշ մասն էլ՝ անջրդի:

Եղած հողակտորները դեմային տարիներին բոլորովին բերք չէին տալիս, այնպես որ չորս հողակտորներն էլ մի բանի նման չէին: Գյուղի լավ ու արգավանդ հողերը ժամանակին զավթել էին մի բուռ հարուստներ, իսկ հեռավոր անբերրի հողակտորները մնացել էին աղքատներին, որոնք, տարին տասներկու ամիս չարչարվելով դրանց վրա, ծայրը ծայրին չէին հասցնում: Չունենալով ապրուստի այլ միջոցներ՝ նրանք ստիպված էին, դեռ ձմեռը դուրս չեկած, մեկ-երկու ջվալ գարի կամ կորեկ պարտքով վերցնել հարուստից՝ հետագայում կրկնակի չափով վերադարձնելու պայմանով:

Այդ կարգի գյուղացիների շարքին էր դասվում նաև մեր ընտանիքը: Վերահաս գարնան առաջին իսկ օրերին իմ եղբայրները նույնպես պատրաստվում էին վարուցանք անելու, սակայն սեփական գութան, ինչպես և անհրաժեշտ թվով քաշող անասուններ չունենալու պատճառով բավական ժամանակ անգործության էին մատնվել: Մենք ունեինք ընդամենը երկու լծկան անասուն: Նրանցից մեկը, որին Բալաք էին անվանում, պառավել էր ու վատ էր քաշում, սակայն նրան այնքան լավ էինք խնամել, որ բավականին կազդուրվել էր և ուժեղացել, ուստի մենք բոլորս հույս ունեինք, որ նա կաշխատեր նաև այդ տարում: Երկրորդ եզը՝ Սևուկը, դեռ ջահել էր. նա, շատ ուժեղ լինելով, մշտապես նեղում էր խեղճ Բալաքին. այդ իսկ պատճառով եղբայրս երկուսին լծելիս միշտ ուժը գցում էր Սևուկի վրա՝ թեթևացնելով Բալաքի վիճակը:

Մեր գյուղի հայ բնակիչների մի զգալի մասը սեփական ուժերով վարուցանք անել չէր կարող քաշող անասունների պակասության պատճառով. դրա համար նրանք տարվա սկզբից միանում և միացյալ ուժերով վարում էին իրենց հողամասերը: Այդպես էին անում նաև իմ եղբայրները, սակայն վերջին տարին, Բալաքի ուժերը թուլանալու հետ, նրանք անհարմար էին զգում միանալու վերաբերյալ հարևաններից որևէ մեկին առաջարկություն անել. ահա թե ինչու բավականին հետ էր ընկել մեր հողերի վարուցանքը:

Օրերն անցնում էին. վերջապես մեզ բախտ վիճակվեց միանալ Մովսեսի, Իսրայելի, իսկ դաշտ դուրս գալու վերջին օրը նաև Շուշանիկի հայր Դավիթի հետ, որի երկու գոմեշները կարող էին փոխարինել ավելի քան տասը լծկան անասունների, մանավանդ Մարատը, որը հայտնի էր իր սարսափելի ուժով:

Ընկերության հետ միացողներից Մովսեսը շատ աղքատ էր, բայց իր աշխատասիրությամբ, ազնվությամբ, բացսրտությամբ տասն անգամ ավելի լավն էր, քան գյուղի հարուստներից որևէ մեկը: Հաշվի առնելով Մովսեսի այդ առավելությունները՝ ընկերության երեք անդամները մեծ ուրախությամբ համաձայնվեցին ընկերանալ նրա հետ: Իհարկե, գործի մեջ ով լավ է աշխատում, նա միշտ էլ վայելում է իր շրջապատի մարդկանց սերն ու հարգանքը:

Պատրաստելով չորս լծից բաղկացած մեր գութանը՝ գարնանային մի գեղեցիկ առավոտ, երբ դեռ արևը չէր ծագել, բոլորս միասին գնացինք դաշտ՝ առաջինը հերկելու Մովսեսի փոքրիկ հողամասը, որը բառոժ[40] լինելով, վաղուց էր չորացել: Նրան հաջորդեցին մեր և Իսրայելի հողամասերը, իսկ հինգերորդ օրը գնացինք Շուշանիկի հորը՝ Դավիթին պատկանող հողամասը, որի տարածությունն ավելի շատ էր, քան թե մյուս երեքինը:

Մեր գութանավորների մեջ ամենափոքրը ես էի՝ ընդամենը տասնմեկ տարեկան, չնայած անցյալներում նույնպես հորիկ[41] էի քշել, բայց վերջին տարում ինձ համարում էի իսկական հորիկ քշող, այսինքն՝ աշխատող տղամարդ:

Ընկերության բոլոր անդամներն էլ սիրում էին ինձ, ինչպես իրենց հարազատ զավակին, իսկ Դավիթը՝ առավել և ամեն քայլափոխի օգնում էր, որ շուտ ընտելանամ գութանավարի աշխատանքներին:

Գյուղատնտեսական աշխատանքների առաջին իսկ օրերին աշխատում էի կրկնակի եռանդով՝ ձգտելով նմանվել Բադալին ու Մովսեսին. չէ՞ որ նրանք սիրված ու հարգված իսկական տղամարդիկ էին, ուստի ես նույնպես ուզում էի նրանց նմանվել:

Ես ոչ միայն լուծ էի քաշում, այլև հանգստի ժամերին, կուժը թևիս տակ դրած, վազում էի՝ աղբյուրից սառը ջուր բերելու, անասուններին կեր տալու, մոտակա անտառներից ճիպոտներ բերելու և այլ հանձնարարություններ ստանում, որոնք կատարում էի արագ ու ամենայն

---

[40] բառոժ (*բրբ.*) – արևկող
[41] հորիկ *(ժող.)* – առջևից գնացող լուծը

ճշտությամբ: Իհարկե, գութանավարի առաջին երկու օրերին դժվարանում էի ուղիղ նստել լծկանի վրա, համարյա թե դողդողալով մի կերպ յոլա էի տանում, իսկ հետագա օրերին, ընտելանալով անասուններին, շատ շուտով դարձա իսկական հորիկ քշող, որի համար հաճախ գովասանքի էի արժանանում մաճկալ Դավիթի կողմից:

Ընդհանրապես լինում էին դեպքեր, երբ հորիկ քշող տղաների դանդաղկոտության կամ անզգուշության հետևանքով գութանը ժամերով կանգ էր առնում, անգամ ակոսից դուրս գալիս՝ դանդաղեցնելով հերկի աշխատանքը: Ես շատ ուրախ էի, որ իմ պատճառով այդպիսի դեպքեր համարյա թե տեղի չունեցան: Իհարկե, դրա համար ես առաջին հերթին պարտական էի Բադալին և Մովսեսին, որոնք ինձ սկզբից սովորեցրին, թե ինչպես կարելի է վարվել անասունների հետ: Նրանք միաժամանակ շատ հոգատար էին իմ նկատմամբ, հատկապես գիշերվա վարի ժամանակ: Ստիպում էին հանգստանալ, քնել թեկուզ մի քանի րոպե, այն էլ հենց նոր բացված լայն ակոսի կամ ցերեկվա գութանի հերկած խոպանի մեջ:

Զգալով իմ նկատմամբ նրանց այդ հոգատարությունը՝ ես իմ հերթին կրկնապատկում էի ուժերս՝ էլ ավելի լավ աշխատելու: Չնայած ընդամենը մեկ-երկու շաբաթ էի աշխատում՝ որպես հորիկ քշող, սակայն այդ էլ բավական էր, որ ես կարողանայի ինձ դրսևորել որպես իսկական աշխատող: Գութանավարի առաջին մի քանի օրը հպարտությամբ կատարում էի իմ պարտականությունները Դավիթի և Մովսեսի գովասանքներին արժանանալու համար: Այնուամենայնիվ միայն հորիկ քշելը դեռ բավական չէր. ես պետք է կարողանայի նաև անասուններին լծել, սամի թելել, կտրվելու դեպքում կրկին վերանորոգել ու նորից կապել: Ես պետք է իմանայի, թե ինչպես կարելի է վարվել լծկան անասունների հետ, ճիշտ և համարձակորեն երգել: Գութանավարների մեջ ամենալավ ձայն ունեցողը ես էի, բայց ճիշտ երգել չէի կարող, ուստի մի քանի օրվա աշխատանքների ընթացքում, հետևելով Մովսեսի և Բադալի օրինակին, շատ շուտով բերանացի արի այն, ինչ որ երգում էին նրանք: Վարի սկզբնական շրջանում ես մշտապես լարված էի, լծից չընկնելու համար նստում էի Սևուկի մեջքին՝ ոտքս դեմ անելով նրա կրծքին, իսկ աջ ձեռքում բռնած ճիպոտով անընդհատ հարվածում թուլակազմ խեղճ Բալաքին: Տեսնելով անասունների դանդաղկոտությունը՝ ես շարունակ զայրանում էի, բայց կրկին հարվածել անասուններին չէի ցանկանում, քանի որ Բալաքին ծեծել կամ չծեծելը ոչ մի նշանակություն չուներ:

Իմ կարճ աշխատանքի ընթացքում լրիվ համոզվեցի, որ միայն ճիպոտների հարվածով անասուններին աշխատեցնել հնարավոր չէ, ընդհակառակը, ճիպոտի հարվածները զայրացնում էին նրանց, իսկ շատ դեպքերում էլ անասունը, կորցնելով իր հավասարակշռությունը, ջղածգորեն դուրս էր գալիս իր ուղղությունից: Հետևանքը լինում էր այն, որ գութանը, դուրս գալով ակոսից, դանդաղեցնում էր վարի աշխատանքն ու որակը: Ուսումնասիրելով անասունների բնավորությունը՝ Բադալի խորհրդով ես շուտով փոխեցի իմ վարվելակերպը ու սկսեցի գուրգուրանքով վարվել նրանց հետ՝ համոզված լինելով, որ նրանք նույնպես կփոխվեն և ինձ ամոթով չեն թողնի մյուսների առաջ:

Մի քանի օրվա ընթացքում այնքան էի երգել, որ ձայնս համարյա թե կտրվել էր, իսկ կոկորդս՝ չորացել, այդ պատճառով էլ տղաները այլևս իմ ձայնը չէին լսում:

– Երգի՛ր, Սևու՛կ ջան, եզները չեն քաշում,– երգելով կանչում էր ինձ ամոլ քշող Մովսեսը:

– Ձայնս կտրվել է, չեմ կարող երգել, իսկ ճիպոտս կոտրվել է, ու անտեր Բալաքն էլ չի քաշում,– լինում էր իմ պատասխանը:

– Առանց երգի ճիպոտ չի մնա, բոլորն էլ կկոտրես,– համոզում էր ինձ Մովսեսը:

Ընկերության գութանն արդեն վերջացրել էր մեր ու Մովսեսի չորս արտերի հերկը: Տղաների մի մասը մնաց, որ վարած արտը ցանեն ու փոցխեն, իսկ մենք գնացինք Շուշանիկի հոր մեծ արտը հերկելու:

Չնայած այդ օրը ես տկար էի, այնուամենայնիվ դեռ վաղ առավոտվանից սկսել էի հորովել երգել, ավելի բարձր ձայնով, քան թե անցած օրերին:

Ո՛ւժ տուր, ո՛ւժ առ, արտը վարենք, Բալա՛ք ջան:
Խոփն է մտել կուրծքը հողի,
Սևին տվող հողը մեր, հորովե՜լ, հո՜, եզո՛ ջան:
Դե քաշի՛ր, ուշ է արդեն, ուժիդ մատաղ, Սևո՜ւկ ջան:

Արևն առել սարերն ի վեր, հովն է փչում
Սև սարից, հորովե՜լ, հո՜, եզո՛ ջան:

Օրն է եկել, ճաշ է դառել, մարա՛լ ջան:
Ու՛ժ տուր, քաշի՛ր, մեջքիդ դուրբան, Սևու՛կ ջան:
Վերից արև դեմքս խանձեց, եզո՛ ջան,
Իմ քրտինքով հողը թրջեց, մարա՛լ ջան:
Դե շու՛տ քաշիր, արտը վարենք, ախպե՛ր ջան:

– Երգի՛ր, երգիդ ղուրբան, Սևո՛ւկ ջան, քանի հով է, արտը կիսենք,– գովում էր ինձ գութանի մաճը բռնող Դավիթը: Նրա խոսքերից ես ավելի էի ոգևորվում՝ բարձրացնելով ձայնս.

Արևն առել սարնիվեր, հովն է փչում Ծաղկասարից, եզո՛ ջան,
Դե՜, շուտ քաշի՛ր, արտը վարենք, մարա՛լ ջան:

Արևը հորիզոնից զգալիորեն բարձրացել էր. բոլորս նայում էինք մեկ սև քարին, մեկ էլ գյուղի ճամփին: Սև քարի լանջի հովը չքացել էր. դա նշանակում էր, որ օրն արդեն կես է դառել: Բոլորս սպասում էինք հաց բերողներին, և ահա այդ պահին էլ երևացին արտերի միջով մեզ մոտեցող Դավիթի կինը՝ իր երկու աղջիկներով՝ Մսրեն և Շուշանիկը, որոնք գութանավարներին ճաշ էին բերում: Տեսնելով նրանց՝ գութանավարները սկսեցին ավելի աշխուժանալ, իսկ ես իմ կաշվից դուրս էի գալիս՝ բարձր ձայնով երգելով հորովել.

Օրն է եկել, ճաշ է դառել, մարա՛լ ջան:
Ո՛ւժ տուր, քաշի՛ր, մեջքիդ ղուրբան, Սևո՛ւկ ջան:

Դավիթի կինն ու աղջիկները հասան արտի կենտրոն, մեջքներից վայր դրին բերած ուտելիքն ու նստեցին, մինչև մեր գութանը կատարեց իր պտույտն ու եկավ կանգնեց նրանց մոտ:

Անասուններն արձակեցինք. Մովսեսն ու Իսրայելը նրանց տարան կեր տալու և նորից վերադարձան գութանի մոտ:

– Արի՛ տեսնեմ, Սևո՛ւկ ջան,– ասաց Շուշանիկի մայր Մարիամը,– մեծացել ես, մեծ տղա ես դարձել,– շարունակեց նա,– քո խորթ մոր աչքերը քոռանան, բա չի կարող վառված երեսներիդ քիչ ճրագու քսել, թե ձեռքը կկոտրվի:

– Աչանը քսել է, մորաքո՛ւյր,– պատասխանեցի ես:

– Բա քո խորթ մայրը ի՞նչ է անում, որ Աչանն է քսում,– ձեռքիցս բռնելով՝ քաշեց իր կողմը:

Գութանավարները նստեցին ճաշելու, իսկ Շուշանիկը, իմ ձեռքը բռնելով, տարավ հերկած արտից գետնապտուղներ հավաքելու:

– Կոշտերի մեջ մի՛ գնա, ոտքերդ կցավեն,– զգուշացրի ես:

– Չեն ցավի, ուզում եմ գետնախնձորներ հավաքել,– պատասխանեց Շուշանիկը:

– Ես քեզ համար վաղուց եմ հավաքել,– ասացի ես ու ձեռքից բռնած՝ տարա հերկած արտի մեջ, կոշտերի տակից հանեցի գետնապտուղով լի տոպրակը և տվեցի նրան: Վերցնելով դրանք՝ Շուշանիկը ուրախ-ուրախ ուզում էր հետ գնալ, բայց ես չթողի:

– Կա՛ց, էլի հավաքենք,– առաջարկեցի ես:

– Չէ՛, դու հանգստացի՛ր, ես կհավաքեմ:

– Ի՞նչ եմ արել, որ հանգստանամ,– պարծենկոտությամբ պատասխանեցի նրան:

– Մայրիկս ասաց, որ քո ձեռքերն ու ոտքերը ճաքճքվել են, իսկ մայրիկդ ճրագու չի քսում:

– Աչանը ամեն օր քսում է:

– Ինչո՞ւ մայրդ չի քսում,– հարցրեց Շուշանիկը:

– Ես մայր չունեմ, մայրս մահացել է,– լսելով իմ պատասխանը՝ Շուշանիկը այլայլվեց ու արտասուքն աչքերին՝ հեռացավ:

Գութանավարները ճաշելուց հետո պառկեցին հերկած սև ու փափուկ հողի մեջ՝ քնելու, իսկ քաշող անասուններն իրենց առաջ լցված խոտը վերջացնելուց հետո նույնպես նստեցին ու պառկած տեղում սկսեցին որոճալ:

Մարիամն ու իր աղջիկները գնացին, իսկ մեր գութանը շարունակեց իր վարը՝ ճեղքելով արևից ճաքճքված հողի կուրծքը՝ իր հետևից թողնելով թարմ հողաթմբերի մեծ շերտերը:

Հաջորդ օրը՝ առավոտյան շուտ, երբ սկսել էինք վարել Վարդաձորի մեր սև արտը, հանկարծ գլխներիս երեք քուրդ ձիավոր կանգնեցին:

– Օմար աղայի կարգադրությամբ ձեր գոմեշները պետք է տաք՝ նրա արտը վարելու,– առաջարկեց ձիավորներից մեկը:

– Ուզո՞ւմ եք՝ ամբողջ գութանով գանք,– պատասխանեց Դավիթը:

– Ո՛չ, միայն ամոլի գոմեշները, մնացածը ձեզ լինի:

– Ո՛չ, գոմեշները չենք կարող տալ:

– Չեք տա, զոռով կտանենք,– պատասխանեց քուրդը:

– Բա որ տանեք, մեր արտերն ինչո՞վ վարենք:

– Դա մեր գործը չէ, շո՛ւտ արեք, Օմար աղան մեզ է սպասում,– շարունակեց ձիավորը:

– Հայտնեցե՛ք Օմար աղային, որ վաղը գութանով կգանք ձեր արտը վարելու, իսկ այսօր մեզ հանգի՛ստ թողեք,– զայրացած ասաց Մովսեսը:

– Ո՛չ, հենց այսօր, այս րոպեին,– ասաց քուրդը՝ իջնելով իր ձիուց:

Մովսեսն իր հերթին ամոլից իջավ, խարազանը ձեռքին մոտեցավ ձիուց իջնող քրդին, բռնեց նրա ձիու սանձից ու ասաց.

– Գնա՛, թե կարող ես Մարատին արձակել լծից, ուր ուզում ես, տա՛ր:

Ձիավորը մոտեցավ Մարատին, ձեռքը տարավ, որ արձակի սամաթելը, բայց հենց այդ պահին էլ աժդահա անասունն իր կեռ կոտոշը սեղմեց քրդի կրծքին ու քիչ մնաց՝ նրան ջարդուփշուր աներ: Ձիավորը հետ քաշվեց ու նորից հրամայեց արձակել, բայց այս անգամ Մովսեսն ու Բադալը զայրացան, և եթե Դավիթը չլիներ, ապա ձիավորները մի լավ ջարդ կուտեին: Տեսնելով, որ գութանավարները հեշտությամբ չեն զիջում, Օմար աղայի հլու հպատակները հայհոյանքով թողին մեզ ու հեռացան: Իհարկե, հարուստ քուրդը՝ Օմար աղան, իր հողերը վարելու համար չէր, որ մարդկանց էր ուղարկել մեզ մոտ. նրա վարուցանքը վաղուց արվել էր, այն էլ չքավոր գյուղացիների ուժերով: Այդ օրը նրա նպատակն էր խանգարել հայ գյուղացիներին՝ առանձնապես Դավիթին մեր վարուցանքը խափանելու համար: Այսպես էին վարվում քուրդ աղաները աղքատ հայ գյուղացիների նկատմամբ:

Քուրդ ձիավորների գնալուց հետո այդ և հետագա մի քանի գիշերներին մենք դաշտից տուն չգնացինք, վարում էինք գիշեր ու ցերեկ, միայն թե մեկ օր շուտ սերմը հողին հանձնեինք: Վերջապես հերկվեց Դավիթի վերջին հողակտորը, ու մենք օրը ցերեկով վերադարձանք տուն՝ մեզ հետ բերելով գութանի մաշված պողպատի մեծ խոփը:

ՀՆՁՎՈՐ

Գեղեցիկ էր բնությունը Ծաղկասարի ստորոտում: Լեռնային սառնորակ աղբյուրներից հոսող ջրերը, դանդաղորեն ցրվելով, տարածվում էին ամբողջ խոտհարքով մեկ՝ հագեցնելով մայր հողից սնունդ առած բազմատեսակ հոտավետ բույսերի ծարավը:

Մեր խոտհարքը այնքան հարուստ էր խիտ ու փարթամ բուսականությամբ, որ միջով անցնել համարյա թե չէր լինում: Դեռ Գևորգ պապի կենդանության օրոք մեզ պատկանող խոտհարքները լրիվ մաքրված էին քարերից այնպես, որ օրերով փնտրեին թեկուզ ընկույզի չափ քարի կտոր, չէին գտնի:

Ծանոթ լինելով տեղանքին՝ հնձվորներն առանց կասկածի, սուր գերանդիները ձեռքներին, իրար հետևից շարված, հնձելով իջնում էին ներքև, որտեղ գտնվում էր մարմարի պես սպիտակ մի քարաժայռ, որի ճեղքից կլկլալով դուրս էր ցայտում սառնորակ Մեղրաղբյուրը: Արձանի նման դեպի վեր խոյացած այդ քարաժայռի չորս կողմը զարդարված էր տարբեր տեսակի ու գույնի բնական ծաղիկներով, որի հոտավետ բուր-

մունքը շնչելուց մարդ արարածը չէր կշտանում: Այդ տարի՝ խոտհնձի ժամանակ, Մարկոսն ու Վարդանը մեր անասունները հանձնել էին գյուղի հովիվներին, իսկ իրենք եկել էին՝ մեծ եղբորը օգնելու: Ամառվա առաջին ամսվա կիզիչ արևը վառում էր ամենքին, և ահա այդ օրերին մենք չորս եղբայրներով, համարյա թե առանց հանգիստ առնելու, հնձում էինք Ծաղկասարի խոտհարքը՝ կուտակելով մեր անասունների համար ձմեռվա կերի հարուստ պաշար: Չնայած ես վաղուց էի ընտելացել ֆիզիկական աշխատանքներին, սակայն խոտհունձն իմ ուժերից վեր լինելու պատճառով եղբայրներս թույլ չէին տալիս գերանդին ձեռքս առնելու, այնուամենայնիվ ես պարապ մնալ չէի կարող. օգնում էի նրանց՝ հնձած խոտերը հավաքելու, խորոմներ[42] պատրաստելու, օրվա հաց ու ջուրը բերելու և վայրի պտուղներ հավաքելու գործում:

Սակայն միայն խոտ հավաքելով չէի բավարարվում. եղբայրներիս հանգստի պահերին վերցնում էի որևէ մեկի գերանդին ու նրանցից թաքուն սկսում էի հնձել այնքան ժամանակ, քանի դեռ թևերս չէին հոգնել:

Որքան դժվար էր խոտհնձի աշխատանքը, այնքան էլ հաճելի էր պառկել երեկվա հնձած ծաղկախառն անուշահոտ խոտերի մեջ ու մուշմուշ քնել: Հոգնածությունից քնում էի շատ երկար, և եթե եղբայրներիցս որևէ մեկը չարթնացներ, ապա ամբողջ օրն էլ այդպես քնած կմնայի: Վերջապես հնձվորներից ո՞վ չէր քնի այդ հրաշալի բնության մաքուր օդում, եթե չլիներ վաղվա մեծ կարիքը: Եղբայրներս քիչ էին հանգստանում, քիչ էլ քնում. նրանք շարունակում էին աշխատել ու անընդհատ աշխատել, միայն թե մեկ օր շուտ ավարտեին խոտհունձը:

Համբերություն չունեի նաև ես՝ տեսնելով եղբայրներիս լարված աշխատանքը. բարի նախանձով էլ ձգտում էի, որքան հնարավոր էր, շատ աշխատել, իսկ որոշ դեպքերում էլ նրանցից թաքուն հենց նոր քաղած խոտերը, դեռ չչորացած, խորոմելով դիզում էի իրար վրա:

Իմ եղբայրները երեքն էլ աշխատասեր էին. երբեք գործը մեկը մյուսի վրա չէին գցում, ուստի ինչպես գարնանային վարուցանքը, այնպես էլ հունձը կատարվում էր ժամանակից շուտ և անկորուստ: Չորրորդ օրվա վերջում մեր խոտհարքի համարյա թե կեսն արդեն հնձվել էր, բայց և այնպես գիշերները տուն չէին գնում ու շարունակում էին իրենց աշխատանքը:

Հունիս ամսվա ամենաերկար օրերից մեկը կես էր դարձել. արդեն ճաշի ժամն էր: Մեծ եղբայրս, դադարեցնելով աշխատանքը, իր գերան-

[42] խորոմ – հնձած խոտի փոքրիկ դեզ

դին վայր դրեց և կարգադրեց բոլորին գնալ Մեղրաղբյուրի մոտ՝ հանգստանալու, իսկ ինքը, վերցնելով մածունից դատարկված կճուճը, բարձրացավ քարաժայռի հակառակ երեսը, որտեղ վայրի մեղրաճանճեր կային: Բադալը գիտեր, թե ինչպես կարելի է վարվել մեղրաճանճերի հետ. նա իր դեմքը ծածկեց մետաքսյա թանձր փուշիով, ձեռնոցներ հագնելուց հետո զգուշորեն մոտեցավ նրանց բներին, իսկ մենք երեք եղբայրներով հավաքվեցինք աղբյուրի մոտ, որի շուրջ նախօրոք կուտակել էի երկու օր առաջ հնձած խոտի խորոմները:

Օ՜, որքա՜ն հաճելի էր ֆիզիկական ծանր աշխատանքից հետո փռվել թոռոմած ծաղկախառն խոտերի մեջ՝ այն էլ սառնորակ աղբյուրի կողքին, ու հանգստանալ:

Մարկոսն ու Վարդանը այնքան էին հոգնել, որ նրանց պառկելն ու քնելը մեկ եղավ, սակայն ուշ էր արդեն, դեռ կես ժամ չէր անցել, երբ Բադալը վայր իջավ քարաժայռից՝ հետն էլ բերելով անուշահամ վայրի մեղրով լի կճուճը:

– Վե՛ր կացեք,– համարյա թե քաշքշելով՝ արթնացրեց քնածներին:

Մինչ Մարկոսն ու Վարդանը սառը ջրով կլվացվեին, Բադալը կճուճի մեղրը դատարկեց կավե մեծ քասայի մեջ ու հրավիրեց մեզ՝ համտեսելու: Ամառվա ամենաերկար օրվա լարված աշխատանքից հետո մենք՝ չորս եղբայրներ, աղբյուրի ակունքի մոտ՝ փափուկ խոտերի վրա նստած, մեծ ախորժակով կերանք Բադալի բերած մեղրն ու պատրաստվում էինք գերանդիների բերանները ծեծելու, հենց այդ պահին էլ քարաժայռի հետևից դուրս եկան երեք զինված թուրք ոստիկաններ ու միանգամից շրջապատեցին մեզ:

– Տեղից չշարժվե՛ք,– ասաց ոտքից կաղ ոստիկանը ու անմիջապես սկսեց քրքրել խոտի խորոմների վրա թափված իրերը, հացի մեծ խուրջինը, անգամ ստուգեցին կիսատված մեղրի կճուճը:

– Ո՞ւմ խոտհարքն եք հնձում,– հարցրեց երկրորդ ոստիկանը՝ աստիճանաբար մոտենալով աղբյուրին, որտեղ դեռ նստած էր Բադալը:

– Մերն է, էֆենդի՛ ոստիկան,– պատասխանեց իմ մեծ եղբայրը՝ գերանդին բռնած նստած տեղից վեր կենալով:

– Անցած տարի ո՞վ է հնձել այս ճահճոտ խոտերը,– հարցրեց ոստիկանը՝ ցույց տալով երկու հարևանների խոտհարքների սահմանագլխին եղած անտառի պես խիտ մոլախոտերը, որ երբեք չէին հնձվել:

– Այդ մոլախոտերը երկու հարևանների խոտհարքների միջև եղած սահմանն է. այն ոչ ոք չի հնձում,– պատասխանեց Բադալը:

Կանգնած երկրորդ թուրքը, որը խոսակցությանը չէր մասնակցում, հետաքրքրությամբ նայում էր ձեռքիս դանակին, որով քիչ առաջ ղամի-

շից խողովակ էի պատրաստում աղբյուրից ջուր խմելու համար: Նա մոտեցավ ինձ, դանակը ձեռքիցս առնելով՝ սկսեց շուռ ու մուռ տալ ու հետաքրքրությամբ նայելուց հետո հարցրեց.

– Այս ո՞ւմ դանակն է:

– Իմն է, – պատասխանեցի ես:

– Ո՞վ է քեզ տվել, – զայրացկոտ կերպով հարցրեց կաղ ոստիկանը:

– Իմ հայրը քաղաք գնալու ժամանակ Արջածորի քարափներն անցնող ճանապարհին է գտել:

– Ո՞վ է քո հայրը:

Ես պատասխանեցի, որ իմ հայրը աշխատում է Շամանիս շրջկենտրոնում՝ որպես թարգմանիչ:

– Հա, ճանաչում եմ հայրիկիդ. նա լավ մարդ է, բայց ափսոս, որ հայ է,– հայտարարեց թուրք ոստիկանը՝ դանակս դնելով իր գրպանն ու շուռ գալով դեպի աղբյուրը:

Ես հետաքրքրությամբ հետևում էի նրա շարժումներին: Այն ժամանակ, երբ նա կռացել էր՝ աղբյուրից ջուր խմելու, հանկարծ նկատեցի նրա ծոծրակի վրա երկու մեծ սպիներ. ըստ երևույթին ջարդվածքի հետքեր էին, որ դեռ լրիվ չէին ապաքինվել: Ապա ոստիկանը մոտեցավ կաղ ընկերոջը՝ ցույց տալով նրան վերցրած դանակը, ու նրա ականջին ինչ-որ բան փսփսաց, հետո նորից շրջվեց իմ կողմ: Հետաքրքրությամբ դիտելով՝ նրանց երկուսին էլ ճանաչեցի. նրանք Շատախի հայ գյուղացիների ապրանքը հափշտակողներն էին, որոնք մեկ տարի առաջ ջրաղացի անտառում ինձ և իմ ընկերներին ծեծեցին, մեր գյուղի դաշտերից վերադարձող մարդկանց էլ խուզարկեցին:

Թուրք ոստիկանները մեր օրվա երկրորդ կեսի ուտելիքները համարյա թե ուժով վերցրին, թփուտների շրջապատը կրկին զննելուց հետո ճանապարհվեցին ըստ երևույթին դեպի Արջածոր, որտեղ մեկ տարի առաջ իրենց հանցավոր արարքների համար պատժվել էին շատախցիների կողմից:

ԱՄԱՌԱՆՈՑՈՒՄ

Վերահաս շոգերի պատճառով ամենքս եռուզեռի մեջ՝ պատրաստվում էինք Ծաղկասարի զովաշունչ ամառանոց մեկնելու:

Ամառանոցը գտնվում էր Ծաղկասարի և Գոլանասարի միջև ընկած մի գեղեցիկ ու կանաչ հարթավայրում: Վերջինս երեք կողմից շրջա-

պատված էր կողք կողքի կանգնած բարձր, բայց միանման մի շարք բլուրներով, որոնք ցուրտ եղանակներին բնակիչներին պաշտպանում էին հյուսիսից փչող քամիներից: Բաց էր ամառանոցի միայն մի կողմը, որտեղից պարզ օրերին հազիվ նշմարվում էին Վասպուրականի լեռնաշխարհի երկու բարձր սարերի ձյունածածկ կատարները:

Մեր գյուղի հայ բնակիչների հոտը երկու օր առաջ ավագ հովիվների ուղեկցությամբ բարձրացել էր ամառանոցի արոտավայրերը, որից հետո երիտասարդ տղամարդիկ ու կանայք իրենց երեխաներով, անասունները բարձած, շարժվում էին դեպի նշանակված վայրը:

Օ՜, որքան ուրախություն, որքա՜ն հրճվանք էին պատճառում մեզ՝ պատանիներիս, ամառանոց գնալու առաջին օրերը. վազում էինք ամեն տեղ, թավալվում կանաչ խոտերի մեջ, հավաքում վայրի պտուղներ, պատրաստում ծաղկեփնջեր, իսկ մեծ տղաները հեծնում էին ամառանոց եկած քոչվոր բեկերի արաբական ձիերն ու մրցում մեկը մյուսի հետ:

Բարձրանում էինք ձյունոտ սարերի գագաթներն ու այնտեղից սահելով՝ իջնում դեպի ձոր ու նորից կրկնում այդ հրաշալի մարզանքը, որը կատարվում էր համարյա թե կես կիլոմետր բարձունքից: Ամառանոցի առաջին օրերին մեր առօրյան այնքան հարուստ էր ու բազմազան, որ դժվար թե հնարավոր լինի համառոտակի կերպով նկարագրել այդ: Վաղ առավոտից մինչև ուշ գիշեր ոտքի վրա թռչկոտում էինք դեսուդեն՝ նպատակ ունենալով լինել ամեն տեղ, տեսնել ամեն ինչ և ուսումնասիրել բնության այդ հրաշալի լեռնաշխարհը: Վաղ առավոտյան, հեռանալով քոլիկներից, թափառում էինք ամեն տեղ՝ ոտնատակ տալով առվակներն ու աղբյուրները շրջապատող փարթամ ու խիտ կանաչները, մտնում սառը ջրերի մեջ, ձուկ որսում, շատ դեպքերում էլ պարսետներով հանկարծակի կռվի մեջ մտնում թուրք լամուկների հետ և միայն ուշ երեկոյան հոգնած տուն վերադառնում:

Մեզ հոգնել չկար. միայն գիշերվա իջնող խավարը ստիպում էր պատանիներիս օրվա հրաշալի տպավորությունների ներքո մեռածի պես խոր քուն մտնել մինչև հաջորդ առավոտ, և եթե չլինեին հովիվների կանչերը, անասունների բառաչն ու ձիերի խրխինջը, ապա հազիվ թե մեզանից որևէ մեկը ժամանակին խոր քնից արթնանար: Ամառանոց գալու առաջին երկու օրերին տղամարդիկ ամբողջապես զբաղված էին վրանների կանգնեցման գործով, իսկ ովքեր այդպիսիք չունեին, պատրաստում էին իրենց փոքրիկ տնակները անձրևներից պատսպարվելու և որպես մառաններ օգտագործելու համար: Իհարկե, վրաններ ունեին

միայն երեքից չորս քրդեր և հայ հարուստներ: Ամառանոց գալու առաջին իսկ օրը տեղում եղած բոլոր տղամարդիկ միացյալ ուժերով որպես կանոն բարձրացնում էին գյուղի հարուստ քուրդ Օմար աղայի ու նրա եղբոր վրանները, որից հետո միայն յուրաքանչյուր հայ գյուղացի կարող էր պատրաստել իր ընդարձակ գետնափոր տնակը:

Ամառանոցի տնակները շարվում էին քարերով ու ծածկվում լայն ու երկար քարե սալիկներով, որոնք սարալանջի կանաչ հարթավայրում դասավորվում էին երկշարք: Որպես կանոն՝ օբաների աջ թևում գտնվում էին հարուստների վրանները, իսկ նրանցից հետո սկսվում էին հայ գյուղացիների հողափոր, բայց ամուր շինված տնակները: Մեր քողտիկը գտնվում էր ամենավերջին թևում, որի կողքով առատորեն հոսում էր մեծ աղբյուրի սառնորակ ջուրը:

Ամառվա այդ շրջանում հայ բնակչության որոշ մասը մնում էր գյուղում իրենց ունեցվածքը պահպանելու և ցանքերը հսկելու համար: Իհարկե, երիտասարդ տղամարդիկ նույնպես լինում էին գյուղում՝ զբաղվելով դաշտային աշխատանքներով, սակայն կանանց ու երեխաների ապահովության նպատակով երեկոները պարտադիր վերադառնում էին ամառանոց: Ես ու Վարդանը մշտապես գտնվում էինք ամառանոցում՝ օգնելով Աչանին ու Աննային՝ անասուններին կթելու, յուղ ու պանիր պատրաստելու: Ես՝ որպես հորս և եղբայրներիս կողմից սիրված տղա, ազատ էի ամեն մի աշխատանքից, բացի բեր[43] գնալուց. մնացած ամբողջ ժամանակ ընկերներիս հետ շրջում էինք լեռներում, խոր-խոր ձորերում: Գնում էինք հեռուները՝ ամառանոցի շրջապատից դուրս, բարձրանում քարաժայռերի կատարները, մտնում գետերի մեջ, ձկնկուլի պես լող տալիս, իսկ հաճախ էլ քուրդ լամուկների հետ մենամարտի մեջ մտնում: Մի խոսքով, մեր պատանիների զբաղմունքի և զվարճության ձևերը բազմազան էին ու հետաքրքիր:

Չնայած դեռ փոքր հասակից կյանքն ինձ չէր ժպտացել, բայց և այնպես միշտ էլ երջանկություն եմ համարել իմ ընկերների հետ անցկացրած ամառվա այդ գեղեցիկ ու անմոռանալի օրերը:

Ես ունեի ինձ հասակակից մանկական ընկերներ: Նրանք շատ էին, ավելի քան երկու տասնյակ պատանիներ, բայց նրանցից ավելի շատ մտերիմ էի մեզ մոտիկ հարևան տղաների հետ՝ Տիգրանի, Հայկի, Արամի, Արբակի, Սարգսի, Նիկոլի, Ատոմի, հատկապես՝ Մնոյի հետ, որին

[43] բեր *(գվռ.)* – 1. մակաղատեղ, 2. կիթ

անձամբ շատ էի սիրում: Մնոն չար էր, բայց շատ ճարպիկ ու քաջ: Նա մեծ ազդեցություն էր թողել բոլորիս վրա և կարողացել էր մեզ համախմբել մեկ ընկերության մեջ, ու պատահական չէր, որ մեր այդ ընկերության ու համախմբվածության շնորհիվ մեկ տարուց հետո՝ թուրքական դաժան կոտորածների ժամանակ, կազմակերպեցինք քսանից ավելի հայ տղաների փախուստը թշնամու գերությունից:

Մենք դեռ փոքր հասակից այնքան էինք մտերմացել մեկս մյուսին, որ կարծես մի մորից ծնված հարազատ եղբայրներ լինեինք: Հիշում եմ այն պատմական օրը, երբ հավաքվելով Սուրբ ծառի փչակում՝ մենք բոլորս դանակով կտրեցինք մեր մատները ու թափված տաք արյունը խառնելով իրար՝ դարձանք հավատարիմ ու անբաժան ընկերներ: Մեր խմբի ղեկավարը Մնոն էր, իսկ օգնականը ես էի: Դեռ այն ժամանակվանից մենք բոլորս էլ ունեինք գեղեցիկ գույներով գործած պարսետներ, դալար ճիպոտներից պատրաստված աղեղներ, սուր-սուր նետեր: Ամառվա օրերին՝ վաղ առավոտյան, գաղտնի հեռանում էինք ամառանոցից դեպի սարերը, հետո՝ խուլ տեղեր՝ նպատակ ունենալով հարձակվելու հարուստ Օմար աղայի և նրա ցեղակիցների լամուկների վրա: Նրանք նույնպես խումբ ունեին և օրը ցերեկով հանգիստ չէին տալիս մեզ: Իհարկե, նրանց չար արարքը մեր նկատմամբ չէր պատժվում, ընդհակառակը, միշտ էլ խրախուսվում էր: Մեր խումբը ծնողներից գաղտնի էր գործում, այն էլ գյուղի ամառանոցի շրջապատից շատ հեռու՝ խուլ տեղերում, որպեսզի ոչ ոք չտեսնի և չիմանա մեր արարքները:

Մի անգամ Ծաղկասարի խոր ձորում տասը հոգով հարձակվեցինք մեծ թվով թուրք լամուկների վրա: Սկզբում գործի դրինք պարսետներն ու նետ-աղեղները, իսկ վերջում էլ տեղի ունեցավ ձեռքի ու փայտի սոսկալի կռիվ: Արյունոտվեցին շատ գլուխներ թե՛ մեր և թե՛ նրանց կողմից:

Մահու չափ հարվածում էինք մեկս մյուսին, բայց և այնպես ոչ ոք հետ չէր քաշվում: Սակայն մեր տղաները վախենում էին արյունահեղությունից. չէ՞ որ մեր ծնողները վաղ թե ուշ պետք է հանդիպեին միմյանց, և հենց այդ միտքը սոսկում էր առաջացնում հայ տղաների շրջանում: Չնայած դրան՝ այնուամենայնիվ տղաներից և ոչ մեկը չէր զիջում հակառակորդին: Մենք համառորեն պայքարում էինք՝ ստիպելով նրանց փախուստի դիմել, սակայն նրանք, թվով շատ լինելով, դեռ շարունակում էին դիմադրել: Մի անգամ՝ Գալանա խոր ձորում փայտերով կռվի ժամանակ, թուրք տղաներից մեկի թևը տեղից դուրս եկավ, իսկ մեր ղեկավար Մնոն մեկին քարից շպրտեց հորդ գետի մեջ: Տեսնելով խեղդվող տղային՝ ես խնդրեցի Մնոյին, որ նրան ազատի՝ նկատի ունենալով,

որ նա մեր գյուղի չքավոր քուրդ Ջալալի տղան էր. նրա հայրը մի անգամ կռվի ժամանակ ազատել էր իմ եղբորը մի հարուստ թուրք տղայի ձեռքից, որը ուզել էր դաշույնով թիկունքից գաղտագողի հարվածել:

Մնոն ինձ լսեց, և մենք երկուսով նրան ջրից հանեցինք՝ միաժամանակ կապելով նրա վերքերը, ու ճանապարհ դրինք:

Այդ օրվա երկար ու համառ կռվից հետո թուրքերի խումբը չդիմացավ և շուտով փախուստի դիմեց՝ տեղում թողնելով իրենց կռվի բոլոր միջոցները, անգամ զգեստները: Այդպիսի կռիվ տեղի էր ունենում շարունակ ու վերջանում էր նրանց փախուստով: Հիմա, երբ հիշում եմ իմ մանկական օրերի այդ կռիվները, ցանկանում եմ ասել. «Ա՜խ, երանի թե աշխարհում տեղի ունեցող բոլոր կռիվներն էլ այդպես վերջանային»:

ԱՐԵՎԻ ԽԱՎԱՐՈՒՄ

Ծաղկասարի զովաշունչ ամառանոցի և Տիգրիս գետի արանքում գտնվում էր մի հսկա սպիտակ քարաժայռ, որին գյուղացիներն անվանում էին Սատանի սար: Քարաժայռը կարծես թե մի հրաշակերտ արձան լիներ: Իր լայնությամբ այն կլիներ մեկուկեսից երեք կիլոմետր, իսկ բարձրությունը՝ երկուսից ոչ պակաս:

Ժայռի գագաթից քիչ ցած երևում էր սև բծի նման մի քարախորշ. ըստ երևույթին դա ինչ-որ քարայրի անցքերից մեկը պետք է լիներ, որի մեծությունը ճշգրտորեն նշմարել հնարավոր չէր:

Գյուղի հասակավոր մարդիկ պատմում էին, թե այդ ժայռը կախարդների ու սատանաների բնակատեղին է՝ նրանց միջնաբերդը. ով հանդգնություն է ունեցել բարձրանալու դեպի նրա գագաթը, այլևս կենդանի չի վերադարձել:

Հյուսիսային կողմից երևացող ժայռի երեսն ապակու նման հարթ էր. կարծես թե արհեստականորեն հղկված լիներ: Եթե որևէ մեկը, թեկուզ մեկ անգամ փորձ աներ նրա երեսով դեպի վեր բարձրանալ, ապա մի ակնթարթում սահելով իջնում էր ներքև: Չնայած ժայռն ուներ բավականին թեքություն, բայց ոտքը դնելու հենարան չլինելու պատճառով ամենաճարպիկ մարդն անգամ սիրտ չէր անում այդ ահռելի ժայռի երեսով բարձրանալ: Ավելի ահավոր էր նրա հակառակ կողմը: Այն բոլորովին թեքություն չուներ. թվում էր, թե հնադարյան բերդերի պարիսպների նման դեպի երկինք խոյացող այդ հսկա քարաժայռի երեսով բարձրանալ միանգամայն անհնարին էր:

Ամառվա զովաշունչ մի գեղեցիկ առավոտ, երբ նոր էինք դուրս եկել նույն օրվա հերթական արշավին, մեր խմբի ղեկավարը՝ Մնոն, առաջարկեց մեզ բարձրանալ այդ զարհուրելի քարաժայռի գագաթը: Թե ինչն էր ստիպում նրան իրագործել այդ վտանգավոր քայլը, առաջին իսկ վայրկյաններին զարմանք պատճառեց բոլորիս: Մի պահ փորձեցի համոզել ընկերոջս ձեռնպահ մնալ ժայռը բարձրանալու մտադրությունից, բայց պատանեկան ինքնասիրությունից դրդված՝ չուզեցի կոտրվել՝ լավ իմանալով, որ Մնոյի ասածները՝ որպես կանոն, պետք է կատարվեին անկախ նրանից, թե ինչ հետևանքներ կունենային: Գիտեի նաև այն, որ Մնոյի կարգադրությունները չկատարողները՝ որպես վախկոտներ, մեկ օրից հետո կհեռացվեին խմբից: Իհարկե, վախկոտ անվանվել ավելի ահավոր էր, քան թե այդ ահռելի ու անմատչելի ժայռի գագաթը բարձրանալը: Լավ էր քարաժայռից վայր գլորվել, ջարդուփշուր լինել, քան թե վախկոտ պիտակն ստանալ:

Որևէ բանից վախենալը ամոթաբեր էր մեր տասը ընկերներից յուրաքանչյուրի համար, ուստի առանց հաշվի առնելու, թե ինչ կլիներ մեզ հետ, անխոս սկսեցինք մագլցելով աստիճանաբար բարձրանալ անմատչելի ժայռի գագաթը:

Արևը բավականին բարձրացել էր, որի պատճառով արդեն չքացել էին քարաժայռի երեսին երևացող քերծերի ստվերները: Մեր առաջշարժման համար որպես ուղեցույց ծառայում էր միայն այն սև անցքը, որին պայմանականորեն համարում էին ինչ-որ քարայրի դռներից մեկը: Քայլ առ քայլ մեկս մյուսին օգնելով՝ մենք շարունակում էինք բարձրանալ դեպի կախարդական քարաժայռի գագաթը՝ աշխատելով չկորցնել նախօրոք աչքի տակ առած քարախորշը: Ամուր կպած քարաժայռի քերծերին՝ մեր առջևից մագլցող Մնոն մերթընդմերթ կանչում էր իրենից հետ մնացողներին, սակայն տասը ընկերներից միայն մեկն էր հետ մնացել, իսկ մնացածները վարժված լեռնագնացների նման հետևում էին նրան: Քարաժայռի գագաթը բարձրանալու միտքը ծագել էր դեռ շատ վաղուց: Անցած տարի՝ ամառանոցի շրջապատի լեռներն ու քարանձավները հետազոտելու ժամանակ, հավաքվելով Վարդաղբյուրի մոտ, տասը ընկերներով որոշել էինք, ինչ գնով էլ լինի, անպայման բարձրանալ վեր, այն էլ մինչև քարաժայռի գագաթը: Սակայն մի քանի տղաների երկմտելու պատճառով ստիպված էինք մեր որոշումը հետաձգել հաջորդ տարվան:

Չնայած ժայռը բարձրանալու վերաբերյալ միևնույն տղաների թերահավատությանը՝ այնուամենայնիվ մենք՝ մնացածներս, միանգա-

մայն վստահ էինք մեր ուժերին: Չէ՞ որ ամեն տարի՝ ամառանոց գալու ժամանակ, օրերով փորձեր էինք կատարել, շատ ժայռերի երեսով բարձրացել, մութ քարայրերի մեջ մտել, անգամ Տիգրիս գետի մեջ եղած հսկա ժայռաբեկորների վրայով թռչելով՝ անցել էինք հակառակ կողմը և վերադարձել: Մենք բազմաթիվ անգամ արշավել էինք Տիգրիս գետի ափերին թրև եկող քոչվորների ձիերով, բայց մնացել էինք անվնաս: Նշանակում էր, որ մարզված լինելով մենք կարող էինք ամենադժվարին ու անանցանելի ժայռն անգամ բարձրանալ: Ոգևորված այդ մտքով՝ մենք շարունակում էինք քայլ առ քայլ բարձրանալ դեպի վեր՝ մոտենալով քարաժայռի երևացող քարախորշին:

Տղաների ուժերը խնայելու նպատակով մեր առջևից գնացող Մնոն առաջարկեց մի պահ հանգստանալ, իսկ ինքը որոնում էր ավելի հարմար ուղի անցքին շուտ մոտենալու համար:

Քարաժայռի երեսից չսայթաքելու համար ես ամուր կպել էի քերծերին այնպես, որ մի փոքր անգամ շարժվել չէի կարող: Այնպես էի կպել քարաժայռի երեսին, որ ինձ թվում էր, թե նա ամբողջապես գտնվում է ճանկերիս մեջ: Վերջապես շունչս պահելով՝ ընկերներիս տեսնելու նպատակով մի վայրկյան գլուխս թեքեցի դեպի ներքև և սարսափեցի: Աչքիս առաջ երևաց մի հսկա խոր անդունդ, որի միջով իր հավերժական հունով ոլորապտույտ հոսում էր հորդառատ Տիգրիսը: Նայելով ցած՝ ինձ թվաց, թե օդից եմ կախվել: Մի պահ գլուխս պտտվեց, քիչ էր մնացել ոտքս պոկվեր հենարանից, բայց տիրապետելով ինքս ինձ՝ անմիջապես փակեցի աչքերս ու, նախկին դիրքն ընդունելով, կրկին շարունակեցի հետևել իմ առջևից դեպի վեր մագլցող Մնոյին:

Ամառվա պայծառ արևը բավական թեքվել էր դեպի արևմուտք, իսկ մենք՝ ճանկռտելով քարաժայռի լերկ երեսը, շարունակում էինք մագլցել վեր քարայրի սև անցքին հասնելու համար: Քանի մագլցում էինք վեր, այնքան դժվարանում էր հետագա ճանապարհը, այնպես որ տղաներից շատերը համարյա թե թուլացել էին, բայց ինքնասիրությունից դրդված՝ լուռ էին մնում: Մի ժամ ևս. վերջապես քարայրի անցքի մոտից լսվեց Մնոյի խրոխտ ու զիլ ձայնը: Նա հասել էր սև անցքին և այնտեղից մեզ էր կանչում: Դժվարությամբ հասնելով քարայրի մուտքին՝ մենք համարյա թե ջարդված մարմիններով վայր ընկանք քարաբեկորների վրա: Մնոն չէր նստում. նա բոլորովին հանգստություն չուներ, կրկին որոնում էր հարմար ուղի այս անգամ քարաժայռի գագաթը բարձրանալու համար: Մինչ մենք մի պահ կհանգստանայինք, նա մի ակնթարթում նորից անհետացավ, բայց այս անգամ քարայրի մութ խորշերի մեջ: Խմբի մեջ

ես նույնպես չար էի ու անհամբեր. նույն վայրկյանին վեր կացա, որ հետևեմ Մնոյին, բայց տղաները արգելեցին:

– Կա՛ց, կկորչես,– ասաց Սարգիսը և ձեռքիցս պինդ բռնելով՝ դուրս քաշեց քարախորշից:

– Եթե Մնոն կորչելու է, թող ես էլ կորչեմ,– պատասխանեցի ընկերոջս:

– Նա սատանա է, չի կորչի,– ծիծաղելով ասաց Հայկը:

Բոլորս լուռ էինք, մտածում էինք, թե ինչ կլինի քարայրի մեջ մտած Մնոյի հետ, սակայն շուտով այդ լռությունը խախտվեց:

– Տղանե՛ր, արևն արդեն մայր է մտնում, հարկավոր է վերադառնալ,– առաջարկեց Արբակը:

– Եթե պիտի հետ վերադառնայինք, էլ ինչո՞ւ բարձրացանք,– ասաց Հայկն ու տեղից վեր կացավ:

– Բա հո էստեղ չե՞նք մնալու,– ավելացրեց նա:

– Մինչև ժայռի գագաթը չբարձրանանք, վերադառնալ չենք կարող,– պատասխանեց Սարգիսը բարկացած:

– Եթե կարող ես, ի՛նքդ բարձրացիր,– իր դժգոհությունը հայտնեց Արբակը:

– Այդ դեպքում հե՛տ վերադարձի՛ր, քանի շուտ է,– զայրացած պատասխանեց Նիկոլը՝ նրան հրելով ցած:

Երկու ընկերների միջև տեղի ունեցող վեճը կարող էր սուր բնույթ ստանալ, եթե հենց նույն վայրկյանին չլսվեր քարայրի խորքից դուրս եկած Մնոյի ձայնը: Լսելով ընկերոջս ձայնը՝ ես անմիջապես նստած տեղից վեր կացա՝ քարաժայռի քերծերից բռնելով, մտա քարախորշի մութ անցքի մեջ ու հետևեցի Մնոյի կանչերին, որն արձագանք տալով հասնում էր մեզ:

Վերջապես իր ձայնի արձագանքի հետ երևաց նաև ինքը և առաջարկեց բոլորիս մտնել քարախոռոչի մեջ և հետևել իրեն: Առավոտվանից ոչինչ չէինք կերել, իսկ ժայռը բարձրանալու հետևանքով սովածությունից տեղից շարժվել չէինք կարող, ուստի ստիպված էինք թեթևացնել մեզ հետ վերցրած հաց ու պանրով լիքը ջանթիկները[44]: Նստելով քարախորշի անցքի առաջ թափված քարաբեկորների վրա՝ տղաները արագորեն կերան Մնոյի կողմից բաժանված հաց ու պանրի իրենց հասանելիք բաժինը, ու կշտանալուց հետո մեծ ոգևորությամբ սկսեցինք քարայրի այդ ահռելի բարձրությունից մեծ քարաբեկորներ

[44] ջանթիկ – պայուսակ

գլորել դեպի ձորը: Տեսնելով ընկերների ուրախ տրամադրությունը՝ Արբակը նույնպես աշխուժացավ՝ հետևելով մեր օրինակին:

Ամառվա հետճաշյա կիզիչ արևը վառում էր բոլորիս դեմքը: Այնքան արևը չէր, որքան քարաժայռի մերկ երեսի ջերմությունը, որից պատսպարվել հնարավոր չէր: Աղի պանիր ուտելուց հետո պապանձվել էինք ծարավից, իսկ ջուր խմելու մասին ոչ ոք սիրտ չէր անում անգամ խոսել:

Քարաժայռի կատարը շատ մոտ էր, մենք կարող էինք կարճ ժամանակամիջոցում հասնել այնտեղ և նույն օրն էլ վայրէջք կատարել, եթե Մնոն չփոխեր մեր արշավի ուղին: Լսելով խմբի ղեկավարին՝ տղաները որոշեցին նախ հետազոտել քարայրը և ապա նոր միայն շարունակել մեր երթը դեպի քարաժայռի գագաթը: Օոցագրպանից հանելով մեզնից թաքցրած մոմերը՝ խմբի ղեկավարը մտավ քարախորշի մեջ, իսկ մենք հետևեցինք նրան՝ Հայկին պահակ թողնելով անցքի մոտ:

Դրսից դեպի քարայր թափանցող աղոտ լույսի օգնությամբ սկզբում շարժվեցինք շատ ազատ, որից հետո միանգամից ընկանք հավիտենական մթության մեջ: Խմբի ղեկավար Մնոն ինչքան ճարպիկ էր, այնքան էլ խելոք ու հեռատես: Նա, դեռ մեկ շաբաթ առաջ մտնելով գյուղի եկեղեցին, կարողացել էր հափշտակել տեր Օհանի՝ պատարագի համար վաճառվելիք մոմերի մի մեծ կապոց, բայց մեզնից ոչ մեկն այդ մասին չգիտեր: Ճիշտն ասած, ես իմ հերթին նրանից հետ չէի մնում, քանի որ մեր տան լուցկու պաշարի համարյա թե կեսը ինձ մոտ էր. կարծես թե գրպանս լուցկու շտեմարան լիներ: Այսինքն՝ ուրիշ կերպ էլ չէր կարող լինել. լեռնեցի հայ մարդը մեծից մինչև փոքր, առանց լուցկու ու դանակի տնից դուրս գալ չէր կարող: Գրպանիցս հանեցի մոմից պատրաստված փոքրիկ լուցկին՝ առաջին իսկ պատահած քարին քսելով. այն բոցավառվեց, իսկ Մնոն իր հերթին մոմերից մեկը մոտեցրեց ինձ, բայց վառել չկարողացավ: Մենք երկուսով էլ շատ չարչարվեցինք, այնուամենայնիվ գողացած մոմերից ոչ մեկը վառել չկարողացանք քարայրի մեջ եղած քամու ուժեղ հոսանքի պատճառով: Ընկնելով խավարի մեջ՝ մեզ անհրաժեշտ էր ապահովել կապը դրսում մնացած պահակի հետ, այդ նպատակով էլ ստիպված էինք իրարից բաժանվել 20-30 մետր հեռավորության վրա քարայրի անցքը չկորցնելու համար:

Շատ էինք խորացել, թե քիչ, հանկարծ ձայներ լսվեցին. դրանք մեր խոսակցության ու քայլերի արձագանքներն էին, որոնք պարզ լսվում էին յուրաքանչյուր ձայնից հետո:

– Սևո՛ւկ, լո՛ւցկի վառիր,– լսվեց Մնոյի ձայնն ու նրա արձագանքը:

Լսելով ընկերոջս՝ ես մի քանի լուցկի վառեցի, որի թափանցող լույսի ներքո սկսեցինք առաջ շարժվել: Սակայն ինձ մոտ եղած լուցկու պաշարը շուտով սպառվեց, և մենք՝ առջևից գնացողներս, փաստորեն մնացինք խավարի մեջ:

– Յուրաքանչյուրն իր տեղում թող կանգնի, – առաջարկեց խմբի ղեկավարը, իսկ ինքն այդ զարհուրելի քարաժայռի մթության մեջ շարժվեց դեպի խորքը:

Մի ակնթարթում լսվեց խորը, բայց պարզ արձագանքը.

– Յուրաքանչյուրն իր տեղում թող կանգնի,– դա Մնոյի ձայնի կրկնակի արձագանքն էր, որ գալով հասնում էր մեզ:

Այդ արտասովոր ձայնից հետո շունչներս պահած մնացինք կանգնած՝ սպասելով Մնոյի վերադարձին: Շատ սպասեցինք, բայց նա դեռ չկար: Զարմանալին այն էր, որ ամառվա այդ շոգ եղանակին, բոլորս կանգնած տեղում ուղղակի դողում էինք ցրտից: Քարայրի ներսից փչում էր մի տարօրինակ սառը քամի՝ իր հետ բերելով Մնոյի քայլերից բարձրացած ավազախառը թանձր փոշին: Էլի մի քանի րոպե, վերջապես լսվեց Մնոյի արտասովոր, բայց ուրախալի ձայնը:

– Եկե՛ք, լույս է երևում,– քարայրի խորքից կանչում էր նա:

Այդ հսկայական քարայրի կամարների տակից նրա կանչը, եկեղեցու զանգակների նման ղողանջելով, հնչեց մի քանի անգամ ու արձագանք տալով դուրս եկավ քարախորշի նեղ անցքից:

– Գալիս ենք,– մենք բոլորս միասին պատասխանեցինք նրա կանչին:

Չնայած սարսափելի մթություն էր տիրում, բայց և այնպես շոշափելով քարայրի խորքը տանող քարախորշի պատերը՝ մենք զգուշորեն շարժվում էինք առաջ՝ հաշիվ չտալով, թե ուր կարող է տանել մեզ այդ խավար ուղին, որը նմանվում էր առասպելական քարե զնդանի:

Մեր բախտից շուտով թունելի անցքը թեքվեց դեպի աջ ու հանկարծ երևաց փոքրիկ շողքի մի նեղ կտոր, որը լուսավորում էր քարայրի ներսում կանգնած Մնոյին: Լույսի տակ ընկնելով՝ մեր ուրախությանը չափ չկար. կարծես թե հավիտենական մութ խավարից հենց նոր դուրս եկանք լույս աշխարհ: Մոտենալով Մնոյին՝ վերևից թափանցող այդ աղոտ լույսի տակ մենք շարունակեցինք առաջ շարժվել: Լույսը գնալով ավելացավ. պարզ երևացին քարայրի ահռելի բարձր կամարներն ու խոնավացած պատերը: Քարայրի կամարակապ առաստաղը բավականին բարձր էր, պատերի վերին մասերում երևում էին առանց լույսի նեղ անցքեր, որտեղից ներս էր փչում քամու ուժեղ հոսանք:

Կամաց-կամաց լսվում էր նաև ջրի կաթկթոցների ձայն. շուտով այդ ձայնն ավելի ուժեղացավ, իսկ քիչ առաջ շարժվելուց հետո այլևս մեկս մյուսի խոսակցությունը չէր լսում քարայրի կամարներից ջրվեժի նման հսկայական ուժով ցած թափվող ջրերի խշշոցի պատճառով: Մի պահ կանգ առնելուց հետո Մնոյի հետ խիստ թեքությամբ սկսեցինք իջնել դեպի խորքը, որտեղից երևում էր մի ընդարձակ կապույտ լճակ, իսկ քարայրի հոյակապ կամարների տարբեր տեղերից՝ գյուղական խրճիթների մեծ երդիկների նմանվող անցքեր, որոնցից թափանցած աղոտ լույսը պարզ լուսավորում էր տեղում գոյացած լճակը: Տղաներից շատերը դեռ մնացել էին քարայրի մութ խորշերում դրսի պահակի հետ կապ հաստատելու համար: Շուտով խորշերում ցրված տղաների մի մասն էլ հավաքվեց լճի մոտ, որտեղից պետք է սկսվեին մեր հետագա որոնումները դեպի քարաժայռի գագաթը:

Այդպիսով՝ քարայրի նեղ խորշով մինչև կապույտ լճակ մենք առաջ էինք շարժվել ավելի քան երեք հարյուր մետր տարածություն: Քանի առաջ էինք գնում, քարայրի հակառակ կողմի անցքն ավելի էր նեղանում, բայց դրանից դուրս գալն այնքան էլ դժվար չէր, ուստի վճռեցինք, ինչ գնով էլ լինի, հենց այդ անցքից էլ մի կերպ, թռչունների պես դուրս թռչել: Մի քանի րոպե ևս, և ահա երևացին կապույտ երկինքն ու դեպի արևմուտք թեքվող ամառվա պայծառ արևը:

Շատ դժվարությամբ հաղթահարելով քարայրի՝ հենց նոր հայտնաբերված անցքի առաջը փակող խոչընդոտները՝ վերջապես մենք դուրս եկանք լույս աշխարհ: Դիտելով մեր շրջապատը, ի զարմանս բոլորիս, մենք հասկացանք, որ դուրս էինք եկել Սատանաքարի հակառակ կողմը: Մենք հասել էինք ընդհուպ ժայռի գագաթին, որտեղից մրջյունի մեծությամբ պարզ երևում էին մեր ամառանոցի բնակիչները, ոչխարների հոտերը: Դուրս գալով քարայրից՝ մենք հինգ ընկերներով կանգնել էինք բարձր ժայռի գագաթին, որտեղից երևում էին Վասպուրականի հայտնի լեռների կատարները: Վայր չընկնելու համար բռնել էինք մեկս մյուսին: Քարաժայռի կատարից երկար դիտելուց հետո միևնույն քարախորշից կրկին մտանք քարանձավի մեջ՝ այնտեղ մնացած տղաներին միանալու: Վերջապես շատ մեծ դժվարությամբ բոլորս հավաքվեցինք քարայրում եղած կապույտ լճակի մոտ ճիշտ այն պահին, երբ արևը սկսել էր մայր մտնել: Այլևս սպասել չէր կարելի. Մնոյի կողմից պահված մոմերի օգնությամբ հազիվ մի կերպ գագաթից դուրս եկանք այն նույն անցքերի մոտ, որտեղից առաջին անգամ մտել էինք: Անցքի առաջ կանգնած

Հայկը՝ որպես պահակ, անխոնջ հետևել էր խմբի յուրաքանչյուր շարժմանը, լսել մեր ձայների արձագանքը մինչև մեր վերադարձը: Դուրս գալով քարայրից՝ տղաները պատրաստվեցին վայրէջք կատարել, սակայն մշուշապատ խավարի պատճառով ստիպված էինք գիշերել քարանձավի մեջ մինչև հաջորդ լուսաբաց:

Չնայած ամառվա կարճ գիշերը շատ դժվար անցկացրինք, այնուամենայնիվ մենք ուրախության մեջ էինք: Չէ՞ որ հայտնաբերել էինք այն գաղտնիքը, որը ոչ մի մարդ մինչև այդ չէր կարողացել իմանալ: Մենք ապացուցեցինք, որ Սատանասարում ոչ մի սատանա գոյություն չուներ, որ առանց կախարդվելու սարի գագաթը բարձրանալ և իջնել միանգամայն հնարավոր էր: Մենք հայտնաբերել էինք մի հոյակապ քարայր, որը նմանվում էր ճարտարապետորեն կառուցված տաճարի: Մենք գտել էինք Վարդաղբյուրի սառնորակ ջրերի ակունքը՝ նրա շտեմարանը, որը քարայրի մեջ եղած կապույտ լիճն էր: Վերջապես մենք գտել էինք մեր հարազատ ծննդավայրի՝ լեռներում դեռ մինչև այդ չհայտնաբերված գաղտնիքները, տաճարի նման մի քարայր, որը ուզած ժամանակ կարող էր ուրիշների համար որպես թանգարան ծառայել:

Լուսաբացին պատրաստվում էինք քարաժայռից վայր իջնել, բայց Մնոյի առաջարկությամբ որոշվեց մեկ անգամ ևս հետազոտել այն խորշերը, որոնք հնարավոր չեղավ տեսնել անցած գիշեր: Կրկին հետազոտելով քարանձավի խորքերը՝ մենք հայտնաբերեցինք տարբեր տեղերից դուրս եկող նոր անցքեր, նոր ջրվեժներ: Զարմանալին այն էր, որ մենք լճում լողացող կարապի նման թռչուններ տեսանք: Տղաներից շատերը նրանց սատանաներ անվանեցին, բայց երբ մեր նետված քարերից նրանք լճից թռան դեպի քարայրի վերին անցքը, մենք պարզ տեսանք, որ նրանք սովորական կարապներ էին, այլ ոչ թե սատանաներ: Հաջորդ գիշեր քարայրում չմնալու համար որոշեցինք քարաժայռից ցած իջնել մեր ամառանոցին նայող կողմից:

Օրը համարյա թե կես էր դարձել, անհրաժեշտ էր շտապել, որպեսզի լույսով իջնեինք ցած: Սովորականի պես Մնոն առաջինը սկսեց իր վայրէջքը, իսկ մնացածներս հերթով հետևեցինք նրան: Չնայած քարաժայռը բավականին թեքություն ուներ, բայց շատ հարթ էր, համարյա թե ոտք դնելու տեղ չկար, որի պատճառով հնարավոր չեղավ թեկուզ մեկ քայլ անել դեպի ցած: Սահելով իջնել ցած երկու կիլոմետր բարձրություն ունեցող ժայռի լերկ երեսից նշանակում էր ընդմիշտ կործանվել, ուստի ստիպված եղանք հետ դառնալ:

Մեկ օրվա մեջ մենք լրիվ ուսումնասիրել էինք քարայրի բոլոր անցքերը, այնպես որ մթության մեջ անգամ մենք կարող էինք կողմնորոշվել, թե ինչպես կարելի է դուրս գալ քարանձավի խորշերից:

Դուրս գալով քարանձավի խավարից՝ սովորականի պես Մնոն առաջինը սկսեց շարժվել դեպի ցած: Նա ճարպկորեն սողաց դեպի անդունդը, իսկ տղաները, ըստ սահմանված հերթականության, հետևեցին նրան:

– Տղանե՛ր, բարձրանալն ավելի հանգիստ էր, քան թե վայրէջքը,– տնքալով խոսում էր Սարգիսը:

– Ի՞նչ ես բլբլում, վախկո՛տ նապաստակ,– սաստեց նրան առջևից գնացող Մնոն, իսկ վերջինս, դադարացնելով գանգատվելը, հնազանդ հետևեց նրան:

Մեր խումբը դեռ նոր էր սկսել իր վայրէջքը, երբ հանկարծ օրը սկսեց մթնել. բոլորիս թվաց, թե արևը մայր է մտնում: Հանկարծակիի գալով տղաները մի պահ այլայլվեցին՝ գլխի չընկնելով, թե ինչ պատահեց:

– Վերադարձե՛ք, արևը մայր է մտնում, գիշերով չենք կարող վայրէջք կատարել,– հրամայեց Մնոն:

Բայց իզուր էր Մնոյի հրամանը, դեռ մեկ-երկու մետր հետ չէինք շարժվել, երբ արևը սկսեց լրիվ խավարել, ու ամբողջապես մթնեց: Երևացին մեզ հանրածանոթ միլիոնավոր աստղեր, որոնք մի ժամանակ, Վարդանի հետ հաշվելով, բաժանում էինք գյուղի բնակչությանը:

Մեր խմբի տղաներով դեռ փոքր հասակից շատ վայրեր էինք գնացել, ձների մեջ ընկել, գետեր անցել, հանդիպել թուրք ասկյարներին, բազմաթիվ անգամ կռվի մեջ մտել քուրդ տղաների հետ, բայց երբեք չէինք վախեցել այնպես, ինչպես այդ օրը՝ քարաժայռի երեսին կպած: Բոլորս լուռ էինք ու լարված. մեզնից ոչ ոք չէր խոսում. սպասում էինք, թե ինչ կլինի մեր վերջը: Սակայն գիշերը երկար չտևեց, և ահա երևաց արևի մի փոքրիկ շերտ, նա, աստիճանաբար թրթռալով, սկսեց մեծանալ. վերջապես արևն ամբողջությամբ իր տեղում էր, ինչպես մի երկու րոպե առաջ:

Տղաներից շատերն ուրախությունից լաց եղան, սակայն լացի ժամանակ չէր. մենք շտապում էինք քարաժայռից վայր իջնել:

Արևը դեռ մայր չէր մտել, երբ մենք բոլորս արդեն կանգնած էինք սարալանջի հարթ տարածության վրա: Մեկուկես օրվա ընթացքում առաջին անգամ հանգիստ պառկեցինք թարմ խոտերի մեջ՝ նայելով կապույտ երկնքին: Հանգստանալու ժամանակ ակամայից հարց էի տալիս

ինքս ինձ, թե ինչու և ով մեզ ստիպեց բարձրանալ Սատանասարի քարաժայռի գագաթը, այն էլ մտնել այդ զարհուրելի քարայրի մեջ ու վտանգի ենթարկել սեփական անձը:

Պատասխանը պարզ էր. պատանեկան հետաքրքրությունը՝ տեսնել ամեն ինչ և իմանալ ամեն բան: Պառկած տեղում քունս տանում էր. հանկարծ մի ծանոթ ձայն լսեցի: Ինձ թվում էր, թե երազի մեջ եմ, բայց ահա ձայնը ավելի մոտեցավ, վեր կացա տեղիցս, գլխիս կանգնած էր Ատոմը: Անցած օրը քարաժայռը բարձրանալու ժամանակ նա սայթաքել էր ու վայր ընկել՝ ստանալով մարմնական վնասվածքներ, որի պատճառով այլևս չէր կարողացել վեր բարձրանալ: Բայց Ատոմը մեզ չէր լքել. վիրավոր լինելով հանդերձ՝ նա հետևել էր մեր շարժումներին մինչև մեր վերադարձը:

Մնոն տղաների շապիկների կտորներով կապկպեց Ատոմի վերքերն ու հրամայեց շարժվել դեպի ամառանոց:

*
* *

Մենք տեղ հասանք ճիշտ այն ժամանակ, երբ անասուններն արոտից նոր էին վերադարձել իրենց սովորական տեղը: Քարերի ու թփուտների արանքով մենք աննկատ մոտեցանք հավաքված ժողովրդին ճիշտ այնպես, ինչպես որսորդի շունը կմոտենա իր որսին:

Այդ օրը սովորականից տարօրինակ էր. հովիվները իրենց տեղում չէին, ոչխարներն առանց կթվելու ցրվել էին դեսուդեն, տղամարդիկ խմբերով գյուղի ճանապարհով գալիս էին դեպի ամառանոց, իսկ կանայք ու աղջիկները սուգ ու շիվանի մեջ, ձեռքները բարձրացրած դեպի երկինք, աղերսում էին աստծուն:

– Երևի մարդ են սպանել,– ենթադրելով ասաց Մնոն:

– Գուցե մեզ համար են լաց լինում,– ավելացրի ես:

Տղաներն այդ սրտաճմլիկ տեսարանից տխրեցին և ինքնաբերաբար թաքնված տեղից դուրս գալով՝ քայլեցինք ուղիղ դեպի հավաքված ժողովուրդը. նրանց մեծ մասը կանայք էին: Տեսնելով մեր խումբը՝ լացուկոծը ավելի բորբոքվեց. նրանք վազում էին դեպի մեզ: Այս անգամ կանանց լացին ավելացավ ուրախության արտասուքը. ամեն մեկը գրկում էր իր երեխային, հարազատին, որոնք մեռած կամ կորած էին համարվում:

Գյուղի տղամարդիկ ամբողջ գիշեր մեզ էին որոնել, էլ սարուձոր չէր մնացել, որ տակնուվրա չանեին. շատերը գյուղ էին գնացել, խրճիթ մտել, Տիգրիս գետի ափերը ստուգել: Բայց ինչպե՞ս կարող էին մեզ

գտնել, ո՞ւմ մտքով կանցներ, թե 13-16 տարեկան հասակ ունեցող երեխաները սիրտ կանեն բարձրանալ Սատանասարի քարաժայռի գագաթը. ո՞վ կմտածեր, որ մենք կարող էինք գիշերել քարաժայռի խավար զնդանում. ահա թե ինչու նրանք հազարումի կասկածանքով, հույսները կտրած վերադառնում էին ամառանոց:

Շուտով գյուղի տղամարդկանց մի զգալի զանգված հավաքվեց, ինչպես նաև եկան փրկարար արշավների անդամները, որոնք ամբողջ գիշեր որոնել էին մեզ: Նրանց տխրությունն արդեն ուրախության էր փոխվել: Չէ՞ որ գտնվել էին տասը կորած պատանիներ, չէ՞ որ քիչ առաջվա խավարը նորից փոխարինվել էր արևի լույսով:

Այդ օրն առաջին անգամ էր, որ ես իմացա, թե ինչ բան է արևի խավարումը: Արևի խավարումը բոլորն էլ համարել էին չարագուշակ մի դեպք, որն իր հետևից բերելու էր մի մեծ դժբախտություն: Չարագուշակ էր համարվում նաև Սատանասարի ժայռում մեր տասն ընկերների անհետանալը, այդ իսկ պատճառով էլ գյուղացիները սկսեցին մատաղ անել՝ ի փրկություն իրենց զավակների: Յուրաքանչյուր տուն մեկական անասուն էր մորթում՝ կով կամ ոչխար, միայն թե աստված հեռու պահի հայ գյուղացիներին օրհասական վտանգից: Աղոթք ու մատաղ անելու ծիսակատարությունը մի ամբողջ շաբաթ տևեց:

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Արևի խավարման պատճառով ժողովրդի շրջանում առաջացած խիստ վախը շուտով փոխարինվեց պատերազմի մասին բերված լուրերի ահ ու սարսափով:

Բոլորովին նոր էր սկսվել մի ահավոր և արյունոտ պատերազմ, որի մասին սարսափով էին խոսում ամենուրեք: Լուր բերողներն ասում էին, թե պատերազմ սանձազերծողները երկրագնդի մեծ, հսկա պետություններն են, հատկապես հոլովում էին ռուսներին, անգլիացիներին, գերմանացիներին և ֆրանսիացիներին, որոնց անունները երբեք չէի լսել ու գաղափար անգամ չունեի նրանց մասին: Հեղինակավոր մարդիկ պատմում էին, թե կռիվը սկսվել է ինչ-որ թագաժառանգի սպանության պատճառով, դրա համար տարբեր հավատ ունեցող պետությունները, միանալով օսմանցիներին, արյունոտ պատերազմ են հայտարարել ռուսներին, ֆրանկներին և անգլիացիներին:

Այն ժամանակ ես՝ որպես լեռներում ապրող գյուղացու զավակ, բնավ էլ պատկերացում չունեի երկրագնդի որևէ պետության մասին, չգիտեի՝ ինչ է պետությունը, և ինչի համար են կռվում նրանք: Ճիշտ է, ձմեռ ժամանակ օդաներում արված պատմություններից որոշ չափով, այն էլ շատ կցկտուր, գիտեի, որ թուրքական արյունռուշտ և անխիղճ սուլթանները միշտ կոտորել են հայ ազգին՝ թալանելով նրանց ունեցվածքը, գազանաբար տանջել ու ոչնչացրել են անարդարության դեմ մարտնչող հազարավոր հայերի: Գիտեի նաև խաղաղ ժողովրդին կողոպտելու նպատակը, Տաճկաստանի տարբեր ցեղապետների ու բեկերի միջև եղած սոսկալի կռիվների վերաբերյալ եղած պատմություններ-ը, սակայն երբեք չէի լսել ո՛չ Ռուսաստանի և ո՛չ էլ երկրագնդի որևէ այլ պետության մասին:

Թողնելով ամառանոցի գեղեցիկ բնության ծոցում դեռ շարունակվող մեր տասն ընկերների զվարճությունները՝ ես մանկական մեծ հետաքրքրությամբ լսում էի պատերազմի և նրա մասնակից պետությունների մասին եղած խոսակցությունները: Սակայն ամառանոցի պայմաններում այդ խոսակցություններն այնքան քիչ էին ու կցկտուր, որ դժվար թե ինձ հաջողվեր առանց դրսից եկած մարդկանց որևէ ճիշտ տեղեկություն իմանալ: Ամառանոցում եղած մարդիկ մեծ մասամբ կանայք ու անչափահաս պատանիներ էին: Նրանք, շատ հուզված լինելով, գտնվում էին մշտական լարված վիճակում. մանավանդ կտրված լինելով արտաքին աշխարհից՝ ժամ առ ժամ սպասում էին իրենց գլխավորների կարգադրությանը՝ շուտափույթ գյուղ վերադառնալու համար:

Ամառվա լարված մի օր Աչանը առաջարկեց ինձ կարևոր գործով գյուղ մեկնել: Իհարկե, այդ առթիվ շատ ուրախացա. մեկ ամսից ավելի չէի մտել հարազատ խրճիթ, իսկ այդ օրը, երբ լուր էր ստացվել պատերազմ սկսվելու վերաբերյալ, ես մեծ ցանկությամբ ուզում էի շուտ հասնել գյուղ՝ լսելու այնտեղ մնացած հասակավոր մարդկանց զրույցները հենց նոր սկսված մեծ ու ահավոր պատերազմի մասին:

Բաժանվելով Աչանից, ուրախ-ուրախ վազելով՝ մի շնչով հասա ամառանոցի հակառակ կողմը, որտեղ գտնվում էր ռես[45] Մանուկի տունը: Մտնելով տանտիրոջ քոլիկ՝ ես Սարգսին տեսա անկողնում քնած:

– Վե՛ր կաց,– համարյա թե քաշքշելով՝ արթնացրի նրան խոր քնից:

– Ի՞նչ է պատահել,– հարցրեց նա՝ վեր թռչելով անկողնուց:

[45] ռես *(պատմ.)* – գյուղապետ, տանուտեր

– Գյուղ ենք մեկնելու:

– Մենա՞կ,– հարցրեց նա:

– Ինչո՞ւ մենակ, բոլորս միասին,– պատասխանեցի ես:

Շտապ հագնվելով՝ երկուսով կես ժամվա ընթացքում մեր խմբի անդամներին հավաքեցինք ամառանոցի մեծ աղբյուրի մոտ ու պայմանավորվեցինք նույն օրը գյուղ մեկնել հաջորդ առավոտյան վերադառնալու պայմանով:

Հեռանալով զովաշունչ ամառանոցից՝ մենք մոտավորապես օրվա կեսին հասանք գյուղ և խմբով մտանք մեր խրճիթ, որտեղ մեզ դիմավորեց Մարկոսի կինը՝ Անթառամը: Աչանի տված կապոցները Անթառամին հանձնելուց ու քիչ հանգստանալուց հետո մենք անմիջապես քայլեցինք մեզ հանրածանոթ շերտավոր կողով մեծ ծառի մոտ, որի փարթամ ճյուղերի շվաքում հավաքվել էին գյուղի հասակավոր տղամարդիկ:

Հավաքվածներն իրենց շրջանի մեջ էին առել դեռ երկու տարի առաջ Ռուսաստանից վերադարձած նախկին փախստական Պտուտանին: Երկար ժամանակ ապրելով Արևելյան Հայաստանում, լսած լինելով անցած պատերազմներում ռուսների կողմից ձեռքբերված հաղթանակների մասին՝ նա հավաքվածներին պատմում էր նրանց զորքերի քաջագործությունները: Պտուտանը պատմում էր, թե ռուս կազակներն անհաղթ են. նրանք շատ տարիներ առաջ գլխովին ջախջախել էին պարսիկներին, ապա օսմանցիներին՝ ազատելով հայ ժողովրդին բարբարոսների կոտորածներից: Նա պատմում էր, որ ռուսները նույնպես քրիստոնյաներն են, ինչպես հայերը: Նրանք ունեն նույն խաչն ու Ավետարանը, ինչպիսին մերն է:

– Ինչպե՞ս են խոսում ռուսները,– հարցրեց զրույցի մասնակիցներից մեկը:

– Նրանց լեզուն դժվար է հասկանալ, բայց նրանք հացին «խլեբ» են ասում, իսկ ջրին՝ «վադա»,– պատասխանեց Պտուտանը:

– Օհո՜, եթե նրանք մեր հացը պիտի խլեն, էլ ի՞նչ հայի պաշտպան են,– մեջ մտավ Նիկոլի պապը:

– Ռուսները հարուստ են, ուրիշի հացին և ունեցվածքին ձեռք չեն տա,– պատասխանեց Պտուտանը:

– Քեռի Պտուտան, ռուսները ո՞ւմ են նման,– հարցրի ես:

– Նրանց մազերը շեկ են, իսկ աչքերն էլ կապույտ, ինչպես վերին երկինքը,– պատասխանեց նա:

– Ռուսներն են շա՞տ, թե՞ օսմանցիները:

– Երկնքի աստղերին և ծովի ավազին հաշիվ կա, ռուսներին չկա, երկու քսանհինգ անգամ ավելի շատ են, քան թե օսմանցիները,– պատասխանեց քեռի Պտուտանը:

– Քեռի Պտուտան, դու ինքդ ռուսերեն գիտե՞ս,– հարցրեց Մնոն՝ էլ ավելի մոտենալով նրան, որը ծալապատիկ նստած էր ծառի՝ հողից որոշ չափով դուրս եկած հաստ արմատներից մեկի վրա:

– Բացի ռուսերենից ուրիշ շատ լեզուներ գիտեմ,– հպարտ պատասխանեց նա՝ միաժամանակ թվելով Անդրկովկասի տարբեր ազգությունների անունները, որոնց մասին երբեք չէինք լսել:

Ըստ երևույթին, քեռի Պտուտանը շատ էր չափազանցնում, այնուամենայնիվ տրված հարցերին նա պատասխանում էր արագ, առանց երկար մտածելու՝ զարմացնելով իրեն շրջապատող տղամարդկանց ու երեխաներին:

*
* *

Ավագ Տիգրանյանը, կիսատ թողնելով իր ուսումը, Վան քաղաքից վերադարձել էր հայրենի գյուղ՝ իր ծերացած հորը՝ Մամիկոնին օգնելու, իսկ հայրը այդ նույն տարվա ձմռանը՝ Բարեկենդանի տոն օրերին, ամուսնացրել էր որդուն շատախցի մեծ ընտանիքից դուրս եկած աղջիկներից մեկի հետ: Նրանք աշխատում և ապրում էին հանգիստ, իրենց պապերի սեփական հողի վրա: Բայց շուտով ամեն բան խառնվել էր, տակնուվրա եղել, իսկ նորապսակ Ավագն էլ հարսի հետ կորցրել էր իր անդորրը: 1896 թվականին՝ արյունարբու Աբդուլ Համիդի մարդասպանների կողմից հայերին կոտորելու արյունոտ օրերին, ուրիշների հետ սպանվել էր նաև Ավագի հայրը՝ Մամիկոն Տիգրանյանը՝ թողնելով երիտասարդ, անփորձ որդուն մենակ, առանց խորհրդատու գլխավորի:

Չնայած Ավագն ուսումը կիսատ էր թողել, բայց հինգ տարվա ընթացքում նա վարժարանում շատ բաներ լսել ու սովորել էր: Այդ տեսակետից նրա մտահորիզոնը ավելի լայն էր, քան թե համագյուղացիներից որևէ մեկինը, որոնք ո՛չ գրել գիտեին և ո՛չ էլ կարդալ: Արյունոտ կոտորածից հետո Ավագ Տիգրանյանը վճռել էր թողնել հայրենի հողը և իր ընտանիքի հետ փախչել Ռուսաստան: Շատ չարչարվելուց հետո վերջապես նրան հաջողվում է խախտել ռուս-թուրքական սահմանն ու անցնել Արևելյան Հայաստան: Հինգ տարի թափառելուց հետո կրկին վերադառնում է հայրենիք: Երկրորդ անգամ նա փախչում է 1910 թվականին, սակայն ընկնում է թուրք սահմանապահ ասկյարների ձեռքը և

միայն մեծ փրկագին տալու միջոցով հազիվ մի կերպ կարողանում է ազատվել: Տիգրանյանը, անցնելով ռուսական սահմանը, թափառել էր Կովկասի շատ քաղաքներում ու գյուղերում: Նա եղել էր նաև Օդեսայի և Նովոռոսիյսկի նավահանգիստներում, սակայն ոչ մի տեղ չէր կարողացել մշտական մնալ, թեկուզ մեկ տարի ժամանակով: Հայրենի գյուղից հեռանալուց հետո նա ամենուրեք և ամեն տեղ անխնա շահագործվել էր: Վերջին անգամ տկար լինելու պատճառով, Բաքվի նավթատերերի շահագործումից ազատվելով, տեղափոխվել էր Արարատյան դաշտավայրի գյուղերից մեկը: Սակայն այստեղ նույնպես հող ու աշխատանք չունենալու պատճառով ստիպված էր եղել 1913 թվականի աշնան վերջին օրերին վերադառնալ հայրենի գյուղ:

Մեզ հանրածանոթ Ավագ Տիգրանյանն այնքան էր շրջել ու պտտվել Ռուսաստանի տարբեր գյուղերում ու քաղաքներում, որ համագյուղացիները նրան անվանում էին քեռի Պտուտան: Այդ օրը նա իր տեսած ու լսածների մասին մեծ հետաքրքրությամբ էր պատմում բոլորին:

Իհարկե, Պտուտանի ոգևորված պատմությունը ուրախություն պատճառեց ներկա գտնվողներին. առանձնապես մեր տասն ընկերների ուրախությանը չափ ու սահման չկար, մանավանդ ես ախ էի քաշում, թե երբ կտեսնեմ շեկ մազերով և կապույտ աչքերով ռուս զինվորներին, որոնք միշտ կռվել են հայերին ազատագրելու համար:

Պատերազմի լուրը ստանալուց մի քանի օր հետո՝ առավոտյան շուտ, մեր գյուղ մտան մի խումբ զինված ոստիկաններ՝ Շամանիս գյուղի տեր Օհանի ուղեկցությամբ: Նրանք եկել էին զորահավաքի, այդ նույն օրն էլ գյուղի ռես Մանուկ Մեսրոբյանի միջոցով կանչեցին զինվորական հասակ ունեցող բոլոր տղաներին, որոնք վաղուց հաշվառման էին ենթարկված գավառական մյուդիրի կողմից:

Հրապարակում հավաքվածների ներկայությամբ ոստիկանների հետ եկած տեր Օհանը կմկմալով կարդաց զորակոչիկների ցուցակները: Մենք բոլորս շունչներս պահած լսում էինք տերտերին, որը դանդաղ ընթերցում էր զորակոչիկների անունները: Սակայն տեր Օհանի դանդաղ կարդալուց երկու փոքր ցուցակների ընթերցումը ժամեր տևեց:

Առաջին ընթերցումը ցույց տվեց, որ ցուցակում գրանցված ազգանուններով շատ մարդիկ մեր գյուղում չկային: Ըստ երևույթին տեր Օհանեսը, խիստ հուզված լինելով, չկարողացավ ճիշտ ընթերցել թուրքերեն լեզվով կազմված ցուցակները, ուստի հարկ եղավ մի քանի ան-

գամ կրկնել ընթերցումը: Ձեռքում ունենալով զորակոչիկների ցուցակները՝ չգիտես ինչու, տեր Օհանեսը, նայելով ներկաներին, բարձր ձայնով հայտարարում էր զորահավաքի ենթակա տղաների անունները, իսկ որոնց չէր ճանաչում, խառնում էր հարևան գյուղի մարդկանց հետ: Ականատես լինելով ցուցակների ընթերցմանը՝ ես հաստատ համոզվեցի, որ տեր Օհանը կա՛մ խիստ այլայլված էր, կա՛մ թե բոլորովին անգրագետ: Վերջապես, զորակոչիկների աղավաղված անունները և ազգանունները ճշտվեցին միայն գյուղի տիրացու Սողոմոնի օգնությամբ, սակայն վերջինս, ծերացած լինելով, նույնպես դժվարությամբ ավարտեց մի քանի տասնյակ մարդկանց անունների ընթերցումը:

Այսպիսով՝ մեկ օրից թուրքական բանակ պետք է մեկներ գյուղի հայ տղաների ամենաածաղկուն մասը, որոնց թվում՝ նաև իմ երկու մեծ եղբայրները՝ Բադալն ու Մարկոսը: Զորակոչի մասին տեր Օհանեսի հակիրճ ու ցրված ճառից հետո նրա հետ եկած ոստիկաններից մեկը կարգադրեց զորակոչիկներին ու նրանց ծնողներին պատրաստվել մեկ ամսվա ուտելիքի պաշարով վաղը ևեթ Շամանիս գյուղաքաղաք մեկնելու համար: Նա միաժամանակ սպառնալիքով հաղորդեց, որ եթե որևէ մեկը ժամանակին չներկայանա հավաքատեղի, ապա նա կհամարվի դասալիք, սուլթանի թշնամի և օրենքի հիման վրա կենթարկվի գնդակահարության, իսկ ծնողներին տանջամահ անելուց հետո կբռնագրավվի նրանց ունեցվածքը: Ոստիկանի սպառնալիքի իմաստն ու բովանդակությունը հայերեն լեզվով թարգմանեց տեր Օհանեսը: Միաժամանակ ավելացրեց, որ էֆենդի ոստիկանի ասածները ալլահի և սուլթանի կամքն են, ուստի պետք է իրագործել անհապաղ: Դրանից հետո հավաքված մարդիկ, գլուխները կախած, տխրությամբ ցրվեցին:

*

* *

Հայրս երեք օր առաջ գործով մեկնել էր Շատախ, բայց դեռ չէր վերադարձել, բոլորս սրտատրոփ սպասում էինք նրա գալուն:

– Ինչպե՞ս կարող ենք հեռանալ առանց հայրիկին տեսնելու,– ինքն իրեն խոսում էր մեծ եղբայրս՝ փաղաքշելով իր կրծքին կպած երկու մանուկներին՝ Միրաքին ու Այվազին:

– Թեկուզ այստեղ լիներ, ի՞նչ կարող է անել նա, – պատասխանեց Մարկոսը:

– Որոշ չափով կհետաձգի քո գնալը:

– Մեկ է, տանելու են, թող այժմ միասին տանեն:

– Իսկ ո՞վ կպահի երեխաներին, չէ՞ որ նրանց խնամող է հարկավոր,– ասաց Բադալը՝ մտածմունքի մեջ ընկնելով:

– Երևի աստված մի ճար կանի:

– Աստված ճար անող լիներ, վաղուց կաներ,– հեգնանքով պատասխանեց եղբայրս:

– Հայրիկը Շատախ գնալուց հայտնեց, որ նա այսօր պետք է վերադառնա,– արտասվելով ասաց Աչանը՝ օրորելով Մարկոսի փոքրիկ երեխային:

Այսպիսով՝ թուրքական բանակ գնացող երկու եղբայրներս տխուր ու տրտում նստել էին մեր խրճիթի տանիքին և մտածում էին, թե ինչ անեն վաղը, իսկ մեր ընտանիքի մնացած անդամներն այդ գիշեր փաստորեն արտասվելով լուսացրին: Բոլորս ձեն ձենի տված լաց էինք լինում, այնպես որ ո՛չ Բադալը և ո՛չ էլ Մարկոսն այդ գիշեր չկարողացան մեզ հանգստացնել, ընդհակառակը, առավոտյան շուտ մեր տնեցիների սուգ ու լացին ավելացան նաև Աննայի և մյուս բարեկամների սրտաբուխ լացն ու անեծքները արյունոտ պատերազմ սանձազերծողների հասցեին:

Այդ օրը, երբ Բադալն ու Մարկոսը պատրաստվել էին մեկնելու նշանակված հավաքատեղի, Շատախից տուն վերադարձավ հայրիկս: Նա վաղուց գիտեր այն մասին, որ շուտով լինելու է զորահավաք, այդ իսկ պատճառով էլ, առանց մեզ տեղյակ պահելու, մեկնել էր Շատախ՝ երկու տղաներից մեկին զինվորությունից ազատելու: Ծանոթ լինելով թուրքական կառավարության օրենքներին՝ նրան հաջողվել էր ժամանակավորապես փրկանքով ազատել իմ միջնեկ եղբորը՝ Մարկոսին՝ իր հետ բերելով նաև ազատման վկայականը:

Օրն արդեն ճաշ էր դարձել. զորակոչիկները, իրենց պաշարը շալակած, ծնողների ու բարեկամների ուղեկցությամբ շտապում էին դեպի նշանակված հավաքակայան: Մեր տնեցիները նույնպես, հաղթանդամ Բադալի թևերն ընկած, ներքին թաղամասի հարթ կտուրների վրայով ներկայացան ցանկապատի ստվերում նստած տեր Օհանին:

Ամառվա կիզիչ արևը վառում էր հավաքված մարդկանց առանց այն էլ խանձված դեմքերը, որոնք տխրությամբ սպասում էին հարազատներից բաժանվելու դժվար պահին: Բոլոր զորակոչիկները հավաքվել էին, բացի Մարկոսից, որի ազատման մասին դեռ առավոտյան շուտ հայրս տեղյակ էր պահել ոստիկաններին: Ձինվոր գնացողները 30 օրվա ծանր պաշարի տակ, շոգից քրտնած, վերջին անգամ հրաժեշտ էին տալիս իրենց ծնողներին ու հարազատներին:

Վերջապես եկան երեկվա ոստիկանները՝ կրկին ստուգելու իրենց ցուցակները: Հաշվելով գնացողներին՝ հրամայեցին նրանց ճանապարհ ընկնել դեպի Փիրբադալյան կոչվող գյուղաքաղաք: Որքա՜ն դժվար էր բաժանվել հարազատներից այդ սոսկալի պահին: Այդ մասին մանրամասն նկարագրել անհնարին է: Զորակոչիկները ճանապարհ ընկան, իսկ ծնողներից շատերը ողբալով հետևում էին նրանց:

Մենք երկար կանգնեցինք խրճիթների կտուրներին, մինչև գնացողների խումբն անհետացավ կանաչ բլրի հակառակ կողմում:

Առաջին զորահավաքից հետո թուրք ոստիկաններն այլևս հանգիստ չէին թողնում հայ բնակչությանը. համարյա ամեն օր զորակոչեր էին կազմակերպվում նորանոր մարդիկ որսալու համար:

Նրանք հանկարծակի խուզարկում էին հայ գյուղացիների խրճիթները, կասկածելի բոլոր վայրերը, անգամ ամառանոցի դատարկ քոլիկները և իրենց ձեռքն ընկած հայ տղամարդկանց ձերբակալելով՝ զինված ոստիկանների խիստ հսկողության տակ քշում էին ռազմաճակատ՝ որպես բեռնակիրներ:

Շալակելով ռազմամթերք ու հանդերձանք՝ հիսուն-վաթսուն տարեկան հայ տղամարդիկ, անասելի պայմաններում ուժասպառ լինելով, կմախքացած մնում էին ճանապարհներին ու ոչնչանում, իսկ տեղ հասնողները այլևս կենդանի հետ չէին վերադառնում:

Տեսնելով հայ ազգաբնակչության նկատմամբ թուրքական ղեկավարող շրջանների նման անմարդկային ու նողկալի վարմունքը՝ գյուղում մնացած տղամարդիկ հայրիկիս ու Հարություն Եղոյանի ցուցումով սկսեցին աստիճանաբար թաքնվել: Սակայն բերքահավաք սկսվելու պատճառով ոչ բոլորին էր հաջողվում իրագործել իրենց մտադրությունը:

Ոստիկանների դաժան հետապնդումների պայմաններում հայ տղամարդիկ ու կանայք, անգամ երեխաները, գիշեր ու ցերեկ տանջվելով, հազիվ մի կերպ հավաքում էին իրենց հացահատիկը, որի մի զգալի մասը կալսելուց հետո պետք է հանձնվեր թուրքական կառավարությանը և Օմար աղային: Ցորենի արտերը վաղուց հասել էին, բայց աշխատող ձեռք չլինելու պատճառով մնացել էին անտեր ու անտիրական: Արտերի զգալի մասում հասկերը, մնալով արևի տակ, չորացել ու սկսել էին թափվել: Գյուղում մնացող փոքրաթիվ հայ տղամարդիկ, գլխավորապես մեծահասակները, հունձի առաջին իսկ օրերից միացյալ ուժերով պարտադիր կարգով պետք է աշխատեին քուրդ Օմար աղայի համար, որն ավարտելուց հետո միայն կարող էին հնձել սեփական արտերը:

Այդպես էր ամեն տարի. նույնն էր նաև այդ ահավոր տարվա դժվարին ամռանը:

Թուրք զավթիչների ձեռքը չընկնելու համար հայ գյուղացիները հացահատիկի բերքահավաքը մեծ մասամբ կատարում էին գիշեր ժամանակ: Չնայած ես անձամբ հունձ անել չէի կարող, բայց և այնպես ոչ մի ժամ պարապ չէի մնում: Բացի խուրձեր կապելուց ու ջուր բերելուց, ընկերներիս հետ քարափների մեջ թաքնվելով, հետևում էի թուրք զավթիչներին: Առանձնապես մեծ ջանասիրությամբ էի կատարում պահակության և հետախույզի պարտականությունները:

Ժամանակները շատ հարուստ էին դեպքերով, հատկապես, երբ թուրք զավթիչները երևում էին հանկարծակի և անմիջապես գործի անցնում: Սակայն քնած չէին նաև մեր հետախույզների ու պահակություն կատարող խմբի մեջ մտնող պատանիները: Նախօրոք պայմանավորված ազդանշանների հիման վրա հայտնում էինք վերահաս վտանգի մասին՝ հնարավորություն տալով երիտասարդ հայ տղաներին ժամանակին թաքնվելու, խուսափելով թուրք զավթիչների ձերբակալումից:

Շատ ծանր էին այդ ահավոր տարվա բերքահավաքի աշխատանքները ոչ միայն գյուղում մնացած տղամարդկանց, այլև կանանց ու անչափահաս պատանիներիս համար:

Հունձն ավարտելուց հետո եղբայրներիս հետ կալսում էինք հավաքված բերքը, տեղավորում դարմանը. անգամ ժամանակ էի գտնում օգնելու Բալաբեկին ու Շուշանիկի հորը՝ Դավիթին: Մի խոսքով՝ աշխատում էի այնպես, ինչպես հասուն մարդը մեծ հոգատարությամբ կխնամեր իր ծնողներին:

*
* *

Արդեն խոր աշուն էր. վերջին երկու օրում եկած ձյունից սպիտակել էին գյուղի շրջակա լեռներն ու սարալանջերը: Այդ կապակցությամբ էլ հայ բնակիչները, աստիճանաբար կտրվելով դաշտային աշխատանքից, մտնում էին իրենց խրճիթները՝ սպասելով ձմեռվա վերահաս դաժան սառնամանիքներին:

Պատերազմի առաջին զորահավաքից ավելի քան հինգ ամիս էր անցել, բայց ռազմաճակատ մեկնողներից դեռևս տեղեկություններ չէինք ստանում: Վերադարձել էր միայն մեկ հոգի, որը չորս ամիս թուրքական բանակում ծառայելուց հետո, վերջին մարտերի ժամանակ ծանր վիրավորվելով, լրիվ հաշմանդամ էր դարձել, իսկ թուրքերը, նրա

զինվորական զգեստները վերցնելով, համարյա թե տկլոր տուն էին ուղարկել: Աշնան վերջին օրերին թուրք ոստիկաններն էլ ավելի ուժեղացրին իրենց կողմից կատարվող խուզարկությունները, այնպես որ հայտնաբերված յուրաքանչյուր հայ մարդ այլևս չէր կարող ազատվել նրանց ձեռքից, այդ իսկ պատճառով էլ գյուղում մնացած առավելապես երիտասարդ տղաները սկսեցին խորը թաքնվել նախօրոք պատրաստված գետնախորշերում:

Մի օր ուշ երեկոյան՝ ընթրիքի ժամանակ, Բադալի կինը՝ Աչանը, դիմելով Մարկոսին, զգուշացրեց.

– Մարկո՛ս ջան, ամեն անգամ հույս դնել հայրիկի վրա չի լինի, պետք է թաքնվես:

– Ա՛յ հարս, որտե՞ղ թաքնվեմ:

– Այնտեղ, որտեղ թաքնվում են ուրիշները:

– Շատերը իրենց խրճիթներում ունեն գաղտնի թաքստարաններ, իսկ մենք չունենք, դրա համար էլ դժվար է ինձ թաքնվել,– ասաց Մարկոսը:

– Ի՞նչ կլինի, որ մենք էլ ունենանք,– խոսակցության մեջ մտավ Մարկոսի կին Անթառամը:

– Այդ մասին պետք է հարցնեմ հայրիկին,– պատասխանեց եղբայրս:

Հաջորդ օրը, երբ հայրս մեր տուն էր եկել, Մարկոսը հարցրեց.

– Հայրիկ, ի՞նչ նորություններ կան ռազմաճակատից:

– Թուրքերի դրությունը լավ չէ. ռուսները Պարսկաստանի վրայով մոտեցել են Բաշկալա քաղաքին:

– Ե՞րբ կհասնեն մեզ մոտ, հայրի՛կ,– հարցրի ես՝ ուրախությունից տեղից վեր թռչելով:

– Դժվար է ասել, բայց դու ուրիշներին ոչինչ չասես այդ մասին,– խիստ զգուշացրեց նա:

– Ոստիկանները ինչո՞ւ են խուզարկում հայերի տները,– հարցրեց դրսից հենց նոր ներս եկած Վարդանը, որին հանդիպել էին մի խումբ զավթիչներ:

Օսմանյան բանակում եղած հայ զինվորների որոշ մասը կանխամտածված, կոտորածից փրկվելու նպատակով արդեն սկսել էր փախչել և թաքնվել լեռներում. դրա համար էլ ոստիկանները հաճախակի խուզարկություններ էին կատարում ոչ միայն հայերի խրճիթներում, այլև կասկածելի բոլոր վայրերում:

Կանխամտածված կոտորածի մասին հայրիկիս հայտնած լուրը կարծես թե սուր դաշույնի պես խոցեց Բադալի կնոջ՝ Աչանի կարոտած սիրտը:

Ամուսնուն բանակ տանելուց հետո նա անասելիորեն տանջվում էր ու մշտապես արտասվում, և եթե չլինեին Աննայի ոգևորիչ խորհուրդները, ապա խեղճ կինը մտածմունքից բոլորովին հալից կընկներ: Այդ օրը՝ երեկոյան, լսելով բանակում եղած հայ զինվորների անհուսալի վիճակի մասին, նրա սիրտն ավելի կոտրվեց, ուստի հուզմունքից չկարողացավ իրեն զսպել և անմիջապես դուրս գնաց: Պակաս չափով չհուզվեցինք նաև մենք՝ երեք եղբայրներով, բայց չհասկանալով ***կանխամտածված կոտորածի*** իմաստը, դեռ շարունակում էինք հարցեր տալ հայրիկիս օրվա անցուդարձի մասին:

Լսելով օսմանյան բանակից հայ զինվորների փախուստի և լեռներում թաքնվելու լուրը՝ բնազդաբար հարցրի.

– Հայրի՛կ, Մարկոսը ցանկանում է թաքնվել, բայց չգիտի, թե ուր:

– Ճիշտ է մտածել, պետք է զգույշ լինել և անհրաժեշտության դեպքում անպայման թաքնվել,– պատասխանեց հայրս:

– Որտե՞ղ և ինչպե՞ս թաքնվել ձմեռվա այս ցուրտ օրերին,– շշուկով հարցրեց դրսից հենց նոր վերադարձած Աչանը, որը հուզմունքից սկսել էր արտասվել:

– Քանի որ լեռներում սառնամանիքների պայմաններում հնարավոր չէ պատսպարվել, ուստի պետք է ներսում որևէ տեղ գտնել,– պատասխանեց նա և տեղից վեր կացավ ու Մարկոսի ուղեկցությամբ գնաց խոշոր եղջերավոր անասունների ախոռը:

Մտնելով ախոռ՝ հայրս մոտեցավ այն պատին, որտեղ մշտապես կուտակված էր լինում անասունների տակ փռելու չոր թրիքը:

Եղբորս օգնությամբ մաքրեցին այն, և ահա շատ անսպասելիորեն երևաց մի մեծ քար, որը բոլորովին նման չէր շարած պատի՝ սովորական քարերից և ոչ մեկին:

Երևացող քարի ճակատը կարծես թե հղկված լիներ, իսկ աջ ու ձախ կողմերից երևում էին երկու խոր փոսիկներ:

Հայրս խնամքով մաքրեց նշված փոսիկներն ու միանգամից դուրս քաշեց: Մեծ եղավ իմ զարմանքը. պատից դուրս բերված քարը ստորերկրյա թաքստարանի դռան փականքն էր: Դրանից հետո, նա նորից մի քար քաշեց, այս անգամ երևաց մութ անցքը, որի երկու կողմում դրված էին ոչ սովորական քարեր, իսկ վերջիններս ծածկված էին կրկնակի հաստ սալիկներով:

– Ահա քեզ գաղտնի թաքստարան, որը շինված է կրկնակի հաստ սալիկներով,– ասաց նա և առաջարեց Մարկոսին մտնել գետնախորշի մեջ:

Նրանք լույս պահանջեցին Աչանից. վերջինս կիսաուրախ դեմքով վազեց տուն, մի րոպե չանցած՝ ձեթի վառված ճրագը գտնվում էր ստորերկրյա թաքստարան մտած Մարկոսի ձեռքում:

*
* *

Տեղեկություններ չստանալով Բադալից՝ Աչանը գիշերները լացով էր անցկացնում. ոչ մի օր, ոչ մի ժամ նա հանգիստ չուներ: Մի խոսքով լացուկոծը մեր տնից անպակաս էր:

Աշնան վերջին օրերի ցուրտն իրեն խիստ զգացնել էր տալիս. մարդիկ լրջորեն նախապատրաստվում էին վերահաս ձմռանը: Ոստիկանների շուրջկալներից խուսափելու նպատակով տղամարդիկ անցյալ ժամանակների պես օդաներ չէին գնում, իսկ կարևոր տեղեկությունները մեկը մյուսին հայտնելու համար օգտագործվում էին խրճիթների պատերի հիմքերից բացված գաղտնի անցքերը: Արդեն սովորություն էր դարձել, որ օրը ցերեկով գյուղում ոչ ոք չէր երևում, իսկ մութն ընկնելուց հետո կին ու տղամարդ, պատսպարվելով սեփական խրճիթներում, իրենց հետևից ամուր կերպով փակում էին դրսի դռները:

Մենք երեք եղբայրներով առավոտվանից մինչև ուշ գիշեր անասունների ախոռից դուրս չէինք գալիս: Մարկոսն ու Վարդանը զբաղվում էին նրանց խնամքով, իսկ ես թաքստարանի մեջ մտնելու փորձեր էի կատարում:

Մեր խրճիթը գետնափոր էր, համարյա թե գետնին հավասար, բայց նա շատ մեծ էր ու ընդարձակ: Տնեցիները երեկոյան պառկելիս իրենց հայացքն ուղղում էին խրճիթի կենտրոնում եղած մեծ երդիկին, որտեղից երևում էր երկնքի մի փոքրիկ կտոր՝ իր պայծառ աստղերով: Այն գտնվում էր գյուղի վերին թաղամասում՝ Կավասարի լանջից քիչ ներքև, եկեղեցուց տասը մետր հեռավորության վրա: Նրա աջ կողմում գտնվում էր Բադալի ամենահավատարիմ ընկերոջ՝ Մովսեսի խրճիթը, ձախում՝ Ապրոյի, իսկ ներքևում՝ մեր սեփական այգին էր, որտեղ ամեն տարի շաղգամ կամ բակլա էինք ցանում:

Գյուղի ներքին թաղամասում ապրող բնակչության զգալի մասը եկեղեցի հաճախելիս մեր խրճիթի տանիքի վրայով էր անցնում, այնպես որ գիշերվա խաղաղ ժամերին շատ պարզ լսվում էին երթևեկողնե-

րի ոտնաձայները. նույնիսկ կարելի էր հաշվել, թե օրական քանի մարդ էր հաճախել եկեղեցու աղոթքներին:

Աշնան վերջին ամսվա օրերից մեկն էր. կլիներ գիշերվա մոտավորապես կեսը. տաք գոմից վերադառնալով տուն՝ եղբայրս անմիջապես հանգցրեց իր ձեռքում բռնած ճրագի լույսը: Շուտով բոլորը քնեցին, իսկ ես օրվա տպավորությունների ներքո հայացքս ուղղել էի դեպի խրճիթի մեծ երդիկը ու մտածում էի, երբ հանկարծ լսեցի գոմի տանիքին նստած մեր շան հաչոցն ու վազքի ձայն դեպի եկեղեցու կողմը: Շան ձայնը սկզբում շատ ուժեղ էր. ինձ թվաց, թե հարձակվում է մի օտարականի կամ գազանի վրա, սակայն նրա հաչոցն ու վազքի ձայնը միանգամից կտրվեցին:

– Ինչո՞ւ կտրվեց շան ձայնը,– հարցրեց տեղից վեր կացած Աչանը:

– Երևի գայլերը խեղդեցին,– պատասխանեցի ես:

– Էկանին այդպես հեշտությամբ խեղդել չէին կարող, – պատասխանեց կողքիս պառկած Վարդանը:

– Սո՛ւս կացեք,– զգուշացրեց Մարկոսը:

Մենք բոլորս շունչներս պահած սպասում էինք Էկանի հետագա շարժումներին: Սակայն մի քանի րոպեից հետո լսվեց խրճիթի երդիկին մոտեցող երկու մարդու ոտնաձայն և շան հևոցը:

– Ծանոթ մարդ է, շունը հևալով փաթաթվում է նրա ոտքերին,– ասաց Մարկոսն ու տեղից վեր կացավ:

Մինչ նա կհագնվեր, խրճիթի մեծ երդիկից երևաց թուրք ասկյարի՝ բաշլուղով[46] ծածկված մի գլուխ: Մի պահ տարակուսանքի մեջ ընկանք:

– Ո՞վ կարող է լինել բաշլուղով մարդը,– հարցրեց Աչանն ու տեղից վեր կացավ:

Սակայն շունը դեռ շարունակում էր հևալ, թռչկոտել դեսուդեն ու ոտքերով դոփել խրճիթի տանիքը:

– Անկարելի է, էկանը օտար մարդու հետ այդպես վարվել չի կարող,– ասաց Վարդանը, և ինքն էլ վեր կացավ:

Շան վարմունքը երդիկի մոտ նստած մարդու նկատմամբ փարատեց մեր տարակուսանքը, և ահա բաշլուղով ծածկված գլուխը վերևից զգուշորեն կախվեց ներս, ու միանգամից լսվեց մեզ բոլորիս հանրածանոթ ու հարազատ ձայնը. Բադալն էր:

Խրճիթի դրսի մեծ դուռը մի ակնթարթում բացվեց, երեք եղբայրներով խելագարի պես միանգամից փաթաթվեցինք Բադալի վզով: Օ՜հ,

[46] բաշլուղ – հաստ կտորից գլխի ծածկոց՝ երկու սուր ծայրերով

ի՜նչ ուրախություն, ինչպիսի՜ հրճվանքով դիմավորեցինք մենք նրան՝ պատկերացնել անգամ չեմ կարող:

Ուրախությունից ու հրճվանքից Աչանն ուշաթափվեց և միայն ամուսնու օգնությամբ հազիվ մի կերպ ուշքի եկավ:

*
* *

Զորակոչման երկրորդ ամսին, Բադալին ու Մովսեսին բաժանելով մյուսներից, ուղարկել էին ռազմաճակատ՝ ռուսական բանակի դեմ կռվելու: Երեք ամսվա համառ կռիվներից հետո օսմանյան բանակն աստիճանաբար սկսել էր նահանջել, սակայն ռուսական առաջապահ զորքերի առաջխաղացումը կանգնեցնելու նպատակով թուրքական հրամանատարությունը առաջ էր քշել հայ զինվորներին՝ որպես թնդանոթի միս, հենց ռազմաճակատի առաջագծում ոչնչացնելու:

Հասկանալով թուրքական հրամանատարության մտադրությունը՝ հայ զինվորները, այդ թվում նաև Բադալն ու Մովսեսը ստիպված էին եղել դասալիք դառնալ: Սկզբում նրանք մտադրվել էին փախչել ու հանձնվել ռուսական բանակի առաջապահ զինվորներին, սակայն հարմար առիթ չգտնելու պատճառով Բադալն իր մի խումբ ընկերների հետ փոխել էին իրենց մտադրությունը, և ահա աշնան վերջին օրերին, երբ թուրքերը ռուսական զորքերի ճնշման տակ թողնում են իրենց զենքերը, օգտագործելով առիթը, ընկերներով դիմել են փախուստի ու դարձել դասալիք:

Այդ գիշեր ուրախությունից մեզնից ոչ ոք չքնեց. սպասում էինք լույսը բացվելուն, թե ով ավելի շուտ հանկարծակի աչքալույս կտա հայրիկին ու Աննային: Վերջապես աղոթարանը բացվեց. սկսվեց աքլորների զիլ կանչը: Հենց այդ ժամանակ էլ կրկին լսվեց էկանի հաչոցն ու վազքը, սակայն ոչ թե եկեղեցու կողմ, այլ դեպի ներքև: Նա, տանիքից ցած թռչելով, հարձակվել էր մեկի վրա, բայց թե ով էր, անհրաժեշտ էր ստուգել:

Վերցնելով Բադալի ատրճանակը՝ Մարկոսը զգուշությամբ դրսի դուռը բացեց, ու Վարդանի հետ դուրս եկան փողոց: Սակայն նրանց դուրս գալն ու շան հանդարտվելը մեկ եղավ. ըստ երևույթին հավատարիմ կենդանին ծանոթի էր հանդիպել. դրա համար հետ դառնալով՝ նա, գոմի ցածր ցանկապատի վրայից թռչելով, կրկին նստեց իր սովորական տեղը: Չնկատելով ոչ ոքի՝ Մարկոսն ու Վարդանը անմիջապես վերադարձան տուն:

– Ո՞վ էր,– հարցրեց Բադալը:

– Ոչ ոք չերևաց:

– Մովսեսը եղած կլինի,– հարկավոր է շանը տուն բերել, իսկ նրան պետք է դիմավորել,– կարգադրեց Բադալը:

– Լույս է արդեն, հարկավոր է թաքնվել,– ասաց Բադալը և տեղից վեր կացավ:

Մենք բոլորս միասին գնացինք դեպի գոմ Գևորգ պապի թաքստարանը մեծ եղբորս ցույց տալու համար: Բացելով ստորերկրյա թաքստարանի անցքը՝ Բադալը փորձեց ներս մտնել, բայց սկզբում չկարողացավ: Նրա մարմինը ոչ մի կերպ ներս չէր մտնում: Փոխելով զինվորական իր գորշ զգեստները՝ վերջապես նա Մարկոսի օգնությամբ հազիվ մի կերպ, դժվարությամբ ներս մտավ:

– Լա՞վ է տեղդ,– հարցրի ես:

– Այդպիսի տեղ դրախտում էլ չեմ գտնի,– ծիծաղելով պատասխանեց Բադալն ու դուրս եկավ:

Մինչև լույսը բացվելը նա, մի քանի անգամ ներս ու դուրս անելով, էլի փորձեր կատարեց. ի վերջո, լրիվ ընտելանալուց հետո նստեց թաքստարանի անցքը փակող քառակուսի քարի վրա՝ սրբելով ճակատից թափվող քրտինքը:

Մի քանի րոպեից Մարկոսի ուղեկցությամբ ներս մտավ Բադալի ամենահավատարիմ ընկեր Մովսեսը, որը քիչ առաջ հարձակման էր ենթարկվել տանիքում նստած էկանի կողմից, սակայն իրեն չմատնելու համար կրկին մտել էր տուն:

*
* *

Աշնան արևի առաջին ճառագայթները ընկել էին լեռների կատարներին, գյուղի նախրչի Սիմոնը մեծ ծառի տակից ձայն էր տալիս նախիրը բերելու մասին, իսկ մեր շատախոս հարևանուհի Ռեհանը իրենց թոնիրը վառելու համար Աչանից կրակ էր ուզում:

– Աղջի՛ Աչան, խե՛ր լինի, այսօր ուրախ ես երևում,– հարցրեց Ռեհանը՝ փչելով մեր թոնրից հանած կրակի փոքրիկ կտորը:

– Լավ երազ եմ տեսել, մորաքո՛ւյր Ռեհան:

– Բարի երազ լինի, աղջի, ո՞ւմ մասին ես տեսել:

– Սևուկի եղբոր մասին:

– Ա՜խ երանի թե եկած լիներ, աշխարհի չափ կուրախանայի,– ասաց Ռեհանն ու կրակը ձեռքին՝ դռան շեմքից հեռացավ:

Պատահական մարդկանց աչքերին չերևալու նպատակով երկու ընկերներ ստիպված էին ժամանակավորապես թաքնվել Գևորգ պապի ձեռքով շինված ստորերկրյա թաքստարանում:

Առավոտյան՝ լույսը բացվելուն պես, երբ Մարկոսն ու Վարդանը զբաղված էին անասուններին դաշտ ուղարկելու գործով, առանց որևէ մեկին ասելու, գյուղի ներքին թաղամասի տանիքների վրայով, վազելով մի շնչով հասա Աննայի տուն:

Քրոջս խրճիթի դուռը դեռ փակ էր, ուստի միանգամից չհամարձակվեցի թակել այն: Զգալով, որ նրանց մշտական տնվորը՝ քուրդ Մամոն, կարող է իմ հանկարծակի երևալով որևէ բան կռահել, շատ զգույշ բարձրացա տանիք և երդիկից կանչեցի Աննային:

Աննան հագնվել էր և նախապատրաստվում էր թոնիրը վառել: Լսելով ձայնս՝ նա ահաբեկված մարդու պես թոնրի կողքից վեր կացավ ու վախվխելով մոտեցավ դրսի դռանը: Իմ անակնկալ հայտնվելու պատճառով առաջին պահին նա չկարողացավ մի բառ անգամ արտասանել, բայց երբ տեսավ դեմքիս վառ ժպիտը, նոր միայն հասկացավ, որ ծիծաղիս մեջ ինչ-որ ուրախություն կա, բարի լուր, ուստի թևիցս բռնելով ներս տարավ:

– Ասա՛, ասա՛, ի՞նչ է պատահել,– հարցրեց նա՝ միաժամանակ համբուրելով լուսաբացի պաղ քամուց սառած այտերս:

– Բադալն է եկել,– ուրախ-ուրախ պատասխանեցի ես՝ պոկվելով նրանից:

Լսելով մեծ եղբոր վերադարձի մասին՝ նա, ուրախության արտասուքն աչքերին, ինձ թողեց սենյակի մեջտեղում ու վազեց դեպի ախոռը՝ խոշոր եղջերավոր անասուններին կերակրող Բալաբեկին աչքալուսանք տալու:

Չսպասելով Աննայի վերադարձին՝ ես մի ակնթարթում հասա Զոզանի խրճիթ, որտեղ վաղուց ապրում էր իմ հայրը: Մոտենալով նրանց դրսի մեծ դռանը՝ մի պահ կանգ առա: Չէի համարձակվում միանգամից ներս անցնել, քանի որ երդվել էի Զոզանի տուն չմտնել:

Քիչ խորհելուց հետո իմ խոսքին տեր դառնալու նպատակով առանց ներս մտնելու հետ շրջվեցի. այն էր՝ ուզում էի դռնից հեռանալ, սակայն առաջս կանգնեց իմ խորթ մայր Զոզանը:

– Ի՞նչ է պատահել այս կեսգիշերով,– հարցրեց նա՝ շեղակի նայելով աչքերիս:

– Ուզում էի հայրիկին բան ասել:

– Ի՞նչ ես ասելու, նե՛րս գնա:

– Հետո կասեմ,– պատասխանեցի ես:

– Եթե հետո ես ասելու, էլ ինչո՞ւ ես հիմա եկել:

Այլևս չուզեցի երկար-բարակ խոսել ու առանց նրան պատասխանելու՝ վերադարձա տուն:

Մեր տնից այնքան հանարծակի էի դուրս եկել, որ Աննայի և հայրիկիս մոտ իմ գնալ ու գալու մասին ոչ ոք չիմացավ. դրա համար էլ բոլորին անսպասելի թվաց քույրիկիս և Բալաբեկի ներս մտնելը:

Աննան մոտեցավ Աչանին, առաջինը նրան համբուրեց, հետո հերթով երեք եղբայրներիս, մեծ եղբոր երկու երեխաներին և իր չորս կողմը նայելով՝ հարցրեց.

– Ո՞ւր է իմ եղբայրը:

– Ո՞վ, ո՞ւմ մասին ես խոսում,– զարմանքով հարցրեց Մարկոսը:

– Դե՛, դե՛, էլ ձեզ ձեռ մի՛ առեք, շո՛ւտ Բադալի տեղը ասեք:

Տնեցիները մի պահ շշմեցին՝ մտածելով՝ մի՞թե գյուղն արդեն գիտե Բադալի դասալիք լինելու մասին:

– Ո՞վ ասաց քեզ,– հարցրեց Մարկոսը:

– Սևուկը:

– Ե՞րբ:

– Առավոտյան շուտ, երբ դուք քնած էիք,– պատասխանեց Աննան:

Մարկոսը նայեց ինձ, իսկ ես կարմրելով ծիծաղեցի:

Մեր խոսակցության վրա հանկարծ դուռը բացվեց, և ներս մտավ նաև հայրիկս, իսկ ես մեղավորի պես թաքնվեցի խրճիթի մեծ սյան հետևում, որտեղ հարկ եղած ժամանակ մշտապես կանգնում էր Աչանը:

– Ո՞ւր է Սևուկը,– հարցրեց հայրս՝ նայելով դեսուդեն, բայց ինձ չնկատելով՝ մոտեցավ Աչանին, որը հենց նոր էր սկսել խմորի հունցը:

– Սևուկն այստեղ էր, ո՞ւր գնաց,– հարցրեց Մարկոսը, ու ինքն էլ սկսեց ինձ փնտրել:

– Ի՞նչ է պատահել,– հարցրեց հայրս՝ նայելով ներկա գտնվողների ուրախալի դեմքերին:

– Ուրախալի լուր, – միաժամանակ պատասխանեցին Աննան և Մարկոսը:

– Ի՞նչ լուր:

– Բադալն է եկել:

– Ո՞ւր է:

– Մովսեսի հետ միասին գտնվում են թաքստարանում,– պատասխանեց Մարկոսը:

– Ա՜յ թե ինչու էր եկել Սևուկը:

– Ո՞ւր էր եկել, – հարցրեց Մարկոսը:

– Ինձ մոտ, – պատասխանեց հայրս:

Դադարեցնելով հարց ու պատասխանները՝ մենք բոլորս հայրիկիս ուղեկցությամբ գնացինք խոշոր եղջերավոր անասունների ախոռ, որտեղ գիշերվանից թաքնվել էին երկու փախստականները:

Հայրիկիս ու Աննայի հանդիպումը Բադալի հետ շատ հուզիչ էր. կրկնվեց այն նույն պատկերը, ինչպիսին էր գիշերվա կեսին, մեր դուռը բացվելու պահին Աննան ագահաբար գրկել էր հարազատ եղբորը և ոչ մի կերպ չէր ուզում պոկվել նրանից: Վերջապես իր կարոտն առնելուց հետո նա մի պահ հետ քաշվեց՝ ըստ երևույթին Բադալին լավ տեսնելու, բայց այս անգամ հայրս, անջատվելով Մովսեսից, գրկախառնվեց որդու հետ ու պինդ-պինդ համբուրեց նրան: Այդ հանդիպումը շատ սրտառուչ էր: Թուրքական բանակ գնալուց հետո լուրեր էին տարածվել հայ զինվորների ոչնչացման մասին. այդ պատճառով Բադալին շատերը կորած էին համարում, ուստի հույսներս կտրել էինք նրանից և ոչ մի կերպ չէինք հավատում, որ նա կենդանի կվերադառնա իր հարազատների գիրկը: Ահա թե ինչու այդ օրը մեր տանեցիների ուրախությանը չափ ու սահման չկար:

Հարազատների հետ ողջագուրվելուց հետո Բադալն ու Մովսեսը մանրամասն պատմեցին ռազմաճակատից իրենց փախչելու դրդապատճառների մասին:

*
* *

Զորահավաքից հետո՝ համարյա թե մեկուկես ամիս շարունակ, թուրքական ժանդարմերիայի խիստ հսկողության տակ, այն էլ անասելի ծանր պայմաններում, նրանք հասել էին ռազմաճակատ: Ձևականության համար 15 օր զինավարժություններ կատարելուց հետո նրանք թուրք ասկյարների ու օֆիցերների խիստ հսկողության տակ քաշվել էին ռուսական բանակի հրետանու ահեղ կրակի տակ՝ առաջին գիծ: Երեքուկես ամսվա համառ կռիվներից հետո վերջապես ռուսական բանակի հուժկու հարձակման պայմաններում թուրքական առաջապահ ջոկատները, թողնելով մի քանի տասնյակ գյուղեր ու քաղաքներ, նահանջելով ամրացել էին արևելյան սահմանների լեռներում ու նոր դիրքեր գրավել: Հենց այդտեղ էլ մի օր՝ ուշ երեկոյան, երբ աստիճանաբար դանդաղում են կրակոցները, խրամատում շրջող սպայի տարբերանշաններով մեկը, մոտենալով հողակույտի հետևում պառկած Բադալին, առաջին իսկ հանդիպման պահին, անհիմն պատճառով ապտակում է նրան:

– Ի՞նչ մեղք եմ գործել, էֆենդի՛ մինբաշի[47],– հարցնում է Բադալը՝ միաժամանակ զինվորական պատիվ տալով իրեն ապտակողին:

– Խրամատը սաղր[48] եք փորել, պետք է խորացնել մեկ արշին ևս,– հրամայում է մինբաշին:

– Կկատարվի,– պատասխանում է զինվորը:

– Կատարե՛ք և ավարտելուց հետո անձա՛մբ զեկուցեք ինձ,– հրամայում է մինբաշին՝ ցույց տալով խրամատներից ոչ հեռու գտնվող իր հրամանատարական կետն ու հեռանում զինվորներից:

– Ինչո՞ւ քեզ խփեց,– հարցնում է զինվորներից մեկը:

– Խրամատս սաղր լինելու պատճառով:

– Մի՞թե օֆիցերը հոգ է տանում զինվորի կյանքի համար:

– Երևի:

– Չի կարող պատահել:

– Իսկ ինչո՞ւ հարվածեց մենակ քեզ,– հարցրին Բադալի կողքին պառկած զինվորները:

– Նրա մարմինը մեծ է, իսկ հասակը բարձր,– խոսակցության մեջ է մտնում թուրք զինվորներից մեկը:

– Լավ է խոսելու փոխարեն խրամատ փորենք. թե չէ ռուսների գնդակներից չենք ազատվի,– առաջարկում է Մովսեսն ու պառկած վիճակում սկսում է խորացնել իր խրամատը, իսկ մյուսները հետևում են նրա օրինակին:

Չնայած հողը չափազանց ամուր էր ու քարքարոտ, այնուամենայնիվ Բադալը երկու ժամվա ընթացքում լրիվ կատարում է իրեն հարվածող մինբաշու հրամանը: Խրամատը փորված էր երկու արշին խորությամբ. այնպես որ թուրք սպան այլևս նրան դիտողություն անել չէր կարող:

Բադալը գնում է մինբաշու դիտակետը՝ նրան զեկուցելու: Գիշերվա մթության մեջ ռուսական զորքերի տեղատարափ կրակից խուսափելու նպատակով նա, երեսի վրա սողալով, հասնում է մինբաշու հրամանատարական կետը:

– Ձեր հրամանը կատարված է, էֆենդի՛ մինբաշի,– զեկուցում է Բադալը:

– Լա՛վ ես արել, հայրենակի՛ց,– ասում է մինբաշին՝ առաջարկելով Բադալին նստել:

Բադալը մի պահ մնում է ապշած, երկու ժամ առաջ իրեն ապտակող մինբաշին այժմ իրեն հայրենակից է անվանում, այն էլ մայրենի լեզվով:

---

[47] մինբաշի (*ադրբ.*), *նույնն է՝* բինբաշի (*թրք.*) – հազարապետ

[48] սաղր – ոչ խորը

– Կներես ինձ քեզ ապտակելու համար, հայրենակի՛ց, բայց ինձ մոտ կանչելու այլ պատրվակ գտնել չէի կարող,– ասում է մինբաշին ու սկսում է իր զրույցը Բադալի հետ:

– Դե ես մեղավոր էի. ուրիշ կերպ չէր լինի,– միամտորեն պատասխանում է Բադալը:

– Ո՞րն է քո մեղքը,– ծիծաղելով հարցնում է մինբաշին:

– Որ խրամատս սաղր էի փորել:

– Պատճառը դա չէր:

– Ես ուրիշ մեղք չունեի:

– Գուցե մեղավոր ենք, որ տաճիկները մեզ կոտորում են,– ասում է մինբաշին:

Բադալը կրկին ընկնում է տարակուսանքի մեջ. ի՞նչ են նշանակում թուրք մինբաշու հարցերը, որոնց մասին ինքը երեքուկես ամսվա ընթացքում երբեք չէր լսել և առնչություն էլ չէր ունեցել մինբաշիների կամ բարձրաստիճան այլ հրամանատարների հետ:

– Ուշքի՛ եկ և ի՛նձ լսի՛ր,– նախազգուշացնում է մինբաշին,– ես քեզ ապտակեցի ինձ մոտ կանչելու նպատակով,– շարունակում է նա, – մի՛ կասկածիր, ես հայ եմ՝ Գերմանիայից եկած, ուզում եմ հայտնել այն ահավոր դեպքերի մասին, որ կատարվում են մեզանից ոչ հեռու՝ թիկունքում:

– Ի՞նչ է կատարվում, էֆենդի՛ մինբաշի,– հարցնում է Բադալը:

– Զինամթերք տեղափոխելու համար բռնի կարգով ռազմաճակատ բերված հայերը թուրքական հրամանատարության գիտությամբ ամբողջապես կոտորվել են, իսկ շուտով կսկսվի նաև հայ զինվորների մասսայական սպանություններ, այն էլ վաղը կամ մյուս օրը մեր զորքերի հարձակվելու ժամանակ,– ասում է հայ մինբաշին:

– Ես ի՞նչ պետք է անեմ,– հարցնում է Բադալը:

– Խիստ գաղտնի զգուշացրո՛ւ հայ զինվորներին, որ նրանք պատրաստ լինեն այսօր կամ վաղը՝ հարձակման ժամանակ փախչելու կամ թե հարմար պահերին հանձնվելու ռուսական բանակի առաջապահ զորամասերին,– ասում է հայ սպան ու առաջարկում Բադալին հեռանալ:

Ահա թե ինչու, երբ սկսվում է մի սոսկալի ու ահեղ ճակատամարտ, թուրք օֆիցերները մահվան սպառնալիքի տակ հրամայում են հայ զինվորներին հարձակման անցնել: Իհարկե, զինվորականի համար թուրք չավուշների հրամանը՝ որպես օրենք, պետք է կատարվեր: Ռուսների առաջապահ զորքերի տեղատարափ կրակի տակ հայ զինվորները հարձակման են անցնում, սակայն մարտի թեժ պահին, երբ նկատում են թի-

կունքից ոչնչացնող կրակի հետևանքները, նոր միայն հավատում են հայ զինվորներին ոչնչացնելու վերաբերյալ մինբաշու նախազգուշացման ճշտությանը:

– Հետո ի՞նչ եղավ,– հարցրեց հայրս:

– Հայ զինվորների զգալի մասը կոտորվեց ինչպես ռուսների, նույնպես և թիկունքից հարձակվող թուրքերի կողմից, իսկ կենդանի մնացածները զինաթափ արվելով ասկյարների խիստ հսկողությամբ թիկունք տարվեցին: Օգտագործելով ստեղծված այդ ժխորը՝ գիշերվա խավար մթության մեջ մենք կարողացանք փախչել ու թաքնվել լեռներում եղած անտառների մեջ,– ասաց Բադալը:

– Ինչպե՞ս կարողացաք արևելյան ռազմաճակատից անվտանգ հասնել այստեղ,– հարցրեց հայրս:

– Ցերեկ ժամանակ թաքնվում էինք լեռներում, անտառների մեջ, իսկ գիշերները շարունակում էինք ճանապարհը:

– Ճանապարհին թուրք ասկյարների հանդիպե՞լ եք, թե՞ ոչ:

– Շատ անգամ, բայց յուրաքանչյուր դեպքում էլ խույս ենք տվել կռվի մեջ մտնել նրանց հետ, բայց մի օր առավոտյան շուտ՝ մի հորդառատ գետ անցնելու ժամանակ, դեմառդեմ հանդիպեցինք երեք ասկյարի:

– Ինչպե՞ս ազատվեցիք նրանցից,– հարցրեց Աննան:

– Մովսեսի զենքը մեզ ազատեց մեր ճանապարհին եղած վերջին վտանգից,– պատասխանեց եղբայրս ու դրսից ներս մտնող Ռեհանին հանդիպելուց խուսափելու նպատակով անմիջապես մտավ իրենց թաքստարանը:

*
* *

1914 թվականի աշնանը ռուսական բանակի առաջին զորամասերը Պարսկաստանի սահմանից մարտերով գրավել էին թուրք-պարսկական սահմանագլխի Բաշկալա քաղաքը: Լավատեղյակ մարդիկ հուսադրում էին Նորդուզի հայերին, որ շուտով փրկվելու են վերահաս վտանգից:

Սակայն ռուսական բանակի առաջխաղացումը կանգ էր առել. ասում էին, թե պատճառը ձմեռվա սաստիկ սառնամանիքն է:

Նորդուզի լեռնաշխարհի սարսափելի սառնամանիքի, բուք ու բորանի պատճառով կյանքը համարյա կանգ էր առել. դրսում շարժվել չէր լինում, բայց դա չէր խանգարում թուրքական իշխանություններին հայ տղամարդկանց բռնի կարգով օգտագործել՝ թիկունքից ռազմաճակատ

շալակներով ռազմամթերք փոխադրելու համար: Ռազմամթերք փոխադրող հայերը հազար անգամ փառք էին համարում զենքը ձեռքներին լինել զինվոր, գնալ ռազմաճակատ, քան թե բեռնված անասուններին նման թիկունքից մինչև ռազմաճակատ, հազարավոր կիլոմետր հեռավորությամբ, այն էլ թուրք ոստիկանների խիստ հսկողության ներքո օգտագործվել որպես բեռնատարներ: Բայց ի՞նչ կարող էին անել: Զինվոր չէին, զենք էլ չունեին ու ծանր բեռները շալակած՝ ձմեռվա սառնամանիքին Խանասորի զարհուրելի ձորով քայլ առ քայլ շարժվում էին դեպի ռազմաճակատ:

Անմարդկային էր թուրք բարբարոսների վերաբերմունքը այն հայերի նկատմամբ, որոնք իրենց հասակի կամ տկարության պատճառով բանակ չէին կանչվել:

Այլ էր ռազմաճակատ գնացող հայ զինվորների վիճակը: Նրանք տարբեր կերպ փախուստի դիմեցին. մի մասը, զենքը ձեռքին, գերվեց ռուսների կողմից, իսկ զինամթերք փոխադրող հայերից և ոչ մեկը կենդանի չվերադարձավ: Նրանք վերադարձի ճանապարհին կոտորվեցին խաբեությամբ, տմարդի ձևով:

Թուրք ասկյարների ու ձմեռվա խիստ սառնամանիքների ահ ու սարսափը մեծ քարի նման ծանրացել էր կրծքներիս, որի տակից դուրս գալ չէր լինում: Ամեն օր, ամեն ժամ խուզարկում էին հայերի խրճիթները, տանում ամեն բան, ինչ ձեռքներն էր ընկնում, իսկ չգտնելու դեպքում հարկադրաբար հացահատիկ էին պահանջում, մսացու, անասուն, յուղ, պանիր, ջվալ, խուրջիններ, պարաններ, գուլպա, տրեխներ, կաշի… մի խոսքով այն ամենը, ինչ հարկավոր էր թուրք զինվորներին: Վա՛յ այն հայ գյուղացուն, ով կհանդգներ չկատարել թուրք ոստիկանի պահանջները: Ով չկատարեր, նա անպայման խեղդամահ կարվեր կամ օրերով արյունաշաղախ պառկած կմնար իր խրճիթի խոնավ անկյուններից մեկում. ուստի հայերը ստիպված էին տալ այն ամենը, ինչ ունեին:

Վերջապես շատ դժվարությամբ ազատվեցինք ձմեռվա երկարատև ու զարհուրելի ամիսներից: Արդեն բացվել էին գյուղամիջյան ճանապարհները, տեղ-տեղ սկսել էին տալիս աշնանային արտերը, սկսել էին հալվել առուների հաստ սառույցները: Ցերեկվա ժամերին արևը տաքացնում էր պատերի տակ նստած հասակավոր տղամարդկանց ու երեխաներին, սակայն մենք բոլորս տխուր էինք ու ընկճված: Հայ մարդկանց երեսից բոլորովին չքացել էր նախկին ժպիտն ու ուրախությունը:

Թուրքական բանակից փախած Բադալն ու Մովսեսը դեռ գտնվում էին ստորգետնյա մութ թաքստարանում՝ սրտատրոփ սպասելով գար-

նան բացվելուն: Գյուղը շրջապատող լեռները դեռ ծածկված էին ձյան հաստ շերտով. այնտեղ ձմեռվա խիստ սառնամանիքի պատճառով հնարավոր չէր պատսպարվել: Ասենք լեռներում թաքնվելու կարիքն էլ դեռ չէր զգացվում, քանի որ խրճիթում պատրաստված թաքստարանը միանգամայն հուսալի կերպով ապահովում էր նրանց անվտանգությունը, եթե չլինեին դավաճանության առանձին դեպքեր: Սակայն ստեղծված պայմաններում դավաճանություն սպասել հարևան գյուղացուց, հնարավոր չէր պատկերացնել: Բադալի, Մովսեսի և մնացած հայ տղաների դասալքության մասին գիտեին նաև մեր հարևան չքավոր քուրդ գյուղացիները: Նրանք հաճախակի հետաքրքրվում և հարցնում էին թաքնված տղաների դրության ու առողջության մասին: Նրանք նույնպես ցավ էին զգում հայերի նկատմամբ թուրք ասկյարների դաժանության համար: Անկարելի էր այլևս երկար ժամանակ ապրել գետնափոր ու խոնավ խրճիթում, անհրաժեշտ էր շուտափույթ կերպով տեղափոխվել մի այլ տեղ, իսկ տեղը միայն լեռներում էր, ուրիշ հուսալի թաքստարան չկար:

Արդեն վեցերորդ ամիսն էր, բայց փախստականները ոչ միայն արևի, այլև լույսի երես չէին տեսել. նրանց աչքերը հանկարծակի վտանգից պաշտպանելու համար հայրիկս շրջկենտրոնից կապույտ ակնոցներ էր բերել, և ահա նրանք պատրաստվում էին հեռանալ և թաքնվել գյուղից ոչ հեռու գտնվող լեռներում: Սակայն մինչ նրանք կպատրաստվեին հեռանալ, մեր խրճիթի դռանը կանգնեց գյուղի հարուստ քուրդ Օմար աղայի մեծ տղան՝ Ջահվարը:

Նա երեք օր ու գիշեր չհեռացավ տեղից, իսկ պատճառը դեռ հայտնի չէր: Ըստ երևույթին նա արդեն իմացել էր Մովսեսի թաքնվելու տեղը, ուստի պահակություն էր անում նրան բռնելու համար, բայց թե ինչու, նույնպես հայտնի չէր:

Այդ անակնկալ դեպքի կապակցությամբ Կարոյի ընտանիքը գտնվում էր ահ ու սարսափի մեջ՝ հազարումի բան մտածելով որդու անվտանգության մասին:

Արդեն չորրորդ օրն էր, քուրդը մեր դռնից չէր հեռանում: Վերջապես հայրս փորձեց միջամտել: Հաջորդ օրը ցերեկով նա, մոտենալով դռնից ոչ հեռու կանգնած Ջահվարին, հարցրեց.

– Ինչո՞ւ եք կանգնել դռանը, համեցե՛ք մեր տուն, Ջահվա՛ր աղա:

– Քո տուն մտնելու մտադրություն չունեմ,– պատասխանեց նա:

– Իսկ ի՞նչն է դրդել Ձեզ երեք օր շարունակ պահակի նման կանգնել մեր դռանը,– հարցրեց հայրս:

– Քո տան մեջ թաքնվում է Կարոյի տղան՝ Մովսեսը, ես նրան եմ ուզում,– ասաց Զահվարը՝ հետուառաջ անելով մեր խրճիթի դիմաց գտնվող հարևանի հարթ տանիքի վրա:

– Մովսեսին եք ուզում, գնացե՛ք նրանց տուն, հարցրե՛ք նրա ծնողներին, նրանք Ձեզ կասեն, թե որտեղ է իրենց որդին:

– Այստեղից ոչ մի տեղ չեմ գնա, Մովսեսը գտնվում է քո տանը. Բադալի հետ թաքնված է գետնախորշում,– պատասխանեց քուրդը:

Հայրիկիս համար պարզ դարձավ, որ Զահվարին հայտնի է ամեն բան, ուստի նա չուզեց նեղացնել գազազած քուրդին ու մեղմորեն հարցրեց.

– Ի՞նչ եք ուզում Մովսեսից:

– Ուզում եմ, որ նա ինձ հանձնի իր գերմանական մաուզերը:

– Ուրիշ էլ ի՞նչ եք պահանջում Մովսեսից,– հարցրեց հայրս:

– Ուրիշ ոչինչ չեմ ուզում, մաուզերը ինձ հանձնելուց հետո նա ազատ կլինի, հակառակ դեպքում հավիտյան գետնափորում կմնա:

– Մովսեսը մեզ մոտ չի գտնվում, իսկ Ձեր պահանջը այսօր ևեթ կհայտնեմ նրա ծնողներին,– ասաց հայրս ու վերադարձավ տուն՝ տանիքում թողնելով կանգնած Զահվարին:

Շատ վտանգավոր էր հարուստ քուրդ Օմար աղայի տղան. նա կարող էր չարիք դառնալ ոչ միայն Մովսեսի, այլև Բադալի համար, ուստի հայրս երկու փախստականների հետ ելք էր որոնում, թե ինչ հնարքով կարող էին տղաները դուրս գալ խրճիթից:

Արևը վաղուց մայր էր մտել, բայց փողոցում կանգնած Զահվարը դեռ շարունակում էր իր պահակությունը՝ սպասելով պատասխանին:

Քնած չէի նաև ես. անընդհատ հետևում էի քուրդ տղայի շարժումներին՝ տեղեկություններ հավաքելով նրա մասին և անմիջապես հաղորդում գետնախորշում թաքնված երկու փախստականներին: Չորրորդ օրը՝ երեկոյան, երբ ընկերներիս հետ միասին մեծ ծառի փչակից դուրս էինք գալիս, հանկարծ նկատեցինք երեք զինված մարդկանց, որոնք գաղտագողի մոտենում էին մեր խրճիթից ոչ հեռու աթարի ամրոցներին: Իհարկե, նրանց երևալն ու անհայտանալը մեկ եղավ. ըստ երևույթին նրանք Զահվարի վարձկաններն էին, որոնք նույնպես հետևում էին Բադալին ու Մովսեսին: Կասկածելի մարդկանց մասին նույն ժամին տեղյակ պահեցի մերոնց:

Դրանից հետո պարզվեց, որ Զահվարն իր վարձկանների միջոցով ուժեղացնում էր հսկողությունը՝ կանխելու Բադալի ու Մովսեսի փա-

խուստը և նրանց զինաթափ անելու: Մեր տնեցիները մտածում էին որևէ հնարքով կազմակերպել երկու ընկերների փախուստը: Սակայն ստեղծված իրադրությունը թելադրում էր միայն զենքի հանձնումը, այլապես երկուսն էլ թաքնված տեղից դուրս գալ չէին կարող, քանի որ մեր տնից դեպի հարևան Ապրոյի խրճիթ տանող գաղտնի անցքը նույնպես հսկողության տակ էր գտնվում:

Այդ իրադրության մեջ էինք, երբ տեղեկություն ստացվեց թուրք ոստիկանների գյուղ գալու մասին: Նրանք գալիս էին գյուղից լրացուցիչ մթերք հավաքելու և նոր խուզարկություններ կատարելու: Հայրս մտածում էր որևէ հնարք գտնել, այլապես թուրքերը կարող էին ամեն ինչ իմանալ և կձերբակալեին թաքնված փախստականներին: Մովսեսի հայրը սկզբում ցանկացավ որդու մաուզերը հանձնել քուրդ Ջահվարին, բայց երբ այդ մասին ասացին Մովսեսին, վերջինս կտրականապես հրաժարվեց՝ հայտարարելով, թե քանի կենդանի է, զենքը թշնամուն չի տա:

– Ես նույնպես կողմնակից չեմ զենքդ թշնամուն հանձնելուն, բայց պետք է որևէ պատասխան տալ Ջահվարին,– պատասխանեց հայրս՝ ընկնելով մտածմունքի մեջ:

– Մտածելու հարկ չկա,– ասաց Բադալը և ավելացրեց,– հենց այս գիշեր կարող ենք նրանց քթի տակից դուրս գալ ու հեռանալ դեպի լեռները:

– Բայց ինչպե՞ս կարող ենք հեռանալ, երբ խրճիթը շրջապատման մեջ է,– ասաց հայրս:

– Ինչքան ուզում են, թող շրջապատեն, ես գիտեմ ինչպես և որտեղից կարելի է դուրս գալ խրճիթից,– ասաց նա և տեղից վեր կացավ, ուղիղ կանգնեց ախոռի մեջ՝ երդիկի տակ՝ աչքի տակով նայելով մութ երկնքին:

– Չլինի՞ թե որոշել ես երդիկից դուրս գալ,– հարցրի ես:

– Այդ ինչո՞ւ դու կարող էիր ձիու մեջքի վրա կանգնած երդիկից դուրս գալ, ես չե՞մ կարող,– հեգնանքով պատասխանեց նա:

– Երդիկից դուրս գալը նույնպես վտանգավոր է, – զգուշացրեց Մարկոսը, որը հենց նոր էր դրսից ներս մտել:

– Այլևս խոսելն ավելորդ է,– ասաց Բադալը՝ առաջարկելով Մովսեսին պատրաստվել գիշերվա կեսին դուրս գալու:

Այդ գիշեր մեզնից ոչ ոք աչք չփակեց. բոլորն էլ մտահոգված էին երկու ընկերների փախուստով:

Վերջապես թառի վրա նստած մեծ աքլորը, թափ տալով իր թևերը, սկսեց զիլ կանչել. նրան հաջորդեց եկեղեցու կոչնակի ձայնը: Հենց այդ ժամանակ էլ Վարդանը միջանցքից բաց թողեց գազազած էկանին: Շան դուրս գալը ու եկեղեցու պարսպի հետևում թաքնված քրդերի վրա հարձակվելը մեկ եղավ: Հենց այդ վայրկյանին էլ Բադալն ու Մովսեսը հարազատներին հրաժեշտ տալուց հետո անմիջապես դուրս եկան երդիկից ու վերին թաղամասի ցանկապատերի արանքով աննկատելիորեն հեռացան դեպի ձյունապատ լեռները:

ԱՀԱՎՈՐ ԳԻՇԵՐ

Գարնանային հորդ անձրևների հետևանքով սկսվել էր ուժգին ձնհալ: Մի քանի օրվա ընթացքում սևացել էին գյուղը շրջապատող հարթավայրերը, սարալանջերն ու խոր-խոր ձորերը:

Ամեն տարի՝ այդ նույն ժամանակ, հայ գյուղացիները՝ մեծից մինչև փոքր, գտնվում էին հանդերում, ոմանք զբաղվում էին վարուցանքով, ոմանք էլ մաքրում էին ձնհալի հետևանքով հեղեղված մայր առուները, իսկ երիտասարդ կանայք ու աղջիկները, բարձրանալով սարալանջերը, մեծ եռանդով հավաքում էին պանիր պատրաստելու համար բանջարեղենի անհրաժեշտ պաշարը: Ի տարբերություն նախորդի՝ այս գարունը խիստ մռայլ էր, մռայլ էր նաև ժողովուրդը՝ տղամարդիկ, կանայք ու պատանիները: Յուրաքանչյուրը, նստած իր խրճիթի դռան առջև, խորհում էր վաղվա մասին, թե ինչ կլինի իր վերջը:

Չնայած գարնանային աշխատանքների եռուն շրջան էր, բայց գյուղացիներից շատերը սիրտ չէին անում գյուղից դուրս գալ՝ ըստ երևույթին նախագուշակելով արտակարգ մի դեպք, ինչը շատ հավանական էր թվում բոլորին: Մռայլ էր եղանակը, մռայլ էր նաև ահ ու սարսափի մեջ ապրող հայ բնակչությունը: Անգամ չափից դուրս գազազած գամփռները, մտնելով ձմեռվա ընթացքում դատարկված աթարի ամրոցները, դադարեցրել էին իրենց հաչոցները: Ուրախ էին միայն նորածին գառներն ու հորթերը, որոնք, ամբողջ օրը բառաչելով, անհոգ թռչկոտում էին դեսուդեն՝ սպասելով արոտից վերադարձող կաթնատու մայրերին, իսկ տաք երկրներից հենց նոր վերադարձած թռչունները, սովորականի պես ծվծվալով, խնամքով շինում կամ վերաշինում էին իրենց բները:

Յուրաքանչյուր հայ բնակչի կտուրից պարզ երևում էին ոչ միայն դեպի գյուղ ձգվող ճանապարհները, այլև սարալանջերի ու դաշտերի միջով անցնող նեղ արահետները:

Գարնանային մի պարզ երեկո էր: Արևը հենց նոր էր թեքվել հորիզոնի այն կողմը՝ իր հետևից թողնելով ծիրանագույն շերտեր: Տղամարդիկ դրսում, քարերի վրա նստած, դեռ շարունակում էին իրենց հուզումնալի զրույցն անցյալում տեղի ունեցած հայ ժողովրդի կոտորածների մասին, իսկ մենք՝ պատանիներս, լրջախոհ լսում էինք հասակավոր մարդկանց հետաքրքիր, բայց տխրալի պատմությունները:

Մայրամուտի թանձր խավարը գնալով իրեն ավելի էր զգացնել տալիս, բայց սկսված պատմությունների վերջը դեռ չէր երևում:

Ռուսաստանից վերադարձած Պտուտանը, շատ խոսելուց հոգնած, տեղից վեր կացավ ըստ երևույթին տուն գնալու համար, սակայն հենց այդ պահին էլ հեռվից երևաց ձիավորների մի մեծ խումբ, որ, Տիգրիս գետն անցնելով, արշավում էր դեպի մեր գյուղ: Պտուտանը փորձեց հաշվել նրանց թիվը, բայց մթնշաղի պատճառով չկարողացավ:

– Տղանե՛ր, ես բարի բան չեմ սպասում դեպի մեզ արշավող ձիավորներից,– ասաց գյուղացիներից մեկը, որը նույնպես նստած տեղից վեր էր կացել:

– Երևի գալիս են կրկին հարկ հավաքելու,– ավելացրեց Հարությունը՝ ընդհատելով իր հետաքրքիր պատմությունը:

– Գուցե իմացել են, որ մեր գյուղում ֆիդայիներ կան,– ասաց Շուշանիկի հայրը և միաժամանակ հորդորեց հավաքվածներին անմիջապես հեռանալ:

Սակայն նրանք չէին հասցրել վերջացնել իրենց խոսակցությունը, երբ հարյուրից ավելի թուրք զինվորներ արշավելով մտան մեր գյուղ՝ շրջանցելով հայերի ներքին թաղամասը, ու կանգ առան Օմար աղայի օդայի առջևում եղած հրապարակում: Վախենալով թուրք զինվորների դեռ ոչ հայտնի մտադրությունից՝ հավաքված մարդիկ անմիջապես ցրվեցին ու մի ակնթարթում թաքնվեցին իրենց խրճիթներում: Ես, որ մեծ հետաքրքրությամբ լսում էի նրանց խոսակցությունները, նույնպես հեռացա ու ներքին թաղամասի հարթ տանիքների վրայով վազելով՝ հասա մեր տուն:

Մերոնք բոլորն էլ տանն էին. բացակայում էր միայն հայրս: Նա քիչ առաջ ինչ-որ գործով դուրս էր եկել, բայց դեռ չէր վերադարձել, իսկ մեծ եղբայրս՝ որպես փախստական, մեկ ամսից ավելի գտնվում էր լեռներում, բայց թե որտե՛ղ, ո՛ր քարայրում, մեզնից ոչ ոք չգիտեր:

Արևը վաղուց մայր էր մտել. գյուղն ամբողջապես ընկղմված էր թանձր խավարի մեջ, բայց մեր տնեցիները՝ մեծից մինչև փոքրը, դուրս էին եկել խրճիթից ու հավաքվել հարևան ցանկապատի տակ՝ անհամբեր սպասելով, թե ով ինչ լուր կբերի:

Լսելով թուրք զինվորների անսպասելի հայտնվելու մասին՝ մեզ մոտ հավաքվեցին նաև մեր հարևանները՝ տղամարդիկ, կանայք ու պատանիներ՝ որևէ տեղեկություն իմանալու: Մի քանի րոպե սպասելուց հետո համբերությունս հատեց, և հավաքվածներից գաղտնի մոտ գտնվող ցանկապատի վրայով մի կերպ անհայտացա: Մտնելով իմ ընկերոջ մեծ խրճիթը՝ ես նրանց գաղտնի անցուղիով դուրս եկա ներքին թաղամաս և այնտեղից ցանկապատերի արանքով ընդհուպ մոտեցա Օմար աղայի պալատին, որտեղ դեռ կանգնած էին ձիավորները: Ոչ ոք ինձ չէր նկատում, բայց ես Օմար աղայի պալատի հարակից խրճիթների կտուրից պարզ տեսնում էի բոլորին, անգամ կարող էի հաշվել հրապարակում կանգնած ձիավորներին: Եկած օսմանցիներին ուշադիր զննելուց և հաշվելուց բացի, ես մեծ հետաքրքրությամբ ուզում էի իմանալ նրանց մտադրություններն ու խոսակցությունը, սակայն այդ բանը ինձ չհաջողվեց: Շուտով Օմար աղայի օդայից դուրս եկավ քրդական շեյխերից մեկը ու հրամայեց ձիավորներին շրջապատել գյուղը:

Պատանեկան մեծ հետաքրքրությամբ հաշվելով թուրք զինվորներին՝ ես գյուղի երկու թաղամասերն իրարից բաժանող ցանկապատի արանքով կրկին վերադարձա նույն տեղը, որտեղից մի քանի րոպե առաջ աննկատելիորեն անհայտացել էի: Ինձ չմատնելու նպատակով գաղտագողի մոտեցա հավաքվածներին, որոնք անհանգստացած խոսում էին թուրք զինվորների հանկարծակի երևալու մասին:

Հավաքվածների թիվը զգալիորեն շատացավ: Կանայք սկսել էին ախուվախով ներսուդուրս անել, իսկ տղամարդիկ դեռ շարունակում էին գուշակել թուրք զինվորների գալու նպատակը: Անչափ անհանգստանալով՝ արդեն ուզում էին ցրվել, սակայն հենց այդ պահին էլ հայրս, համարյա թե վազելով, մեր և հարևանի խրճիթներն իրարից բաժանող ցանկապատից իրեն ցած գցեց ու արագ մոտեցավ նրանց: Նա շատ այլայլված էր. առաջին վայրկյանին խոսել անգամ չկարողացավ. ես երբեք նրան այդպես չէի տեսել: Նա մի պահ կանգ առավ, նայեց չորս կողմը, ըստ երևույթին փնտրում էր զավակներին, և հանկարծ լսվեց նրա ոչ սովորական ձայնը.

– Ի՞նչ եք կանգնել, ա՛յ մարդիկ, շո՛ւտ փախեք դեպի լեռները, թուրքերը եկել են՝ հայերին կոտորելու,– համարյա թե բղավելով՝ հայտարարեց նա ու մտավ տուն՝ իր թաքցրած զենքը վերցնելու:

Հավաքվածները մի ակնթարթում ցրվեցին, իսկ նա, հրացանը թևին գցած, Մարկոսի հետ վազելով, դուրս եկավ գյուղից՝ ուղղություն վերցնելով դեպի Ծաղկասարի լեռները: Լսելով հայերին կոտորելու մասին հայ-

րիկիս բերած անսպասելի լուրը՝ ես ու Վարդանն արտասվելով կրնկակոխ հետևում էինք նրանց: Գյուղից դուրս գալով՝ մենք համարյա թե հասել էինք ջրաղացի անտառի եզրին, որտեղից ոչ հեռու գտնվում էր իմ մորաքրոջ միակ խրճիթը: Նրանք մեզ դեռ չէին նկատել ու շարունակում էին արագացնել իրենց քայլերը, իսկ մենք՝ երկու եղբայրներս, աննկատելիորեն վազելով, աշխատում էինք նրանցից հետ չմնալ: Մոտենալով անտառին, չգիտեմ ինչու, հանկարծ հայրս կանգ առավ ու մի պահ հետ նայեց. իհարկե, ես ու Վարդանը այլևս նրանցից թաքնվել չէինք կարող: Տեսնելով մեզ՝ նա շատ զայրացավ ու միաժամանակ առաջարկեց անմիջապես վերադառնալ ու ժամանակավորապես թաքնվել գետնախորշի մեջ՝ խոստանալով երկու օրից հետո Մարկոսին ուղարկել՝ մեզ տանելու: Սակայն ես ու Վարդանը անդրդվելի կերպով մեխվեցինք տեղում՝ նպատակ ունենալով ոչ մի քայլ հետ չմնալ նրանցից:

– Հե՛տ դարձեք, թե չէ ցրտից կմեռնեք,– ասաց Մարկոսը՝ թևիցս բռնելով:

– Չենք մեռնի, մե՛զ էլ տարեք,– աղաչում էի ես:

– Դա անհնարին է,– ասաց հայրս ու մոտեցավ մեզ երկուսիս՝ համոզելու վերադառնալ:

Տեսնելով նրա մեծ հուզմունքը՝ այլևս չուզեցի հակառակել նրան, ուստի մի պահ լռելուց հետո, կարծես թե օտարությունից վերադարձած ու կարոտից կուրացած մարդու նման արտասվելով, փաթաթվեցինք միմյանց:

Չնայած մեզ մոտեցող մահացու վտանգին՝ այնուամենայնիվ ես նրան բռնել էի ու անընդհատ համբուրում էի, իսկ ինքը երկուսիս սեղմել էր իր կրծքին. կարծես թե բաց թողնելու ցանկություն չուներ:

Մեր գրկախառնվելու այդ հուզումնալի պահը և համբույրները եղան վերջինը: Ես այլևս նրան չտեսա:

Այդ մութ երեկոյան՝ մեր ոչ սովորական գրկախառնումից հետո, նա կարգադրեց Մարկոսին ինձ ու Վարդանին ուղեկցել մինչև մորաքրոջ խրճիթն ու վերադառնալ:

Մորաքրոջս տունը շատ մոտ էր. մենք վազելով մի քանի րոպեից հասանք այնտեղ, սակայն դուռը ներսի կողմից ամուր փակված էր: Բայց բավական եղավ մի թակոց, և այն բացվեց, ու մենք արտասվելով ընկանք մորաքրոջս գիրկը:

Ինձ ու Վարդանին դեպի ներս հրելով՝ Մարկոսն ուզեց հեռանալ, դժբախտաբար ուշ էր արդեն. շատ մոտ լսվեցին վազող թուրքերի նախազգուշացումները ու լպիրշ հայհոյանքները:

Գյուղն արդեն լրիվ շրջապատման մեջ էր, իսկ մենք փաստորեն մնացել էինք նրանց սեղմ օղակում: Դուրս գալու համար ուրիշ ոչ մի ելք չէր մնացել. ուստի եղբայրս ստիպված էր խրճիթի դուռն ամուր փակել՝ սպասելով բախտի քմահաճույքին: Մորաքրոջս ամուսինը, լսելով թուրք ձիավորների գալու մասին, կես ժամ առաջ փախել էր, տանը մնացել էր մորաքույրս՝ իր երեք փոքրիկ երեխաներով, որոնք նստել էին թոնրի շուրջն ու լաց էին լինում: Միջանցքից ներս գալով՝ մենք դեռ չէինք նստել, երբ հրացանների խզակոթերով թակեցին խրճիթի դուռը: Ավազակներն այնպես էին հարվածում, որ քիչ էր մնացել կաղնու փայտից շինված մեծ դուռը ջարդուփշուր լիներ: Չսպասելով երկրորդ անգամ թակելուն՝ Մարկոսը գնաց, որ բացի դուռը, բայց մորաքույրս արգելեց. միամիտ կինը կարծում էր, թե դուռը ամուր փակելով՝ կազատվի թուրքերից:

Վայրկյան չէր անցել, երբ լսվեցին հայհոյանք և հրացանի կրակոցներ, դրա հետ նաև դռան ուժեղ չխկչխկոց.

– Դուռը կկոտրեն, մորաքո՛ւյր, հարկավոր է բաց անել,– ասաց Մարկոսն ու մոտեցավ խրճիթի դռանը:

Ես ու Վարդանը մորաքրոջս հետ նստած էինք թոնրի շուրջ ու շունչներս պահած՝ մտածում էինք, թե ինչ կլինի մեր վերջը:

Դուռը բացվելուց հետո ներս մտան ոտքից գլուխ զինված երեք թուրք:

– Քո փաստաթուղթը,– դիմեց Մարկոսին առաջ եկող թուրքերից մեկը:

Եղբայրս ծոցագրպանից հանեց զինվորական ծառայությունից ազատվելու վերաբերյալ իր վկայականն ու անմիջապես հանձնեց նրան, սակայն վերջինս, ըստ երևույթին անգրագետ լինելով, առանց ստուգելու այն մի կողմ շպրտեց ու մյուսներին հրամայեց խուզարկել բնակարանը. էլ տեղ չմնաց, որ տակնուվրա չանեին, բայց իրենց համար կարևոր ու պետքական ոչինչ չգտան: Ամբողջ տունը խուզարկելուց հետո թուրքերը վերջապես մոտեցան մեզ: Ձննելով Մարկոսի նոր կարված զգեստը՝ թուրքերից մեկն առաջարկեց նրան հանվել: Եղբայրս սկզբում դիմադրեց, բայց վերջիվերջո ստիպված էր կատարել ավազակի ցանկությունը:

– Մենք եկել ենք ձեզ կոտորելու, եթե դուք մեզ վճարեք 20 ոսկի, ապա ազատ կլինեք,– առաջարկեց թուրքերից մեկը:

– Մենք ոսկի չունենք ձեզ տալու, արե՛ք այն, ինչ հրամայել է ձեր տերը,– պատասխանեց եղբայրս:

Թուրքերը տեսնելով, որ, իրոք, մենք փող չունենք և նրանց կաշառք տալ չենք կարող, այլևս երկար չսպասեցին. կապկպելով Մարկոսի թևերը՝ ծեծելով դուրս տարան:

Ավազակները, զբաղված լինելով Մարկոսով և իրենց թալանով, ըստ երևույթին մթության մեջ ինձ ու Վարդանին փոքրիկ աղջկա տեղ էին դրել. սկզբում բոլորովին ուշադրություն չդարձրին մեզ վրա, բայց երբ կրկին վերադարձան, այս անգամ ստիպեցին նստած տեղից վեր կենալ: Լսելով ավազակների հրամանը՝ մենք երկուսով էլ վեր կացանք ու կանգնեցինք սյունից կախված ձեթի ճրագի թույլ լույսի դեմ դիմաց՝ նրանց աչքերին լավ երևալու համար: Վարդանը ինձնից մեծ ու փարթամ էր, ուստի խիղճը կորցրածները նրան ծեծելով դուրս տարան, իսկ քիչ հետո, համարյա թե քարշ տալով, տարան նաև ինձ:

Գիշերվա թանձր մթության մեջ մեզ տարան քուրդ Օմար աղայի մեծ օդան, որն այդ գիշեր փաստորեն վերածվել էր բանտի: Դրսից ինձ հրեցին բանտի ներսը, և ես անսպասելիորեն ընկա իմ սիրելի եղբայր Մարկոսի գիրկը, բայց հետո դուռը կրկին փակվեց մեզ վրա:

Մի խոսքով՝ գարնանային այդ մռայլ ու խավար գիշերը տասներկու տարեկան հասակում ես առաջին անգամ դարձա բանտարկյալ:

Օմար աղայի հսկա շենքը լիքն էր բանտարկյալներով: Ձերբակալել էին վեց տարեկանից բարձր արական սեռի ներկայացուցիչներին: Բարեբախտաբար շատերին հաջողվել էր շրջապատումից դուրս գալ ու փախչել դեպի լեռները, իսկ որոշ մասն էլ ուղիղ դեպի ասորիների երկիրը: Բանտարկված լինելով՝ մենք՝ երեք եղբայրներ, քաջ գիտեինք, թե ինչ է սպասում մեզ վաղն առավոտյան, սակայն մենք անսահմանորեն ուրախ էինք, որ փրկվել էին հայրիկս ու մեծ եղբայրս՝ Բադալը:

Այն պահին, երբ մենք, մահվան դատապարտված, գտնվում էինք զինված մարդասպանների սեղմ օղակի մեջ, այդ նույն ժամանակ էլ նրանք իրենց փրկությունն էին գտել Ծաղկասարի ձյունապատ բարձր լեռներում: Ընտելանալով բանտի միջավայրին՝ ես, իմ սովորության համաձայն, սկսեցի հետաքրքրվել, թե ինչ է կատարվում բանտի ներսում: Շրջելով բանտի խավար մթության մեջ՝ հանկարծ ականջիս հասան փախչելու վերաբերյալ խոսակցություններ, որին մասնակցում էր նաև եղբայրս: Մի պահ սրելով ուշադրությունս՝ ինձնից ոչ հեռու կանգնած տղաների մոտից լսվեց ինչ-որ անցք բաց անելու անհրաժեշտության մասին միտք, բայց թե ինչ անցքի մասին էր խոսքը, սկզբում չհասկացա, սակայն երբ Մարկոսը մոտեցավ հեռավոր պատին և սկսեց նրա խարխլված հիմքից քարեր տեղահան անել, նոր միայն պարզ դարձավ, թե ինչ մտադրություն ունեին նրանք ու ինչ են ուզում անել:

Մարկոսի, Ռուբենի և մի քանի այլ տղաների եռանդուն ջանքերի շնորհիվ շուտով բանտի հիմքից դուրս բերվեցին բավականին քանակությամբ մեծ-մեծ քարեր, սակայն փրկության անցքը դեռ բացված չէր: Երիտասարդները աշխատում էին շատ զգույշ, որպեսզի դրսում եղած թուրք պահակները չկարողանան որևէ ձայն լսել:

Արդեն կեսգիշեր էր. մարդասպանները դեռ շարունակում էին բանտ բերել նորանոր մարդկանց, որոնց հայտնաբերել էին գաղտնի թաքստոցներում:

Վերջապես երիտասարդ տղաներին հաջողվեց փրկության անցք բացել դեպի բանտի մուտքի հակառակ կողմը, որտեղից դուրս գալն այնքան էլ դժվար չէր: Լայնացնելով պատի մեջ բացված ճեղքը՝ նրանք պայմանավորվեցին ապահովության նպատակով սկզբում հետախուզել բանտի շրջապատը և ապա նոր միայն կազմակերպել ձերբակալվածների փախուստը:

Իհարկե, հետախույզի պարտականությունը կատարելու համար շատ ցանկացողներ եղան, բայց փախուստը նախաձեռնողների մեծ մասը նպատակահարմար գտավ Մարկոսին ուղարկել, իսկ նրա չվերադառնալու դեպքում՝ երիտասարդ Ֆահրադ Մանուկյանին:

Ինձ և Վարդանին մի կերպ նստեցնելով օդայի անկյուններից մեկում՝ Մարկոսն առանց հապաղելու մտավ անցքի մեջ և երեսի վրա սողալով՝ մի ակնթարթում բանտից դուրս եկավ: Չնայած նրա գնալուց դեռ րոպեներ էին անցել, բայց և այնպես ժամանակը շատ դանդաղ էր անցնում: Բանտարկվածների զգալի մասը լարված, շունչները պահած շրջապատել էին անցքը՝ անհամբեր սպասելով հետախույզի վերադարձին:

Չգիտեմ՝ շատ ժամանակ էր անցել, թե քիչ, հանկարծ խոր լռության մեջ դրսից լսվեցին հրացանի կրակոցներ, որի պատճառով բանտի ներսում իրարանցում սկսվեց, անգամ դժգոհություններ եղան Հարությունն Եղոյանի ու երիտասարդ տղաների ձեռնարկած փրկարար միջոցառումների վերաբերյալ:

– Ինչո՞ւ ուղարկեցիք, խեղճ տղան սպանվեց,– դժգոհությամբ խոսում էր հատակին պառկած վաթսուն տարեկան տիրացուն:

– Հանգի՛ստ կացեք, հիմա կպարզենք,– ասաց Հարությունն ու մոտեցավ անցքին:

Սակայն մինչ նա կմտներ անցքի մեջ, այդ նույն պահին էլ բանտի խավարի մեջ լսվեց հետախուզությունից վերադարձող Մարկոսի ուրախ ձայնը:

– Ամեն ինչ կարգին է,– ասաց նա և տղաներին առաջարկեց մեկ-մեկ դուրս գալ անցքից:

Լսելով նրա ձայնը՝ տղաները շրջապատեցին Մարկոսին և սկսեցին հարցնել դրսում տիրող դրության մասին:

– Հարցնելու ժամանակը չէ, շուտ դո՛ւրս եկեք,– կրկնեց նա՝ առաջ հրելով Հարություն Եղոյանին, բայց վերջինս հրաժարվեց առաջինը դուրս գալ:

Հետախույզի անսպասելի վերադարձն ուրախացրեց բոլորին. անգամ աշխուժացավ անհանգստացած տիրացուն: Նա նույնպես, տեղից վեր կենալով, մոտեցավ եղբորս՝ զբաղեցնելով տղաներին իր ծանրակշիռ հարցերով:

Տրված հարցերից պարզվեց, որ Մարկոսը հետախուզել էր բանտի ու դրա հարակից տների ամբողջ տարածքը, ինչպես նաև գյուղից դուրս գալու հնարավոր բոլոր ուղիները:

Թուրք մարդասպանները բանտի պահպանության համար թողել էին միայն տասը հոգի, որոնք մեղմ անձրևի պատճառով մտել էին շենքի միջանցք, իսկ մնացածները, ցրված լինելով գյուղի մեջ, դեռ շարունակում էին խուզարկել հայ բնակիչների խրճիթները ու կողոպտել նրանց ունեցվածքը:

– Այդ ի՞նչ կրակոցներ էին,– հարցրեց տղաներից մեկը:

– Հարությունի հայր Եղոն, ծանր հիվանդ լինելով, չէր կարողացել տեղից վեր կենալ. մարդասպանները նրան ոտքերից բռնած դուրս էին քաշել և դռան առաջ գնդակահարել,– շշուկով պատասխանեց Մարկոսը:

– Խոսակցության ժամանակը չէ, տղանե՛ր, պետք է հերթով դուրս գալ և փախչել,– առաջարկեց Շուշանիկի հայր Դավիթը:

– Առաջինը թող դուրս գան երիտասարդները,– առաջարկեց հասակավորներից մեկը, որը նստած տեղից չէր ուզում շարժվել:

– Օսմանցին երիտասարդ թողե՞ց, որ առաջինը դուրս գան,– հեռվից ինքն իրեն խոսում էր ծերացած տիրացուն:

– Թեկուզ մեկը լինի, կենդանի մնացածներին պետք է փրկել,– նորից պնդեց հասակավոր մարդը, որի երկու տղաներին առաջին իսկ զորահավաքին ռազմաճակատ էին տարել:

Իրոք, հայ երիտասարդության մեծ մասը հարկադրաբար քշվել էր ռազմաճակատ՝ կոտորվելու, իսկ որոշ մասն էլ թուրք ոստիկանների հետապնդումից ազատվելու նպատակով փախել էր տարբեր ուղղություններով, բայց թե նրանք կենդանի էին, թե սպանված, ոչ ոք չգիտեր:

Մի խոսքով, այդ ահավոր գիշերվա ընթացքում բանտարկվածների հիմնական մասը՝ հիսունից բարձր կամ մինչև տասնութ տարեկան պատանիներ էին: Անցքից դուրս գալու ու փրկվելու առաջնությունը տղա-

ները զիջում էին մեկը մյուսին՝ անտեղի կորցնելով թանկագին րոպեներ: Վերջիվերջո, որոշվեց առաջին հերթին դուրս հանել գյուղի պատվավոր ու հեղինակություն ունեցող մարդկանց, ապա նոր միայն մյուսներին հերթականությամբ՝ յուրաքանչյուր ընտանիքից մեկական մարդ:

– Ժամանակը թանկ է, տղանե՛ր, պետք է շտապել, – առաջարկեց Հարությունը, որի երկու եղբայրները նույնպես գտնվում էին բանտում, իսկ հայրը սպանվեց մի քանի րոպե առաջ:

Մոտենալով անցքին՝ Մարկոսն իր ընկերների հետ համարյա թե ուժով հրեցին Հարությունին դեպի պատը՝ նրան առաջինը դուրս բերելու: Նա կռանալով մտավ անցքի մեջ ու ճարպկորեն մեկ ակնթարթում դուրս եկավ բերդից: Նրան հետևեցին ևս չորս հոգի, իսկ հինգերորդ փախստականը Շուշանիկի հայր Դավիթն էր, որն իր հաստ ու հաղթանդամ մարմնով մնացել էր անցքի մեջ. ոչ կարողանում էր դուրս գալ և ոչ էլ հետ գալ: Կանգնած երիտասարդ տղաները սկսեցին օգնել նրան, բայց իզուր էր. հայ բանտարկյալների փախչելու հնարավորություններից մեկն արդեն կանխված էր:

Շուտով բանտի դուռը բացվեց. տասից ավելի զինված թուրքեր դրսից ներխուժեցին և, հարձակվելով անցքի մոտ կանգնած մարդկանց վրա՝ սկսեցին հրացանի խզակոթերով հարվածել նրանց: Դեն հրելով տղաներին՝ ավազակները անցքից դեպի ներս քաշեցին դեռ երեսի վրա պառկած Դավիթին ու ձեռնամուխ եղան կանխելու ձերբակալված հայերի փախուստը:

Զինված պահակները նկատել էին անցքից դուրս եկող բանտարկյալներին. սկզբում կարծել էին, թե իրենցից են, սակայն երբ բանտի դռան հակառակ կողմից փախչողները վազելով դուրս էին եկել գյուղից, նոր միայն գլխի էին ընկել, որ բանտից փախուստ է կազմակերպվել: Բարեբախտաբար, Հարությունին և նրա հետ փախչող չորս ընկերներին հաջողվել էր թուրք պահակների քթի տակից ճարպկորեն դուրս պրծնել ու անհայտանալ մոտակա ձորակում:

Բանտից փախչելու հնարավորությունը կանխելուց հետո կրկին բացվեց բանտի դուռը, և միանգամից ներս մտան ոտքից գլուխ զինված քսանից ավելի մարդասպաններ:

– Ձեզանից ո՞վ է քանդել բանտի պատը,– հարցրեց մարդասպաններից մեկը՝ գոտկատեղից հանելով կեռ դաշույնը, սակայն նրա հարցը մնաց անպատասխան, նա կրկին հարց տվեց. այս անգամ նույնպես պատասխան տվող չեղավ:

Բանտարկվածների լռությունից գազազած թուրք մարդասպանները քաշքշեցին մարդկանց ու մտրակներով սկսեցին հարվածել՝ ստիպելով ասել, թե ովքեր են եղել բանտից դեպի դուրս անցք բացելու նախաձեռնողները: Չստանալով իրենց հարցի պատասխանը՝ նրանք երեսի վրա պառկեցրին նախ Դավիթին, տանուտեր Մանուկին, տիրացուին և սկսեցին մտրակներով հարվածել, սակայն ավազակները տանջվողների ծանր տնքոցից բացի այլ պատասխան չստացան:

Թուրք մարդասպաններից մեկը իր սուր դաշույնով կտրեց Դավիթի ականջը, հրացանի խզակոթով ջարդեց նրա գլուխը, բայց կրկին ոչինչ չիմացավ: Թուրքերից երկու հոգի դրսից ներս բերին երեք-չորս կատու, որոնք կապված էին բարակ թոկերով: Իհարկե, սկզբից չհասկացա դրանց բերելու նպատակը, բայց երբ նրանք կապեցին Դավիթի լայն շալվարի փեշերն ու կատուներին ուժով հրեցին դրա մեջ, նոր միայն հասկացա, թե ինչ ահավոր տանջանք է սկսվում նրա համար: Պառկած դիրքից ոտքի վրա կանգնեցնելով Դավիթին՝ ավազակները նրա մերկ մարմնի վրա սկսեցին կռվեցնել չանգռող կատուներին: Իհարկե, այդ տեսարանն ավելի անտանելի ու զարհուրելի էր, քան թե մահվան դատապարտված Դավիթի մեկ ականջի կտրելը: Դավիթը չդիմացավ ու մեռածի պես փռվեց գետնին, իսկ կատուները շարունակում էին իրենց կռիվը նրա մերկ մարմնի վրա: Տեսարանը շատ սարսափելի էր. մանրամասն պատմել հնարավոր չէ, բայց մի՞թե կարելի է պատմել և գրի առնել այն ամենը, ինչ տեղի ունեցավ այդ ահավոր ու սարսափելի գիշերվա ընթացքում բանտի չորս պատերից ներս:

Լույսն արդեն բացվել էր. մարդասպանները նախապատրաստվում էին իրենց զոհերին դուրս բերելու: Վերջապես բանտի դուռը բացվեց, որտեղից ներս խուժեցին թուրքերն ու քուրդ հանցագործները: Նրանք կրկին խուզարկում էին բանտարկվածների գրպանները, բայց, իհարկե, անօգուտ. այն, ինչ կար հայերի մոտ, բռնի կերպով վերցրել էին բանտարկելու պահին, նրանց մոտ այլևս ոչինչ չէր մնացել:

Խուզարկությունից հետո կեռ դաշույնը ձեռքին բռնած մի թուրք հրամայեց բանտարկյալներին մեկ-մեկ դուրս բերել:

Առաջինը քաշ տալով, կիսամեռ վիճակում դուրս տարան Շուշանիկի հայր Դավիթին, նախկին ռես Մանուկին, նրա մեծ տղա Վարդգեսին, Ղազարին, Ավագին և ուրիշներին: Վերջապես հերթը հասավ Մարկոսին: Մենք՝ երեք եղբայրներ, իրար բռնած, դուրս եկանք ու սրով զինված թուրքի ուղեկցությամբ մտանք բանտի առջևի հրապարակը, որտեղ մարդասպաններն իրենց սեղմ օղակի մեջ էին առել դուրս բերված բոլոր ձերբակալված հայերին:

Գարնանային արևը հենց նոր էր դուրս եկել Ծաղկասարի հետևից: Հրապարակից պարզ երևում էին ծյունապատ լեռները, կանաչին տվող դաշտերն ու սարալանջերը: Գյուղը մի գիշերվա մեջ կարծես ամայացել էր: Մեզ շրջապատող մարդասպաններից բացի ուրիշ ոչ մի կենդանի արարած չէր երևում. անգամ իրենց բներից հեռացել էին երեկվա ծվծվացող թռչունները:

Բանտարկյալները սեղմ շարքերով մեխվել էին հրապարակի կենտրոնում՝ սպասելով իրենց վերջին դատաստանին:

Ահա Օմար աղայի պալատից դուրս եկավ թուրքերի զինված մի մեծ խումբ ևս, որին առաջնորդում էր սպիտակ չալման գլխին դրած շեյխը: Նրանք մոտեցան մեզ շրջապատող պահակների շղթային ու կանգ առան: Ես աչքի տակով նայում էի շենքից դուրս եկած այդ ավազակներին ու նրանց գլխավորող շեյխին: Վերջինս, երեսը շրջելով դեպի մեզ, քթի տակ ինչ-որ բան մռթմռթալուց հետո նորից շրջվեց: Նա, մի պտույտ կատարելով բանտարկյալների շուրջը, երկու զինված մարդկանց ուղեկցությամբ մոտեցավ մեզ՝ ուշադրությամբ զննելով բոլորիս և հետո ուղիղ նայեց իմ աչքերին: Ես զզվանքով գլուխս թեքեցի՝ խուսափելով նրա սարսափելի դեմքը, մանավանդ նրա արյունոտ աչքերը տեսնելուց: Նա դեռ նայում էր բոլորին, ըստ երևույթին որոնում էր ինչ-որ մեկին, բայց չէր կարողանում ճանաչել: Չգտնելով իր ցանկացած անձնավորությանը՝ նա շրջվեց դեպի Օմար աղան, որը հենց նոր էր դուրս եկել իր բնակարանից:

– Չկարողացա՞ր որսալ փախած գյավուրին,– հարցրեց շեյխը:

– Որի՞ մասին է խոսքը,– պատասխանեց Օմար աղան՝ ավելի մոտենալով շեյխին:

– Իլ գյուղից փախած Մխիթարի,– խոսքն իմ հայրիկի մասին էր:

– Ո՛չ, նրան չկարողացանք գտնել:

– Նա երեկոյան օդայո՞ւմ էր:

– Այո՛, այստեղ էր:

– Ի՞նչ հնարքով դուրս եկավ պահակների շրջապատումից,– հարցրեց շեյխը երկար ու կեռ թրով զինված պահակապետին:

– Պահակների շրջապատումից ոչ մի գյավուր չի անցել,– պատասխանեց վերջինս:

– Հավանական է՝ գիշերն է փախել,– ասաց Օմար աղան:

– Ինչպե՞ս կարող էր նա փախչել, քանի որ բերդի դռներն ամուր փակված են եղել,– պատասխանեց «հավատացյալ» մարդասպանը:

– Գյավուրները բերդի պարիսպից անցք են բացել և չորս-հինգ հոգի փախել են այնտեղից:

Տեղյակ չլինելով գիշերվա չորս հայերի փախուստի մասին՝ շեյխն ավելի գազազեց ու դեսուդեն քայլելով՝ սկսեց անիծել բոլորին:

– Փախած գյավուրի տղաներից քա՞նիսն են բանտարկված,– հարցրեց նա՝ իր գարշելի հայացքն ուղղելով մեր կողմ:

– Չորս տղաներից երեքը բանտարկված են,– պատասխանեց Օմար աղան:

– Չորրորդ տղան ի՞նչ հնարքով է ազատվել:

– Նա ռազմաճակատ է մեկնել և չի վերադարձել:

– Սխալվում եք, Օմա՛ր աղա, նա վաղուց է դասալքել օսմանյան բանակը:

– Ո՞վ է հայտնել այդ մասին:

– Ձեր որդին՝ Ջահվարը,– պատասխանեց շեյխը:

Օմար աղան մի պահ հետ նայեց՝ հայացքը գցելով իր որդի Ջահվարին, ու գլուխը կախած հեռացավ հրապարակից:

Շեյխը նորից շրջվեց դեպի պահակները և հրամայեց կանգնած բոլոր բանտարկյալներին քշել ու սեղմել բանտի պարսպին: Շեյխի հրամանը կատարվեց անմիջապես: Բոլոր բանտարկյալները խառը կերպով հրապարակից տեղափոխվեցին բանտի քարե բարձր պարսպի տակ: Դեմքներս հառելով դեպի հարյուրից ավելի մարդասպանները՝ փորձում էինք որսալ նրանցից յուրաքանչյուրի խոսակցությունը:

Դահիճների ղեկավար արյունռուշտ շեյխը, որի ձեռքից անպակաս էր փղոսկրյա բռնակով կեռ դաշույնը, հրապարակի մեջտեղում հետուառաջ անելով, կարգադրեց մոտ բերել գյուղացիներից հավաքված արորի շղթաները: Մի քանի րոպեից հետո երկու թուրք մարդասպանները բերված շղթաները թափեցին դահիճի առջև:

Ստանալով շեյխի հրամանը՝ մարդասպանները պարսպի աջ կողմից սկսեցին շղթայակապել ձերբակալված հայերին: Արորի հաստ շղթայով առաջինը կապեցին Դավիթին, որը փաստորեն գտնվում էր կիսամեռ վիճակում, դրանից հետո տանուտեր Մանուկին՝ իր մեծ տղա Վարդգեսի ու ազգականների հետ:

Քսան-քսանհինգ մարդ կապեցին շղթաներով, իսկ մնացածներին՝ թոկերով:

Թուրք մարդասպանների մի զգալի մասը կապկպում էր ձերբակալվածներին, իսկ մի քանիսն էլ պարսպի մոտից երկուական մարդ առաջ էին բերում հրապարակի մեջտեղ՝ նրանց նույնպես շղթայակապ անե-

լու: Հրապարակի ձախ կողմում եղած չորս պահակները, ըստ երևույթին հետաքրքրությունից դրդված, բավականին հեռացել էին իրենց տեղերից ու մոտեցել կենտրոնում շղթայակապ արված հայերին: Մենք՝ երեք եղբայրներ, գտնվում էինք պարսպի ձախ կողմում. մեզ կապելու հերթը դեռ հեռու էր. դրա համար էլ հաճախակի նայում էի Աննայի խրճիթին, որը մեզնից բաժանված էր միայն մի ցածրիկ ցանկապատով: Ես դեռ հույսս չէի կտրել Աննային թեկուզ հեռվից տեսնելու, դրա համար էլ դադարել էի հրապարակում եղած մարդասպաններին նայել: Այնպես որ հայացքս ուղղված էր միայն դեպի ցածրիկ ցանկապատը:

Խրճիթը բանտի շենքից բաժանվում էր մի ցածրիկ քարե ցանկապատով և, եթե գիշեր լիներ, ես կարող էի մի ակնթարթում կանգնած տեղիցս ցանկապատից թռչել հակառակ կողմն ու աննկատելիորեն մտնել Աննայի բնակարանը:

*
* *

Աննայի ամուսինը, գյուղի նախկինում հարուստ Դելոյի եղբորորդին լինելով, ժամանակի ընթացքում լավ և ընդարձակ տուն էր կառուցել գյուղի հարմար տեղերից մեկում, այսինքն՝ հարուստների թաղամասում:

Բալաբեկի խրճիթի երկու մեծ սենյակներից մեկը զբաղեցնում էր քուրդ Մամոյի ընտանիքը՝ ոչ միայն առանց վարձատրության, այլև ապրում էր նրա հաշվին: Չնայած ծեր Մամոն ու իր վեց հոգուց բաղկացած ընտանիքը Բալաբեկի հետ ապրում էին համերաշխ, և դժվար պահերին օգնում էին մեկը մյուսին, բայց և այնպես նա և իր երեք տղաները ժամանակի մեծ մասն անգործ էին: Հողագործությամբ չէին զբաղվում, իրենց սեփական անասուններին անգամ տիրություն չէին անում. նրանց սովորությունն էր թափառել երկրով մեկ և ուրիշի հաշվին ապրել: Մի օր ճաշկերույթի ժամանակ Մամոյի մեծ տղան, որին անվանում էին Ալիհամզո, հարց տվեց իր հորը.

– Ինչո՞վ է մեզ պարտական Բալաբեկի ընտանիքը, որի հաշվին մենք ապրում ենք:

– Բալաբեկը մեր քրիվոն է, մենք նրա հետ մի ընտանիքի պես համերաշխ ենք,– պատասխանեց Մամոն՝ քրքրելով իր երկար ու ցանցառ մորուքը:

– Մենք շատ ենք պարտական Բալաբեկին, քույրիկ Աննային և այդ պարտքից մի օր պետք է դուրս գանք,– ասաց Մամոյի միջնեկ որդին՝ Սադղը:

– Չնայած ես քիչ եմ լինում Բալաբեկի տանը, բայց լինելու դեպքում էլ ինձ համարել եմ նրանց ընտանիքի անդամներից մեկը,– հայտարարեց փոքր որդին՝ Բաժդինը:

– Դու բոլորից էլ շատ ես ուտում,– ծիծաղելով ասաց Ալիհամզոն:

– Ճիշտ է, չեմ ժխտում, դրա համար էլ խոստանում եմ մի օր վարձահատույց լինել նրանց:

– Մենք բոլորս ձեզանից գոհ ենք,– մեջ մտավ Բալաբեկի մայր Փառանձեմը, որը հերթով բոլորին ճաշ էր մատուցում:

Այդ խոսակցությունից անցել էր ավելի քան երկու տարի, մինչդեռ Մամոն իր ընտանիքով դեռ շարունակում էր բնակվել Բալաբեկի խրճիթում և փաստորեն ապրել նրա հաշվին: Դեռ ավելին, Ալիհամզոյի տասներկու տարեկան տղայի երկարատև ու ծանր հիվանդությունը հանգիստ չէր տալիս ոչ միայն ծնողներին, այլև Բալաբեկի ընտանիքին, բայց և այնպես վերջիններս հանդուրժում էին ու ավելի կարեկցում անշարժ պառկած անհուսալի հիվանդին:

*
* *

Բալաբեկի խրճիթի՝ Օմար աղայի տներին մոտ գտնվելու հանգամանքը Աննային հնարավորություն էր տվել Օմար աղայի կանանցից մեկի միջոցով ժամանակին իմանալ թուրք ձիավորների գալու նպատակների մասին և շուտ թաքցնել ամուսնուն և նրա հորը՝ ազատելով նրանց խուզարկու մարդասպաններից: Սակայն այդ օրն Աննայի մտահոգությունը միայն Բալաբեկը չէր: Մեր՝ երեք եղբայրներիս բանտարկվելու մասին նա իմացել էր միայն լուսաբացին, այն պահին, երբ մարդասպանները մեզ դուրս էին բերել Օմար աղայի պալատի առջև եղած փոքրիկ հրապարակ: Նա շատ էր չարչարվել որևէ հնար գտնելու իր եղբայրներից թեկուզ մեկին մահից փրկելու համար: Աննան իր տնվոր քուրդ Մամոյի վրա հույս դնել չէր կարող, քանի որ նա մեր տնեցիներին չէր սիրում:

Աննան եղբայրներին փրկելու որոշ հույսեր կապել էր ծերուկ Մամոյի երկու երիտասարդ տղաների շուտափույթ վերադարձի հետ, որոնք դժբախտաբար այդ օրը բացակայում էին գյուղից:

Առավոտյան արևածագին, երբ մարդասպանները դահիճ շեյխի գլխավորությամբ նախապատրաստում էին բանտարկված հայերի կոտորածը, այդ նույն պահին էլ Մամոյի կրտսեր տղան՝ Բաժդինը, հարևան գյուղից վերադառնում է տուն:

– Բաժդի՛ն եղբայր, իմ երեք եղբայրները բանտարկված են, նրանց կյանքը վտանգի մեջ է, մի ճա՛ր արա,– խնդրում է Աննան:

– Աննա՛ քույրիկ, ես ձեր արած լավությունը չեմ մոռացել և երբեք չեմ մոռանա, իմ ուժերի չափով կօգնեմ նրանց, բայց նախ թո՛ւյլ տուր՝ մտածեմ, թե ինչ հնարքով,– ասում է Բաժդինը:

– Ուշ է արդեն, պահակներով շրջապատված դուրս են բերել բանտից, – արտասուքի մեջ խեղդվելով՝ համարյա թե զառանցում է Աննան:

– Կանեմ այն, ինչ հնարավոր է,– պատասխանում է Բաժդինը՝ վերցնելով պատից կախված իր հրացանը:

– Մեր ցանկապատից երևում են բոլոր պահակները, տե՛ս, եթե փող է հարկավոր, ա՛ռ, ինչքան կուզես, միայն թե շուտ, – արտասվելով ծունկի է գալիս Աննան՝ մի բուռ արծաթ գցելով Բաժդինի գրպանը:

– Ա՜յ թե պահակների մեջ որևէ ծանոթ գտնեմ,– խոսում է ինքն իրեն քրդի տղան:

– Կլինեն, անպայման կլինեն, նրանց մեջ կան նաև թոկից փախած շատ քրդեր, որոնք արծաթի համար մեռած են,– պատասխանում է Աննան:

Եղբորս մեջքից բռնած՝ խոր մտորումների մեջ էի, երբ հանկարծ ցանկապատի հետևից աչքիս երևացին Աննայի դեմքը, նրա սև աչքերը, ու միանգամից անհայտացավ: Տեսնելով սիրելի քրոջս՝ ուրախությունից ամուր սեղմեցի Մարկոսի մեջքը: «Ա՜ննա, Ա՜ննա»,– ցանկացա բղավել, բայց եղբայրս սաստեց՝ չթողնելով, որ ձայն հանեմ:

Չնայած դրան՝ այնուամենայնիվ հայացքս դեռ չէի կտրել պարսպից՝ հույս ունենալով կրկին տեսնել նրան: Հանկարծ այդտեղից բարձրացավ շքեղ հագնված մի հրացանավոր մարդ՝ ուղիղ գալով դեպի թուրք պահակները, որոնք միայն մի քանի քայլ էին հեռու ցանկապատից: Հրացանավոր մարդը Աննայի կողմից ուղարկված Բաժդինն էր: Նա հրացանը թևից վայր բերեց, մոտեցավ պահակին, նրանք սկսեցին կամացուկ խոսել միմյանց հետ, բայց թե ինչի մասին էր, չկարողացա հասկանալ: Ես աչքի տակով նայում էի նրանց, իսկ Բաժդինը և քրդական տարազով պահակը նույնպես նայում էին ինձ: Մի պահ զզվանքով ինքս էլ նայեցի Բաժդինին. մի՞թե Աննայի հաշվին ապրող քուրդը կարող է ուխտադրուժ լինել, դավաճանել ու միանալ մարդասպաններին: Ես դադարեցի նրան նայել և մտա բանտարկվածների խիտ շարքերի մեջ, որպեսզի նա այլևս ինձ չտեսնի:

Այդ մտքով տարված էի, երբ հանկարծ թևիցս քաշեցին: Գլուխս բարձրացրի, տեսա Բաժդինի հետ խոսող քրդական տարազով պահակին, սակայն ես ուժեղ դիմադրեցի նրան. թևս պոկելով նրա ձեռքից՝ հեռացա դեպի պատը՝ մտնելով հեռու գտնվող բանտարկյալների մեջ:

Պահակն իրեն չէր կորցրել. բաց թողնելով թևս՝ նա երկու ձեռքով քաշ էր տվել Վարդանին և, հրելով նրան դեպի պարիսպ, աննկատելիորեն անց էր կացրել ցանկապատի հակառակ կողմը: Ըստ երևույթին Աննան եղբորս փախուստը լավ էր կազմակերպել. ցանկապատի հետևում թաքնված էր Բաժդինի մեծ քույր Ասլին: Նա, իր թևի տակ առնելով Վարդանին, անմիջապես փախցրել էր իրենց խրճիթ և թաքցրել Ալիհամզոյի հիվանդ տղայի անկողնում: Թաքնվելով բանտարկյալների արանքում՝ սկսեցի անհանգստանալ և վերադարձա Մարկոսի մոտ, շուրջս նայեցի՝ Վարդանին տեսնելու. բարեբախտաբար նա չկար:

– Ո՞ւր է Վարդանը,– շշուկով հարցրի ես:

– Բաժդինը տարավ:

– Ո՞ւր տարավ,– զարմացած չռեցի աչքերս:

– Լռի՛ր, նրան փախցրին:

Ես, որ մինչ այդ շատ մռայլ էի, ինքս ինձ ժպտացի: Նրան, որին քիչ առաջ նայում էի ատելությամբ, այդ պահին արդեն դարձավ հարազատ մարդ, փրկարար:

Ըստ երևույթին պահակը Բաժդինից ստացել էր Աննայի կողմից տրված պատկառելի կաշառքը. դրա համար էլ կրկին չորս կողմը նայելով, կամաց-կամաց մոտեցավ մեզ՝ նպատակ ունենալով ինձ ևս տանելու: Սակայն մինչ նա կմոտենար ինձ, արյունռուշտ շեյխը զինված մարդկանցով բոլոր բանտարկյալներիս առավ շրջապատման մեջ:

Վերջապես հրաման տրվեց շարժվել դեպի գյուղից ոչ հեռու գտնվող գետաձորը:

Հեռանալով գյուղից՝ մի պահ նայեցի հետ, բայց իզուր. ոչ ոք չկար. չերևաց թեկուզ մի կենդանի արարած: Գիշերվա ընթացքում ամայի էր դարձել ամբողջ գյուղը, տակնուվրա էր արված ամեն բան:

Գետաձորը անդնդախոր ձոր էր, որտեղից հոսում էր փոքրիկ, բայց շատ արագավազ գետակ, որը գնալով միանում էր հորդառատ Տիգրիս գետին: Գետակի ձախ կողմում կանգնած էր մի հսկա քարաժայռ, որի երեսից դեռ չէին անհետացել հին դարերից փորագրված խաչերն ու գրերի հետքերը: Աջ կողմում գտնվում էին կանաչին տվող գեղեցիկ բլուրներ, խորտակված տաճարի բեկորներ և հայ գյուղացիների մարգագետինները: Մի ժամանակ այդ ձորում մենք երեխաներով շատ էինք խաղացել, պարսետներ նետել, կռիվներ արել: Ահա եկել էր օրհասական ժամը. վերջին անգամ պետք է հրաժեշտ տայինք այդ հրաշալի բնությանը, որտեղ անց էի կացրել իմ մանկության քաղցր օրերը:

Շղթայակապ արված բանտարկվածներից մի քանիսը, կարծես թե անհոգ, երգելով հայկական հին երգերը, դանդաղ առաջ էին գնում: Լսելով հայկական երգի ձայնը՝ շարքերի առջևից գնացող շեյխը, թեքելով իր ձիու գլուխը, հետ դարձավ դեպի երգողները:

– Է՜յ, գյավուրնե՛ր, դեռ չեք մոռացել ամբարիշտ երգերը,– ասաց նա ու ձեռքում բռնած թրի կույր կողմով հարվածեց Դավիթին ու երգող Ապրոյին:

Շեյխը, հարվածելով շղթայակապ արված մարդկանց, սմբակակոխ անելով մոտենում էր մեր շարքին: Նրա գավազանը ինձ չէր կարող կպչել, քանի որ կապված չլինելով, ես մտել էի երկու շարքերի մեջ ու հանգիստ կերպով, առանց դժվարության, շարժվում էի դեսուդեն: Մինչ այդ ես լավ չէի տեսել նրա գարշելի դեմքը: Նա մոտեցավ Մարկոսին և հետաքրքրությամբ նայելով նրան՝ հարցրեց.

– Ո՞ւմ տղան ես.

– Քեզ համար մեկ չէ՞, թե ում տղան եմ:

– Երգի՛ր, դու լավ ես երգում,– պահանջեց մարդասպանը:

– Երգել չգիտեմ:

– Ստում ես, դու Հասան բեկի համար լավ էիր երգում,– ասաց շեյխը՝ հարվածելով նրա գլխին:

Լսելով մարդասպանին՝ Մարկոսն այլևս ձայն չհանեց. ըստ երևույթին շեյխը ճանաչել էր նրան: Երբ նա ավելի մոտեցավ Մարկոսին, մեզ համար պարզ դարձավ, թե ով է նա. մենք նրան նույնպես ճանաչեցինք: Իլ գյուղաքաղաքի շեյխ Խդիրն էր, նա, ով մի ժամանակ բռնի կերպով ստիպում էր ինձ փոխել իմ հավատը, և ահա այդ ողորմելի հավատացյալն այդ օրը դարձել էր հայերի դահիճն ու մարդասպանների ղեկավարը:

Մենք հասել էինք նախապես որոշված վայրը: Բանտարկյալների կողքից գնացող շեյխը գոռալով բարձրացրեց իր սուրը: Դա նշան էր, որ պետք է կանգ առնել: Առջևից գնացող ձիավորները կանգնեցին և դահիճի հրամանով անցան մեր աջ կողմը և, մեզ ձիերի սմբակի տակ առնելով, սեղմեցին քարաժայռի ու գետի միջև ընկած փոքր տարածության մեջ՝ կանգնելով մեր դեմ դիմաց: Այդ պահին լսվեց գյուղի երգիչ Ապրոյի քաղցր, բայց խրոխտ ձայնը. նրան հետևեցին էլի ձայներ, ու միանգամից՝ դահիճների հրացանային համազարկեր: Դրանից հետո լսեցի միայն մի բառ՝ ա՜խ, մայրի՛կ, բայց թե ում ձայնն էր, այդպես էլ չկարողացա իմանալ: Ինքս ընկել էի սպանված հարազատների դիակների տակ, սակայն ինձ թվում էր, թե բարձր քարաժայռը փլվել է, և ես

թպրտում եմ դրա տակ: Մարմինս այրվում էր, սիրտս՝ տրաքում, ականջներս խլացել էին, այլևս ոչինչ չէի լսում: Ընկնելով խոր ու սարսափելի տենդի մեջ՝ աչքիս երևում էին ինձ հետապնդող վայրի գազաններ: Ինձ թվում էր, թե ընկած եմ մի խոր անդունդի մեջ, որտեղ գալարվում էին թունավոր օձերը. ձեռքս մեկնեցի, որ դուրս գամ այնտեղից, բայց գլխիս վերև կանգնած, գազանի դիմակ հագած շեյխը ոտքերով ինձ կրկին հրեց, այս անգամ եռացրած կուպրի մեջ և քարաժայռից պոկված մի հսկա քարաբեկորով փակեց անդունդի բերանը: Ես խուլ-խուլ ձայնով կանչում էի իմ մերձավորներին, բայց իզուր: Օգնելու համար ոչ ոք չկար: Այդպես շնչահեղձ լինելով՝ ես մնացի քարաժայռի մեծ բեկորով ծածկված անդունդի մեջ՝ մաքառելով կյանքի համար:

Չգիտեմ՝ որքան ժամանակ էր անցել, այնուամենայնիվ ուշքի եկա, աչքերս բացեցի ու բնազդաբար թևերս շարժեցի: Ես պառկած էի անշարժ. աչքերիս առջև երևացին միայն արյունով ներկված մարդկանց դեմքերն ու գարնանային թարմ կանաչը: Քիչ առաջվա կարծեցյալ քարաժայռի բեկորների փոխարեն մեջքիս ընկած էր իմ եղբոր դիակը:

Քարաժայռի տակ կանաչին տվող հարթավայրն ամբողջովին ներկվել էր մեր գյուղացիների ու իմ հարազատների արյունով. չէի պատկերացնում՝ մեռած եմ, թե կենդանի: Մի պահ նայեցի շուրջս, հետո թեքվեցի դեպի եղբայրս, հանկարծ լսեցի նրա խռխռոցը: Բռնեցի նրա ձեռքը, նա դանդաղորեն աչքերը կիսաբաց արեց, շրթունքներով հասկացրեց, որ ջուր տամ իրեն: Մի պահ ուրախությունից սիրտս ալեկոծվեց. չէ՞ որ նա կենդանի էր: Վերցրի նրա գլխարկը, վազեցի դեպի գետակը, դրանով լիքը ջուր բերեցի, մոտեցա նրա անշարժ մարմնին, սակայն ինձ հազիվ հաջողվեց մի քանի կաթիլ լցնել նրա բերանը: Նա ուզում էր ձեռքը բարձրացնել, բայց չկարողացավ: Ես ինքս օգնեցի նրան՝ բարձրանալու. ըստ երևույթին նա ուզում էր ինչ-որ բան ասել, սակայն հենց այդ պահին էլ ձեռքը վայր ընկավ, փակվեցին նրա սառած աչքերը: Տեսնելով հարազատ եղբորս եղեռնական մահը՝ ակամայից խոնարհվեցի նրա դիակի վրա և սկսեցի պինդ-պինդ համբուրել, ու հենց այդ պահին էլ կրկին ուշաթափվեցի…

Բնազդաբար աչքերս բացվեցին. այս անգամ ես ընկած էի Աննայի և Աչանի բազուկների մեջ: Նրանք խլում էին ինձ մեկը մյուսից և իրենց սեփական արցունքներով սրբում արյունից ներկված դեմքս: Տեսնելով կանանց գզգզված մազերը, նրանց սարսափած դեմքերը և անասելի ողբը՝ ես չդիմացա այդ ահավոր տեսարանին: Ես հետևեցի նրանց օրինակին ու սկսեցի արտասվել այնպես, որ առատորեն թափված արտա-

սուքներս, խառնվելով մարմնիս վրա եղած արյան հետ, մի սարսափելի տեսարան էին ներկայացնում: Աննան տեսնելով, որ անվնաս եմ, ինձ թողեց Աչանի գրկում, և ինքը միանգամից ուշաթափ ընկավ Մարկոսի դիակի վրա. թե ինչ էր կատարվում գետաձորում սպանված դիակների վրա, անկարելի է նկարագրել:

Ապահովության համար ինձ տարան Բաժդինի տուն, իսկ զոհվածների դիակները կանանց ուժերով փոխադրվեցին գյուղի եկեղեցին ու հաջորդ երկու օրերի ընթացքում թաղվեցին եղբայրական գերեզմանոցում:

ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

Գարնան երկրորդ ամսվա վերջին օրերն էին, սակայն գյուղը շրջապատող լեռներն ու ձորերը դեռ ծածկված էին ձմեռվա ընթացքում նստած ձյան հաստ շերտով: Հենց այդ նույն օրերին էլ թուրք մարդասպան բանդաների կողմից համարյա թե լրիվ փակված էին դեպի քաղաքներ ու տարբեր գյուղեր տանող բոլոր ճանապարհները: Հասկանալի է, որ այդ պայմաններում դժվար թե հայերից որևէ մեկին հաջողվեր թեկուզ գիշերով իր թաքնված տեղից դուրս գալ: Մեր գյուղը, հեռու գտնվելով հայաշատ շրջաններից ու Վան քաղաքից, ամբողջապես շրջապատված էր քուրդ աղաների ու բեկերի մարդկանցով, որոնք թուրքական ժանդարմերիայի արյունախում բանդաներից պակաս մարդասպաններ չէին: Հայերի հարստությանը, նրանց գեղեցիկ կանանց ու աղջիկներին տիրանալու մոլուցքով տարված՝ այդ ավազակները իրենց հերթին մշտապես շուրջկալներ էին կազմակերպում կենդանի մնացած հայերին ոչնչացնելու համար: Այդ և մի շարք այլ պատճառներով ահավոր գիշերվա կոտորածից փրկված փոքրաթիվ, այն էլ բոլորովին անզեն մարդիկ, հապճեպորեն թաքնվելով մոտակա քարափների մեջ, իրենց միակ հույսը դրել էին ռուսական բանակի առաջապահ զորամասերի մոտենալուն, որի ահ ու սարսափը դեռ ձմեռվանից տարածվել էր լեռներում ապրող թուրք և քուրդ աղաների շրջանում: Ահավոր կոտորածից մի կերպ ազատվելուց հետո ես ու Վարդանը թաքնվել էինք քուրդ Մամոյի տանը, որի երկու որդիները մեզ պաշտպանում էին դրսից եկող վտանգից:

Մենք գտնվում էինք նրանց մշտական հսկողության ներքո: Այդպես էր նաև կոտորածից փրկված մյուս հայ պատանիների ու կանանց վի-

ճակը, որոնք նույնպես թաքնվել էին չքավոր քուրդ համագյուղացիների խրճիթներում ու հովանավորվում էին նրանց կողմից: Սակայն հայ բնակչության կենդանի մնացած մասի համար կոտորածի վտանգը դեռ չէր վերացել, ընդհակառակը, մարդասպանները, արյան հոտ առնելով, ավելի ու ավելի էին ակտիվացրել իրենց լկտի գործողությունները:

Դահիճներն այս անգամ խմբերով շրջում էին գյուղը շրջապատող սարերում ու ձորերում, խուզարկու շների պես հոտոտում կասկածելի բոլոր տեղերը: Նրանք նորից ու նորից ստուգում էին խրճիթներում եղած գետնախորշերը, ձյան վրայով գնացող թարմ արահետները՝ նպատակ ունենալով կենդանի մնացած հայերին գտնել և իսպառ ոչնչացնել: Այդ նույն օրերին Աննան շատ անհանգիստ վիճակում էր: Նա անընդհատ դուրս էր գալիս փողոց, կրկին ներս մտնում, իսկ դրսից որևէ ձայն լսելիս դողալով տեղից վեր էր թռչում, հատկապես այն պահին, երբ խրճիթի շուրջը երևում էր զինված քրդերից որևէ մեկը: Ահավոր կոտորածից անցել էր ավելի քան յոթ օր, իսկ Աննայի տնվոր քուրդ Մամոն, չգիտես ինչու, օր ու գիշեր խրճիթի շեմից չէր հեռանում, նա, ինչոր բանով մտահոգված, մեկ նայում էր Աննային, մեկ էլ անասունների գոմը տանող միջանցքին: Մի խոսքով, շատ կասկածելի էին քուրդ ծերուկի տարօրինակ շարժումներն ու սարսափելի հայացքը: Նրա խոսակցությունից անգամ հասկացվում էր, որ նա թակարդ էր լարում, բայց թե ում դեմ… Սակայն Աննան արդեն կռահել էր Մամոյի չար ու նողկալի մտադրությունը, և դա պատահական չէր: Ծերուկը, նույնպես կրոնական մոլուցքով տարված, ուզում էր դառնալ չարագործ ու մարդասպան: Նա գիտեր, որ թուրք ձիավորների՝ մեր գյուղ մտնելու առաջին իսկ օրը Բալաբեկը օրը ցերեկով սեփական ջրաղացից տուն էր եկել, սակայն շուրջկալի պատճառով չէր կարողացել մարդասպանների սեղմ օղակից դուրս փախչել: Նա լավ գիտեր, որ Բալաբեկը թաքնված է խոշոր եղջերավոր անասունների գոմում, բայց թե որտեղ, այդ արդեն ճշգրիտ չգիտեր: Իրոք, Աննան ամուսնուն թաքցրել էր գոմում եղած գաղտնի գետնախորշում, բայց, իհարկե, բացի իրենից և Բալաբեկի մայր Փառանձեմից ուրիշ ոչ ոք չգիտեր այդ մասին: Չգիտեինք նաև ես ու Վարդանը: Մամոյի չար ու խորամանկ հայացքից երևում էր, որ նա խիստ հետևում է Աննային ու Փառանձեմին՝ նպատակ ունենալով Բալաբեկի թաքնվելու իսկական տեղն իմանալ:

Աննան, վստահություն չունենալով ծերուկի և նրա մեծ տղայի հանդեպ, յոթ օրվա ընթացքում համարյա ժամանակ չէր գտել կազմակերպել Բալաբեկի փախուստը՝ քաջ գիտենալով, որ քուրդ Մամոն անպայ-

ման կմատնի նրան: Քուրդ Օմար աղան և շեյխ Խդիրը կենդանի մնացած հայերին հայտնաբերելու ու ոչնչացնելու վերաբերյալ խիստ հրահանգ էին տվել տեղացի քուրդ գյուղացիներին, այդ թվում նաև Մամոյին՝ որպես շեյխի նախկին զինակցի:

Մամոյի երկու տղաները՝ Բաժդինը ու Սադղը, դրսից տուն գալուն պես պատրաստվում էին ինչ-որ տեղ գնալու, իսկ ծերուկը, երկար չիբուխը բերանին դրած, արթուն շան նման հսկում էր խրճիթի դուռն ու շրջապատը: Տեսնելով Մամոյի մռայլ դեմքն ու նրա շարժումները՝ Աննան լրիվ համոզվեց, որ քուրդը հետևում է Բալաբեկին և մտադրություն ունի նրան մատնելու: Իհարկե, Աննայի կասկածը պատահական չէր. նա գիտեր, որ Մամոն նախկին հարուստ քրդերից էր, այն էլ շեյխ Խդիրի մոտիկ բարեկամն ու զինակիցը:

Ունենալով իրենց ավազակային խումբը՝ Մամոն շատ երկար տարիներ, շեյխ Խդիրի ցեղակիցների հետ, որպես թափառաշրջիկ քոչվորներ, զբաղվել են կողոպուտներով ու սպանությամբ:

Դեռ քառասուն տարեկան հասակում քուրդ Մամոն իր բանդայով հարձակվել էր թուրք-պարսկական սահմանագլխի լեռներով անցնող օտարերկրյա քարավանի վրա, բացի կողոպտելուց նա բռնի հափշտակել էր նաև հույն ճանապարհորդներից մեկի երիտասարդ կնոջը, իսկ ամուսնուն սպանել:

Խեղճ կինը երկար ժամանակ չէր ապրել: Մամոյի առաջին երկու կանանց հալածանքի պատճառով նա մեռել էր քսան տարեկան հասակում՝ թողնելով անտեր իր երկու փոքրիկ զավակներին՝ Սադղին և Բաժդինին: Այդ օրվանից անցել էին երկար տարիներ, իսկ քուրդ Մամոն, աստիճանաբար աղքատանալով և ծերանալով, դադարել էր կողոպուտով զբաղվել: Ուրիշներից թալանած կողոպուտը բաժանելու ժամանակ նա թշնամացել էր իր նախկին համախոհների հետ, որից հետո, ի վերջո, փոխադրվել էր մեր գյուղ և վերջին երկու տարիների ընթացքում իր ընտանիքի հետ բնակվում էր Բալաբեկի սենյակներից մեկում և փաստորեն ապրում էր նրա հաշվին:

Չգիտեմ՝ Մամոյի վերջին կնոջ երկու որդիները՝ Սադղն ու Բաժդինը գիտեին արդյոք իրենց հարազատ մոր հափշտակվելու հետ կապված պատմությունը, թե ոչ, բայց ես քաջ գիտեի, որ այդ երկու լավ տղաները բոլորովին չէին սիրում ո՛չ ծերուկին և ո՛չ էլ մեծ եղբորը՝ Ալիհամզոյին. ուղղակի ատում էին նրանց, այդ իսկ պատճառով էլ հաճախակի հեռանում էին գյուղից:

Կռահելով Մամոյի չար մտադրությունը, ինչպես նաև երկու երիտասարդ քուրդ տղաների գյուղից հեռանալու ցանկությունը՝ Աննան, արտասուքն աչքերին, ամբողջապես հուսահատ, դողդողալով դրսից ներս մտավ:

– Ի՞նչ է պատահել քեզ, Ա՛ննա՛ քույրիկ, որ այդպես լաց լինելով՝ անընդհատ դողդողում ես,– հարցրեց Բաժդինը՝ ուշադրությամբ նայելով նրա դեմքին:

– Ի՞նչ անեմ, իմ հույսը ձեզ վրա է, դուք էլ հեռանում եք,– պատասխանեց Աննան՝ շարունակելով լաց լինել:

– Մի՛ վախեցիր, Վարդանին և Սևուկին ձեռք տվող չի լինի:

– Աղաչում եմ, առայժմ չհեռանաք, մենք վախենում ենք:

– Քեզ ասացի, որ եղբայրներիդ ոչ մեկին վտանգ չի սպառնա:

– Վախենում եմ Մամո հայրիկից:

– Ընդհակառակը, հայրիկն ուրախ է, որ երեք տղայի փոխարեն, այժմ ունի հինգը, նրա մշակների թիվը ավելացավ ևս երկուսով,– ծիծաղելով ասաց միջնեկ եղբայր Սադղը՝ վերցնելով պատից կախված իր հրացանը:

– Իմ վախը մենակ եղբայրներս չեն:

– Էլ ինչո՞ւ պետք է վախենաս, մեծ եղբայրդ բանակում է, իսկ հայրդ ու Բալաբեկը վաղուց փախել են, նշանակում է՝ վախենալու հարկ չկա,– համոզում էր Բաժդինը:

Աննան չէր համարձակվում իր գաղտնիքը միանգամից հայտնել նրանց, սակայն ուրիշ ելք չկար և նա լաց լինելով մոտեցավ երկու եղբայրներին ու ընկավ նրանց ոտքերը:

– Վե՛ր կաց, Աննա՛ քույրիկ, ի՞նչ է պատահել քեզ,– հայտարարեց Բաժդինը՝ հանգստացնելով նրան:

– Փրկեցե՛ք Բալաբեկի կյանքը. նա այստեղ է:

– Ա՛յ թե ինչու է դողդողում Աննա քույրիկը,– ասաց Սադղը՝ նայելով փոքր եղբորը:

– Որտեղ էլ որ լինի, նա կազատվի,– վճռականորեն հայտարարեց Բաժդինը՝ հայացքն ուղղելով խրճիթի շեմին նստած Մամոյի կողմ, որը, երկար չիբուխը բերանին դրած՝ անընդհատ հետևում էր Աննայի ու երկու տղաների շարժումներին:

– Դուք, ձեր Աստված, փրկեցիք եղբայրներիս, փրկեցե՛ք նաև Բալաբեկին:

– Անհո՛գ եղիր, մենք նրան կփրկենք, վե՛ր կաց և տե՛ղն ասա,– կրկնեց Բաժդինը:

Աննան սարսափելի վիճակում էր. նա իր գաղտնիքն արդեն հայտնել էր, ուստի գետնից բարձրանալով, համարյա թե դողդողալով՝ խրճիթի շեմքին նստած Մամոյից աննկատ գնաց դեպի անասունների գոմը, իսկ ես ու երկու քուրդ եղբայրները հետևեցինք նրան:

Աննան դողալով մոտեցավ գոմեշի մսուրին, սկզբում պատից հանեց մի մեծ քար, հետո երկրորդն ու լացակումած ձայն տվեց Բալաբեկին՝ ստորերկրյա թաքստոցից դուրս գալու: Բալաբեկն իր հերթին ներսից հետ տարավ մի մեծ սալաքար, որտեղից երևաց գետնախորշի մութ անցքը:

– Դո՛ւրս արի, Բալաբե՛կ,– ձայն տվեց Սադղը:

Իհարկե, նրան ուրիշ ոչինչ չէր մնում, բացի դուրս գալուց: Նա պատի վերևի փոքր անցքից արդեն նկատել էր երկու քուրդ եղբայրների գոմ մտնելը, դրա համար էլ գետնախորշի անցքի մեծ սալը հետ տանելուց հետո անմիջապես դուրս եկավ:

– Քրիվո Բալաբե՛կ, այժմ մութ գիշեր է, մենք քեզ գյուղից դուրս կբերենք, դրանից հետո դու գիտես, որ կողմը կցանկանաս, այն կողմով էլ գնա,– առաջարկեց Բաժդինը՝ ամրացնելով իր փամփուշտակալների կապերը:

Բալաբեկը, առանց որևէ խոսք փոխանակելու, Սադղի և Բաժդինի ուղեկցությամբ իր սև յափնջիի մեջ փաթաթված, դուրս եկավ տնից, իսկ ես ու Աննան գաղտագողի հետևեցինք նրանց, մինչև նրանք միմյանցից բաժանվեցին: Շատ ժամանակ չէր անցել, երբ երկու քուրդ եղբայրները վերադարձան, իսկ Բալաբեկը քուրդ գյուղացու տարազով այդ մութ ու խավար գիշերը փախել էր դեպի Պարսկաստան՝ իր հարազատ քրոջ մոտ, որին երկու տարի առաջ ամուսնացրել էր մի երիտասարդ ասորու հետ:

Բալաբեկի փախուստին օժանդակելու համար ծերուկ Մամոն սկսեց զայրանալ ու նախատել իր երկու զավակներին, անգամ սպառնաց նրանց, որ այդ մասին կհայտնի Օմար աղային կամ իր մոտիկ բարեկամ շեյխ Խդիրին: Սակայն տղաները խիստ հանդիմանեցին նրան ու ստիպեցին ծերուկին լռել: Այդ նույն երեկոյան երկու եղբայրները անհայտ ճանապարհներով գյուղից հեռացան՝ խոստանալով Աննային մեկ-երկու օրից հետո վերադառնալ մեզ պաշտպանելու համար:

*
* *

Աչանն իր երկու փոքրիկ երեխաներով փոխադրվեց մեզ մոտ՝ Աննայի տուն, իսկ Մարկոսի կինը կրծքի երեխայի հետ գնացել էր իր մոր մոտ: Այսպիսով՝ մեր հայրենի մեծ տունը փաստորեն մնացել էր դա-

տարկ և անտեր, իսկ մենք՝ քույր ու երկու եղբայրներով Աչանի հետ ամեն օր, ամեն ժամ մտածում էինք, թե ինչպես և ինչ ճանապարհով ուտելիք հասցնենք Ծաղկասարի քարափներում թաքնված հայրիկիս և Բադալին:

*
* *

Օմար աղայի և շեյխ Խդիրի հավաքագրած մարդասպան բանդաներն առանձին խմբերով սանրում էին ձյունից դեռ չսևացած մոտակա սարերն ու բոլոր կասկածելի վայրերը:

Ծաղկասարի ստորոտներում՝ քարափների մեջ, թաքնված մի քանի փախստականներ, այդ թվում հայրս ու Բադալը, զգալով իրենց տեղի անհուսալիությունը, որոշել էին կեսգիշերով հեռանալ դեպի լեռները՝ կարծելով, թե հեշտությամբ կարող են հաղթահարել ձյունոտ սարերի դժվարությունները ու խույս տալ իրենց հետապնդողներից: Սակայն այն պահին, երբ նրանք դուրս էին եկել քարափներից ու սկսել բարձրանալ դեպի ձյունածածկ սարի գագաթը, որը փրկվելու միակ ճանապարհն էր, հայերին հետապնդող բանդաները հարձակվել էին նրանց վրա: Կռահելով թշնամու մտադրությունը՝ հայր ու որդի իրենց ընկերներով, մի կերպ ճեղքելով արևից փափկած ձյան հաստ շերտը, համարյա թե օրվա կեսին հասել էին Ծաղկասարի բարձր գագաթը, որտեղից միանգամայն հնարավոր էր չորացած սարի հարավային լանջից հեշտությամբ անցնել ձորի անտառների մեջ ու թաքնվել: Դժբախտաբար, հետապնդող մարդասպանները նախօրոք փակել էին նրանց փախչելու բոլոր ճանապարհները: Գտնվելով թշնամու սեղմ օղակի մեջ և չնկատելով նրանց կրակակետերը՝ հայր ու որդի ստիպված են լինում խրամատավորվել արևից փափկած ձյան հաստ շերտի մեջ՝ սպասելով մութն ընկնելուն: Սակայն նրանց շրջապատող օղակն ավելի ու ավելի է նեղանում մինչև ատամները զինված բազմաթիվ քուրդ ու թուրք մարդասպաններով: Տեսնելով մոտեցող դահիճներին՝ Բադալը ցանկացել է կրակել, սակայն հայրս կտրականապես արգելել է նրան անժամանակ կռվի մեջ մտնել:

– Անհրաժեշտ է առանց կրակի հեռանալ. կռվելով մենք բան չենք շահի,– ասել էր նա:

– Ո՛չ, հայրի՛կ, առանց դիմադրության մենք կենդանի չենք ազատվի:

– Ենթադրենք սպանեցիր մեկին, երկուսին. դրանով ի՞նչ կշահենք:

– Կռվելով ես հնարավորություն կտամ քեզ և մնացած չորս ընկերներիս աննկատելիորեն իջնել դեպի ձոր, որտեղից հնարավոր է անցնել Տիգրիսի հակառակ կողմի լեռները:

– Իսկ դո՞ւ:

– Ես կդիմադրեմ մինչև վերջ:

– Իսկ մեր ընտանիքի տասներկու անդամների մասին մտածել ե՞ս:

– Առանց կռվի այստեղից հեռանալ հնարավոր չէ,– ասել էր Բադալը:

– Կռվել նշանակում է սպանել:

– Իհարկե, պետք է ոչնչացնել թշնամուն:

– Նշանակում է պատճառ դառնալ մեր ընտանիքի տասներկու անդամների ոչնչացմանը:

Լսելով հայրիկիս վերջին խոսքերը՝ Բադալը մի պահ հիշել է երկու սիրասուն զավակներին, փրկված եղբայրներին, կնոջը, բարեկամներին և ընկել խոր մտատանջության մեջ:

– Ի՞նչ անենք, հայրի՛կ, ի՞նչ հնարքով ազատվենք:

– Մութն ընկնելուն պես կարող ենք ճեղքել թշնամու օղակը ու հեռանալ դեպի ձյունից սևացած քարափները: Սակայն մինչ հայր և որդի կխորհրդակցեին, թշնամիները նշմարել էին նրանց և սկսել երեք կողմից կրակել նկատվող սև կետի վրա:

– Հայրի՛կ, այլևս հնարավոր չէ համբերել. կա՛մ պետք է ճեղքել թշնամու սեղմ օղակը, կա՛մ պետք է կռվել մինչև վերջ:

– Կռվել նշանակում է մեր ընտանիքի ու անմեղ երեխաների ոչնչացման պատճառ դառնալ:

– Ո՛չ, պետք է կռվել և պատվով մեռնել:

– Իսկ ինչո՞վ կարող ես կռվել, մի՞թե առանց անհրաժեշտ քանակությամբ փամփուշտներ ունենալու կարող ես կռվել մինչև ատամները զինված մարդասպանների հետ,– պատասխանում է հայրս:

Այդ խոսքերից Բադալը ստիպված է եղել մի պահ լռել: Իրոք, վեց հայ փախստականներից միայն երկուսը զենք ունեին, այն էլ քիչ քանակությամբ փամփուշտներով:

Հոր և որդու դիրքերը խախուտ էին. գարնանային վառ արևից փխրացած ձյունը չէր կարող նրանց պաշտպանել թշնամու տեղատարափ կրակից: Հայրս երկու տեղից վիրավորվել էր, բայց Բադալին չէր հայտնել՝ կարծելով, որ դա աննկատ կմնա, սակայն երբ տղան նկատում է արյունով ներկված հոր մարմինը, արդեն համբերության բաժակը լցված՝ սկսում է իր օրհասական մենամարտը իրենց շրջապատած թուրքերի ու նրանց կողմից հավաքագրված քուրդ մարդասպանների դեմ:

Բադալը սկզբում կրակն ուղղում է ձախ թևից հարձակվող արյունախում թշնամու վրա՝ հնարավորություն տալով վիրավորված հորը և չորս ընկերներին աննկատելիորեն նահանջել դեպի Ծաղկասարի մեծ ձորը:

Անհավասար կռիվը շարունակվում է մինչև ուշ գիշեր: Հայրս իր չորս անզեն ընկերներով Բադալի կրակի պաշտպանության ներքո, ծանր վերքեր ունենալով, ձյան հաստ շերտի վրայով համարյա թե սահելով, իջել էին Ծաղկասարի հակառակ կողմի մեծ ձորի անտառների մեջ՝ սպասելով կռվող որդուն:

*
* *

Սոսկալի գիշերն անցել էր, արևի պայծառ շողերը ծակում էին Ծաղկասարի ձյունապատ գագաթին խրամատավորված Բադալի աչքերը, բայց նա դեռ շարունակում էր մահու և կենաց կռիվ մղել իրեն շրջապատող թշնամիների դեմ: Նա կռվել էր ամբողջ գիշեր, բայց մարդասպանների շրջապատումից դուրս գալ չէր կարողացել: Ահա, երբ թշնամու օղակն օրը ցերեկով ավելի էր նեղանում, իսկ դիմադրող Բադալի փամփուշտները սպառվել էին, նա վճռում է հրացանի խզակոթով ու իր բազկի ուժով մենամարտի մեջ մտնել ձախ թևից մոտեցող թուրքերի հետ, սակայն վերջիններս, կռահելով հայի մտադրությունը և վստահ չլինելով իրենց ուժերի վրա, խուսափել էին մոտենալ նրան: Թե որքան թուրքեր էին ընկել Բադալի դիպուկ կրակից, անհայտ մնաց: Բարեբախտաբար սպանվածները մեր շրջակայքի քրդերից չէին, իսկ Բադալը մնացել էր անճանաչելի: Միայն երկրորդ օրը, երբ հարևան գյուղից հավաքագրված քրդերից մեկը նրա նոր զգեստներին տիրանալու նպատակով կրկին վերադարձել էր մարտի վայրը, այս անգամ ճանաչել էր Բադալին: Ըստ երևույթին մեզ հովանավորող Բաժդինին և Սադղին թշնամի չդառնալու պատճառով չէր ուզել այդ մասին հայտնել շեյխ Խդիրին:

*
* *

Դեպքից երկու օր հետո քուրդ Մամոյի մեծ տղան՝ Ալիհամզոն, խրճիթ մտնելուն պես հայտնեց Բադալի զոհվելու մասին, իսկ երեք օր հետո մեզ հասավ նաև հորս ու նրա ընկերների եղեռնական սպանության բոթը:

Ահավոր կոտորածից փրկված փոքրաթիվ հայ մարդիկ, շրջապատված լինելով բազմաթիվ զինված բանդաներով, ի վիճակի չէին ժամանակին դուրս գալ նրանց սեղմ օղակից, ինչպես նաև չունենալով թեկուզ հին տեսակի զենքեր՝ ստիպված էին թշնամու հետապնդումից թաքնվել գյուղը շրջապատող անհարմար թաքստոցներում, որի պատճառով նրանց մեծ մասը շուտով հայտնաբերվեց: Սակայն հայրենասիրական ոգով տոգորված՝ նրանցից շատերը, երես առ երես հանդիպման ժամանակ անգամ անզեն, մինչև վերջին շունչը կռվելով, զոհվեցին:

Օ՜, որքան տմարդի վարվեցին թուրք դահիճները խաղաղ հայ բնակչության նկատմամբ. նրանք՝ որպես թիկունքից հարձակվող գողավազակներ, հանկարծակիի բերեցին մեզ բոլորիս: Սկզբում նրանք գաղտագողի կերպով գլխատեցին լեռնեցի հայ մարդկանց ամենակարող ուժերը, իսկ հետո էլ աստիճանաբար ոչնչացրին ծերերին, կանանց ու անփորձ պատանիներին:

Նրանք այնքան էին գազազած, որ ահավոր գիշերվա հանկարծակի կոտորածից փրկված ամեն մի հայ մարդու հետապնդում էին քսանից ավելի մարդասպան, իսկ շատ դեպքերում՝ ավելի քան մի մեծ զորամաս: Իհարկե Բադալն իր մի հատիկ զենքով, այն էլ առանց անհրաժեշտ քանակության փամփուշտի, չէր կարող երկար դիմադրել մինչև ատամները զինված ավելի քան հիսուն թուրք և քուրդ ավազակների: Մարդասպանները քուրդ Մամոյի մեծ տղային պատմել էին, որ Ծաղկասարի ձյունապատ գագաթին թաքնված գյավուրն իրենց հետ կռվել էր մինչև վերջին փամփուշտը՝ ոչնչացնելով ավելի քան երկու տասնյակ թուրք ոստիկանների:

Դադարեցնելով կրակը՝ Բադալին շրջապատած թուրքերը սկզբում սիրտ չէին արել մոտենալ նրան. երկար սպասելուց հետո միայն հարևան գյուղի հարուստ քրդերից մեկը, որն այդ օրը նույնպես մարդասպանի դեր էր կատարում, մոտեցել էր հրացանի փողը ճակատին մեխած Բադալի դիակին: Քրդերի խոսակցությունից պարզվել էր, որ հոր ու համագյուղացիների փախուստն ապահովելու նպատակով Բադալը կրակել էր բոլոր փամփուշտները, որից հետո կենդանի թշնամու ձեռքը չընկնելու նպատակով միայն վերջին գնդակով վերջ էր տվել իր կյանքին:

Հայերին հետապնդող թուրք ու քուրդ ավազակներն ինքնասպան Բադալի վրա կրկին չէին կրակել: Վերցնելով սպանվածի հրացանը և նրա զինվորական զգեստը, դահիճները, թողնելով սպանվածներին, որոնք ըստ երևույթին հեռու շրջաններից էին հավաքագրվել, ուշ գիշերով վերադարձել էին՝ շեյխ Խդիրին կատարվածի մասին զեկուցելու:

Երկու տեղից վիրավոր լինելով՝ հայրս իր ընկերների հետ Բաղալի հրացանային կրակի պաշտպանության տակ Ծաղկասարի ձյունոտ բարձր գագաթից ամբողջ գիշերվա ընթացքում դժվարությամբ հասել էին անդնդախոր ձորը, Տիգրիս գետի ափին գտնվող քրդական փոքրիկ գյուղը, որտեղ բնակություն էր հաստատել միայն երկու ընտանիք:

Գյուղի միակ երկու բնակիչները ծանոթ էին հայերին, ապրում էին նրանց հաշվին: Հայրս կեսգիշերին թակում է նրանցից մեկի դուռը:

– Ո՞վ է, ներսից լսվում է տանտիրոջ ձայնը:

– Ձեզ ծանոթ Մխիթարը,– դրսից պատասխանում է հայրս:

– Ի՞նչ գործ ունես այս մութ գիշերով:

– Օթևան եմ խնդրում:

Ձքավոր քուրդ գյուղացին, առանց հապաղելու ցուցաբերում է իր բարեսրտությունը, բացում է դուռը հայ մարդկանց առաջ, վերքերը կապում, ցույց տալիս նրանց անհրաժեշտ օգնություն, սակայն Կալահյան կոչվող գյուղի չքավոր քրդի խրճիթում օթևանողը միայն նրանք չէին. այնտեղ թաքնվել էին նաև այլ փախստականներ, որոնցից երկուսը նույնպես ծանր վիրավոր էին և գտնվում էին մահամերձ վիճակում:

Շեյխ Խդիրի և Օմար աղայի խուզարկու ավազակները հետապնդելով հասել էին նաև Կալահյան գյուղ, այնտեղ հայտնաբերել վիրավորված հայրիկիս և մահամերձ վիճակում գտնվող մյուս փախստական հայերին և երկրորդ օրը շեյխ Խդիրի և Օմար աղայի հրամանով գնդակահարել էին նրանց, իսկ դիակները նետել ջրհորի մեջ:

ԵՐԴՈՒՄ ԵՂԲՈՐՍ ԳԵՐԵԶՄԱՆԻՆ

Հայրիկիս և մեծ եղբորս զոհվելու մասին լուրը սուր դաշույնի պես խոցեց սիրտս: Մի պահ աչքերս մթնեցին. խրճիթն իր հսկայական գերաններով ջրաղացաքարի նման պտույտ եկավ գլխիս: Ձդիմացա անսպասելի հարվածին, թուլացա ու երերալով միանգամից տապալվեցի խոնավ հատակին: Թե ինչ կատարվեց Աննայի և Աչանի հետ, այդ մասին անհնար է նկարագրել: Միայն գիտեմ, որ այդ երկու դժբախտ կանայք օր ու գիշեր քուն չունեին: Չորս օր ողբալով այնքան էին հյուծվել, որ գրեթե զրկվել էին խոսելու ընդունակությունից, և զարմանալին այն էր, որ այդքան կարճ ժամանակամիջոցում դեռ քսանվեց-քսանյոթ տարին չլրացած երկուսի մազերն էլ ճերմակել էին, իսկ մեջքները՝ կորացել: Խրճիթում քայլելիս, հարբածի պես դեսուդեն գլորվելով, պատերին էին դիպչում՝ անգամ չզգալով մարմնական ոչ մի ցավ:

Տեսնելով քրոջս, ինչպես նաև Աչանի ողորմելի վիճակը, որին հարազատ մոր պես էի սիրում, սիրտս ուղղակի տակնուվրա էր լինում: Չնայած իմ հոգեկան ապրումներին՝ երկուսի հետ ինքս էլ էի տանջվում, բայց և այնպես ուզում էի որևէ հնարքով, թեկուզ մեկ վայրկյան հանգստացնել նրանց ցավերը, սակայն մխիթարելու կամ հանգստացնելու համար հնարք չէի գտնում, իսկ ապագայի նկատմամբ նրանց հույս ներշնչելու առումով դեռ հասունացած չէի:

Մենք երկու եղբայրներով մինչև որբանալը ապրում էինք Աննայի խրճիթում՝ ամեն կերպ խուսափելով որևէ մեկին հանդիպելուց: Հայրիկիս ու մեծ եղբորս զոհվելուց հետո այն վախը, որ մինչ այդ զգում էի, կարծես թե ընդմիշտ վերացավ վրեժի ազդեցության տակ և այլևս բոլորովին չէի մտածում, թե ինչ կպատահի հետագայում որևէ մեկին:

Հարազատներիս զոհվելու մասին լուրը ստանալու առաջին երկու օրերին մտորումներով տարված, ցնորվածի պես շրջում էի դեսուդեն՝ արհամարհելով այն վախը, որ մինչ այդ գոյություն ուներ իմ մեջ: Այդ օրերին ամբողջապես կտրվել էի հաց ու ջրից, քայլելիս գլուխս դիպչում էր պատերին, իսկ շատ դեպքերում ինքս էի խփում, որպեսզի ցավ զգամ: Ցանկանում էի արտասվել, որ սիրտս հանգստանա, բայց իզուր էին ջանքերս. ես բոլորովին ո՛չ ցավ էի զգում, ո՛չ էլ քաղց: Աչքերս ցամաքած աղբյուրի պես վաղուց էին չորացել, արտասուքս բոլորովին չէր գալիս, իսկ սիրտս, բաբախելով վանդակում եղած թռչնի պես, թպրտում էր կրծքիս տակ:

Ծանր խոհերով տարված՝ ընկել էի խոր մտածմունքների մեջ: Մի պահ աչքերս լայն բացվեցին, բռունցքներս ամուր սեղմվեցին, այնպես որ դեռ վաղ՝ տակավին պատանի հասակում, վրեժի ցասումով լցված, ուզում էի խրճիթից դուրս թռչել և իմ լարված մագիլներով չարագործ Օմար աղայի և շեյխ Խդիրի կոկորդից բռնել:

– Դե՛, պատասխանե՛ք, ոճրագո՛րծ մարդասպաններ,– հանկարծ բղավեցի ես, սակայն հենց այդ պահին էլ, քաղցից թուլացած, աչքերս մթնեցին, առաստաղի հաստ գերանները կրկին պտույտ եկան գլխիս շուրջը, վերջիվերջո անզգայացած վայր ընկա խրճիթի խոնավ անկյուններից մեկում մինչև հաջորդ առավոտ:

*

* *

Երկաթի պես ծանրացած գլուխս բարձրացրի խոնավ հատակից այն պահին, երբ Բադալի երկու փոքրիկ տղաները քնից արթնացել, լաց

լինելով հաց էին ուզում: Օ՜, որքան սարսափելի էր տեսարանը այդ մռայլ առավոտյան: Ինձ թվում էր, թե աչքիս երևացող ամենքն ու ամեն ինչ անտեր էին մնացել: Այո՛, իսկապես մենք մնացել էինք անտեր ու անտիրական թուրք մարդասպանների շրջապատում: Չկար մեկը, որ մի երկու հուսադրող խոսք ասեր մեզ, հատկապես այն երկու խեղճ կանանց, որոնք անասելի տանջվում էին գիշեր ու ցերեկ: Իսկ ո՞վ և ի՞նչ կարող էր ասել ու ինչո՞վ մխիթարել մեզ. բոլորն էլ մեր օրին էին, բոլորն էլ սգալով տանջվում էին իրենց հարազատների կորստի համար: Գյուղի հայ բնակչության գրեթե ինչնուն տոկոսը ոչնչացվել էր օսմանյան պետության դահիճների կողմից, իսկ կենդանի մնացած փոքրաթիվ մարդկանց գոյության մասին որևէ մեկը տեղեկություն տալ չէր կարող:

Մեր ընտանիքի մնացած անդամներն ու բարեկամները, զրկված լինելով գարնանային արևի պայծառ ջերմությունից, մշտապես փակված էին խրճիթների թաքստարաններում ու ոչ մի տեղ չէին գնում: Կանայք, փոքրիկ մանուկներին գրկած, կծկվել էին իրենց սովորական թաքստարաններում և ջղաձգորեն սպասում էին, թե ովքեր կլինեն մարդասպանների հերթական զոհերը:

Չնայած Աննան և Աչանը ոտքի էին կանգնել, սակայն նրանց լաց ու սուգը դեռ շարունակվում էր:

Բադալի սպանությունից անցել էր չորս օր, իսկ նրա դիակը դեռ մնացել էր Ծաղկասարի ձյունապատ սարի գագաթին՝ բաց երկնքի տակ: Երկուսն էլ, ծանր ապրումներով տարված, մտածում էին, թե ինչ հնարքով նրա մարմինը հողին հանձնեն:

Չորրորդ օրվա կեսին էր, երբ լսեցի Աննայի և Աչանի կամացուկ խոսակցությունը Բադալի թաղման մասին:

– Չեմ թողնի, որ վայրի գազանները հոշոտեն իմ եղբոր մարմինը,– արտասուք թափելով խոսում էր Աննան:

– Գուցե միասին գնանք թաղելու,– համարձակորեն առաջարկեց Աչանը:

– Շատ լավ կլինի,– ասաց Աննան, – բայց ով մեզ կառաջնորդի դեպի սարը:

– Կգնանք երկուսով, ինչ լինելու է թող լինի,– ոգևորվեց Բադալի կինը:

– Երկուսով, առանց ուղեկցողի գնալ չենք կարող, մարդասպանները դեռ թափառում են ամեն տեղ, երեխաները մեղք են, կմնան անտեր:

Իրոք, Աննան վախենում էր, որ ճանապարհին սպանվեն, և փոքրիկ մանուկները մնան անտեր, առանց մայրիկի:

– Հայրիկից ու եղբայրներիցդ հետո մեր ապրելը ավելորդ է,– հառաչեց Աչանը՝ սրբելով աչքերից թափված արտասուքը:

– Հույսդ մի՛ կտրիր, Աչա՛ն ջան, հո երկիրը միշտ այսպես չի մնա, – ասաց Աննան ու շարունակեց,– հայրիկը պատմում էր, որ օսմանցիները միշտ էլ գազանաբար կոտորել են հայերին, բայց կենդանի մնացածները պայքարելով շարունակել են գոյատևել, գուցե այդպես էլ լինի:

– Հավատացել եմ հայրիկին և այժմ էլ հավատում եմ նրա ասածներին, բայց էլ մարդ չմնաց,– տխրությամբ պատասխանեց Աչանը:

– Փա՛ռք տուր Տիրոջը, որ Սևուկն ու Վարդանը կենդանի մնացին, նրանք, Գևորգն ու Միրաքը կփոխարինեն իրենց զոհված հայրերին և միշտ էլ կանգուն կմնան,– ոգևորում էր Աննան:

– Ա՜խ, երա՜նի թե չարից հեռու մնան, էլ ուրիշ դժբախտություն չպատահի նրանց:

Լսելով նրանց խոսակցությունը եղբորս թաղման մասին՝ ես կամաց-կամաց մոտեցա երկուսին՝ խնդրելով, որ ինձ էլ տանեն Ծաղկասար՝ օգնելու նրանց, բայց Աննան չհամաձայնեց:

– Դու պետք է տանը մնաս. քո գալը վտանգավոր է,– համոզում էր նա:

– Թեկուզ սպանեն, ես տանը մնացող չեմ,– հայտարարեցի ու զայրացած տեղիցս վեր կացա:

Լսելով իմ ձայնը՝ քուրդ Մամոն հարևան սենյակից դուրս եկավ. ըստ երևույթին ես նրանցից մեկի հանգիստը խանգարել էի, և նա իր գարշելի ու թունոտ հայացքը նետեց մեզ վրա և կրկին շեմից հեռացավ՝ փակելով երկու սենյակներն իրարից բաժանող միջանցքի մեծ դուռը: Մամոյի չքվելուց հետո Աննան նորից սկսեց իր խոսակցությունը եղբոր թաղման մասին:

– Աչա՛ն ջան, որքան շուտ գնանք, այնքան լավ:

– Ե՞րբ գնանք,– հարցրեց Աչանը:

– Հենց այս գիշեր՝ աքլորականչին,– պատասխանեց Աննան՝ միաժամանակ զգուշացնելով, որ այդ մասին ոչ մեկին ոչինչ չասի:

– Բաժդինը երեկ Ֆարաշինից վերադարձել է տուն. գուցե նա մեզ ուղեկցի մինչև Ծաղկասար,– խորհուրդ տվեց Աչանը:

– Նրա հայրը կարող է իմանալ և խանգարել:

– Փորձի՛ր, գուցե հաջողվի:

Այդ նույն երեկոյան, երբ Բաժդինը դրսից ներս էր մտնում, Աննան խնդրեց նրան իրենց ուղեկցել մինչև Ծաղկասար:

– Ե՞րբ եք ուզում մեկնել,– հարցրեց Բաժդինը:

– Հենց այս գիշեր,– պատասխանեց Աննան:

– Պատրաստ եմ ուղեկցել ուզած ժամանակ,– ասաց նա ու գլուխը կախ անցավ իր սենյակը:

Նրա գնալուց հետո երկու կանայք սկսեցին նախապատրաստվել: Նրանք սկզբում պայմանավորվեցին, որ Բալաբեկի մորը՝ Փառանձեմին նույնպես հետները տանեն, սակայն փոքր երեխաներին խնամող չլինելու պատճառով որոշեցին գնալ միայն երկուսով:

Աննան և Աչանը այդ նույն գիշեր բոլորովին աչք չփակեցին. նրանք պատրաստվել էին գիշերով ինձնից թաքուն հեռանալ գյուղից այնպես, որ լույսը բացվելուն պես լինեն սարի լանջերում: Ես նույնպես պատրաստվել էի նրանց հետ գնալու: Սուտ քուն մտնելով՝ մինչև աքլորականչ աչքերս չփակեցի: Վերջապես նրանք վեր կացան, վերցրին գերեզման փորելու համար անհրաժեշտ գործիքներ և անաղմուկ դուրս եկան խրճիթից ու մոտեցան այն ցանկապատին, որտեղ նրանց սպասում էր Բաժդինը: Նրանք ներքին թաղամասի անմշակ մնացած մարգագետինների միջով դուրս էին եկել Ծաղկասար տանող ճանապարհ ու գրեթե վազելով հեռանում էին գյուղից, իսկ ես աննկատելիորեն հետևում էի նրանց:

Նրանք ինձ տեսան միայն սար բարձրանալիս, երբ առավոտյան արշալույսը դեռ նոր էր բացվել:

– Ինչո՞ւ եկար, չէ՞ որ ասացի՝ չգաս,– գորովանքով ասաց Աննան՝ ձեռքիցս բռնելով:

– Թող գա՝ իր եղբորը վերջին անգամ հրաժեշտ տա,– արտասվելով ասաց Աչանը:

Աննան այլևս ինձ հետ ուղարկել չէր կարող. մենք զգալի տարածություն էինք կտրել, խոնավ, ոլոր-մոլոր ճանապարհներով, դժվարությամբ արդեն բարձրանում էինք սարի գագաթ: Հրացանով զինված Բաժդինը գնում էր մեզնից առաջ, իսկ մենք, առանց որևէ խոսք փոխանակելու, հետևում էինք նրան: Մենք կամաց-կամաց մոտենում էինք օտարացած խոտհարքներին, սառնորակ աղբյուրներին: Նայելով մեզ հանրածանոթ վայրերին՝ ես ակամայից մտաբերում էի իմ ընկերների հետ անցկացրած ուրախ ու երջանիկ օրերը:

Հիշեցի, թե ինչպես մեկ տարի առաջ մենք չորս եղբայրներով շտապում էինք շուտ վերջացնել խոտհունձի աշխատանքները՝ ուրիշներին օգնության գնալու համար: Հիշեցի, թե ինչպես Բադալը, բարձրանալով քարաժայռի կրծքում եղած ճեղքերի մեջ, այնտեղից մեզ համար վայրի մեղրաճանճերի պատրաստած անուշահամ մեղր բերեց:

Այդ մտածմունքների մեջ թաղված՝ համարյա թե հասել էինք սարի բարձունքին: Մի քանի քայլ գնալուց հետո հանկարծ ձյան միջով անցած մարդկանց ոտքերի հետքեր նկատեցինք: Սիրտս սկսեց սաստիկ բաբախել, դող ընկավ մարմինս, և հուզմունքից մի պահ կանգ առա. չէի ուզում առաջին իսկ րոպեներին ականատես լինել այն տեսարանին, որը պետք է տեղի ունենար դիակը գտնելու ժամանակ:

Աննան և Աչանը ձյան միջով անցնող նեղ արահետով առաջ գնացին, իսկ ես սաստիկ հուզմունքից տեղիցս շարժվել չկարողացա. կարծես թե սիրտս կանգ առավ: Մի պահ շրջվեցի դեպի հետ ու մեխվեցի ձյան հաստ շերտի մեջ, սակայն հենց այդ վայրկյանին էլ լսեցի սարսափելի ճիչ:

Դա Աննայի ճիչն էր, որն առաջինն էր նկատել եղբորս դիակը: Մի վայրկյան չանցած՝ լսեցի նաև Աչանի ոչ սովորական ճիչը, և երկուսի ձայները անմիջապես կտրվեցին: Հետ շրջվեցի ու համարյա թե վազելով մոտեցա դիակին, որի վրա ուշաթափ ընկած էին երկու կանայք: Մի պահ ինձ կորցրի, բայց ուշքի գալով ուզեցի օգնության կանչել Բաժդինին, սակայն վերջինս ըստ երևույթին գիտակցաբար հեռացել էր ու թաքնվել քարաժայռի հակառակ կողմում՝ երկու կանանց ողբին ականատես չլինելու:

Իհարկե վերջին մեկ ամսվա դաժան օրերի ընթացքում այդպիսի ուշաթափության դեպքեր շատ անգամ էին տեղի ունեցել, և ես սեփական փորձով գիտեի, թե ինչպես կարելի էր այդպիսիներին ուշքի բերել: Մոտենալով Աննային՝ ես շատ դժվարությամբ բարձրացրի նրա գլուխը, սկզբում հեռացրի եղբորս դիակից և սկսեցի արևից փափկած ձյունով տրորել նրա ճակատն ու գեղեցիկ դեմքը: Չնայած դժվարությամբ, բայց և այնպես ինձ հաջողվեց ուշքի բերել նրան: Նույն ձևով ուշքի բերեցի նաև Աչանին այս անգամ արդեն թուլացած Աննայի օգնությամբ:

Դժվարությամբ ուշքի գալով՝ նրանք երկար ողբացին, բայց վերջի-վերջո հասկացան, որ եկել են՝ հարազատի դիակը հողին հանձնելու, այլ ոչ թե անընդհատ ողբալու: Վերջապես կանայք վեր կացան, վերցրին գործիքները, ժայռի հետևից վերադարձավ նաև Բաժդինը, ու մենք չորս հոգով, հերթով սկսեցինք փորել ձյունից փափկած խոնավ գետինը:

Աշխատանքի ժամանակ մեզնից ոչ մեկը չէր խոսում. աշխատում էինք, որքան հնարավոր է, շուտ վերջացնել փորելը: Գերեզմանափոսը բավականին խորացնելուց հետո Բաժդինը կրկին հեռացավ ժայռի հետևը, Աննան և Աչանը հերթով աշխատում էին այն ավելի խորացնել,

իսկ ես նայում էի եղբորս դիակին: Նա բոլորովին չէր փոխվել. կարծես թե քնած լիներ: Նրա մահացու վերքը գլխից էր. հոսած արյունը ամբողջովին թափվել էր աչքերի մեջ և լերդացել:

Երկու կանայք գարնան ձյունով մաքրեցին արյունը, և պարզ երևացին նրա գեղեցիկ ու սև աչքերը: Դիակի չորս կողմում ցրված էին դատարկ պարկուճներ, փամփուշտակալ ու տարբեր իրեր: Դահիճները հանել ու տարել էին եղբորս նոր զգեստները՝ թողնելով միայն արյունով ներկված սպիտակեղենը:

Մինչ երկու կանայք կվերջացնեին, ես վերջին անգամ երկար նայեցի իմ սիրելի եղբոր դեմքին, ու ինձ թվաց, թե աչքերս ջուր դարձան, և եթե հեռվից եկած Բաժդինը թևիցս չքաշեր մի կողմ, ապա լայն բացված աչքերս երեկոյան լեռնային պաղ ցրտից կսառչեին: Դուրս գալով փոսից՝ Աննան և Աչանը նորից սկսեցին ողբալ, սակայն Բաժդինը նրանց զգուշացրեց վերահաս ցուրտ գիշերվա մասին:

Մենք չորսով ճիգերի մեծ լարումով վերջապես եղբորս դիակն իջեցրինք փոսի մեջ և ծածկեցինք խոնավ հողով: Մութն արդեն ընկել էր, իսկ երկու կանայք դեռ շարունակում էին իրենց ողբն ու կսկիծը Բադալի թարմ գերեզմանի վրա:

Սարսափելի տեսարան էր. Աննան ու Աչանը երեսի վրա ընկած իրենց նիհարած մարմնով փաստորեն ծածկել էին երկու որպե առաջ հողին հանձնված Բադալի թարմ գերեզմանը: Նրանք այնքան ամուր էին գրկել գերեզմանը, որ թվում էր, թե մեկը մյուսից խլում է իր մարմնով դեռ չծածկված հողաթմբի վերջին պատառը: Եղունգներով ճանկռտում էին գերեզմանի կողքերի քարքարոտ հողերն ու շաղ տալիս իրենց գզգզված մազերի մեջ: Ամբողջովին արյունոտվել էին նրանց կապտած շրթունքները, ուռել էին աչքերը: Գիշերվա ուրվականի պես մերթընդմերթ գլուխները շարժելով՝ դեռ շարունակում էին երեսնիվայր պառկած մնալ աստիճանաբար սառչող թարմ գերեզմանին:

Տեսնելով քրոջս և հարսիս ողբալի վիճակը՝ ես ավելի էի անզգայացել, փայտացած կանգնել գերեզմանից քիչ հեռու: Լաց լինել չէի կարողանում, որովհետև արտասուքը վաղուց չորացել էր, տեղիցս շարժվել և մի երկու խոսք ասել այդ դժբախտ կանանց նույնպես չէի կարող, քանի որ սիրտս քարացել էր. բարձր սարի գլխին, ձների մեջ կանգնած, չգիտեի ինչ անել:

Վերջիվերջո բարի Բաժդինը մոտեցավ և խնդրեց Աննային վեր կենալ:

– Քիչ էլ սպասենք,– ողբալի ձայնով խնդրեց Աչանը:

– Մութն ընկել է, սարից ցած իջնելը կդժվարանա,– ասաց Բաժդինը՝ կրկին հեռանալով գերեզմանի մոտից:

Աննան գզգզված մազերով գլուխը բարձրացրեց ու ձեռքը մեկնելով դեպի ինձ՝ ասաց.

– Արի՛, դու էլ արի՛, վերջին անգամ հրաժե՛շտ տուր եղբորդ գերեզմանին:

Լսելով քրոջս՝ բնազդաբար մոտեցա և նրանց օրինակով դեմքս դրեցի սառած թարմ հողաթմբի վրա և ընկա խոր մտածմունքների մեջ:

– Դե երդվի՛ր,– ասաց Աննան,– երդվի՛ր եղբորդ գերեզմանով, որ դու հայրիկի և եղբայրներիդ թափված արյան դիմաց վրեժխնդիր կլինես…

Ինձ թվաց, թե Աննայի վերջին խոսքերը ես երազում եմ լսում, քանզի իմ մտորումներն ինձ հեռուն էին տարել…

«Վրեժխնդրություն» բառը մինչ այդ անծանոթ էր ինձ, բայց և այնպես դա այնքան սուր մեխվեց ուղեղիս մեջ, որ այդ տպավորության տակ աչքիս առաջ կինոժապավենի նման անցան տարօրինակ ու սարսափեցնող շատ պատկերներ: Աչքիս առաջ սկզբում երևացին մեր գյուղի մեծ ծառի փչակում հավաքված իմ ընկերները, որոնք, իհարկե, առաջվա նման փոքր չէին, նրանք մեծացած էին երևում, իսկ շատերի երեսները՝ մազակալված ու սև մորուքներով: Մենք բոլորս էլ զգեստավորվել էինք ռուսական զինվորների տարօրինակ զգեստներով, որոնց մասին առաջներում լսել էի Ռուսաստանից վերադարձած քեռի Պտուտանի զրույցների ժամանակ: Հետո մենք խմբով մեկնեցինք Ծաղկասարի ամառանոց, այնտեղից թեքվեցինք դեպի Տիգրիս գետի հովիտը, որտեղ ամառվա շոգ օրերին թրև էին գալիս Հասան բեկի հարյուրավոր արաբական ձիերը: Մենք տասն ընկերներով սարալանջի դեռ չհալված ձյան միջով ծանր քայլերով հասանք գետի ափը, որտեղ կազմ ու պատրաստ կանգնած էին թամբած արաբական գեղեցիկ նժույգներ: Բոլոր ընկերներս էլ զինված էին նետ ու աղեղներով, իսկ իմ ձեռքում կար մի անսովոր ծանր զենք, որը դժվարությամբ էի տեղից շարժում:

Մենք նստեցինք ձիերն ու Մնոյի հրամանով արշավեցինք դեպի արևելք՝ ուղղություն վերցնելով դեպի Սեբաստիա սարը: Այդպես արշավելով՝ մենք մտանք մի ընդարձակ դաշտ, որտեղից մեր դեմ դիմաց հայտնվեցին հազարավոր խաղաղ մարդիկ:

– Խփե՛ք՝ մեր վրեժը լուծենք,– հրամայեց խմբի ղեկավար Մնոն:

Լսելով նրա հուժկու և ազդեցիկ հրամանը՝ ես պատրաստվեցի հարվածելու, սակայն ամբոխի առջևից գնացող մարդիկ, առանց հետ նայելու, ժպիտը երեսներին, առաջ էին անցնում՝ անգամ ուշադրություն չդարձնելով մեզ վրա:

Վերջապես ամբոխն անցավ, և հանկարծ քարաժայռի միջից սողալով դուրս եկավ մեզ հանրածանոթ շեյխ Խդիրի դեմքով մի սև, թունավոր օձ: Նա գալարվելով գլուխը բարձրացրեց, ֆշշալով պատրաստվում էր խայթել ինձ, սակայն հենց այդ պահին էլ իմ արաբական կարմիր նժույգը, կանգնելով հետևի ոտքերի վրա, իր սմբակը դրեց օձի մեջքին՝ նրան սեղմելով ցեխի մեջ, իսկ ես իմ անսովոր սուր զենքը վերևից մխեցի նրա ծոծրակը:

Սև օձը գալարվելով շրջվեց մեջքի վրա, և այդ րոպեին էլ աչքիս առաջ երևաց շեյխի գարշելի դիակն իմ նժույգի սմբակների տակ:

Տեսնելով սպանված շեյխին՝ ես ուրախությունից արտասվեցի ու միաժամանակ բղավեցի՝ վրե՜ժս, վրե՜ժս լուծված է: Իմ ձայնը սարսափեցրել էր ինձ, և երբ բարձրացրի երկաթի նման ծանր ու սառած գլուխս, իմ աչքերից թափվեցին արտասուքի խոշոր կաթիլներ:

Լսելով իմ անսովոր ու սարսափելի ձայնը՝ երկու կանայք, թողնելով իրենց ողբը, հազիվ ուշքի էին բերել ինձ ծանր ուշաթափությունից: Չնայած դեմքս սառել էր, բայց արտասուք թափվելուց հետո հովացել էին քունքերս, իսկ սիրտս՝ հանգստացել: Հեռանալով եղբորս գերեզմանաթմբից՝ նրանք ինձ սարից ցած բերին, և միայն ուշ գիշերով աննկատ հասանք մեր տուն, ու մեռածի պես ընկա անկողնու վրա մինչև հաջորդ առավոտ:

ՎԵՐՋԻՆ ԱՆԳԱՄ ՏԱՔ ՋՐԵՐՈՒՄ

Ահավոր կոտորածից անցել էր ավելի քան մեկ ամիս, բայց թվում էր, թե շատ տարիներ են անցել, և ես այլևս այն չարաճճի ու զվարթ պատանին չեմ, որին ամեն օր դժվարությամբ էին դրսից տուն բերում, այլ ապագայի մասին մտածող ու խոհերով տարված մի հասակավոր մարդ, որի վրա ընկած են գյուղական մեծ ընտանիքի ամենածանր հոգսերը: Ավելին՝ այդ մեկ ամսվա հրի ու մրրիկի մեջ ապրելն ու շնչելը՝ թուրքական դաժան մարդասպաններով շրջապատված, նշանակում էր, որ խելահաս մարդն իր կյանքի եթե ոչ լրիվ, ապա կես մասն անց է կացրել ծանր ապրումներով ու անասելի տանջանքներով:

Կոտորածների ահավոր օրերին փոխվել էր ամեն ինչ. տակնուվրա էր արվել գյուղն ամբողջությամբ: Չքավոր քուրդ գյուղացիների օգնությամբ փրկված կանայք ու երեխաները կորցրել էին ոչ միայն իրենց նախկին աշխուժությունը, այլև ամբողջապես հյուծվել ու կմախք էին դարձել: Եթե որևէ անծանոթ մարդ տեսներ նրանց, անպայման կկարծեր, որ նրանք բանտերից վերադարձած տաժանակիրներ են:

Կենդանի մնացածների զգալի մասը խրճիթներից հազվադեպ էր դուրս գալիս, խիստ անհրաժեշտության կամ որևէ ծանր հիվանդության ժամանակ՝ քաջ գիտենալով, որ դրսում բացի երեկվա մարդասպաններից ուրիշ որևէ մոտ մարդու հանդիպել չէին կարող: Նրանք, գիշեր ու ցերեկ ահ ու սարսափի մեջ իրենց մութ խորշերում թաքնված, սրտի բաբախումով սպասում էին արևելքից բացվող արշալույսին, որը կենդանի մնացած հայերի ազատվելու միակ հույսն էր:

Չնայած այդ սարսափելի ժամանակներին՝ այնուամենայնիվ մենք՝ կենդանի մնացածներս, գերմարդկային ճիգերով, մահվան սպառնալիքի ներքո մի կերպ տարանք անցնող ամսվա արյունոտ օրերն ու սկսեցինք աստիճանաբար մութ գետնախորշերից դուրս գալ լույս աշխարհ:

Հարազատներիցս զրկվելուց հետո սիրտս սաստիկ բորբոքված էր, մի րոպե անգամ հանգիստ չունեի. չգիտեի ինչ անել և ուր գնալ: Գյուղն ամբողջապես դատարկվել ու միանգամից ամայի էր դարձել: Դատարկ էին նաև անցյալում մարդկանցով լի մարգագետինները, անմշակ մնացած վարելահողերն ու գարնան անուշահոտ ծաղիկներով զարդարված դաշտերը, որտեղ հայ աշխատավորներն ամեն տարի այդ նույն օրերին, քրտինքը ճակատներին, մեծ եռանդով բարիք էին ստեղծում ոչ միայն իրենց ընտանիքների, այլև անաշխատ թուրք և քուրդ ձրիակերների համար:

Լռություն էր ամեն տեղ, չէին լսվում երեկվա գութանավորների աշխատանքային երգերը, ծաղկեփնջեր պատրաստող պատանիների ու աղջիկների ուրախալի ձայները, չէր երևում ոչ մի կենդանի արարած, անգամ հանդերի միջով անցնող բանուկ ճանապարհներն ու արահետները մարդ չանցնելու պատճառով ամբողջապես ծածկվել էին գարնանային խիտ կանաչով:

*
* *

Ծաղկասարի բարձր գագաթին եղբորս դին հողին հանձնելուց հետո որոշ չափով կազդուրվել էի և սկսել էի գաղտագողի տնից դուրս գալ ու այցելել կենդանի մնացած ընկերներիս:

Մեր խմբի անդամներից ողջ էին մնացել միայն չորսը. մնացածները գնդակահարվել էին այդ ահավոր գիշերը:

Շուտով Մնոյի հետ սկսեցինք մեր խումբը լրացնել նոր ընկերներով, հատկապես այն տղաներից, ովքեր մինչև կոտորածը տարբեր պատճառներով չէին ընդունվել խմբի մեջ:

Դուրս գալով ստորգետնյա խորշերից՝ ես ու Մնոն պատանեկան մեծ հետաքրքրությամբ, խիստ գաղտնի սկսեցինք խրճիթների միջև գոյություն ունեցող անցքերով շրջել գյուղի մեջ: Հետախույզ մարդկանց նման մտնում էինք հայտնաբերված թաքստարանները, դատարկ մնացած խրճիթները, անգամ չքավոր քուրդ գյուղացիների տները, որի արդյունքում մեզ հաջողվեց զոհված ընկերների փոխարեն մեր խմբի մեջ ներգրավել վեց նոր տղաների՝ Մուրադին, Հայկին, Մկոյին, Թովմասին, Արամին և Ահարոնին, որոնք քուրդ լամուկների հետ կռվելու մեծ փորձ ունեին:

Պայմանավորվելով տղաների հետ՝ մի օր առավոտյան՝ արևը դեռ հորիզոնից դուրս չեկած, ես ու Մնոն հետախուզեցինք գյուղի ամբողջ շրջապատը՝ հատկապես անասնակերից դատարկված մարագները, մանր եղջերավոր անասունների գոմերը, այդ թվում նաև քուրդ Օմար աղային պատկանող մեծ ախոռը, ջրաղացի անտառն ու դեպի Տիգրիս տանող ճանապարհի երկու կողմերը: Հետախուզելով նշված վայրերը՝ մենք ուզում էինք իմանալ, թե ինչ է կատարվում գյուղում և այդտեղից դուրս: Բացի այդ, մեզ անհրաժեշտ էր նախապատրաստել նոր անդամներով համալրված մեր խմբի հավաքը: Մենք պետք է մեր խմբի բոլոր անդամներին հավաքեինք և միմյանց հաղորդեինք այդ մեկ ամսվա ընթացքում տեղի ունեցած արյունալի դեպքերի մասին, ինչպես նաև որոշեինք, թե ինչ անենք հետագայում: Մեզ անհրաժեշտ էր գաղտնի հետախուզել ոչ միայն գյուղի շրջապատը, այլև հեռուները, մեզ քաջ ծանոթ լեռները, քարայրերը և դեպի հայաշատ գյուղեր տանող բոլոր ճանապարհները: Պետք է ստուգեինք և իմանայինք, թե ինչ է կատարվում մեր տարածքներից դուրս, քանի որ մեզանից ոչ մեկը դեռ ստույգ տեղեկություն չուներ հարևան մի շարք գյուղերի հայ ազգաբնակչության կոտորածների մասին: Որոշ կցկտուր տեղեկություններ կային այն մասին, որ շեյխ Խդիրի ավազակախումբը մեր գյուղի մարդկանց կոտորելուց հետո նույն գիշերվա ընթացքում կոտորել էր նաև մեզ մոտիկ հարևան երեք գյուղերի հայ բնակչությանը, բայց թե ինչ դրության մեջ էին շրջանի մյուս գյուղերը, մեզնից ոչ ոք ոչինչ չգիտեր: Չգիտեինք նաև, թե ինչ է կատարվում ռուս-թուրքական ռազմաճակատում:

*
* *

Պատանիների մեր խումբը, որն այս անգամ բաղկացած էր տասներկու հոգուց, հավաքվել էր նախկին տեղում՝ Շերասվար կոչվող մեծ ծառի փչակում: Դա ահավոր կոտորածից հետո մեր ընկերների առաջին հանդիպումն էր: Իհարկե, այդ հավաքը բոլորովին չէր նմանվում մեր նախկին հավաքներին: Տղաները բոլորն էլ տխուր էին, լրջախոհ, չէին վիճում, լրջորեն լսում էին մեկը մյուսին, սակայն յուրաքանչյուր ձայն լսելիս տեղից վեր էին թռչում՝ դադարեցնելով խոսակցությունները:

Մնոյի առաջարկությամբ որոշվեց երկու պահակ նշանակել. մեկը՝ Ձորաղբյուրի մոտ, իսկ երկրորդը՝ ծառի փչակից ոչ հեռու գտնվող մեծ քարաժայռի գագաթին, որտեղից հնարավոր էր դիտել գյուղի ամբողջ շրջապատը:

– Տղանե՛ր, ձեզնից ո՞վ է ցանկանում մեզ հետ հետախուզության գնալ,– հարցրեց Մնոն՝ նայելով բոլորի աչքերին:

– Դեպի ո՞ւր,– հարցրեց տղաներից մեկը, որը մինչ այդ մեր հավաքներին չէր մասնակցել:

– Տիգրիսի գետանցքից անցնող ճանապարհներն ու մոտակա անտառը. գուցե այնտեղ որևէ թաքնված հայ մարդու հանդիպենք,– առաջարկեց խմբի ղեկավարը:

– Գուցե մի քիչ էլ լողանա՞նք տաք ջրերում,– ժպտալով ասաց Ատոմը:

– Ամոթ էլ է Տիգրիս գնալ և տաք ջրերում չլողանալ,– նույն ժպիտով պատասխանեց Մնոն:

– Իսկ հետո ո՞ւր:

– Տեղ հասնելուց հետո էլ կորոշենք,– պատասխանեց նա:

– Լավ կլինի, որ գետի ափով բարձրանանք սարերը,– ասաց Հարությունի տղան՝ Ատոմը:

– Ինչի՞ համար,– հարցրեց Սարգիսը:

– Որոնենք թաքնվածներին,– պատասխանեց Ատոմը, որի հայրը կոտորածի գիշերը փախել էր բանտից:

– Վտանգավոր կլինի,– զգուշացրեց տղաներից մեկը, որի հայրը նույնպես փախել էր լեռները, բայց տեղեկություն չկար նրանից:

– Եթե վտանգից վախենանք, գետն էլ չպետք է գնալ,– ասաց Մնոն ու շարունակեց,– գյուղից պետք է մութ գիշերով դուրս գալ, այն հաշվով, որ քրդերից ոչ ոք չիմանա:

– Իսկ եթե իմանա՞ն,– հարցրեց Սարգիսը:

– Եթե իմանան, չենք գնա,– պատասխանեց մեր ղեկավարը:

Վերջապես բոլորս միաձայն որոշեցինք գնալ:

Առավոտյան՝ դեռ լույսը չբացված, տեղիցս վեր կենալուն պես, մոտեցա Աննային:

– Ո՞ւր ես գնում,– հարցրեց նա:

– Գնում եմ քեռի Մանուկի տուն՝ Սարգսի մոտ:

– Գնա՛, միայն թե գյուղից դուրս չգաք,– զգուշացրեց Աննան:

Խաբելով քրոջս՝ ես աննկատելիորեն դուրս եկա տնից, ներքին թաղամասի մարգագետինների խիտ թփերի միջով վազելով՝ հասա մեր սովորական հավաքատեղին: Տղաները բոլորն էլ այնտեղ էին՝ ծառի փչակում. չէր եկել միայն Մուրադը, ըստ երևույթին, չէր կարողացել տնից դուրս պրծնել:

– Ինչո՞ւ չեկավ,– հարցրեց Մնոն:

– Երևի վախեցավ,– պատասխանեց Սարգիսը:

– Քիչ էլ սպասենք, գուցե գա,– առաջարկեցի ես:

– Ուշ է արդեն, սպասել չենք կարող,– ասաց Մնոն ու կարգադրեց փչակից դուրս գալ:

Տղաները երկուական դուրս եկան ու վազելով մտան խոնավացած այգու խոտերի մեջ՝ ուղղություն վերցնելով դեպի Գետաձոր, որտեղ մեկ ամիս առաջ գնդակահարվեցին շղթայակապ արված հայերը:

Մենք գնում էինք խոտհարքների, խոզան արտերի, բարձրացած խոտերի ու քոլերի միջով, ուստի դժվար թե որևէ մեկը կարողանար մեզ նկատել: Չնայած մեր ճանապարհին հանդիպող բոլոր դժվարություններին՝ այնուամենայնիվ մեր խումբը հասավ տաք աղբյուր այն ժամանակ, երբ ամառվա պայծառ արևը լրիվ դուրս էր եկել Սև քարի հետևից և իր վառ ճառագայթները տարածել Տիգրիս գետի ծաղկազարդ հովտի վրա:

Մենք տաք աղբյուր չէինք եկել ավելի քան վեց ամիս, դրա համար շատ կարոտով մոտեցանք, իսկ շատերը դեռ շորերը չհանած, իրենց գցեցին քարաժայռից դուրս ցայտող արտասուքի պես պարզ ջրի մեջ:

Մենք հերթով պառկեցինք տաք ջրի մեջ՝ մոռանալով երեկվա մեր կասկածները և այն վտանգը, որը ժամ առ ժամ սպառնում էր մեզ:

Ես շատ վաղուց չէի լողացել տաք ջրում. այդ իսկ պատճառով մարմինս հանգստացավ. կարծես թե երանության մեջ լինեի, սակայն, երբ հիշեցի հայրիկիս և Բադալի հետ այնտեղ անցկացրած իմ անցած մանկական երջանիկ օրերը, միանգամից տխրեցի ու դադարեցի տղաների հետ խոսել:

– Տղանե՛ր, մի քիչ էլ Տիգրիսի մեջ լողանանք,– առաջարկեց Սարգիսը:

– Լողանանք, միայն թե քիչ,– պատասխանեց Մնոն:

– Տղանե՛ր, տաք ջրում լողանալուց հետո միանգամից գետի սառը ջրի մեջ մտնել չի կարելի,– ասացի ես:

– Ո՞վ ասաց,– հարցրեց տղաներից մեկը:

– Իմ հայրիկը,– պատասխանեցի ես:

Իմ պատասխանից հետո նրանք լռեցին և միանգամից վեր կացան ու պառկեցին աղբյուրից ոչ հեռու փռված ավազների վրա:

– Տղանե՛ր, եթե օտար մարդ պատահի, բոլորդ էլ քրդերեն կխոսեք,– կարգադրեց Մնոն:

– Իսկ նրա՞նք, որոնք քրդերեն վատ են խոսում,– հարցրեց Ատոմը:

– Այդ դեպքում խոսելու է մենակ Սևուկը,– պատասխանեց խմբի ղեկավարը ու սուզվեց ջրի մեջ:

Երկար ժամանակ ապրելով Խոշաբի քուրդ գյուղացիների միջավայրում՝ ես լրիվ տիրապետում էի նրանց լեզվին, խոսելու ձևերին, ծանոթ էի նաև նրանց կենցաղին ու նիստուկացին: Դեռ ավելին, մնալով Խոշաբում՝ ես համարյա թե մոռացել էի հայերեն մի շարք բառեր, երբեմն էլ դժվարանում էի կազմել նախադասություններ, դրա համար էլ թուրքերին կամ քրդերին հանդիպելիս բոլորովին չէի վախենում:

Հիշում եմ. մի օր մենք երեք ընկերներով գնում էինք դեպի Բալաբեկի ամայի մնացած ջրաղացը, երբ հանկարծ անտառի հետևից դուրս եկան երեք քուրդ ծիավորներ:

– Ո՞ւր եք գնում, – հարցրեց նրանցից մեկը:

– Ջրաղացի անտառ՝ փայտ բերելու,– քրդերեն պատասխանեցի ես:

– Ո՞ւմ տղան ես,– հարցրեց նա:

– Մամոյի թոռն եմ,– պատասխանեցի:

– Քո անունն ի՞նչ է:

– Իմ անունը Ռաշիդ է:

– Քո հո՞ր անունն ինչ է:

Մի պահ մտածելուց հետո բնազդաբար տվեցի Մամոյի մեծ տղայի անունը:

– Քեզ հետ գնացողներն ո՞ւմ տղաներն են:

– Մեր հարևան Շաքրոյի տղաներն են:

– Օմար աղայի հովիվ Շաքրոյի՞,– հարցրեց ծիավորներից մեկը:

– Այո՛,– պատասխանեցի ես:

Գոհ մնալով իմ պատասխաններից՝ նա կրկին հարց տվեց:

– Ո՞ր ճանապարհով կարող ենք Բաբանիս գյուղը գնալ,– հարցրեց նա՝ նայելով տարբեր տեղերով դեպի ջրաղաց եկող նեղ արահետներին:

Ես բարձրացա քարի գլուխը, ձեռքով ցույց տվեցի այն կարճ ճանապարհը, որտեղով նրանք կարող էին գնալ: Ձիավորները, ըստ երևույթին գոհ մնալով իմ պատասխաններից, իրենց ձիերի գլուխները թեքեցին դեպի ցույց տված ճանապարհը ու արագ հեռացան անտառի եզրից:

Լավ էր, որ ձիավորների բոլոր հարցերին ես պատասխանեցի, թե չէ իմ երկու ընկերները իրենց պատասխաններով կարող էին մեզ մատնել: Իհարկե, այդ դեպքից հետո տղաներն այլևս խրճիթներից դուրս չեկան:

Օրը համարյա կես էր դարձել, իսկ մենք շտապում էինք բարձրանալ լեռները, քարափների մեջ որոնել թաքնված հայերին, սակայն մեր խումբը դեռ չէր շարժվել, երբ գետի հակառակ կողմից երևաց մի մեծ քարավան, որը շարժվում էր ուղիղ դեպի Տիգրիսի լայն գետանցք: Ծուղակի մեջ չընկնելու համար մենք ստիպված էինք թաքնվել գետափնյա թփուտների մեծ քարաբեկորների արանքում՝ հետևելով քարավանի շարժմանը: Չնայած շատ ժամանակ չէր անցել, բայց գետափին արդեն հավաքվել էին հազարից ավելի տղամարդիկ, կանայք, երեխաներ: Ծանոթ չլինելով գետին՝ ըստ երևույթին նրանք սիրտ չէին անում գետանցքի լայն հոսանքով անցնել հակառակ կողմը, որտեղ գտնվում էինք մենք: Վերջապես քարավանի հետևից առաջ եկած մի քանի ձիավորներ համարձակվելով գետն անցան ու միանգամից կանգ առան տաք ջրերի շրջապատում: Նրանց հետևեցին նոր ձիավորներ, ապրանքով բարձած ջորիներ ու մեծ թվով տղամարդիկ:

Ձիավորներից մի քանիսը գետափով բարձրացան դեպի քարափ, որտեղով անցնում էր մի նեղ արահետ, այնտեղ, որտեղ թաքնվել էինք մենք: Մեզ տեսնելով՝ նրանցից ավագը դիմեց մեզ.

– Ի՞նչ եք անում այստեղ,– քրդերեն հարցրեց նա:

– Լողանում ենք,– պատասխանեցի ես:

– Ո՞ր գյուղից եք:

– Դիմացի,– պատասխանեցի՝ ձեռքս մեկնելով դեպի մեր գյուղը:

– Ի՞նչ է, ձեր գյուղը դեռ չի՞ նահանջել,– ասաց ձիավորը:

Նահանջ բառի նշանակությունը չհասկանալով՝ մի պահ լռեցի և հետո հարցրի.

– Ինչո՞ւ նահանջենք:

– Դուք չե՞ք լսել, որ գյավուրները գալիս են:

– Ովքե՞ր:

– Գյավուր ռուսները:

– Մեզնից շա՞տ են հեռու,– հարցրի ես:

– Վաղը կամ մյուս օրն այստեղ կլինեն,– պատասխանեց քուրդ ձիավորը:

– Ռուս գյավուրները մեզ կսպանե՞ն,– կեղծ մտահոգությամբ հարցրի ես:

– Մահմեդական բոլոր ազգերին էլ կոտորում են, շուտ փախե՛ք,– առաջարկեց քուրդ ձիավորը:

– Ո՞վ ասաց, որ կսպանեն,– հարցրի:

– Շեյխ Խդիրը կարգադրեց քրդերին նահանջել, թե չէ բոլորին էլ կկոտորեն:

Լսելով քուրդ զինվորներին՝ մենք այլևս այնտեղ մնալու մտադրություն չունեինք. ինչ հարկավոր էր մեզ իմանալ, արդեն իմացանք, ուստի վերջացնելով քրդի հետ մեր հարց ու պատասխանները՝ անմիջապես հեռացանք տաք ջրերից:

Գնալով դեպի գյուղ՝ մենք որոշեցինք գաղտագողի մտնել մարագների մեջ մինչև մութն ընկնելը, իսկ գիշերվա ընթացքում՝ կանանց ու երեխաների հետ փախչել և թաքնվել մեզ հանրածանոթ քարափների մեջ՝ սպասելով ռուսական բանակի մոտենալուն:

Աստիճանաբար մոտենալով գյուղին՝ մենք դեռ ծրագրում էինք ինչպես թաքնվել, սակայն դեռ գյուղի կալերի մոտ եղած մարագներին չհասած՝ մեզ չորս կողմից շրջապատեցին:

– Ո՞ւր էիք գնացել,– հարցրեց Մամոյի մեծ տղան՝ Ալիհամզոն:

– Գնացել էինք տաք ջրերում լողանալու, – պատասխանեցի ես:

– Ո՞վ է թույլ տվել ձեզ գյուղից հեռանալու, մոռացե՞լ եք ձեր հայրերի երեկվա կոտորածը,– ասաց Օմար աղայի տղա Ջահվարը, սակայն տղաներից ոչ մեկը ծպտուն չհանեց:

– Դե շո՛ւտ, առա՛ջ անցեք,– պարտադրեց նա՝ խթանելով իր արաբական ձին, իսկ մենք՝ որպես ձերբակալված հանցավորներ, հետևեցինք Ալիհամզոյին ու մնացած քրդերին, որոնք ծառայում էին Ջահվարին:

Մենք գյուղ հասանք այն ժամանակ, երբ քուրդ Օմար աղան կարգադրություն էր անում հայ պատանիներին և երիտասարդ կանանց ու աղջիկներին գերի տանել:

ԳԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Վերջապես ռուսական բանակի հուժկու հարձակումներից օսմանյան բանակը ամբողջ ճակատով սկսել էր նահանջել դեպի արևմուտք: Նահանջում էին ոչ միայն զորքերը, այլև տեղական թուրք և քուրդ ազգաբնակչությունը: Տիգրիս գետից մեր վերադառնալու հաջորդ առավոտ, Օմար աղայի կարգադրությամբ, հայ կանայք իրենց երեխաների հետ՝ որպես գերիներ, ձիավորների խիստ հսկողության տակ շարժվեցին դեպի արևմուտք, բայց թե ուր, մեզանից ոչ ոք չգիտեր:

Մենք՝ հայ պատանիներս, բաժանված էինք քուրդ գյուղացիների միջև՝ որպես մշակներ: Ըստ Օմար աղայի՝ այլ կերպ լինել չէր կարող, քանի որ իրենք էին մեզ փրկել օսմանյան պետության կողմից կազմակերպված ջարդերից ու առանձին բանդաների հետապնդումից, ուստի մնում էր, որ այդ լավության փոխարեն մենք դառնանք նրանց մշակները, ավելի շուտ՝ ստրուկները:

Օմար աղայի քարավանը, որի մեջ գտնվում էինք, առաջին օրը շատ հանգիստ շարժվեց, առանց որևէ դժվարության և պատահարների. ճանապարհն անցնում էր մեզ հանրածանոթ վայրերով, մեծ մասամբ Ծաղկասարի լայնածավալ արոտավայրերով: Երկրորդ օրը ճանապարհն անհամեմատ դժվարացավ. մեր քարավանը, խառնվելով թուրքպարսկական սահմանի վրա ապրող հազարավոր գաղթողներին, ոչ մի կերպ հնարավորություն չուներ նրանցից անջատվել: Գաղթողների այդ խառնիճաղանջ ամբոխը՝ բազմաթիվ անասուններով ու ծանր բեռներով, փաստորեն փակել էին Օմար աղայի փախչելու ճանապարհը: Դրությունն այնպիսին էր, որ առաջ շարժվելու տեղ ու դադար չկար. շատերը ստիպված էին ճանապարհից դուրս գալ, փախչելու այլ ելք որոնել, սակայն ուրիշ ելք չկար, բացի երկու մեծ լեռնաշղթաների մեջ ընկած ահռելի անդնդախոր ձորից:

Նահանջողների հետևից եկող ժողովուրդն ավելի ու ավելի էր կուտակվում՝ ստեղծելով մի ահավոր վիճակ, որից դուրս գալը շատ դժվար էր:

Երկրորդ օրվա գիշերը Օմար աղայի գլխավորությամբ շարժվող քարավանի քրդերը, իրենց խոշոր եղջերավոր անասունների հոտը թողնելով կես ճանապարհին, առանձնացան սարալանջի մի փոքրիկ հարթավայրում՝ սպասելով ճանապարհի բացվելուն: Երրորդ օրվա ընթացքում գաղթողների բազմությունն էլ ավելի շատացավ, այնպես որ ձորի ամբողջ երկարությամբ ու լայնությամբ համարյա թե քար գցելու տեղ չկար:

Շուտով գաղթող ժողովրդին միացան նաև ճակատից նահանջող թուրք ասկյարները, որոնք խառնվել էին ապրանքներով բեռնված անասուններին և երկու լեռնաշղթաների մեջ ընկած նեղ ձորով շատ դժվարությամբ փախչում էին դեպի արևմուտք:

Մարդկային հեղեղը ճեղքել և սարալանջից դեպի ցած իջնել հնարավոր չէր: Ձորում կուտակված գաղթողների թիվը հազարապատկվել էր: Շարժվելու տեղ ու դադար չկար: Փախչող ամբոխը, իրար հրելով, համարյա թե ուժով առաջ էր շարժվում:

Անդնդախոր ձորից դուրս էին պրծնում միայն նրանք, ովքեր զորեղ էին և հարուստ՝ զինված բոլոր տեսակի զենքերով:

Այդ օրն անձամբ ականատես եղա մի շարք սարսափելի տեսարանների, որը մինչև այժմ էլ դեռ չեմ մոռացել: Տեսա զինված ձիավորներով շրջապատված իշխող ցեղապետներին, շեյխերին ու մոլլաներին, թե ինչպես նրանք դաշունահարելով սպանում էին իրենց առջևից շարժվող, ցնցոտիների մեջ կորած խաղաղ մարդկանց՝ սեփական ազգի ստորին դասին պատկանող կանանց ու երեխաներին: Ձիերի սմբակների տակ ընկած դիակները տրորելով՝ նրանք ճեղքում էին ամբոխի շարքերն ու առաջ շարժվում, միայն թե մեկ օր շուտ փրկեն կողոպուտներով ձեռք բերված հարստությունը: Օ՜, որքա՜ն դաժան ու արնախում էին նրանք, որքա՜ն չարություն կար նրանց արնոտ ու պղտոր աչքերում:

Չնայած թուրքերն ու քուրդ աղաները այնքան չարիք էին պատճառել հայերին, բայց և այնպես, այդ օրվա սարսափելի տեսարանը ճնշող տպավորություն թողեց ինձ վրա: Տեսնելով այդ անմեղ զոհերին, հատկապես ցնցոտիների մեջ կորած քուրդ կանանց ու երեխաներին՝ խղճահարությունից ուղղակի փոթորկվում էր սիրտս: Հուզմունքից ամբողջ մարմնով դողում էի և եթե այդ օրը ես կարողանայի մի հնար գտնել, ապա նույն վայրկյանին, թեկուզ իմ կյանքի գնով, սրախողխող արված անմեղ կանանց ու երեխաների թափված արյան դիմաց վրեժխնդիր կլինեի թուրք ու քուրդ բարբարոսներին: Մարդկային հեղեղի շարժը չէր դադարում, ընդհակառակը, էլ ավելի էին կուտակվում՝ միմյանց ջարդուփշուր անելով:

Ամբոխի մեջ խցկվելու հնարավորություն չունենալու պատճառով Օմար աղայի քարավանը դեռ նստած էր իր տեղում՝ սպասելով հարմար առիթի: Քսաներեք հայ պատանիներիս անջատել էին ծնողներից, և մենք մնացել էինք Օմար աղայի մարդկանց խիստ հսկողության տակ այնպես, որ նրանց քարավանից ոչ մի քայլ հեռանալ չէինք կարող:

Այն նույն օրվա գիշերը, օգտվելով գաղթողների բազմահազար ամբոխի ժխորից, հայ կանայք իրենց երեխաներով բարի Բաժդինի և Սադղի օգնությամբ մի կերպ անջատվել էին մեր քարավանից ու թաքնվել ձորից ոչ հեռու քարափների մեջ: Հաջորդ առավոտյան իմանալով այդ մասին՝ ես սկզբում շատ տխրեցի. մի՞թե ընդմիշտ բաժանվելու եմ իմ սիրելի Աննայից ու Աչանից: Մի պահ խորհելով այդ մասին՝ ես միաժամանակ ուրախացա. չէ՞ որ նրանք վերջապես ազատվեցին բարբարոսների գերությունից, իսկ թե ինչ էր լինելու մեր՝ քսաներեք հայ պատանիների վիճակը, այդ մասին չէի էլ մտածում:

Գաղթի չորրորդ օրվա լուսաբացին Օմար աղան կարգադրեց թողնել իրենց համար ավելորդ ծանր բեռները, իսկ քսաներեք գերի մնացած հայ պատանիներին վերցնել հսկողության տակ և առաջ շարժվել դեպի մարդկային այն հեղեղը, որը փոթորկված օվկիանոսի պես ալեկոծվում էր դեսուդեն: Մտնելով մարդկային այդ հեղեղի մեջ՝ մեր քարավանն ամբողջ օրվա ընթացքում հազիվ ձորից դուրս եկավ և միևնույն օրը երեկոյան՝ դեռ արևը մայր չմտած, հասավ մի ընդարձակ ու հարթ տարածություն, որտեղ տասնյակ հազար թուրք և քուրդ գաղթողներ գետանցում էին Տիգրիս գետի վտակներից մեկը՝ ուղղություն վերցնելով դեպի հարավ-արևմուտք:

Սարսափելի ու դժվարին էր անցած ճանապարհը, բայց և այնպես այդ նույն երեկոյան մեր քարավանը կարողացավ անցնել գետի հակառակ կողմը՝ սպասելով հաջորդ՝ հինգերորդ օրվա լույսը բացվելուն: Գետն անցնելուց հետո, ժողովրդի հոծ բազմությունից անջատվելով, թուրքական զորքերի մոխրագույն շարքերն աստիճանաբար բարձրացան դեպի Ֆարաշինի բարձունքները՝ ըստ երևույթին հարձակվող ռուսներին դիմադրություն ցույց տալու:

Ֆարաշին կոչվող վայրը մի ընդարձակ հովիտ էր, որը շրջապատված էր բարձր սարերով, իսկ տեղ-տեղ՝ կանաչ բլուրներով: Սարերի միջև եղած ձորերից հոսում էին մի քանի գետեր ու գետակներ. վերջիններս, խառնվելով իրար, ի վերջո թափվում էին հորդառատ Տիգրիս գետը: Դադար առնելով գետափին՝ ես ու Վարդանը, մշտապես անբաժան մեկս մյուսից, մեռածի պես ընկանք խոնավ կանաչների մեջ՝ գոնե մի վայրկյան նիրհելու, սակայն դեռ աչքներս չփակած՝ չար Մամոյի ազդու հրամանը մեզ ոտքի հանեց:

– Վե՛ր կացեք, գյավուրի՛ տղաներ, անասուններին կապե՛ք,– կարգադրեց նա և միաժամանակ խիստ զգուշացրեց, որ կորչելու դեպքում կենդանի չենք մնա:

Լսելով նրա խիստ նախազգուշացումը՝ Վարդանը վեր կացավ՝ Մամոյի հրամանը կատարելու. ծերուկը ոտքի ուժեղ հարվածով ինձ էլ հանեց և ստիպեց կանգնած մնալ մինչև ուշ գիշեր, և միայն նրա գարշելի խռմփոցից հետո հազիվ ինձ հաջողվեց օրվա ծանր հոգնածությունից մի քանի րոպեով փակել անքնությունից կարմրած աչքերս:

Չնայած գաղթի այդ դժվարություններին՝ մենք՝ քսաներեք հայ պատանիներս, ամուր կապված էինք մեկս մյուսին և աշխատում էինք հարմար ժամանակ գտնել և որևէ տեղ թաքնվել գերությունից փախչելու համար: Սակայն մեր բոլոր ջանքերն ապարդյուն էին անցնում Օմար աղայի կողմից սահմանված խիստ հսկողության պատճառով: Իհարկե, ես կարող էի թաքնվել և ընդմիշտ ազատվել չար Մամոյի գերությունից, բայց չէի կարող դավաճանել իմ ընկերներին. երդվել էինք բոլորս ազատվել միասին, իսկ եթե դա չհաջողվեր, ապա ընդմիշտ մնալու էինք գերության մեջ:

*
* *

Քրդերի գաղթի հետագա օրերի ճանապարհը անհամեմատ հանգիստ էր, քանի որ ռուսական բանակի առաջապահ զորամասերը սկսել էին դանդաղեցնել իրենց ճնշումը նահանջող թուրքերի վրա: Քուրդ ձիավորները տեղեկություններ էին բերում այն մասին, որ ռուսական զորամասերը, գրավելով Ֆարաշինի հովիտը, այլևս դադարեցրել են իրենց առաջխաղացումը դեպի արևմուտք: Շատ լուրեր էին հասնում մեզ, և դրանք բոլորովին մեր օգտին չէին. այդ պատճառով էլ մենք բոլորս էլ ընկել էինք խոր մտատանջության մեջ: Չէ՞ որ բավականին հեռանալով մեր հարազատ ծննդավայրից՝ հույս ունեինք, որ վերջիվերջո ռուսական բանակը կհասնի մեզ, ու մենք ընդմիշտ կազատվենք բարբարոսների գերությունից:

Մեր քարավանը Տիգրիս գետի աջ ափով դեռ շարունակում էր իր ճանապարհը դեպի երկրի խորքը, սակայն իններորդ օրվա կեսին, հասնելով մի ճոճվող կամրջի, կանգ առանք: Գաղթողներից ովքեր զորեղ էին, անցնում էին գետի հակառակ կողմը, որտեղից ճանապարհը տանում էր դեպի Իրաքի սահմանը՝ Մոսուլ քաղաքը:

Տեղում երկար չսպասելով՝ հենց այդ նույն օրն էլ՝ երեկոյան դեմ, Օմար աղայի հրամանով մեր քարավանը նույնպես պատրաստվեց փոխադրվել գետի հակառակ կողմը: Տիգրիս գետի վրա եղած այդ կամուրջն իրենից ներկայացնում էր մի փայտյա նեղ ճոճվող լաստակ, որի

վրայով հազիվ մի կերպ անցնում էին միայն փորձված գրաստները, սակայն Օմար աղան, կանգ չառնելով դժվարությունների առաջ, ստիպեց բոլորին հերթով անցնել՝ իրենց հետ տանելով նաև բարձած անասուններին: Կամրջից առաջինը անցկացրին հայ պատանիներին, ապա կանանց ու երեխաներին, հետո բարձած ջորիներին ու շատ դժվարությամբ մնացած անասուններին, վերջում անցավ ինքը՝ Օմար աղան և հետևից գնացող մշակներից մեկը, որն արաբական նժույգի սանձը բռնած հետևում էր իր տիրոջը:

Աչքերը կապված նժույգը կամրջի կեսն անցնելուց հետո, ըստ երևույթին ճոճվելուց վախենալով, սկսեց հետ-հետ գնալ և կամրջի այդ հսկա բարձրությունից սայթաքեց ու ընկավ հորդառատ Տիգրիս գետի մեջ: Գեղեցիկ նժույգը գետի փրփրած ալիքների հետ երկար խաղ անելուց հետո, այդպես էլ կապված աչքերով վերջապես ընկղմվեց հորձանուտների մեջ և անհայտացավ՝ իր հետ տանելով Օմար աղայի հարստությունը:

Օմար աղան, մի պահ փայտացած, երկար նայեց իր սիրած նժույգին մինչև նրա անհայտանալը, իսկ վերջում ուշքի գալով գոտկատեղից հանեց կեռ դաշույնը և որքան ուժ ուներ հարվածեց կամրջի մեջտեղում կանգնած հովիվ Շաքրոյի կրծքին ու գլխիվայր հրեց գետի մեջ, այնտեղ, որտեղ ընկել էր իր սիրած նժույգը՝ կողոպուտով լի խուրջինով:

Անցնելով գետի հակառակ կողմը՝ Օմար աղան զայրացած կարգադրեց իր հետևից քանդել կամուրջը, իսկ ինքն առանց հետ նայելու, քարավանի առաջն ընկած, շարունակեց ճանապարհը դեպի հեռվից երևացող ձյունապատ լեռները: Քարավանի քրդերը զարմացած հարցնում էին մեկը մյուսին, թե ուր է տանում իրենց Օմար աղան:

Տասներորդ օրվա վերջին մեր քարավանը հասավ Իրաքի սահմանագլխին ու կանգ առավ: Նահանջողները տեղավորվեցին քոչվորական հին ամառանոցների անմարդաբնակ փլատակներում ու սկսեցին հանգստանալ: Ամառանոցը գտնվում էր մի բարձր սարի ստորոտում, որտեղից երևում էր նահանջող թուրքերի ամբողջ շարժումը:

Շատ անսպասելի էր հայ պատանիներիս համար, երբ տասնմեկերորդ օրվա առավոտյան, Օմար աղան իր մերձավորներին կարգադրեց մարդիկ ուղարկել Ֆարաշին՝ այնտեղ թողած անասունները բերելու: Դրանից հետո մեզ համար պարզ դարձավ, որ հարձակվող ռուսական բանակը դադարեցրել է իր առաջխաղացումը, իսկ փախչող թուրքերը՝ իրենց նահանջը դեպի արևմուտք:

Մեր քարավանը այլևս տեղից չշարժվեց: Ֆարաշին գնացող ձիավորները աստիճանաբար բերում էին այնտեղ թողած հարստությունը ու վերջնականապես հիմնավորվում Տիգրիս գետի հովտում: Այսպիսով, ռուսների հարձակման դադարեցումը մեծ ուրախություն պատճառեց նահանջող թուրքերին, իսկ մենք՝ հայ պատանիներս, հայտնվեցինք խորը տրտմության մեջ:

ՓԱԽՈՒՍՏ

Քարավանը, որը ղեկավարում էր Օմար աղան, տասն օրվա նահանջից հետո կանգ առնելով, հիմնովին ամրացավ Տիգրիս գետի աջ ափին և այլևս տեղից չշարժվեց: Թվում էր, թե նրանք ամառային սաստիկ շոգերի պատճառով հենց նոր էին գյուղից բարձրացել Ծաղկասարի գեղատեսիլ ամառանոցներն ու հանգստանում էին: Օգտվելով Ֆարաշինի լեռնային շրջանի հատվածներում տեղի ունեցած ռազմական գործողությունների դադարից՝ քուրդ Աշիր աղան ու շեյխերը, որոնք մինչ այդ բարբարոսաբար սպանում էին ժողովրդի մոլորված ու աղքատ խավի մարդկանց, կանանց ու երեխաներին, նրանց դիակների վրայով փախչում էին դեպի արևմուտք, այժմ իրենց մարդկանց հետ վերադառնում էին՝ գաղթած այդ նույն ժողովրդի կողմից ճանապարհներին թողած ունեցվածքին տիրանալու համար:

Այդպես էր գործում նաև Օմար աղան: Իր հրամանով քանդված կամուրջը վերանորոգելուց հետո նա նույնպես մի խումբ ձիավորներով վերսկսել էր թալանը, սակայն վեցերորդ օրն էր անցել, բայց դեռ չէր վերադարձել:

Հետագա օրերին ստույգ տեղեկություններ ստանալով ռուսական բանակի առաջապահ զորամասերի հետ քաշվելու մասին՝ հայ տղաների զգալի մասը, գերությունից ազատվելու իրենց հույսերը կտրելով, արդեն հաշտվել էին ստեղծված իրադրության հետ: Մենք ամեն առավոտ, քրդերին պատկանող անասուններն առաջներս առած, բարձրանում էինք մոտակա արոտավայրերը և միայն ուշ երեկոյան վերադառնում մեր սովորական հավաքատեղը:

Գաղթի առաջին օրերից մինչև Տիգրիս գետի հակառակ կողմն անցնելը հայ տղաների անցուդարձը գտնվում էր տերերի խիստ հսկողության տակ, բայց հետագա օրերին, երբ ռուսները դադարեցրին իրենց հետապնդումը, հսկողությունը հետզհետե թուլացավ: Միայն չար Մամոն էր,

որ դեռ շարունակում էր ոչ միայն հետապնդել ինձ, այլև խիստ ճնշել: Ըստ երևույթին նա դեռ չէր մոռացել իմ կողմից նախկինում իրեն հասցված վիրավորանքները. դրա համար էլ, երբ ես նրա գերին էի, ծերուկն ուզում էր իր հին ոխը հանել ինձնից: Բնակվելով իմ քույր Աննայի խրճիթի սենյակներից մեկում՝ Մամոն միշտ էլ ծաղրի էր ենթարկվում ինձ հասակակից երեխաների կողմից, որի նախաձեռնողը ես էի: Մեր խումբը, այդ թվում նաև Ալիհամզոյի երկու որդիները, տակնուվրա էինք անում այն անկյունը, որտեղ բնակվում էր նա, ձեռ էինք առնում ծերուկին, նրան գժվեցնելու նպատակով լեզու էինք ցույց տալիս, աղտոտում նրա՝ նամազի համար պատրաստած քարե սալիկները, իսկ նամազ անելու ժամանակ բարձր ձայնով «Ալլահ աքմետ» կանչելով խանգարում նրան:

Բարեբախտաբար ծերուկի երկու տղաների բարեհոգի վերաբերմունքի պատճառով միշտ էլ մնում էինք անպատիժ: Իհարկե, դա անցյալում էր, իսկ կոտորածից հետո, երբ ես նրա գերին էի, լուսաբացից մինչև ուշ գիշեր նա ինձ աշխատեցնում էր անխղճորեն: Գիշերն անգամ հանգիստ չէր տալիս: Ձայն հանել չէի կարող. ծերուկը կարող էր ինձ ոչ միայն ծեծել, տանջել, այլև սպանել ու մնալ անպատիժ: Ինձ սպանելուց, իհարկե, նա շահ չուներ, քանի որ ես, դեռ տակավին պատանի, հասուն տղամարդու պես աշխատում էի նրա համար որպես ճորտ ու լծկան անասուն՝ տանելով բոլոր զրկանքները:

Դժբախտաբար մարդասպան գազանի երկու տղաները՝ Սադղն ու Բաժդինը, որոնք ոչ մի բանով չէին նմանվում ծերուկին, վաղուց բացակայում էին: Նրանք թուրքերի գաղթի կես ճանապարհին հետ ընկան, և հայտնի չէր, թե որտեղ էին գտնվում: Հավատացած էի՝ եթե նրանք մեզ հետ լինեին, ես ավելի ազատ կլինեի:

Բաժդինի բացակայության պատճառով մենք՝ երկու եղբայրներս, մնացինք ծերուկ Մամոյի հսկողության տակ և նրա գերիներն էինք, այնպես որ ազատվել նրանից ոչ մի կերպ հնարավոր չէր:

Չնայած Մամոյի խիստ հսկողությանը՝ գաղթի առաջին իսկ օրվանից մենք տասներկու ընկերներով, Մնոյի գլխավորությամբ, պայմանավորվել էինք փախչել և թաքնվել որևէ տեղ մինչև ռուսական զորքերի մոտենալը, բայց իմ եղբոր՝ Վարդանի վախը և քուրդ Մամոյի խիստ հսկողությունը ստիպում էին մեզ ժամանակավոր հրաժարվել փախչելու մտադրությունից: Դրանից հետո ես ամեն կերպ աշխատում էի լավ երևալ Մամոյի աչքին:

Առավոտյան վաղ ժամերին, առանց նրա նախազգուշացման, շուտ էի արթնանում, իսկ երեկոներն էլ ուշ պառկում: Նրան հանդիպելիս

միշտ ժպիտը երեսիս, հարկադրված ցանկանում էի ուրախ ձևանալ, սակայն իմ խորամանկությունն ու կեղծ ժպիտը ոչ մի օգուտ չէին տվել: Փորձված աղվեսը լավ էր կռահել իմ մտադրությունը և ամեն մի քայլափոխի հետապնդում էր ինձ՝ հետևելով իմ բոլոր շարժումներին:

Մեր դադարի յոթերորդ օրվա գիշերը ես հանդիպեցի Մնոյին՝ պատմելով իմ վիճակի մասին:

– Մի՞թե փախչելու հնարավորություն չպետք է ունենանք,– ասաց Մնոն և միաժամանակ ձեռքս բռնելով՝ քարշ տվեց գետնափոր տնակ:

– Ի՞նչ անեմ… քուրդ Մամոն խստորեն հետևում է ինձ,– պատասխանեցի ես:

– Նրանից մի կերպ պետք է ազատվենք:

– Ի՞նչ հնարքով:

– Վաղ առավոտյան՝ արոտավայր գնալու ժամանակ, մի բան կմտածենք, – պատասխանեց նա:

– Վաղը ձեզ հետ գալ չեմ կարող. Մամոն ինձ կարգադրել է ձորից հեռու չգնալ:

– Ինչո՞ւ միայն ձորից:

– Որպեսզի մոտիկից մեզ հսկի:

– Որտեղի՞ց է հսկում,– հարցրեց ընկերս:

– Ժայռի քարափներում թաքնվելով՝ հետևում է մեր ողջ անցուդարձին:

– Երբվանի՞ց է հետևում:

– Արդեն երրորդ օրն է, որ ես նրան տեսնում եմ քարերի արանքներում, բայց չտեսնելու եմ տալիս:

– Լավ, այդ դեպքում վաղը մենք նրան կթողնենք քարափներում,– ասաց Մնոն:

– Ինչպե՞ս,– հարցրի ես:

– Առավոտյան շուտ ես կթաքնվեմ քարերի արանքում ու կստուգեմ նրա մտադրությունը:

– Հետո ի՞նչ:

– Հետո ես գիտեմ,– պատասխանեց Մնոն:

– Ինչ անելու ես, զգո՛ւյշ արա, թե չէ մենք բոլորս կորած ենք,– ասացի ու հեռացա նրանից:

Հաջորդ օրը՝ արևածագին, մենք անասուններին նորից տարանք ձորն արոտի, իսկ Մնոն երկու ժամ առաջ արդեն թաքնվել էր սարալանջի քարափների մեջ՝ սպասելով քուրդ Մամոյի երևալուն: Հասնելով արոտավայր՝ մենք տասներկու ընկերներով մի պահ թաքնվեցինք ձորի հակառակ կողմի մացառների մեջ, որտեղից պարզ երևում էր դիմացի քարքա-

ոոտ սարալանջը: Վերջապես վերևից գաղտագողի դեպի ձորն իջավ գարշելի Մամոն. այս անգամ նա իր սովորական ձեռնափայտի փոխարեն, հավանաբար չար մտքով, վերցրել էր մեծ որդու գերմանական հրացանը: Նա սարալանջի խիտ կանաչների միջով մոտեցավ ժայռին ու անմիջապես մտավ քարափների մեջ: Առաջին իսկ ոոպեներին մեզ չնկատելով՝ մի պահ քարի հետևից դուրս եկավ, ըստ երևույթին ցած իջնելու նպատակով, սակայն հենց այդ պահին էլ ճարպիկ Մնոյի գլորած մեծ քարաբեկորների հարվածից տապալվեց գետին ու այլևս չշարժվեց:

Այսպիսով, փոս փորողը ինքն ընկավ փոսը: Չար Մամոն պատժվեց, իսկ ես ու Մնոն մասամբ մեր նպատակին հասանք: Մեզ մնում էր արագորեն նախապատրաստվել և, որքան հնարավոր էր, շուտ փախչել գերությունից:

Երեկոյան մեր սովորական հավաքատեղին վերադառնալով՝ ես անկողնում տեսա գրեթե անշնչացած Մամոյին: Տեղում թողնելով իմ խնամքի տակ եղած անասունները՝ ես ընդհուպ մոտեցա նրան՝ իմանալու թե արդյոք կարող է նա ինձ ճանաչել:

– Մի՛ մոտեցիր, դեռ ուշաթափ վիճակում է, – զգուշացրեց Մամոյի մեծ հարսը:

– Ի՞նչ է պատահել, քույրի՛կ Ֆաթմա,– հարցրի ես:

– Ձորը գնալիս քարաժայռից գլորվել է ցած,– պատասխանեց նա:

– Վնասվածքներ ո՞ւնի:

– Սաղլամ տեղ չի մնացել:

– Ինչո՞ւ էր ձոր գնում,– չիմանալու տեղ դնելով՝ հարցրի ես:

– Գնում էր Տիգրիս գետի հակառակ կողմը՝ ավար բերելու,– պատասխանեց Ֆաթման:

– Որևէ բան բերե՞լ է,– հարցրի ես:

– Դեպքը պատահել է գնալու ժամանակ քարափների մեջ:

– Ինչո՞ւ էր քարափների միջով գնում:

– Երևի ուզեցել է կարճ ճանապարհով իջնել ձորը:

– Ի՞նքը ասաց,– հարցրի ես:

– Ինքը ուղեղի ցնցում է ստացել, ինչպե՞ս կարող է խոսել:

– Շո՞ւտ է լավանալու:

– Դժվար թե այս գիշեր ապրի:

– Ո՞վ ասաց:

– Բաբանիս գյուղի հեքիմը,– պատասխանեց Ֆաթման և միաժամանակ առաջարկեց ինձ անասունները կապել վրանների առաջ խփված սեպերից:

Անասունները կապելուց հետո ես անմիջապես վազեցի Մնոյի մոտ, որը նույնպես զբաղված էր անասունների խնամքով:

– Իմացա՞ր՝ ինչ է պատահել,– հարցրի ես:

– Ոչ թե իմացա, այլ տեսա,– հպարտությամբ պատասխանեց Մնոն:

– Հիմա ի՞նչ անենք:

– Պետք է փախչել:

– Ի՞նչ ճանապարհով և ե՞րբ…

– Որոշենք տղաների հետ:

– Ե՞րբ:

– Հենց այս գիշեր,– պատասխանեց նա:

– Մսրեին իմաց տա՞նք, թե՞ ոչ:

– Առայժմ ոչ…

– Ինչո՞ւ…

– Նա հսկողության տակ է, դժվար թե միանգամից համաձայնվի, որ մենք փախչենք:

– Փորձենք համոզել նրան, գուցե համաձայնվի:

– Դրանով մենք կարող ենք մեզ վտանգի ենթարկել,– ասաց Մնոն:

– Ինքս կխոսեմ նրա հետ,– համոզում էի Մնոյին:

– Նա փախչող չէ, իզուր մի՛ գնա,– ասաց ընկերս:

– Իսկ մնացած տղաները կհամաձայնվե՞ն փախչել,– հարցրի ես:

– Եթե չհամաձայնվեն, մենք տասներկու ընկերներով, առանց նրանց, կփախչենք,– պատասխանեց Մնոն:

*
* *

Հայ պատանիներիս հետ գերված էր նաև Շուշանիկի մեծ քույր Մսրեն: Վերջինս գտնվում էր Օմար աղայի որդի Ջահվարի խիստ հսկողության տակ՝ հետագայում նրա կանանցից մեկը դառնալու նպատակով:

Մսրեն մեր գյուղի ամենագեղեցիկ աղջիկներից մեկն էր՝ բարձրահասակ, նուրբ դիմագծերով, սև և գանգուր մազերով: Նա միաժամանակ խելոք էր ու համեստ. գյուղի երիտասարդ ամուրի տղաներից ոչ մեկը երեք տարվա ընթացքում չկարողացավ նրան որպես հարսնացու նվաճել, միայն պատերազմը սկսվելուց երեք ամիս առաջ գյուղում ամենասիրված տղաներից մեկը՝ Ղազարը, բախտ ունեցավ ամուսնանալ իր հասակակից Մսրեի հետ: Դժբախտաբար այժմ երկուսն էլ Օմար աղայի գերիներն էին. Մսրեն՝ որպես Ջահվարի կինը, իսկ Ղազարը՝ նրա ճորտը: Խեղճ Ղազարն ինչպիսի սարսափելի վիճակում էր գտնվում այն

պահերին, երբ իր սիրած կնոջը բռնի քարշ էին տալիս դեպի Օմար աղայի վրանը... Իհարկե այդ երևույթին սառնասրտությամբ նայել չէինք կարող նաև մենք՝ հայ պատանիներս, դրա համար էլ բոլորս մտահոգված էինք, որ նրան նույնպես ազատենք գերությունից, բայց թե ինչ հնարքով և ինչ ճանապարհով, այդ մասին մենք դեռ նրա հետ չէինք խոսել: Ճիշտ է, գաղթի առաջին օրերին դեռ ճանապարհին ես մտերմաբար հայտնել էի նրան փախչելու մասին մեր մտադրությունը, բայց քանի որ նա վախից դեմ եղավ, ուստի ստիպված էի այլևս նրա հետ չխոսել՝ սպասելով գաղթի ընթացքին: Իսկ այժմ, երբ ռուսների հարձակումը դադարեցված էր, իսկ թուրքերի գաղթը ամբողջապես կանգ էր առել, ընկերներով պայմանավորվել էինք, ինչ էլ լինի, ազատվել գերությունից: Այդ նպատակով էլ մենք ուզում էինք նախապատրաստել բոլոր հայ պատանիներին, այդ թվում նաև Մսրեին՝ հայ կանանցից այն միակին, որը մնացել էր գերության մեջ:

Մնոյից բաժանվելուց հետո՝ երեկոյան ուշ ժամին, շատ դժվարությամբ ինձ հաջողվեց գնալ նրա մոտ: Ես նրան տեսա փոքրիկ վրանում խորը մտատանջության մեջ: Մսրեն, ինձ տեսնելով, շատ ուրախացավ, քանի որ Տիգրիսն անցնելուց հետո մենք միմյանց չէինք տեսել: Մտերիմ լինելով նրա հետ՝ հենց սկզբից պատմեցի նրան փախչելու վերաբերյալ մեր ընկերների մտադրության մասին և առաջարկեցի, որ ինքը նույնպես փախչելով ազատվի գերությունից: Նա մի պահ մտածելուց հետո գլուխը շարժեց. դա նշանակում էր, որ ինքը համաձայն չէ փախչելու վերաբերյալ մեր մտադրությանը:

– Տղաները որոշել են անպայման ազատվել գերությունից. դրա համար էլ պատրաստվում են փախուստի դիմել և ուզում ենք քեզ նույնպես ազատել,– կիսաձայն հայտնեցի նրան:

– Ո՞ր ճանապարհով,– հարցրեց Մսրեն:

– Մեր եկած ճանապարհով:

– Դա անհնարին է, ձեզ բոլորին կբռնեն ու կսպանեն:

– Ի՞նչ գիտես, որ կբռնեն,– հարցրի ես:

– Հետևում են ձեզ:

– Ովքե՞ր են հետևում:

– Օմար աղայի որդին՝ Ջահվարը:

– Ո՞վ ասաց:

– Օմար աղայի աղախինը հայտնեց, որ Ջահվարը չորս զինված մարդկանց ուղարկել է կամրջի մոտ՝ որպես պահակներ:

– Ի՞նչ նպատակով,– զարմացած հարցրի ես:

– Եթե փորձ անեք փախչելու, ձեզ կսպանեն:

– Ի՞նչ գիտեն, որ մենք փախչելու ենք:

– Լսել են:

– Ումի՞ց են լսել:

– Քուրդ Մամոյից, այն հրեշից, որն իր չարության համար սատկելու է,– ցասումով պատասխանեց Մսրեն:

– Մամոն որտեղի՞ց գիտեր, որ մենք որոշել ենք փախչել:

– Այդ մասին չգիտեմ, բայց հաստատ է, որ նա ինքն է ասել:

– Չգիտեմ նա է ասել, թե ուրիշը, բայց մենք հաստատապես որոշել ենք փախչել,– ասացի ես ու միաժամանակ առաջարկեցի նրան, որ պատրաստ լինի մեզ միանալու, այլապես ինքը կդավանափոխվի ու հավիտյան գերի կմնա:

– Վրանից դուրս գալ չեմ կարող. Օմար աղայի կողմից նշանակված լրտեսները հետևում են ինձ:

– Դու պատրա՛ստ եղիր, մենք գիշերով կփախչենք:

– Իզուր է, դուք փախչել չեք կարող:

– Ինչո՞ւ,– կրկին հարցրի ես:

– Ձեզ կբռնեն, և հետո վատ կլինի:

Դրանով նա ուզում էր ասել, որ բռնելուց հետո անպայման կսպանեն:

– Լավ է մեռնենք, քան թե թուրքին գերի մնանք,– զայրույթով պատասխանեցի ես:

– Ես գիտեմ և հաստատ համոզված եմ, որ եթե փախուստի փորձ անեք, ձեզ կսպանեն,– կրկին զգուշացրեց նա:

– Իսկ ովքե՞ր են մեզ սպանողները,– հարցրի ես:

– Ինքը՝ Օմար աղան, և իր որդի Ջահվարը:

– Ո՞վ ասաց այդ մասին:

– Ջահվարն ինքը զգուշացրեց, որ եթե որևէ անգամ փախչելու փորձ կատարեմ, ապա ոչ միայն ինձ, այլ նաև ձեզ բոլորիդ կկոտորեն, – պատասխանեց Մսրեն արտասվելով:

Լսելով Մսրեի պատասխանները՝ ես վերջնականապես համոզվեցի, որ ինչպես քուրդ Մամոն, այնպես և Օմար աղան գիտեն գերությունից ազատվելու վերաբերյալ մեր՝ հայ պատանիների մտադրությունները և գաղտնի հսկում են մեզ, իսկ փորձ անելու դեպքում բոլորիս էլ կկոտորեն: Մսրեի հետ ունեցած խոսակցությունից հետո լրիվ պարզ դարձավ, որ գաղթի նույն ճանապարհով փախչելու մեր մտադրությունը

շատ վտանգավոր է և անհնարին, մանավանդ Ջահվարի կողմից գերված հայ աղջկա հետ, որի յուրաքանչյուր շարժումը գտնվում էր խիստ հսկողության տակ: Միաժամանակ ես նրա ընկճված տրամադրությունից կռահեցի, որ նա բոլորովին վստահ չէ, թե մենք կարող ենք այդ դժվար պայմաններում գերությունից ազատվել: Նրա խոսակցությունից երևում էր, որ նա վախենում էր ոչ թե սեփական անձի, այլ իր տասնվեց տարեկան ամուսնու անվտանգության համար, որը փաստորեն Օմար աղայի բանտարկված գերին էր: Նա վախենում էր, որ մենք՝ անփորձ հայ պատանիներս, դեռ Տիգրիս գետի կամրջին չհասած, ամբողջապես ենթակա ենք ոչնչացման: Իսկապես, Մսրեի նախազգուշացման իսկությունը հաստատվում էր Ջահվարի և իր օգնականների անհայտացման փաստով: Նրանք, մեկ օր առաջ Մամոյից լսելով մեր փախչելու մտադրության մասին, հաջորդ օրվա կեսգիշերին արդեն փակել էին դեպի Տիգրիս գետի կամուրջ տանող մեր փախչելու հնարավոր բոլոր ճանապարհները: Չնայած եղած դժվարություններին, այնուամենայնիվ, ստիպված էի կրկին գնալ Մսրեի մոտ, որպեսզի մի կերպ համոզեմ նրան մեզ հետ փախչելու, սակայն նրա ասածներից պարզվեց, որ մտահոգված լինելով մեր անվտանգությամբ, նա վճռականորեն կողմնակից չէր այդ բանին: Կռահելով նրա տրամադրությունը՝ ես այլևս չշարունակեցի խոսակցությունը և նստած տեղից վեր կացա՝ վրանից դուրս գալու, բայց նա չթողեց:

– Մի՛ գնացեք, վախենում եմ, որ ձեզ սպանեն,– արտասվելով աղաչում էր Մսրեն:

– Լավ, եթե չես ուզում, չենք գնա,– ասացի ես ու դուրս եկա նրա վրանից:

Արդեն ուշ գիշեր էր, բայց ես բոլորովին չքնեցի. գիշերվա մթության մեջ տղաների մոտ էի գնում՝ հայտնելու նրանց Մսրեի ասածները: Տեղեկանալով մեր երկուսի միջև տեղի ունեցած զրույցի բովանդակությունը՝ տղաներից շատերը սկզբում տխրեցին, բայց հետո նորից հայտնեցին գերությունից ազատվելու իրենց պատրաստակամությունը:

*
* *

Չնայած քուրդ Մամոյի անիծված հոգին դեռ դժոխք չէր գնացել, բայց և այնպես լավ վիճակի մեջ չէր: Դեպքից անցել էր ընդամենը երկու օր, սակայն դեռ ծանր դրության մեջ էր և ոչ ոքի հետ խոսել չէր կարող:

Օգտվելով դրանից՝ երրորդ գիշերվա կեսին Ֆաթմայից գաղտնի կարողացա նրանց մառանից վերցնել սաջի վրա թխած բավական քանակությամբ լավաշ հաց ու պանիր, մի բուռ աղ, լուցկի և քուրդ Մամոյի հրացանը: Գերությունից փախչելու մեր տասներկու ընկերների մտադրության մասին մնացած հայ տղաները դեռ չգիտեին, բայց երբ առավոտ շուտ, անասուններն առաջներս արած ձորի փոխարեն բարձրացանք դեպի սար, այն ժամանակ միայն հասկացան մեր մտադրությունը, ուստի նրանք նույնպես հետևեցին մեր օրինակին:

Ամառվա արևը դեռ չէր ծագել, երբ մենք բոլորս արդեն գտնվում էինք սարի գագաթին, այն բարձր սարի, որի լանջին գտնվում էր Օմար աղայի քարավանը: Մեր խմբի տղաները լրիվ կազմով հավաքվել էին որոշված վայրում, ու պատրաստ էինք փախուստի: Մեզ հետ էին նաև Սարգսի մեծ եղբայր Արմենակը և Վարդանը, որոնք կրկին փորձեցին մեզ համոզել հետ կանգնել վտանգավոր մտադրությունից: Սակայն ուշ էր արդեն, ես ու Մնոն, փոսի մեջ թողնելով մեր խնամքի տակ գտնված անասունները, առանց նրանց հետ վիճելու շրջվեցինք դեպի սարի հակառակ կողմը, համարյա թե սահելով՝ իջանք խոր ձորի մեջ, որտեղից դեպի Տիգրիս էր հոսում արագահոս մի գետակ: Իջնելով ցած՝ ես գիտեի, որ Վարդանը հետևում էր ինձ, բայց գիտակցաբար հետ չէի նայում, որպեսզի ավելի շուտ հեռանանք մեզ իշխող տերերից:

Ես, Մնոն գնում էինք առջևից կողք կողքի՝ անգամ հետ չնայելով:

– Կա՛նգ առ, Սևո՛ւկ, տեսնենք՝ ովքեր հետ մնացին,– ասաց Մնոն:

Լսելով Մնոյին՝ ես կանգ առա ու նայեցի հետևում մնացած քարաժայռին և միանգամից զարմանքից ապշեցի, թե ինչպես մենք կարողացանք մի ակնթարթում այդ ահռելի քարաբեկորների միջից անվնաս իջնել ցած, միաժամանակ ուրախացա, որ մեր հետևից համարյա թե գլորվելով՝ փախչում էին մնացած բոլոր տղաները: Մինչ նրանք կհավաքվեին, ես ու Մնոն որոնում էինք, թե որտեղից կարելի է գետն անցնել ու շարունակել մեր փախուստը: Վերջապես, գետի վերին հոսանքում գտանք մի կամուրջ, որը բաղկացած էր ընդամենը երկու երկար գերաններից, որոնցից մեկը թաղված էր ջրի մեջ, իսկ երկրորդը՝ ջրից դուրս էր: Չսպասելով հետ մնացողներին՝ մենք սկսեցինք հերթով անցնել գետի հակառակ կողմն ու թաքնվել խոտերի մեջ:

Շատ ուրախալի էր, երբ մեզ հետևող բոլոր տղաները, բացի Մսրեի ամուսին Ղազարից, հասան գետ ու միևնույն գերանի վրայից անցնելով՝ միացան մեր խմբին: Այժմ մեզ մնում էր որոշել, թե որ ճանապարհով պետք է շարունակենք մեր փախուստը: Թեքվել դեպի Տիգրիս գետը, մեզ

հանրածանոթ ճոճվող կամրջի վրայով անցնել ձախ ափն ու գաղթի ճանապարհով շարունակել մեր փախուստը կնշանակեր ընկնել քուրդ Ջահվարի ձեռքն ու մահվան դատապարտվել: Գետի աջ ափի երկարությամբ ձգվող ամայի և անանցանելի լեռներով փախչել նշանակում էր երկարացնել մեր ճանապարհը և սովից բոլորովին ուժասպառ լինել:

Մի պահ խորհելուց հետո վերջապես բոլորս համաձայնության եկանք շարունակել մեր փախուստը լեռնաշղթայով՝ հաշվի առնելով բոլոր դժվարությունները: Մենք փախչում էինք լերկ ժայռերի երեսներով, ոլորապտույտ ձորերի ու քարափների միջով: Մենք գնում էինք մերկ, ոտաբոբիկ ու քաղցած, սարից իջնում էինք դեպի ձոր, նորից բարձրանում, բայց դեռ դուրս չէինք եկել այդ սարսափելի քարքարոտ լեռներից: Մեր փախուստի չորրորդ օրվա կեսերին միայն մեզ հաջողվեց հասնել լեռնաշղթայի վերջին հատվածին, որի գագաթը դեռ ծածկված էր ձմեռվա ընթացքում նստած ձյան հաստ շերտով:

Բարձր սարի ձյունապատ գագաթից երևում էր Ֆարաշինի կանաչապատ հովիտը, որտեղ Տիգրիս գետը ճյուղավորվելով տարածվում էր ամբողջ հարթավայրով մեկ ու, կրկին միանալով, հոսում էր դեպի մի ահռելի ձոր: Մենք ծանոթ էինք այդ ձորին: Լեռներում ծնված ու մեծացած հայ պատանու սուր աչքից ոչ մի բան վրիպել չէր կարող: Մենք այդ վայրերով անցել էինք մեր գաղթի երրորդ ու չորրորդ օրերին: Դա այն սարսափելի ձորն էր, որը գաղթի առաջին օրերին ամբողջապես լցված էր մարդկային հեղեղով, այն ձորը, որտեղ քուրդ բեկն ու շեյխերը իրենց գարշելի կաշիները փրկելու համար, սպանելով սեփական ազգակիցներին, նրանց դիակների վրայով փախչում էին դեպի արևմուտք: Դա այն վայրն էր, որտեղ տեղի էին ունեցել ռուսների առաջապահ զորամասի և թուրքական բանակի միջև կատաղի կռիվները: Մարդկային ոչ մի արարած չէր երևում, բացի գետի ձախ ափից հեռու գտնվող սարերում թափառող հազարավոր մանր եղջերավոր անասունների հոտից ու այսուայն կողմ թափված իրերից:

Արևն աստիճանաբար մայր էր մտնում, իսկ մենք, սարից ցած իջնելով, շարունակեցինք մեր ճանապարհը դեպի կանաչին տվող հարթավայրը՝ դեպի Տիգրիս գետը:

*
* *

Մենք պետք է անցնեինք Տիգրիս գետի ճյուղավորված, լայն ու ծանծաղուտ տեղանքով, որի համար էլ մեզ անհրաժեշտ էր լույսով

գտնել այն և անցնել հակառակ կողմը: Դա պետք է կատարվեր արագ, հակառակ դեպքում մինչև հաջորդ առավոտ իրավիճակը կարող էր փոխվել, ու մենք նորից կմնայինք գերության մեջ, գուցե և զոհվեինք:

Սարից իջնելով հարթավայր՝ տղաները արագացրին իրենց քայլերը այնպես, որ մութը դեռ չէր ծածկել Ֆարաշինի ընդարձակ հովիտը, բայց մենք արդեն գետափին էինք:

– Տղանե՛ր, պատրաստվե՛ք գետն անցնելու,– կարգադրեց Սարգսի մեծ եղբայր Արմենակը, որին երկու օր առաջ ընտրել էինք որպես մեր խմբի ղեկավար՝ հաշվի առնելով, որ նա բոլորից մեծն էր ու միաժամանակ ճարպիկ: Իհարկե, պատրաստվելու որևէ հարկ էլ չկար, քանի որ բոլորն էլ համարյա թե մերկ էին ու ոտաբոբիկ, և մեծ ձեռնափայտերից բացի ուրիշ ոչինչ չունեինք. անգամ Մամոյից գողացած հրացանը ջուրն էի նետել: Արմենակի կարգադրությունից անմիջապես հետո մոտեցանք գետափին՝ սպասելով, թե ով առաջինը սիրտ կանի ջուրը մտնել:

Խմբի ղեկավարը փորձված լինելով չթողեց մեկական գետը մտնել. նա լողալ իմացող տղաներին դասավորեց մեր ընդհանուր շարքի մեջ այնպես, որ նրանցից յուրաքանչյուրն օգնի իր ձեռքից բռնած և լողալ չիմացող ընկերոջը: Իհարկե, խմբի ղեկավարի մտահոգությունը իզուր էր, քանի որ քսանմեկ տղաներից միայն հինգը լողալ չգիտեին, իսկ մնացած տասնվեցը փորձված լողորդներ էին: Այդպիսով, մենք գերությունից ազատված քսանմեկ հայ պատանիներս, մի ընդհանուր շարքով, մեկս մյուսի ձեռքից բռնած, հայացքներս ուղղելով դեպի արևելք, դանդաղորեն մտանք գետը:

– Ամո՛ւր կացեք, տղանե՛ր,– հոսանքի վերի կողմից ընկերներին սիրտ էր տալիս Արմենակը:

– Ամուր ենք,– գոչեցինք բոլորս միաբերան:

– Ուղիղ շարքով հետ ու առաջ չգնաք,– անընդհատ կրկնում էր նա:

Տեսնելով, որ հոսանքի վերջի թևից գնացողները հետ են մնում, Արմենակը Մնոյին թողեց իր տեղում, իսկ ինքը լող տալով մոտեցավ՝ նրանց օգնելու: Տղաների զգալի մասը լավ լողալու շնորհիվ գետի առաջին ճյուղը շատ հաջող անցավ: Կես ժամից հետո նույն շարքով միևնույն դասավորությամբ անցան նաև երկրորդ, երրորդ ճյուղերը, և վերջապես մեզ մնում էր հաղթահարել գետի վերջին ու ամենադժվարին մասը:

Գետի ալիքների ձայնից էլ երևում էր, որ այդ մասը անցնելը մեզ համար շատ դժվար կլիներ, այդ պատճառով Արմենակը, Մնոն և Նիկոլը՝ որպես փորձված լողորդներ, մտան գետն ու սկսեցին հետազոտել ջրի խորությունն ու դրա հոսանքը: Գնալով նրանք էլ ավելի էին փոքրա-

նում, ըստ երևույթին գետի խորության պատճառով ընկղմվում էին ջրի մեջ: Վերջապես երևացին միայն նրանց գլուխները, իսկ մութն ընկնելու հետևանքով արդեն լրիվ անհետացան: Չէին երևում ոչ միայն նրանց գլուխները, այլև գետի հակառակ կողմը, այն ափը, ուր երազում էինք շուտ հասնել:

Մի պահ տղաները հուզվեցին՝ կարծելով, թե նրանք, ընկղմվելով ջրի մեջ, այլևս դուրս գալ չէին կարող. ո՛չ երևում էին, ո՛չ էլ լսվում էր նրանցից որևէ մեկի ձայնը:

Հետախույզների գնալուց բավականին ժամանակ էր անցել, իսկ գիշերվա խավարն արդեն փոխարինվել էր սարի հետևից հենց նոր դուրս եկած լուսնյակի փոփոխական լույսով, բայց և այնպես գետի երեսին ոչ մի սև բիծ չէր երևում: Հանկարծ մի մեծ ամպի կտոր ծածկեց լուսնյակի շողքի թափանցումը գետի վրա, ու մենք նորից մնացինք խավարի մեջ: Տղաներն անհանգստացան և սկսեցին կանչել նրանց, բայց Վարդանը մեր անվտանգության նպատակով հորդորեց բոլորին լռել:

Այսպիսով, ժամանակը անցնում էր, իսկ մենք, սարսափելի անհանգստացած, վազվզում էինք դեսուդեն որևէ ձայն լսելու ակնկալիքով: Հետախույզներին որոնելու նպատակով, առանց տղաներին նախազգուշացնելու, ես գետի հոսանքով իջել էի ավելի քան մեկ կիլոմետր տարածություն՝ ենթադրելով, որ ալիքները նրանց դուրս բերած կլինեն գետի ափը: Իմ բախտից լուսնյակը մի պահ դուրս եկավ սև ամպի տակից՝ լուսավորելով ամբողջ հովիտը: Շոշափելով գետափը՝ հանկարծ աչքիս երևացին մորթված ոչխարներ, մեծ պղինձներ, գորգեր, տնային իրեր և բազմաթիվ այլ ապրանքներ: Ավելի մոտենալով ափին՝ ես տեսա մարդու ոտնահետք՝ այն էլ գետափի ամբողջ երկայնքով: Տեսա նաև ձիու սմբակների տեղեր, մի խոսքով, գետի ափն այնքան էր տրորվել, որ կանաչի հետք անգամ չէր մնացել:

Մանրազնին դիտելով շրջապատս՝ հիշեցի, որ գաղթի չորրորդ օրվա կեսին ահռելի ձորից դուրս գալով՝ մեր քարավանը հենց այդ նույն տեղով անցնելուց հետո, շարունակեց իր ճանապարհը դեպի Ֆարաշինի հովիտը, որտեղ քիչ առաջ գտնվում էինք մենք ինքներս: Այո՛, ես չէի սխալվում, այդ նույն ճանապարհն էր և նույն գետանցքը, որտեղով անցանք քսանհինգ օր առաջ: Հաստատ համոզվելով՝ գրեթե մի շնչով հասա տղաներին, որտեղ բարեբախտաբար նստած էին նաև հետախուզությունից հենց նոր վերադարձած Արմենակն իր երկու ընկերներով:

– Ո՞ւր էիր, Սևո՛ւկ,– հարցրեց Արմենակը:

– Ձեզ էի որոնում,– քմծիծաղ տալով պատասխանեցի ես:

– Ո՞ւր էինք կորել, որ մեզ էիր որոնում:

– Կարծում էի՝ խեղդված կլինեք. որոնում էի ձեր ուռած դիակները:

Իրոք, Արմենակն իր երկու ընկերներով շատ դժվարությամբ էին հասել գետի հակառակ կողմը և նույն դժվարությամբ էլ լող տալով մի կերպ վերադարձել: Խեղճ տղաները համարյա թե ուժասպառ էին եղել, այնպես որ խոսել անգամ չէին կարողանում:

– Ուրեմն անցնել հնարավոր չէ՞,– հարցրեց տղաներից մեկը:

– Շատ դժվար է. ոչ մի հնարքով անցնել չենք կարող,– պատասխանեց Արմենակը:

– Փորձենք, գուցե հնարավոր լինի,– առաջարկեց Արմենակի փոքր եղբայր Սարգիսը:

– Ձայնդ կտրի՛ր, փսլնքո՛տ, լող տալ չգիտես և ուզում ես ուրիշների մահվան պատճառ դառնալ,– պատասխանեց մեծ եղբայրը:

– Ինչո՞ւ չենք կարող,– հարցրի ես՝ չհայտնելով այն մասին, որ ես արդեն գտել եմ անցնելու իսկական տեղը:

– Դժվար է, հասկանո՞ւմ եք, չեք կարող,– նորից պատասխանեց նա:

Իհարկե, տվյալ դեպքում Արմենակը ճիշտ էր դատում. ինչպե՞ս կարող էինք անցնել չհետազոտված այդ օտար գետով, մութ գիշերով, այն էլ նրանց հետ, ովքեր բոլորովին լողալ չէին կարող: Այդ ամայի դաշտում մնալը նույնքան վտանգավոր էր, որքան Արմենակի դժվար թվացող գետով անցնելը:

Բայց մի՞թե լեռներում ապրած և մեծացած պատանու համար այդ կարգի դժվարություններն անհաղթահարելի են, ո՛չ, ամենևին ո՛չ: Մենք մեր կյանքի դառը փորձով համոզվել էինք և գիտեինք, որ դեռ շատ դժվարությունների կհանդիպենք, սակայն կամքի ուժ ու վճռականություն ունենալու դեպքում հնարավոր է հաղթահարել բոլոր տեսակ դժվարությունները: Մեր ամենամեծ դժվարությունն արդեն հետևում էր մնացել: Մի քանի տղաների անհողդողդ կամքի շնորհիվ մենք արդեն ազատվել էինք թուրքերի գերությունից:

Երբ տղաները հանգստացան, վերջապես նրանց հայտնեցի այն գետանցքի մասին, որը քիչ առաջ հայտնաբերել էի: Լսելով այդ՝ տղաներն ուրախ-ուրախ վեր կացան ու բոլորս միասին գետի եզրով մի քանի րոպեից հասանք այնտեղ: Տեսնելով գետանցքը՝ տղաներից շատերը հաստատեցին, որ, իրոք, դա այն նույն գետանցքն է, նույն ճանապարհը, որտեղից անցել էինք գաղթի ժամանակ: Ձեռք չտալով թուրքերի թողած իրերին՝ մենք բոլորս նույն դասավորությամբ շարվեցինք ու

անմիջապես մտանք գետը: Այս անգամ, չնայած գետանցքը խորն էր, բայց նրա հոսանքն այնքան էլ ուժեղ չէր. մեկս մյուսի ձեռքից բռնած, դանդաղորեն ճեղքելով գետի մեղմ հոսանքը՝ աստիճանաբար մոտենում էինք հակառակ ափին: Որքան մոտենում էինք գետափին, այնքան ուժեղանում էր հոսանքը: Խորության պատճառով շատերը չկարողացան առաջ շարժվել, ուստի Արմենակը, Մնոն և ուրիշները հարկադրված էին լողալ չիմացողներին իրենց մեջքի վրա առնել ու մեկ-մեկ անցկացնել գետի հակառակ կողմը, իսկ մնացածներս, առանց որևէ դժվարության լողալով, վերջնականապես գետից դուրս եկանք և մեռածի պես ընկանք փափուկ կանաչների վրա:

Չնայած ամառ էր, բայց գիշերվա սառը քամին իրեն խիստ զգացնել էր տալիս: Բոլորս թրջված լինելով ուղղակի դողում էինք, ինչպես ուռենի: Գետափի կանաչների մեջ պատսպարվել ոչ մի կերպ հնարավոր չեղավ, ուստի տղաներից շատերը սկսեցին վազվզել դեսուդեն, որպեսզի քամու հոսանքի միջոցով չորացնեն իրենց պատռված հագուստները: Ես նույնպես մրսում էի. տղաների օրինակով սկսեցի վազել դեպի գետից ոչ հեռու նշմարվող ճանապարհը: Հանկարծ աչքիս երևաց մի սարսափելի տեսարան. ճանապարհը ծածկված էր սպանված մարդկանց դիակներով:

Չնայած ես սպանված շատ մարդկանց էի տեսել անգամ մոտիկից, բայց և այնպես գիշերվա խավարի մեջ հանկարծակիի գալով՝ բնազդաբար բղավեցի ու հետ դարձա:

– Ի՞նչ պատահեց քեզ, Սևո՛ւկ,– չորս կողմից ձայն տվեցին ընկերներս:

– Սպանված մարդիկ կան այնտեղ,– հազիվ կիսաձայն պատասխանեցի ես:

– Որտե՞ղ են,– հարցրին նրանք, բայց չսպասելով իմ պատասխանին՝ պառկած տեղից վեր կացան ու խմբով մոտեցան ճանապարհին ընկած դիակներին:

Ուշադրությամբ դիտելով գետափն ու ճանապարհի երկու կողմերը՝ մենք տեսանք բազմաթիվ սպանվածների, որոնցից սարսափելի հոտ էր փչում:

– Գուցե ռուսնե՞ր լինեն,– հարցրեց Սարգիսը՝ կամաց-կամաց մոտենալով ճանապարհին ընկածներին:

– Չի կարող պատահել,– պատասխանեցի ես՝ կռանալով առաջին իսկ պատահած դիակի վրա:

– Ճանաչեցի՞ր, Սևո՛ւկ,– հարցրեց Սարգիսը:

– Այս մեկի հագուստից երևում է, որ թուրք ասկյար է, – պատասխանեցի:

– Հե՛տ դարձեք, բոլորն էլ օսմանցի ասկյարներ են,– հեռվից բղավեց Մնոն ու մոտեցավ մեզ:

Տեսնելով սպանվածներին՝ հիշեցի գաղթի առաջին օրերին հայ կանանց հանկարծակի անհայտանալն ու վատ բաներ անցան մտքովս, դրա համար էլ տղաներին առաջարկեցի ստուգել շրջապատի բոլոր սպանվածներին, բայց ստուգման պատճառի մասին ոչինչ չասացի:

– Կարիք չկա,– պատասխանեց մեր ղեկավարը և առաջարկեց հեռանալ:

Թանձր մառախուղի պատճառով այլևս ոչինչ չէր երևում. հեռվից լսվում էին միայն գետի խշշոցն ու գիշերվա բուի կվկվոցը:

Հեռանալով դիակներից՝ մի պահ կանգ առանք՝ սպասելով, թե ինչ կասեն Արմենակն ու Մնոն, որոնց կարգադրությունները մեզ բոլորիս համար օրենք էին:

– Տղանե՛ր, այստեղ մնալը վտանգավոր է, անհրաժեշտ է շարունակել ճանապարհը,– առաջարկեց խմբի ղեկավարը:

– Մութ գիշերով ճանապարհը շարունակել հնարավոր չէ. կարող ենք մոլորվել և ավելի վատ կարող է լինել,– պատասխանեց Վարդանը:

Իրոք, այդ մութ գիշերով մենք ոչ մի քայլ անել չէինք կարող. դրա համար էլ անմիջապես ճանապարհից դուրս եկանք՝ թեքվելով դեպի մոտակա բլուրը, որտեղ կանգ առանք և հենց այդտեղ էլ՝ բաց երկնքի տակ, պառկեցինք անձրևաջրերից խոնավացած խիտ կանաչների մեջ: Այդ օրն առավոտից ոչ մի րոպե չէինք հանգստացել, բայց երկու ժամից ավելի անընդհատ մաքառել էինք գետի հոսանքների դեմ ու ամբողջապես թրջվել, դրա համար էլ բոլորիս պառկելն ու քնելը մեկ եղավ: Չգիտեմ՝ շատ էի քնել, թե քիչ, բայց երբ արթնացա, ինձ գտա լճակի մեջ. այնքան անձրև էր եկել, որ ջուրը քնածների տակից հոսում էր առվի պես: Կանաչի վրա կողքի պառկած՝ երկնքին նայող ականջս ամբողջապես լցված էր անձրևաջրով, իսկ երկրորդը թաղված էր տակներիցս հոսող ջրի մեջ, ուստի կեսգիշերվա ցրտի պատճառով այլևս քնել չկարողացա: Շուտով պառկած տեղից վեր կացավ նաև Մնոն:

– Ինչո՞ւ չես քնում, Մնո՛,– հարցրի ես:

– Իսկ դո՞ւ ինչու չես քնում,– հարցիս հարցով պատասխանեց նա:

– Մրսում եմ:

– Ես քեզնից շատ եմ մրսում:

– Գնա՛նք գետափ, թուրքերի թողած գորգերից մեկը բերենք:

– Ինչի՞ համար:

– Տղաներին ծածկելու:

– Լավ կլինի, որ խոտ քաղենք ու դրանով ծածկենք,– առաջարկեց Մնոն:

Իրոք, Մնոյի ասածն ավելի ճիշտ էր, և մենք սկսեցինք արմատով գետնից դուրս հանել բավականին քանակությամբ մանդակի երկար զոխեր ու դրանցով ծածկել քնածներին, և բոլորս հանգիստ քնեցինք մինչև առավոտ:

Չնայած քնել էինք անձրևաջրերի մեջ, բայց և այնպես մեր հոգնածությունը բավականին անցել էր: Շուտով տղաները վեր կացան և զարմանքով տեսան իրենց վրա փռված մանդակի թարմ զոխերը:

– Ձեզանից ո՞վ է քաղել մանդակի զոխերը,– հարցրեց Արմենակը:

– Երևի սատանաներն են քաղել,– ծիծաղելով ասացի ես:

– Ի՞նչ սատանա,– առարկեց Մնոն և ավելացրեց,– երևի թուրքերի գյոռնափշտիկներն են արել:

Նայելով Մնոյի աչքերին՝ Արմենակը հասկացավ, որ դա մեր երկուսի արածը կլինի, որի համար ուրախությունից փաթաթվեց Մնոյին ու համբուրեց:

Տղաները սովածությունից սկսեցին ուտել իրենց վրա փռված մանդակի զոխերը: Երբ փոսից դուրս եկանք, մեր առջև բացվեց Ֆարաշինի կանաչազարդ գեղեցիկ հովիտը, որը չորս կողմից շրջապատված էր բարձր սարերով, որոնց արանքներով դեպի դաշտերն էին հոսում տասնյակ գետեր ու առվակներ: Սարալանջերում դեռևս երևում էին թափառող հարյուրավոր անտեր մնացած անասուններ, իսկ ճանապարհի երկու կողմերում թափված էին հսկայական քանակությամբ տնային իրեր և ամեն տեսակի ապրանքներ:

– Տղանե՛ր, ոչ մի բանի ձեռք չտաք. թուրքի ապրանքը մեզ պետք չէ,– ասաց Արմենակն ու առաջարկեց շարժվել դեպի ճանապարհը, դեպի այն հայտնի ձորը, որտեղ հետ մնացին հայ կանայք իրենց փոքրիկ երեխաներով: Մեր փախուստի հետագա ապահովության նպատակով մենք վճռեցինք գնալ ոչ թե դեպի ձոր տանող ճանապարհով, այլ նորից ամայի լեռներով:

Ամառվա արևի վառ ճառագայթները դեռ նոր էին լուսավորել սարերի կատարները, երբ մենք սկսեցինք բարձրանալ դեպի ճանապարհի ձախակողմյան բարձր սարը, որի գագաթը դեռ ծածկված էր ձյան շերտով: Հեռանալով թուրքերի թողած հարստությունից՝ մենք վերցրել էինք միայն մեկ ջորի, որին բարձել էինք պարսկական երկու թեթև գորգ՝

գիշերները քնելիս մեզ ծածկելու համար: Վերցրել էինք նաև ճաշ եփելու համար պղինձ և տարբեր տեսակի գեղեցիկ ամաններ, իսկ ես ձեռնափայտիս փոխարեն վերցրի նիզակի նմանվող երկաթյա մի երկար ձող՝ ճանապարհին գետնապտուղներ հավաքելու համար:

Ուղևորվելով դեպի սարը՝ մենք շատ դժվարությամբ առաջ էինք շարժվում: Եթե մեզ հաջողվեր գոնե լույսով շրջվել սարի հակառակ կողմը, երկու օրվա ճանապարհը մենք կկտրեինք ոչ ավելի, քան կես օրվա ընթացքում: Սարսափելի քաղցած լինելու պատճառով տղաները, առաջ շարժվելու հետ մեկտեղ, ընկել էին նաև կանաչ ուտելով, և դա խիստ դանդաղեցնում էր մեր երթը դեպի սարի գագաթ: Մենք երկու ժամվա ընթացքում այնքան մանդակի զոխ էինք կերել, որ այլևս շարժվել չէինք կարող, և եթե չլիներ Արմենակի խստապահանջությունը, ապա մենք կանաչ ուտելով կպառկեինք հանգստանալու: Շարունակելով բարձրանալ՝ վերջապես օրվա կեսին հազիվ հասանք սարի ձյունոտ բարձունքին ու կանգ առանք: Անկասկած այդ բարձր սարն իր անունը կունենար, սակայն ծանոթ չլինելով տեղանքին՝ մեզնից ոչ մեկը չգիտեր, թե դա ինչ սար էր: Ինձ թվում էր, թե այդ ձյունոտ սարից ուրիշ բարձր սար գոյություն չունի աշխարհում, և իրոք, նա իր բարձրությամբ իշխում էր շրջապատի համարյա բոլոր սարերին: Այնտեղից մեր առջև բացվել էր մի հոյակապ տեսարան, որի նմանը մինչ այդ չէի տեսել: Այնտեղից ավելի պարզ էր երևում Ֆարաշինի ընդարձակ հովիտն իր շրջակա լեռներով: Անգամ երևում էին կանաչ դաշտերում եղած փոքրիկ լճակներ, սարալանջերում մնացած ձյան կտորներ ու տասնյակ հազարավոր անտեր մնացած ոչխարների հոտեր:

Սարից դեպի արևելք երևում էին բլուրներ, ձորեր, կանաչին տվող դաշտեր, իսկ շատ հեռվից նաև մեր գյուղի ամառանոցները շրջապատող ու մեզ ծանոթ լեռների կատարները: Երևում էր նաև այն կանաչ սարալանջը, որտեղից հետ մնացին հայ կանայք իրենց փոքրիկ զավակներով: Վերջապես երևում էին այն մռայլ ու տխուր պատկերների հետքերը, որոնց մենք ինքներս ականատես էինք եղել թուրքերի գաղթի ճանապարհին:

Սարի հյուսիսարևելյան կողմից երևում էր մի մեծ անդնդախոր ձոր, որի միջով ոլորապտույտ հոսում էր մի գետ: Մեզ անհրաժեշտ էր հենց այդ ձորի միջով շարժվել դեպի մեր գյուղի ամառանոցները: Սակայն հենց այստեղ էլ մենք մեծ դժվարության հանդիպեցինք: Սարի հակառակ կողմը շատ թեք էր և ամբողջապես ծածկված ձյան հաստ շերտով՝ ընդհուպ մինչև գետափ:

Այսպիսով, սարի ոչ մի կողմով հնարավոր չէր ցած իջնել, բացի մեր եկած ճանապարհից: Հետ դառնալ նշանակում էր մեր ճանապարհը երկարացնել ևս երկու օրով և մեզ վտանգի ենթարկել: Ռուսները հետ էին քաշվել իրենց գրաված տարածքներից, իսկ թուրքերն ընդհակառակը, օգտվելով դրանից, հետ էին վերադառնում դեպի արևելք:

Չնայած մեզ համար ստեղծված վտանգավոր իրավիճակին՝ այնուամենայնիվ մենք լեռան գագաթից հետ չվերադարձանք. խմբի ղեկավար Արմենակ Մանուկյանը պահանջեց, որքան հնարավոր է, շուտ և արագ իջնել ձոր, այլապես նորից կմնայինք գերության մեջ կամ կոչնչանայինք մեզ հետապնդող քրդերի կողմից:

Հասնելով լեռան բարձունքին՝ առաջ շարժվելու այլ ճանապարհ չկար, բացի նրա հակառակ կողմի ձյունապատ լանջով վայր իջնելուց՝ այն էլ ահռելի բարձրությունից սահելով դեպի անդնդախոր մեծ ձորը:

Որպեսզի մեկս մյուսից չանջատվեինք, հարկ եղավ օգտագործել մեր կողմից ավար վերցված պարսկական երկու գեղեցիկ գորգերը: Նստելով դրանց վրա, որպես սահնակներ, մենք լեռան բարձունքից սառցանման ձյան հաստ շերտերի վրայով սահելով մի քանի րոպեից հետո արդեն գտնվում էինք անդնդախոր մեծ ձորում:

ՎՐԵԺ

Որքան հանգիստ ու հաճելի էր սարի բարձունքից դեպի ձոր իջնելը, այնքան էլ դժվար եղավ մինչև ուշ երեկոյան դուրս գալ հարթ ճանապարհ: Այնուամենայնիվ, այդ օրը մենք մեր ճանապարհը ոչ պակաս, քան երկու օրով կրճատել էինք:

Մենք բավականին ճանապարհ էինք անցել և շատ հեռացել գաղթած թուրքերից, հատկապես մեզ հետապնդող տերերից: Այդ օրը մենք բոլորս համոզված կարող էինք ասել, որ վերջնականապես ազատվել էինք թուրք և քուրդ բարբարոսների հետապնդումից ու մահվան վտանգից: Դուրս գալով չոր ճանապարհ՝ այդ գիշեր ևս անցած գիշերների նման դողալով քնեցինք բաց երկնքի տակ: Դեռ առավոտյան հույս ունեինք, որ այդ գիշեր կարող ենք հանգիստ քնել Ֆարաշինից բերված պարսկական գորգերի տակ, սակայն ծանրության պատճառով չկարողացանք դրանք մեզ հետ վերցնել, ուստի ստիպված էինք մնացած ավարի հետ թողնել ձորի մեջ:

Հաջորդ օրը դեռ լույսը չէր բացվել, երբ մենք առաջին անգամ ոտք դրեցինք հարթ ճանապարհի վրա: Բոլորս ուրախ էինք, որ վերադառնում էինք դեպի արևելք, դեպի մեր հարազատ վայրերը, որտեղ անց էինք կացրել պատանեկան շատ կարճ, բայց ուրախ ու երջանիկ օրեր:

Մեր խումբը կրկին հանդիպեց ավարի՝ մանր եղջերավոր անասունների հոտի, դրա համար էլ կրկնակի ուրախ էինք, որ վերջապես այդ օրը կարող ենք հագեցնել մեր քաղցը գառան մսով: Արդեն հինգերորդ օրն էր, բայց մենք, բացի կանաչ բույսերից, ուրիշ ոչինչ չէինք կերել:

Ֆաթմայի մառանից գողացած լավաշն ու մանդակով պանիրը կերել էինք մեր փախուստի առաջին երկու օրերին, դրանից հետո փաստորեն կարոտ էինք թեկուզ գարեհացի մեկ պատառի:

Կանաչ ուտելով՝ փորներս համարյա թե ուռել էր, իսկ դեմքներս դեղնել, ուստի քիչ ճանապարհ գնալուց հետո, մեր գյուղի ամառանոցներին դեռ չհասած, սովորականի պես ճանապարհից դուրս եկանք՝ հանգստանալու՝ թաքնվելով փոքր բլուրի հետևում:

Չնայած վտանգից ազատվել էինք, բայց և այնպես մեզ անհրաժեշտ էր զգույշ լինել կրկին թուրքերի ձեռքը չընկնելու համար: Ուստի կանգ առնելուն պես խմբի ղեկավար Արմենակի առաջարկությամբ մեր քսանմեկ ընկերների միջև աշխատանքի բաշխում կատարվեց. որոշվեց, թե ով ինչ պետք է աներ մեկ-երկու ժամվա ընթացքում:

Տղաներից մի քանիսը նշանակվեցին որպես խոհարարներ: Նրանք երեք-չորս գառ պետք է մորթեին ու երկու ժամվա ընթացքում պատրաստեին քսանմեկ հոգու ուտելիք և մեր հետագա ճանապարհի համար անհրաժեշտ քանակությամբ ղավուրմայի պաշար: Չորս հոգի գնացին մոտակա ձորից վառելափայտ բերելու, իսկ խմբի վեց անդամներին հանձնարարվեց հետախույզի և պահակի պարտականությունը:

Չնայած խիստ հոգնած էինք ու վերջին երկու գիշերվա ընթացքում համարյա թե չէինք քնել, այնուամենայնիվ ստանալով հանձնարարություններ՝ անմիջապես բաժանվեցինք երեք մասի ու դուրս եկանք բլրի հետևից: Մեր խնդիրն էր նախ հետախուզել մոտակա երկու ձորերը, ապա Ֆարաշինից դեպի Ծաղկասարի ամառանոցներ տանող ճանապարհն առնել խիստ հսկողության տակ ու ամեն ինչ հայտնել խմբի ղեկավար Արմենակին:

Հարմար դիտակետեր գրավելով՝ մեր հայացքներն ուղղված էին ճանապարհի երկու կողմերի սարալանջերին, տարբեր տեղերից դեպի Ֆարաշին տանող արահետներին ու բարձր սարերի կատարներին: Մենք այնքան զգույշ էինք, որ մի վայրկյան անգամ հայացքներս չէինք

հեռացնում ճանապարհից, իսկ մեկ-մեկ էլ նայում էինք Վարդանի վառած խարույկին. խորովածի հոտը արդեն տարածվել էր ամբողջ շրջապատով մեկ: Ես ու Մնոն այնպիսի հարմար դիտակետ էինք ընտրել, որտեղից կարելի էր նկատել ամենահեռու տարածության վրա շարժվող բոլոր կենդանի էակներին: Չվախենալով որևէ պատահականությունից՝ տղաները հանգիստ վառել էին օջախները՝ պատրաստելով մեր այդ օրվա և հետագա ճանապարհի համար նախատեսվող ուտելիքի անհրաժեշտ պաշարը: Դիտակետից հեռուները նայելով՝ աչքս բոլորովին չէր կտրվում Ծաղկասար տանող ճանապարհից, որովհետև այդ սարի հետ էին կապված իմ մանկական քաղցր հիշողությունները: Այն մեր խիզախումների, չարաճճիության և ուրախության վայրն էր եղել: Այնտեղից դիտում էինք շատ հեռու հորիզոնները, այնտեղից երևում էին մեր գյուղի բոլոր հողամասերը, աղբյուրներից հոսող ջրերը, գետակներն ու Շատախի անտառները: Մի խոսքով, երևում էին Վասպուրականի հայտնի բոլոր լեռները, դրանց թվում Վարագ ու Սիփան սարերի կատարները, պատանիներիս ամենահարազատ Ծաղկասարը, որտեղ թուրք մարդասպանների հետ անհավասար մարտի մեջ մտնելով՝ զոհվել էր իմ մեծ եղբայր Բադալը: Դիտելով դեպի Ծաղկասար տանող մեզ ծանոթ ճանապարհը՝ իմ հիշողության մեջ հարյուրերորդ անգամ կենդանանում էր եղբորս թաղման տխուր տեսարանը: Հիշեցի, թե ինչպես այն խոնավ ու ցուրտ երեկոյան, խոնարհվելով Բադալի թարմ գերեզմանի վրա, մրմնջալով երդվում էի կենդանի մնալու դեպքում վրեժխնդիր լինել: Այն օրվանից անցել էր ավելի քան ինսուն օր, բայց վրեժի միտքն իմ մանկական ուղեղից դուրս չէր գալիս: Քայլելիս հիշում էի, նստելիս չէի մոռանում. չկար մի գիշեր, որ երազում չտեսնեի Ծաղկասարի տխուր տեսարանը, չկրկնեի ոսոխների նկատմամբ վրեժ լուծելու իմ տված երդումը: Անցած օրերի պատմության տպավորությունների ներքո ու մտածմունքներով տարված՝ ամառվա այդ կիզիչ արևի տակ ընկել էի խոր քնի մեջ. քնել էր նաև կողքիս պառկած Մնոն: Արթնացա միայն այն պահին, երբ երկու հարյուր քայլի վրա դեպի մեզ էին շարժվում մի խումբ մարդիկ, որոմցից մեկը՝ ձիավոր: Աչքերս տրորելով՝ ես ձեռքով ուժեղ հրեցի Մնոյին ու արթնացրի խոր քնից:

– Ի՞նչ է պատահել,– հարցրեց նա, և ինքը նույնպես տրորեց անքնությունից կարմրած աչքերը:

– Վե՛ր կաց, թուրքերը մեզ բռնեցին,– ասացի ես՝ ավելի խորանալով թփերի մեջ:

– Ո՞ւր են,– հարցրեց Մնոն՝ ցանկանալով տեղից վեր կենալ, բայց չմատնելու համար չքողեցի տեղից շարժվել:

– Կա՛ց, իմանանք՝ ովքեր են. նրանք դեռ մեզ չեն նկատել,– ասացի ես՝ տեսողությունս ավելի սրելով:

– Տղաները բլրի հետևն են, եկողները մեզ նկատել չեն կարող,– ասաց Մնոն, և ինքը նույնպես թաքնվեց խոտերի մեջ՝ հետևելով անծանոթ մարդկանց շարժումներին:

– Վե՛ր կաց,– վերջապես լսեցի Մնոյի ձայնը,– կանանցից չեն թաքնվում,– ծիծաղելով ասաց նա:

Գլուխս բարձրացրի. իրոք, եկողներից չորսը կանայք էին, իսկ մեկը՝ աղքատի շորեր հագած տղամարդ:

Մենք դիտակետից դուրս եկանք ու կանգնեցինք եկողների ճանապարհին: Շուտով եկան նաև մեր մնացած չորս ընկերները, որոնք նույնպես պահակներ էին: Նրանք մեզնից շուտ էին նկատել անծանոթ մարդկանց և անմիջապես հայտնել խմբի ղեկավար Արմենակին:

Եկողները, մոտենալով մեզ, առանց որևէ խոսք փոխանակելու, կանգ առան:

– Ի՞նչ անենք սրանց հետ,– հարցրեց Մնոն:

– Թող գնան իրենց ճանապարհով,– պատասխանեցի ես:

– Իմանանք՝ ովքեր են, որտեղից են գալիս,– առաջարկեց Մնոն:

Իհարկե, մեր նախկին պայմանավորվածության համաձայն, քուրդ մարդկանց հանդիպելիս նրանց հարցերին պատասխանում էի ես՝ որպես քրդախոս, դրա համար էլ մի քանի քայլ մոտենալով նրանց՝ մանկական պահանջկոտությամբ քրդերեն լեզվով հարցրի.

– Որտեղի՞ց եք գալիս և ո՞ւր եք գնում:

– Խոշաբցի ենք, գնում ենք Ֆարաշին՝ մեր բարեկամների մոտ,– հազիվ պատասխանեց կանանցից մեկը, որն ըստ երևույթին հիվանդ էր և ոտքի վրա կանգնել չէր կարող:

– Ինչո՞ւ մինչև այժմ չեք գաղթել:

– Աղջիկս ճանապարհին հիվանդացավ, չկարողացավ տեղից շարժվել,– ասաց նա՝ ձեռքը մեկնելով իր կողքին կանգնած, երեսը կիսաբաց գեղեցիկ կնոջը:

– Գյավուր ռուսները ձեզ չնեղացրի՞ն,– հարցրի ես:

– Ի՞նչ էինք արել ռուսներին, որ մեզ նեղացնեին, ընդհակառակը՝ նրանք մեզ օգնեցին:

– Ինչո՞վ օգնեցին ձեզ:

– Նրանց հեքիմը բուժեց իմ հիվանդ աղջկան, հաց տվեցին մեզ և գետն անցկացնելուց հետո, նորից հետ գնացին,– պատասխանեց կինը՝ միաժամանակ հայացքը հառելով դեպի հետ, որտեղից եկել էին:

– Ո՞ւր գնացին,– հարցրի ես՝ զգուշության նպատակով նույնպես նայելով նրանց եկած ճանապարհին:

– Կանգնած են սարի հակառակ կողմը,– պատասխանեց կինը՝ ցույց տալով մեզ հանրածանոթ Ծաղկասարը:

Ես կրկին հարցեր տվեցի ինձ հետ խոսող կնոջը՝ նպատակ ունենալով պարզելու, թե ճանապարհին թուրքեր կամ քրդեր կա՞ն, թե՞ ոչ: Սակայն նրանց պատասխաններից երևում էր, որ բացի ռուսներից ուրիշ ոչ ոք չկար: Տեսնելով իրենց դիմաց կանգնած ցնցոտիների մեջ կորած վեց պատանիներին՝ կինը հարցրեց:

– Որտեղի՞ց եք, գեղեցի՛կ տղա:

– Հասան բեկի տղան եմ,– հանկարծ բերնիցս թռավ, բայց հետո զղջացի սուտ ասելուս համար, իսկ իմ ընկերները քթի տակ սկսեցին ծիծաղել:

– Ո՞ր կնոջ տղան ես,– հարցրեց խոսակիցս քիչ խորհելուց հետո:

Հիշեցի Հասան բեկի վերջին կնոջ անունը և պատասխանեցի:

– Ես Զինեի տղան եմ:

Չգիտեմ, թե ինչու իմ պատասխանից չորս կանայք միանգամից սփրթնեցին և շրջվելով ուղիղ նայեցին աչքերիս, իսկ ցնցոտիներով տղամարդը՝ լսելով Հասան բեկի ու նրա կնոջ՝ Զինեի անունները, անմիջապես տեղից վեր թռչելով, մոտեցավ մեզ: Անծանոթ կանայք, Հասան բեկի հպատակներն էին, լավ ծանոթ էին բեկի մշտապես զինված ու փարթամ տղաներին, սակայն այդ օրը նրանց դիմաց կանգնած՝ խոսում էր արևից վառված ու ցնցոտիների մեջ կորած մի պատանի, որը երբեք չէր կարող նմանվել Զինեի տղաներից ոչ մեկին, դրա համար էլ նրանք բոլորն էլ սփրթնած նայեցին ինձ՝ երևի մտածելով, թե այդ դաժան օրերին Հասան բեկն իր ընտանիքով իրենց պես նույն օրին է հասել:

– Ինչո՞ւ եք այստեղ, ո՞ւր է մայրդ,– ընդհուպ մոտենալով ինձ՝ հարցրեց ցնցոտիների մեջ կորած տղամարդը:

Հարկավոր էր դուրս գալ հարցի տակից, ուստի մի պահ մտածում էի, թե ինչ պատասխանեմ նրան: Նա էլի մի քայլ առաջ եկավ, և հանկարծ մեր երկուսի հայացքները հանդիպեցին իրար: Տեսնելով նրա սարսափելի դեմքը, զայրույթից միանգամից ճչալով՝ հետ քաշվեցի:

– Ի՞նչ պատահեց քեզ, Սևո՛ւկ,– հարցրեց վրա հասնող Արմենակը:

– Գտա,– խելագարի պես բղավելով՝ պատասխանեցի ես:

– Ի՞նչ գտար:

– Մարդասպան թշնամուն:

– Ի՞նչ թշնամի, ինչի՞ մասին ես խոսում,– հարցրին տղաները:

– Մարդասպան շեյխ Խդիրն է,– պատասխանեցի ես:

– Ո՞վ է շեյխ Խդիրը,– հարցրեցին տղաները:

Հուզմունքից ես միանգամից չկարողացա պատասխանել ընկերներիս, թե ով է նա, և ինչու եմ թշնամի համարում: Մի պահ ուշքի գալով՝ ես կարճ և համառոտակի պատմեցի շեյխ Խդիրի ով լինելը:

Գառան մորթի հագած գազանը, որքան էլ որ փոխված լիներ, իմ աչքից չէր կարող վրիպել, և ես առաջին իսկ հայացքից ճանաչեցի մարդասպանին: Նա այն մարդն էր, ով յոթ տարի առաջ Իլ գյուղում ստիպում էր ինձ թուրքանալ և բռնի կերպով փոխել հավատս: Նա այն մարդն էր, որի միջոցով ու անմիջական ղեկավարությամբ բանտարկեցին մեր հայրերին, եղբայրներին, շղթայակապ անելով գնդակահարեցին, որոնց մեջ գտնվում էի նաև ես: Նա այն մարդասպանների ղեկավարն էր, որոնք կոտորեցին շրջանի հայ բնակիչներին: Իմ խոսակցությունը նրանց հետ այլևս չշարունակվեց: Ես իմ ձեռքում ամուր պահել էի Ֆարաշինից վերցրած երկաթյա երկար նիզակը և սրած ծայրն ուղղեցի դեպի շեյխը:

– Տղանե՛ր, կանանց ձեռք չտաք,– կարգադրեց մեր խմբի ղեկավար Արմենակը:

– Ի՞նչ մեղք ունեն կանայք, որ ձեռք տանք,– պատասխանեց Ատոմը:

– Հարկավոր է նրանց բաժանել շեյխից, թե չէ կարող են արգելք հանդիսանալ մեզ,– ասաց Մնոն:

Արմենակի կարգադրությամբ չորս կանայք ուղարկվեցին ճանապարհի եզրի բլրի հետևը, իսկ շեյխը մենակ մնաց իր տեղում: Ըստ երևույթին նա դեռ գլխի չէր ընկել, թե ինչ էր կատարվում, չէր ստացել նաև իր վերջին հարցի պատասխանը, դրա համար էլ հիմարացած կանգնել էր տեղում, չգիտեր՝ ինչ է կատարվում մեզ հետ:

Ես պատրաստեցի իմ երկար նիզակը, որ առաջինը հարվածեմ շեյխին, բայց խորամանկ աղվեսը կռահեց իմ մտադրությունը. ինքն էլ պատրաստեց իր գավազանը: Շրջվեցի, որպեսզի հետևից հարվածեմ, բայց հիշեցի մեր գյուղի մարդկանց պատմությունն այն մասին, թե թշնամուն խփելուց առաջ պետք է նախօրոք զգուշացնել, թե չէ թիկունքից խփելը տմարդություն է: Միաժամանակ մտածում էի, թե ինչու նրանք մեր հայերին կոտորելուց առաջ չէին զգուշացնում. չէ՞ որ նրանք գաղտնի բռնեցին և շղթայակապ անելով գնդակահարեցին բոլորին: Այնուամենայնիվ, հետևելով հին սովորություններին՝ խմբի ղեկավար

Մնոն, մի քանի քայլ առաջ գնալով, բարձր ու խրոխտ ձայնով առաջարկեց նրան պատրաստվել մենամարտի: Շատ տարօրինակ էր Մնոյի առաջարկը և ծիծաղելի, քանի որ բացի քարից ու Ֆարաշինից վերցրած թոնրի երկար շշերից մեր ձեռքում ուրիշ ոչինչ չկար: Ուրեմն մենք վեց անփորձ պատանիներս փորձված մարդասպանի հետ պետք է մենամարտեինք քարերով՝ այն էլ նախօրոք զգուշացնելով նրան: Նա դեռ սպասում էր, որ ես կպատասխանեմ իր հարցին, թե ինչու եմ այստեղ, և ուր է Հասան բեկը, սակայն, երբ տեսավ մեր իրարանցումը, մանավանդ մեր անսպասելի մարտահրավերը, միանգամից ցնցվեց, բայց իրեն չկորցրեց: Նա, գոտուց հանելով լայն բերանով փոքրիկ կացինը, ամուր բռնեց այն և արդեն ուզում էր հարձակվել ինձ վրա, բայց հենց այդ պահին էլ տղաները չորս կողմից սկսեցին քարկոծել նրան: Իմ ձեռքում բռնած քարի առաջին իսկ հարվածից ճեղքվել էր նրա ճաղատ գլուխը, նրա դիվային դեմքն արդեն կարմրել էր ճակատից հոսող արյունից: Ըստ երևույթին նա իրեն հարվածողներին այլևս չէր տեսնում և այլև դիմադրել չէր կարող: Մինչ նա կմաքրեր արյունով լցված իր աչքերը, մի ակնթարթում մոտենալով ճիվաղին, որքան ուժ ունեի, իմ ձեռքում եղած պողպատե սուր նիզակով հարվածեցի նրա ծոծրակին:

Չդիմանալով հանկարծակի հարվածին՝ նրա ձեռքից ցած ընկավ գավազանը, որի գլխին ամրացրել էր սուր կացինը, ոտքերը թուլացան, մի քանի անգամ երերաց ու միանգամից երեսի վրա վայր ընկավ: Այդ վայրկյանին սիրտս սաստիկ բաբախում էր, արյունը եռում էր երակներիս մեջ, բռունցքներս սեղմած, երեք ամսական հորթի նման թռչկոտում էի դեսուդեն: Պտտվում էի բերանքսիվայր ընկած շեյխի անշնչացած դիակի շուրջ ու զզվանքից չէի համարձակվում ծոծրակում մեխված նիզակը դուրս քաշել: Վերջապես ճիգերի մեծ լարումով սիրտ արեցի ձեռքս գցել նիզակին, դուրս քաշել այն ու կրկին հարվածել այնքան ժամանակ, մինչև հազարավոր կանանց ու երեխաներին որբացնող գազանի մեղավոր հոգին ուղարկեցի երկնային դժոխք:

– Բավակա՛ն է, Սևո՜ւկ, դու քո վրեժը լուծեցիր,– ասաց Արմենակն ու վերջին հարվածն էլ ինքը մեխեց հրեշի կրծքին:

– Ինչո՞ւ մենակ ես,– պատասխանեցի նրան:

– Մենք նույնպես,– բղավեցին տղաները և չսպասելով Արմենակի հրամանին՝ շեյխի ոտքերից բռնեցին ու քարշ տվեցին ճանապարհից քիչ հեռու՝ փշոտ քոլերի[49] մեջ, ու շտապ հեռացանք:

[49] քոլ(*բրբ.*) – որևէ տեսակի բույս

Վերջապես այդ օրը ես իմ վրեժը լուծեցի, առաջին մարտական մկրտությունս ստացա դեռ տակավին տասներեք տարեկան չդարձած, իսկ թե ինչ կլիներ հետագայում, դա ցույց կտար պատմությունը:

Կատարելով մեր պահակությունը՝ դեպքի վայրից մենք ընկերներով պատանեկան հպարտությամբ ու խրոխտ իջանք բլրի հետևը, որտեղ հավաքվել էին մնացած տասնհինգ տղաները:

Վարդանի պատրաստած խորոված ու խաշլաման առանց աղի ճաշակելուց և չորս քուրդ կանանց հյուրասիրելուց հետո մենք նրանց թողեցինք բլրի հետևում՝ չհայտնելով շեյխ Խդիրի մեռնելու մասին ու ճանապարհ ընկանք դեպի արևելք ռուսական զորամասերին շուտ հասնելու համար. նրանց հետ էր կապված մեր հույսն ու ապագան:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Արևը դեռ մայր չէր մտել, երբ մենք հասանք մեզ բոլորիս հարազատ Ծաղկասարի չքնաղ Կապուտակ կոչվող լճի ափը: Տղաները հուզմունքից մի պահ գլուխները կախել ու մռայլ հայացքով դիտում էին կախարդական լիճը և ծորը թափվող աղմկարար ջրվեժը:

Նայելով այդ սքանչելի տեսարանին՝ ըստ երևույթին տղաները կրկին վերհիշեցին անցյալում հարազատների հետ այստեղ անցկացրած իրենց պատանեկան քաղցր ու երջանիկ օրերը: Պահն այնքան տխուր էր, որ եթե որևէ անծանոթ մարդ մեզ տեսներ, կարող էր կարծել, թե կանգնած պատանիները, ինչ-որ մեկին հողին հանձնելով, այժմ խոնարհվել են նրա շիրիմին և վերջին հրաժեշտն են տալիս: Իհարկե, մեր լռությունը կարող էր երկար տևել, եթե չլիներ ինձնից մեծ եղբայրս: Վարդանը, տարիքով մեզնից մեծ լինելով, ըստ երևույթին ավելի շուտ ազդվեց ու հուզմունքից սկսեց արտասվել: Տեսնելով նրան՝ մնացած տղաները նույնպես հետևեցին նրա օրինակին: Մի խոսքով բոլորս միասին արտասվում էինք այնպես, ինչպես որդիները լաց են լինում իրենց հարազատ մայրերին կորցնելիս: Իսկ մեզանից ո՞վ չէր կորցրել իր ծնողին կամ հարազատ եղբորը: Չէ՞ որ մեր խմբի համարյա թե բոլոր անդամներն էլ որբ էին մնացել, բացի Ատոմից, որի հայրը կոտորածի ահավոր գիշերը կարողացավ չորս ընկերներով բանտից փախչել, սակայն հայտնի չէր՝ կենդանի էին մնացել, թե սպանվել էին:

Ահա թե որն էր այդ օրվա մեր խիստ հուզմունքի իսկական պատճառը: Չգիտեմ վշտից էր, թե ուրախությունից, այնուամենայնիվ գերությունից ազատված տղաներից չկար թեկուզ մեկը, որ այդ օրը չարտասվեր:

Սակայն այդ օրվա խմբովին արտասվելը բոլորովին նման չէր անցած ահավոր օրերի թաքնված մորմոքին, որի ժամանակ ո՛չ ձայն կար և ո՛չ էլ արտասուք: Դա նման էր այն դեպքերին, երբ տաժանակրությունից վերադարձած որդին, բորբոքված սրտով ու արտասուքն աչքերին, հանդիպում է իր հարազատ մորը:

Վարդանը, որն առաջինն էր սկսել վշտանալ, ի վերջո համոզեց բոլորիս վերջ տալ հեկեկոցներին:

– Բավակա՛ն է, տղանե՛ր, լաց լինելով ժամանակը հետ բերել չենք կարող,– ասաց եղբայրս ու մոտենալով ձյունով ծածկված լճի եզրին՝ առաջարկեց վերջին անգամ խմել Կապուտակի սառը ջրից:

– Առանց աղի միս ենք կերել, փորներս կցավի,– զգուշացրի ես, բայց ինքս առաջինը կռացա ջուր խմելու:

– Տղանե՛ր, որքան կարող եք շա՜տ խմեք, որ կարոտներդ առնեք,– ծիծաղելով ասաց Մնոն, և ինքը նույնպես կռացավ ջրի վրա:

Շատերը ձնախառը ջուրը խմելուց հետո սկսեցին լվացվել, գլուխները ընկղմել ջրի մեջ, հանաքներ անել: Մինչ այդ եղած տրտմությունը փոխարինվեց սրտաբուխ ծիծաղի և ուրախության:

Ասենք քիչ առաջվա լացը ինչ-որ առումով նաև ուրախության դրսևորում էր: Չէ՞ որ մենք՝ դեռևս տակավին անփորձ 13-16 տարեկան հասակ ունեցող պատանիներս, արհամարհելով մահը, կատարել էինք անհավատալին: Խաբելով չար թշնամուն՝ դիմել էինք կազմակերպված փախուստի և անանցանելի ժայռերով, կիսամերկ ու սոված, հաղթահարելով ճանապարհների բոլոր դժվարությունները, վերջապես այդ օրը ոտք էինք դրել հարազատ հողի վրա: Վերջապես, ո՞վ լիներ մեր տեղը, որ այդ օրը հուզմունքից չարտասվեր:

Ժամանակը սուղ էր, արևն արդեն մայր էր մտել և անհրաժեշտ էր շարունակել մեր ճանապարհը, ու թեկուզ գիշերով հասնել ռուսական բանակին:

*
* *

Կապուտակ լճից դեպի Ծաղկասարի հսկա ձորն իջնելն այնքան էլ երկար չտևեց: Ծանոթ լինելով զառիվայր կարճ ճանապարհներին՝ մենք խմբով սկսեցինք առանց դժվարության իջնել, բայց հետո կրկին կանգ առանք: Մտնելով խոր ձորի մեջ՝ անհրաժեշտ էր նախ հետախուզել ճանապարհը, որն սկսվում էր սարալանջի խիստ թեքությամբ և հետո, աստիճանաբար բարձրանում դեպի Ծաղկասարի մեծ բարձունքը:

Ձորից դեպի բարձունք տանող ճանապարհը անցնում էր Պղնձե քաղաքի վրայով: Սարալանջի այդ հատվածը դեռ հին ժամանակներից մինչև մեր օրերն այդպես կոչվում էր Պղնձե քաղաք, որովհետև այն ամբողջապես ծածկված էր շերտավոր քարե մեծ սալիկներով, ճանապարհի այդ մասով քայլելիս այնպես էր զրնգում ամբողջ սարալանջը, որ հեռու գտնվող յուրաքանչյուր մարդ կարող էր լսել Պղնձե քաղաքով անցնողների ոտնաձայները, հատկապես հեծյալների արշավի դեպքում, ճիշտ այնպես, ինչպես դաշտում աշխատող արորի մարդիկ լուսաբացին կլսեին Սուրբ Տիրամոր վանքի զանգերի ղողանջները:

Այդ օրը, գերությունից վերադառնալու ճանապարհին, մեր փախստականների խումբը միևնույն հետաքրքրությամբ պետք է անցներ Պղնձե քաղաքով և լսեր դրա զրնգոցները, որը տարածվելու էր ամբողջ սարալանջով մեկ՝ որպես ավետաբեր բարի ղողանջներ:

Պղնձե քաղաքի հատվածում կային նաև հնություններ, փորագրված խաչքարեր, իսկ ձորից ոչ հեռու՝ ժայռի կատարին, կային նաև խորտակված ամրոցների հետաքրքիր կիսաքանդ պարիսպներ, որոնց մի մասը դեռ կանգնած էր մնացել մինչև մեր օրերը:

Դրանից քիչ ցած՝ ձորի մեջ, շինված էին գյուղի հարուստ դասի անասնագոմերը, որտեղ ալպյան լեռների համեղ անասնակերով ձմեռ ժամանակ պահվում էին հազարավոր մանր եղջերավոր անասունների հոտերը, սակայն սաստիկ սառնամանիքների ու ծալքավոր հուսիների փլուզման պատճառով վերջին տարիներին հովիվներից շատերը սիրտ չէին անում ձմեռել այդ խավար գոմերում ու քարանձավներում: Իրոք, սարսափելի էր ապրել այնտեղ, թեկուզ ամառ ժամանակ, այդ խորն ու ահավոր ձորում, որտեղ յուրաքանչյուր քայլափոխի մարդ կարող էր գիշատիչ գազանների հանդիպել, իսկ ձմեռ ժամանակ խավար մշուշի պատճառով վտանգավոր էր ընդհանրապես գլուխը գոմից դուրս հանել:

Պատահական չէր, որ գյուղի հովիվները, ձմեռելով այնտեղ, հաճախ տուն էին վերադառնում կիսամեռ վիճակում, իսկ ոմանք էլ ձոր մտնելու ժամանակ մնում էին փլված հուսիների տակ կամ հոշոտվում գազանների կողմից: Դեռ պատերազմից առաջ օդաներում հավաքված մարդիկ, հաճախ էին խոսում Ծաղկասարի անդնդախոր ձորում պատահած դեպքերի մասին: Նրանք պատմում էին նաև, թե ինչպես ձմեռողներից շատերը, մենակության մեջ մնալով, խելագարության են հասել:

Ես լավ ծանոթ էի այդ ձորին. մենք ընկերներով ամառվա օրերին խորտակված բերդի հին հուշարձաններն ուսումնասիրելու կամ քուրդ

լամուկների հետ մենամարտելու նպատակով շատ էինք թափառել այնտեղ, բայց երբեք սիրտ չէինք արել մտնել նշված գետնափոր ու խավար գոմերը:

Սակայն այդ օրը մեր փախուստի ճանապարհին տղաները որոշեցին անպայման հետախուզել ձորը: Հետախուզության անհրաժեշտությունը թելադրվում էր նրանով, որ գաղթի առաջին օրվա կեսին, երբ մեր գյուղի քարավանը հասավ Ծաղկասար, մի խումբ հայ կանայք, իրենց փոքրիկ երեխաներին առած, գետանցքի վրա տիրող ժխորից օգտվելով, անջատվել էին քարավանից և աննկատելիորեն հեռացել դեպի ձմեռանոցներն ու թաքնվել այնտեղ: Թուրքերի հեռանալուց հետո ինչ - պատահեց նրանց հետ՝ չգիտեինք, ուստի անհրաժեշտ էր հետախուզել ոչ միայն գոմերը, այլև դրանց շրջապատն ամբողջովին վերցրած: Այս անգամ հետախուզության գնալն այնքան էլ հեշտ ու հանգիստ չէր. դրա համար էլ կգնար նա, ով ցանկություն կհայտներ: Մի պահ խոր լռությունից հետո վերջապես լսվեց խմբի ղեկավարի ձայնը:

– Ձեզանից ո՞վ է ցանկանում գնալ հետախուզության,– հարցրեց Արմենակը՝ նայելով տղաների դեմքերին:

Խմբի ղեկավարի առաջարկությունը հանկարծակիի բերեց բոլորին, դրա համար էլ սկզբում պատասխան չեղավ. ըստ երևույթին ամեն մեկը խորհում էր, թե կարող է արդյոք կատարել տրված դժվարին առաջադրանքը:

«Գնա՞մ, թե՞ չէ,– հարց էի տալիս ինքս ինձ, – իսկ եթե չգնամ, ի՞նչ կասեն տղաները, կարող էին և վախկոտ անվանել»: «Վախկոտ» բառն ավելի էր սարսափեցնում, քան թե գոմ մտնել այդ խավար գիշերով, դրա համար էլ առաջ եկա ու հայտնեցի իմ պատրաստակամությունը:

– Ուրիշ ովքե՞ր են ցանկանում գնալ,– կրկին հարցրեց խմբի ղեկավարը:

– Ես,– հայտնեց Մնոն՝ երկու քայլ առաջ գալով և կանգնեց կողքիս:

Գնալու ցանկություն հայտնեցին նաև ուրիշները, բայց Արմենակի կարգադրությամբ գնացինք միայն չորս հոգով: Ստանալով խմբի ղեկավարի հրահանգը՝ մենք, ճանապարհից թեքվելով, անմիջապես մեկնեցինք դեպի ձմեռանոցի գոմերը, իսկ մնացած տղաները նստեցին հանգստանալու:

Ճեղքելով խիտ ու բարձր մոլախոտերը՝ մենք մի քանի րոպեից հասանք գոմերի առջև ընկած փոքրիկ հրապարակը, որը լի էր դեռ վաղուց կուտակված գոմաղբի ու աթարի դեզերով: Գիշերն այնքան խավար էր,

որ մեկս մյուսին տեսնել չէինք կարող, սակայն մենք վճռել էինք անպայման հետախուզել ոչ միայն շինությունների շրջապատը, այլև գոմերի ներսը, որտեղ նախկինում մարդիկ օրը ցերեկով անգամ սիրտ չէին անում դռնից ներս մտնել: Մտնելով ամայացած ու խավար գոմերը՝ մենք սկսեցինք որոնել մեզնից անջատված մարդկանց:

Իհարկե, լուցկի չլինելու պատճառով ստիպված էինք սկզբից շոշափել պատերը, հետո երեսի վրա սողալով պարզել, թե արդյոք սպանված մարդկանց դիակներ կային, թե ոչ: Բայց մի՞թե հնարավոր էր երկու մեծ ու ընդարձակ գոմերը ստուգելով իմանալ, թե ինչ կար այնտեղ:

Շատ տանջվելուց հետո այս անգամ սկսեցինք ոտքերով շոշափել գետինը, սակայն բացի ոչխարների ծմեռվա չորացած աղբակույտից, ուրիշ ոչ մի բան չկարողացանք հայտնաբերել: Վերջապես Մնոն մեր երեք ընկերներից ավելի խելոք գտնվեց:

– Տղե՛ր, եթե գոմի ներսում սպանված մարդիկ լինեին, ապա անպայման մինչև այսօր հոտած կլինեին, իսկ ինչպես տեսնում եք, հոտ չկա,– ծիծաղով ասաց նա՝ ինքն էլ զարմանալով իր հնարամտության վրա:

– Այդ դեպքում լավ է կանգնած տեղում հոտոտել, քան թե ձեռքերով հատակի կեղտը շոշափել,– առաջարկեցի ես:

Իրոք, այդպիսի ստուգումը ցույց տվեց, որ երկու մեծ և ընդարձակ գոմերից ոչ մեկում, բացի ոչխարների չորացած աղբի սովորական հոտից, ուրիշ հոտ չէր գալիս, դրա համար էլ, կրկին սյուներից ու պատերից բռնած, մթության մեջ հազիվ շարժվելով, գոմից դուրս եկանք:

Երկրորդ գոմը ստուգեցինք նույն կարգով, ինչպես որ առաջինն էր: Իհարկե, այդտեղ ևս ոչինչ չհայտնաբերվեց, բացի մի քանի ջվալներից, որի մեջ տարբեր տեսակի ապրանքներ կային, որոնք, ըստ երևույթին, թաքցրել էին քրդերը գաղթի ժամանակ կամ դրանից առաջ:

– Տղանե՛ր, ձեռք չտաք, թուրքի ապրանքը մեզ հարկավոր չէ,– ասաց Մնոն:

– Ի՞նչ գիտես թուրքի է, այլ ոչ թե հայի,– պատասխանեց Սարգիսը:

– Թեկուզ հայտնի լինի, մեզ հարամ ապրանք հարկավոր չէ,– կրկնեց ընկերս և պատերը շոշափելով՝ սկսեց մոտենալ դռանը, որտեղից լսվում էր ձորից հոսող գետի խշշոցը:

Ավարտելով գոմերի ստուգումը՝ մեզ մնում էր հետախուզել նաև դրանց շրջապատը ու շտապ վերադառնալ տղաների մոտ:

Գոմից դուրս գալով՝ ես ու Մնոն մոտեցանք հոսող գետակին, ճիշտ այնտեղ, որտեղ մշտապես անասուններին էինք տանում: Մի քանի քայլ

առաջանալով՝ նկատեցինք, որ գետակի ափի խոտաբույսերը ամբողջովին տրորվել ու կպել էին գետնին. դա նշանակում էր, որ այդտեղով մարդիկ էին անցել: Շրջվելով դեպի գետի վերին հոսանքը՝ մենք անմիջապես ընկանք մարդկային թարմ հետքերի վրա: Շոշափելով տրորված կանաչները՝ գիշերվա խավարի մեջ հայտնաբերեցինք մեզ համար ոչ սովորական մի շարք իրեր՝ փամփուշտներով լի արկղեր, փամփուշտակալներ, մեջքի պայուսակներ, գարիով լի տոպրակներ և այլն, որոնց միջից հայտնաբերեցի մեկ հատ ռուսական երեքգծանի հրացանի սվին:

Տեսնելով նշված իրերը՝ մենք վերջնականապես համոզվեցինք, որ ռուսական բանակն անցել է նաև մեր գյուղի լեռնային ճանապարհներով, և, ինչ էլ որ լիներ, մենք շուտով հասնելու էինք նրանց:

Ավարտելով մեր հետախուզությունը՝ ուրախ-ուրախ վերադարձանք տղաների մոտ: Որպես խմբի հետախույզներից մեկը՝ ես Ֆարաշինից վերցրած երկաթե երկար նիզակը փոխարինեցի ռուսական սվինով, ավելի շուտ տղաներն այն նվիրեցին ինձ և պարտավորեցրին պահել այն մինչև ռուսական բանակի զինվորներին հասնելը: Վերցնելով սվինը՝ ես այն կապեցի գոտիկիցս ու հպարտորեն քայլեցի դեպի Ծաղկասարի մեծ բարձունքը:

*

* *

Հետախուզելով գաղթի առաջին երեք օրերի մեր անցած ճանապարհները՝ սկսած Ֆարաշինից մինչև Ծաղկասարի ձմեռանոցները, հատկապես այն վայրերը, որտեղից հայ կանայք հետ էին մնացել, մենք չկարողացանք ճշգրիտ իմանալ, թե արդյոք նրանք կենդանի են մնացել, թե ոչ, բայց նրանց ոչնչացնելու որևէ հետք նույնպես չգտնվեց:

Իհարկե, այդ փաստը միայն ուրախություն էր պատճառում մեզ բոլորիս. դա նշանակում էր, որ նրանք, անկասկած, կենդանի էին մնացել և գուցե այդ պահին գտնվում էին իրենց հարազատների շրջապատում:

Չնայած տղաների տարբեր գուշակումներին՝ բոլորս էլ հուզված էինք, դրա համար էլ շտապում էինք, որքան հնարավոր էր, շուտ հասնել գյուղ, իմանալ նրանց մասին, թեկուզ մեկ ժամ առաջ տեսնել ու կարոտով փարվել կենդանի մնացած հարազատներին:

Այդ մտածմունքներով ձորից դուրս եկանք Պղնձե քաղաքի մեզ հանրածանոթ ճանապարհի վրա այն պահին, երբ գիշերվա խավարին փոխարինել էր հորիզոնից հենց նոր դուրս եկած լուսնի պարզ լույսը: Մի խոսքով՝ Ծաղկասարի ճանապարհը երևում էր այնպես, ինչպես օրը

ցերեկով, ուստի մեզ համար այլևս դժվար չէր արագ քայլել դեպի վերադարձի վերջին ու միակ սարի բարձունքը: Որքան մոտենում էինք այդ սարին, այնքան ուժգնորեն էր բաբախում սիրտս: Չէ՞ որ մենք անցնելու էինք եղբորս գերեզմանի մոտով. հուզմունքից ամբողջ մարմինս դողում էր, իսկ հոգիս՝ տակնուվրա լինում:

Մինչ տղաները Պղնձե քաղաքի սովորական ոլորապտույտ ճանապարհով կշարժվեին առաջ, ես անջատվեցի նրանցից ու կարճ արահետով բոլորից շուտ մոտեցա սարի թամքաձև բարձունքին, որտեղից ճանապարհը երկու ժայռերի արանքով իջնում էր ուղիղ դեպի գյուղ: Հասնելով այնտեղ՝ սկզբում կարոտով նայեցի իմ հարազատ գյուղին և շուրջբոլորս: Մի պահ կանգնելով՝ փորձեցի որոշել, թե արդյոք բնակչություն կա այնտեղ, թե ոչ: Դժբախտաբար, լուսնկա պարզ լույսի ներքո բացի գյուղի սպիտակին տվող կտուրներից ու ճանապարհներից, ուրիշ ոչինչ չերևաց: Ինձ թվում էր, թե գյուղն ամբողջությամբ ամայի է, և ոչ մի կենդանի շունչ չկա այնտեղ: Սակայն ես այնտեղ էի եկել ոչ թե գյուղը դիտելու, այլ եղբորս գերեզմանը տեսնելու ու կրկին ուզում էի համբուրել այն հողը, որտեղ թաղված էր նա: Բարձրանալով քարաժայռի բարձունքը՝ տեսա այն հողաթումբը, որի տակ թաղված էր Բադալը: Վերջապես դողդողալով մոտեցա գերեզմանին ու կանգ առա: Չնայած այդ վայրկյանին սաստիկ հուզմունքից խեղդվում էի, բայց և այնպես ճիգերի մեծ լարումով կարողացա զսպել ինձ: Հողաթումբը չէր փոխվել, այն նույնն էր մնացել, ինչպես մի քանի ամիս դրանից առաջ. փոխվել էր միայն այն սալաքարի դիրքը, որն անձամբ ես էի դրել գերեզմանին, ըստ երևույթին, հողի նստվածքի հետևանքով:

Լուսնյակի պարզ լույսի տակ երևում էր զոհված Բադալի փամփուշտակալը, որը երկարությամբ փռված էր գերեզմանի վրա, իսկ դատարկ պարկուճները դրված էին հողաթմբի չորս կողմում: Հուզված ծնկի գալով՝ ես խոնարհվեցի եղբորս գերեզմանին նույն ձևով, ինչպես մի քանի ամիս առաջ, երբ մենք նրան հողին հանձնեցինք: Իմ հիշողության մեջ կրկին կենդանացան թաղման օրվա տխուր պատկերները, Աննայի և Աչանի անասելի ողբը: Ամբողջ մարմնովս սարսուռ անցավ. ինձ թվաց, թե նրանք նստած են կողքիս ու դեռ շարունակում են իրենց ողբն ու կսկիծը: Հիշեցի, թե ինչ դժվարությամբ ձյան տակից իմ սառած մատերով դուրս հանեցի այն սալաքարը, որը դրված էր գերեզմանի վրա: Հիշեցի, թե ինչպես Աննան ձեռքիցս բռնելով տարավ գերեզմանի մոտ ու պատվիրեց. «Երդվի՛ր, Սևո՛ւկ ջան, երդվի՛ր Բադալի գերեզմանով, որ դու պետք է վրեժխնդիր լինես անարգ թշնամուց»:

Սակայն որքան էլ ցավալի ու մռայլ լինեին անցած հիշողությունները, այնուամենայնիվ հանկարծ իմ մեջ ծագեց հպարտության վեհ զգացումը: Չէ՞ որ ես այն օրը փախուստի ճանապարհին կարողացա կատարել վրեժ լուծելու վերաբերյալ իմ կողմից տրված երդումը: Այդ օրը դեռ տակավին պատանի իմ ընկերների օգնությամբ ոչնչացրի իմ ամենադաժան թշնամուն՝ շեյխ Խդիրին՝ այն եղեռնագործներից մեկին, որը հազարավոր հայ մարդկանց կոտորածի ղեկավարն էր ու կազմակերպիչը: «Բայց մի՞թե միայն շեյխ Խդիրն էր մեր թշնամին», – մտածում էի ես:

Այդպիսիներից էին նաև Հասան բեկը, Օմար աղան իրենց ցեղակիցներով, որոնց գազանություններին անձամբ ականատես էի եղել: Դեռ փոքր հասակից ես լսել էի, որ մեր ամենամեծ թշնամին երիտթուրքերի ղեկավարներն էին իրենց մարդասպաններով, որոնց հետ նույնպես պետք է մաքրեինք մեր հաշիվները, ինչպես վարվեցինք շեյխ Խդիրի հետ:

Այդ մտածմունքների մեջ էի, երբ հեռվից լսվեցին տղաների մոտենալու ձայները: Որպեսզի ոչ ոք ինձ չնկատեր, կրկին համբուրեցի հողաթմբի վրա դրված այն սալաքարը, որը փաստորեն եղբորս միակ գերեզմանաքարն էր, հարդարեցի գերեզմանի փափուկ հողը ու վեր կացա՝ քարերի ու թփերի արանքով աննկատելիորեն մոտենալով ընկերներիս:

– Ո՞ւր էիր, Սևո՛ւկ,– չորս կողմից հարցրին տղաները:

– Չտեսա՞ք, որ ձեզնից առաջ անցա,– պատասխանեցի ես:

– Ինչո՞ւ շուտ անցար,– հարցրեց Վարդանը:

– Սարի բարձունքը հետախուզելու համար:

– Ի՞նչ տեսար այնտեղ,– հարցրեց Արմենակը:

– Ոչինչ:

– Իսկ գյուղում շարժումներ կա՞ն, թե՞ ոչ:

– Ինձ թվում է, որ գյուղում ոչ ոք չկա,– պատասխանեցի ես՝ միաժամանակ նորից սրելով տեսողությունս որևէ բան նշմարելու ակնկալությամբ:

Մեր խումբը բավականին կանգ առավ սարի բարձունքում՝ այդ լուսնյակ գիշերով գյուղը դիտելու, բայց դժբախտաբար մեզանից ոչ մեկը չկարողացավ որևէ բան նշմարել:

Գյուղում որևէ շարժում կամ թեկուզ լույսի մի շող չնկատելու փաստը մեզ տարակուսանքի մեջ գցեց:

– Մի՞թե ռուսները այդտեղից էլ են հեռացել,– կասկած հայտնեց խմբի ղեկավարը:

– Գուցե գտնվում են Տիգրիս գետի ափերին,– պատասխանեց Մնոն:

– Եթե այդպես է, նշանակում է՝ գյուղում մարդիկ պետք է լինեն,– համոզված ասաց Վարդանը:

– Այդ դեպքում անհրաժեշտ է հետախույզներ ուղարկել գյուղ,– առաջարկեց Ատոմը:

– Մենք չորս հետախույզներով պատրաստ ենք,– ասաց Մնոն՝ իմ և Սարգիսի ձեռքը բռնելով, ու առաջ շարժվեցինք:

*
* *

Սարի բարձունքից մինչև հարթավայրում եղած խոտհարքներն իջնելը դժվար չէր մեզ համար, քանի որ մեզնից ամեն մեկը լավ ծանոթ էր ոչ միայն ճանապարհին, այլև ամեն մի քարին, թփին, անգամ գիտեինք անցյալ տարվա կաքավների բները: Ուստի չորս ընկերներով իրարից քիչ բաժանվելով՝ սկսեցինք իջնել դեպի խոտհարքները, իսկ մնացած տղաները իրենց փոքրիկ բեռներով մի քանի հարյուր քայլ հեռավորությամբ հետևում էին մեզ: Վերջապես առանց դժվարության հասանք նորատունկ անտառին ու մի քանի րոպեից հետո ոտք դրեցինք կանաչ հարթավայր՝ մեր սեփական խոտհարքները, այն խոտհարքները, որտեղ անցած տարիներին իմ զոհված եղբայրների հետ հունձ էինք անում: Տեսնելով հարազատ վայրերը՝ ակամա հիշեցի, թե ինչպես օրերով շրջում էի փարթամ կանաչների մեջ ու եղանը ձեռքիս խորոմներ պատրաստում:

Սրտի անհուն կսկիծով դիտեցի նաև այն սպիտակ քարաժայռը, որի տակից ցայտում էր սառնորակ մեղրաղբույր, այն տեղը, որը աշխատանքից հետո մեր հանգստի ու զվարճության վայրն էր: Այնտեղ դարերի ընթացքում իմ պապիս պապերը քրտինք թափելուց հետո հագեցրել էին իրենց ծարավն ու հանգստացել:

Ամառվա կանաչն այնքան էր բարձրացել, որ միջով անցնել չէր լինում: Խոտի մի մասը շատ բարձրանալուց պառկել էր ու սկսել չորանալ, իսկ չորացած ծաղիկների հոտը տարածվում էր ողջ շրջապատում: Հնձող չկար այդ տարի, խոտհարքներն ու դաշտերը մնացել էին անտեր ու անտիրական, թե ինչ կլիներ հետագայում, այդ մասին մտածող չկար:

Հուզվելու ժամանակ նույնպես չկար, այդ պահին մեզ անհրաժեշտ էր շարունակել մեր հետախուզումը դեպի գյուղ, որին հասնելու համար շատ քիչ տարածություն էր մնացել: Դուրս գալով խոտհարքից՝ մենք

ուղիղ և հարթ ճանապարհի վրա ընկանք ու առաջ շարժվեցինք: Սակայն հենց այդ պահին էլ դեմ դիմաց մի խումբ մարդկանց հանդիպեցինք, որոնք գալիս էին այդ նույն ճանապարհով: Առանց պարզելու անծանոթ մարդկանց ով լինելը՝ մենք մեկ ակնթարթում հետ դարձանք, որպեսզի շտապ հայտնեինք մեր հետևից եկող ընկերներին: Տղաներն այնքան էլ հեռու չէին, մենք նրանց հանդիպեցինք ալաշների խիտ անտառի միջից անցնող առվակի մոտ:

– Շո՛ւտ թաքնվեք, մարդիկ են գալիս,– հայտնեց Մնոն:

– Ովքե՞ր են,– հարցրին տղաները:

– Խոսելու ժամանակը չէ, թաքնվե՛ք թփերի մեջ,– առաջարկեց ընկերս:

Տեղանքը այնքան հարուստ էր թփերով, քարափներով, ալաշների խիտ անտառով, որ դժվար չէր մեկ ակնթարթում հեռանալ և անմիջապես թաքնվել դրանց մեջ: Տղաներին թաքցնելով թփերի մեջ՝ մենք՝ հետախույզներս, կրկին վերադարձանք ճանապարհ՝ նպատակ ունենալով պարզելու հանդիպած մարդկանց ով լինելը: Մենք դանդաղորեն շարժվում էինք դեպի այն գետակը, որտեղ անծանոթ մարդկանց խումբը կարող էր հասած լինել: Երբ արդեն մի քանի քայլ առաջացանք, արդեն պարզ երևացին նրանց ստվերները: Միաժամանակ լսվեց նրանց կանչը յուրայիններին:

– Ատո՛մ, Նիկո՛լ, դո՛ւրս եկեք:

Այդ կանչը շշմեցրեց բոլորին: Դա Ատոմի հայր Հարությունի ձայնն էր. այդ ծանոթ ու հարազատ ձայնին հաջորդեցին Բալաբեկի և Աննայի ձայները, ու մենք բոլորս թաքնված տեղից դուրս թռանք՝ չմտածելով ոչ մի արգելքի մասին: Մենք բոլորս միանգամից վազեցինք դեպի հարազատ մարդկանց կողմը՝ նրանց գիրկն ընկնելով այնպես, ինչպես նորածին գառնուկներին փակված տեղից բաց են թողնում արոտից վերադարձած իրենց մայրերի մոտ: Կարոտից վառված հարազատի գիրկն ընկնելը այնքան էլ հեշտ չէր. հուզմունքից բոլորն էլ արտասվում էին: Իսկ Աննան բոլորովին իրեն կորցրել էր. գիրկն առնելով երկու եղբայրներին՝ առատորեն ուրախության արտասուք էր թափում: Նույնն էր Հարության վիճակը. նա գրկել էր երկու զավակներին՝ Ատոմին ու Նիկոլին, և անջատվել չէր կարող: Ի նշան մեր ուրախության և ազատության՝ Բալաբեկն ու Հարությունը սկսեցին հրացանային կրակ արձակել, յուրաքանչյուրը տասն անգամ և այդպես կրակելով ու հրճվելով գիշերվա կեսին հասանք հայրենի գյուղ՝ գերությունից փրկված:

ՄԵԿ ՕՐ ԱՄԱՅԻ ԳՅՈՒՂՈՒՄ

Արթնացա վաղ առավոտյան, երբ հորիզոնից հենց նոր էր դուրս եկել ամառվա ծակող արևը:

Տրորելով քնից դեռ չբացված աչքերս՝ մի պահ նայեցի չորս կողմս՝ իմանալու, թե ով կա խրճիթում: Սակայն ոչ ոքի չտեսա, բացի Բադալի և Աննայի չորս փոքրիկ երեխաներից, որոնք արթնանալով գիշերվա կուշտ քնից՝ իրենց մանկական հայացքներն ուղղել էին խրճիթի լայն երդիկից դեպի ներս թափանցող արևի վառվռուն շողերին: Գիշերվա ուշ ժամին ես ու Վարդանը չուզեցինք փոքրիկներին արթնացնել խոր քնից, ուստի նրանք մեր վերադառնալու մասին չէին իմացել: Գուցե և գաղափար էլ չունեին երկուսիս գոյության մասին: Երեխաներին ուրախացնելու և հանկարծակիի բերելու նպատակով վերմակս քաշելով գլխիս՝ ես ձայն տվեցի նրանց: Օ՜, որքան անսպասելի եղավ ինձ համար, երբ չորսը միաժամանակ ցատկեցին տեղից ու վազելով ընկան իմ գիրկը: Կրծքիս ընկնելով՝ նրանք երկար ժամանակ չէին անջատվում ինձնից՝ անմեղ մանկական ուրախության արտասուքներ թափելով:

Այդ հանկարծակի ու սրտաբուխ հանդիպումից այնքան խիստ ազդվեցի, որ հուզմունքից ինքս էլ սկսեցի արտասվել, բայց շուտով ինձ զսպեցի՝ նրանց ցույց տալով դեմքիս ժպիտը, պատճառ դառնալով նաև փոքրիկների ուրախությանը: Այդ նույն տեսարանը կրկնվեց նաև դրսից ներս եկող Վարդանի հանդեպ: Չորս փոքրիկներից ամեն մեկը ինքն էր ուզում մեզ՝ երկու եղբայրներիս, միանգամից տիրանալ:

Բադալի երկու տղաների՝ Միրաքի ու Այվազիկի ուրախությանը չափ ու սահման չկար:

– Իմ ախպերիկն է, – բղավում էր Միրաքը՝ ամուր գրկելով ինձ ու Վարդանին:

– Չէ՛, Սևուկն ու Վարդանը իմ ախպերիկներն են, – ճչալով պատասխանում էր Այվազիկը:

Որպեսզի կարողանայինք հաշտեցնել նրանց, ես ու Վարդանը ստիպված էինք մեծ ջանքեր գործադրել:

– Երկուսիդ ախպերիկն եմ, – համոզում էի ուրախությունից իրենց կորցրած անմեղ մանուկներին, որոնք, փաթաթվելով մեզ, ոչ մի կերպ չէին պոկվում:

Միրաքն ու Այվազիկը երեք-չորս տարեկան էին, խիստ հուզված լինելով՝ անշուշտ ուզում էին իրենց զոհված հայրիկի կարոտը մեզնից առնել:

Մենք դեռ երեխաների հետ գրկախառնության մեջ էինք, երբ դռնից ներս մտան Աննան և Աչանը: Նրանց դեմքերից երևում էր, որ խիստ հուզված էին, բայց ինչն էր պատճառը՝ սկզբում չիմացա: Երեխաներից մի կերպ պոկվելով՝ մոտեցա քույրիկիս.

– Ի՞նչ է պատահել,– հարցրի ես՝ նայելով նրա արցունքոտ աչքերին:

– Ռուսները նահանջում են,– պատասխանեց Աննան ու արտասվելով գրկեց իր փոքրիկ երեխային, որը, տեսնելով մոր հուզմունքը, սկսեց լաց լինել:

– Ո՞ւր են գնում և ե՞րբ,– հարցրի ես:

– Չգիտեմ, ռուսների մեծը Հարությունին և Բալաբեկին կանչել է իր մոտ, երևի կասի, թե ուր են գնալու:

– Իսկ մենք ի՞նչ ենք անելու:

– Երևի մեզ էլ իրենց հետ կտանեն,– պատասխանեց Աննան:

– Որտե՞ղ են տեղավորվել ռուսները, – հարցրի Աննային:

– Ինչո՞ւ ես հարցնում:

– Ուզում եմ նրանց մոտ գնալ, – պատասխանեցի ես:

– Սպասի՛ր՝ մինչև Բալաբեկն էլ վերադառնա տուն, հաց ուտելուց հետո կգնաս,– ասաց Աչանը ու ձեռնամուխ եղավ խրճիթի մեծ թոնիրը վառելուն:

Այն ժամանակ, երբ պատրաստվում էի տնից դուրս գալ, Բալաբեկն էլ ներս մտավ:

– Ի՞նչ ասացին ռուսները,– դիմելով Բալաբեկին՝ հարցրեց Աննան:

– Ասացին, որ պետք է նահանջել:

– Դեպի ո՞ւր և ե՞րբ,– հարցրի ես:

– Այսօր կամ վաղը,– պատասխանեց Բալաբեկը՝ առաջարկելով երկու կանանց կապկպել տան իրերը, իսկ ինքը Վարդանի հետ դուրս գնաց՝ անասուններին արոտից գյուղ բերելու:

*
* *

Փախուստից վերադառնալու կեսգիշերին՝ գյուղ հասնելուն պես, մի որոպե անգամ հանգիստ չունեցանք մեզ շրջապատող հարազատների գուրգուրանքից, Աննայի ու Աչանի գրկախառնությունից: Դրա համար էլ չկարողացա ժամանակին Աննայի տնից դուրս գալ: Բալաբեկին և Վարդանին օգնեցի մեր իրերը կապկպել: Վերջապես ինձ հաջողվեց խրճիթից դուրս գալ՝ Շուշանիկին հանդիպելու բուռն ցանկությամբ: Նրանց տունը

շատ հեռու չէր. ես կարող էի ներքին թաղամասի՝ մեկը մյուսին կպած հարթ կտուրների վրայով մի քանի րոպեից հասնել այնտեղ:

Դուրս գալով Աննայի խրճիթից՝ ճանապարհի կեսին մի պահ կանգ առա ու հիշեցի իմ և Շուշանիկի վերաբերյալ մեր ծնողների միջև նախկինում եղած խոսակցությունը: Հատկապես հիշեցի այն օրը, երբ Դավիթի և հայրիկիս ներկայությամբ Աննայի շարած ոսկեհատ հուլունքները միամտաբար կապեցի նրա վզին: Հիշեցի անցած գարնանային այն գեղեցիկ օրը, երբ մենք երկուսով գութանավարի ժամանակ՝ հերկած արտից գետնապտուղներ հավաքելիս, անմեղորեն զրուցում էինք: Հիշեցի նաև գերությունից փախչելու մասին իմ և Մսրեի միջև տեղի ունեցած խոսակցության մանրամասները: Այդ մտքերով տարված՝ ես քայլ առ քայլ առաջ էի գնում դեպի նրանց խրճիթը՝ չհասկանալով, թե որտեղ եմ գտնվում այդ վայրկյանին:

Այնքան էի տարված խոհերով, որ ինձ թվում էր թե Աննայի և Դավիթի խրճիթների միջև ընկած հարյուր քայլ տարածությունն անցել եմ ավելի քան մի ամբողջ ամիս: Սթափվեցի այն ժամանակ, երբ թիկունքիցս մեկը բռնեց ու սեղմեց իր ջերմ կրծքին: Դա Շուշանիկի մայր Մարիամն էր, որ հանկարծակիի բերեց ինձ:

– Ի՞նչ ես մտածում, Սևո՛ւկ ջան,– հարցրեց նա ու մայրական ջերմ գուրգուրանքով սկսեց համբուրել արևից վառված իմ այտերը:

Անակնկալ հանդիպումից հանկարծակիի գալով՝ համարյա թե չկարողացա անմիջապես նրա հարցին պատասխանել:

– Ասա՛, ի՞նչ ես մտածում, բալա՛ ջան,– կրկին հարցրեց Մարիամը՝ էլ ավելի ամուր սեղմելով ինձ իր կրծքին:

– Ոչինչ չեմ մտածում, մորաքո՛ւյր, գնում եմ իմ ընկերոջ մոտ, – կեղծեցի:

– Եթե քեզ չբռնեի, կտուրից վայր կընկնեիր,– ասաց Մարիամը և ձեռքիցս բռնելով՝ համարյա թե քարշ տվեց դեպի իրենց խրճիթը:

Նայելով Մարիամին՝ ես ամոթխած աղջկա պես մինչև ականջներս կարմրեցի, բայց միաժամանակ սիրտ առա, որ Շուշանիկին հանդիպելու էի ոչ կաշկանդված, այլ տուն էի մտնելու նրա մայրիկի ուղեկցությամբ:

– Գնանք մեր տուն, Սևո՛ւկ ջան, Շուշանիկը շատ է կարոտել քեզ, գնանք, կպատմես նաև Մսրեի մասին,– ասաց Մարիամը՝ ձեռքիցս բռնելով ու դռնից ներս տանելով: Ես ավելի շատ կարմրեցի, երբ նա ակնարկեց Շուշանիկի կարոտը իմ նկատմամբ: Մի պահ սիրտս բաբախեց, ուզում էի հետ դառնալ, բայց նրան տեսնելու բուռն ցանկությու-

նից ոտքերս տեղից չշարժվեցին. հետևեցի Մարիամին և ուրախ դեմքով ներկայացա նրա աղջիկներին:

*
* *

Մարիամի չորս աղջիկներից ամենամեծը Մսրեն էր, որը չկարողացավ մեզ հետ փախչել ու մնաց գերության մեջ, իսկ ամենափոքրը և ամենից գեղեցիկը Շուշանիկն էր: Տուն մտնելուն պես Մարիամի երեք աղջիկները, ինձ շրջապատելով, առան իրենց սեղմ օղակի մեջ: Տարիքով ինձնից մեծ երկու աղջիկներն այդ օրն առաջին անգամ էր, որ գրկախառնվելով անմեղորեն համբուրում էին ինձ ճիշտ այնպես, ինչպես մի մորից ծնված աղջիկները կհամբուրեին իրենց հարազատ եղբորը: Շուշանիկն իր հերթին, ձեռքիցս բռնելով, գլուխը ցած գցեց ու կարմրեց. ամոթխածությունից ոչ մի բառ արտասանել չկարողացավ:

– Դե նստի՛ր, Սևո՛ւկ ջան, պատմի՛ր իմ սիրելի Մսրեի մասին,– ասաց Մարիամը՝ սրբելով արտասուքից թրջված իր թառամած այտերը:

– Էլ լաց մի՛ լինիր, մայրի՛կ,– զգուշացրեց Մսրեի փոքր քույրը՝ Ալմաստը, որին քույրերը Ալմո էին կանչում:

– Լավ, էլ լաց չեմ լինի, հույս ունեմ, որ մի օր էլ Մսրեն կգա, ինչպես եկավ Սևուկն իր ընկերներով:

– Լավ երազ եմ տեսել Մսրեի մասին, նա անպայման կգա,– ասաց Ալմաստը և ավելացրեց, որ Շուշանիկի երազն իրականացավ, եթե նա երազ չտեսներ, ապա այսօր Սևուկն այստեղ չէր լինի:

Ալմաստի վերջին խոսքի վրա Շուշանիկն ավելի կարմրեց և ձեռքը դրեց քրոջ շրթունքներին՝ ստիպելով նրան, որ իր տեսած երազի մասին չխոսի: Իհարկե այդ պահին ես ինքս նույնպես ամաչելուց կարմրեցի, քանի որ Շուշանիկի տեսած երազը վերաբերում էր ինձ, և դրա մասին գիտեին ոչ միայն իր քույրերը, այլև մայրը:

– Մենք գիշերը Արմենակից իմացանք ձեր փախչելու մանրամասների մասին, որի նախաձեռնողները դու և Մնոն եք եղել, – ասաց Մարիամը և միաժամանակ խնդրեց պատմել Մսրեի մասին:

Իհարկե, ես մանրամասն պատմեցի մեր գաղթի ճանապարհին պատահած բոլոր դեպքերը, այդ թվում նաև Մսրեի հետ ունեցած իմ խոսակցության մասին՝ չմոռանալով նշել, որ Մսրեն մեզ հետ կփախչեր, եթե խիստ հսկողության տակ չլիներ: Միաժամանակ հավատացնում էի նրանց, որ նա մոտ ժամանակներում կվերադառնա իր ամուսնու՝ Ղազարի հետ:

Իմ վերջին՝ իրականությանը ոչ համապատասխան հավաստիացումը բավականաչափ ուրախացրեց նրանց, որ, իրոք, Մարիամի սիրելի Մսրեն շուտով վերադառնալու է իր հարազատների գիրկը, ինչպես անվնաս վերադարձանք մենք՝ քսանմեկ պատանիներս: Լսելով Մսրեի վերաբերյալ իրենց կողմից տրված հարցերի պատասխանները՝ Շուշանիկը, միամտաբար դիմելով ինձ, ասաց.

– Արմենակը մեզ պատմեց, որ դու և Մնոն ճանապարհին սպանել եք մարդասպանների ղեկավար շեյխին, դա ճի՞շտ է…

– Ինչո՞ւ մենակ ես ու Մնոն, մենք բոլորս միասին մեր վրեժը լուծեցինք նրանից:

– Երանի ես էլ ձեզ հետ լինեի,– ասաց Ալմաստը և ավելացրեց, որ ինքն էլ իր զոհված հայրիկի վրեժը կլուծեր:

– Գի՛ժ, աղջիկները վրեժ լուծել չեն կարող. դա տղաների գործն է,– ասաց Շուշանիկը՝ մատնացույց անելով ինձ:

– Աղջիկները նույնպես կարող են վրեժխնդիր լինել թշնամուց, ինչպես տղաները,– պնդում էր Ալմաստը՝ օրինակ բերելով գյուղի տանուտեր Դելոյի սպանության պատմությունը, երբ հայ կանանցից մեկը, արծաթե դրամները շպրտելով ավազակապետի երեսին, իր ծոցում թաքցրած դաշույնով հարվածել է նրա կրծքին:

– Ճիշտ է, դեպքը տեղի է ունեցել, բայց թուրք ավազակները, խեղճ կնոջ թևերից բռնելով, տեղնուտեղը սպանել են նրան,– համարյա թե արտասվելով՝ պատասխանեց Շուշանիկը:

– Ես չէի վախենա, թեկուզ սպանեն ինձ, բայց և այնպես հայրիկիս վրեժը կառնեի,– զայրույթով խոսում էր Ալմաստը:

Մարիամը շուտով դուրս գնաց, իսկ ես, էլ ավելի ազատ զգալով ինձ, սկսեցի պատմել այն բոլոր դեպքերի մասին, ինչ տեղի էր ունեցել մեր գաղթի ու վերադարձի ճանապարհին:

Շուշանիկը նույնպես աշխուժացավ, և մենք երկուսով, վաղեմի ժամանակների պես իրար ձեռքից բռնելով, խոսում էինք մանկական վառ երազների մասին:

Մարիամը դրսից տուն եկավ, իսկ ես պոկվեցի նրա աղջիկներից ու անմիջապես դուրս եկա խրճիթից՝ իմ ընկերների հետ ռուսների մոտ գնալու, որոնց տեսել էի միայն երազում:

Ռուսական զորքերի զգալի մասը գտնվում էր մեզնից ոչ հեռու, քրդական գյուղերից մեկում, որտեղ հիմնական ճանապարհներից մեկը տանում էր դեպի Խոշաբ, իսկ մյուսը՝ Ֆարաշին: Մեր գյուղի կալերում տեղավորվել էր միայն կազակների հեծյալ հարյուրյակը, նրանցից շա-

տերը զբաղված էին իրենց նժույգներով, իսկ մի քանի փոքր ջոկատներ շրջում էին Ծաղկասարի լանջերով՝ ըստ երևույթին կատարելով իրենց պահակային ծառայությունը:

Ռուս զինվորները մեր խումբը տեսնելուն պես հյուրասիրեցին հացով, շաքարով, մսի մեծ կտորներով՝ ըստ երևույթին կարծելով, թե մենք սոված ենք և եկել ենք իրենց մոտ՝ որևէ բան խնդրելու, սակայն երբ տեսան, որ բացի շաքարից ուրիշ ոչ մի բանի ձեռք չտվեցինք, նոր միայն հասկացան, որ եկել ենք նրանց մոտ՝ հետաքրքրությունից դրդված: Զինվորներից շատերն սկսեցին հանաքներ անել, ձեռ ու ոտով ինչ-որ բան հասկացնել, բայց դժբախտաբար մեզնից ոչ մեկը թեկուզ մի բառ անգամ չհասկացավ նրանց խոսակցությունից:

Վերջապես երկու ժամ տևած համառ հետաքրքրությունից հետո սովորեցինք միայն *խլեբ*, *վոդա* ու էլի ռուսական հայտնի մի քանի բառեր և ռուսերեն «խոսելով»՝ ուրախ-ուրախ վերադարձանք մեր գյուղ: Կալերից հեռանալով՝ վերադարձի ճանապարհին մենք վեց ընկերներով սկսեցինք շրջել ամայի գյուղում՝ վերջին անգամ տեսնելու մեր խրճիթները, որտեղ ծնվել ու մեծացել էինք: Մենք երկու եղբայրներով Աչանի հետ գտնվում էինք Աննայի խրճիթում՝ Բաժդինի և Սադղի հովանավորության ներքո և ոչ մի անգամ հնարավորություն չէինք ունեցել, թեկուզ մեկ անգամ մտնել այնտեղ: Այդ օրը, երբ տղաների հետ մտանք այն օջախը, որտեղ ծնվել ու ապրել էին մեր զոհված հայրն ու եղբայրները, հուզմունքից հազիվ կարողացա ինձ զսպել: Թուրք մարդասպաններն ամբողջապես տակնուվրա էին արել խրճիթի մեջ եղած կահկարասին, թարեքները, քանդել քարե հաստ պատերը, որի հիմքից դեպի հարևանի տունն էր գնում գաղտնի անցուղին: Քանդված էր նաև Բադալի թաքստարանը, բաց էին արված ալյուրի երկու ամբարներն ու հացահատիկի այն մեծ հորը, որի մեջ մի ժամանակ ընկել էին թուրքական երկու հարկահավաքները: Մենք վեց ընկերներով հուզմունքից մի բառ անգամ չկարողացանք արտասանել, անտրամադիր դուրս եկանք՝ վճռելով այլևս ոչ մի տուն չմտնել:

*
* *

Խրճիթից դուրս գալով՝ մենք ամբողջ օրը թափառեցինք Ծաղկասարի խոտհարքներում և ջրաղացի անտառում, ինչպես նաև մեզ բոլորիս հանրածանոթ գետաձորում, որի փարթամացած խիտ կանաչը ներկված էր թուրքական յաթաղանից ընկած մեր հարազատների արյամբ:

Այդ օրը վերջին անգամ խմեցինք կարկաչուն աղբյուրների սառը ջրերից, ինչպես նաև լողացանք արագավազ գետակում, հետո գետնապտուղներ հավաքելով՝ երեկոյան ուշ ժամին վերադարձանք տուն ճիշտ այն պահին, երբ տղամարդիկ լրիվ պատրաստվել էին հայրենի գյուղից հեռանալու ու սպասում էին գավառի կենտրոն գնացած Հարություն եղոյանի վերադարձին:

*
* *

Ամառվա տոթ եղանակին հանգիստ քնելու նպատակով Աչանը մեր անկողինները պատրաստել էր խրճիթի կտուրին: Փոքրիկ երեխաները վաղուց քնել էին իրենց տեղերում, իսկ մենք՝ մնացածներս, դեռ խոսում էինք օրվա անցուդարձի ու վաղվա մեր գաղթի նախապատրաստման մասին: Արդեն ուշ գիշեր էր. ես ու Վարդանը նույնպես բարձրացանք կտուրը՝ քնելու:

Մեջքի վրա պառկած՝ հայացքս ուղղել էի կապույտ երկնքին, որտեղ բյուրավոր աստղեր էին վառվում: Երկնքին նայելով՝ ակամայից հիշեցի վաղեմի օրերի այն գիշերը, երբ մենք՝ երկու եղբայր, պառկած մեր հայրական խրճիթի կտուրին, Աչանի հետ հաշվում էինք աստղերի թիվն ու դրանք բաժանում մեր գյուղի մարդկանց միջև: Դա մտաբերելով՝ ես ու Վարդանը մեկս մյուսին ցույց էինք տալիս այն աստղերը, որոնք երկնքի համաստեղության մեջ մնացել էին անփոփոխ, իսկ նրանց տերերի կարճատև կյանքը մարել էր հավիտյան:

Հիշեցի այն սարսափելի գիշերը, երբ քուրդ Միրմհեն իր ավազակախմբով մտավ մեր գյուղը, մահվան սպառնալիքով թալանեց հայ կանանց ու աղջիկների ամբողջ զարդերն ու լուսաբացին հեռացավ: Վերջապես կինոժապավենի նման աչքիս առջևով գալիս ու անցնում էին այն ահավոր դեպքերը, որոնք տեղի ունեցան մեր գյուղում՝ սեփական աչքերիս առաջ: Հիշեցի բազմաթիվ այլ դեպքեր, առանձին դրվագներ՝ կապված իմ զոհված ընկերների ու հարազատների հետ: Այդ մտքերով տարված՝ մի պահ սիրտս ցավեց, մղկտաց, ու այլևս դադարեցի երկնքի աստղերին նայել: Աչքերս փակեցի ու շրջվեցի երեսի վրա, որպեսզի չտեսնեմ երկինքն իր աստղերով և չհիշեմ մեր ցավալի անցյալը, գոնե մի վայրկյան մոռացության տամ այն, ինչ կատարվել էր իմ աչքերի առաջ:

Դժբախտաբար դա ինձ չհաջողվեց, այլ ընդհակառակը, իմ մտքերն էլ ավելի հեռու տարան ինձ, որի պատճառով այդ գիշեր ես չկարողացա

թեկուզ մեկ ժամ աչք փակել ու մոռացության տալ այն ծանր ու դառը հիշողությունները, որոնք կապված էին մեր անցյալի հետ:

Բերանքսիվայր պառկած՝ չգիտեի՝ որքան ժամանակ էր անցել. հանկարծ հեռվից լսեցի Հարություն Եղոյանի թավ ձայնը:

– Վե՛ր կացեք, շո՛ւտ, մեզ հրամայված է գաղթել,– ասաց նա ու կտուրների վրայով ձայն տալով՝ բարձրացավ դեպի վերին թաղամաս:

Հարությունին լսելով՝ մի պահ ինձ թվաց, թե Ծաղկասարի մեր գյուղի ահաբեկված հովիվն էր օգնություն կանչում իր ոչխարների հոտը թալանից ազատելու համար: Սակայն Հարությունի ձայնի հետ զուգընթաց լսվեց նաև նժույգների խրխինջ ու սմբակների դոփյուն. դա ռուսական հեծյալ զինվորներն էին, որոնք ներքին թաղամասի առջևով նահանջում էին դեպի արևելք:

*
* *

Աննայի խրճիթի առջև հավաքվել էին կոտորածից փրկված հատուկենտ մարդիկ, որոնք դեռ գիշերվանից եկել էին այնտեղ՝ սպասելով գավառակենտրոնից վերադարձած Հարություն Եղոյանի կարգադրությանը: Նա ժամանակավորապես ընտրված էր գյուղի տանուտեր:

Լույսը վաղուց էր բացվել. Կավասարի հետևից դուրս եկած ամառվա պայծառ արևի վառ շողերը թեքությամբ ընկել էին Ծաղկասարի կատարին ու աստիճանաբար իջնելով ջերմացնում էին սարալանջի չհնձված խոտհարքները:

Արդեն պարզ երևում էին գյուղը շրջապատող բազմահազար ոչխարների հոտերը, որոնք, վաղուց անտեր մնալով, թափառում էին դեսուդեն:

Մոտիկ մարգագետնից տուն վերադառնալով՝ Բալաբեկը սկսեց մեր կապկված իրերը խրճիթից դուրս բերել՝ չսպասելով Հարություն Եղոյանի կարգադրությանը, լավ իմանալով, որ վաղ թե ուշ հեռանալու էինք հարազատ գյուղից: Նա վերջին ջվալն[50] էր դուրս բերում խրճիթից, երբ նորից մի խումբ ռուս հեծյալ զինվորներ, Եղոյանի ուղեկցությամբ առաջ գալով, կանգ առան:

– Ուշանում եք, հայրենակիցնե՛ր, պետք է շտապել,– ասաց ռուս հրամանատարի հետ եկած հայ զինվորը, որը թարգմանում էր իր մեծի կարգադրությունները:

– Ո՞ւր ենք գնալու,– դիմելով հայ զինվորին՝ հարցրեց Բալաբեկը:

[50] ջվալ – պարկ

Հայ զինվորը ռուս հրամանատարի հետ խորհրդակցելուց հետո պատասխանեց:

– Ժամանակավորապես նահանջում ենք դեպի Վան քաղաք, բայց շուտով կվերադառնանք:

– Եթե վերադառնալու ենք, էլ ինչո՞ւ ենք նահանջում,– հարցրեց Հարությունը:

– Դա ռուսական բանակի հրամանն է. պետք է կատարվի այսօր ևեթ,– պատասխանեց հայ զինվորը՝ միաժամանակ ավելացնելով,– ձեզ հետ վերցրե՛ք գյուղի շրջապատում թափառող մանր եղջերավոր անասուններ, որքան կարող եք:

– Մենք կվերցնենք միայն մեր սեփական անասունները, ուրիշներինը մեզ հարկավոր չէ,– պատասխանեց Հարությունը:

– Հրամանատարը թույլատրում է տանել այնքան, որքան կարող եք,– ասաց հայ զինվորը, և հրաժեշտ տալով քառատրոփ արշավով հեռացան դեպի տաք ջրերը, որտեղ գտնվում էր իրենց զորամասի շտաբը:

Ռուսական բանակի ներկայացուցիչների գնալուց հետո տղամարդիկ ու կանայք սկսեցին բեռնել իրենց անասունները գյուղից դուրս գալու համար: Վերջապես Հարություն Եղոյանի հրամանով մեր գյուղացիների փոքրաթիվ քարավանը դուրս եկավ գյուղից՝ ուղղություն վերցնելով դեպի հյուսիս-արևելք՝ ըստ երևույթին դեպի Վան քաղաք:

Գյուղից դուրս գալիս ոչ մեկս աչքը չէր կտրում հարազատ վայրերից: Նրանք բոլորն էլ արտասվելով հեռանում էին հայրենի ծննդավայրից:

Հեռանում էինք այն գյուղից, որտեղ ծնվել էինք մենք և մեր պապերի պապերը: Ընդմիշտ թողնում էինք մեր ծննդավայրի սքանչելի բնությունը՝ իր գեղատեսիլ լեռներով, կարկաչուն աղբյուրներով, արագավազ գետակներով, արգավանդ հողերով ու հրաշալի վայրերով: Մենք թողնում էինք մեզ համար շատ թանկագին հայկական հին հուշարձանները, որոնք դարերի ընթացքում ուժ և հույս էին ներշնչել հայ շինականին:

Հեռանալով՝ մենք թողնում էինք մեր սեփական հողը, որը ներծծված էր մեր հայրերի ու պապերի թափած քրտինքով:

Մենք թողնում էինք այն լեռներն ու անդնդախոր ձորերը, որտեղ նահատակվել էին հազարավոր հայ մարդիկ, որոնց թարմ արյունով ներկված էր մայր հողն ամբողջությամբ:

Սակայն ամենասոսկալին այն էր, որ այդ օրը մենք բաժանվում էինք մեր հարազատների եղբայրական գերեզմաններից. դրանք այլևս չէինք կարող տեսնել:

Վերջապես սրտի անհուն կսկիծով Կավասարի կանաչ բարձունքից շրջվելով նրա հակառակ կողմը՝ մենք ընդմիշտ թողեցինք մեր հայրենի ծննդավայրը, որն այնքան հարազատ էր ու թանկ բոլորիս համար:

ՀԱՅՈՑ ՁՈՐՈՒՄ

Հեռանալով հայրենի լեռնաշխարհից՝ վերջապես գաղթի չորրորդ օրվա մայրամուտին մեր գյուղի բնակչության փոքրաթիվ քարավանը ռուս զինվորների պահանջով կանգ առավ և ժամանակավորապես տեղավորվեց Հայոց ձորի՝ այգիներով շրջապատված գյուղերից մեկում: Կանգառի առաջին երկու օրերին սպասողական դրության մեջ գտնվելով՝ մեզնից ոչ մեկը տեղից չէր հեռանում: Միայն երրորդ օրվա կեսին գավառական կենտրոնից վերադարձած Հարություն Եղոյանի կարգադրությամբ տեղահան արված յուրաքանչյուր ընտանիք հարկադրված էր տեղավորվել իրեն հատկացված դատարկ խրճիթում:

Դուրս գալով հարազատ ծննդավայրից՝ անցած չորս օրվա ճանապարհի ընթացքում, բացի ռուսական բանակի առանձին փոքրաթիվ խմբերից, ուրիշ ոչ ոքի չէինք հանդիպել, քանի որ լեռնային այդ հատվածի հայ բնակչությունը ավելի շուտ էր գաղթել արևմուտք՝ երկրի խորքերը:

Դիմ գյուղը, գտնվելով Նորդուզ գավառակի ամենահեռավոր շրջանի լեռների մեջ, ժամանակին չէր զգուշացվել ռազմաճակատի վտանգավոր տարածքից ավելի շուտ դուրս գալու համար: Հենց այդ պատճառով էլ ամենավերջին գաղթականները մենք էինք, որ այդ օրը ոտք դրեցինք գրեթե ամայի դարձած Հայոց ձոր: Այստեղ գալով՝ շատ մարդկանց դեմքերին երևացին ուրախության ժպիտներ, որովհետև ահավոր օրերից հետո առաջին անգամ էր, որ մենք հանդիպում էինք հատուկենտ հայ մարդկանց, որոնք նույնպես, ազատվելով թուրքական ջարդարարներից, հենց նոր էին վերադարձել իրենց հայրենի հարկ:

Չնայած Հայոց ձորը Վան նահանգի հայաշատ գավառներից մեկն էր, բայց և այնպես նրա բնակչությունը նույնպես խիստ կերպով տուժել էր թուրք մարդասպանների հարձակումներից:

Գավառի ազգաբնակչության միայն փոքրաթիվ մասին էր հաջողվել մարտերով ճեղքել և դուրս գալ թշնամու շրջապատման սեղմ օղակից ու միանալ պաշարված Վան քաղաքի պաշտպաններին, հերոսական պայքար մղել թուրքական կանոնավոր զորքերի դեմ, իսկ շատերն էլ նահատակվել էին սեփական տան շեմին:

Այն գյուղը, որտեղ ժամանակավորապես կանգ առանք, շատ մեծ էր, բայց համարյա թե դատարկ: Միայն նրա կենտրոնական թաղամասում, որտեղից հոսում էր Շամիրամ կոչվող ջրանցքը, երևում էին հատուկենտ տղամարդիկ ու գեղջկուհիներ, որոնք հայ շինականին հատուկ մեծ եռանդով խնամում էին իրենց այգիները:

Ժամանակավորապես հաստատվելով Հայոց ձորում՝ մեր գյուղի կենդանի մնացած տղամարդիկ ու կանայք նույնպես սկսեցին աշխատել, խնամել իրենց հետ բերված եղջերավոր անասուններին, իսկ մեր տասներկու հոգուց բաղկացած տղաների խումբը, որը համալրվել էր նոր տղաներով, այստեղ նույնպես շարունակեց իր հետաքրքիր խաղերն ու հետազոտությունները:

Մանկական հետաքրքրությամբ ու մեծ եռանդով սկսեցինք հետազոտել և ուսումնասիրել Շամիրամի մայր ջրանցքի երկու կողմերում սփռված գյուղերն ու բերքով լի պտղատու այգիները: Մեզ հետաքրքրում էր, թե ինչ է կատարվում գյուղից դուրս՝ մեր շրջապատում:

Մի քանի օրվա ընթացքում բավական ուսումնասիրեցինք Հայոց ձորի հարթավայրի վրա սփռված համարյա թե բոլոր բնակավայրերը, հատկապես ջրանցքի զուլալ ջրով ոռոգվող փարթամ այգիները: Կտրված լինելով հայրենի գյուղի ամենօրյա հոգսերից՝ անհոգ թափառում էինք ամեն տեղ, որտեղ աչքներս կտրում էր: Հանդիպում էինք ռուս զինվորներին, զրույցներ ունենում նրանց հետ՝ նպատակ ունենալով առաջին իսկ օրվանից սովորել ռուսերեն տարբեր նախադասություններ ու առանձին բառեր, որոնք ավելի շատ էին հետաքրքրում մեզ: Խոսում էինք կես հայերեն, կես քրդերեն, իսկ ամենից շատ հոլովում էինք ռուսերեն այն բառերը, որոնք սովորել էինք մեր գյուղում՝ ընդամենը մեկ օրվա ընթացքում: Առավոտից մինչև ուշ երեկո շրջում էինք այգիներով, ծառապտուղներ հավաքում, կրկին հանդիպում զինվորներին: Մի խոսքով, այնքան էինք մտերմացել կապուտաչյա ու շեկ մազերով ռուս զինվորների հետ, որ թվում էր, թե հին ծանոթներ էինք:

Բաժանվելով մեր ռուս բարեկամներից՝ թևավորված թռչունի պես սավառնում էինք ամեն տեղ՝ չվախենալով ոչ ոքից: Այգիները տակնուվրա անելուց հետո կրկին մտնում էինք Շամիրամի մայր ջրանցքը՝ լողանալու մինչև ամառային երկար օրվա մայրամուտ:

Չնայած Շամիրամի ջրանցքը մեր գյուղի արագավազ գետերին չէր նմանվում, բայց այն շատ խոր ու զուլալ էր, ինչպես աչքից թափված արտասուք: Նա այնքան պարզ էր ու մաքուր, որ հատակում կուտակված ավազի ամենափոքրիկ հատիկն անգամ երևում էր. կարծես կալի

մեջ փռված ցորենի կարմիր հատիկներ լինեին: Պատմական ջրանցքի երկու կողմերի բարձր հողաթմբերն ամբողջապես ծածկված էին ճյուղավորված մեծ ծառերով ու խիտ կանաչով: Օր չէր լինում, որ մենք ժամերով չմտնեինք ամառվա վառ արևից ջերմացած այդ հրաշալի պարզ ջրի մեջ ու ձկնկուլի պես լող չտայինք մինչև ուշ երեկո:

Տարվելով ռուսական հեծյալների սրավարժություններով, որոնք տեղի էին ունենում Հայոց ձորի հարթավայրերում, մեր խումբը նրանցով ոգևորված, ավելի հեռուն էր գնում ու շրջում ամեն տեղ: Հայրենի լեռնաշխարհից հեռանալուց հետո Շամիրամի ջրանցքն ու նրա առատ ջրով ոռոգված փարթամ այգիների ու շրջապատի հին հուշարձանների ուսումնասիրումը կարծես թե անհրաժեշտություն էր դարձել մեզ համար. ջրանցքն իր գեղեցիկ տեսարանով գերում էր ամենքիս:

Շամիրամի ջրանցքը շատ մեծ էր ու ճյուղավորված: Քայլում էինք առավոտ լուսաբացից մինչև ուշ երեկո, բայց սկիզբն ու վերջը չէր երևում:

– Ինչ ուզում է լինի, պետք է հասնենք ու տեսնենք դրա ակունքը,– վճռականապես պահանջում էր Մնոն՝ ոգևորելով խմբի տղաներին, բայց համոզված լինելով, որ ջրանցքի ամբարտակին հասնելու համար օրեր էին հարկավոր, ու մեծ ջանք էր պահանջվում: Այնուամենայնիվ Մնոյի, Սարգսի, Արամի, Ատոմի և Հայկի խելահեղության պատճառով ծնողներից գաղտնի շարունակում էինք մեր երթը դեպի լեռներ՝ մեզ համար բոլորովին անծանոթ վայրեր:

*

* *

Չար ու հանդուգն էինք դարձել առանձնապես ես ու Մնոն: Մի քանի օր առաջ մեր հավաքած գումարով ընկերներիս հետ Անգշտանց գյուղի զինագործին պատվիրել էինք պատրաստել չորս դաշույն, որից մեկը արծաթապատ պատյանով: Իհարկե, վերջինս պատկանում էր Մնոյին՝ որպես տարիքով մեծի ու մեր ղեկավարի: Թուրքական գերությունից վերադառնալու ճանապարհին Ծաղկասարի ձորում գտնված ռուսական սվինը դեռ ինձ մոտ էր գտնվում և միշտ անբաժան էր ինձնից: Սակայն երկար լինելու պատճառով շատ դեպքերում ռուս զինվորներից թաքցնել չէի կարողանում: Ասենք վատն այն էր, որ իմ հասակակից տղաներն ինձ սվինով զինված տեսնելուն պես սկսում էին չարախնդությամբ ծիծաղել, իսկ ես զայրույթից շարունակ կռվի մեջ էի մտնում նրանց հետ: Իմանալով, որ ռուսական սվինը օգտագործվում է

միայն սվինամարտի ժամանակ, այն էլ հրացանի փողին ամրացրած, վճռեցի ձեռք բերել ավելի փոքր, բայց սուր դաշույն, որի համար Աննայից մի քանի մետաղյա մանր դրամներ կորզեցի ու հանձնեցի Մնոյին, իսկ վերջինս տղաներից հավաքված գումարի հետ հանձնել էր զինագործ Գրիգորին: Վարպետից վերցնելով մեր կողմից պատվիրված դաշույնները՝ հաջորդ առավոտյան՝ դեռ լույսը չբացված, մենք կրկին դուրս եկանք գյուղից՝ ուղղություն վերցնելով դեպի բարձր լեռները:

Հեռանալով մեր բնակավայրից՝ երրորդ օրվա կեսին հասանք այն հոյակապ կառույցին, որը տեսնելու համար շատերը կարող էին միայն երազել:

Շամիրամի մայր ջրանցքն իր սկիզբն առնում էր երկու հանդիպակաց սարերի երկարությամբ հոսող արագավազ մեծ գետից, իսկ վերջինս իր հերթին սկսում էր ավելի վարարել ու հզորանալ մոտակա լեռների ստորոտներից բխող սառնորակ աղբյուրներից: Ջրանցքի ամբարտակը կառուցված էր գետի հոսանքի՝ երկու կողմերից ժայռերով սեղմված նեղ հատվածում:

Գետից անջատվող մեծ քանակությամբ ջուրը հոսում էր մի կլորածև քարաժայռի ահռելի ճեղքվածքով: Զարմանալի գեղեցկություն ուներ այդ սպիտակին տվող քարաժայռը: Մեզ՝ պատանիներիս թվում էր, թե ամբարտակը կառուցող հազարավոր վարպետները հրաշքով նրան մեջտեղից երկու կես են արել:

Տեսնելով կլորածև քարաժայռը և նրա միջով ահռելի ուժով հոսող գետը, մենք երկար ժամանակ դիտում էինք այն ու համեմատում Տիգրիս գետի հետ, որից ընդամենը մի քանի օր առաջ մեծ վշտով հեռացանք: Ջրանցքի ամբարտակը շատ հեռու էր գտնվում այն բնակավայրերից, որտեղ մենք էինք բնակվում: Մենք անցել էինք այգիների ու ծառաստանների միջով, իսկ հետագա մեկուկես օրերին շարժվում էինք լեռներով, սարալանջերով ու խոր-խոր ձորերով:

Ջրանցքը շատ տեղերում անցնում էր ժայռալանջերով. տեսնողին թվում էր, թե մի սողուն վիշապ կպել է ժայռապարսպի կրծքին ու պոկ չի գալիս նրանից:

Ջրանցքը որոշ հատվածներում էլ հոսում էր հսկայական մեծ քարերով շարված բարձր ու բերդանման լայն պարիսպների վրայով:

Չնայած անտանելի ծանր էր մեզ համար կտրել և անցնել այդ երկար տարածությունը մինչև ջրանցքի ամբարտակը, այն էլ հոգնեցուցիչ ու դժվարին ճանապարհներով, այնուամենայնիվ մեր մանկական հե-

տաքրքրությունը բավարարված էր: Մենք հետազոտեցինք և տեսանք այն հոյակապ ջրանցքն ու այն սնող ակունքները, որոնց մասին շատերը տարիներով պատմում էին, բայց սեփական աչքերով չէին տեսել:

Ուսումնասիրելով Շամիրամի ջրանցքը, իհարկե մեզ՝ լեռնային գյուղի զավակներիս, դեռ հայտնի չէր, թե ովքեր և երբ են կառուցել այն, որն առատորեն հագեցնում էր Հայոց ձորի արգավանդ հողերի ու մրգատու այգիների դարավոր ծարավը:

Միայն հետագա օրերին, մեր շրջագայության ժամանակ, երբ պատահմամբ հանդիպեցինք Վան քաղաքից վերադարձած Պլթենց գյուղի վարժապետին, մեր կողմից տրված հարցերին պատասխանելու համար նա, իր մոտ եղած գրքերից մեկը թերթելով, սկսեց դանդաղորեն ընթերցել այդ հոյակապ ջրանցքի կառուցման հետ կապված համառոտ պատմությունը, որը դարերի ընթացքում չէր մոռացվել:

*
* *

Որքան ուրախ էինք Շամիրամի ջրանցքի ու նրա ամբարտակի պատկերով, այնքան էլ խոր վիշտ ապրեցինք, երբ հետախուզությունից վերադառնալիս տեսանք շրջապատի հայ ազգաբնակչության կոտորածի սարսափելի հետքերը, եղբայրական շատ գերեզմաններ, որոնց թարմ շիրիմների վրա արդեն վաղուց բացվել էին գարնանային բազմատեսակ ծաղիկների բողբոջները:

Այնտեղ նույնպես անլուր չարագործություններ էին կատարվել թուրք դահիճների ու արյունռուշտ ենիչերիների կողմից: Ջրանցքի երկու կողմերի քարափների ու փոսերի մեջ ընկած էին խոշտանգված կանանց ու երեխաների անթաղ մնացած բազմաթիվ դիակներ, որոնք հոշոտվել էին գիշատիչ թռչունների կողմից: Օ՜, որքան անլուր ոճրագործություններ էին կատարվել Հայթնինի սեփական հողում, այն էլ պատմական այդ ձորում, որը կրում էր հայ ժողովրդի անունը: Տեսնելով թուրք դահիճների չարագործությունների հետքերը՝ մենք, խորն ատելությամբ լցված և բռունցքներս սեղմած, լուռ վերադառնում էինք տուն:

Դեռ դռնից ներս չմտած՝ ինձ դիմավորեց իմ վաղեմի բարեկամներից մեկը, որին մթության մեջ առաջին պահին չկարողացա ճանաչել: Իհարկե, ինձ տեսնելով՝ նա հուզմունքից սկսեց արտասվել, իսկ ես տխրությամբ նայում էի նրա գեղեցիկ աչքերին:

– Տեսա՞ր, Սևո՛ւկ ջան, որ ասում էի՝ կհանդիպենք, չէիր հավատում,– ասաց նա՝ հարազատի պես գրկելով ինձ:

– Ինչպե՞ս հիշեցիր քո հին ծանոթին,– հարցրեց Աչանը:

– Երբ Վանից գյուղ վերադարձա, մերոնք հայտնեցին ձեր գաղթի մասին, դրա համար էլ հարցնելով շատ հեշտությամբ գտա ձեզ, ահա և Սևուկին:

Նուրբ դիմագծերով, շիկահեր մազերով գեղեցիկ աղջիկն իմ վաղեմի ծանոթն էր, որին հանդիպել էի Բաշկալա քաղաքում: Նա այն տանտիրոջ դեռատի դուստրն էր, որի հետ ծանոթացա քաղաքում հայրիկիս կորցնելու օրը: Դա Բաշկալա քաղաքի բնակիչ մի հայ վաճառականի միակ աղջիկն էր, որի հետ ծանոթանալով՝ երջանիկ րոպեներ էի անցկացրել նրանց ծառախիտ պարտեզում: Դա այն աղջիկն էր, որին հայոցձորցիները, դեռ 12 տարեկան հասակը չլրացած, նշան էին դրել՝ երկու տարուց հետո հարսանիք անելու պայմանով: Դա այն տանտիրոջ սիրելի դուստրն էր՝ Վարդիթերը, որին մինչ այդ օրը չէի մոռացել և հանկարծ անսպասելիորեն հանդիպեցի: Վարդիթերն ընդամենը մեկ տարի առաջ ամուսնացել էր հայոցձորցի տղաներից մեկի հետ, երբ դեռ չէր սկսվել Առաջին համաշխարհային պատերազմը:

Ամուսնանալու նպատակով Բաշկալա քաղաքից Հայոց ձոր գնալու առաջին իսկ ամսին սկսվել էր ահավոր պատերազմը, իսկ Վարդիթերի ամուսինը մեկնել էր թուրքական բանակ ու այլևս չէր վերադարձել: 1915 թվականի ապրիլ ամսի ահավոր օրերին հարազատների հետ կոտորվել էին նաև Վարդիթերի բոլոր ազգականները: Իսկ տասնվեց տարեկան նորահարս Վարդիթերը, զրկվելով ծնողներից ու հարազատներից, հրաշքով կենդանի էր մնացել: Այդ օրը լսելով, որ Նորդուզի հայ բնակչությունը գաղթել է Հայոց ձոր, հարցնելով եկել էր մեզ տեսության:

Աննան այլևս չթողեց Վարդիթերին՝ այդ խելոք ու բարեկիրթ աղջկան, մեզնից բաժանվել:

– Այլևս քեզ բաց չենք թողնի, Վա՛րդ ջան,– ասաց Աննան՝ համբուրելով աղջկան,– դու կփոխարինես իմ կորած քույրիկին, որին հինգ տարի առաջ առևանգեցին քրդերը:

Մտերմանալով Վարդիթերի հետ՝ ես օրվա մեծ մասը անց էի կացնում նրա հետ՝ որպես վաղեմի ծանոթ, և համարյա թե չէի բաժանվում նրանից:

Սակայն նրա հետ հանդիպելու երրորդ օրվա կեսին մեր խմբի ղեկավար Մնոն, տեսնելով ինձ, խիստ հանդիմանեց.

– Ինչո՞ւ մեզ հետ չես գալիս,– հարցրեց նա՝ շեղ նայելով աչքերիս:

– Իմ վաղեմի ծանոթը եկել է մեր տուն, անհարմար եմ զգում նրանից բաժանվել,– պատասխանեցի ես՝ փորձելով արդարանալ:

– Ինչքան մնացիր, բավակա՛ն է, վաղը հետախուզության ենք գնալու:

– Ո՞ւր,– հարցրի ես:

– Երևի շատ հեռու…

– Ո՞ւր,– կրկին հարցրի ես:

– Տղաները որոշել են մեկնել մեր հայրենի գյուղը:

– Ինչո՞ւ,– զարմանքով հարցրի ես:

– Իմանանք, գուցե Օմար աղան գաղթից վերադարձել է:

– Ենթադրենք, թե վերադարձել է, հետո ի՞նչ, – հարցրի ու հետաքրքրությամբ ավելի մոտեցա նրան:

– Հետո այն, որ որևէ բան կորոշենք անել:

– Եթե որոշելու ենք, հիմա որոշենք:

– Ուրեմն դու համաձա՞յն ես մեր որոշմանը,– հարցրեց Մնոն ու ժպտալով գրկեց ինձ:

– Համաձայն եմ, թեկուզ հիմա՝ այս վայրկյանին,– ուրախությամբ պատասխանեցի ես:

Իսկապես այդ նույն օրը մեր խմբի տասներկու անդամներից վեց տղաներով պայմանավորվեցինք պատրաստվել և վաղ առավոտյան ծնողներից գաղտնի մեկնել հայրենի գյուղ:

Մեր գնալու հիմնական նպատակն էր հետազոտել Դիմ գյուղը՝ իր ողջ շրջապատով, և եթե Օմար աղան իրոք վերադարձել էր գաղթից, ապա պետք է օգտագործեինք գիշերվա խավարն ու Մնոյի հնարամտությունը, գերության մեջ մնացած Մսրեին և Ղազարին ազատելու քրդերի ստրկությունից. նրանց գերի մնալու փաստը սարսափելի տանջում էր բոլորիս:

Պատրաստելով մեզ անհրաժեշտ ուտելիքի պաշարը՝ այդ նույն օրվա գիշերով մենք, ռուս զինված պարեկներից ու հետախույզներից անկատ, դուրս եկանք Հայոց ձորի հարթավայրից՝ ուղղություն վերցնելով դեպի Նորդուզ, որի լեռնային ճանապարհներին որոշ չափով ծանոթ էինք:

Մենք բավականին ճանապարհ կտրեցինք՝ ամեն կերպ խուսափելով հանդիպել ռուսական զորամասերին: Երկրորդ օրվա լուսաբացին, լեռների կածաններից տեղանքը զննելով, մենք ռուսների փոխարեն արդեն տեսնում էինք դեպի արևելք շարժվող թուրք ասկյարներին ու հեծյալ քրդերին: Իհարկե, այդ փաստը մեզ խիստ տխրեցրեց, քանի որ մեր բարի մտադրությունն, ըստ երևույթին, կարող էր մնալ անկատար:

Չնայած դեպի Նորդուզ տանող հետագա ճանապարհը շատ դժվար էր ու վտանգավոր, այնուամենայնիվ չուզեցինք մեր խելահեղ

մտադրությունից հրաժարվել, ուստի հենց այդ պահին էլ որոշեցինք ցերեկները թաքնվել, իսկ մութն ընկնելիս առաջ շարժվել: Զարմանալին այն էր, որ բոլորս էլ զգում էինք, թե ինչ վտանգավոր ծուղակի մեջ ենք ընկել, բայց ոչ ոք իր միտքը չէր հայտնում մյուսին՝ վախկոտության մեջ չմեղադրվելու:

Հաջորդ առավոտյան, երբ դեռ նոր էինք դուրս եկել թաքնված տեղից, հանկարծ լսեցինք ուժեղ հրաձգության ձայներ: Վտանգից հեռու մնալու նպատակով ստիպված էինք սարի կատարից թեքվել հակառակ կողմը, բայց ճանապարհը շարունակել չկարողացանք: Սարալանջից դեպի ցած երևաց մի գյուղ, որտեղից խմբերով դուրս էին գալիս թուրք ասկյարներ ու աստիճանաբար իրարից բաժանվելով՝ բարձրանում էին դեպի մոտակա բլուրները, իսկ մեկ ժամ չանցած՝ մարտի բռնվեցին ռուսական զինված հեծյալների հետ: Իհարկե, մենք լավ էինք թաքնվել, այնպես որ ոչ ոք մեզ նկատել չէր կարող: Հրացանային համազարկ լսելուց հետո Արամն ու Հայկը սկսեցին տրտնջալ և առաջարկեցին հետ վերադառնալ, բայց Մնոն, իր սովորության համաձայն, խիստ հանդիմանեց նրանց և ստիպեց լռել:

– Եթե վախենում եք, վերադարձե՛ք հենց հիմա, իսկ մենք առանց ձեզ կշարունակենք մեր ճանապարհը,– զայրացած զգուշացրեց խմբի ղեկավարը:

Հայկն ու Արամը լավ գիտեին Մնոյի խիստ և հանդուգն բնավորությունը, ուստի նպատակահարմար գտան լռել: Հրացանային կրակոցներն ավելի էին ուժեղանում, իսկ տեղում երևացող ազգաբնակչությունը, դուրս գալով գյուղից, անմիջապես ցրվեց՝ թաքնվելով մոտակա քարափներում:

Այդ նույն ժամանակ քրդական տարազով մի խումբ կանայք չորս երեխաների հետ բոլորովին հակառակ ուղղությամբ մոտեցան գյուղի արևմտյան կողմի քարաժայռին ու անմիջապես անհետացան ճիշտ այնտեղ, որտեղից քիչ հեռու թաքնվել էինք մենք:

Ռուսների և թուրքերի միջև տեղի ունեցող մարտական գործողությունները գնալով ավելի էին բորբոքվում, իսկ գյուղին էին մոտենում թշնամու նորանոր հետևակային ջոկատներ: Վերջիններս, իրարից բաժանվելով, աստիճանաբար ցրվում էին երկու հանդիպակաց լերկ բլուրների արանքում ու անհետանում:

– Տղանե՛ր, այստեղ եկած կանանց ու երեխաների մեջ տղամարդիկ չկան, իմանանք՝ ովքեր են, գուցե նրանց միջոցով պարզենք, թե ինչ է կատարվում մոտակա գյուղերում,– ասաց Մնոն՝ առաջարկելով

տղաներին թաքնված մնալ իրենց տեղերում, իսկ ինքը, թևիցս բռնելով ու համարյա թե գլորելով, քարշ տվեց ինձ քարափների մեջ:

Ես ու Մնոն ցանկանում էինք գտնել այն վայրը, որտեղ քիչ առաջ կանանց խումբն իրենց երեխաներով անհայտացավ: Մտնելով քարափների մեջ՝ մենք քայլ առ քայլ մոտենում էինք քարաժայռի մեծ խորշերից մեկին, որտեղ հավանորեն պետք է թաքնված լինեին նրանք: Ավելի քան երկու ժամ էր անցել, բայց մենք տեղից չէինք շարժվում՝ սպասելով, որ գուցե նրանցից մեկը երևար: Սակայն հրածգության ուժեղ կրակոցների պատճառով ո՛չ լսել կարողացանք, ո՛չ էլ տեսնել, բացի մի քանի թուրք ասկյարներից, որոնք իրենց եզաքարշ սայլերը տեղավորում էին բնակավայրի ծառուղիներում:

Մոտավորապես օրվա կեսին կրակը դադարեց, իսկ խրամատավորված թուրքերի մի զգալի մասը անհայտացավ սարի հակառակ կողմում, ըստ երևույթին, նրանք հետապնդում էին ռուսական զորամասի վերջին ջոկատներին:

Մի պահ լռություն տիրեց ամեն տեղ. ոչ մի շշուկ չէր լսվում: Միայն առավոտյան դեմ գյուղից հեռացած հատուկենտ մարդիկ, շրջակա անտառներից դուրս գալով, վերադառնում էին իրենց խրճիթները:

– Երևում է՝ հայկական գյուղ է,– ասաց Մնոն:

– Ի՞նչ իմացար,– հարցրի ես:

– Տե՛ս, եկեղեցու գմբեթ է երևում,– շշուկով պատասխանեց նա՝ միաժամանակ ցույց տալով նաև հայ բնակչության գերեզմանոցը, որը փռված էր քարաժայռից ոչ հեռու՝ թեք տարածության վրա:

Մենք դեռ շունչներս պահած դիտում էինք գյուղն ու միաժամանակ հետևում թաքնվածներին, բայց ձայն չլսվեց: Շուտով բնակավայրի արևմտյան կողմից ձիավորների մի մեծ խումբ երևաց: Նրանք արշավով մտան գյուղ և մի պահ կանգ առան: Նրանց տեսնելով՝ ուզեցինք հեռանալ քարափներից ու միանալ մեր ընկերներին, սակայն հենց այդ պահին էլ մեզնից ոչ հեռու երևաց այն տղան, որին առավոտյան կողմ տեսանք քարափ բարձրանալիս:

– Նե՛րս եկ, կտեսնեն քեզ,– քարայրի խորքից լսվեց կանացի մի ձայն:

– Սպասի՛ր, տեսնեմ՝ ուր գնացին,– հայերեն լեզվով լսվեց պատանու պատասխանը, որը միաժամանակ ուշադրությամբ դիտում էր շրջապատը:

Այդ երկու նախադասությունը լսելուց հետո այլևս կասկած չկար, որ քարայրում թաքնվածները գերության մեջ մնացած հայեր են:

Դուրս գալով թաքնված տեղից՝ ես ու Մնոն երեսի վրա մագլցելով մոտեցանք պատանուն, որը հանկարծակիի գալով միանգամից բղավեց:

– Ի՞նչ եղավ քեզ,– լսվեց քարայրում թաքնված կնոջ ձայնը, բայց պատասխան չստանալով՝ նա դուրս եկավ:

Տեսնելով ինձ ու Մնոյին՝ կինը նույնպես այլայլվեց ու մի պահ սառած մեխվեց տեղում:

– Մորաքո՛ւյր, թաքնվի՛ր, քեզ կտեսնեն,– առաջարկեց Մնոն:

– Հա՞յ եք,– հարցրեց երիտասարդ կինը՝ նայելով մեզ երկուսիս:

– Հայ ենք:

– Որտեղի՞ց եք եկել այս կրակների մեջ,– հարցրեց նա ու ձեռքներս բռնելով՝ քարայրի խորքը քաշեց:

Փոքրիկ քարայրի խորքը մտնելով՝ տեսանք թոնրի խարծիկաթները[51] ձեռքներին բռնած երեք երիտասարդ կանանց, որոնք վախվխելով կանգնած տեղից նայում էին մեզ: Ինձ ու Մնոյին թուրքի տեղ դնելով՝ ըստ երևույթին պատրաստվում էին խարծիկաթներով հարվածել:

Տեսնելով մեր երկուսի աննախանձելի կեցվածքը, մանավանդ Մնոյի ձեռքում բռնած, առանց փամփուշտի ժանգոտած ատրճանակը և արծաթյա պատյանով դաշույնը՝ կանայք ու երեխաները համարյա թե տեղում չորացան:

– Մորաքո՛ւյր, մի՛ վախեցեք, մենք հայ ենք,– կրկին զգուշացրեց Մնոն:

– Որտեղի՞ց եք եկել, զավակնե՛րս,– հարցրեց նրանցից մեկը՝ սիրտ առած մոտենալով Մնոյին:

– Հայոց ձորից:

– Այդ ինչպե՞ս եք եկել այստեղ, որ թուրք ասկյարները ձեզ չեն սպանել:

– Նրանք մեզ չեն նկատել,– պատասխանեց ընկերս:

Մնոյի հակիրճ պատասխանը լսելով և մեր գալու նպատակին տեղեկանալով՝ հայ կանայք հուզմունքից սկսեցին արտասվել և, ձեռքներին բռնած ծանր խարծիկաթները դեն գցելով, ավելի մոտեցան երկուսիս:

– Ինչո՞ւ եք մտել այս քարե զնդանի մեջ,– հարցրեց Մնոն:

– Երկու օր է, ինչ գաղթից վերադարձել ենք գյուղ,– պատասխանեց կինը,– մեզ գերող քրդերը գնացել են թալանի, այսօր, երբ թուրքական

---

[51] խարծիկաթ *(ըստ Վանի բարբառի)* – թոնրին դրվող խաչաձև երկաթ, որի վրա դրվում են կերակրի կաթսաները

զորքերը հանդիպեցին ռուսներին, տեղի քուրդ բնակիչներից շատերը փախան ու թաքնվեցին քարափների մեջ, ուստի, առիթից օգտվելով, մենք նույնպես փախանք, բայց ոչ թե հետ, այլ այստեղ՝ քարանձավ:

– Իսկ ինչո՞ւ նրանց հետ չփախաք,– հարցրեց Մնոն՝ նայելով կանանց փեշերից բռնած երեխաների խղճալի դեմքերին:

– Այստեղ թաքնվեցինք, որպեսզի ռուսների գյուղ մտնելու պահին հանդիպենք նրանց, բայց, ինչպես տեսաք, չհաջողվեց,– պատասխանեց կինը:

Մեր զրույցից պարզվեց, որ հայ կանայք իրենց երեխաներով հանդերձ նույնպես գերի էին վերցվել թուրքերից, ինչպես մեր համագյուղացիներ Մսրեն և Ղազարը, որոնց ազատելու նպատակով մենք՝ վեց ընկեր, խելահեղորեն ընկել էինք շատ վտանգավոր փորձությունների մեջ:

Արևն արդեն մայր էր մտել, իսկ ռուսական ու թուրքական զորամասերի միջև տեղի ունեցած կարճատև մարտերը գրեթե դադարել էին, բացի հեռվից լսվող հրացանային կրակոցների թույլ ձայներից: Ճանապարհներով դեպի արևելք շարժվող թուրքական զորամասերի առաջխաղացումից երևում էր, որ ռուսները հետ են քաշվել, ուստի մեզ մնում էր հրաժարվել Մսրեին ու Ղազարին գերությունից ազատելու մեր մտադրությունից և անմիջապես վերադառնալ Հայոց ձոր, այլապես դարձյալ կմնայինք գերության մեջ:

Փախստականների հետ տեղի ունեցած հարց ու պատասխաններից հետո, լսելով Մնոյի պայմանական սուլոցը, մեր խմբի մնացած տղաները, թաքնված տեղից դուրս գալով, միացան մեզ: Երբ հավաքվեցինք քարայրում, խմբի ղեկավարը հարցրեց.

– Ի՞նչ անենք:

– Անմիջապես վերադառնանք, թե չէ թուրքերը մեզ կկոտորեն,– ասաց Հայկը՝ նայելով ընկերոջ դեմքին:

– Իսկ ի՞նչ անենք կանանց ու երեխաներին,– հարցրին մնացածները:

– Լավ կլինի միասին գնանք, թե չէ թուրքերը նրանց կկոտորեն,– պատասխանեց խմբի ղեկավարը:

– Ի՞նչ եք խոսում, զավակնե՛րս,– ցածր ձայնով հարցրեց կանանցից մեկը՝ ըստ երևույթին նախազգալով մեր խմբի հեռանալը:

– Վերադառնալու ենք Հայոց ձոր՝ մեր ծնողների մոտ, – պատասխանեց Մնոն:

– Աղաչում ենք, մե՛զ էլ տարեք,– միաբերան խնդրեցին կանայք, իսկ երեխաները հուզմունքից սկսեցին արտասվել:

– Առանց ձեզ չենք գնա, մորաքո՛ւյր,– ասաց Մնոն և միաժամանակ հարցրեց, թե արդյոք ծանոթ են ճանապարհներին:

– Գիտենք այնպես, ինչպես մեր գյուղի ամառանոցների ճանապարհները,– պատասխանեց նրանցից մեկը, որը բոլորից հասակավոր էր երևում:

– Իմացե՛ք, որ ուղիղ ճանապարհով գնալը վտանգավոր է,– զգուշացրեց խմբի ղեկավարը և ավելացրեց,– անպայման պետք է լեռներով շարժվել, հակառակ դեպքում կրկին թուրքերի ձեռքը կընկնենք, գուցե ավելի վատ լինի մեզ համար:

– Դեպի Հայոց ձոր տանող կարճ ճանապարհներին նույնպես ծանոթ եմ,– ասաց միջահասակ կինը, որին մյուսները Ոսկեհատ քույրիկ էին կանչում:

Մեր հարց ու պատասխանից պարզվեց, որ, իրոք, Ոսկեհատ քույրիկը շատ լավ ծանոթ էր տեղանքին ու դեպի Վան գնացող բոլոր ճանապարհներին:

– Չգիտենք, Ոսկեհա՛տ քույրիկ, մեր ուղեկիցը դու պետք է լինես,– ասաց Մնոն՝ նստելով քարայրի անցքի առջև եղած քարաբեկորներից մեկի վրա ու սկսեց իր հնամաշ տրեխների կապերն ամրացնել:

– Ճանապարհների համար հանգի՛ստ եղեք, զավակնե՛րս, կգնանք այն վայրերով, որտեղ ոչ մի թուրք օրը ցերեկով անգամ սիրտ չի անի երևալ,– պատասխանեց Ոսկեհատ քույրիկը:

*
* *

Ամառային երկար օրվա արևը մայր էր մտել. նրա վերջին ճառագայթները հետզհետե անհետանում էին բարձր սարերի կատարներից, իսկ գյուղը շրջապատող լեռներն աստիճանաբար ընկղմվում էին գիշերային մթության մեջ: Գյուղից ոչ հեռու՝ քարանձավի դեմ դիմաց՝ երևում էին թուրք հատուկենտ ասկյարներ, որոնք, դեռ արևը մայր չմտած, սկսել էին բեռնել իրենց եզնասայլերը և պատրաստվում էին շարժվելու: Ըստ երևույթին դրանք դեպի արևելք շարժվող թուրքական հետևակային զորամասի վերջին մնացորդներն էին: Հայ կանայք, ուրախ-ուրախ կապկպելով քարախիճերի վրա փռված իրերը, պատրաստվում էին միասին ճանապարհվելու՝ չմոռանալով իրենց հետ վերցնել նաև քարանձավի պատերին դեմ արած գյուղական թոնիրների պողպատյա խարձիկաթները: Ոսկեհատ քույրիկը, հագցնելով աղջկա և տղայի տրեխները, նույնպես գետնից վերցրեց մի լաթի մեջ փաթաթված երկար կապոց, որն առաջին իսկ հայացքից կարող էր նմանվել հրացանի խզակոթի կամ գերմանական մաուզերի:

Շուտով Ոսկեհատ քույրիկը հայտնեց՝ իրենք պատրաստ են:

Կանանց ձեռքին երկաթե ժանգոտած խարծիկաթները տեսնելով՝ տղաներից մեկը հարցրեց.

– Ինչո՞ւ եք վերցրել դրանք:

– Զավակնե՛րս, ուրիշ զենք չունենք թուրք բարբարոսներից պաշտպանվելու, բացի այդ խարծիկաթներից,– պատասխանեց Ոսկեհատ քույրիկը և հրացանի խզակոթին նմանվող երկար կապոցը դրեց բրդե թելից գործված տոպրակի մեջ, ու կանայք դուրս եկան:

Եվ երբ ուզում էինք քարաժայռի ճեղքվածքով մեկական մագլցել դեպի վեր, մեր առջև կանգնեց թուրք ասկյարներից մեկը: Նա դանդաղորեն թիկունքից վայր բերեց փայլփլող հրացանը, բաց արեց նրա փակաղակը և մարտական փամփուշտն առաջ տալով՝ կրկին փակեց այն ու անմիջապես դեմ արեց բոլորից առաջ կանգնած Ոսկեհատ քույրիկի կրծքին: Թուրք զինվորին տեսնելով՝ կանայք ու երեխաները մի պահ վայնասուն բարձրացրին, բայց Ոսկեհատի ազդու հայացքից անմիջապես ձայները կտրեցին:

– Գիտե՞ք, որ ես հարյուրավոր գյավուրների գլուխներ եմ թռցրել և կարող եմ կոտորել նաև ձեզ բոլորիդ, եթե հակառակ գնաք իմ կամքին,– հայտարարեց նա՝ ուշադրությամբ զննելով քարայրի անցքի առաջ կանգնած հայ գեղջկուհիների դեմքերը:

Քարանձավի մթության մեջ թաքնված լինելով՝ Մնոն, իմ և Սարգսի ձեռքերից բռնելով, հետ քաշեց: Թուրք ասկյարից աննկատ մնալու նպատակով զգուշորեն հետ քաշվեցին նաև Հայկն ու Նիկոլը:

Թուրքական հետևակի զինվորական համազգեստից ու նրա ուսադիրներից երևում էր, որ նա շարքային հասարակ զինվոր չէ, բայց վերին աստիճանի կեղտոտ էր ու թափթփված: Գլխին դրված բաշլուղը ծռված էր մի կողմի վրա, արձակված էին նաև նրա՝ կեղտի մեջ կորած կիտելի ու շալվարի մոխրագույն կոճակները: Երեսն ամբողջովին մազակալված էր, իսկ մսի մեջ կորած փոքրիկ աչքերը բոլորովին չէին երևում: Այնպես որ թուրքական հետևակի համազգեստ հագած օնբաշին[52] նմանվում էր թոկից փախած իսկական մարդասպանի: Թուրք օնբաշին, հայ գեղջկուհիներին քուրդ կանանց տեղ դնելով, սկսեց կցկտուր խոսել քրդերեն:

– Ես հարյուր գյավուրի գլուխ եմ թռցրել և կարող եմ քրդերին նույնպես սպանել, եթե նրանք իսլամի ազգից չլինեին, – պարծենկոտությամբ հայտարարեց նա:

---

[52] օնբաշի *(թրք.)* – տասնապետ

Կեղտոտ օնբաշուց մի կերպ ազատվելու նպատակով Ոսկեհատ քույրիկը քրդերեն պատասխանեց, որ իրենց ամուսինները ռազմաճակատում կռվում են գյավուրների դեմ, ուստի ոչ մեկից վախ չունեն: Միաժամանակ նա պահանջեց օնբաշուց անմիջապես հեռանալ և իրենց ազատ թողնել:

Սակայն թուրք օնբաշուն, ըստ երևույթին, բոլորովին չէր հետաքրքրում, թե ով ում դեմ է կռվում: Նա բարձրացել էր քարափների մեջ այլ նպատակով, ուստի հրացանը պատրաստ, ձեռքը մեկնեց Ոսկեհատի թիկունքում թաքնված երիտասարդ կնոջն ու թևից բռնելով, որքան ուժ ուներ, դուրս քաշեց:

*
* *

Մայրանուշը նույնպես այրի էր, ինչպես և մյուսները: Նա շատ երիտասարդ էր, կլիներ մոտավորապես քսանչորս տարեկան: Նրա ամուսինը սպանվել էր ապրիլ ամսի ահավոր օրերին՝ թուրք ասկյարների հետ մենամարտի բռնվելիս: Հայրը բռնի ուղարկվել էր տաժանակիր աշխատանքի և այնտեղ էլ հարյուրավոր հայ մարդկանց հետ ոչնչացվել: Նրա երկու երիտասարդ եղբայրները պատերազմի առաջին իսկ օրից մեկնել էին ռազմաճակատ և այլևս չէին վերադարձել:

Մնալով որբ ու այրի՝ Մայրանուշն իր մյուս ընկերուհիների հետ գերվել էր Հոսթայան գյուղի հարուստ քուրդ աղայի կողմից: Որպես գեղեցիկ հայուհի՝ իր պատիվը փրկելու նպատակով գերվելու առաջին իսկ օրվանից զանազան միջոցներով նա այլանդակել էր սեփական դեմքը՝ ցանկանալով անշուք երևալ և չընկնել թուրք ոճրագործների ձեռքը: Սակայն այդ օրը, տարված լինելով գերությունից փրկվելու հույսերով, ժամանակ չէր ունեցել դեմքը ներկելու, և նրա գեղեցկությունը թուրք օնբաշու արյունոտ աչքերից չէր վրիպել:

Դեռ առավոտյան, երբ քուրդ բնակչությունը, գյուղից դուրս գալով, ցրվում էր մոտակա քարափների մեջ, հենց այդ պահին էլ թուրքական զորամասի տնտեսական մասը, որի հրամանատարն էր օնբաշին, տեղավորվում է նրանց խրճիթների պատերի տակ:

Տեսնելով դեպի քարաժայռը փախչող գեղեցիկ կանանց՝ գումարտակի հրամանատար օնբաշին աչքի տակով հետևել էր նրանց մինչև քարանձավի մեջ թաքնվելը, բայց քուրդ հեծյալներից քաշվելով, չէր ուզել օրը ցերեկով ներկաների ուշադրությունը գրավել իր վրա: Սակայն երեկոյան, երբ իր հրամանատարության ներքո գտնվող գումար-

տակը պատրաստվում էր առաջ շարժվելու, կեղտոտ օնբաշին որոշում է մինչև հեռանալը իր չար մտադրությունը իրագործել:

Անջատվելով իրեն ենթակա ջոկատից՝ նա ճանապարհից թեքվել էր դեպի գյուղից ոչ հեռու գտնվող բարձր քարաժայռը, որտեղ քարանձավում թաքնվել էին հայ կանայք, որոնց օրվա կեսին միացել էինք նաև մենք՝ վեց ընկերներով: Ոճրագործը գյուղից հեռացող կանանց և երեխաների հետքը չէր կորցրել: Նա ճշտությամբ գտել էր քարանձավի անցքը և այդ պահին հրացանը ձեռքին սպառնում էր բոլորի գլուխները թռցնել, որպեսզի իրականացնի իր չար մտադրությունը: Մայրանուշի թևից ամուր բռնելով՝ նա մահվան սպառնալիքով կնոջը մյուսներից անջատեց: Հյուծված, տանջահար կինը որքան ուժ ուներ սկսեց դիմադրել, բայց ոճրագործի ձեռքից պոկվել չկարողացավ: Ոսկեհատ քույրիկը համառորեն օգնում էր ընկերուհուն՝ օնբաշու ձեռքից ազատելու, սակայն ավազակի խզակոթի ուժեղ հարվածով հետ շպրտվեց: Թուրք օնբաշին գործում էր սուսուփուս, ըստ երևույթին, ենթադրում էր, թե քուրդ գյուղացիներից որևէ մեկը կարող է լսել աղմուկ և խափանել իր չարանենգ մտադրությունը:

Իհարկե, կանայք ու երեխաները նույնպես չէին համարձակվում բղավել, անգամ փորձ անել օգնություն կանչելու՝ քաջ գիտենալով, որ դա որևէ մեկից անհնարին էր ակնկալել: Ասենք, որ իրենք արդեն փախստական էին համարվում, ուստի հայտնաբերվելու դեպքում կմնային գերության մեջ, գուցե և կոտորվեին: Միաժամանակ հայրենասեր կանայք չէին ուզում մեր վեց ընկերների ոչնչացման պատճառ դառնալ: Օնբաշու դեմքն արդեն արյունոտվել էր Մայրանուշի սուր մագիլներից, բայց ավազակը, հաշվի չառնելով այդ, շարունակում էր քարշ տալ անօգնական կնոջը դեպի քարաբեկորների հակառակ կողմը:

Տեսնելով, որ ոճրագործը մտադրություն չունի խեղճ կնոջը բաց թողնելու, Մնոն մերկացրած դաշույնը ձեռքին քարայրի խորքից դուրս եկավ՝ օգնության հասնելու, բայց Ոսկեհատ քույրիկը ձեռքից բռնելով հետ հրեց նրան.

– Կա՛ց, ավելի վատ կլինի մեզ համար,– ասաց նա և իր շալակած խուրջինը վայր դրեց:

Օնբաշին Մայրանուշին քարայրից քիչ հեռացնելուց հետո վերջապես հյուծված կնոջ բերանը փակեց և մեջքի վրա գլորելով՝ սկսեց պատառոտել նրա վերնազգեստը: Հասկանալով թուրքի նողկալի մտադրությունը՝ Մայրանուշն ինչքան ուժ ուներ հրեց նրան, միաժամանակ ձեռքը գցելով օնբաշու կողքին դրված հրացանին: Սակայն ոճրագործը

գլխի ընկավ և անմիջապես խափանեց քարաբեկորների վրա թպրտացող Մայրանուշին ու պինդ գրկեց նրա իրանը: Մինչ թուրք օնբաշին կկարողանար իրագործել իր չար մտադրությունը, Ոսկեհատ քույրիկը հանեց իր տոպրակից սև լաթի մեջ փաթաթված այն զենքը, որը ես հրացանի խզակոթի էի նմանեցնում, ու վազելով կանգնեց Մայրանուշի հետ մենամարտի մեջ մտած օնբաշու գլխին: Նա շատ սառնասրտորեն հարմար դիրք ընդունեց և վրեժի ցասումով լցված՝ որքան ուժ ուներ իր մերկացրած սուրն իջեցրեց ոճրագործի քներակին: Դեն հրելով անկենդան դիակը՝ Ոսկեհատ քույրիկը, արյան մեջ թպրտացող Մայրանուշի ձեռքից բռնելով, վեր բարձրացրեց:

– Հիմա դու հարվածի՛ր, որ հավիտյան պառկած մնա լպիրշ ոճրագործը,– ասաց Ոսկեհատը՝ զզվանքով դուրս բերելով իր սուրը թշնամու ծոծրակից:

– Սատկել է արդեն, ուրագն ափսոս է կեղտոտել,– պատասխանեց Մայրանուշն ու Ոսկեհատի ձեռքից բռնելով՝ զայրույթով երկուսն էլ հեռացան գարշելի դիակից:

Ուրագի լայն բերանը սրբելով՝ Ոսկեհատ քույրիկն այդ նվիրական սուրն արագ կարգով փաթաթեց ու դրեց գետնին ընկած տոպրակի մեջ:

Ոսկեհատն այնքան խնամքով էր փաթաթում սառը զենքը, որ թվում էր, թե թանգարանից վերցված մի մեծ հուշանվեր լիներ այն: Իհարկե, ճանապարհին մենք մանրամասն իմացանք, որ դա Ոսկեհատ քույրիկի զոհված հոր՝ Սահակի այն ուրագն էր, որով դեռ 1896 թվականին՝ հայկական կոտորածների ժամանակ, նա տաշել էր երկու թուրք ոստիկանների գլուխները և աղջկա ու կնոջ հետ Նորդուզի լեռնային ճանապարհով գնացել Հայոց ձոր: Փախուստից վերադառնալով գյուղ՝ վարպետ Սահակն իր ուրագը՝ որպես մի թանկագին հուշանվեր, փաթաթելով կնոջ մետաքսյա շալի մեջ, պահ էր տվել իր սիրած դստերը՝ Ոսկեհատին:

*

* *

Քարայրից դուրս գալով՝ ամառային գիշերվա աստղերից թափանցող լույսի տակ, բոլորս միասին համարյա թե վազելով հետևում էինք Ոսկեհատ քույրիկին, որն առաջնորդում էր մեզ բոլորովին անծանոթ արահետներով դեպի Հայոց ձոր:

Մեկը մյուսին օգնելով, մերթընդմերթ մագլցելով՝ բարձրանում էինք դեպի վեր, մեկ էլ սահելով՝ իջնում էինք ցած՝ դեպի խոր անդունդ-

ներ՝ աշխատելով հետ չմնալ առջևից գնացող Ոսկեհատից: Հայ կանայք, իրենց երեխաների ձեռքից բռնած, ազատության հույսով տոգորված, գիշերվա այդ խավար մթության մեջ այնպես էին քայլում, կարծես թռչուններ լինեին: Գնում էինք մեկ մարդու պես, առանց որևէ խոսք փոխանակելու, այնպես որ, բացի քայլողների ուժեղ շնչառությունից ու ոտնաձայներից, այլ ծպտուն ոչ մեկից դուրս չէր գալիս: Մեր տղաների խումբը անմիջապես շարժվում էր Ոսկեհատ քույրիկի հետևից՝ ոչ մի քայլ հետ չմնալով: Միաժամանակ աշխատում էինք ճշտորեն կողմնորոշվել, թե որտեղ ենք գտնվում ինքներս այդ սարսափելի ժամին: Գիշերվա կեսն անցել էր, բայց մենք դեռևս Նորդուզի լեռնաշխարհից դուրս չէինք եկել: Մեկ-մեկ հանգիստ առնելով՝ կրկին հետևում էինք մեզ առաջնորդող Ոսկեհատ քույրիկին: Վերջապես լուսադեմին շրջվեցինք այն մեծ լեռան հետևը, որտեղ մեր խումբը երկու օր առաջ ռուսական հեծյալ պահակներից աննկատ բարձրացել էր դրա գագաթը: Ոսկեհատ քույրիկը, երեխաների ձեռքից բռնած, անընդհատ շտապեցնում էր իր համագյուղացիներին.

– Շտապեցե՛ք, քանի լույսը չի բացվել, որ հասնենք մոտակա անտառը,– կիսաձայն կանչում էր նա՝ ավելի արագացնելով իր քայլերը:

Գերությունից ազատագրված այդ կինն այնպես էր քայլում, կարծես թե հոգնածությունն ու գիշերվա խավարը ոչ մի նշանակություն չունեին նրա համար:

*
* *

Նորդուզի բարձրադիր լեռների հովիվների ու խիզախ հայ մարդկանց շնորհիվ դեռ վաղուց բաց էին այդ վայրերի նեղ արահետները:

Ոսկեհատ քույրիկին քաջ ծանոթ էր այդ արահետը, որով մեր խառնիճաղանջ, բայց համարձակ խումբը գնալով շրջանցում էր օսմանցիների առաջապահ զորամասի կիսաօղակը և շարժվում դեպի պատմական Հայոց ձոր՝ յուրայիններին հասնելու: Մեկ անգամ չէր, որ Ոսկեհատ քույրիկն անցնում էր այդ զարհուրելի ճանապարհով դեպի Հայոց ձոր:

Առաջին անգամ՝ տասներկու տարեկան հասակում, նա անցել էր այդ արահետով իր ատաղձագործ հոր՝ Սահակի և մոր՝ Ծաղկանուշի հետ, երբ արյունարբու Աբդուլ Համիդի մարդասպանները 1896 թվականին հանկարծակի սկսեցին հայ ժողովրդին անխնա կոտորել: Կարճատև հանգստի ժամանակ Ոսկեհատ քույրիկը խոր զայրույթով էր պատմում այն ամենի մասին, ինչ տեսել ու լսել էր տասնինը տարի առաջ:

Մի մութ երեկո համիդեական մարդասպանները հանկարծակիի բերելով հարձակվել էին հայ ազգաբնակչության վրա ու անխնա կոտորել նրանց: Վարպետ Սահակը կնոջ ու դստեր պատիվը փրկելու նպատակով ուրիշ շատ-շատերի նման համառորեն ինքնապաշտպանության էր դիմել: Նա նժարի պես սուր ոտնաուրագով գետին էր տապալել թուրք երկու զավթիչների ու գլուխները փայտի պես տաշել:

Վերցնելով կնոջն ու աղջկան՝ Սահակը գիշերվա խավար մթության մեջ լեռների այդ նույն արահետով հեռացել էր դեպի Հայոց ձոր՝ իր վաղեմի բարեկամներից մեկի մոտ, որի անվտանգության պայմանները անհամեմատ ավելի հուսալի էին եղել, քան թե իրենը: 1896 թվականի հայ բնակչության կոտորածը համեմատաբար կարճ էր տևել: Սահակը կնոջ հետ վերադարձել էր թուրքերի կողմից ամայի դարձած հայրենի տուն, իսկ Ոսկեհատին ժամանակավորապես թողել էր հայոցձորցի իր բարեկամների մոտ: Ապրելով Հայոց ձորում՝ Ոսկեհատն իր գեղեցկությամբ ու շնորհքով շուտով հայտնի էր դարձել Անգղ գյուղի հայ տղաների շրջանում և դեռ տասնվեց տարեկան հասակը չլրացած՝ ամուսնացել էր նույն գյուղի մի երիտասարդի՝ Սամվելի հետ: Այդ օրվանից մինչև 1914 թվականի ահավոր պատերազմի սկիզբը Ոսկեհատը բազմաթիվ անգամներ տրորելով անցել էր նույն արահետով, որտեղից այդ գիշեր հևալով շարժվում էինք մենք ինքներս:

Ոսկեհատ քույրիկը վերին աստիճանի սառնասիրտ էր, օժտված էր լեռնականին հատուկ մեծ ուժով ու ճարպկությամբ: Նա մերթ գրկում էր իր փոքր երեխային, մերթ շալակում մեծին, բայց բոլորից էլ արագ էր քայլում՝ միաժամանակ օգնելով մյուսներին: Նա փորձված հետախույզի նման ճշգրտորեն կողմնորոշում էր ոչ միայն մեր փոքրիկ քարավանի շարժման ուղղությունն ու տեղը, այլև գիտեր, թե այդ ժամին որտեղ կարող են լինել թուրքական զորամասի առաջապահ ջոկատները:

Նա գնում էր շատ արագ, բայց զգուշորեն հետևում էր բոլորին, որպեսզի մեզնից որևէ մեկը վտանգավոր տեղերից վայր չընկներ: Ոսկեհատից հետ չէին մնում նաև մյուս հայ կանայք, որոնք մայրական անհուն սիրով օգնում էին հետ մնացողներին այդ սարսափելի նեղ արահետներով քարաժայռերից անվնաս դուրս գալու համար:

*

* *

Սարալանջի խիտ անտառ հասանք լուսաբացին, բայց մեր ճանապարհը շարունակել չկարողացանք երկու հանդիպակաց սարերի կատարներից մեզ վրա թափվող գնդակների պատճառով:

– Թաքնվեցե՛ք, զավակնե՛րս, ընկանք կրակների մեջ,– զգուշացրեց Ոսկեհատ քույրիկն ու երեխաներին ամուր սեղմեց իր կրծքին, ասես որևէ մեկը խլում էր իրենից երեք զավակներին:

Իսկապես, մենք կարող էինք կորցնել ոչ միայն երեխաներին, գուցե և կզոհվեինք բոլորս, եթե անհրաժեշտ պաշտպանողական միջոցներ ձեռք չառնեինք: Սարալանջին սփռված անտառը շատ խիտ էր, այնպես որ կրակողները մեր տեղը հեշտությամբ որոշել չէին կարող: Այնուամենայնիվ թաքնվելու որևէ հարմար տեղ չկար, և մենք կարող էինք շատ շուտով պատահական գնդակների զոհ դառնալ: Թե ովքեր և որտեղից էին կրակում, դեռևս մեզ հայտնի չէր: Մեզնից ոչ մեկը հնարավորություն չուներ դիտելու մեր շրջապատը և ճշտորեն իմանալու կրակողների տեղն ու նրանց դասավորությունը: Այնպես որ, բացի բարձր ծառերի խիտ ճյուղերի փարթամ տերևներից, ուրիշ ոչինչ տեսնել հնարավոր չէր:

Սարալանջից ոչ հեռու՝ հարթավայրում, սփռված էր նաև այգիների մեջ կորած մի փոքրիկ գյուղ. վերջինս երեք կողմից շրջապատված էր կանաչապատ լեռներով, իսկ արևմտյան կողմում ընկած էր այն անտառը, որտեղ պատսպարվել էինք մենք:

Հրացանային համազարկներն աստիճանաբար ուժեղանում էին ոչ միայն դիմացի սարից, այլև հակառակ կողմից, բայց թե ովքեր էին կրակողները, անհրաժեշտ էր հետախուզել և իմանալ: Այդ պահին սարալանջի անտառում երկար մնալը խիստ վտանգավոր էր: Մենք չէինք կարող պաշտպանվել ոչ միայն տեղատարափ գնդակներից, այլև թշնամու հանկարծակի ներխուժումից, ուստի Ոսկեհատ քույրիկն առաջարկեց մեկական դուրս գալ անտառից և մտնել դիմացի քարափների մեջ. գուցե այնտեղ հնարավոր լիներ ցերեկը մի կերպ պատսպարվել:

– Առանց քարափները հետախուզելու անտառից դուրս գալը վտանգավոր կլինի,– գիտուն մարդու պես զգուշացրեց Մնոն՝ միաժամանակ հայտնելով իր պատրաստակամությունը երկուսով այդ ծրագիրը իրականացնելու:

– Լավ կլինի, միայն թե զգույշ, կրակի տակ չընկնեք,– ասաց Ոսկեհատը և կարգադրեց կանանց ու երեխաներին թաքնվել հաստ ծառերի բների տակ մինչև մեր վերադարձը:

Չնայած գիշերվա երկար ճանապարհորդությունից խիստ հոգնել էինք, բայց և այնպես, մեր սովորության համաձայն, երեսի վրա մագլցելով՝ դուրս եկանք անտառից ու խիտ մոլախոտերի միջով մի քանի րոպեից հասանք ձորակի հակառակ կողմը՝ մտնելով քարափների մեջ: Անտառի խորքից դուրս գալով բաց տարածություն՝ Մնոն իր բազեի աչ-

քերով պարզ նշմարել էր բլուրների կատարներին խրամատավորված զինվորներին, որոնք տեղատարափ կրակ էին թափում անտառի և նրանից դեպի արևմուտք շարժվող սև կետերի վրա: Գալով քարափների կողմ՝ կես ժամից ավելի երկուսով դիտում էինք մեզ շրջապատող բլուրները՝ նպատակ ունենալով ճշտելու, թե որտեղից և ովքեր են կրակողները:

Շատ ժամանակ չանցավ, երբ պարզ երևացին երկու հակադիր, մեկը մյուսի հետ մենամարտող ուժերը: Անտառից վերև՝ սարի գագաթին, երևում էին ռուսական համազգեստով զինվորներ, իսկ գյուղի արևմտյան կողմի թամբաձև սարալանջի ստորոտներում խրամատավորվել էին օսմանյան բանակի զորամասերը: Դժբախտաբար անտառն իր շրջապատով, այդ թվում նաև ձորակի քարափները, ամբողջապես գտնվում էին երկու հակադիր ուժերի կրակի տակ: Շարունակել այդտեղ մնալը խիստ վտանգավոր էր, ուստի ստիպված էինք շտապել մեր ընկերներին կրակի տակից դուրս բերել և տեղափոխել որևէ ապահով տեղ, հակառակ դեպքում նրանք բոլորն էլ կկոտորվեին:

Շարունակելով հետախուզումը՝ վերջապես մեզ հաջողվեց մի հարմար վայր գտնել, որն ըստ երևույթին կռվողների համար մեռյալ տարածություն էր համարվում: Այնտեղ կային նաև բնական շատ փոսեր, որոնք գարնան ուժեղ հեղեղների հետևանքով առաջացած հեղեղատներ էին, որոնց մեջ ոչ միայն կարելի էր թաքնվել, այլև շարժվել դեպի հովիտ, որտեղ գտնվում էր այգիների մեջ կորած գյուղը: Սարալանջի նեղ հեղեղատները ծածկված էին բավական բարձր ու խիտ մոլախոտերով, որոնք հովիվների հոտի բացակայության պատճառով դեռ չէին տրորվել:

– Թաքնվելու համար այս խրամատները քարանձավից էլ լավ են և ապահով,– ասաց Մնոն ու ծանր հոգնածությունից մի պահ մեջքի վրա փռվեց հեղեղաջրերից դեռ չչորացած խորը փոսի մեջ:

– Եթե թշնամին նկատի, ապա ոչ մի խորխորատ մեզ փրկել չի կարող,– պատասխանեցի ես՝ օրինակ բերելով քեռի Պտուտանի հետ պատահած տխուր պատմությունը:

*
* *

Ապրիլ ամսվա ահավոր օրերին, երբ թուրք մարդասպանները, արյան հոտ առնելով, հետապնդում էին շրջապատումից դուրս եկած հայ տղամարդկանց, քեռի Պտուտանն ավելի քան կես ամիս թաքնվել էր

Կավասարի հարավային լանջի հեղեղված խորխորատներում ու մնացել էր անվնաս: Սակայն նա սովի ու ծարավի դեմ երկար մաքառել չէր կարողացել: Սնունդ հայթայթելու նպատակով Պտուտանը դուրս էր եկել՝ գետնապտուղ հավաքելու, բայց հենց այդ պահին էլ հարձակման էր ենթարկվել մի խումբ թուրք ոստիկանների կողմից: Երկու ժամվա համառ պայքարից հետո քեռի Պտուտանը սպանվել էր անհավասար մարտում:

– Սովամահության վտանգը չլիներ, նա խորխորատից դուրս չէր գա ու կմնար անվնաս,– ասաց Մնոն:

– Այնուամենայնիվ քեռի Պտուտանը սովի մատնված լինելով հանդերձ կարողացավ սպանել թուրք երեք ոստիկանների ու պատվով մեռավ, ինչպես Բադալը և մյուսները, իսկ մենք ի՞նչ կարող ենք անել այս գերեզմանանման փոսերում առանց զենքի, հացի ու ջրի,– պատասխանեցի ընկերոջս, որից երեք տարով ավելի փոքր էի:

– Մտածելու հարկ չկա, ցերեկը կհանգստանանք, իսկ մութն ընկնելուն պես կհեռանանք այստեղից,– ասաց Մնոն և միաժամանակ առաջարկեց վերադառնալ անտառ՝ կանանց ու երեխաներին կրակի տակից դուրս բերելու:

Լսելով ընկերոջս՝ մենք միևնույն տեղանքով վերադարձանք մերոնց մոտ, որոնք սրտատրոփ սպասում էին մեր երկուսի վերադարձին:

*
* *

Անտառից մինչև սարալանջի խորխորատները տասնչորս հոգու տեղափոխումը ավելի քան երեք ժամ տևեց, բայց դա կատարվեց կրակողներից բոլորովին աննկատ ու անվնաս:

Միայն տեղափոխվելու պահին՝ քարքարոտ ձորակից անցնելու ժամանակ, Ոսկեհատ քույրիկի տղան՝ Միհրանը, սահելով ընկավ քարի վրա ու ձախ ազդրը վնասելով՝ ուշաթափվեց:

Հասնելով սարալանջ՝ կանայք իրենց հետ բերված խարձիկաթներով սկսեցին հավասարեցնել խորխորատի խորդուբորդ տեղերը, որպեսզի հնարավոր լիներ ազատ կերպով տեղավորվել դրա մեջ: Բնական խոր թաքստոցներ պատրաստելուց հետո բոլորս սաստիկ հոգնածությունից անմիջապես պառկեցինք դեռ խոնավությունից չչորացած փափուկ խոտի վրա և քուն մտանք՝ հաշվի չառնելով երկու հակադիր ուժերի կողմերից շարունակվող կրակոցները: Արթուն էին միայն Ոսկե-

հատ քույրիկն ու Մնոն, որոնք շատ մտահոգված դիտում էին երկու հանդիպակաց սարերի ստորոտում դիրքավորված ռուսական և թուրքական կռվող զորքերի շարժումները:

Մեր թաքստոցները շատ խորն էին ու հարմար. նրանք նման էին իսկական փորված խրամատների: Այնպես որ եթե մեզնից որևէ մեկը պատահականորեն դուրս չգար իր թաքնված տեղից, ապա դժվար թե սարալանջերում խրամատավորված կողմերից որևէ մեկը մեզ նկատեր:

*
* *

Քնածներն արթնացան, երբ ամառվա պայծառ արևը դանդաղորեն թեքվում էր դեպի արևմուտք:

Ոսկեհատ քույրիկը մեր շրջապատը երկար դիտելուց հոգնելով՝ պառկեց երկու երեխաների կողքին՝ քնելու, իսկ նրան փոխարինեց Սաթենիկը, որը խիտ մոլախոտերի արանքից արդեն սկսել էր կատարել դիտողի իր պարտականությունները:

Ամառվա հեղձուցիչ տոթից այլևս հնարավոր չէր երկար ժամանակ պառկած մնալ խորխորատների մեջ: Տղաներից շատերը, խախտելով կարգադրությունը, սկսել էին ներսուդուրս անել՝ վտանգելով իրենց կյանքը թշնամու պատահական գնդակներից:

Չնայած օրվա զգալի մասն անցել էր, բայց մեզնից ոչ մեկը ոչինչ չէր կերել՝ վախենալով սարսափելի ծարավից: Բոլորիս կոկորդները վաղուց չորացել էին, իսկ Ոսկեհատ քույրիկի և Սաթենիկի երեխաները, չդիմանալով ծարավին, տրտնջալով սկսել էին արտասվել: Չնայած Մնոն վաղուց էր մտահոգվել խմելու ջուր ճարելու համար, բայց նրա կողմից կատարված հետազոտությունը ոչ մի արդյունք չէր տվել, այնպես որ անտառից սկսած մինչև խորխորատները եղած տարածության վրա ոչ մի կաթիլ ջրի հետք անգամ չէր գտնվել:

Արևն արդեն մայր էր մտնում, իսկ այնտեղից հեռանալու մասին դեռևս ոչինչ չէինք որոշել Միհրանի անշարժ լինելու պատճառով: Խեղճ տղայի ձախ ազդրը քերծվելու պատճառով բավականին ուռել էր, համարյա թե տեղից շարժվել չէր կարող:

Տեսնելով Միհրանի ծանր վիճակը՝ հեռանալու մասին ո՛չ Մնոն էր խոսում և ո՛չ էլ Ոսկեհատ քույրիկը. յուրաքանչյուրը սպասում էր, թե ով առաջինը կխոսի:

Վիրավորի ոտքը կապված էր պատահական լաթերով. ջուր անգամ չկար, որպեսզի սառը թրջոց դրվեր նրա ցավերը մեղմացնելու համար:

Երբ Մնոն լսեց, որ Միհրանի ոտքի համար ջուր է հարկավոր, մի պահ տեղից վեր թռավ:

– Ջուր կբերենք,– առաջարկեց նա՝ դիմելով Ոսկեհատ քույրիկին:

– Որտեղի՞ց կբերեք, զավակնե՛րս:

– Գյուղից:

– Գյուղ երթալը վտանգավոր է, զավա՛կս:

– Կփորձենք, գուցե հաջողվի,– պատասխանեց Մնոն:

Ձրի անուն լսելով՝ կարծես թե կոկորդներս ավելի չորացավ, խոսել անգամ չէինք կարող, իսկ հաց ուտելու մասին ընդհանրապես խոսակցություն չեղավ:

*

* *

Ոսկեհատ քույրիկի տված խորհուրդներից ոգևորված՝ մենք երեք ընկերներով մթնադեմին ճանապարհ ընկանք դեպի գյուղ: Գնում էինք վերին աստիճանի զգույշ՝ օգտագործելով մեր ճանապարհին ընկած յուրաքանչյուր քար, փոս և թուփ թշնամու կրակի տակ չընկնելու համար: Այգիների խիտ ծառերի արանքներով վերջապես մեզ հաջողվեց մոտենալ առաջին իսկ հանդիպած խրճիթի բաց դռանը: Հայկին դրսում թողնելով՝ մենք երկուսով զգուշորեն ներս մտանք: Խրճիթի ներսում խավար էր. մի պահ կանգ առանք՝ սրելով մեր լսողությունը:

Վերջապես լսվեց շրխկոց. դա Մնոյի ձեռքում բոցավառվող լուցկու շփման ձայնն էր, որը հանկարծակիի բերեց ինձ:

Վառելով մեզ հետ վերցրած չոր ծղոտի կապոցներից մեկը՝ մենք երկուսով միաժամանակ տակնուվրա արեցինք խրճիթում թափթփված ողջ կահկարասին՝ ջուր տանելու համար որևէ աման գտնելու, բայց դժբախտաբար, բացի ծանր պղինձներից ու փայտյա տաշտակներից, ուրիշ ոչինչ չգտնվեց:

Ժամանակը թանկ էր, ստիպված էինք շտապ դուրս գալ ու մտնել հաջորդ խրճիթ:

Երեք-չորս խրճիթ ստուգելուց հետո վերջապես մեզ հաջողվեց գտնել կավից պատրաստված երկու դույլ: Դուրս գալով մութ խրճիթներից, մենք անմիջապես ուղևորվեցինք գյուղի հակառակ կողմը, որտեղ, ըստ Ոսկեհատի տված տեղեկության, պետք է մեծ առու լիներ: Իրոք, երբ քիչ առաջ շարժվեցինք, արդեն լսվում էր հոսող ջրի խշշոց: Էլի մի քանի քայլ, և ահա մենք գտնվում ենք փոքրիկ, բայց արագավազ գետակի ափին: Հայկն ու Մնոն դույլերը վայր դնելուն պես միանգամից խորասուզվեցին ջրի մեջ՝ անգամ չհանելով իրենց կեղտոտված շորերը:

– Դե՛, խմե՛ք ինչքան կարող եք,– առաջարկեց Մնոն և կրկին սուզվեց ջրի տակ:

Այդ մութ ու վտանգավոր ժամին մենք այնքան տարվեցինք լողալով, որ թվում էր, թե գտնվում էինք հայրենի գյուղի Կապուտակ լճի կանաչ ափերում: Սթափվեցինք միայն այն ժամանակ, երբ գյուղից ոչ հեռու լսվեցին ձիու խրխինջ և սմբակների դոփյուն:

– Վե՛ր կացեք, թուրքերը մեզ կբռնեն,– զգուշացրեց Մնոն և անմիջապես վերցրեց ջրով լի դույլերից մեկը ու մեկ ակնթարթում դուրս եկավ գետից:

Երկրորդ դույլը վերցնելով՝ ես ու Հայկը հետևեցինք նրան:

Գյուղից դուրս գալով՝ մենք միևնույն ճանապարհով համարյա թե ուշ գիշերով հասանք մերոնց մոտ, որոնք անհամբեր սպասում էին մեր վերադարձին: Կանայք ու տղաները շատ ուրախացան, երբ վայր դրեցինք ջրով լի դույլերը:

Մնոյի վերցրած դույլը համարյա կիսատվել էր փոքրիկ անցք լինելու պատճառով: Ծարավից պապանձված կանայք ու երեխաները, հերթով մեկը մյուսին փոխանցելով, միանգամից դատարկեցին դույլը և փոսից դեն շպրտեցին:

Երկրորդ դույլը նույնպես դատարկվեց, բայց Մայրանուշը կարողացավ տղաների ձեռքից վերցնել ու նրա մեջ մնացած ջուրը պահել՝ վիրավորված Միհրանի ոտքի թրջոցը նորացնելու համար: Ձրի գնացողներիս հաջող վերադարձը շատ ուրախացրեց տղաներին ու կանանց: Ուստի այդ նույն պահին նրանք հաստատ համոզված էին, որ մի քանի րոպեից հետո կարող ենք անվնաս դուրս գալ ռուսների և թուրքերի շրջապատման օղակից: Դժբախտաբար մեր հույսերն ի չիք դարձան վիրավոր Միհրանի անշարժ լինելու պատճառով:

– Ձավակնե՛րս, Միհրանին այդ ծանր վիճակով լեռնալանջով դեպի Հովածոր տանել չենք կարող, խեղճ տղաս ճամփին կմնա,– ասաց Ոսկեհատ քույրիկը՝ խնդրելով տղաներին գնալներս հետաձգել հաջորդ գիշերվան:

Հասկանալի էր, որ գերությունից փրկված հայրենակիցներիս մենակ թողնել չէինք կարող, ուստի ստիպված էինք համաձայնվելու Ոսկեհատի առաջարկին, մինչև Միհրանի վերքի լավանալը: Մեր ուտելիքի պաշարը վերջանալու վրա էր, իսկ կանայք գյուղից հեռանալու պահին իրենց հետ ոչ մի բան չէին վերցրել: Նշանակում էր, որ հաջորդ օրը տասնհինգ հոգու ուտելիքի պաշարը վերջանալու էր հենց առավոտյան

նախաճաշին, իսկ հետագա երկու օրերին փաստորեն մնալու էինք քաղցած:

*
* *

Ռուս–թուրքական զորքերի միջև տեղի ունեցած մարտերը սկսել էին դանդաղել, միայն շատ հեռվից, մերթ ընդ մերթ լսվում էին հատուկենտ կրակոցներ, որոնք չէին կարող խանգարել տղաների խոր քունը: Մենք բոլորս էլ պառկել էինք կանաչների վրա կողք կողքի, ինչպես մեկ մորից ծնված հարազատ զավակներ: Արթուն էր միայն Ոսկեհատ քույրիկը, որը խնամում էր վիրավոր որդուն՝ միաժամանակ հսկելով շրջապատը: Աղոթարանը բացվելու վրա էր, հենց այդ ժամանակ էլ խոր քնի մեջ ականջիս հասավ վիրավոր Միհրանի ձայնը. վերջինս իր մայրիկին էր կանչում, ըստ երևույթին, ծարավ էր և խնդրում էր, որ ջուր տան իրեն: Մայրը գորովանքով մոտեցավ տղային: Սկզբում խմելու ջուր տվեց, հետո թրջոց փոխելու նպատակով բաց արեց նրա ազդրի վերքը և հանկարծ ուրախությունից գրկեց Միհրանին. ուռուցքն ամբողջովին իջել էր, տղան վեր կացավ և, մի քանի քայլ անելով՝ ուրախությունից գրկեց մորը:

– Լավացել է, մայրի՛կ, հիմա հեռանանք այստեղից, քանի լույսը չի բացվել,– ասաց տղան՝ ուրախությունից արթնացնելով իր կողքին պառկած քույրիկին:

– Ուշ է, զավա՛կս, լույսով լեռնալանջն անցնել չենք կարող, թուրքերը մեզ կնկատեն, գուցե և վատ լինի մեզ համար,– պատասխանեց մայրը:

– Ջուր ունե՞նք, մայրի՛կ,– հարցրեց տղան:

– Հազիվ մեկ խմելու լինի:

– Առավոտյան ինքս կգնամ ջրի,– առաջարկեց տղան:

– Ո՛չ, դու չես կարող, ես կերթամ,– պատասխանեց մայրը:

Լսելով մոր և որդու խոսակցությունը՝ Մնոն ձեռքով հրեց ինձ:

– Վե՛ր կաց, ուշ է արդեն, գնում ենք ջուր բերելու,– առաջարկեց նա՝ արթնացնելով նաև Արամին ու Հայկին:

Գիշերվա բյուրավոր աստղերն աստիճանաբար անհետանում էին երկնակամարում՝ իրենց տեղը զիջելով հորիզոնից դուրս եկած լույսի նուրբ շողերին: Մնոն տեղից արդեն վեր էր կացել: Նա կրկին առաջարկեց ինձ ու Հայկին պատրաստվել գյուղ մեկնելու համար:

– Մի՛ գնացեք, զավակնե՛րս, ուշ է արդեն, վերադառնալ չեք կարող,– զգուշացրեց Ոսկեհատ քույրիկը:

– Ճանապարհներին ծանոթ ենք, Ոսկեհա՛տ քույրիկ, այս անգամ ավելի շուտ կվերադառնանք,– պատասխանեցի ես:

– Ո՛չ, դուք մնացեք, ես կերթամ,– առաջարկեց նա, ու ինքն էլ նստած տեղից վեր կացավ:

– Դա անկարելի է, մորաքո՛ւյր,– առարկեց Մնոն ու գետնին դրված դատարկ դույլը վերցրեց:

Սարգսին ու Նիկոլին կանանց մոտ թողնելով՝ մենք չորսով միևնույն ճանապարհով նորից գնացինք գյուղ՝ այս անգամ ավելի արագ շրջեցինք խրճիթներում, քան նախորդ երեկո, բայց ամենուր հանդիպեցինք կոտրված դույլերի: Չգտնելով ջուր բերելու հարմար ամաններ՝ ստիպված էինք վերցնել չորս կանթ ունեցող մի մեծ պղինձ, որը երկուսով հազիվ կարողացանք տեղից շարժել: Այնուամենայնիվ, վերցնելով ժանգոտած պղինձը՝ մենք վազեցինք դեպի գետակը: Առաջին հերթին լցրինք կավե դույլը, ապա կեսի չափով էլ չորսկանթանի մեծ պղինձը, որից հետո սկսեցինք խորասուզվել լուսաբացի տաք ջրի մեջ:

– Բավակա՛ն է,– զգուշացրեց Մնոն ու խոր ջրից դուրս եկավ:

Նրան հետևեցինք նաև մենք ու մոտեցանք չորսկանթանի ծանր պղնձին, բայց դժբախտաբար տեղից շարժել չկարողացանք: Նա ոչ միայն չափից դուրս ծանր էր, այլև միանգամայն անհարմար տանելու համար:

Երկու հոգով այն վերցնելն անհնարին էր, իսկ չորսի դեպքում մենք կարող էինք օրը ցերեկով մեզ մատնել թուրքերին: Այդ պատճառով ստիպված էինք չորսկանթանի ժանգոտված պղինձը թողնել գետի մեջ ու կրկին մտնել խրճիթներ դույլեր գտնելու համար:

Վերջապես մեզ հաջողվեց գտնել մի չորացած տկճոր. ըստ երևույթին դա գյուղացիների կողմից ամառվա շրջանում օգտագործվել էր սարից կաթ տեղափոխելու համար:

Լցված դույլը թողնելով Հայկի մոտ՝ մենք երեքով վազեցինք դեպի գետ: Դժբախտաբար մեծ դժվարությամբ հաջողվեց միայն կիսով չափ լցնել տկճորը՝ նրա տարբեր մասերի չոր լինելու պատճառով: Այնուամենայնիվ նրա տարողությունն ավելի շատ էր, քան դույլինը, այնպես որ երկուսի մեջ եղած ջուրը լիուլի կարող էր բավարարել մեզ բոլորիս, մինչև մեր հեռանալը խորխորատներից:

Ամառվա պայծառ արևը հենց նոր էր դուրս եկել հորիզոնից՝ իր վառվռուն ճառագայթները սփռելով գյուղը շրջապատող փարթամ այգիների վրա, իսկ մենք գետակի պաղ ջրից զովացել էինք, ոտներս թեթևացել էին, և եթե որևէ անակնկալ դեպք չպատահեր, ապա կես ժա-

մից հետո կհասնեինք մերոնց, որոնք սրտատրոփ սպասում էին մեր վերադարձին:

– Շուտ-շուտ դո՛ւրս եկեք,– շտապեցնում էր Մնոն՝ վերցնելով ջրով լցված տկճորը:

Հեռանալով գետակից՝ ուրախ-ուրախ քայլում էինք դեպի խորխորատները, սակայն դեռ գյուղի կենտրոնական մաս չհասած՝ շատ հեռվից լսվեցին հրացանային համազարկեր: Իհարկե, այդ կրակոցները մեզ ծանոթ էին. գիշերվա ընդմիջումից հետո ռուսական ու թուրքական կռվող զորքերը կրկին սկսել էին իրենց մարտական գործողությունները: Ուշադրություն չդարձնելով երկու հակառակորդների կրակին՝ մենք, մեկս մյուսից բաժանվելով, փորձեցինք կրակողներից աննկատ այգիների միջով շարժվել դեպի խորխորատները, սակայն դեռ գյուղի ծայրամասի խրճիթին չհասած՝ լսվեցին հրացանի փակաղակների չխկչխկոց ու թուրք ասկյարների թասլիմ, թասլիմ[53] բառերը:

Հանկարծակիի գալով Մնոն, մեկ ակնթարթում իր շալակած տկճորը վայր գցելով, հետ փախավ դեպի մոտակա խրճիթ, իսկ մենք վազելով հետևեցինք նրան: Բարեբախտաբար ծառապտուղներով լի այգու ցանկապատերը մեզ պաշտպանեցին ասկյարների կողմից արձակված գնդակներից: Մինչ թուրք ասկյարներն այգու միջով կանցնեին ցանկապատի հակառակ կողմը, մենք արդեն գտնվում էինք գյուղի կենտրոնի մեծ խրճիթներից մեկում: Հրացանի կրակոցները շատ մոտիկից էին լսվում, բայց մեզ հետապնդող թուրք ասկյարները դեռ չէին երևում. ըստ երևույթին նրանք գյուղի ծայրամասից սանրելով իջնում էին գետի կողմը, որտեղ գտնվում էր այն տունը, որի մեջ թաքնվել էինք: Կասկած չկար, որ նրանք մեզ էին որոնում և անպայման կհայտնաբերեին, քանի որ խրճիթի ներսում թաքնվելու որևէ հարմարություն չկար: Քիչ սպասելուց հետո ես խրճիթից դուրս եկա՝ իմանալու մեզ հետապնդող ասկյարների տեղը և նրանց առաջշարժման ուղղությունը:

Փոքրիկ պարտեզի ցանկապատից մանրազնին դիտելով խրճիթի շրջակայքը՝ որևէ մեկին չտեսա. ինձ թվում էր, թե նրանք գյուղից հեռացել էին: Այդ մտքով էլ ուրախ-ուրախ վերադարձա ընկերներիս մոտ: Չէր անցել մի քանի րոպե, երբ հանկարծ ճռինչով բացվեց խրճիթի դուռն ու ներս մտան մեզ հետապնդող ասկյարներից երկուսը: Տեսնելով մեր չորսին՝ օսմանցի զինվորներն իրենց լայնաշեղբ սվիները դեմ տվեցին Մնոյի ու Հայկի կրծքին:

---

[53] թասլիմ (*թրք.*, *բրբ.*) – հանձնվի՛ր

– Թասլիմ,– բղավեց նրանցից մեկը ու հրացանի խզակոթով սկզբում հարվածեց Մնոյին և ապա չորսիս էլ ծեծելով խրճիթից դուրս տարան:

Հրացանային մի քանի կրակոցներից հետո գյուղի կենտրոնում հավաքվեցին ութից տասը ասկյարներ ու մեզ առան իրենց սեղմ օղակի մեջ:

– Որտեղացի՞ եք, գյավուրի՛ զավակներ,– հարցրեց նրանցից մեկը, որն ըստ երևույթին աստիճանով բոլորից մեծն էր:

– Քուրդ ենք, մոտիկ գյուղից,- ձեռքով ցույց տվեցի այն բարձր սարը, որի ստորոտներում տեղի էր ունենում ռուսների և թուրքերի կռիվը:

– Ինչո՞ւ եք այստեղ եկել,– կոտրատված քրդերենով հարցրեց նա՝ ուղիղ նայելով իմ աչքերին:

– Գյավուրներից փախել ենք լեռները, բայց երեկ, երբ իմացանք, որ իսլամի զորքերը եկել են այստեղ, մեր ծնողներից թաքուն եկել ենք ձեզ տեսության,– պատասխանեցի ես:

– Որտե՞ղ են ձեր ծնողները:

– Գտնվում են Թափասարի հետևում,– անմիջապես հորինեցի ես՝ ցույց տալով ութ կիլոմետր հեռավորության վրա գտնվող բարձր լեռները:

Նրանք նորից հարցեր տվեցին, բայց մեր պատասխաններից ոչինչ չհասկանալով՝ մեզ տարան գետի հակառակ կողմի խրճիթներից մեկի դռան մոտ:

Ասկյարներից մեկը մտավ խրճիթ և շուտով նրա ուղեկցությամբ դուրս եկավ մի հասակավոր քուրդ գյուղացի: Մոտենալով մեզ՝ քուրդը հարցրեց.

– Քիդարե հատիա[54]:

– Թափասարի հետևի գյուղից,– պատասխանեցի ես՝ նայելով դեպի այն լեռները, որոնք քիչ առաջ ցույց էի տվել ասկյարներին:

– Ո՞ւմ տղան ես,– հարցրեց քուրդը՝ հերթով նայելով մեր չորսին:

– Մամոյի թոռն եմ, Ալիհամզոյի տղան,– բնազդաբար դուրս թռավ բերանիցս:

– Որտե՞ղ է գնացել քո հայրը:

– Գնացել է Նորդուզ՝ թալան բերելու…

– Իսկ դուք ո՞ւմ ցեղից եք,– հարցրեց քուրդը՝ դիմելով իմ ընկերներին:

---

[54] Որտեղի՞ց եք եկել – *քրդ.*

Բարի դեմքով քուրդը Մնոյի ու Հայկի պատասխաններից հասկացավ, որ մենք ստում ենք, բայց չուզեց մեզ մատնել թուրք զինվորներին:

– Սրանցից մեկը իմ բարեկամի տղան է,– ակնարկելով ինձ՝ ասաց նա, – իսկ մյուսները հարևան գյուղից են:

– Ինչո՞ւ են եկել այստեղ,– հարցրեց թուրք ասկյարներից մեկը՝ ոտից գլուխ չափելով մեզ:

– Մանկական հետաքրքրությունից, եկել են այստեղ՝ իսլամի զորքը տեսնելու,– պատասխանեց թարգմանիչը՝ խնդրելով թուրք ասկյարներին մեզ բաց թողնել:

Չնայած այդ պահին նրանք կարծես թե հավատացին քուրդ ծերուկին, բայց և այնպես ոչ մի նշանակություն չտվեցին նրա խնդրանքին:

Ավարտելով իրենց հապճեպ հարցաքննությունը՝ նրանցից ութը անցան գետակի հակառակ կողմը և հեռացան դեպի այն ձորը, որտեղից դեռ լսվում էին հրացանային խուլ կրակոցները, իսկ երկուսը մնացին գյուղում հրամանատարի հանձնարարությունները կատարելու համար: Տեսնելով, որ ասկյարները մտադրություն չունեն մեզ բաց թողնելու, քուրդ ծերուկը, մոտենալով Մնոյին, ասաց.

– Երևի քաղցած կլինեք, տղանե՛ր:

Նա իր կոշտացած մատներով հարդարեց Մնոյի խիտ ու փոշոտված մազերը՝ հասկացնելով թուրք ասկյարներին, որ մենք նրա մոտիկ բարեկամներն ենք:

Չնայած սաստիկ սոված էինք և համարյա թե ոտքի վրա կանգնել չէինք կարող, այնուամենայնիվ նրա կողմից տրված հարցը մնաց անպատասխան: Նա կրկին հարցրեց, բայց մեր լռությունից ու տանջահար դեմքերից ամեն ինչ հասկացավ:

Ամառվա կիզիչ արևի տակ՝ օրվա կեսի հեղձուցիչ տոթի մեջ, դեռևս մնացել էինք կանգնած և ոչ մի քայլ հեռանալ չէինք կարող:

Վերջապես ծառի ստվերի տակ նստած ասկյարները վեր կացան և առաջարկեցին մեզ շարժվել:

– Ո՞ւր եք տանում տղաներին,– հարցրեց ծերուկը:

– Տե՛ս, այն սարի հետևը,– պատասխանեց պեպենոտ զինվորը, ձեռքը մեկնելով գյուղից դեպի արևմուտք գտնվող բարձր սարի կողմը, որտեղից անցած օրը կրակում էին թուրքական առաջապահ զորքերը:

– Ի՞նչ նպատակով:

– Օսմանյան բանակի համար բեռներ տեղափոխելու:

– Նրանք դեռ երեխաներ են, բեռներ շալակել չեն կարող,– հայտարարեց քուրդ ծերուկը:

– Նրանց նման շատերը կան, որոնք ավելի ծանր բեռներ են շալակում և հեռուներ գնում,– պատասխանեց հաստափոր զինվորն ու հրացանի խզակոթով հրեց Մնոյին դեպի այն արահետը, որտեղով պետք է բարձրանայինք կանաչապատ սարի կողմը:

Դրանից հետո, իհարկե, թուրք ասկյարներին դիմադրել չէինք կարող՝ քաջ գիտենալով, որ չհնազանդվելու դեպքում տեղնուտեղը կգնդակահարվեինք, ուստի ստիպված էինք հետևել նրանց:

Այդպիսով՝ մինչ այգուց դուրս կգայինք ճանապարհի վրա, ծեր քուրդն իր տնակից դուրս եկավ ու արագ քայլերով մոտեցավ մեզ՝ ձևացնելով իրեն որպես մտերիմ բարեկամ:

– Վերցրե՛ք, տղանե՛ր, քաղցած կլինեք,– ասաց նա և յուրաքանչյուրիս մեկնեց մեկական գարեհացի փոքրիկ բաժին ու տրտմությամբ վերադարձավ դեպի իր մենավոր տնակը:

Դժբախտաբար ծերուկի տված հացը լրիվ մեզ չհասավ: Մեր հետևից քայլող պեպենոտ զինվորն իմ և Հայկի ձեռքից խլելով հացը՝ սկսեց խժռել: Լավ էր, որ երկրորդ զինվորը մեզնից քիչ հեռու էր գտնվում, թե չէ մնացածն էլ նա կհափշտակեր: Ճիշտ էր կռահել բարի ծերուկը. այդ օրը մենք չորս ընկերներով սովից առաջ շարժվել չէինք կարող: Որոշ չափով հագեցնելով մեր քաղցը՝ չորս ընկերներով մահվան սպառնալիքի տակ, թուրք ասկյարների խիստ հսկողության ներքո սկսեցինք առաջ շարժվել՝ ուղղություն վերցնելով դեպի թամբաձև բարձր սարի գագաթը:

Քայլելու ժամանակ մեզնից ոչ ոք չէր խոսում, միայն մերթընդմերթ աչքի տակով նայում էինք հետ մնացող գյուղին ու դրանից ոչ հեռու սարալանջի խորխորատներին, որտեղ դեռ առավոտյան լուսաբացին սրտաբուխ ծիծաղով բաժանվեցինք մեր ընկերներից: Բարձունքից պարզ երևում էին սարալանջի երկարությամբ ձգվող առուների նման խորխորատները, անգամ նրանց մեջ շարժվող սև կետերը: Իհարկե, դրանք մեր ընկերներն էին, որոնք, ըստ երևույթին, բորբոքված սրտով մեզ էին նայում: Շրջվելով թամբաձև սարի հակառակ կողմը՝ մեր առջև բացվեց անդունդանման մի ահռելի խոր ձոր, որից հետագայում դուրս գալ և փախուստի դիմել, այն էլ ասկյարների խիստ հսկողության ներքո, շատ դժվար կլիներ մեզ համար:

Դիտելով ձորի երկու կողմերին ձգվող ահռելի ժայռերը՝ բնազդաբար հիշեցի մեկ տարի առաջ՝ հենց միևնույն ամսին՝ արևի խավարման օրը, երբ մեր նախկին տասը ընկերներով Սատանասարի կախարդական ժայռի անմատչելի երեսով վայրէջք էինք կատարում դեպի սառնո-

ռակ վարդաղբյուրը: Մտաբերելով ընկերներիս հետ անցկացրած այդ երջանիկ օրը՝ մի պահ սիրտս սաստիկ մղկտաց, կարծես հանկարծակի խոցվեց սուր դաշույնով:

– Ի՞նչ ես մտածում, Սևո՛ւկ,– շշուկով հարցրեց Մնոն:

– Տե՛ս, նման է մեր ամառանոցի կախարդական ժայռերին,– նույնպես շշուկով պատասխանեցի ես:

– Սրանք սովորական սարեր են, որի լանջերով կարելի է վազելով անցնել,– ասեց Մնոն և զգուշացրեց, որ հայերեն չխոսեմ:

– Ի՞նչ ենք անելու, մի՞թե կրկին մնալու ենք գերության մեջ,– տխրությամբ հարցրի Մնոյին:

– Այս գիշեր կփախչենք,– վճռական տոնով պատասխանեց նա:

– Ինչպե՞ս, ի՞նչ հնարքով:

– Չե՞ս տեսնում, ասկյարները հոգնել են, երևի շուտով կանգ կառնեն՝ հանգստանալու, իսկ մենք հարմար ժամանակ կընտրենք փախչելու համար,– շատ հանգիստ պատասխանեց նա. կարծես թե գերության մեջ չլիներ:

– Այդ սարսափելի ձորից ինչպե՞ս կարելի է դուրս գալ, երբ մեզնից ոչ մեկը ճանապարհներին ծանոթ չէ:

– Դու դրա մասին մի՛ մտածիր, միայն թե հնարավոր լինի ասկյարների հսկողությունից դուրս պրծնել, դրանից հետո ես գիտեմ, թե ինչպես և որտեղից կարելի է փախչել,– սառնասրտորեն ասաց նա՝ աչքի տակով նայելով թուրք զինվորին, որը դանդաղորեն հետևում էր մեզ:

– Նրանք կարող են մեզ բանտարկել որևէ փակ խրճիթում:

– Ինչ ուզում են, անեն, միայն թե մեր դաշույնները չնկատեն,– ասաց Մնոն և տղաներին զգուշացրեց ուշադիր լինել:

– Մութն ընկնելուն պես կարող ենք դեն նետել,– առաջարկեց Արամը:

– Ոչ մի դեպքում, նրանք մեզ դեռ պետք կգան,– խստությամբ ասաց խմբի ղեկավարը և զգուշացրեց, որ այլևս չխոսենք, քանի որ հետևից եկող թուրք ասկյարն արդեն մոտենում էր մեզ:

Շարունակելով վայրէջքը դեպի ձոր՝ վերջապես մթնադեմին մտանք գետափնյա մի ամայի գյուղ, որտեղ մեզ դիմավորեցին քսանից ավելի թուրք ասկյարներ:

Պեպենոտ զինվորը զեկուցեց նրանցից մեկին և հայտնեց, որ եկել են զինամթերք տանելու:

Տեսնելով մեր չորս ընկերներին՝ ասկյարներից երկուսը մեզ տարան մի մեծ խրճիթի դռան մոտ ու հրամայեցին կանգ առնել, իսկ իրենք հաստափոր զինվորի հետ դռնից ներս մտան՝ մեզ կանգնած թողնելով դրսում:

– Վերջ չտա՞նք էս մեկին,– ականջիս փսփսաց Մնոն:

– Գժվե՞լ ես, ի՞նչ է, չե՞ս տեսնում, մեր հետևից գալիս են մյուսները,– շշուկով պատասխանեցի ես:

Իսկապես, չանցավ մի քանի րոպե, երբ մեզ մոտեցան ավելի քան տասը զինվոր և առաջարկեցին դռնից ներս մտնել:

Խրճիթ մտնելուն պես թրով զինված ասկյարներից մեկը ճրագի աղոտ լույսի տակ մոտեցավ Մնոյին և հարցրեց.

– Որտե՞ղ են ձեր ծնողները:

– Ամառանոցում են,– Մնոյի փոխարեն պատասխանեցի ես:

– Ձեզնից մեծը թող պատասխանի, արջի՛ քոթոթ,– խստությամբ զգուշացրեց զինվորը՝ ավելի մոտենալով Մնոյին:

– Ի՞նչ ազգից եք,– հարցրեց նա:

– Քուրդ ենք,– կմկմալով պատասխանեց ընկերս:

– Ի՞նչ գործ ունեք ռազմաճակատի առաջին գծում,– հարցրեց թուրքը և, Մնոյի ծնոտից բռնելով, գլուխը շուռ տվեց լույսի կողմը՝ հետաքրքրությամբ նայելով նրա աչքերին. կարծես թե դեմքից կարող էր իմանալ նրա ով լինելը:

– Հենց այնպես, ձեզ տեսնելու համար ենք եկել:

– Դե երդվի՛ր ալլահի անունով, որ չես ստում:

– Ալլահն է վկա, որ չեմ ստում,– երդվեց Մնոն՝ սխալմամբ վկայակոչելով նաև Ղուրանի և Ավետարանի սրբությունը:

Չնայած թուրք ասկյարը միանգամից չհասկացավ ավետարանով երդվելու իմաստը, բայց և այնպես հասկացավ, որ մենք քրդեր չենք: Թողնելով հարցաքննվող Մնոյին՝ թուրք ասկյարը մոտեցավ զինվորներից մեկին՝ խոսելով իրենց օնբաշու հրամանի կատարման մասին: Չնայած մենք նրանցից բավականին հեռավորության վրա էինք, բայց և այնպես հասկանալով թուրքերեն՝ Հայկը շշուկով մեզ պատմեց նրանց խոսակցության բովանդակությունը, որը վերաբերում էր սպանված օնբաշուն: Նրանց խոսակցությունը տևեց ավելի քան մեկ ժամ, իսկ մենք, երկար ճանապարհորդությունից խիստ հոգնած, դեռ կանգնած էինք խրճիթի անկյուններից մեկում՝ չհամարձակվելով տեղից շարժվել: Վերջապես պեպենոտ զինվորը հարցրեց.

– Ո՞վ է փոխարինում սպանված օնբաշուն, և ո՞ւր է նա,– հարցրեց նա՝ ըստ երևույթին ռազմաճակատ փոխադրվելիք զինամթերքները ստանալու հարցը նրա հետ լուծելու նպատակով:

– Շուքրի էֆենդին է փոխարինում,– պատասխանեց նրանցից մեկը՝ չգիտես ինչու կռճտացնելով իր դեղնած ու բաց ատամները և ավե-

լացրեց, որ օնբաշուն փոխարինողը գնացել է Հոսթայան գյուղ՝ գյավուրներին կոտորելու:

– Երևի բռնել են գյավուրներին,– հարցրեց պեպենոտ զինվորը:

– Նույն գիշերվա կեսին…

– Քանի՞ գյավուրի:

– Քսանից ավելի, – պատասխանեց թրով զինված ասկյարը:

– Երևի օնբաշին մենակ է եղել:

– Մարտական խնդիր կատարելու ժամանակ ընկել է գյավուրների շրջապատման մեջ, բայց կենդանի չի հանձնվել:

– Ափսոս, քաջ ու փորձված օնբաշի էր,– կեղծ կարեկցությամբ հայտարարեց հաստափոր զինվորը, որը մինչ այդ խոսակցությանը չէր մասնակցում:

– Երկու ժամից ավելի կռվել էր ռուսների զենքերով զինված գյավուրների դեմ,– մեջ մտավ մի ուրիշ զինվոր,– նա կարող էր բոլորին ոչնչացնել, եթե փամփուշտ ունենար:

– Ի՞նչ ուղղությամբ էին հարձակվել գյավուրները,– հարցրեց պեպենոտ զինվորը:

– Հոսթայան գյուղից դուրս գալու պահին օնբաշին նկատել էր մոտակա քարայրի մեջ թաքնված ինչ-որ զինված մարդկանց և, առանց մեզ տեղյակ պահելու, հարձակվել էր նրանց վրա,– բացատրեց թրով զինված ասկյարը, միաժամանակ ավելացրեց, որ ռուս զինվորները թրի մեկ հարվածով կտրել էին օնբաշու գլուխը:

Այդ հարցուփորձից հետո մեզ համար պարզ դարձավ, որ խոսողները սպանված օնբաշու զինվորներն էին, որոնք, Հոսթայան գյուղից հեռանալով, իրենց եզնասայլերով չէին կարողացել բարձրանալ թամբաձև սարը զորամասին պատկանող զինամթերքները տանելու համար:

Արևը վաղուց մայր էր մտել. գիշերվա խավարն աստիճանաբար սփռվում էր անծանոթ գյուղի վրա, իսկ թուրք ասկյարները շտապ դուրս եկան խրճիթից՝ իրենց հետ բերելով զինամթերքով լի պարկերն ու հրամայեցին մեզ հերթականությամբ շալակել: Իր պարկին առաջինը մոտեցավ Մնոն, հետո Հայկն ու Արամը, իսկ վերջում ես վերցրի: Մենք դեռ դուրս չէինք եկել խրճիթից, երբ երկու ասկյարների մտրակների հարվածների տակ ծեծելով ներս բերին նաև ինը ուժասպառ եղած պատանիների, որոնց մինչ այդ չէինք տեսել:

Ասկյարների վարմունքը պատանիների նկատմամբ ուղղակի սարսափելի էր: Տղաների կապված ձեռքերը արձակելուց հետո, համարյա

թե ծեծելով, նրանց ուսերին դրին ծանր զինամթերքը: Տեղում եղած ասկյարներից երկուսը, լցնելով իրենց հրացանները, հրամայեցին մեզ մեկական դուրս գալ խրճիթից: Բեռնակիրներին ուղեկցողներից մեկը, կրկին ստուգելով շալակած բեռները, դիմեց մեզ՝ հայտարարելով.

– Ձեզնից ով հետ մնա կամ փախչելու փորձ անի, տեղնուտեղը կգնդակահարվի, իսկ այժմ իմ հետևից, առա՛ջ…

Լսելով թուրք ասկյարի զգուշացումը՝ մենք բոլորս լռությամբ հետևեցինք նրանց՝ ուղղություն վերցնելով դեպի այն սարի բարձունքը, որտեղից քիչ առաջ վայրէջք կատարեցինք: Գյուղից դուրս գալու ժամանակ իմ շալակած բեռը կարծես թե մի պահ ինձ թեթև թվաց, բայց երբ սկսեցինք սարալանջի քարքարոտ արահետով աստիճանաբար բարձրանալ դեպի վեր, նոր միայն զգացի, թե ինչ սարսափելի ծանր բեռ եմ շալակել: Մի խոսքով, այդ օրը մահվան սպառնալիքի տակ, չորս թուրք ասկյարների խիստ հսկողության տակ ճկռելով հազիվ բարձրանում էինք դեպի թամբաձև մեծ սարի բարձունքը:

*
* *

Մենք չորս ընկերներով շարժվում էինք առջևից, իսկ ինը անծանոթ պատանիներ ծանր տնքոցներով հետևում էին մեզ:

Բոլորս գնում էինք լուռ, առանց որևէ ծպտուն հանելու: Անծանոթ տղաներից մեկը խնդրեց թույլ տալ կանգնելու իր շալակած բեռի կապերը ամրացնելու, բայց կողքից քայլող զինվորը իր մտրակի հարվածը դաժանաբար իջեցրեց նրա ծոծրակին՝ ստիպելով առաջ շարժվել: Պատանին չդիմացավ սաստիկ հարվածին, մի քանի քայլ առաջ գնալով, ուժասպառ երեսի վրա վայր ընկավ, իսկ ընկերները չկարողացան նրան ընկած տեղից վեր բարձրացնել:

Տեսնելով, որ ուժասպառ եղած պատանին ի վիճակի չէ իր բեռը մինչև վերջ տանելու, բեռնակիրներիս ուղեկցող ասկյարները նրա շալակած պարկի մեջ եղած փամփուշտները բաժանեցին մյուսներին, իսկ տղային տեղնուտեղը սվինահարեցին: Դահիճներն այնպես հարվածեցին նրան, որ խեղճ պատանուց ծպտուն անգամ չլսվեց: Տեսնելով տղայի մահը՝ խղճահարությունից մի պահ սկսեցի բարձր-բարձր մորմոքել, սակայն հենց այդ պահին էլ կողքից քայլող զինվորի ծանր մտրակն իջավ իմ գլխին: Ոճրագործի հարվածն այնքան ուժեղ էր, որ աչքերս մթնեցին, ոտքերս թուլացան, երերալով միանգամից երեսի վրա վայր ընկա: Բարեբախտաբար հենց այդ պահին էլ Մնոն ու Հայկը, թևե-

րիցս բռնելով, քարշ տվեցին իրենց հետ, թե չէ ես էլ, անծանոթ պատանու պես սվինահար եղած, կմնայի սարի բարձունքում: Գնալու ժամանակ օտար պատանիներից մեկը ջերմից անընդհատ տնքում էր, նրա զառանցանքից անգամ լսվում էին հատուկենտ հայերեն բառեր, և հենց այդ ազդանշաններով էլ մենք շուտով կարողացանք իմանալ, որ տանջահար բեռնակիրները գերության մեջ ընկած հայ պատանիներ էին:

Գիշերվա մթության մեջ, անասելի տանջանքներով վերջապես մի կերպ հասանք մեզ հանրածանոթ գյուղն ու կանգ առանք: Ըստ երևույթին մեզ ուղեկցող թուրք ասկյարները նույնպես հոգնած էին, այդ իսկ պատճառով այլևս չշարունակեցին իրենց երթը դեպի մարտի առաջավոր գիծ: Գյուղի կենտրոնական թաղամասում մեր բեռները վայր դնելուց հետո նրանք կապկպեցին կենդանի մնացած ութ պատանիների ձեռքերը և մտրակների հարվածների տակ ներս հրեցին մի գետնափոր տնակ:

Մեր չորս ընկերների ձեռքերը չկապեցին, ըստ երևույթին, թոկեր չունենալու պատճառով: Պեպենոտ զինվորը, բացելով դիմացի մեծ խրճիթի դուռը, համարյա հրելով մեզ ներս տարավ:

– Կմնաք այստեղ մինչև առավոտ, իսկ փախչելու դեպքում կգնդակահարվեք ոչ միայն դուք, այլև գյուղում մնացած ձեր ծնողները,– զգուշացրեց ուռած փորով ասկյարն ու դրսի դուռը ամուր փակեց:

Օրվա ընթացքում այնքան էինք հոգնել, որ այլևս ոտքի վրա կանգնել չէինք կարող, իսկ ծնկներս կոտրված փայտի պես ծալվում էին: Մեջքներիս վերքեր էին առաջացել, հին տրեխներից դուրս եկած մատները՝ արյունոտվել, իսկ սովածության մասին ավելորդ է հիշատակել, քանի որ առավոտյան դեմ քուրդ գյուղացու տված երկու կլորաձև գարե չոր հացից բացի ուրիշ ոչինչ չէինք ճաշակել: Փակվելով խրճիթի ամառային գիշերվա հեղձուցիչ տոթ օդի մեջ՝ ուղղակի խեղդվում էինք, ծարավից բերաններս փակվել էին, իսկ կոկորդներս՝ չորացել: Ամենասարսափելին այն էր, որ խլամներով[55] լի խրճիթի ներսում եղած բազմատեսակ միջատները, քրքրելով մեզ, մեկ վայրկյան անգամ հանգիստ չէին տալիս:

Հայկն ու Արամն ավելի թուլակազմ էին և, չդիմանալով սարսափելի տանջանքներին, սկսեցին ներսից դուռը թակել՝ խնդրելով պահակներին այն բացել գոնե մի րոպե թարմ օդ շնչելու համար: Միամիտները կարծում էին, թե թուրք ասկյարները խղճահարությունից կընդառաջեն

[55] Խլամ – թափելու ապրանք

մեր խնդրանքին: Բացելով փակված խրճիթի դուռը՝ պեպենոտ զինվորը գոռալով հարցրեց.

– Ի՞նչ եք ուզում, գյավուրի՛ սերունդներ:

– Խեղդվում ենք, եթե կարելի է, դուռը բա՛ց թողեք,– խնդրեց Հայկը:

– Ավելի լավ է այդպես սատկեք, քան թե ձեզ վրա փամփուշտ փչացնենք,– դրսից լսվեց ոճրագործի պատասխանը:

Թուրք ասկյարի պատասխանից պարզ դարձավ, որ նրանք արդեն գիտեին, թե ովքեր ենք մենք, սակայն իրենց զինամթերքը փոխադրելու նպատակով մինչև այժմ չգիտենալու տեղ էին դրել: Տենդի մեջ լինելու պատճառով Հայկը սկզբում չհասկացավ դրսից բղավող թուրք ասկյարի ասածները ու կրկին խնդրեց դուռը բացել: Դուռը շուտով բացվեց, բայց ոչ թե նրա համար, որպեսզի Հայկը դրսի մաքուր օդը շնչի, այլ ուրիշ նպատակով: Ոճրագործները դրսում արված խարույկի կրակները ներս շպրտեցին և դուռը փակեցին: Այդպիսով խրճիթի հեղձուցիչ օդին ավելացավ նաև վառված խլամների գարշելի հոտը, որից բերաններս բռնած՝ օձի նման գալարվում էինք մի պատից մյուսը:

Հայկն ու Արամը հուսահատվելով սկսեցին արտասվել և միայն Մնոյի ազդու հանդիմանությունից հետո դադարեցրին իրենց հեկեկոցները:

– Մեր ծնողներից և եղբայրներից ինչո՞վ եք ավել, որոնք շղթայակապ զոհվեցին առանց արտասվելու,– ասաց նա և սկսեց վառված կրակները հանգցնել:

Բարեբախտաբար խրճիթի երկու երդիկները բաց էին, ուստի ներսի գարշելի մշահոտն աստիճանաբար դուրս եկավ: Հին առածը ասում է. «Չկա չարիք, առանց բարիք», և իրոք, մի ժամից հետո բոլորովին չքացան այն միջատները, որոնք մինչ այդ մեզ հանգիստ չէին տալիս: Հարմարվելով ստեղծված վիճակին՝ տղաներն այլևս չանհանգստացրին թուրք պահակներին: Կրակի լույսը ձեռքներիս՝ շրջում էինք խրճիթի մի անկյունից մյուսը՝ նպատակ ունենալով որևէ հնարքով դուրս փախչել: Իհարկե, վտանգներից դուրս գալու համար մենք փախուստի շատ փորձեր ունեինք՝ դեռ մանուկ հասակից: Նույն պահին հիշեցի, թե ինչպես ձերբակալված հայ տղաները բերդի հիմքը քանդեցին, և շատերը փախուստի դիմեցին: Հիշեցի երկու տարի առաջ մեր ախոռի երդիկից դուրս գալու հին պատմությունը:

Մեծ ցավով հիշեցի, թե ինչպես Բադալն ու Մովսեսն ահավոր օրերին քուրդ Ջահվարի վարձկանների շրջապատումից ազատվելու նպատակով ախոռի երդիկով հեռացան:

Վերջապես մենք շատ վտանգավոր տեղերից էինք ազատվել, ուստի այդ փորձերը մեզ հույս էին ներշնչում, որ անպայման կազատվենք թուրք բարբարոսների գերությունից:

– Բայց ինչպե՞ս փախչենք,– հարցրի ես:

– Որևէ հնարք կգտնենք,– պատասխանեց Մնոն:

– Օրինակ…

– Երդիկից հեշտությամբ կարող ենք դուրս գալ,– ասաց ընկերս:

– Առաստաղը շատ բարձր է, դուրս գալ չենք կարող,– առարկեցի ես՝ նայելով խրճիթի փոքրիկ երդիկին:

Իրոք, խրճիթի երդիկը բավականին բարձր էր և առանց հենարան ունենալու դուրս գալ չէինք կարող, իսկ ներսում այդպիսին չկար:

Այդպիսով՝ երդիկից դուրս գալու առաջին հնարավորությունը վերանում էր:

Արամը դեռ նստած էր խրճիթի մեծ դռան մոտ և հետևում էր պահակների շարժումներին, իսկ մենք կրակի փոքրիկ լույսի տակ որոնում էինք փախչելու ուրիշ ելք:

Խրճիթի քարե հաստ պատերի միջով անցք բացել այնքան էլ հեշտ ու հանգիստ չէր: Նախ անհրաժեշտ էին գործիքներ, ապա պետք էր ճիշտ կողմնորոշվել, թե որտեղից կարելի էր դուրս գալ և պահակներից աննկատ հեռանալ դեպի խորխորատները, որտեղ, ըստ մեր կարծիքի, դեռ պետք է մնացած լինեին մեր ընկերները: Խրճիթի ներսում կրակներ լցնելու պահից անցել էր ավելի քան մեկ ժամ, բայց այդ սարսափելի մշահոտի մեջ մենք դեռ որոնում էինք հարմար տեղ՝ պատից անցք բացելու համար:

– Ա՛յ թե կանանց խարձիկաթներն այստեղ լինեին,– ասաց Մնոն՝ ձեռքի փոքրիկ լույսը մոտեցնելով պատին:

– Ինչո՞ւ,– հարցրի ես:

– Պատի քարերը տեղահանելու:

– Փնտրենք, գուցե կգտնվի,– առաջարկեցի ընկերոջս ու թողնելով նրան պատի մոտ, երեսի վրա սողալով՝ մոտեցա խրճիթի կենտրոնում եղած թոնրին ու զգուշորեն մտա նրա մեջ:

Իսկապես այնտեղ մտնելը և թևս խարձիկաթին դիպչելը մեկ եղավ, իսկ թոնիրը բավականին խորը լինելու պատճառով մեծ ջանքերի գնով հազիվ հաջողվեց այնտեղից դուրս գալ, այն էլ ընկերոջս օգնությամբ: Վերցնելով ծանր խարձիկաթը՝ Մնոն զգուշորեն սկսեց տեղահան անել անշաղախ պատի քարաբեկորները: Վառված փայտի խավար լույսի

տակ սկզբում հանեցինք փոքր խիբարները[56], ապա երկու մեծ կլոր քարաբեկորներ, որոնք խարձիկաթի օգնությամբ հեշտությամբ պատից ցած թափվեցին:

Մեր բախտից թուրք պահակները խոր քնի մեջ էին, այնպես որ բացի նրանց զզվելի խռմփոցներից ուրիշ ոչ մի ձայն չէր լսվում: Հայկը Արամի հետ կպել էին դրսի դռանը՝ պահակների խռմփոցը լսելու, իսկ ես ու Մնոն շարունակեցինք պատի ճեղքվածքը լայնացնել:

Վերջապես գիշերվա կեսին մեզ հաջողվեց բաց անել մի փոքրիկ անցք, բայց դուրս գալու համար պահանջվում էր դեն հրել պատի հակառակ կողմում դրված ևս մի քարաբեկոր, որը խանգարում էր Մնոյին՝ հակառակ կողմը դուրս գալու: Քարաբեկորը շատ մեծ լինելու պատճառով խարձիկաթով տեղից շարժել հնարավոր չեղավ: Ուստի ստիպված էինք մեկ ժամ ևս չարչարվել բացված անցքը լայնացնելու համար: Հայկն ու Արամը դեռ շարունակում էին դռան ճեղքից հետևել խոր քնի մեջ խռմփացնող պահակներին, իսկ Մնոն մտել էր պատի ճեղքվածքի մեջ՝ փլված քարախառն հողակույտերը դուրս բերելու: Վերջապես ընկերոջս հաջողվեց անցքը լրիվ բաց անել և սողալով անցնել պատի հակառակ կողմը:

– Կանչի՛ր տղաներին, ամեն ինչ պատրաստ է,– խորքից լսվեց Մնոյի ձայնը:

Սակայն մինչ ես կհեռանայի անցքի մոտից, դրսի դուռը ճռինչով բացվեց, և խավար մթության մեջ շատ անսպասելի լսվեց Ոսկեհատ քույրիկի ձայնը: Մի պահ կարծեցի, թե խորը երազի մեջ եմ: Սակայն դա ո՛չ երազ էր, ո՛չ էլ հրաշք. անցավ մեկ վայրկյան, կրկին լսվեց միևնույն ձայնը:

– Դո՛ւրս եկեք, զավակնե՛րս,– կանչեց նա՝ գրկելով դռան հետևում կուչ եկած Արամին:

– Ո՞ւր են տղաները,– խեղդված ձայնով հարցրեց Նիկոլը և, չդիմանալով ներսի մշահոտին՝ սկսեց հազալ:

– Այստեղ են,– պատասխանեց Արամը՝ զարմանքով նայելով դռնից ներս մտնող ընկերոջը:

– Ուրեմն կանչի՛ր,– կրկին լսվեց ձայնը:

– Անցք են բաց անում,– կիսաձայն պատասխանեց Արամը և փորձեց տեղից բարձրացնել ուժասպառ եղած Հայկին:

– Դո՛ւրս եկեք, զավակնե՛րս, դո՛ւրս,– առաջարկեց Ոսկեհատ քույրիկը ու դռան հետևում թաքնված Արամի ու Հայկի ձեռքից բռնելով, դուրս բերեց խրճիթի գարշելի հոտից:

---

[56] խիբար – փոքրիկ քարաբեկոր

Դռան ճռռոցը, Ոսկեհատի անսպասելի երևալն ու նրա հուզված ձայնը պատի ճեղքվածքում պառկած Մնոյին սարսափի մեջ գցեցին:

– Բռնե՞լ են նրանց,– հարցրեց նա և վայրկենապես անցքից դուրս եկավ:

– Չգիտեմ,– անորոշ պատասխանեցի ես:

Գտնվելով անցքի մոտ՝ մենք երկուսով դեռ չգիտեինք, թե ինչ է կատարվում խրճիթից դուրս, իսկ երբ լսվեց Ոսկեհատ քույրիկի ձայնը, մի պահ կասկածանքի մեջ ընկանք:

– Չլինի՞ թե խեղճ կանայք գերության մեջ ընկան,– մտածում էի ես:

Սակայն, երբ լսվեցին Սարգսի, Նիկոլի ուրախ և խրոխտ ձայները, այս անգամ անցքի մոտ վառված փայտի լույսի օգնությամբ, չորեքթաթ շարժվելով, մոտեցանք ուրագը ձեռքին բռնած Ոսկեհատ քույրիկին:

*

* *

Ջրի գնացած չորս ընկերներիս խիստ ուշանալը և մոտիկից լսվող հրացանի կրակոցները կասկածանքի մեջ էին գցել խորխորատներում թաքնված մեր ընկերներին. նրանք ամբողջ ժամանակ լարված սպասել էին մեր վերադարձին:

Առանձնապես ահ ու սարսափի մեջ էր եղել Ոսկեհատը, երբ դիտակետից նկատել էր այգիների մեջ շարժվող թուրք ասկյարներին ու լսել նրանց հրացանների կրակոցները:

Իմանալով մեր ուշանալու պատճառը՝ նա հաստատ համոզվել էր, որ իսկապես մենք վտանգավոր ծուղակի մեջ ենք ընկել, բայց այդ մասին կանանց ու երեխաներին չէր հայտնել:

– Կգան զավակներս, ընկճվելու հարկ չկա,– ասել էր նա՝ հուսադրելով բոլորին:

Արևը վաղուց բարձրացել էր երկնակամարի կենտրոն՝ իր վառվռուն ճառագայթները սփռելով լեռնաշխարհի վրա, իսկ ջրի գնացած չորս ընկերներին սպասող կանանց ու տղաների մեծ մասը ամբողջապես ընկել էին հուսահատության մեջ:

Նրանք վաղուց մոռացել էին իրենց քաղցը, սարսափելի ծարավը և, մշտապես հայացքներն ուղղելով դեպի գյուղ, սրտատրոփ սպասում էին մեր վերադարձին:

Միայն Ոսկեհատ քույրիկն էր, որը ցույց չէր տվել իր ընկճվածությունն ու ամեն կերպ հուսադրել էր մյուսներին:

Այնուամենայնիվ Ոսկեհատ քույրիկը շատ էր տանջվել մեր չորս ընկերների ծուղակ ընկնելու պատճառով:

– Եթե Միհրանի ազդրը վնասված չլիներ, ապա մենք վաղուց հեռացած կլինեինք խորխորատներից, և տղաները նորից գյուղ չէին գնա,– ասել էր նա՝ վերցնելով լաթի մեջ փաթաթված իր կապոցը ու փոսից դուրս եկել:

– Ո՞ւր, Ոսկեհա՛տ մորաքույր,– հարցրել էր Նիկոլը:

– Գյուղ կերթամ, զավա՛կս, գուցե գտնեմ տղաներին:

– Այդ դեպքում մենք էլ կգանք,– ասել էր Սարգիսն ու Նիկոլի հետ դուրս եկել խորխորատից:

Ոսկեհատը շատ դժվարությամբ Միհրանին թողել էր իր ընկերուհիների մոտ և, Սարգսի ու Նիկոլի հետ օրը ցերեկով իջել էին գյուղ՝ մեզ փնտրելու:

Երկու պատանիներին թաքցնելով ծառախիտ այգիների մեջ՝ Ոսկեհատ քույրիկը փորձված հետախույզի նման կարողացել էր ընդհուպ մոտենալ գյուղի այն խրճիթին, որտեղ թուրք ասկյարները հարցուփորձով ուզում էին իմանալ մեր ով լինելը: Թաքնվելով աթարի ամրոցներից մեկում՝ նա ուշադրությամբ ուսումնասիրել էր գյուղի շրջապատը և դեպի գետ գնացող ճանապարհը: Շուտով նրան էին միացել նաև Նիկոլն ու Սարգիսը:

Երեք հետախույզները ավելի քան մեկ ժամ կանգնած տեղից դիտել էին գյուղամիջյան ճանապարհները, բայց ոչ մի շարժում չէին նկատել: Հույսները կտրած Սարգիսն ու Նիկոլը, դուրս գալով թաքնված տեղից, զգուշորեն մոտեցել էին գետափին, ճիշտ այնտեղ, որտեղ երեկ գիշեր թողել էինք չորսկանթանի մեծ պղինձը:

Իրենց ծարավը հագեցնելու նպատակով Նիկոլը փորձել է մտնել ջրի մեջ, սակայն հենց այդ պահին էլ գետի հակառակ կողմի այգիների միջից դուրս են եկել տասից ավելի թուրք ասկյարներ:

Բարեբախտաբար տղան մնում է աննկատ: Նա մի ակնթարթում անհայտանում է առաջին իսկ պատահած ցանկապատի հետևում, իսկ Սարգիսն ու Ոսկեհատը հետևում են թուրք զինվորներին ու նրանց շարժմանը: Դուրս գալով այգիներից՝ զինվորներից ութը, գետն անցնելով, շարժվում են գյուղի արևելյան կողմը՝ ըստ երևույթին դեպի մարտերի առաջավոր գիծ, որտեղից դեռ լսվում էին կրակոցների խուլ ձայները: Ասկյարներից մեկը, անջատվելով մյուսներից, վերադառնում է դեպի մենավոր տունը, բայց շուտով մեկ ուրիշի հետ մեր չորս ձերբակալվածներին առաջն արած, բերում են գյուղի կենտրոնական փոքրիկ հրապարակը, որտեղից ճանապարհը թեքվում էր դեպի հարավ-արևմուտք՝ դեպի այն սարը, որտեղ անցած օրը խրամատավորվել էին թուրքական զորամասերը:

Հետախույզները նկատել էին նաև այն քուրդ ծերուկին, որը թուրք ասկյարներին ծառայում էր որպես թարգմանիչ: Տեսնելով գյուղից մեր չորս ընկերների հեռանալը՝ Նիկոլն ու Սարգիսը հուսահատությունից սկսել էին արտասվել, բայց Ոսկեհատ քույրիկը համոզել էր երկու հավատարիմ ընկերներին լռել:

*
* *

Նիկոլի և Սարգսի հետ խորհրդակցելուց հետո Ոսկեհատ քույրիկը որոշում է գտնել քուրդ ծերուկին ու նրա միջոցով ստույգ իմանալ մեր չորս ընկերների գերվելու մանրամասները:

Թաքցնելով երկու պատանիներին գյուղի բարձրադիր խրճիթներից մեկում՝ նա օրվա երկրորդ կեսին սկսում է որոնել քուրդ ծերուկին:

Իհարկե, վերջինս նույնպես հանգիստ չէր, նա դեռ վաղուց էր նկատել ոչ միայն ամրոցի մեջ թաքնված Ոսկեհատին, այլև Սարգսին ու Նիկոլին, որոնք շարունակ հետևելիս էին եղել թուրք ասկյարներին: Մինչ Ոսկեհատը գետակի հակառակ կողմի այգու խիտ ծառերի միջով կմոտենար մենավոր տնակին, հենց այդ ժամանակ էլ քուրդ ծերուկը ցանկապատի հակառակ կողմից կտրում է նրա ճանապարհը:

– Ո՞ւմ ես փնտրում, աղջի՛կս,– հարցնում է նա քրդերեն լեզվով:

– Իմ երեխան երեք ընկերների հետ եկել էին այս կողմերը, չիմացա, թե ուր գնացին,– պատասխանում է հանկարծակիի եկած Ոսկեհատը:

– Կարծում եմ, որ դու ինքդ թաքնված տեղից տեսար, թե ուր գնացին ձեր երեխաները,– դանդաղորեն պատասխանում է ծերուկը՝ նայելով Ոսկեհատի գունատ դեմքին:

– Չեմ տեսել, հայրի՛կ, եթե որևէ բան գիտես նրանց մասին, խնդրում եմ, ասա՛:

– Եթե չես տեսել, ապա կասեմ, որ նրանց բռնեցին թուրք ոստիկաններն ու տարան, իսկ թե ուր, դա արդեն դու ինքդ տեսար, – պատասխանում է ծերուկը:

– Ինչո՞ւ տարան, ի՞նչ էին արել խեղճ տղաները,– հարցրել է Ոսկեհատն ուշադրությամբ զննելով ծերուկի նիհար դեմքը՝ իմանալու, թե ինչ կասի վերջինս:

– Թե ինչու տարան, հայտնի է ինձ, իսկ այստեղ գալու և ինչ անելու մասին դու պետք է ասես՝ որպես նրանց մայր,– պատասխանում է քուրդ ծերուկը՝ առաջարկելով Ոսկեհատին ներս մտնել իր մենավոր տնակը:

*
* *

Խրճիթում, բացի պառավ կնոջից, ուրիշ ոչ ոք չկար, ըստ երևույթին, նա տանտիրուհին էր, որը ծերուկի հետ ապրում էր այնտեղ:

– Ի՞նչն է քեզ բերել մեր գյուղ,– հարցնում է պառավ կինը:

– Երեխայիս եմ որոնում:

– Ինչո՞ւ թողեցիք նրանց դուրս գալու այս դաժան օրերին, այն էլ ռազմաճակատի առաջին հատվածում, որտեղ ամենուրեք արյուն է թափվում,– նախատելով հարցնում է քուրդ ծերուկը:

Ոսկեհատը, խոսք չգտնելով պատասխանելու, նպատակահարմար է համարում լռել:

– Լավ կլիներ, որ ձեր երեխաներին սովորեցնեիք լռել, որպեսզի իրենց ով լինելը չմատնեին թուրք ասկյարներին,– ասում է քուրդ ծերուկը՝ հասկացնելով, որ Ոսկեհատի որոնած չորս ընկերները հայ տղաներ էին, որի պատճառով էլ գերվեցին:

Ոսկեհատը, հայացքը հառելով քուրդ ծերուկին, շարունակում էր լուռ մնալ:

– Շատ մտածելու հարկ չկա, եղածը եղել է. ձեր երեխաները ժամանակավորապես ծառայելու են որպես բեռնակիրներ: Նրանք ուրիշների հետ թիկունքից դեպի ռազմաճակատի առաջին գիծ ռազմանյութեր են տեղափոխելու: Գուցե մի քանի ժամից հետո վերադառնան այստեղ, իսկ դուք նրանց ազատվելու մասին հո՛գ տարեք, քանի որ թուրք ասկյարներն արդեն գիտեն նրանց հայ լինելու մասին:

Լսելով քուրդ ծերուկի հակիրճ պատմությունը՝ Ոսկեհատ քույրիկը, շնորհակալություն հայտնելով, շտապում է հյուրընկալ խրճիթից դուրս գալ, բայց տանտերը նրան կանգնեցնում է:

– Կա՛ց, աղջի՛կս, երեխաներին փրկելու միակ հույսը դուք եք, նրանց հավանական վերադարձի ճանապարհն անցնելու է մեր գյուղի միջով, գուցե շուտով նրանք այստեղ լինեն, – ասում է քուրդ ծերուկը և ավելացնում, – պատանիների դրությունը ծանր է ու անհուսալի. եթե որևէ հնարք ունեք նրանց ազատելու, օգտագործե՛ք հենց այս գիշեր, հակառակ դեպքում դուք այլևս տղաներին տեսնել չեք կարող:

– Ի՞նչ անենք, հայրի՛կ,– հարցնում է Ոսկեհատը՝ կրկին տեղից վեր կենալով խրճիթից դուրս գալու համար:

– Իմ տղաները վաղուց փախել են դեպի լեռները, իսկ ես՝ ծերուկս, ոչինչ անել չեմ կարող, ինչ հնարք ունեք, ինքներդ արե՛ք,– կրկնել է տանտերը՝ նրան տալով գարեհացի մի քանի կտորներ:

– Հարկավոր չէ, հայրի՛կ,– ասում է Ոսկեհատը՝ պատրաստվելով դուրս գալ:

– Վերցրե՛ք, քաղցած կլինեն,– պատասխանում է ծերուկը՝ ակնարկելով գյուղում թաքնված Նիկոլին ու Սարգսին:

Վերցնելով հացի փոքրիկ կապոցը՝ Ոսկեհատ քույրիկը, կրկին շնորհակալություն հայտնելով, մի ակնթարթում դուրս է գալիս խրճիթից՝ հեռանալով դեպի գյուղի ծայրամասի այգիներ:

Արևը հենց նոր էր մայր մտել, նրա վերջին ճառագայթները, պոկվելով սարալանջերից, աստիճանաբար բարձրանում էին դեպի վեր ու անհետանում սարերի կատարներից: Իսկ հորիզոնին կպած երկնքի ծիրանագույն շերտերը, կամաց-կամաց գունափոխվելով, անհետանում էին գյուղից ոչ հեռու գտնվող անտառապատ մեծ սարի թիկունքում: Խորխորատներից գյուղ եկած սուրհանդակ Միհրանին մի կերպ վերադարձնելուց հետո Ոսկեհատ քույրիկը Նիկոլին ու Սարգսին առաջարկում է թաքնվել գետափի խիտ մացառների մեջ, իսկ ինքը տեղավորվում է գյուղի կենտրոնում եղած աթարի ամրոցներից մեկում:

Նիկոլը դիտում էր սարից գյուղ իջնող ճանապարհը, որտեղից փոքր խմբերով հաճախակի դեպի արևմտյան ձորն էին շարժվում թուրք ասկյարներ: Սարգիսը հսկում էր գյուղի հակառակ կողմի երկու նեղ արահետները, իսկ Ոսկեհատը կիսադատարկ ամրոցից դիտում էր գյուղամիջյան փոքր հրապարակն ու նրա շրջակա ծուռումուռ փողոցները:

*
* *

Ամառային պարզ գիշերվա երկնքում փայլփլող բյուրավոր աստղերի թափանցող լույսի տակ, երեսի վրա պառկած, կարելի էր տեսնել հեռվում շարժվող ամեն մի ստվեր: Այնպես որ ահավոր օրերին, կյանքի հորձանուտների մեջ փորձված երկու հայ պատանիների սուր տեսողությունից ոչ մի շարժում չէր կարող վրիպել:

Սուր էր նաև նրանց լսողությունը, բայց արագավազ գետակի խշխշոցն անընդհատ խանգարում է Նիկոլին, ուստի, թողնելով թփերում եղած իր դիտակետը՝ նա տեղափոխվում է ճանապարհի աջակողմյան մոլախոտերի մեջ, որտեղից կարելի էր ոչ միայն տեսնել, այլև պարզ լսել հեռվից եկող ամենափոքր շշուկները: Երկար ժամանակ մեծ համբերատարությամբ սպասելուց հետո վերջապես գյուղից ոչ հեռու՝ սարալանջի կողմից լսվեցին Նիկոլի համար անհասկանալի շշուկներ: Նա ավելի է սրում իր լսողությունը, և ահա մի քանի րոպեից հետո նրա աչ-

քերի առջև երևում են շարժվող մարդկանց խառնիճաղանջ ստվերներ, որոնք, աստիճանաբար խտանալով, դանդաղորեն մոտենում էին ամայի դարձած գյուղի այգիներին: Էլի մի քանի րոպե, և Նիկոլը, մեկ ակնթարթում տեղից պոկվելով, վազում է Ոսկեհատ քույրիկի մոտ՝ իր տեսածի մասին վերջինիս իրազեկ դարձնելու:

Ցավալի էր տեսնել ծանր բեռների տակ կռացած տասներկու պատանիներին, որոնցից ութը անծանոթ, բայց միևնույն վիճակին արժանացած ու տաժանակրության մատնված գերիներ էին:

Վեց զինվորներով շրջապատված բեռնակիրների երևալը մեծ ուրախություն է պատճառում ամրոցում թաքնված Ոսկեհատին ու մեր երկու ընկերներին:

– Նշանակում է, գիշերելու են գյուղում,– ենթադրում է Նիկոլը՝ հայացքը գցելով ամրոցի ծեփերին կպած ընկերոջը, որը սրտի թրթռոցով հետևում էր ասկյարների շարժումներին:

– Տեսնենք, գուցե մեր բախտից մնան,– ասում է Սարգիսը՝ էլ ավելի սրելով իր ուշադրությունը, որպեսզի լսի տասներկու բեռնակիրներին շրջապատած ասկյարների խոսակցությունը:

Կանգ առնելով երկու խրճիթների միջև ընկած փոքր տարածության վրա՝ զինվորները սկսում են շշուկով խորհրդակցել միմյանց հետ, իսկ մենք ծանր բեռների տակ ավելի քան մեկ ժամ տնքալով սպասում էինք նրանց հրամանին:

Թուրք չորս զինվորների շարժուձևից և նրանց խոսակցության բնույթից երևում էր, որ նրանք տարբեր զորամիավորումներից էին և ոչ ենթակա մեկը մյուսին: Դրա համար էլ պեպենոտ զինվորն առանց որևէ մեկին զեկուցելու, անջատվելով մյուսներից, մոտենում է մեզ և կոպտաբար կարգադրում իրեն հանձնված զինամթերքների բեռները վայր իջեցնել ու հերթականությամբ դասավորել ցանկապատի տակ: Շուտով նրա օրինակին հետևում է նաև Ոսկեհատ քույրիկի ուրագով գլխատված օնբաշու հրամանատարության ներքո եղած ասկյարներից մեկը, որն ուղեկցում էր ինը անծանոթ պատանիներին: Նա նույնպես կարգադրում է բեռները վայր դնել ու դասավորել մոտիկ գտնվող ախոռի պատի տակ, իսկ մյուսները սկսում են կապկպել տղաների ձեռքերը: Խրճիթում և նրա դիմացի տնակում տեղավորված բեռնակիրների վրա հսկողություն սահմանելու համար կարգվում են երկու հոգի, իսկ մյուսները շուտով անհայտանում են դեպի գետի հակառակ կողմի այգիները, ըստ երևույթին, քուրդ ծերուկի բնակարանում գիշերելու: Ամրոցում

թաքնվածները լարված հետևում են ոչ միայն պահակների շարժումներին, այլև տեղից հեռացող չորս ասկյարներին:

Բավականին ժամանակ է անցնում, իսկ երկու պահակները դեռ չէին քնել: Նրանք անհանգիստ քայլում էին դեսուդեն՝ ըստ երևույթին սպասելով իրենց ընկերների վերադարձին: Քիչ հետո նրանցից մեկը, մոտակա խրճիթից բավականին մեծ քանակությամբ վառելիք բերելով, սկսում է խարույկ վառել, իսկ երկրորդը գնում է դեպի գետը՝ ջուր բերելու ըստ երևույթին թեյ պատրաստելու համար: Քիչ անց խարույկին մոտենում են նաև քուրդ ծերուկի խրճիթից վերադարձած չորս ասկյարները, ու շուտով խանձված մսի հոտը տարածվում է գյուղով մեկ: Բոցավառվող խարույկի լույսի տակ պարզ երևում են վեց ասկյարների զզվելի դեմքերն ու նրանց շարժումները:

Քուրդ ծերուկից հափշտակած ուտելիքը խժռելուց հետո նրանք անսպասելիորեն բաց են անում խրճիթի, ապա ախոռի փակ դռները և խարույկի կրակները դրսից ներս շպրտում ըստ երևույթին մեզ կենդանի-կենդանի այրելու համար:

Իրենց լպիրշ արարմունքից հարբած ասկյարներից չորսը, թուրքական հիմնը երգելով, կրկին հեռանում են դեպի քուրդ ծերուկի մենավոր տնակը, իսկ մնացած երկուսը պառկում են ցանկապատի տակ դասավորված զինամթերքների պարկերի մոտ ու քիչ հետո սկսում խռմփացնել:

*
* *

Պահակների տեղն ու դասավորությունը հետախուզող Նիկոլն առանց Ոսկեհատի գիտության չէր համարձակվել ինքնագլուխ խրճիթի դուռը բացել, այնուամենայնիվ նա կարողացել էր քնած պահակների կողքից վերցնել նրանցից մեկի հրացանն ու անմիջապես վերադառնալ ամրոց: Իր համարձակ հետախուզությունից ոգևորված Նիկոլը կրկին շտապում է հետ դառնալ՝ երկրորդ պահակի հրացանը նույնպես վերցնելու, բայց Ոսկեհատ մորաքույրն արգելում է.

– Կա՛ց, զավա՛կս, այժմ միասին կերթանք,– առաջարկում է նա՝ վերցնելով տոպրակի մեջ դրված իր հանգուցյալ հայրիկի պատմական ուրագը:

Դուրս գալով ամրոցից՝ Ոսկեհատի սիրտը բաբախում է վրեժխնդրության բուռն ցասումով: Նա դեռ երեկ հայ լեռնականին հատուկ համարձակությամբ կարողացավ Մայրանուշին ոճրագործ օնբաշու անպատվությունից փրկել, այդ օրը, տասներկու պատանիների փրկության

հույսերով տարված, երկու խելահեղ տղաների՝ Սարգսի ու Նիկոլի հետ սրտի բաբախումով սպասել էր, թե երբ կհասնի վրեժի հատուցման վճռական ժամը:

Ահա այդ փոթորկված հոգով նրանք գիշերվա խավարի մեջ մարտերում փորձված հետախույզների նման ոտքի թաթերի վրա մոտենում են ցանկապատի տակ պառկած ասկյարներին:

Երկրորդ պահակի հրացանը գտնվում էր տիրոջ թևի տակ. լավ էր, որ Նիկոլը փորձ չէր արել վերցնել այն: Ոսկեհատ քույրիկը նույնպես չուզեց ձեռք տալ դրան, քանի որ քնած պահակը կարող էր արթնանալ ու տագնապի ազդանշան տալ մյուսներին:

– Լավ է սկզբում հրացանը գրկած պահակին վերջ տալ, հետո միայն երկրորդին,– շշուկով առաջարկում է Ոսկեհատը:

– Երկուսին էլ միասին, թե չէ կարող են բղավել,– պատասխանել էր Նիկոլը:

– Թող ձեր ասածը լինի, զավակնե՛րս, միայն թե համարձակ, առանց տատանվելու, հարվածե՛ք ուղիղ կրծքին, որ հավիտյան չարթնանան,– համաձայնվել էր հայ գեղջկուհին և վրեժի ցասումով լցված՝ նրանք երեքով մի ակնթարթում վերջ էին տվել թուրք պահակներին:

Ոսկեհատ քույրիկն իր ուրագի մեկ հարվածով անջատել էր հրացանը գրկած պահակի գլուխը սեփական մարմնից, իսկ երկու անփորձ պատանիները՝ Նիկոլն ու Սարգիսը, կիսամեռ վիճակում էին թողել երկրորդին ու զզվանքով անմիջապես հետ քաշվել: Միայն Ոսկեհատի սուր ոտնաուրագի կրկնակի հարվածի օգնությամբ օսմանցի զինվորը դադարել էր սեփական արյան մեջ թպրտալուց:

*
* *

Բացելով ախոռի դուռը՝ մենք ութ անծանոթ պատանիներին տեսանք անասելի դրության մեջ. նրանցից մեկը մահամերձ էր: Նիկոլի վառած լույսի օգնությամբ մեծ դժվարությամբ մեզ հաջողվեց նրանց դուրս բերել գերեզմանի նման խոնավ նկուղից: Նրանք ամբողջ ժամանակ շնչել էին ախոռի մեջ եղած կրակներից առաջացած ծխագազերի ու աղբակույտերի գարշահոտությունը: Կտրատելով նրանց ձեռքերի կապերը՝ մենք յոթ ընկերներով, համարյա թե գրկելով կմախքացած պատանիներին, դուրս բերեցինք ախոռից և ուղղություն վերցրինք դեպի խորխորատները՝ չմոռանալով վերցնել նաև սպանված երկու պահակների հրացանները:

Ոսկեհատի գլխավորությամբ մեր տասներկու պատանիների հանդիպումը խորխորատների մեջ թաքնված կանանց ու երեխաների հետ շատ սրտառուչ էր: Մեկը մյուսին գրկելով՝ ուրախությունից սկսեցին արտասվել: Առանձնապես մեծ հուզմունքի մեջ էր Մայրանուշը: Նա մի քանի րոպեից հետո ազատագրված ութ պատանիների մեջ անսպասելիորեն ճանաչեց կրակների բովով անցած իր հարազատ քրոջ որդի Հովսեփին, որին երկու տարուց ավելի էր, ինչ չէր տեսել ու համարել էր զոհված:

Հանկարծակի հանդիպելով միմյանց՝ տղան ու մորաքույրն ուրախությունից ուշքի չէին գալիս. գրկախառնվելով նրանք երկար ժամանակ մեկը մյուսից չէին ուզում անջատվել:

– Բավական է, որքան արտասվեցիք, այժմ ուրախացե՛ք և պատրաստվե՛ք շարժվելու,– առաջարկեց Ոսկեհատը՝ վերցնելով իր տոպրակը, որի մեջ դրված էր հանգուցյալ վարպետ Սահակի պատմական ուրագը:

– Ո՞ր ճանապարհով ենք գնալու,– հարցրեց Մնոն՝ վերցնելով գլխատված թուրք պահակների հրացաններից մեկն ու կանգնեց Ոսկեհատ քույրիկի կողքին:

– Գնալու ենք լեռնային այն արահետով, որտեղից ոչ մի թուրք ասկյար օրը ցերեկով անցնել չի կարող, զավա՛կս,– պատասխանեց նա և առաջարկեց կանանց դեն գցել թոնրի խարծիկաթները, իսկ ավար վերցրած երկրորդ հրացանը ցանկացավ հանձնել Արևիկին:

– Չե՛մ հանձնի,– վճռականապես բողոքեց Նիկոլը՝ նայելով Մնոյին:

– Չենք վերցնի, զավա՛կս, միայն թե քեզ համար ծանր կլինի լեռնալանջերով բարձրանալիս,– գորովանքով ասաց Ոսկեհատը:

– Գերությունից փախչելու ժամանակ Մոսուլից մինչև Հայոց ձոր ավելի ծանր բեռներ եմ շալակել, քան թե հրացանը,– հպարտությամբ հայտարարեց նա և աղջկա ամաչկոտությամբ կարմրելով՝ գլուխը կախ գցեց:

– Մի՛ հուզվի՛ր, զավա՛կս, թող մնա քեզ մոտ, միայն թե հոգնելու դեպքում հանձնի՛ր ուրիշներին:

– Հանգի՛ստ կաց, մորաքո՛ւյր, ձեզնից ոչ մի քայլ հետ չեմ մնա, իսկ հրացանը կտանեմ Սևուկի հետ,– հայտարարեց նա ու շեղբաձև սվինը հանձնեց Սարգսին:

Մենք բոլորս կազմ ու պատրաստ կանգնել ու սպասում էինք մեզ առաջնորդող Ոսկեհատի ու Մնոյի կարգադրությանը: Ութ անծանոթ տղաներից մեկը, որն ախոռից դուրս բերելու պահին մահամերձ վիճակում էր, այժմ լեռնային թարմ օդի մեջ և ազատության հույսով ներշնչված, միանգամից փոխվել էր. կարծես թե երեկվա ծանր բեռի տակ

ճկռող պատանին չլիներ: Այնուամենայնիվ Մայրանուշն ու Արևիկը նրան մենակ չթողեցին: Պատանի Հապետի ձեռքից բռնելով՝ երեքով հետևեցին խորխորատներից հեռացող փախստականներին, որոնց թիվը բավականին մեծացել էր՝ հասնելով քսաներեքի:

Անտառից դեպի հյուսիս-արևմուտք գտնվող կանաչապատ սարից շրջվելով նրա հակառակ կողմը՝ կեսգիշերին հասանք Հովաձոր, որտեղից ըստ երևույթին ո՛չ ռուսներ էին անցել և ո՛չ էլ թուրքական զորամասեր: Լռություն էր տիրում անդունդանման Հովաձորում ու դրա երկու կողմից ձգվող լեռնալանջերում: Զգուշության նպատակով մեզնից ոչ մեկը չէր խոսում անգամ շշուկով: Միայն շատ հեռվից լսվում էր խոր անդունդից հոսող արագավազ գետակի խշշոցը, իսկ լեռնալանջի քարափներից և մացառների միջից մերթընդմերթ գիշատիչ թռչունների կռկռոցներ: Ըստ երևույթին նրանք զգում էին մարդկային էակների ներկայությունը գիշերվա այդ խաղաղ միջավայրում. դրա համար էլ զգուշացնում էին յուրայիններին հեռու մնալ վերահաս վտանգից:

Զգույշ էր նաև Ոսկեհատ քույրիկը, որը լեռնալանջի նեղ արահետով քարավանը տանում էր ցած, որտեղից արդեն սկսվելու էր ուղիղ ճանապարհը դեպի Հայոց ձոր:

Սարի թիկունքից հենց նոր դուրս եկած ամառվա պայծառ արևը շեղությամբ ծակում էր առաջ շարժվողների՝ անքնությունից կարմրած աչքերը, իսկ մենք դեռ շարունակում էինք սարալանջից աստիճանաբար իջնել՝ դիմացից երևացող անտառի նմանվող մացառների մեջ կանգ առնելու համար: Խորխորատներից մինչև Հայոց ձորի սահմանի հարթավայր տանող լեռնային կարճ ճանապարհը հսկայական ու դժվարին տարածություն էր, որը կտրել և անցնել, այն էլ գիշերվա մթության պայմաններում, այնքան էլ հեշտ ու հանգիստ չէր: Սակայն թուրք բարբարոսների գերությունից ազատագրված հայ կանանց ու պատանիներին ոչ մի արգելք չէր կարող խանգարել մահվան այդ օղակից դուրս գալու համար: Այնպես որ լեռնային այդ երկար ու դժվարին տարածությունն արդեն հետևում էր մնացել: Դուրս գալով գիշերվա խավար աղջամուղջից՝ հենց նոր ծագած արևի պայծառ շողերի տակ երևում էին քայլողների արյունոտված մերկ ոտքերը: Նրանցից շատերը, անգամ ֆիզիկապես հյուծված ութ անծանոթ պատանիները անզգայացած մարդու նման ո՛չ ցավ էին զգում և ո՛չ էլ քաղց:

Անցած օրերի մտքերով տարված՝ մեզնից ոչ մեկը ներքուստ հոգնածություն չէր զգում և շարունակում էր առաջ շարժվել՝ աշխատելով հետ չմնալ մեզ առաջնորդող Ոսկեհատ քույրիկից: Բավականին ճանա-

պարի կտրելով, այնուամենայնիվ, տղաները սկսեցին դանդաղեցնել իրենց քայլերը, առանձնապես գերությունից հենց նոր ազատագրված ութ պատանիները, որոնք այլևս շարժվել չէին կարող: Հաղթահարելով լեռնալանջից դեպի ցած մեզ հանդիպող բազմաթիվ խոչընդոտները՝ վերջապես օրվա կեսին հասանք Հայոց ձորի սահմանագլխի կանաչապատ հարթ տարածությունը և ապահովության նպատակով անմիջապես թաքնվեցինք խիտ մացառների մեջ:

*
* *

Հողաթմբի փոքրիկ բարձունքից երևում էր երկու սարերի միջև ընկած բավականին ընդարձակ կանաչ հարթավայրը: Ավելի պարզ էին երևում նաև երկու կողմից մեզ շրջապատող սարալանջերը, Աղբակից ու Նորդուզից դեպի Հայոց ձոր գնացող, սպիտակին տվող ճանապարհը, այնպես որ ոչ մի շարժում չէր կարող մեր տեսադաշտից աննկատ մնալ: Այդ հսկայական տարածության վրա չէին երևում ոչ մի կենդանի արարած և ոչ մի մարդկային ստվեր: Հովտում տիրում էր նաև խոր լռություն, երեկվա երկու հակադիր ուժերի կրակոցների ձայները նույնպես կտրվել, մնացել էին հետևում: Ոչ մի ձայն չէր լսվում, բացի թփերի միջից շարժվող թռչունների ծվծվոցներից և հատուկենտ մորեխների ճռճռոցներից:

Թուրք երկու պահակներին գլխատելուց և խորխորատներից շտապ հեռանալուց հետո մենք ժամանակ չէինք ունեցել ութ պատանիներից իմանալ նրանց ով լինելը, բացի Հապետից, որին առաջին իսկ րոպեներին ճանաչեց Մայրանուշը:

– Մո՛տ եկեք, զավակնե՛րս, միատեղ հանգստանանք մինչև երեկո,– բարձրաձայնեց Ոսկեհատը՝ մոտենալով ստվերի տակ նստած մեր վեց ընկերներին, որտեղ Նիկոլի շապիկի կտորներով մեծ ջանասիրությամբ մաքրում էինք ավար վերցրած հրացանի քանդված մասերը:

– Միաժամանակ լսենք մեր հայրենակիցների պատմությունն իրենց գերվելու մասին,– առաջարկեց Արևիկը:

– Քնել են արդեն, հարկ չկա արթնացնելու,– առարկեց Մայրանուշը՝ փաղաքշելով իր ծնկին դրված և քնից ծանրացած Հապետի գլուխը:

– Այդ դեպքում դուք էլ քնեք,– առաջարկեց Ոսկեհատը՝ ակնարկելով մեզ, որ պատանեկան հետաքրքրությամբ տարվել էինք թուրքական մաուզեր հրացանի ուսումնասիրությամբ:

– Քաղցած ենք, մորաքո՛ւյր, Սևուկի ու Նիկոլի հետ գնալու ենք գետնապտուղներ հավաքելու,– ասաց Մնոն՝ շտապելով հավաքել հրացանի մասերը:

– Դուք հանգստացե՛ք, զավակնե՛րս, Մայրանուշը Արևիկի հետ կհավաքի,– հակադրվեց Ոսկեհատը:

Չլսել բոլորիս հարգանքը վայելող կնոջն անկարելի էր, ուստի մի կողմ դնելով զենքերը՝ մենք վեց ընկերներով նույնպես պառկեցինք՝ լսելու բոլորովին նոր պատմություններ:

Բավականին ժամանակ էր անցել, բայց մեր ընկերների մեծ մասը դեռ լրիվ չէր ծանոթացել տաժանակրությունից ազատագրված հայ պատանիների հետ, բացի Մայրանուշից: Վերջինս ճանապարհին շշուկով լսել էր Հովսեփի կցկտուր պատմությունը Աղբակի շրջակա գյուղերի հայ բնակչության կոտորածների մասին, դրա համար էլ ամբողջ ժամանակ արտասուք թափելով՝ հետևում էր մեզ:

*
* *

Արեգակը երկնակամարից բավականաչափ թեքվել էր դեպի արևմուտք, իսկ տղաներից շատերը սկսել էին ագահաբար ուտել կանանց հավաքած համեղ գետնապտուղները:

– Քի՛չ կերեք, զավակնե՛րս, չվնասվեք,– զգուշացրեց Ոսկեհատը՝ հողից մաքրելով կանաչների վրա թափված գետնապտուղները:

– Մոսուլից մինչև հայրենի գյուղ՝ գերությունից փախչելու ութ օրվա ճանապարհին, կանաչից բացի ուրիշ ոչ մի բանով չենք սնվել, – հայտարարեց Մնոն՝ իր հերթին խժռելով դաշտից հավաքած երնջակի թարմ զոխերը:

– Թող Արարիչը պատժի սուլթանին ու նրա դահիճներին, որ ձեզ այդ օրը հասցրին, զավակնե՛րս,– ասաց Ոսկեհատն ու ավելացրեց,– քի՛չ էլ համբերեք, եթե հրաշքով կրկին թուրքերի չհանդիպենք, ապա լուսաբացին կլինենք Հայոց ձորում և ընդմիշտ ազատված կլինենք բարբարոսներից:

– Գուցե թուրքերն այժմ Հայոց ձորում են,– ասաց Սաթենիկը, որը, չգիտես ինչու, այդ օրը ակտիվ մասնակցում էր խոսակցություններին:

– Չհավատաք, զավակնե՛րս, որ թուրք քոսոտ ասկյարներն այնքան արագ շարժվեն առաջ, այն էլ Նորդուզի սարսափելի լեռներով դեպի Հայոց ձոր,– վճռական հայտարարեց Ոսկեհատը՝ խնդրելով ազատված տղաներին պատմել իրենց գլխին եկած դեպքերի մասին:

Պատանիներից հասակով ամենամեծը Վարուժանն էր. կլիներ տասնվեց տարեկանից ոչ ավելի, իսկ Սանթուրը, Աղասին, Հապետը, Արտաշեսը, Հովսեփը և մյուսները՝ տասնչորսից-տասնհինգ, որոնք կոտորածի ահավոր օրերին տասնյակ այլ տղաների հետ, զրկվելով հա-

ռազատ ծնողներից, գերվել էին Աղբակի թուրք և քուրդ բեկերի կողմից ու ծառայել որպես ստրուկներ:

Իր ծնողների ու համագյուղացիների մասին Վարուժանն առաջին իսկ ոռպեին խոսել չկարողացավ: Նա մի պահ լռեց և հուզմունքից սկսեց արտասվել: Տեսնելով իրենց ավագ ընկերոջ աչքերից թափվող արտասուքները՝ մյուսները նույնպես հուզվեցին՝ հետևելով նրա օրինակին: Հենց դա էլ բավական էր հասկանալու, թե ինչ ծանր մղձավանջների մեջ էին ապրել ընդամենը կես օր առաջ փրկված պատանիները:

Տեսնելով տղաների ընկճված տրամադրությունը՝ Ոսկեհատ քույրիկը ստիպված էր մի քանի ոգևորիչ խոսքերով դադարեցնել նրանց հեկեկոցները:

– Ձեզ հետ պատահած վիշտը ամենքիս է պատել,– ասաց նա և ավելացրեց,– թուրք բարբարոսների յաթաղանից ընկան ոչ միայն ձեր ծնողներն ու հարազատները, այլ հարյուրհազարավոր հայ մարդիկ՝ կանայք, ծերեր, երեխաներ, որոնց նկատմամբ կատարած ոճիրը երբեք չի մոռացվի: Բայց հայ տղաներին հատուկ չէ ընկճվել, ընդհակառակը, պետք է լինել խիզախ, համարձակ ու անվախ, ինչպես ձեր կողքին նստած պատանիները,– ակնարկելով Սարգսին, Մնոյին, Նիկոլին, որոնք այդ նույն գիշերը տեղի ունեցած դեպքերի հերոսներն էին:

– Մի՞թե նույն վիճակում չեն եղել նրանք և մյուսները, որոնք, արհամարհելով մահը, մերկ ու քաղցած, հայրենիքից շատ հեռու, Մոսուլի դռներից փախչելով, հասել են Հայոց ձոր, միայն թե ազատ լինեն անարգ թշնամու գերությունից,– ասաց Մայրանուշը, որը, մինչ այդ լուռ նստած, խոսակցությանը բոլորովին չէր մասնակցում:

– Չլինեին նրանք, մենք և դուք այսօր գերությունից ազատված չէինք լինի,– ավելացրեց Արևիկը՝ շոյելով իր կողքին նստած Հայկի սև ու փարթամ մազերը:

Լսելով հայ կանանց ոգևորիչ խոսքերը՝ Վարուժանն անմիջապես սթափվեց, դադարեց արտասվել ու սկսեց պատմել Աղբակ և Խոշաբ գյուղերի հայ բնակչության սարսափելի ջարդերի մասին:

*
* *

Ապրիլյան ահավոր օրերին թուրքական պետության կողմից հավաքագրված մարդասպանները, գավառական մդուրների[57] ու քուրդ բեկե-

[57] մդուր – *նույնն է՝* մյուդիր՝ թուրք կառավարիչ

րի գլխավորությամբ հանկարծակիի բերելով տեղաբնակներին, սկսել էին բնաջնջման ենթարկել հայ ազգաբնակչությանը:

Վարուժանի հայրը կոտորածի առաջին իսկ պահին կարողացել էր մի խումբ հայ երիտասարդների հետ բարձրանալ լեռներն ու ինքնապաշտպանության դիմել:

Տասն օրվա համառ կռիվներից հետո ճեղքելով թշնամու շրջապատման սեղմ օղակը, վրեժի ցասումով լցված՝ հայ մարտիկները ոչնչացրել էին ավելի քան քառասուն ոճրագործների, այդ թվում նաև գավառական մդուրի օգնականին: Ինքնապաշտպանության նպատակով հայերի այդ փոքրաթիվ ջոկատի համարձակ պայքարն օրինակ էր հանդիսացել շատ-շատերի համար: Սակայն կտրված լինելով հայաշատ շրջաններից՝ նրանք չէին կարողացել մինչև վերջ դիմադրել տասնապատիկ անգամ գերազանցող թշնամու ուժերին, ուստի ստիպված էին հեռանալ Պարսկաստան՝ ռուսական առաջապահ զորքերին միանալու: Իհարկե, նրանց կենդանի լինելու մասին Վարուժանին ոչ մի բան հայտնի չէր: Այդ դեպքից գազազած թուրքական բանդաներն այլևս ոչ մեկին չէին խնայել: Ոճրագործները հայ տղամարդկանց կոտորելուց հետո՝ իրենց նահանջի վերջին օրերին, հավաքելով կանանց ու երեխաներին, լցրել էին ձմեռվա ընթացքում անասնակերից դատարկված մարագների մեջ ու կենդանի-կենդանի այրել բոլորին: Վարուժանի, Սանթուրի և մյուս պատանիների մայրերն ու հարազատներն այրվել էին իրենց աչքի առաջ:

Հապետի մայրը, իր երկու փոքր երեխաներին գրկած, կարողացել էր այրված դռնակի ճեղքից դուրս փախչել բոցավառվող մարագից, բայց դեռ մի քանի քայլ չհեռացած՝ վայր էր ընկել՝ ամբողջովին սևացած:

– Զարմանալին այն էր,– ասաց Վարուժանը,– որ դժբախտ կինը, մինչև իր վերջին շունչը երկու փոքրիկ զավակներին կրծքից վայր չդրեց, որոնք այդպես էլ վառվելով կպել էին մոր մարմնին՝ կազմելով մի ամբողջություն:

Թուրք զինվորներից մեկը դժբախտ կանանցից երկուսին առանձնացրել էր մյուսներից. շատերին թվացել էր, թե նրանց հղի լինելու պատճառով, ըստ երևույթին, ազատում են մահվան դատապարտումից: Ավա՜ղ, զուր հույսեր, նրանք մի քանի րոպեից հետո հարյուրավոր կանանց ու երեխաների ներկայությամբ բարբարոսաբար գետին են տապալվել: Ոճրագործները, չբավարարվելով երկուսին սվինահարելուց, դաշույնների հարվածներով ճեղքել էին դժբախտների որովայնը և նրանց արգանդից դուրս հանել դեռ լույս աշխարհ չեկած զավակներին ու գազանաբար հոշոտել:

Վարուժանի հակիրճ պատմությունը վրեժխնդրության բուռն ցասում առաջացրեց տղաների առանց այն էլ վառված սրտերում:

Այդպիսի անմարդկային ոճրագործությունների մասին առաջին անգամ լսելով՝ մեզնից ոչ մեկը այլևս չէր կարողանում ունկնդրել տաժանակրության մեջ հյուծված տղայի հուզիչ պատմությունը: Հապետը, լսելով իր սիրելի մոր, քրոջ և եղբոր՝ բոցերի մեջ այրվելու մասին ընկերոջ պատմությունը, առաջին իսկ վայրկյաններին խիստ հուզմունքից նստած տեղից հեռացավ, իսկ նրա օրինակին հետևեցին նաև Հովսեփը, Սանթուրն ու Աղասին:

Կանանցից ոչ մեկը չէր կարողանում հանգիստ լսել այն, ինչ կատարվել էր այդ ահավոր օրերին: Նրանք բոլորն էլ արտասվում էին այնպես, ինչպես մայրը լաց է լինում իր զոհված զավակի թարմ շիրիմի վրա:

Ոսկեհատ քույրիկը, որը մշտապես ոգևորում էր մեզ բոլորիս, այս անգամ ինքն էլ հուզվեց և սկսեց արտասվել: Նստած կանայք ու տղաների մեծ մասը դեռ շարունակում էին լսել պատանի Վարուժանի պատմությունը, երբ հանկարծ հեռվից երևացին հեծյալ երկու մեծ զորամիավորումներ, որոնք Հայոց ձորի ճանապարհով սրընթաց սլանում էին դեպի հարավ-արևմուտք:

Կանայք ու տղաները մի ակնթարթում ցրվելով՝ թաքնվեցին մացառների մեջ՝ հետևելով առաջ շարժվող զորքերին, որոնք գնալով մեր աչքին ավելի էին շատանում: Հեծյալների հիմնական մասը շարժվում էր ուղիղ ճանապարհով՝ իրենց հետևից թողնելով փոշու թանձր ամպեր: Նրանց երկու կողմերից, միմյանցից բաժանված, քառատրոփ արշավում էին նաև փոքրաթիվ խմբեր, որոնցից մեկը՝ ուղիղ դեպի այն փոքրիկ բլուրը, որի մացառոտ լանջին թաքնվել էինք մենք: Հեծյալները դեռ շատ հեռու տարածության վրա էին գտնվում, ուստի նրանց մասին ճիշտ գաղափար կազմել տվյալ պահին հնարավոր չէր:

– Ռուսներ են,– հայտարարեց Նիկոլը՝ ուշադրությամբ դիտելով դեպի մեզ շարժվող հեծյալների խմբին, որը հազիվ էր նշմարվում բարձրացած թանձր փոշու քուլաների մեջ:

– Չեմ հավատում, որ նրանք ռուսներ լինեն,– ասաց Վարուժանը իր կողքին պառկած Մնոյին:

– Կասկած չկա, նրանք ռուս կազակներ են,– պատասխանեց մեր խմբի ղեկավարը՝ ցույց տալով նրանց նիզակների խիտ շարքերը, որոնք շատ նման էին նորատունկ անտառի:

– Ինչևիցե, համբերենք, մինչև կանցնեն,– միջամտեցի ես՝ զգուշացնելով տղաներին ավելի խոր թաքնվել խիտ մացառների մեջ:

Ժամանակը խիստ դանդաղ էր անցնում, իսկ մենք շունչներս պահած, սրտի թրթռոցով հետևում էինք մոտեցող հեծելազորին:

Մի քանի րոպեից արդեն պարզ երևացին ձիավորների երկար նիզակները, անգամ նրանց սև գլխարկները: Այն պահին, երբ հարթավայրի ձախակողմյան հատվածից հեծյալներից տասնհինգ-քսան հոգի մոտենում էին բլրին, այդ նույն ժամանակ էլ ճանապարհի կողմից բարձր մոլախոտերի միջից հանկարծակի դուրս եկան քրդական տարազով զինված մարդիկ ու վազելով մոտեցան բլրին՝ ըստ երևույթին մացառների մեջ թաքնվելու: Երբ նրանց տեսանք, մեզ համար արդեն պարզ դարձավ, որ դեպի արևմուտք շարժվող հեծյալ զորամասերը ռուսներ էին, իսկ մոլախոտերի միջից փախչողները թուրքական զորամասի քողարկված հետախույզներ, որոնք, տեսնելով իրենց վրա արշավող հեծյալներին, հապճեպորեն թաքնվում էին մացառների մեջ:

– Իմ ձեռքից չեք պրծնի, դահիճնե՛ր,– կիսաձայն կանչեց Մնոն և հրացանի փողը ուղղեց երեսի վրա պառկած թուրքական բանակի հետախույզի կողմը:

Չնայած Մնոն առաջին անգամ էր կրակում, բայց քսան-երեսուն մետրի վրա կուչ եկած թուրքին մեխեց իր տեղում:

Նրա գետնին փռվելը և մնացած երեքի փախուստը մեկ եղավ, բայց ոչ թե դեպի հետ, այլ ուղիղ Մնոյի կողմը:

Հենց այդ էլ Մնոյին ու Նիկոլին հարկավոր էր, որ մոտիկից ավելի լավ նշան բռնեն:

Էլի մի քանի քայլ. այս անգամ մեջքի վրա ընկան երկուսը, իսկ վերջինը, տեսնելով առջևից կրակողներին, հանկարծակիի գալով հետ դարձավ ու դիմեց փախուստի, բայց վրա հասած ռուսական հեծյալ կազակի հուժկու հարվածը ստիպեց նրան կանգ առնել ու ձեռքերը վեր բարձրացնել: Տեսնելով ռուս կազակներին՝ մենք բոլորս միաժամանակ թաքնված տեղից դուրս թռանք և ուրախության արտասուքն աչքերիս՝ մոտեցանք մեր փրկարարներին:

Ռուսական հեծյալ ջոկատի զինվորները մեզ ընդունեցին ջերմորեն ու գրկաբաց, երբ վրա հասած հայ կամավորների թարգմանությամբ լսեցին կանանց ու պատանիների՝ սուլթանական բարբարոսների գերությունից փախչելու և մահվան օղակից դուրս գալու մասին Մնոյի կցկտուր պատմությունը: Դեպի հայրենի գյուղ հետախուզության գնալու մեր վեց ընկերների բարի ցանկությունների, այնուհետև Ոսկեհատ քույրիկի կողմից թուրքական բանակի օնբաշուն գլխատելու վերաբեր-

յալ պատմությունների մանրամասնությունները իմանալով՝ հայ կամավորները ուղղակի հրճվում էին:

– Հայ զինվորները կարող են պարծանքով հպարտանալ ձեզանով, սիրելի՛ հայրենակիցնե՛ր, եղբայրնե՛ր և քույրե՛ր,– հայտարարեց նրանցից մեկը և ամուր սեղմեց կանանց ու տղաների ճաքճքված ձեռքերը:

Մեծ եղավ հեծյալների ուրախությունը, երբ Ոսկեհատ քույրիկը պատմեց Մնոյի և Արմենակի ղեկավարությամբ քսաներեք հայ տղաների փախուստի մասին՝ սկսած Մոսուլի լեռներից մինչև Հայոց ձոր, հետո էլ ներկայացրեց մարդասպան շեյխ Խդիրին քարկոծելու պատմությունը: Սակայն, երբ լսեցին Վարուժանի և ինը հայ տղաների սոսկալի տանջանքների ու նրանց հարազատներին հրդեհի բոցերի մեջ այրելու մասին, նրանք մի պահ լռեցին: Զինվորների դեմքերին մինչ այդ եղած ժպիտը միանգամից փոխարինվեց խիստ լարվածությամբ, կարծես նրանց աչքերից կրակ ցայտեց: Առանձնապես շատ հուզվեցին, երբ Վարուժանը, արտասուքն աչքերին, հիշեցրեց հղի գեղջկուհուն սվինահար անելու մասին: Լսելով պատանու վերջին խոսքերը՝ հայ կամավորները, վրեժով լցված, մի պահ իրենց բռունցքները ամուր սեղմեցին: Նրանք այնքան խիստ ազդվեցին, որ այլևս դադարեցին այդ սարսափելի եղեռնի մասին որևէ հարցուփորձ անել:

Զինվորների այդ լռությունը կարող էր երկար շարունակվել, եթե հեռվից մեզ մոտեցող կազակներից մեկը հանկարծակի չգրկեր չար Մնոյին ու չսեղմեր իր կրծքին: Նրանց գրկախառնվելը անակնկալ էր և շատ հուզիչ. չափից դուրս ուրախացան ոչ միայն գրկախառնվողները, այլև բոլորս:

Ներկա գտնվող հայ կանայք ու պատանիները, տեսնելով երկուսին, մի պահ կարծեցին, թե նրանք հարազատ եղբայրներ են: Իսկապես, ոչ միայն նրանք, այլև մենք բոլորս Հայոց ձորում եղած մի քանի օրվա ընթացքում այնքան էինք մտերմացել ռուսական բանակի հասարակ զինվորների հետ, որ թվում էր, թե մի մորից ծնված հարազատ եղբայրներ ենք: Մնոյին գրկողը Հայոց ձորի այգիների մեջ տեղավորված հեծյալ ջոկատի զինվորներից մեկն էր, որից հինգ օր առաջ հետախուզության գնալիս բաժանվել էինք: Դա մեր շատ սիրելի բարեկամ Պյոտրն էր, որին մենք բոլորս Պետրոս էինք կանչում: Նա ռուսական հեծյալ ջոկատի կազակներից էր, որին ամեն օր հանդիպելիս հյուրասիրում էինք տարբեր մրգերով, իսկ վերջինս մեզ՝ շաքարով ու քաղցր խոսքերով:

– Քրիվո՛ Պետրոս, խլեբ-վոդա խորոշո՞,– կարմրելով հարցրի ես՝ ինքս էլ մտերմաբար բռնելով նրա ձեռքը և նայելով վերջինիս շեկ մազերին ու կապույտ աչքերին:

– Խաց, դժուր, լա՛վ, խորոշո՛,– ծիծաղելով պատասխանեց Պետրոսը՝ բացելով սադաֆի նման սպիտակ ատամները:

Տեսնելով Պետրոսին՝ մեր վեց ընկերների ուրախությանը չափ ու սահման չկար: Մեզ ռուսախոսի տեղ դնելով՝ հպարտորեն զարմացնում էինք ընդամենը մի քանի ժամ առաջ ազատված հայ պատանիներին, բայց, իհարկե, ինքներս էլ չգիտեինք, թե ինչ ենք խոսում, բացի *հաց*, *ջուր* և ռուսական երկու «լավ» բառերից ուրիշ ոչինչ հոլովել չէինք կարող: Տեսնելով մեր ընկերների մտերմական վարվելակերպը ու անկաշկանդ զրույցը ռուս կազակի հետ՝ Վարուժանը զարմացած հարցրեց.

– Մեկ ամսվա ընթացքում ինչպե՞ս եք սովորել ռուսերեն,– փորձելով ինքն էլ կրկնել մեր կողմից արտասանած երեք բառերը:

– Պետրոս, իդի սուդա, խլեբ, վոդա օչեն խորոշո,– թութակի պես անընդհատ կրկնում էր Հայկը, ինչպես առաջներում հայերեն չիմացող բիերցի տերտերը, որը եկեղեցու պատարագի սկզբից մինչև վերջ իր սերտած ալելուիայով սկսում էր՝ վերջացնելով միևնույն ալելուիայով:

Ուշ էր արդեն, ամառվա երկար օրվա արևը վաղուց թեքվել էր հորիզոնից այն կողմ, իսկ երեկոյան մթնշաղն աստիճանաբար տարածվում էր երկու սարերի միջև ընկած հարթ տարածության վրա: Ռուս զինվորները դեպի հարավ շարժվող իրենց հեծյալ ուժերին հասնելու նպատակով այլևս մեզ երկար չպահեցին: Մեր փախստականների խմբին հյուրասիրելուց հետո նրանք երկու ձիաքարշ սայլեր տրամադրեցին և առաջարկեցին նույն երեկոյան մեկնել դեպի Հայոց ձոր՝ յուրայիններին հասնելու:

*
* *

Հաջորդ օրվա մայրամուտին սրտի թրթռոցով մոտեցանք գյուղի ծայրամասի խրճիթին, որտեղ պետք է գրկախառնվեինք մեզ դիմավորող հարազատների հետ և ողջագուրվելուց հետո պատմեինք մեր հանդուգն քայլի ու խելահեղության մասին, իհարկե նաև խիստ կշտամբանքի արժանանայինք նրանց կողմից: Իսկապես, դեռ երեկ՝ Հովածորի քարքարոտ արահետով քայլելիս, այդպես էինք ենթադրում, և այդպես էլ կլիներ անպայման, եթե իրոք հանդիպեինք: Գուցե այդ հանդիպումը լիներ ավելի հանդիսավոր ու սրտառուչ, երբ մեզ մոտ տեսնեին գերությունից փրկված

հայ կանանց ու պատանիներին, որոնք նույնպես հարազատ էին ու արյունակից նրանց բոլորին:

Դժբախտաբար, տեղ հասնելով, մեր երազանքն ի չիք դարձավ. գյուղում, բացի մլավող սև կատուներից ու այգիներում հասած մրգերը կտցահարող թռչուններից, ուրիշ ոչ մի կենդանի էակի չհանդիպեցինք: Տեսնելով ամայի գյուղն իր դատարկ խրճիթներով՝ տղաների քիչ առաջվա ուրախությանը փոխարինեց տրտմությունը:

– Ո՞ւր են գնացել,– տխրությամբ հարցրեց Նիկոլը, որը օտար մարդու պես նայեց իրենց խրճիթի բաց դռանը, որտեղից դեռ փչում էր թոնրում թխած թարմ հացի հոտն ու բուրմունքը:

– Գաղթել են, բայց ո՞ւր և ե՞րբ, հարկավոր է պարզել,– ցավով պատասխանեց Մնոն՝ ինքը նույնպես հայացքն ուղղելով դատարկ խրճիթների բաց դռներին:

– Ումի՞ց կարող ենք իմանալ, եթե բոլոր գյուղերն էլ դատարկ են,– ասաց Արամը՝ հազիվ զսպելով աչքերից թափվող արտասուքը:

– Ընկճվելու հարկ չկա, զավակնե՛րս, ահավոր վտանգը մնացել է հետևում: Այժմ բոլորս ընդմիշտ փրկված ենք օսմանյան բարբարոսների գերությունից, իսկ հարազատներին հասնելը օրվա կամ ժամերի հարց է,– պատասխանեց Ոսկեհատ քույրիկը՝ առաջարկելով կանանց ու տղաներին հանգստանալ մինչև եկող առավոտ:

*
* *

Հարություն Եղոյանի նախկինում զբաղեցրած մեծ խրճիթի հարթ կտուրին պառկել էինք կողք կողքի, ինչպես գյուղական բազմանդամ ընտանիքի հարազատ զավակներ: Չնայած խիստ հոգնել էինք, բայց մեզնից և ոչ մեկը առաջին ժամերին աչք չփակեց: Լսում էինք Ոսկեհատ քույրիկի պատմությունը ժողովրդի անցած ահավոր ու դաժան օրերի մասին, որի ականատեսը ոչ միայն ինքն էր, այլև մենք բոլորս: Վարուժանը կրկին պատմեց իրենց գյուղի կանանց ու երեխաներին այրելու սարսափելի դեպքերի մասին. նրա ամեն մի խոսքը սարսուռ էր առաջացնում, ու ատելությամբ էինք լցվում չար ոսոխների նկատմամբ: Նա պատմեց այն վաթսուն օրերի անասելի տանջանքների մասին, որի մեջ ապրել ու քարշ էին տվել իրենց դժբախտ կյանքը: Ահավոր կոտորածի օրերին Վարուժանն իր քսանհինգ ընկերներով գերվեց: Թուրքերը մոլլաների ու շեյխերի միջոցով ստիպել էին պատանիներին փոխել իրենց

հավատը, իսկ նրանք, ովքեր հրաժարվելու փորձ էին կատարել, ոչնչացվել էին հենց ճանապարհին պատահած փոսերի մեջ ու թողնվել բաց երկնքի տակ՝ անթաղ:

Վարուժանը իր ինը ընկերներով փախչելով հասել էր մինչև Նորդուզի լեռները՝ ռուսական զորքերին հասնելու, բայց շուտով թուրք ասկյարների ձեռքն էին ընկել: Նրանցից մեկը, երեկ գիշեր ծանր բեռի տակ ուժասպառ լինելով, տեղնուտեղը մեր աչքի առջև սրախողխող արվեց:

Մենք բոլորս խիստ հուզմունքով կրկին լսեցինք Վարուժանի պատմությունը և էլ ոչ մի կերպ չկարողացանք թեկուզ մեկ վայրկյան քնել: Լսելով սարսափների մեջ ապրող այդ պատանուն, գիշերվա խավարում մեր բռունցքները սեղմած՝ ատելությամբ էինք հիշում օսմանյան դահիճների կողմից կատարված այդ ոճրագործությունները, որոնք տեղի էին ունեցել մեր սեփական աչքերի առաջ:

– Վերջ տանք այդ տխրալի պատմությանը, անցածը թող այլևս հետ չդառնա,– առաջարկեց Մայրանուշն ու ավելացրեց,– թող այժմ Սևուկը պատմի, թե ինչպես թոնրի շամփուրով սպանեց մարդասպանների ղեկավար շեյխ Խդիրին ու նախկին ավազակ ծերուկ Մամոյին:

– Իսկ Մնոն թող պատմի թուրք հետախույզներին ոչնչացնելու մասին,– ավելացրեց Արևիկը:

Իհարկե, Մայրանուշի և Արևիկի առաջարկությունները աշխուժացրին բոլորիս, առավել ևս Վարուժանի ընկերներին, որոնց համար այդ պատմությունները բոլորովին նորություն էին:

Իմ և Մնոյի պատմությունը ընդմիջումներով սկսվեց շատ հեռվից: Սկզբում հիշեցրի հայ գյուղացիների ոչխարների հոտը թալանող ավազակներին պատժելու, ջրաղացպանին խեղդող չորս թուրք ավազակներին զինաթափելու, շատախցի հայ գյուղացիների հարսանյաց նվերները թալանող թուրք ոստիկաններին քարաժայռից գլորելու, թուրք հարկահավաքների՝ հորի մեջ ընկելու վաղեմի պատմությունները և մի շարք այլ հետաքրքիր դեպքեր, հետո նոր միայն կցկտուր հիշեցրի Ծաղկասարի գագաթին թաղված եղբորս գերեզմանի վրա տված իմ երդման մասին:

Մեր երկուսի կարճ պատմությանը հաջորդեց Արևիկի սկսած երկար հեքիաթը, որը լսել չկարողացավ և ոչ ոք: Հոգնածությունից քնել էին բոլորը, այդ թվում նաև ինքը՝ Արևիկը: Այդպես հոգնած ուղեղով պառկած մրմնջում էի երազների մեջ:

Չգիտեմ՝ երազի մեջ էի, թե իրականություն էր, հանկարծ լսեցի սաստիկ կանչեր.

– Հասե՛ք, շո՛ւտ հասեք, այրվեցին մայրիկս, քույրս, իմ փոքրիկ եղբայրը,– բղավում էր գերությունից փրկված Հապետը:

Նրա սարսափելի, ոչ սովորական ճիչից արթնացա: Շրջվեցի աջ: Նայեցի շուրջս, բայց կրկին լռություն էր տիրում: Ըստ երևույթին Հապետը նույնպես սարսափելի երազների մեջ էր, բայց տեսածը շատ էր նմանվում ջերմության մեջ տառապող հիվանդի զառանցանքներին:

Չգիտեմ՝ որքան ժամանակ էր անցել, հանկարծ լսվեց Ոսկեհատ քույրիկի ձայնը.

– Վե՛ր կացեք, ձիավորներ են գալիս:

Լուսաբացի մթնաշաղին Շամիրամի մայր ջրանցքի աջ կողմից, հազիվ նկատելի սև ստվերի նման նշմարվեցին երկու հեծյալներ, որոնք քառատրոփ մոտենում էին գյուղի այգիներին:

– Յուրայիններ կլինեն,– ասաց Մայրանուշը՝ խրճիթի բարձր տանիքից դիտելով մեզնից ոչ հեռու մարգագետինների միջով հոսող ջրանցքը, որի խշշոցը լսել էր ողջ գիշեր, բայց մթության պատճառով չէր տեսել դրա ծառախիտ բարձր թմբերը:

– Առայժմ ճիշտ գուշակել հնարավոր չէ. նրանք դեռ շատ հեռու են,– պատասխանեց Մնոն և զգուշացրեց տղաներին պառկած տեղից չշարժվել:

– Նրանք դեպի գյուղ են գալիս, կարող են մեզ նկատել,– ասաց Նիկոլը՝ առաջարկելով հեռանալ տանիքից խրճիթներից մեկում թաքնվելու համար:

– Այլ տեղ գնալու հարկ չկա, հեծյալները գյուղ չեն մտնի, իսկ անցնելու դեպքում էլ մեզ նկատել չեն կարող, եթե պառկած մնանք տանիքին,– ասաց Մնոն՝ կրկին զգուշացնելով տղաներին տեղից չշարժվել, իսկ ինքը, կողքի վրա թիկն տված, սկսեց դիտել այգիներին մոտեցող հեծյալներին:

Ջրանցքի նեղլիկ կամրջին հասնելով՝ հեծյալները մի պահ կանգ առան: Ըստ երևույթին ձիերը վախենում էին փայտե խարխլված կամուրջն անցնել, դրա համար էլ անհայտ ձիավորները վայր իջան ու սանձերից բռնած՝ սկսեցին քարշ տալ անասուններին, բայց անցկացնել չկարողացան: Փորձ անել բարձր թմբերի վրայով խոր ջրանցքի մեջ մտնել անհնարին էր: Մենք վեց ընկերներով լավ գիտեինք, որ ջրանցքի այդ հատվածով ոչ մի անասուն անցնել չէր կարող, իսկ պատահականորեն ջուրն ընկած ամենաուժեղ չորքոտանի կենդանիներին, առանց թոկերի օգնության, դուրս հանել հնարավոր չէր: Երևի հեծյալները նույնպես գիտեին, որ ջուրը մտնել հնարավոր չէր, ուստի հրաժարվելով

կամրջով անցնելու իրենց մտադրությունից՝ նրանք, ծառերից կապելով ձիերը, ջրանցքի հոսանքով բավականաչափ իջան դեպի այգիների խորքը, հենց այն վայրը, որտեղ գտնվում էր մեր տասներկու ընկերների ամենօրյա լողալու ջրավազանը: Մոտենալով ջրանցքի ամենախոր տեղին՝ նրանք մեջքներից վայր բերեցին իրենց զենքերը ու նստեցին ծառախիտ թմբի կանաչների մեջ՝ հանելով վերնազգեստները: Այլևս ոչ մի կասկած չկար, որ նրանք պատրաստվում էին լողալ հենց այն վայրում, որտեղից մի քանի օր առաջ մենք տասներկու ընկերներով լուսաբացից մինչև ուշ երեկո տուն չէինք գալիս: Իհարկե, թուրք ասկյարը կամ որևէ օտար մարդ դժվար թե լուսաբացի այդ մթնշաղին ճշտորեն իմանար ջրավազանի տեղն ու այդպես ազատորեն զենքերը ծառից կախեր ու համարձակորեն ջուրը մտներ:

– Հարկավո՞ր է հետախուզել և իմանալ, թե ովքեր են նրանք,– ասաց Մնոն՝ հարցնելով Ոսկեհատ քույրիկի կարծիքը:

– Գուցե ռուսնե՞ր լինեն,– հարցրի ես:

– Դժվար թե ռուսները ջրավազանի տեղն իմանային,– պատասխանեց Նիկոլը:

– Միասին ստուգենք, գուցե օսմանցի լինեն,– առաջարկեցի Մնոյին:

– Նիկոլի հետ երեքով կմոտենանք կամրջին, եթե օսմանցիներ լինեն, ապա վերջ կտանք նրանց ու ձիերը կվերցնենք և անմիջապես կհեռանանք գյուղից,– առաջարկեց Մնոն՝ վերցնելով իր հրացանը:

– Միայն թե զգույշ, զավակնե՛րս, ձեզ չմատնեք,– ասաց Ոսկեհատը՝ օգնելով մեզ տանիքից վայր իջնել:

Խրճիթի բարձր պատին դեմ արած փայտյա երկար աստիճաններով մեկ ակնթարթում ցած իջնելով՝ մենք մտանք մոտակա այգին, որտեղից կարելի էր աննկատ մոտենալ ոչ միայն կամրջին, այլև ջրավազանում լողացող հեծյալներին:

Մինչ մենք կմոտենայինք ջրանցքին, Մնոն առաջարկեց ինձ ու Նիկոլին արձակել ձիերը ու քարշ տալ մոտակա ծառախիտ այգիների մեջ, իսկ ինքը մոտեցավ ջրանցքին՝ հեծյալների կողմից ծառից կախված հրացանները թռցնելու: Այդ մտքով էլ սրտի թրթիռով մի քանի վայրկյանում մոտեցանք ջրանցքի բարձր թմբին, սակայն դեռ կամրջին չհասած՝ ձիերից մեկը, կարծես թե նկատելով մեզ, սկսեց սմբակներով դոփել գետինը և բարձր խրխնջալ:

– Հայրիկիս ձին է,– ձայն տվեց Նիկոլը՝ մոտենալով հավատարիմ անասունին:

– Երկրորդը Մովսեսի ձին է,– ուրախությունից համարյա թե բղավեցի ես՝ բռնելով նրա գեղեցիկ գլուխը:

– Չայն մի՛ հանեք, մինչև հրացանները կբերեմ,– առաջարկեց Մնոն՝ վազելով դեպի այն ծառը, որտեղից կախված էին հրացանները:

Սակայն մինչ նա կհասներ հրացանների նմանվող փայտերին, հեծյալները, թաքնված տեղից դուրս գալով, հետևից փակեցին նրա աչքերը: Թակարդն ընկած հետախույզը բարձր ձայնով բղավեց, սակայն բացելով աչքերը, նա իրեն տեսավ Նիկոլի հայր Հարություն Եղոյանի ջերմ գրկում:

*
* *

Մեր վեց ընկերների անսպասելի անհայտանալը մեծ ցավ էր պատճառել ոչ միայն հարազատներին, այլև գյուղի փոքրաթիվ բնակիչներին, այդ պատճառով էլ նրանք գավառի հայ բնակչության գաղթողների վերջին քարավանն էին: Հինգ օր ու գիշեր մեզ որոնելուց հետո նրանք ընդամենը մեկ օր առաջ հարկադրաբար նահանջի ուղին էին բռնել:

Համարելով մեզ ընդմիշտ կորածներ՝ մեր հարազատները ողբալով էին հեռացել պատմական Հայոց ձորից՝ անեծք թափելով օսմանյան ոճրագործների հասցեին:

Չդիմանալով կնոջ և բարեկամների անասելի ցավ ու կսկիծին՝ Հարություն Եղոյանը Մովսեսի հետ որոշում են վերադառնալ և նորից որոնել մեզ Շամիրամի մայր ջրանցքի այն վայրերում, որտեղ ըստ իրենց կարող էինք խեղդված լինել:

Նրանք շրջել էին Հայոց ձորի մի շարք գյուղերում, այդ թվում՝ Ուրթուկ, Նորգյուղ, Խեք, Աստվածաշեն, Արատենց, Անգշտանց, Էրեմերի, Ոչխարանց, Խոսպ, Հիրճ, Պլթենց և շատ ուրիշ բնակավայրեր: Երկու հեծյալները որոնել էին նաև ամբողջ գիշեր, ի վերջո, հուսահատված ու հոգնած վերադարձել էին նույն հարկի տակ, որտեղից մեկ օր առաջ դուրս էին եկել՝ բռնելով մեծ գաղթի ճանապարհը:

*
* *

Հարություն Եղոյանը երկար ժամանակ գրկից բաց չէր թողնում իր սիրած զավակ Նիկոլին, որին մինչ այդ ընդմիշտ կորած էր համարում:

– Ո՞ւր են Հայկն ու Արամը, չէ՞ որ ձեր մայրերի ու քույրերի աչքերը ջուր դառան,– վերջապես խոսեց Հարությունը՝ կրկին գրկելով ինձ ու Մնոյին:

Որպեսզի երկար կշտամբանքի չարժանանայինք, ուղղակի խորամանկորեն միջամտեցի.

– Տե՛ս, քեռի՛ Հարություն, մեզ են կանչում,– ժպտալով նայեցի նրան՝ միաժամանակ ցույց տալով խրճիթի տանիքում կանգնած մեր օգնությամբ փրկված կանանց ու տասներկու պատանիներին:

– Ովքե՞ր են նրանք,– հարցրեց նա:

– Մերերկրացիներ են, Նորդուզից ենք բերել,– պատասխանեց տղան:

Հարությունը, մի պահ զարմանքից աչքերը չռելով, հարցրեց.

– Ուր էիք գնացե՞լ,– հարցրեց՝ նայելով մեր ուրախալի դեմքերին:

– Նորդուզ,– կրկնեց Նիկոլը՝ հերթ չտալով Մնոյին ու ինձ:

– Ո՞ւմ հետ, ինչի՞ համար:

– Վեց ընկերներով մենակ Մսրեին ու Ղազարին ազատելու համար,– հպարտությամբ պատասխանեցի ես:

Տեսնելով ջրանցքից ոչ հեռու խրճիթի տանիքում շարժվող կանանց ու պատանիներին՝ նա շտապ ձիու սանձը ծառից արձակեց և առաջարկեց անմիջապես գյուղ մտնել:

Իմ և Նիկոլի փաղաքշանքի շնորհիվ երկու հավատարիմ անասունները առանց որևէ դժվարության փայտյա նեղ կամրջով մեկ ակնթարթում անցան ջրանցքի հակառակ կողմը, որտեղ մեզ դիմավորեցին խրճիթի տանիքից վայր իջած Հայկն ու Արամը:

Հայրենակիցների հետ կարճ հարցուփորձից հետո մեր գաղթականների ամենավերջին քարավանը Հարությունի ուղեկցությամբ դուրս եկավ Հայոց ձորի ծառաստանից՝ ուղղություն վերցնելով դեպի Վան:

ՄԵԾ ԳԱՂԹԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Հաջորդ օրվա կեսին հայ հարսանքավորների պես ուրախալի դեմքերով հանկարծակիի բերեցինք յուրայինների փոքրաթիվ քարավանին, որոնք, խորասուզված ծանր մտքերով, նստել էին Վարագա սարի ստորոտում՝ հայացքներն ուղղած Վասպուրականի Վան քաղաքին:

Նրանցից շատերը արտասվում էին իրենց կորած հարազատների համար, մի մասը՝ հայրենի օջախից կտրվելու, իսկ ոմանք էլ մտածում էին, թե ինչ է սպասում իրենց վաղը մեծ գաղթի ճանապարհին:

Առաջինը մեզ նկատեց ինձնից մեծ եղբայրս՝ Վարդանը:

– Եկա՜ն, եկա՜ն,– բղավեց նա՝ վեր շպրտելով ձեռքում բռնած գլխարկը, որով մինչ այդ սրբում էր ճակատից թափվող քրտինքը:

Նրան հետևեցին Չռիկ կոչվող աղբյուրի ակունքի մոտ նստած Արմենակը, Մուրադը, Ատոմը, Թովմասը, Շուշանիկը, Ալմաստը և շատ ուրիշներ: Տեսնելով մեզ՝ նրանք, մի ակնթարթում տեղից վեր թռան ու խելագարի պես թափվեցին մեր ստվարացած քարավանի վրա: Նրանցից յուրաքանչյուրն ինքն էր ուզում գրկել բոլորիս և իր կարոտն առնել ամենքիս: Չկար մեկը, որ այդ ուրախալի պահին չարտասվեր:

Շատ սրտառուչ էր Ոսկեհատ քույրիկի հանդիպումը Դավիթի այրի կնոջ ու որբացած երեք աղջիկների հետ, որոնք մոտիկ բարեկամներ էին մեկը մյուսին, բայց այդ մասին մինչ այդ հայտնի չէր:

Մոտ բարեկամներ գտնվեցին նաև բարբարոսների գերությունից փրկված Վարուժանին ու Սանթուրին, որոնց սրտաբուխ հանդիպման տեսարանը համառոտակի նկարագրել հնարավոր չէ:

Ուրախությունն ու հրճվանքը առանց բացառության պատել էին ամենքիս՝ կանանց, տղամարդկանց, աղջիկներին ու տղաներին, անգամ փոքրիկ մանուկներին:

Հանդիպողները երկար ժամանակ ողջագուրվում էին, ամենայն մանրամասնությամբ հարցուփորձ անում, հուզմունքից ուրախության արտասուք թափում: Ի վերջո, գաղթող քարավանի ղեկավար Հարություն Եղոյանի կարգադրությամբ առաջ շարժվեցինք:

*
* *

Սարալանջից իջնելով դեպի հարթավայրի փարթամ այգիներ՝ օրվա երկրորդ կեսին արդեն շարժվում էինք Վան քաղաքի Խաչփողան կոչվող դատարկ փողոցով:

Հարություն Եղոյանը շտապեցնում էր բոլորին արագ շարժվել գաղթողների մեծ քարավանին հասնելու նպատակով: Սակայն հակառակ նրա ցանկությանը՝ պատանիներից շատերը, տարված լինելով գեղեցիկ շենքերի ու ծառախիտ պարտեզների տեսքով, ավելի էին դանդաղեցնում իրենց քայլերը: Նրանք որոնում էին ամայի դարձած փողոցներում թեկուզ որևէ քաղաքացու, բայց դժբախտաբար ոչ ոք չէր հանդիպում: Վասպուրականի հինավուրց հայաշատ այդ մեծ քաղաքն ամբողջապես դատարկ էր մնացել:

Այլևս չէին լսվում մետաղագործ դարբինների ծանր մուրճերի ձայները, ձկնավաճառի հրավերքի բարձր կանչերը, վարժ վաճառականնե-

րի ամենօրյա սակարկությունները և զվարճասեր երիտասարդների խոսք ու ծիծաղը: Ամենուրեք բաց էին մնացել ծառախիտ պարտեզների կամարակապ դռները, ապրանքներով լի խանութները և շենքերի՝ խնամքով ներկված փակոցափեղկերը:

Չնայած երկնակամարից դեպի արևմուտք թեքվող պայծառ արեգակը վառում էր գաղթողների սևացած դեմքերը, այնուամենայնիվ նրանք զովանում էին Վարագա և Սիփան սարերի ծաղկազարդ լանջերից փչող մեղմ քամուց:

Ծառախիտ պարտեզների կամարակապ բաց դռներից դիտելով հայ վարպետների ձեռքերով կառուցված գեղեցիկ շենքերը, բերդի գրանիտե պարիսպներին զարնվող ծովի անհանգիստ ալիքները՝ յուրաքանչյուր սիրտ ուղղակի մղկտում էր խոր ցավից:

Այդ հրաշալի քաղաքը՝ որպես մի անառիկ բերդ, ընդամենը երկու ամիս առաջ դիմադրում էր թուրքական սև բանակին, սակայն այսօր ամայի էր դարձել: Քաղաքում չկար մի շենք, մի պարիսպ կամ պարտեզի ամենափոքր ցանկապատ, որը ծակծկված չլիներ տեղատարափ կրակից:

Թանձր փոշու և քրտինքի մեջ կորած հայ գաղթականները շարժվում էին դանդաղ ու համաչափ. կարծես թե շտապելու մասին քարավանի ղեկավար Հարություն Եղոյանի եռակի զգուշացումը նրանց համար ոչ մի նշանակություն չուներ: Նրանցից ամեն մեկը հետաքրքրությամբ դիտում էր այն քաղաքը, որի հայ բնակիչները, համառորեն ինքնապաշտպանության դիմելով, հերոսական պայքար էին մղել թուրքերի կանոնավոր զորքերի դեմ՝ ի վերջո ստիպելով նրանց անպատիվ ու գլխիկոր հեռանալ դեպի արևմուտք:

Մենք դեռ գտնվում էինք քաղաքի արվարձաններում, երբ հանկարծ հեռվից լսվեցին Արարուց եկեղեցու մեծ զանգերի ղողանջները: Շատերը հանկարծակիի գալով մի պահ կանգ առան. թվում էր, թե ղողանջները գաղթողներին հետ էին կանչում:

– Երևի պատարագի են հրավիրում,– ասաց կողքիցս քայլող Շուշանիկի մայրը՝ երեսը խաչակնքելով:

– Քաղաքում մարդ չկա, Մարիա՛մ քույրիկ, զանգ տվողը վանքի երիտասարդ հոգևորականներից մինն է,– պատասխանեց Եղոյանը:

– Ինչո՞ւ է մնացել ամայի քաղաքում,– այս անգամ հարցրեց Ոսկեհատ քույրիկը:

– Ասում են, որ նա վճռել է մինչև վերջին վայրկյանն էլ զանգերով ազդարարել, որ Վասպուրականի հին մայրաքաղաքն իր վանքերով ու հուշարձաններով մերն է,– պատասխանեց Հարություն Եղոյանը:

– Քեռի՛ Հարություն, օսմանցիները հոգևորականին չե՞ն բռնի,– միամտորեն հարցրի ես՝ միաժամանակ լսելով Վարագա սարի կողմից փչող զով քամու հետ եկող ղողանջները, որոնց երկար ու խուլ ձայնից փշաքաղվում էր ողջ մարմինս:

– Հայ կամավորականները և ռուսական բանակի ջոկատները ըստ երևույթին դեռ Հայոց ձորը չեն թողնելու. զանգ տվողն էլ երևի վճռել է ամենավերջինը նահանջել,– պատասխանեց քեռի Հարությունը՝ շտապեցնելով գաղթող քարավանին արագացնել իրենց քայլերը:

Մենք բավականին հեռացել էինք արվարձաններից, իսկ քաղաքն ամբողջապես ընկղմվել էր խավարի մեջ: Չէր երևում ո՛չ Վարագասարը, ո՛չ էլ Սիփանը:

Միայն երկնքի փայլփլող բյուրավոր աստղերից թափանցող լույսի տակ շատ մոտիկից նկատվում էր Վանա գեղեցիկ թագուհին՝ Կապույտ ծովը, որի մեղմ ալիքների խշշոցից ուղղակի մարդու սիրտը տակնուվրա էր լինում:

*

* *

Քարավանի հանգիստ առնելն ու շատերի քուն մտնելը մեկ եղավ: Էլի երազներ, կրկին կանչեր ու զառանցանք գերությունից փրկված հայ պատանիների շրջանում: Սակայն դրանք սովորական երևույթներ էին, որ կրկնվում էին յուրաքանչյուր նիրհելուց: Չգիտեմ՝ շատ էին քնել, թե քիչ, հանկարծ լսվեց մի սարսափելի ճիչ, որի պատճառով ամենաքնկոտ մարդն անգամ խոնավ գետնից վեր թռավ:

– Ո՞վ է, ի՞նչ պատահեց,– հարցնում էին չորս կողմից:

– Ոչի՛նչ, ոչի՛նչ, կանցնի, պառկե՛ք,– մեղմորեն հանգստացրեց Բալաբեկի մայրը՝ Փառանձեմը:

Բայց ճիչը չէր դադարում, այլ շարունակվում էր ավելի ուժգին: Իհարկե, գլխի չընկնողները խառնվեցին իրար, նրանք անկեղծորեն ուզում էին օգնության հասնել տանջահար կնոջը: Սակայն Աննան ու Ոսկեհատ քույրիկը միջամտեցին, և անհանգստացողները նորից ցրվեցին իրենց տեղերը:

Վերջապես ճիչը կտրվեց, և գիշերվա խավարի մեջ՝ Վանա կապույտ ծովի ափին, լույս աշխարհ եկավ մի որբ մանուկ, որի հայրը օսմանյան դահիճների կողմից գլխատվել էր ապրիլյան ահավոր օրերին, այն էլ անհավասար մենամարտում:

Երիտասարդ Գեղանուշի տանջահար ճիչերին շուտով փոխարինեց նորածին մանկան քաղցրիկ ու սուր լացի ձայնը:

– Թող փոխարինի իր զոհված հայրիկին՝ իմ սիրելի Գաբրիելին,– ուրախալի ժպիտով ասաց Գեղանուշի սկեսուր Մարգարիտը՝ կրծքին սեղմելով նորածնի բարուրը:

– Ծնվել է ծովի ափին, Ծովակ դնենք անունը,– առաջարկեց Ոսկեհատը՝ աչքալուսանք տալով Մարգարիտ մայրիկին:

– Էլ չի հանգչի Ավագի օջախը,– ինքնիրեն խոսում էր Մարգարիտ մայրիկը՝ անընդհատ համբուրելով ծովեզրին պառկած Գեղանուշի այտերը:

Ծովափին սփռված քարավանը կրկին խաղաղվեց, ու օրվա մեծ տպավորությունների տակ խիստ հոգնած գաղթականները խոր քուն մտան մինչև լուսաբաց:

*
* *

Վաղ առավոտյան շարունակելով մեծ գաղթի ճանապարհը՝ վերջապես օրվա երկրորդ կեսին միացանք տարբեր գավառներից գաղթած հայ բնակչությանը, որ երեք օր առաջ թողել էր հայրենի ծննդավայրը:

Քանի գնում էինք, գաղթողների երկար ու խիտ շարանն ավելի էր ստվարանում, ու ճանապարհը լցվում էր մարդկային հեղեղով: Երեկոյան դեմ այլևս առաջ շարժվել հնարավոր չէր: Բերկրիի ձորի՝ Բանդիմահու գետի[58] մեծ կամրջից ոչ հեռու՝ հարթավայրում, այնքան ժողովուրդ էր կուտակված, որ, ինչպես ասում են, ասեղ գցելու տեղ չկար: Իրար էին խառնվել Շատախի, Աղբակի, Սարայի, Հայոց ձորի, Գյավաշի, Ոզմի և մի շարք այլ գավառներից գաղթած հայերը: Տարբեր էին նրանց բարբառը, տարազը, բայց նրանք բոլորն էլ նույնն էին՝ մի ազգ, բարեկամ ու հարազատ, աշխատավոր հայ ժողովուրդ՝ դալուկ ու տանջված, սակայն դեմքերով բարի, հոգատար մեկը մյուսի նկատմամբ: Հետ մնացողին օգնում էին, հիվանդին դարմանում, ծարավին ջուր տալիս, ընկճվողին հույս տալիս անկախ նրանից, թե նրանք որ գավառից են և որ գյուղից: Տեսնելով նրանց՝ ինձ թվում էր, թե նրանք բոլորն էլ բազմազավակ մի մեծ ընտանիքի անդամներ են: Իհարկե, երևում էին նաև դրսից եկած առանձին շողոքորթ և խարդախ, հարուստ վաշխառու առևտրականներ, որոնք, իրենց սովորության համաձայն, այդ տանջահար ամբոխի մեջ, մարդկանց խաբելով, ոսկի էին հավաքում, սեփական գրպանները լցնում:

[58] Խոսքը Վանա լիճ թափվող Բերկրի գետի մասին է:

Արևը վաղուց մայր էր մտել. շրջապատի բլուրներն աստիճանաբար ընկղմվում էին խավարի մեջ, իսկ գաղթողների առաջշարժումը կանգ էր առել Բերկրիի կամրջի ծանրաբեռնված լինելու պատճառով: Այնուամենայնիվ շատերը շտապում էին ժամանակին հասնել կամրջին՝ գիշերվա մթության պայմաններում ձորից ավելի շուտ դուրս գալու համար: Դժբախտաբար այդ հնարավոր չէր: Կենդանի մնացած գաղթողների քարավաններն ուղղակի փռվել էին ճանապարհի վրա՝ հնարավորություն չտալով հետևից եկողներին առաջ շարժվելու: Ստեղծված ծանր պայմաններում մոլորվել էին շատերը՝ անջատվելով մեկը մյուսից: Գիշերվա խավարի մեջ միմյանց գտնելու համար լսվում էին հազարավոր հայ մարդկանց բարձր ձայները: Հայրը կանչում էր որդուն, եղբայրը՝ քրոջը, պատանին՝ մորը:

– Տղա Դավի՛թ, որտե՞ղ ես,– բարձր ձայնով կանչում էր որդուն կողքիս կանգնած շատախցիներից մեկը՝ խլացնելով ականջներս:

Հեռվից լսվում էին Վարուժան, Մկրտիչ, Գագիկ, Ահարոն, Սիրվարդ, Մարո և շատ այլ անուններ:

– Աղջի Լուսի՛կ, ծա՛մդ կտրեմ, հո՞ւր ես,– մոտիկից լսվեց նաև հայոցձորցի կնոջ ձայնը:

Այդպես լսվում էին հազարավոր մարդկանց կանչեր: Խառնված քարավանների ամբոխն օվկիանոսի ալիքների պես ծփում էր դեսուդեն, որի մեջ մոլորվել էի նաև ինքս: Այդ խառնված ամբոխից միայն ես չէի համարձակվում որևէ մեկին ձայն տալ, նամանավանդ որ ո՛չ հայր ունեի, ո՛չ էլ մայր, որպեսզի հոգուս խորքից սրտաբուխ ձայնով կանչեի նրանց:

Մայրս մեռավ, երբ դեռ չէր լրացել իմ երեք տարին, իսկ հայրս ընկավ թուրք ոճրագործների յաթաղանից ապրիլյան ահավոր օրերին: Եվ այդպես մեծ գաղթի ճանապարհին՝ այդ խավար գիշերում, թափառում էի գոնե մոլորված քույրիկիս գտնելու հույսով:

Առավոտյան լուսաբացին՝ կամուրջն անցնելիս, հանկարծ թիկունքիցս մեկը աչքերս փակեց:

– Բա՛ց թող,– զայրացած բղավում էի ես, բայց բռնողը ձայն չէր հանում:

Կրկին ձայն տվեցի. այս անգամ լսեցի Մնոյի սրտաբուխ ծիծաղը:

Ուրախությանս չափ ու սահման չկար, երբ տեսա իմ ամենասիրելի ընկերոջը և հետո հարազատ եղբորս՝ Վարդանին: Նրանք ամբողջ գիշեր որոնել էին ինձ. ի վերջո գտան Բերկրիի կամուրջն անցնելու պահին:

Խառնվելով հազարավոր գաղթողներին՝ մենք երեքով առաջ էինք շարժվում, թողնելով յուրայիններին կամրջից բավականին շատ հեռու: Անդնդանման ձորը նեղ էր ու երկար: Ճանապարհի աջ կողմից հոսում էր Բանդիմահու կոչվող հորդացած գետը, որն իր ահռելի ձայնով խլացնում էր քայլողների ականջները: Ձախ կողմից ձգվում էր բերդի պարիսպների նման մի երկար լեռնաշղթա, որի ո՛չ սկիզբն էր երևում, և ո՛չ էլ՝ վերջը: Գետափի և լեռնաշղթայի միջև ընկած էր մի նեղ, բայց հարթ տարածություն, որտեղ գարնանային հեղեղի նման լցվել էին տեղահան արված հազարավոր խաղաղ ու անզեն մարդիկ՝ մեծ մասամբ կանայք ու երեխաներ, որոնք, փոշու ու քրտինքի մեջ կորած, առաջ էին շարժվում՝ խոր ձորից, որքան հնարավոր էր, ավելի շուտ դուրս գալու: Գաղթողների մեջ կային նաև շատ հիվանդներ, որոնք, ճռռացող սայլերի մեջ պառկած, անընդհատ տնքում էին խոր ցավից: Առանձնապես ծանր էր կանանց վիճակը: Թիկունքներին կապել էին ոչ միայն օրվա իրենց ուտելիքի պաշարը, այլև փոքրիկ երեխաներին, որոնք, արևից խանձված, անընդհատ մայրիկ կանչելով, ջուր էին պահանջում: Ցավից զառանցում էր նաև մեկ օր առաջ Գաբրիելին լույս աշխարհ բերած երիտասարդ Գեղանուշը, որին հայոցձորցիների ճռռացող սայլով դեռ գիշերվա կեսին մեծ հոգատարությամբ ճանապարհ էին դրել: Տեսնելով մեզ՝ Մարգարիտ մայրիկը խմելու ջուր ուզեց Մնոյից, իսկ վերջինս առանց հապաղելու, վերցնելով փոքրիկ դույլը, վազեց դեպի գետ՝ նրա խնդրանքը կատարելու:

– Ապրե՛ս, զավակս, Գեղանուշիս բերանը չորացել է ծարավից,– ասաց Մարգարիտ մայրիկը՝ դույլը մոտեցնելով տաքության մեջ զառանցող հարսի շրթունքներին:

Օրը համարյա թե կես էր դարձել, ամառվա շողշողուն արևը վառում էր քայլողների՝ առանց այն էլ հողմից սևացած դեմքերը:

Գաղթողների քարավաններն էլ ավելի էին խտանում՝ սեղմվելով գետի ու լեռնաշղթայի միջև ընկած նեղ ձորակում: Սայլակի մեջ պառկած Գեղանուշը խնդրեց սկեսուրին մի պահ կանգ առնել՝ Ծովակին կուրծք տալու: Կատարելով Գեղանուշի ցանկությունը՝ ես ու Վարդանը Մնոյի հետ նույնպես կանգ առանք՝ մոտենալով գետափին՝ հանգստանալու, սակայն մեր նստելն ու ահռելի ձորի դղրդոցը մեկ եղավ:

Ամառային արևոտ այդ խաղաղ օրվա կեսին հանկարծ Բանդիմահու գետի երկու կողմերին ձգվող լեռնաշղթաները ցնցվեցին: Այնպիսի հուժկու հարված տեղաց ամբոխի վրա, որ ինձ թվաց, թե մի սարսափելի սև ամպրոպ անցավ այդ անդունդանման նեղ ձորով. ահավոր հար-

վածից շանթահար եղան ամենքը և ամեն ինչ, սակայն դա կուտակված սև ամպերի կայծակը չէր: Թուրք և քուրդ ջարդարարների դարանակալած ջոկատների՝ բոլոր տեսակի զենքերով տրված համազարկն էր՝ բնաջնջելու մեծ գաղթի ճանապարհին շարժվող անզեն ու խաղաղ ժողովրդին: Առաջին իսկ համազարկից գետին տապալվեցին տասնյակ մարդիկ, կանայք ու երեխաներ, ծերեր ու մանուկներ: Հայ տղաներից շատերը զենք չունեին, իսկ ունեցողները հանկարծակիի գալով մի պահ կանգ առան, բայց երբ նշմարեցին քարափների մեջ դիրքավորված թշնամուն, նոր միայն սկսեցին պատասխան հարված տեղալ երևացող կրակակետերի վրա, այն էլ ամենահասարակ զենքերով: Հայ տղաները, դուրս գալով ճանապարհից, մի պահ պատնեշ կազմեցին կանանց ու երեխաներին պաշտպանելու նպատակով, բայց տասնապատիկ անգամ գերազանցող թշնամու ուժերի դեմ մինչև վերջ նրանք կռվել չէին կարող: Թուրք դահիճները գաղթողների մի ստվար մասին, մեծ գետի հոսանքով սկսած՝ Բերկրիի կամրջից մինչև լեռնաշղթայի վերջը, առել էին սեղմ օղակի մեջ և ամառվա արևոտ պարզ օրվա կեսին սկսել էին անխնա կոտորել:

Թշնամու տեղատարափ կրակի տակից դուրս գալը հնարավոր չէր: Ճանապարհի աջ կողմից հոսում էր իր ափերից դուրս եկած Բանդիմահու հորդառատ գետը, իսկ ձախ կողմի լեռնաշղթայի ամբողջ երկարությամբ ու խորությամբ դարանակալած էին թշնամու զորքերը, որոնք իրենց կրակի տակ էին առել գաղթող քարավաններին: Նենգ թշնամուն դիմադրող հայերի փոքրաթիվ շարանը ավելի էր նոսրանում. նրանց մեծ մասն ընկավ առաջին իսկ պահին: Մնացածները դիմադրում էին ուժերի գերլարումով՝ լռության մատնելով քարափների մեջ եղած թշնամու առանձին կրակակետերը: Երեսի վրա պառկած Մնոն ու Վարդանը վառվում էին հուզմունքից, բայց զենք չկար ձեռքներին սկսված մարտերին մասնակցելու համար: Մենք պարզ տեսնում էինք քարափներից կրակող թուրքերին ու նրանց դասավորությունը: Երիտասարդ հայ տղաներից մեկը, վերցնելով հոր տասնոցը, նրա կրակի պաշտպանության տակ երեսի վրա մագլցելով դեպի քարափները, մի պահ կանգ առավ: Ինձ թվաց, թե նա խոցվեց չար թշնամու կրակից: Բարեբախտաբար տղան կարողացավ ավելի մոտենալ թշնամու դիրքերին, և մեր ուրախությանը չափ ու սահման չկար, երբ նրա դիպուկ գնդակից ընդմիշտ լռեց ամբոխի վրա կրակող գնդացիրի ճարճատյունը: Ոգևորված անծանոթ տղայի քաջությամբ՝ Մնոն այլևս չհամբերեց: Տեղից պոկվելով՝ նա մի ակնթարթում առաջ սլացավ դեպի քարափները, որտեղ

կռվում էին հայ տղաները: Կռվի մեջ մտան նաև մի քանի քաջասիրտ հայ կանայք և պատանիներ: Վերցնելով սպանված մարդկանց զենքերը՝ նրանք նույնպես մոտեցան թշնամու գնդացիրը լռեցնող տղային՝ նրան օգնություն ցույց տալու: Շուտով դարան մտած թուրք ասկյարներն ու քուրդ ավազակները սկսեցին հարձակման անցնել և անխնա կոտորել ճանապարհի ձախ կողմում կուտակված անզեն ժողովրդին: Բոլոր տեսակի զենքերով մինչև ատամները զինված թշնամուն դիմադրել անհնարին էր:

Այդ իրավիճակում թուրք դահիճներին կենդանի հանձնվել անկարելի էր և անպատվաբեր, ուստի կռվող հայ տղամարդկանց հրահանգով կանայք ու երեխաները սկսեցին ջուրը նետվել միայն մեկ հույսով՝ փրկվել կամ մեռնել հորդառատ գետի ալիքների մեջ: Այդ սարսափելի պահին իմ կողքից հեռացող Մնոն, ձեռք բերելով հրացան, մեծ ճարպկությամբ հասել էր քարափների մեջ ու թշնամու գնդացրին լռեցնող հայ տղայի հետ շարունակում էր կրակել լեռնալանջից հարձակվող թուրք ասկյարների վրա, բայց, ինչ խոսք, կանգնեցնել նրանց հիմնական ուժերի առաջխաղացումը չկարողացան: Կանայք ու երեխաները հույսները կտրած, մեկը մյուսի հետևից նետվում էին գետի հորձանուտի մեջ՝ մաքառելով ալիքների դեմ հակառակ կողմն անցնելու համար:

Մարգարիտ մայրիկը նույնպես վճռել էր կենդանի չհանձնվել արնախում թշնամուն: Նա մի ձեռքով գրկել էր նորածնի բարուրը, իսկ մյուսով փորձում էր հիվանդ Գեղանուշի նստած սայլը քաշել դեպի գետը, բայց, ինչպես երևում էր, ուժը չէր պատում: Կռահելով նրա մտադրությունը՝ մի պահ հիշեցի թուրքերի կողմից Աղբակի հայ կնոջ արգանդից դուրս բերված երեխային սվինահար անելու մասին Վարուժանի պատմությունը, ու կրկին սարսռաց մարմինս: «Մի՞թե Ծովակին նույն վիճակն է սպասվում»,– մտածում էի ես: Հենց այդ մտքից էլ տեղից պոկվելով՝ թշնամու տեղատարափ գնդակների տակ վազում էի նրանց օգնության: Դուրս գալով քարաբեկորի հետևից՝ ես շնչակտուր հասա սայլակին այն պահին, երբ Մարգարիտ մայրիկը, երեխայի բարուրը ցած դնելով, գրկում էր տաքության մեջ զառանցող Գեղանուշին: Վերցնելով փոքրիկ մանկանը՝ մենք երկուսով, արհամարհելով մահը, մի կերպ քաշելով, Գեղանուշին դուրս բերեցինք բաց դաշտից: Գետափ հասնելուն պես Մարգարիտ մայրիկն այլևս կանգ չառավ. նա գրկեց երեխայի բարուրը և Գեղանուշի ձեռքից բռնելով՝ մի ակնթարթում նետվեց Բանդիմահու կոչվող հորդառատ գետի ալիքների մեջ: Մինչ այդ պառկած լինելով գետափի մացառների մեջ՝ հայացքս մշտապես ուղղված էր

թշնամու կրակակետերին ու նրանց դիմադրող հայերի մարտական գործողություններին, դրա համար էլ չէի նկատել գետի հոսանքի հետ գնացող բազմաթիվ կանանց ու երեխաների արդեն անշնչացած մարմինները: Սակայն երբ մի պահ նայեցի փրփրադեզ գետին, նոր միայն հասկացա, թե ինչ ահավոր եղեռն է կատարվում:

Գաղթող ժողովրդի կոտորածը սկսվել էր Բերկրիի անդնդանման խոր ձորի ամբողջ երկարությամբ: Եթե անգամ ականատես եղած էլ չլինեի, ապա գետի հոսանքի հետ լողացող բազմաթիվ կանանց ու երեխաների խեղդված դիակներից էլ կարելի էր ամեն ինչ իմանալ: Իսկ թե որքան դիակներ էին ընկղմվել պղտորված գետի հատակը, դա ցույց էր տալիս ջրի երեսին չոր տաշեղի նման լողացող տարբեր տեսակի սև ու սպիտակ քոլոզների քանակը:

Չնայած Գեղանուշը բարձր ջերմության մեջ էր, բայց ջուրն ընկնելով մի պահ սթափվել էր՝ զգալով իր նորածնին սպառնացող վտանգը, և նա ըստ երևույթին գերբնական ուժ էր ձեռք բերել: Նա ատամներով բռնել էր նորածին զավակի բարուրից, իսկ ձեռքի ու ոտքի լողով ուզում էր սկեսուրին կենդանի հասցնել գետի հակառակ կողմը: Նա երկար մաքառեց գետի ալիքների հետ, բայց վերջիվերջո հիվանդ մարմինը թուլացավ: Սկզբում թողեց կիսախեղդ եղած Մարգարիտ մայրիկին, որը նրան արգելում էր լողալ, հետո հանկարծ ատամներից պոկվեց երեխայի բարուրն ու շրջվեց երեսի վրա: Տեսնելով ալիքների հետ հեռացող զավակին՝ նա սարսափելի մի ճիչ արձակեց, ջուրը լցվեց կոկորդը ու միանգամից սուզվեց պղտորված գետի հատակը: Ես արցունքով լցված աչքերով հետևում էի Ծովակի բարուրին, որը տաշեղի նման խաղում էր գետի ալիքների վրա. կարծես թե մայրը օրորում էր նրան՝ հավիտյան քուն մտնելու: Վայրկյաններ անց սև բծի նմանվող բարուրը լրիվ անհայտացավ իմ տեսադաշտից:

Բանդիմահու գետը այդ օրը կարծես թե ջրավազան լիներ. նրա մեջ էին նետվում մեծից փոքր, միայն թե կենդանի չընկնեին թուրք ոճրագործների ձեռքը:

Իհարկե, գետը նետվողների որոշ մասը, ովքեր քիչ թե շատ լողալ գիտեին, մեծ ջանքերի գնով հասան հակառակ ափը և փրկվեցին: Ես նույնպես պատրաստվեցի նետվել գետի մեջ՝ համոզված լինելով, որ կենդանի կհասնեմ հակառակ կողմը, բայց երբ մտաբերեցի, որ բաժանվելու եմ Մնոյից և իմ հարազատ եղբայր Վարդանից, միանգամից սարսափեցի: Այդ մտածմունքի մեջ էի, երբ աչքս ընկավ դեպի գետը վազող Վարդանին:

– Վարդա՛ն, Վարդա՛ն,– բղավեցի ես:

Սակայն նա, ինձ չնկատելով, իրեն նույնպես բարձր թմբից մի ակնթարթում գետը նետեց: Տեսնելով ալիքների մեջ կորչող եղբորս՝ ուզեցի հետևել նրա օրինակին, սակայն այդ պահին էլ լսեցի Մնոյի ձայնը:

– Կա՛ց, դեռ ժամանակ շատ ունենք,– սաստեց նա՝ ձեռքիցս բռնելով ու քարշ տալով գետափի բարձր խոտերի մեջ թշնամու տեղատարափ գնդակներից ապահով լինելու համար:

– Եղբայրս կորավ,– հուզմունքից արտասվում էի ես:

– Չի կորչի, տե՛ս, նա լող տալով անցնում է հակառակ կողմը,– ասաց Մնոն՝ ցույց տալով եղբորս երևացող սև գլխարկը, որը շեղությամբ, գետի ալիքների հետ շփվելով, համարյա թե ափ էր դուրս գալիս:

Մենք երկուսով մտանք գետը, ամուր բռնել էինք հողից դուրս եկած դալար մացառներից ու հետևում էինք լեռնալանջից կրակող թշնամու կրակակետերին և գետ նետվող նորանոր հայ կանանց ու երեխաներին: Ձորում սփռված այդ հարյուրավոր մարդկանց մեջ հանկարծ աչքիս ընկավ սև սքեմով մի ստվեր, որը մինչ այդ թաքնված էր մեզնից ոչ հեռու՝ հողաթմբի հետևում: Նա մի պահ նստած տեղից վեր կացավ, կարծես թե խոր քնից արթնացած մարդու պես աչքերը սրբեց, ապա սպանված դիակներին նայելուց հետո գրկեց իր կողքին պառկած փոքրիկ երեխային, խաչակնքեց մազակալած երեսը և մի ակնթարթում նետվեց գետի մեջ:

Սև սքեմով ստվերը քահանա էր. գետի հոսանքը քշելով նրան ցած էր բերում: Տեսնելով նրա սև ու երկար մորուքը՝ ես էլ ավելի սրեցի իմ տեսողությունը, մանավանդ որ ծանոթ դեմք էր երևում:

– Չե՞ս ճանաչում. նա մեր հարևան գյուղի տեր Օհանն է,– ասաց Մնոն ու ուզեց գետով առաջանալ՝ նրան օգնելու: Բայց ուշ էր արդեն, գետի ուժեղ հոսանքը նրան տանում էր ցած, իսկ այնտեղ թշնամին ուժեղ կրակում էր:

Նրա սև սքեմը թրջվելուց ուռել էր՝ պահելով տիրոջը գետի երեսին, իսկ նրա գրկում դեռ ճչում էր երեխան:

Լողալ իմացող երիտասարդ տղաներից մեկը փորձեց գետափից լողալով մոտենալ նրան՝ ըստ երևույթին օգնելու, սակայն դեռ գետի կեսը չհասած՝ երկուսն էլ ընկղմվեցին ջրի հատակը՝ չար թշնամու գնդակից խոցված. ալիքներն իրենց գիրկն առան նաև ճչացող փոքրիկին:

Դարանակալած թշնամին լկտիացած ավելի էր ուժեղացրել կրակահերթերը ոչ միայն ձորում ցրիվ եկած կանանց ու երեխաների, այլև Բանդիմահու գետի հակառակ ափ դուրս եկած անզեն մարդկանց վրա:

Մարդասպանների կրակից փրկվելու որևէ ելք չգտնելով՝ ես ու Մնոն դեռ ընդամենը հետևում էինք տեղի ունեցող ահավոր և արյունահեղ դեպքերին:

Այնպես էինք տեղավորվել կավաշերտ կտրվածքի հետևում, որ թվում էր, թե դա մեր սեփական օթևանն էր, որից դուրս գալու մտադրություն ամենևին չունեինք:

Բերկրիի անդնդանման խոր ձորը նման էր թատրոնի մեծ բեմահարթակի, ուր տեղի էր ունենում մի ահավոր ներկայացում: Ներկայացում, որի կենդանի պատկերները անջնջելիորեն տպավորվեցին մեր ուղեղներում՝ խոր վիշտ պատճառելով ոչ միայն կրակների մեջ հեծկլլտացող երկու ականատես պատանիներիս, այլև կոտորածից պատահականորեն փրկված յուրաքանչյուր հայ գաղթականի:

Մենք, դեռ ջրի մեջ նստած, ջղաձգորեն հետևում էինք տեղի ունեցող ահավոր դեպքերին: Թշնամու հրացանային կրակոցների հետ սպանված դիակների միջից մեզ շատ մոտիկ լսվեց կանացի մի աղերսող ձայն, որն ըստ երևույթին օգնություն էր կանչում, իսկ ոմանք էլ տնքալով զառանցում էին ավելի խուլ ձայներով՝ տալով հարազատների անունները: Լսելով նրանց՝ Մնոն այլևս չդիմացավ ու դուրս եկավ ջրից՝ թմբի բարձունքից նայելով ճանապարհին վխտացող մարդկանց: Լսվող ձայներից երևում էր, որ ընկածներից շատերը կենդանի են, բայց չէին նկատվում: Ասենք, այդ պայմաններում որևէ մեկին տեսնել և օգնել շատ դժվար էր, քանի որ ոչ միայն ճանապարհը, այլև ամբողջ ձորը լցված էր հարյուրավոր մարդկանց թափած բեռներով, շուռ եկած սայլերով և թշնամու գնդակներից ընկած կանանց, երեխաների ու ծերերի դիակներով: Լսելով հայ կնոջ՝ սիրտ ծակող աղերսանքը, մենք այլևս համբերել չկարողացանք:

– Վիրավորներին պետք է օգնել,– առաջարկեց Մնոն:

– Օգնենք միասին,– ավելացրի ես և նույնպես դուրս եկա կավաշերտ կտրվածքից՝ հետևելով նրան:

Սարալանջից գնդակ էր թափվում կարկուտի պես. ինձ թվում էր, թե թշնամին իր ամբողջ կրակն ուղղել է միայն մեր երկուսի վրա: Այնուամենայնիվ մենք անտեսեցինք թե՛ նրանց կրակը և թե՛ վախը, որը մինչ այդ այնքան ուժեղ սեղմել էր մեր սիրտը: Անցյալներում էլ Մնոն միշտ քաջ էր ու հանդուգն: Նա չէր վախենում ոչ մի բանից, թեկուզ կրակից, մանավանդ այդ օրը, երբ թշնամու գնդակներից ընկել էին մեր հայրենակիցները, իսկ շատերն էլ այդքան աղաչագին օգնություն էին կանչում:

Լսելով նրանց ձայնը՝ մեզ ոչինչ չէր մնում, քան արհամարհել մահը: Այդ վայրկյանին մենք միայն զգում էինք, որ մեր պարտքն էր օգնել ընկածներին, թեկուզ կյանքի գնով դուրս բերել նրանց թշնամու կրակի տակից: Օգտվելով խառնաշփոթ իրարանցումից, երեսի վրա մագլցելով՝ վերջապես մեզ հաջողվեց հասնել ճանապարհին և ապա աղերսող հայ կնոջը: Բարեբախտաբար, նրա վերքը ծանր չէր. կենդանի էր նաև նրա կողքին պառկած փոքրիկ երեխան, որի աղերսանքից փշաքաղվեց ողջ մարմինս: Մայր ու որդի ընկել էին սայլի և գնդակներով խոցված զույգ եզների արանքը, որի պատճառով տեղից շարժվել չէին կարողանում: Թաքնվելով շուռ եկած սայլակի հետևում՝ մենք հազիվ մի կերպ վիրավոր կնոջը երեխայի հետ դուրս բերեցինք մեջքի վրա ընկած անասունների արանքից ու քարշ տալով հասցրինք մոտակա փոսի մեջ՝ թշնամու կրակից զերծ պահելու:

Ոգևորվելով հայ կնոջ շնորհակալական ջերմ խոսքերից՝ մենք ավելի խորացանք ցրիվ տրված բեռների ու սայլակների մեջ՝ նպատակ ունենալով ընկած մյուս վիրավորներին օգնություն ցույց տալու: Թողնելով վիրավոր կնոջը և նրա երեխային՝ մենք փորձում էինք մյուս կանչողներին օգնել, բայց դժբախտաբար չէինք կարողանում մեծ բան անել, բացի գետի պղտորված ջրով նրանց ծարավը հագեցնելուց:

Հանկարծ այդ խառնաշփոթում լսվեց շատ ծանոթ մի ձայն.

– Մո՛տ եկ, այստեղ են, – կանչեց նա՝ կարծելով, որ մենք նույնպես վիրավորված կլինենք:

Երեսի վրա սողալով՝ մենք աստիճանաբար մոտենում էինք սայլակների երկու կողմերում ընկած սպանվածներին, որտեղ բերանքսիվայր պառկած էր գերությունից փրկված Մայրանուշը: Չնայած նրա վերքը անհամեմատ թեթև էր, բայց տեղից հեռանալ չէր կարողացել թշնամու ուժեղ կրակի հետևանքով:

– Ո՞ւր են մերոնք, ո՞ւր է Ոսկեհատ քույրիկը,– հարցրեց Մնոն՝ ահաբեկված դիտելով իր շուրջբոլորը:

– Կորցրի կամրջից այն կողմ՝ գիշերվա խավարի մեջ, – պատասխանեց Մայրանուշը՝ միաժամանակ առաջարկելով մեզ թաքնվել բեռների արանքներում՝ թշնամու կրակի տակ չընկնելու:

Մայրանուշից քիչ հեռու ընկած էին չորսից հինգ սպանված կանայք, մի քանի երեխաներ, երկու ծեր տղամարդ, իսկ վերջինիս կողքին երեսի վրա պառկած էր նաև արյան մեջ շաղախված թուրք ասկյարի համազգեստով մեկը: Մարդասպանը, թալանի ու արյան ծարավից հար-

բած, թերևս շատ էր շտապել: Դուրս գալով քարափներից՝ նա սվինահար էր արել մի քանի հայ կանանց ու երեխաների, որից հետո սկսել էր քրքրել սպանվածների գրպանները ու գետնին թափված իրերը: Սակայն վրա հասած Մայրանուշը մեծ քարով ջախջախել էր ոճրագործի գանգն ու գետին տապալել:

Սպանելով թուրք զինվորին՝ Մայրանուշը օգնել էր նաև վիրավոր մի այլ կնոջ և նրա փոքրիկին՝ թշնամու կրակի տակից դուրս բերելու, բայց ինքն էր վիրավորվել ու ստիպված էր եղել թաքնվել բեռների արանքում ու մեռած ձևանալ: Նկատելով սպանված թուրք զինվորին և նրա կողքին ընկած հրացանը՝ մի պահ սիրտս հրճվանքից բաբախեց, ուզեցի մոտենալ և վերցնել այն, բայց Մնոն կռահեց իմ մտադրությունը:

– Կա՛ց Մայրանուշի մոտ, դու կրակել չես կարող,– զգուշացրեց նա և ինձանից ավելի շուտ նետվեց առաջ՝ սպանված թուրք զինվորի զենքին տիրանալու:

Մնոյի՝ «չես կարող կրակել» ակնարկը ընդունեցի սրտի ցավով ու վիրավորվեցի:

– Ինչպե՞ս թե չեմ կարող կրակել,– զայրացած հակադարձեցի ես և հետևեցի նրան:

– Կրակել կարող ես, բայց թուրքերի գնդացիրը լռեցնող տղայի տեղը չգիտես,– ասաց նա՝ ըստ երևույթին իմ ինքնասիրությանը չդիպչելու նպատակով փոխելով իր խոսքը:

Մոտենալով դիակին՝ Մնոն անմիջապես վերցրեց արյան մեջ ընկած հրացանը, իսկ ես սկսեցի քանդել զինվորի մեջքին կապված փամփուշտներով լիքը փամփուշտակալները, ու միասին վերադարձանք Մայրանուշի մոտ: Թաքնվելով ցրիվ եկած բեռների արանքում՝ Մնոն երկար չդիմացավ: Խելահեղ պատանին հոլի պես շրջում էր դեսուդեն՝ դիտելով այն քարափը, որտեղից թշնամու գնդացիրը լռեցնող հայ տղան և իր ընկերները դեռ շարունակում էին համառորեն դիմադրել լեռնալանջից կրակող թուրքերին:

– Պառկի՛ր, կնկատեն,– զգուշացրեց վիրավոր Մայրանուշը:

– Գնալու եմ, մորաքո՛ւյր,– ասաց Մնոն՝ վերցնելով հրացանն ու փամփուշտների մեծ պաշարը:

– Ո՞ւր,– հարցրի ես:

– Այնտեղ, որտեղ կռվում են մերոնք,– պատասխանեց նա՝ ցույց տալով քարափներում ցրված կրակող հայ տղաներին:

– Միասին գնանք,– առաջարկեցի ես ու բնազդաբար տեղիցս վեր թռա:

– Մայրանուշին մենակ թողնել չենք կարող,– ասաց Մնոն՝ կրկին առաջարկելով մնալ վիրավորների մոտ:

– Քի՛չ էլ սպասիր, գուցե կրակը դադարի,– առաջարկեց Մայրանուշը:

– Սպասել չեմ կարող, Մայրանո՛ւշ քույրիկ, կռվողներին փամփուշտ է հարկավոր,– պատասխանեց Մնոն:

– Որ այդպես է, գնա՛, բայց զգո՛ւյշ եղիր՝ թշնամու կրակի տակ չընկնես,– խրատեց Մայրանուշը՝ տալով նրան իր մոտ եղած փամփուշտների երկու մեծ կապոց:

Մնոյի գնալուց հետո հրացանային համազարկը ավելի բորբոքվեց, բայց այս անգամ մեզանից բավականին հեռու՝ գետի վերին հոսանքի կողմից:

Մեր դեմ դիմաց դիրքավորված թշնամու կրակի ուղղությունը կարծես թե նույնպես փոխադրվեց դեպի վեր. մի պահ ինձ թվաց, թե նրանք նկատել են Մնոյին և դրա համար էլ իրենց կենտրոնացված հարվածը ուղղել են նրա և քարափում ամրացված հայ տղաների վրա: Այդ մտածմունքի մեջ էի, երբ հանկարծ հեռվից երևացին ռուս կազակների արշավող ջոկատները, ու լսվեցին նրանց հուժկու ուռաները:

Իմ ուրախությանը չափ ու սահման չկար, երբ թշնամու սև շարանը, տեղից պոկվելով, դիմեց փախուստի: Այդ վայրկյանին ուզեցի տեղից վեր թռչել, վազել դեպի այն քարափը, որտեղ քիչ առաջ գնաց Մնոն, տեսածի մասին հաղորդել նրան, բայց Մայրանուշը արգելեց.

– Կա՛ց, վտանգավոր է, կրակի տակ կընկնես,– մայրական հոգատարությամբ զգուշացրեց նա՝ ձեռքիցս բռնելով:

Ռուսական զորքերի ուռան ավելի ուժեղացավ, և ահա կազակների հեծյալ ջոկատներն իրենց նիզակներով սկսեցին խոցել թուրք ասկյարներին:

Չդիմանալով ռուսների սրընթաց հարվածին՝ թուրքերը ամբողջ ճակատով սկսեցին խուճապահար փախչել: Հիմա կոտորվելու հերթը թուրք մարդասպաններինն էր: Նրանցից շատերը, իրենց զենքերը վայր գցելով, գլխիկոր փախչում էին հետ՝ քարափների և մացառների մեջ թաքնվելու, բայց ընկնում էին նժույգների սմբակների տակ ու գետին տապալվում: Տեսնելով փախչող թշնամուն՝ այլևս համբերությունս հատեց: Թողեցի Մայրանուշին ու վազեցի դեպի այն բարձունքը, որտեղ դիրքավորվել էր թշնամու գնդացիրը լռեցնող հայ տղան, և որին օգնության էր գնացել Մնոն:

Անդնդանման խոր ձորն ու նրա աջակողմյան քարափներն արդեն թիկունքում էին մնացել, ուստի առանձնապես ոչ մի դժվարություն չկար, որ ես գտնեի Մնոյին և կրկին վերադառնայի Մայրանուշի մոտ:

Բարձրանալով ես սկսեցի որոնել քիչ առաջ հեռացած ընկերոջս, որոնեցի ամենուր, տակնուվրա արեցի ձորում թափված բեռները, ջարդուփշուր եղած սայլերը, դժբախտաբար բացի սպանված հայ մարդկանց դիակներից, ուրիշ ոչ ոքի չկարողացա գտնել, չկար նաև ինքը՝ Մնոն: Ո՞ւր էր նա, մի՞թե սպանվեց իմ հիանալի ընկերը, որի մեծ ջանքերի շնորհիվ փախուստի դիմեցինք ու գերությունից ազատվեցինք ոչ միայն ինքներս, այլև փրկեցինք գերության մեջ գտնվող հայ կանանց ու 12 պատանիների:

«Ո՞ւր կարող էր լինել նա, մի՞թե սպանված է», – մտածում էի ես և չէի կարողանում կողմնորոշվել, մանավանդ ճանապարհից մինչև քարափները տանող տարածությունը 200 մետրից ավել չէր, իսկ ես ստուգել էի ոչ միայն այդ հատվածը, այլև ավելի հեռուն, ընդհուպ հասել թշնամու դիրքեր, որտեղից քիչ առաջ տեղատարափ կրակ էր թափվում:

Ռուսական հեծյալ ջոկատները, հետապնդելով թշնամուն, արդեն անցել էին լեռնաշղթայի հակառակ կողմը, իսկ Բերկրիի ձորը լցվեց հատուկենտ մարդկանցով, որոնք թշնամու գնդակներից ընկածների մեջ որոնում էին իրենց հարազատներին:

Չգտնելով Մնոյին՝ ես քարափներից իջա ուշ երեկոյան, երբ արդեն մթության մեջ այլևս որևէ մեկին նշմարել ու ճանաչել չէի կարող. թանձրացող խավարի պատճառով ես կորցրի նաև վիրավոր Մայրանուշին ու փաստորեն մնացի մենակ՝ այն էլ դիակներով շրջապատված:

ՀԱՅ ՀԵՌՅԱԼԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

Բերկրիի անդնդանման ձորը սկսվում էր աստիճանաբար ընկղմվել գիշերվա խավարի մեջ, իսկ ես դեռ շարունակում էի որոնել անհայտ կորած Մնոյին ու վիրավոր Մայրանուշին:

Որոնում էի ամեն տեղ, որտեղ հնարավոր էր մարդկային ոտքը դնել: Ոտաբոբիկ, ճաքճքված ոտքերով, փշրված եղունգներով, քաղցած ու կիսամերկ ոստոստում էի ամառվա այրող արևից շիկացած քարաբեկորների վրայով: Մտնում էի փշոտ թփերի ու փոսերի մեջ, կրկին դուրս գալիս հուսախաբված. էլ քարափ ու թուփ չմնաց, որ չստուգեի. անգամ շոշափում էի արյան մեջ շաղախված սպանվածների դիակները:

Սրտի թրթիռով վազում էի դեսուդեն խելագարի պես, այսուհանդերձ նրանց գտնել չկարողացա:

«Մի՞թե սպանվեցին նրանք»,– վշտացած ու անհանգիստ մտածում էի ես մանավանդ Մնոյի մասին, ում հետ անց էի կացրել իմ մանկության ուրախալի տարիները, նույնպես և մղձավանջային սարսափելի օրերը: «Ի՞նչ պատահեց նրան, ո՞ւր գնաց, մեկ ակնթարթում ինչպե՞ս անհետացավ»,– խորհում էի, և ինձ թվում էր, թե ուղեղս շարժվում է գանգիս մեջ:

Ուղղակի զարմանալի էր: Չէ՞ որ աչքիս առաջ մագլցելով՝ նա մտավ քարափների մեջ այն պահին, երբ ռուսական հեծյալ ջոկատները սրերի շաչյունով մտան մարտի դաշտ ու միանգամից փախուստի մատնեցին թուրք և քուրդ գազազած ավազակներին: Նշանակում էր, որ ընկերս սպանված լինել չէր կարող, մտածում էի ես՝ շարունակելով թափառել դիակներով ծածկված սարսափելի ձորում՝ հաշվի չառնելով վերահաս գիշերվա խավարը: Շատ ցավալի էր կորցնել ճարպիկ ու քաջասիրտ ընկերոջը, այն էլ ահավոր կոտորածից հետո՝ վերջին վայրկյաններին, մի պատանու, որն իր խիզախ ու հանդուգն բնավորությամբ ո՛չ ահ ուներ թշնամուց և ո՛չ էլ սարսափ, մի ընկերոջ, որին սիրում էի հարազատ եղբորս պես: Մնոն այն տղան էր, որն իր հայրենասիրությամբ, վառ հավատով կարողացավ թուրքերի գերությունից ազատվելու հույսը ներշնչել մեզ և կազմակերպել հայ պատանիներիս փախուստը լեռների անանցանելի ճանապարհներով ու հասցնել հայրենի հող:

Ես սկսեցի գետի հոսանքով իջնել դեպի մեծ կամուրջը, որտեղ նույն օրվա արշալույսին սրտաբուխ հանդիպել էի Մնոյին: Մութ էր ու մռայլ լեռնաշղթաներով սեղմված Բերկրիի խոր ձորը, որտեղ այդ օրվա կեսին տեղի ունեցավ խաղաղ ու անզեն ժողովրդի ահավոր կոտորածը: Այն ամբողջապես ընկղմվել էր գիշերվա խավարի մեջ. ինձ թվում էր, թե մի հսկա վիշապի նման սև ամպ փակել է փախչելուս ճանապարհը, որպեսզի չկարողանամ ազատվել ինձ հետապնդող մարդ–մարդակեր գազանների ճանկերից: Չնայած սուր էր տեսողությունս, սակայն ոչինչ չէր երևում անգամ մոտիկից, եթե հանկարծակի չսայթաքեի դեսուդեն թափված իրերով լիքը բեռների կամ թե սպանված մարդկանց վրա:

Տեսնելով այդ զարհուրելի պատկերները՝ հուզմունքից ուղղակի մղկտում էր սիրտս, ալեկոծվում հոգիս, մանավանդ, երբ մերթընդմերթ ականջիս էին հասնում վերքերից տանջվող կանանց ու երեխաների ծանր հառաչանքները:

Առաջ գնալու համար հողմից ճաքճքված ձեռքերով շոշափում էի փշաթփերով ծածկված ճանապարհը, թե չէ կփակեի անիծված ականջներս, որպեսզի չլսեի տանջվող մանուկների ու ծերերի աղերսող ձայները. երանի թե խուլ լինեի… Արյան մեջ շաղախված մարդկանց չտեսնելու

համար գնում էի գետափով, սակայն այնտեղ նույնպես լուսնի լույսի տակ երևում էին գետում խեղդվածների մարմինները, որոնք օրորվում էին փրփրացող ջրի երեսին ու տարուբերվում ալիքների վրա:

Մոտենալով հորդացած գետին՝ հանկարծ աչքիս երևացին սևին տվող մարմիններ, որից մեկը ընդհուպ մոտեցել էր արևից չորացած ավազին: Փրփրած ալիքները մերթընդմերթ նրան դուրս էին բերում գետի ափ և իր մակընթացով կրկին հետ տանում: Նկատելով նրան՝ ինձ մի պահ թվաց, թե դա գետում խեղդված Գեղանուշի ատամներից պոկված նորածնի բարուրը լիներ: Չռելով աչքերս՝ բնազդաբար միանգամից թաղվեցի ջրի մեջ՝ նրան դուրս բերելու, սակայն սայթաքելով ոտքս կպավ սև սքեմով փաթաթված մի ուռած դիակի: Հանկարծակիի գալով մի ակնթարթում հետ քաշվեցի ու մեջքի վրա վայր ընկա ջրի մեջ: Չնայած ես շատ սպանվածներ էի տեսել և վաղուց ընտելացել նման տեսարանների, բայց այդ անգամ, չգիտեմ ինչու, սիրտս լցվեց մեծ երկյուղով: Վայրկենապես ուզեցի հեռանալ, բայց պատանեկան հետաքրքրությունը ստիպեց ինձ կրկին նայել դիակին: Չնայած մութ էր, բայց սուր տեսողությունս ինձ չդավաճանեց: Սև սքեմով փաթաթված մարմինը դեռ ցերեկով գետը նետված տեր Օհանի ուռած մարմինն էր, ըստ երևույթին փրփրացող ալիքները լայն սքեմի օգնությամբ նրան դուրս էին բերել գետափ, և այդ պահին նրա ծանրացած գլուխը թաղված էր փափուկ ավազների մեջ, իսկ երկար ու մերկ ոտքերը չորացած փայտի նման օրորվում էին պղտոր ջրի երեսին:

Տեսնելով խեղդված տեր Օհանին՝ սարսափած հետ քաշվեցի, որ շուտ հեռանամ այդ դժոխային վայրից:

«Ա՜խ, երանի թե Ծովակի բարուրը լիներ... Թեթև էր, կվերցնեի հետս ու կհանձնեի Աննային: Գոնե նրանով Ավագի օջախը չէր մարի»,– այդպես մտածելով՝ քարաբեկորների ու խիտ քոլերի արանքներով իջնում էի ցած: Օրվա արյունահեղ անցուդարձից խիստ ազդված՝ քայլում էի խելագարի պես՝ ինքս էլ չիմանալով ուր: Այնուամենայնիվ գետի հոսանքն ինձ տանում էր դեպի կամուրջ, որից այն կողմ, ըստ իս, պետք է լինեին հարազատներս՝ Աննան, Բալաբեկը և մյուսները:

Հորդացած գետի վշշոցն օգնում էր ինձ քարափներից եկած վիրավորների ծանր հառաչանքները լսելուց խուսափել: Քայլում էի խռովահույզ փախստականի պես, որպեսզի որևէ կենդանի արարած չտեսնի ինձ կամ չհարցնի, թե ուր եմ փախչում այդ սարսափելի մութ գիշերով: Բայց հոգնած ու տանջահար մարմինս քաղցածությունից առաջ էր շարժվում էլ ավելի քան դանդաղ: Մերթընդմերթ դիպչում էի քարերին,

փշոտ թփերին, թավալգլոր վայր ընկնում փոսերի մեջ՝ չզգալով անգամ մարմնական որևէ ցավ: Հևալով տրոփում էր սիրտս, ալեկոծվում հոգիս: Բոլորովին մոռացել էի քաղցը, անասելի ցավը, ամառային շոգ օրվա ծարավն ու հոգնածությունը, մանավանդ մերկությունս: Դեռ ցերեկով գետ մտնելիս Մնոյի օրինակով թրջված վերնաշապիկս հանելով քամեցի, բայց իմ անզգուշության հետևանքով շուտով այն ալիքների բաժին դարձավ, դրանից հետո քայլում էի կիսամերկ:

Հեռացա գետափից ու աստիճանաբար մեղմացավ նաև նրա ահռելի խշշոցը, որը մինչ այդ խլացրել էր առանց այն էլ թմրած ականջներս: Կողմնորոշվելու նպատակով մի պահ կանգ առա՝ նստելով քարին, և նայեցի չորս կողմս, սակայն բացի լեռնաշղթաների կատարներին նստած աստղերով լիքը կապույտ երկնքի մի նեղ ու երկար շերտից ուրիշ ոչինչ չերևաց:

Գետի խշշոցը մեղմանալու հետ շատ հեռվից լսվեցին մարդկային խուլ ձայներ, իսկ աջ կողմից ձգվող լեռնաշղթայի բարձունքից հրացանային հատուկենտ կրակոցներ: Սրելով լսողությունս՝ այս անգամ ականջիս հասան Հայկ, Մկրտիչ, Գրիգոր, Սմբատ, Վարդան, Ծովինար և այլ անուններ: Ըստ երևույթին նրանք նույն օրվա կոտորածից փրկված գաղթականների հուզումնալի ձայներն էին, որոնք ձորի մթության մեջ որոնելով կանչում էին իրենց անհետացած հարազատներին:

Հեռվից լսվող ձայները ավելի էին ուժեղանում և աստիճանաբար մոտենում քարափին, որտեղ մի պահ նստել էի ինքս:

Հայ մարդկանց բարձր կանչերից ուրախացած՝ կարծես թե մեռած տեղից շունչ առա և մի ակնթարթում նստած տեղից վեր թռա՝ վազելով դեպի ցած: Սակայն դեռ հարյուր քայլ չէի առաջացել, երբ դիմացից երևաց հեծյալների մի զորախումբ, որը շարժվում էր ձորի ամբողջ լայնությամբ:

Նժույգների սմբակների տակ չընկնելու նպատակով արագորեն դուրս եկա ճանապարհից, ուզեցի թաքնվել քարափների մեջ, սակայն ուշ էր արդեն. հեծյալներից մեկը, նկատելով ինձ, նժույգից վայր գալով, մոտեցավ քարափին: Ուշքի գալով մի պահ փորձեցի փախչել, բայց հեռանալ չկարողացա: Մինչ կմտնեի քարաբեկորի հետևը, զինվորը վարժված որսկանի պես կտրեց ճանապարհս և թևիցս պինդ բռնեց.

– Մի՛ վախիր, քո եղբայրն եմ՝ հայ զինվոր,– լսվեց նրա բարի ու մեղմ ձայնը այն էլ հարազատ, մայրենի լեզվով:

Լսելով նրա հուսադրող միայն այդ երկու բառը՝ հուզմունքից կարծես թե սիրտս միանգամից փուլ եկավ ու սկսեցի բարձրաձայն լաց լի-

նել՝ ազատություն տալով աչքերիցս թափվող արցունքներին: Չգիտեմ՝ այդ վայրկյանին ինչ էր մտածում հեծյալը, բայց անխոս կանգնած՝ իր երկու ձեռքերով խառնում էր կեղտից կոշտացած մազերս, իսկ ես գրկել էի նրան, ինչպես հարազատ եղբորս՝ շարունակելով արտասվել ու չկարողանալով թեկուզ որևէ խոսք փոխանակել նրա հետ:

Վերջապես մեզ մոտեցող զինվորների միջամտությունը ստիպեց ինձ մի պահ սթափվել ու բաց թողնել համբերատար հեծյալին:

– Ու՞մ ես կորցրել, փոքրի՛կ տղա,– հարցրեց զինվորը, որը, մինչ այդ լուռ կանգնած, նայում էր արտասվալի աչքերիս:

– Մնոյին եմ կորցրել,– հեկեկալով պատասխանեցի ես՝ նայելով հեծյալին:

– Մնոն քո հա՞յրն է,– հարցրեց նա:

– Ո՛չ, Մնոն իմ ընկերն է՝ մեր պատանիների ղեկավարը:

– Սպանվե՞ց, թե՞ գետն ընկավ,– հարցրեց նա:

– Չգիտեմ, նա աչքիս առաջից անհետացավ մի ակնթարթում, երբ ռուսները հարձակման անցան,– պատասխանեցի ես՝ հետաքրքրությամբ նայելով նրա ձեռքում եղած երկար նիզակին:

Հեծյալներից շատերը նժույգներից իջնում էին, նորից հեծնում. երևում էր, որ նրանք օգնում էին աղերսող վիրավորներին, բայց և այնպես, նրանց հիմնական մասը շարունակում էր առաջ շարժվել:

Ըստ երևույթին ինձ հանդիպող զինվորը նույնպես ժամանակ չուներ հարցուփորձ անելու, ավելի շուտ նրան արդեն հայտնի էր, թե ինչ ահավոր կոտորածներ են տեղի ունեցել Բերկրիի ձորում, ուստի շատ չսպասեց, թևիցս բռնելով՝ բարձրացրեց թամբին, ու ինքն էլ նստեց:

– Ամո՛ւր բռնիր մեջքս,– առաջարկեց նա ու մի ակնթարթում խթանեց իր սև նժույգը:

Անցած օրվա անասելի տառապանքներից խիստ հոգնած՝ քնել էի մեռելի պես, բայց զառանցելով անընդհատ մայրիկիս էի կանչում:

Երազի ու ջերմի մեջ մեկ խոսում էի Մնոյի, Վարդանի ու մնացած ընկերներիս հետ, մեկ էլ կապարի պես ծանրացած մարմնով վազում դեպի գետը վիրավորվածներին ջուր հասցնելու համար: Լսում էի թշնամու գնդակներից վայր ընկած կանանց ու երեխաների սոսկալի հառաչանքները: Վազելով ընկնում էի գետի ալիքների մեջ, հանկարծակի ճչում՝ ըստ երևույթին անհանգստացնելով ինձ փրկող հայ հեծյալին, ու կրկին ընկղմվում խոր քնի մեջ:

Արթնացա այն պահին, երբ հեծյալների քառաշարք նժույգների՝ գետն անցնելիս սառը ջրի ցայտերից թրջվեցին դեռ ցավից մրմռացող

մերկ ոտքերս: Դուրս գալով երեկվա անդնդանման խոր ձորից՝ մեր առջև բացվեց մի ընդարձակ հարթ տարածություն, որի հեռավոր հորիզոնները ծածկված էին լուսաբացի ցուրտ քամուց ցրված թխպոտ ամպերով, իսկ երևացող հարթավայրը դեռ գտնվում էր մթնշաղի սև ստվերի մեջ: Դա Աբաղու՝ կանաչին տվող լայնածավալ դաշտն էր, որտեղով դանդաղորեն քայլում էին ահավոր կոտորածից փրկված հայ գաղթականների նոսրացած քարավանները:

Մի պահ արթնանալով՝ շարժվել չկարողացա: Երևում էր, որ հեծյալն ինձ կապել էր իր մեջքին նժույգից վայր չընկնելու համար:

Դաշտի հյուսիսային կողմից փչող զով քամուց սրսփալով՝ մի պահ սկսեցի շարժվել, միաժամանակ ճաքճքված ոտքերով բնազդաբար խթանելով գետից դուրս եկող սև նժույգը:

– Արթնացա՞ր, փոքրի՛կ եղբայր,– հարցրեց հեծյալը՝ շեղ նայելով քնից դեռ չբացված աչքերիս:

– Այո՛,– մեղմորեն պատասխանեցի ես ուրախացած:

– Հասել ենք Աբաղու դաշտը, երևի յուրայիններդ այստեղ կլինեն,– ասաց նա՝ ցույց տալով ճանապարհին փռված հայ գաղթականներին, որոնք դալկահար քայլում էին դեպի հյուսիս՝ հեռվում երևացող ձյունածածկ բարձր սարի լանջերը:

– Ո՞ւր են գնում, մորեղբա՛յր,– հարցրի ես աշխուժացած. կարծես թե գիշերվա ջերմության մեջ զառանցող պատանին չլինեի:

– Գնում են մայր Հայաստան՝ դեպի էջմիածին,– պատասխանեց հեծյալը,– հիմա իջի՛ր, դու այստեղ կգտնես քո հարազատներին, որոնց մեկ–մեկ երազում կանչում էիր:

– Մնոն էլ է՞ այստեղ,– միամտորեն հարցրի ես՝ շոշափելով նրա ձեռքում բռնած նիզակը:

– Բոլորն էլ այստեղ են, նրանց թվում նաև քո լավ ընկեր Մնոն,– պատասխանեց նա:

Ձեռքիցս բռնելով՝ նժույգի մեջքից վայր բերեց՝ միաժամանակ տալով ինձ օրվա հացի պաշարը և շաքարի մի մեծ կտոր:

Իջնելով ցած՝ հորիզոնից հենց նոր դուրս եկած արևի սուր ճառագայթների տակ ես առաջին անգամ պարզ նշմարեցի ինձ փրկող հայ կամավորի դեմքը և նրա գեղեցիկ սև աչքերը: Դժբախտաբար, նա շտապում էր և երկար հարցուփորձ անել չէր կարող, ուստի մի քանի հուսադրող լավ խոսքեր ասելուց հետո անմիջապես խթանեց իր սև նըժույգն ու քառատրոփ արշավելով՝ հասավ տեղից հեռացող հեծյալ ջոկատին:

Հայ զինվորի հեռանալուց հետո էլ ես, դեռ երկար ժամանակ տեղում կանգնած, հետևում էի նրան՝ աչքս չկտրելով փոշու մեջ կորած ձիավորներից, որոնք, ձորից դուրս գալով, միանգամից թեքվեցին դաշտի արևմտյան կողմը, ըստ երևույթին դեպի դիմացի լեռները՝ փախչող թշնամու զորքերին հետապնդելու:

*
* *

Չնայած այդ առավոտ չէին լսվում գնդակների ճարճատյունն ու արկերի պայթյունները, բայց և այնպես Աբաղու անծայրածիր հարթ տարածությունն իսկական կռվի դաշտի էր նմանվում: Հորիզոնից դուրս եկած արևի հետ շուտով դաշտի սև ստվերներին փոխարինեցին ռուսական հետևակային զորքերի գումարտակները, որոնք իրենց լայն բացազատված երամաձև շարքերով շարժվում էին դեպի արևմուտք՝ հենց այն ուղղությամբ, որտեղ լուսաբացին քառատրոփ արշավով հեռացավ ինձ փրկող հայ հեծյալն իր ջոկատով:

Երամաձև գորշ շարքերի առջևից գնում էին ոսկեգույն ուսադիրներով սպաները, որոնց մերկացրած սրերը մերթընդմերթ փայլում էին արևի վառ շողերից: Նայելով ռուսական զորքերի շարքերին՝ մի պահ հիշեցի անցնող օրվա ահավոր կոտորածն, ու սիրտս կրկին մղկտաց խոր ցավից: Նայելով նրանց հուժկու քայլերին՝ բնազդաբար մտաբերեցի այն քաջասիրտ հայ պատանուն, որն արհամարհելով մահը, իր վիրավորված հոր զենքը վերցնելով, մեկ ակնթարթում մագլցելով քարափների մեջ, կարողացավ լռեցնել ձորում դարանակալած թշնամու գնդացրի ճարճատյունը և ապա համառորեն հարձակման անցնող ասկյարներին:

«Ո՞ւր էին այդ երամաձև խիտ շարքերը երեկ՝ ահավոր ցերեկը»,– ցավով հարցնում էի ինքս ինձ՝ գլուխս կախ արած, ընկնելով խռովահույզ մտորումների մեջ: Ուղղակի շատ զարմանալի էր և հանելուկային... Բերկրիի ձորից այն կողմ ռուսական հեծյալ կազակներն էին, իսկ Աբաղու հարթավայրում հետևակային մեծ զորամիավորումները, ուրեմն ինչո՞ւ կոտորվեցին խաղաղ ու անզեն հայ գաղթականները, այն էլ օրը ցերեկով:

Տեսնելով Աբաղու լայնածավալ դաշտում ցրված զորքերի փայլատակող զենքերը՝ ուրախությունից մի պահ հրճվեցի, սակայն, երբ մտաբերեցի անցնող օրվա սարսափելի դեպքերը իր բոլոր մանրամասնություններով, սիրտս, կարծես թե միանգամից փուլ եկավ:

Չնայած ես դեռ փոքր էի, ընդամենը 13 տարեկան և տեղի ունեցող դեպքերի նկատմամբ ամենափոքր դատողությունն անգամ անել չէի կարող, այնուամենայնիվ այդ հասակն էլ բավական էր, որ հասկանայի, թե որքան անհոգ էին ու անհեռատես տվյալ ռազմաճակատի զորքերի զորավարները, որոնց նկատմամբ այնքան մեծ հույս ունեինք ու հավատ: Կասկած չկար, որ այնտեղ բացակայում էր բարձր սպայակազմի պատասխանատվության զգացումը հայ վասպուրականցիների գաղթի ճիշտ կազմակերպման նկատմամբ:

*
* *

Այդպես խոհերով տարված՝ դեռ կանգնած տեղում դիտում էի փոշու ամպերի մեջ կորած Աբաղու լայնածավալ դաշտից հեռացող հեծյալներին ու երամաձև շարժվող հետևակ զորքերի շարքերին:

Սթափվեցի այն պահին, երբ թիկունքիցս մեկը, թևիցս բռնելով, հարցրեց.

– Ինչո՞ւ ես կանգնել, բաբոյի՛ լաճ,– ցույց տալով իր բարի դեմքը, միաժամանակ հարդարելով կեղտից կոշտացած մազերս:

– Հենց այնպես, նայում եմ հեռացող զորքերին,– պատասխանեցի ես՝ նայելով նրա հյուծված, բայց շատ բարի դեմքին:

Անծանոթ մարդը շատախցի էր. քիչ հետո իմացա, որ անունը Ավետիս էր՝ իր հայրենի գավառի հերոսական պաշտպաններից մեկը: Նա հեռվից նկատել էր հեծյալ զորախմբից իմ բաժանվելու տեսարանը, և ինքն էլ ազդվելով մոտեցել էր ինձ, մինչդեռ ես իրեն չէի նկատել մինչ այդ: Իմանալով իմ ով լինելը և ինչու եմ մենակ, առանց ծնողների, Ավետիսը մեծ կարեկցանքով առաջարկեց ինձ միանալ իրենց քարավանին, որը բարեբախտաբար դեռ մեկ օր առաջ կարողացել էր դուրս գալ Բերկրիի խոր ձորից՝ ականատես չլինելով այն սարսափելի կոտորածներին, ինչ որ տեսել էի սեփական աչքերով:

Կարճ հանգստից հետո շատախցիների փոքրացած քարավանը շարունակեց գաղթի ճանապարհը, իսկ ես կիսամերկ հետևեցի նրանց՝ աշխատելով չհեռանալ իմ նոր ծանոթ Ավետիսից:

Քայլելով դեպի Մասիս սարի ստորին լանջերը՝ ճանապարհի երկու կողմերին երևացին ինձ համար անսովոր թվացող բլուրներ, որոնք վառվում էին բոցերի մեջ: Մոտենալով նրանց՝ մի պահ աչքերիս չհավատացի, որ երևացող հրդեհները ոչ թե սովորական բլուրներ էին, այլ ռազմական հանդերձանք, իրար վրա կուտակված մթերքների դեզեր:

– Ինչո՞ւ են վառվում այդ բլուրները,– միամտորեն հարցրի կողքիցս քայլող շատախցի Ավետիսին, որը, նայելով հրդեհված դեզերին, անընդհատ գլուխն էր շարժում:

– Բլուրներ չեն, բաբոյի՛ լաճ, դա տասնյակ հազարավոր մարդկանց քրտինքով վաստակած բարիքներ են,– պատասխանեց նա՝ խորը հոգոց հանելով:

– Բա ինչո՞ւ են վառել, քեռի՛,– կրկին հարցրի ես՝ անհանգստացած մարդու պես չհեռացնելով հայացքս հրդեհվող դեզերից:

– Տե՛ս այն վառվող բլուրը. ալյուրի պարկեր են, մյուսը՝ սպիտակ շաքարն է, երրորդ բլուրը պահածոներ, ձավար և այլ ուտելիքի պաշարներ, իսկ ճանապարհի հակառակ կողմի բոցավառվող բարձր դեզերը հանդերձանք է, զինվորական կոշիկներ և հագուստներ,– պատասխանեց քեռի Ավետիսը՝ շտապեցնելով յուրայիններին արագացնել իրենց քայլերը, որպեսզի շուտ հեռանան այրվող դաշտերից:

– Իսկ այդ ի՞նչ պայթյուններ են,– աշխուժացած հարցրի ես՝ ցույց տալով ճանապարհից ոչ հեռու՝ գետնից բարձրացող սև ծխի քուլաները:

– Դրանք ռազմանյութ են՝ փամփուշտներ, թնդանոթի արկեր, զենքեր և այլ զինամթերք,– տխրությամբ պատասխանեց նա՝ դադարելով կրակի բոցերին նայել:

– Ինչո՞ւ են այրում, քեռի՛ Ավետիս,– կրկին հարցրի ես:

– Այրում են, որ օսմանցիների ձեռքը չընկնի,– ցավով պատասխանեց նա՝ անիծելով պատերազմը սանձազերծողներին:

Երանի թե այդ զենքերի գոնե չնչին մասը գտնվեր հայ տղաների ու կանանց ձեռքերում, և կասկած չկար, որ Բերկրիի ձորում դարանակալ թշնամին իր արժանի հատուցումը կստանար, ու մենք այնքան մեծ զոհեր չէինք ունենա:

– Ափսո՜ս, հազա՜ր ափսոս, վառվող հանդերձանքը, այդ դիզված մթերքները,– շարքերից լսվում էին գաղթողների հուզումնալի ձայները:

Իհարկե, տեղին էր նրանց հուզմունքը, որովհետև այրվում էր աշխատավոր ժողովրդի քրտինքով ձեռք բերված հարստությունը:

Տեսնելով հրդեհվող դեզերը՝ ես ոչ մի կերպ չէի կարողանում հաշտվել այն մտքի հետ, թե անհնարին էր փրկել այդ մեծ հարստությունը, որը վառվում էր անխնա, բոլորիս աչքի առաջ, նամանավանդ այն ժամանակ, երբ թուրքական զորքերը դեռ շատ ու շատ հեռու էին գտնվում Աբաղու դաշտից, իսկ ռուսական բանակին սպասարկող հայրուրավոր դատարկված եզնասայլերը, ականատեսների ասելով, մեկ օր առաջ շարժվել էին դեպի թիկունք՝ նորանոր հանդերձանք բերելու:

Ամառվա այդ շոգ ժամին գաղթողների քարավանները քրտնաթոր, դանդաղ առաջ էին շարժվում, իսկ ես, զանազան մտքերով տարված, ընկել էի ինքնամոռացության մեջ և դեռ օրվա կեսին կորցրի շատախցի Ավետիսին ու նրանց քարավանը: Չգիտեմ՝ նրանք հե՞տ էին մնացել, թե՞ առաջ անցել, այնուամենայնիվ, շատ որոնելով, այլևս նրանց գտնել չկարողացա: Դրանից հետո ստիպված էի ինքնուրույն շաժվել՝ առանց որևէ մեկին հարցուփորձ անելու:

Հետևելով պատահական քարավաններին՝ վերջապես օրվա մայրամուտին մենք արդեն մոտենում էինք Մասիս սարի հարավարևմտյան լանջերին, որտեղից ուղիղ ու մեծ ճանապարհը մեզ տանում էր դեպի Օրգովի լիճը: Հասնելով ռուսական նախկին սահմանագլխին՝ գիշերվա կեսին խիստ հոգնածությունից կանգ առա և առաջին իսկ պատահած թփերի տակ պատսպարվելով՝ անմիջապես քուն մտա:

*
* *

Այդ գիշերն անցածների պես ջերմի ու զառանցանքի մեջ քնեցի խռովահույզ երազներով:

Ամառվա կարճ գիշերին՝ բաց երկնքի տակ, աչքիս առաջ նորից պատկերացան անցած օրերին տեղի ունեցած բոլոր դեպքերը՝ սկսած մանկության օրերից մինչև ահավոր կոտորածները: Կինոժապավենի նման մի պատկերը շատ արագորեն փոխվում էր մյուսով, և ես զգում էի, թե ինչպես ջրից հանված ձկան պես քարաբեկորների վրա թպրտալով՝ վեր էի թռչում՝ զգալով մարմնական սուր ցավեր: Ձառանցելով անընդհատ կանչում էի յուրայիններիս, աղերսում գետաձորում սպանված դիակների տակից ինձ դուրս բերել: Դեսուդեն էի փախչում հրդեհված կրակներից փրկվելու նպատակով, բայց ընկնում էի խեղդված դիակների վրա ու սոսկալի ճիչ արձակելով՝ պառկած տեղից վեր թռչում:

Մնոյի, Հայկի և Արամի հետ թոնրի ծանր խարձիկաթներով քանդում էինք գյուղական խրճիթի քարե պատերը թուրք զինված պահակներից ազատվելու համար: Սակայն ընկնելով փլված քարաբեկորների տակ՝ ձայն էի տալիս, օգնություն կանչում:

Երազի մեջ տեսնում էի ահավոր օրերին սպանված եղբորս թաղման արարողությունը, լսում էին նրա գերեզմանի վրա ողբացող Աննայի և Աչանի սարսափելի հառաչանքները:

Չգիտեմ՝ գիշերից շատ էր անցել թե քիչ, բայց և այնպես, մարմնիս ցավերը կարծես թե քիչ հանգստացել էին, և ես փաստորեն դադարել էի զառանցել:

Երազում տեսած անցանկալի տեսիլքները փոխարինվել էին մանկության օրերին անցկացրած երջանիկ դեպքերով: Գտնվում էի մայրիկիս ջերմ գրկում: Հին օրերի պես չարություններ էի անում, չխոսկան հարսիս ասածները հայրիկիս փոխանցելու համար խենթի պես անընդհատ ծիծաղում, հանդիպում էի իմ վաղեմի ընկերուհի Շուշանին, Ծաղկասարի լանջերից ծաղիկներ քաղում և դրանցով նրա շիկահեր մազերն էի զարդարում:

Հայրիկիս հետ, ձիերը նստած, մտնում էինք Բաշկալա քաղաքի խառնիճաղանջ շուկան: Շոշափելով թանկագին ապրանքները՝ գնումներ էինք կատարում, ուրախությունից վազում էի դեսուդեն, մի խանութից դեպի մյուսը՝ զարդարվելով նոր հագուստով, չմոռանալով նվերներ գնել նաև հարազատներիս, անգամ փոքրիկ զանգակներ մեր գառնուկների համար:

Քնիս մեջ պարզ լսում էի Ծաղկասարի լանջերում թռչկոտող գառնուկիս վզին կապված փոքրիկ զանգերի ղողանջները: Սակայն զանգերի ղողանջի հետ լսվեցին նաև օտար մարդկանց բարձր ձայները: Մի պահ ինձ թվաց, թե թուրք ավազակները կողոպտում են հայ գյուղացիներին՝ տանելով նրանց ոչխարների հոտերը, և հանկարծ քրտինքի մեջ կորած՝ պառկած տեղից վեր թռա:

Զարմանալի երազ էր այդ, բայց իրականությանը շատ մոտիկ:

Օրգովի կապուտակ լճի ափով հեղեղի պես դեպի Իգդիր էին շարժվում գաղթողների քարավանները և հազարից ավելի մանր եղջերավոր անասունների հոտը, որի միջից դեռ լսվում էր այն նույն զանգակի ղողանջը, ինչ լսել էի երազախառը քնի մեջ: Զանգերի ղողանջները շատ ծանոթ էին ականջիս. մի պահ սրելով լսողությունս՝ նրանց ձայնը ավելի մոտեցավ այն թփերին, որտեղ քիչ առաջ քնի մեջ երազ էի տեսնում: Մոտենալով ոչխարների հոտին՝ ես բնազդաբար սկսեցի որոնել զանգակներով զարդարված գառնուկին:

– Ի՞նչ ես որոնում, փոքրի՛կ տղա,– հարցրեց անասունների կողքից քայլող շքեղ հագնված վաճառականներից մեկը՝ հետաքրքրությամբ նայելով ցնցոտիներս զարդարող, մեջքիս կապած լայնեզր գոտուն:

– Զանգուլակով անասուններին եմ որոնում,– պատասխանեցի ես՝ աշխատելով դուրս գալ այդտեղից:

– Զանգակների հետ գործ չունես, տղա՛, հեռացի՛ր, թե չէ քեզ կխփեն,– զգուշացրեց նա՝ սակարկելով հայ գաղթողների հետ՝ նորանոր անասուններ գնելու համար:

Լսելով զանգակների ղողանջները, բայց չտեսնելով անասուններին՝ ես ստիպված էի քիչ հեռանալ և բարձր ձայնով կանչել իմ կարծեցյալ Արաբին:

– Արա՜բ, Արա՜բ, հո՜–հո՜, Արաբ,– մի քանի անգամ ձայն տվեցի, բայց Արաբը չերևաց:

Առաջանալով կրկին կանչեցի և ահա, ի զարմանս ներկա գտնվող մարդկանց, երկու փոքրիկ զանգուլակներով զարդարված Արաբը, ճեղքելով ոչխարների խիտ շարքերը, իր դմակի ծանրության տակ բառաչելով, վազեց դեպի ինձ և կարոտած մարդու պես սկսեց լիզել արևից վառված ձեռքերս ու այտերս ճիշտ այնպես, ինչպես գերությունից վերադարձած զավակը գրկախառնվելով կիամբուրի իրեն դիմավորող մորը:

*
* *

Ես Արաբից մեծ էի ավելի քան չորս տարով, բայց մեր տանեցիները երկուսիս հասակակիցներ էին համարում: Մեծանալով ես արդեն սկսել էի գառներ պահել, գութանի հորիկը քշել, իսկ Արաբը մայր դառնալով տարեկան ծնում էր երկուական գառնուկ, և այն ժամանակ նա արդեն ուներ երկու տասնյակից ավելի թոռներ ու ծոռներ:

Արաբը խոշոր ու գեր մաքի էր և լավ կաթնատու անասուն, որի համար մեր տնեցիները բոլորն էլ սիրում էին նրան: Առանձնապես ես շատ էի կապված նրա հետ, սիրում, փայփայում, հյութալի կերեր էի տալիս: Ես՝ որպես գառների ու լավ անասունների սիրահար, իմ գրպաններում մշտապես պահում էի մանրացած աղ՝ առանձնապես Արաբին կերցնելու համար, հենց այդ պատճառով էլ հավատարիմ անասունը երբեք իմ մոտից չէր հեռանում:

Փաթաթվելով Արաբին՝ մի պահ նրան հետ պահեցի ոչխարների հոտից, բայց հաստափոր, սև արխալուղով վաճառականը, մի կողմ հրելով ինձ, ոչխարի վզից պինդ բռնեց:

– Մերն է, ո՞ւր ես տանում,– աղաչում էի ես՝ համարյա թե կրնկակոխ հետևելով վաճառականին:

– Սուտ ես ասում, ուրիշից եմ գնել,– պատասխանեց վաճառականը՝ քաշելով Արաբին, ու խառնեց դանդաղորեն շարժվող ոչխարների հոտին:

– Ո՛չ, իմն է, իմ Արաբը,– զայրացած գոչեցի ես՝ նորից կանչելով անասունին. լսելով իմ ձայնը՝ նա կրկին դուրս եկավ ոչխարների հոտից ու վազելով մոտեցավ ինձ:

Պինդ բռնելով Արաբին՝ ես այլևս բաց չթողեցի նրան, իսկ վաճառականը զայրացած վերադարձավ ինձանից հետ խլելու համար:

Ականատես մարդիկ, տեսնելով իմ հուզմունքը, ըստ երևույթին իրենք նույնպես հուզվեցին, ուստի նրանցից շատերը միջամտեցին, որպեսզի անասունը ինձ վերադարձվի, բայց վաճառականը ագահ էր և ոչ մի կերպ չէր ուզում զիջած լինել: Այն ժամանակ, երբ հաստափոր վաճառականը, հրելով ինձ, ուզեց Արաբին պոկել ինձանից, երևաց հայ կամավորներից մեկը:

– Պարո՛ն վաճառական, չե՞ք տեսնում, որ անասունը գտել է իր տիրոջը և նրանից պոկվել չի ուզում, գոնե խղճացե՛ք,– ասաց նա՝ հրացանը ուսից վայր բերելով:

Տեսնելով զինվորի միջամտությունը՝ վաճառականը քիչ փափկեց, բայց հավատացնում էր, որ մաքին գնել է ուրիշից կես թումանով, ուստի առանց իր փողը վերադարձնելու՝ անասունին ինձ զիջել չի կարող: Սակայն հայ զինվորի ազդու հայացքը ստիպեց հաստափորին այլևս չվիճել:

Վաճառականների հեռանալուց հետո ես Արաբի վզին կապեցի իմ մահուդե լայնեզր գեղեցիկ գոտին և ճանապարհից հեռացա մոտակա թփերի մեջ՝ նրան կերակրելու. Արաբը նույնպես հոգնել էր, ուստի քիչ արածելուց հետո թփի ստվերում նստեց ու սովորականի պես սկսեց որոճալ, իսկ ես, որ ուտելու ոչինչ չունեի, ստիպված էի քաղցած պառկել անասունի կողքին՝ սպասելով վաճառականների հեռանալուն, որոնք, լճի ափին դեռ կանգնած, նորանոր գաղթականների էին կողոպտում:

Չնայած դեռ նոր էի քնից արթնացել, բայց պառկելով Արաբի կողքին՝ աչքերիս կոպերը աստիճանաբար սկսեցին ծանրանալ. քունը նեղում էր ինձ:

Որպեսզի Արաբը պատահականորեն չհեռանար ինձանից, ստիպված իմ մահուդե գեղեցիկ գոտու մեկ ծայրը կապել էի նրա պարանոցից, իսկ մյուսը փաթաթել ձախ թևիցս ու քիչ հետո քուն մտա: Արթնացա այն պահին, երբ պատահական մի անցորդ, թևիցս բռնելով, վեր բարձրացրեց:

– Վե՛ր կաց, տղա՛ս, թունավոր օձերը քեզ կխայթեն,– ասաց նա՝ հարցնելով իմ ով լինելը:

Ես դեռ երազների տպավորությունների տակ միանգամից նրան պատասխանել չկարողացա, բայց երբ խորը քնից սթափվեցի, անմիջապես չորս կողմս նայելով՝ հարցրի.

– Ու՞ր է իմ մաքին, ու՞ր է գոտիկս,– կրկնում էի՝ ահաբեկված մարդու պես վազելով դեսուդեն:

– Սև մաքին քո՞նն էր, տղա՛ս,– հարցրեց անծանոթը՝ նայելով թևիս կապած գոտիկի կտրվածքի մնացորդին:

– Այո՛, իմն էր,– պատասխանեցի ես ուրախացած՝ կարծելով՝ նա տեղեկություն կունենա և կասի, թե ուր է իմ Արաբը:

Սակայն անծանոթը, տեսնելով իմ շփոթվածությունը, հասկացավ, որ անիրավ վաճառականն Արաբին ոչ թե գնել էր, այլ հափշտակել անխղճորեն, այն էլ քնածս ժամանակ:

– Քո սև մաքին տարավ մի պարոն վաճառական. կարծում էի, որ գնած կլինի որևէ մեկից,– ասաց անծանոթը և ավելացրեց, – անասունի պարանոցին կապված զանգերն ու դեղին գույնի գոտին արձակելով՝ լիճ նետեց, իսկ նրան քարշ տալով խառնեց ոչխարների հոտին և կարգադրեց հովիվներից մեկին տեր կանգնել:

Լսելով անծանոթ մարդու հակիրճ պատմությունը՝ ես սաստիկ հուզվեցի, հատկապես գոտիս կորցնելու պատճառով, այն միակ հիշատակը, որը ինձ էր մնացել իմ զոհված հայրիկից:

Վաճառականը չէր հաշտվել այն մտքին, թե կարող է կորցնել կես թուման գումարը, ուստի հետևելով ինձ՝ սպասել էր, մինչև հայ կամավորը և դեպքին ներկա գտնվողները հեռանան, որպեսզի կրկին տիրանար Արաբին:

Շատ ցավալի էր ինձ համար կորցնել հայրիկիս կողմից Վան քաղաքից գնված լայնեզր մահուդե գոտին: Հինգ տարուց դեռ ավել ես կապում էի այդ գոտին: Այն լայն էր ու գեղեցիկ. մեջքիս կապելիս կարծես թե վահանի պես պաշտպանում էր ինձ: Ահա այդ օրն ագահ վաճառականը իսպառ կողոպտեց ինձ, մի բան, որ չէի տեսել գերության մեջ անգամ: Կորցնելով գոտիկս ու Արաբին՝ ես տխրությամբ հեռացա անծանոթ անցորդից և Օրգովի կապուտակ լճակից ոչ հեռու՝ Արարատյան դաշտին նայող սարի գագաթին կանգ առա՝ նպատակ ունենալով հետ մնացող հարազատներիս գտնելու:

Մասիս լեռան հյուսիսարևմտյան լանջերից պարզորեն երևում էին Արարատյան դաշտը և նրա վրա սփռված բազմաթիվ շեներ, կանաչազարդ այգիներ ու սպիտակին տվող ոլորապտույտ մայր Արաքսը: Աբաղու դաշտից բացի ես այդպիսի լայնածավալ հարթ տարածություն դեռ երբեք չէի տեսել: Մի հովիտ, որի չորսբոլորը հարսանյաց շուրջպարի նման ձգվում էր բարձրադիր լեռների մի ամբողջ շարան: Սարալանջի կանաչապատ բարձունքից երևում էր ամեն ինչ, յուրաքանչյուր ման-

ռուք, անգամ քիչ առաջ Օրգովից հեռացած ագահ և անկուշտ վաճառականների կողմից էժան գներով ձեռք բերված հազարավոր ոչխարների հոտը: Դիտողների թիվը աստիճանաբար շատանում էր տարբեր գավառներից գաղթող քարավանների մարդկանցով:

Հավաքվածներից շատերը, ըստ երևույթին ծանոթ լինելով Արարատյան դաշտավայրին, մեկը մյուսին հայտնում էին այն շեների անունները, որտեղ մի ժամանակ, հարկադրաբար հեռանալով հայրենի ծննդավայրից, իրենց փրկությունն էին գտել:

Նայելով Արարատյան դաշտին՝ ես դեռ չգիտեի, որ այդ գեղեցիկ հովիտն իր շեներով ու քաղաքներով նույնպես մեր հայրենիքի մի մասնիկն էր, ինչպիսին էին Վասպուրականի հեռավոր Նորդուզի կանաչապատ լեռները, որտեղ ծնվել էի ես և իմ պապերը:

Ունկնդրելով նրանց հուզումնալի պատմությունները մեր երկրի անցյալի մասին՝ հենց ինձ շրջապատող բախտակից մարդկանցից ես շատ բաներ իմացա: Այդ օրը հարազատներիս գտնելու վառ հույսերով տարված՝ միաժամանակ երազում էի ազատ ապրելու և իսկական հայրենիք ունենալու մեծ բաղձանքիս մասին: Այդ սոսկալի օրերին մեզանից ո՞վ կարող էր ենթադրել, թե Արարատյան լայնածավալ չնաշխարհիկ հովիտը մի լուսավոր առավոտ դառնալու էր աշխարհով մեկ ցրիվ եկած բազմաչարչար հայ ժողովրդի օրրանը:

Հավաքվածները խոսում էին տարբեր բարբառներով, բայց և այնպես ինձ համար հասկանալի լեզվով:

– Երևացող լայնածավալ տարածությունը մեր հայրենի երկիրն է, որի դաշտերով ու լեռներով դարեր ի վեր, մրրիկի նման, տրորել և սրբելով անցել են բազմաթիվ չար ոսոխներ,– պատմում էր կողքիս կանգնած հայոցձորցի մի պատկառելի տղամարդ՝ ցույց տալով Ալագյազի լանջերում սփռված շեներից մեկը, որտեղ մի քանի տարի առաջ անց էր կացրել իր երիտասարդական լավ օրերը, բայց կրկին վերադարձել էր պապենական հարկի տակ և ընկել ողբերգության մեջ:

Չնայած խոսող մարդը կրել էր անասելի զրկանքներ, տեսել էր ահավոր կոտորածները, կորցրել էր իր հարազատներին, բայց, ինչպես երևում էր, նրա բորբոքված սիրտն ու ոգին բոլորովին ընկճված չէր:

– Այսպիսի կոտորածներ եղել են դարեր շարունակ, բայց հայ ժողովուրդը Մասիսի, Ալագյազի և Սիփանի լեռների պես միշտ հպարտ ու կանգուն է մնացել: Նա ապրել է, ապրում է ու կապրի հուր հավիտյան,– ոգևորությամբ պատմում էր հայոցձորցին իր մոտ կանգնած մի խումբ երիտասարդ հայ տղաների, որոնք, նայելով Արարատյան դաշտին, շա-

ռունակ հարցեր էին տալիս և լարված ուշադրությամբ լսում նրա պատասխանը: Ես նույնպես լրջախոհ հետևում էի նրանց օրինակին:

Գեղեցիկ էր Արարատյան լայնածավալ դաշտը՝ իր կանաչապատ այգիներով, հին հուշարձաններով, ձորերից հոսող գետերով և արծաթափայլ մայր Արաքսով: Հովիտը երևում էր ափիս մեջ, և եթե ես գեղանկարիչ կամ տեղեկագրող լինեի, ապա այդ տեսարանը անպայման կտեղադրեի մի մեծ կտավի վրա ու որպես հուշանվեր՝ կհանձնեի մեր պատանիների խմբի ղեկավար Մնոյին, որին գտնելու հույսը բոլորովին չէի կտրել:

Իհարկե, ես սարալանջի բարձունքին կանգնել էի ոչ թե մշտապես Արարատյան դաշտին նայելու և անծանոթ մարդկանց զրույցները լսելու համար, չնայած դրանք շատ հետաքրքիր էին ու նորություններ էին ինձ համար: Առանձնանալով ճանապարհի եզրին՝ սրտատրոփ սպասում էի հետ մնացած մերձավորներիս, որոնց երկու օր առաջ թողել էի Բանդիմահու գետից այն կողմ՝ չար թշնամու շրջապատման սեղմ օղակի մեջ:

Դադարելով Արարատյան դաշտը դիտելուց՝ վճռեցի նույն ճանապարհով հետ գնալ նրանցից որևէ մեկին հանդիպելու նպատակով:

Չնայած ամառային երկար օրվա արևը երկնակամարից թեքվել էր դեպի արևմուտք, այնուամենայնիվ հարցուփորձ անելով ես կրկին վերադառնում էի դեպի Օրգովի լիճը՝ աշխատելով աչքից բաց չթողնել գաղթողներից և ոչ մեկին:

Տանջահար գաղթողների քարավանները, իջնելով ցած, դանդաղորեն շարժվում էին դեպի Արարատյան դաշտ՝ հայացքները չկտրելով Ալագյազի սարալանջերից, իսկ ոմանք էլ, մոտենալով լճափին, թեկուզ մեկ վայրկյան զովանալու նպատակով ուղղակի թափվում էին ջրի մեջ:

– Ինչո՞ւ ես վերադառնում, բաբոյի՛ լաճ,– հարցրեց շատախցու տարազով տղամարդկանցից մեկը՝ ոտքից գլուխ չափելով ինձ:

– Մերձավորներս հետ են մնացել, որոնում եմ, գուցե գտնեմ նրանց,– պատասխանեցի՝ աշխատելով աչքիցս բաց չթողնել առաջ շարժվող գաղթողների շարանը:

– Իզուր մի՛ չարչարվիր, լա՛ճ, հետ մնացողները կգան, եթե կենդանի են մնացել,– ասաց բարձրահասակ, հաղթանդամ երիտասարդ մի տղա, որի թևը կապված էր մետաքսյա սև շալով:

– Շա՞տ են հեռու,– հարցրի ես՝ աչքի տակից նայելով նրա ծանոթ դեմքին և արյունոտ զգեստներին:

– Մոտ են, թե հեռու, շուտով այստեղ կլինեն,– պատասխանեց նա՝ իր հերթին նայելով հագիս ցնցոտիներին ու ճաքճքված ոտքերիս, միաժամանակ հարցնելով՝ ուզեց իմանալ, թե ինչու եմ բաժանվել նորդուզցիների քարավանից:

– Ծնողներիս թողեցի Բերկրիի կամուրջի այն կողմը, իսկ ընկերոջս կորցրի ձորում՝ կոտորածի վերջին րոպեներին, երբ նա, Մայրանուշի ձեռքով սպանված թուրք ասկյարի հրացանը վերցնելով, միացավ քարափների մեջ ամրացած հայ տղաներին,– միամտորեն պատասխանեցի ես՝ հայացքս չկտրելով նրա դեմքից:

– Ընկերոջդ անունն ի՞նչ էր,– հետաքրքրությամբ հարցրեց վիրավոր տղան:

– Մնո՝ քեզ ծառա,– պատասխանեցի ես՝ նկարագրելով ընկերոջս և հույս ունենալով, որ վիրավորը որևէ տեղեկություն կունենար նրա մասին:

– Ճանաչեցի ընկերոջդ. նա թշնամու տեղատարափ կրակի տակ երկու անգամ օգնության հասավ մեզ՝ հանձնելով այն հրացանն ու փամփուշտները, որոնք վերցրել էր սպանված թուրք զինվորից,– ասաց երիտասարդ տղան և ավելացրեց,– բերած ավարը մեզ հանձնելուց հետո վիրավորվեց:

– Հետո ի՞նչ եղավ,– տրտմությամբ հարցրի ես և ճաքճքված ձեռքերով սկսեցի սրբել աչքերիցս թափվող արտասուքները, որոնք ոչ մի կերպ չէի կարողանում զսպել:

– Հետո ռուսական հեծյալների սարշավը թշնամու դիրքերի վրա ու Մնոյի անհայտանալը մեկ եղավ,– տխրությամբ պատասխանեց երիտասարդ տղան՝ իր վերքի ցավից կծկվելով. մի պահ դադարեց նույնիսկ խոսել:

Իհարկե, դեպքի մասին տեղյակ էին նաև մյուս տղաները, որոնց միջոցով շուտով իմացա, որ վիրավոր երիտասարդ տղան այն նույն անձնավորությունն էր, որը, Բերկրիի ձորում տեղի ունեցած կոտորածի ժամանակ առաջինը մագլցելով քարափների մեջ, կարողացավ լռեցնել թշնամու գնդացրի կրակը և հերոսաբար դիմադրել դրանց գերազանց ուժերի հարձակմանը:

Չախ թևից վիրավոր լինելով հանդերձ՝ այնուամենայնիվ երիտասարդ տղան ու իր ընկերները քարափներից հեռացել էին միայն օրհասական մարտի վերջին րոպեներին, հենց այն պահին, երբ ռուսական հեծյալ զորամասը, սարշավ մարտի մեջ մտնելով, ստիպել էր գազազած թշնամուն փախուստի դիմել:

Լսելով անծանոթ մարդկանց զրույցը՝ ես սրտատրոփ սպասում էի, թե նրանք որևէ ճիշտ տեղեկություն կտան Մնոյի մասին:

Սակայն նրանց խոսակցությունը իրենց մերձավորների մասին էր, որոնք կոտորվել էին Բերկրիի ձորում կամ անհայտացել Բանդիմահու գետի հակառակ կողմում:

– Իսկ ու՞ր թողեցիք Մնոյին,– դիմելով երիտասարդ տղային՝ հարցրի ես՝ աստիճանաբար մոտենալով նրան:

– Նստի՛ր, պատմեմ քո ընկերոջ մասին,– առաջարկեց նա, ձեռքիցս բռնելով՝ տարավ լճափին նստած իր ընկերների մոտ, որոնք համարյա թե մինչև գոտկատեղերը մտել էին արևից գոլացած ջրի մեջ:

– Չլիներ Մնոն, մենք չորս ընկերներով կենդանի չէինք մնա,– ասաց տղաներից մեկը, որը մինչ այդ խոսակցությանը չէր մասնակցում:

– Օրհասական մարտի վերջին րոպեներին այլևս թշնամուն դիմադրել չէինք կարող, փամփուշտներ չունեինք, ուստի մտադրվել էինք ինքնասպանություն գործել, քանի որ թշնամին մոտենում էր քարափներին՝ մեզ կենդանի-կենդանի հոշոտելու,– ավելացրեց վիրավորված երիտասարդը ու միաժամանակ շարունակեց,– և ահա հուսահատված պատրաստվում էինք մեկս մյուսի կյանքին վերջ տալու, բայց բարեբախտաբար հենց այդ վայրկյանին էլ քարաժայռի ճեղքից լսվեց մեկի ձայնը, ու հանկարծ կողքներիս կանգնեց Մնոն՝ ձեռքին ունենալով թուրքական քուչաչափ հրացանը ու փամփուշտներով լիքը մի տոպրակ:

– Հենց այդ էլ փրկեց մեզ մահից,– ծիծաղելով ասաց երկրորդ երիտասարդը՝ գովելով Մնոյին ճարպկության համար:

– Մեզ մոտեցող թուրք ասկյարները հավատացած էին, որ վերջապես ոչնչացրել են բոլոր գյավուրներին, դրա համար հասակով մեկ սկսել էին առաջ շարժվել դեպի քարափները, որտեղ դիրքավորվել էինք ինքներս, սակայն քաջասիրտ Մնոյի հասցրած փամփուշտների տարափը կրկին իր գործը արեց,– ասաց վիրավոր երիտասարդը, որի անունը դժբախտաբար չգիտեի և ամաչելուց չէի համարձակվում հարցնել:

Փամփուշտի պաշարը ստանալուց հետո հայ տղաները այլևս երկար ժամանակ չէին կռվել: Ռուսական հեծյալների հարձակման պահին նրանք, ոգևորված կազակների հուժկու ուռայով, նույնպես հետապնդել էին փախչող թշնամուն և հենց այնտեղ էլ կորցրել վիրավորված Մնոյին: Լսելով ընկերոջս վիրավորվելու մասին անծանոթ տղաների պատմությունը՝ հուզմունքից այլևս նրանց մոտ նստել չէի կարող, ուստի անանկատելիորեն հեռացա լճափից՝ մտնելով գաղթողների վերջին քարավանների նոսրացած շարքերը:

Կեսգիշերվա անհանգիստ քնի մեջ պարզորոշ լսում էի անծանոթ կանանց խոսակցություններն անցած ահավոր օրերին թուրք մարդասպանների կողմից կատարված ոճիրների, հայ կանանց ու աղջիկներին առևանգելու ու պղծելու մասին: Կանանցից մեկը պատմում էր անցած օրերի ինձ հանրածանոթ ինչ-որ դեպքերի մասին, բայց չգիտեի՝ լսածս երա՞զ էր, թե՞ իրականություն:

– Գիտեի, որ ճարպիկ են և հազարումի վտանգներից ազատվելով՝ Մոսուլի լեռներից հասել էին Հայոց ձոր, բայց իրենց քույրերից մեկին գերության մեջ թողնելով՝ որոշել էին վերադառնալ աղջկան փրկելու համար, սակայն կրկին ընկել էին գերության մեջ՝ այս անգամ տղայիս փրկելու,– պատմում էր կանանցից մեկը, որի ձայնը ծանոթ էր ականջիս:

– Ինչպե՞ս պատահեց, որ գերի ընկան,– լսվեց մի այլ ձայն՝ խնդրելով մինչև վերջ պատմել:

– Մայրանուշին փրկելով թուրք օնբաշու ճանկերից և նույն օրվա մայրամուտին փախուստի դիմելով՝ լուսաբացին հասանք Հովասարի անտառ, սակայն առաջ գնալ չկարողացանք. երկու հակադիր ուժերի միջև հրացանային ուժեղ մենամարտ էր,– ասաց պատմողը և ավելացրեց,– տղաները ճարպիկ գտնվեցին ու վտանգավոր վայրից մեզ փոխադրեցին գարնանային հեղեղներից առաջացած խորխորատների մեջ՝ թաքնվելու, բայց հենց այդտեղ էլ հանկարծակի վիրավորվեց տղաս՝ մնալով անշարժ:

– Հետո ի՞նչ եղավ,– հարցրեց դեպքերին անծանոթ կինը՝ անընդհատ հոգոց հանելով:

– Ամառվա սարսափելի շոգից շրթունքներս չորացել էին, բերաններս պապանձվել, ջրի կաթիլ անգամ չկար. չնայած մոտակա գետակը գտնվում էր թշնամու և ռուս զինվորների տեղատարափ կրակի տակ, այնուամենայնիվ մահվան գնով նրանք ջրի գնացին,– ելևէջներով լսվում էր միևնույն ձայնը. կարծես թե քարայրի խորքից էր գալիս այն:

– Բերեցի՞ն, թե՞ ոչ,– հարցրեց կանանցից մեկը, որի խոսակցական բարբառը առաջին անգամն էր ականջիս հասնում:

– Բարեբախտաբար օրվա վերջին հաջող վերադարձան՝ ջրով լիքը դույլերով, և մեր ուրախությանը չափ ու սահման չկար: Երբ բոլորս էլ կուշտ խմեցինք՝ հագեցնելով մեր ծարավը, չմոռացանք քիչ էլ թողնել տղայիս վերքը մշակելու համար, – պատասխանեց պատմողը ու շարունակեց, – լուսաբացին տղաս ջուր ուզեց, իսկ դույլերն արդեն դատարկ էին: Տղաները պատրաստվեցին կրկին ջրի երթալու:

– Չթողնեիր,– խոսակցության մեջ մտավ մի ուրիշ կին, որի ձայնը նույնպես անծանոթ էր ինձ:

– Փորձեցի արգելել, բայց բան դուրս չեկավ,– լսվեց պատասխանը:

– Այս անգամ չորսով գնացին և այլևս չվերադարձան,– խոսեց մի այլ կին, որի ձայնը կարծես թե ծանոթ լիներ ականջիս:

– Ի՞նչ եղավ նրանց,– ցավելով հարցրին մյուսները, որոնց ձայները մինչ այդ բոլորովին չէի լսել:

– Հասնելով մոտակա գյուղի այգիներին՝ կրկին ընկել էին գերության մեջ,– լսվեց պատասխան ձայնը և նորից շարունակվեց,– իհարկե մեծ դժվարություններից հետո նրանք համարյա թե հրաշքով փրկվեցին՝ իրենց հետ ազատելով նաև թուրքերի գերած 8 հայ տղաների, որոնք այժմ կենդանի են:

Լսելով այդ ամենը՝ ես մի պահ խոնավացած քոլերի մեջ շարժվելով արթնացա, սակայն չիմացա՝ քնած էի, թե արթուն, բայց ահա կրկին լսվեց նույն ծանոթ ձայնը:

– Վե՛ր կացեք, ուշ է արդեն, վերջին քարավանները առաջ են շարժվում,– կանչելով արթնացնում էր նա քնածներին:

Իհարկե, այդ ձայնը ինձ նույնպես պառկած տեղից վեր հանեց: Ոտքի կանգնելով՝ ես տրորեցի աչքերս ու միաժամանակ շարունակում էի լսել նրանց խոսակցությունները: Դուրս գալով անձրևից խոնավացած թփերից՝ հանկարծ կողքիս տեսա Ոսկեհատ քույրիկին, որին շրջապատել էին Աստղիկը, Արևիկը, Միհրանը, Վարուժանը, Սանթուրը և մի շարք այլ մարդիկ, որոնց տեսնում էի առաջին անգամ: Նկատելով ինձ՝ նրանք մի պահ կարծես թե ապշահար եղած, խելագարի պես թափվեցին վրաս այնպես, ինչպես մեր գյուղի գետաձորում սպանված դիակների տակից դուրս գալու ժամանակ, Աննայի ու Աչանի նման, մեկը մյուսից խլելով, քաշքշում էին դեսուդեն:

– Էտա դո՞ւ ես, Սևո՛ւկ ջան, թե՞ երազ եմ տեսնում,– արտասվելով հարցրեց Ոսկեհատ քույրիկը՝ ամուր սեղմելով իր կրծքին՝ միաժամանակ շոշափելով հագիս հին ցնցոտիները:

– Ես եմ, մորաքո՛ւյր,– ժպտալով պատասխանեցի ես:

– Ո՞ւր է Մնոն,– չորս կողմից հարցրին նրանք:

Իհարկե, առաջին վայրկյանին խիստ հուզվելուց ես ոչ մեկին պատասխանել չկարողացա, բայց քիչ շունչ առնելուց հետո սկսեցի պատմել Բերկրիի ձորում տեղի ունեցած սարսափելի դեպքերի մասին, որի

ականատեսներից մեկը ինքս էի եղել, վերջում հայտնեցի Մնոյի անհետանալու մասին ու սկսեցի արտասվել:

– Մի՛ արտասվիր, զավա՛կս, Մնոն ճարպիկ է և չի կորչի,– ոգևորված համոզում էր ինձ Ոսկեհատ քույրիկը՝ ցույց տալով լճափին նստածներին, որոնց մեջ էին Աննան, Բալաբեկը, Դավիթի այրի կին Մարիամը՝ իր երեք աղջիկներով:

Լսելով Ոսկեհատ քույրիկին՝ միանգամից պոկվեցի ինձ շրջապատող կանանցից ու մի շնչով հասա լճափ՝ անակնկալ հայտնվելով Աննայի ջերմ գրկում:

Ծանր խոհերով տարված՝ ըստ երևույթին Աննան առաջին պահին չիմացավ, թե ով է իրեն համբուրողը, բայց երբ մեզանից ոչ հեռու կանգնած Շուշանիկը, Սևուկ կանչելով, մոտեցավ երկուսիս, նոր միայն հասկացավ, որ հարազատ եղբայրը կրկին կենդանի է մնացել:

Նա մի պահ հետ քաշվեց՝ նայելով արտասվալի աչքերիս, ապա ամուր սեղմեց իր կրծքին ու հանկարծ ուրախությունից միանգամից թուլացավ ու ուշաթափ ընկավ վրա հասած Փառանձեմ մայրիկի բազուկներին:

Մինչ Դավիթի այրի կին Մարիամն ու սկեսուրը նրան ուշքի կբերեին, ես աչքի տակով փնտրում էի Վարդանին, Աչանին և մյուս հարազատներիս: Սակայն չնկատելով նրանց՝ սիրտս սկսեց ավելի բաբախել, և քիչ էր մնացել ինքս նույնպես ուշաթափված ընկնեի Աննայի կողքին, բայց զսպելով ինձ՝ մի պահ վատ մտքերս հեռու վանեցի՝ աշխատելով օգնել կանանց՝ քույրիկիս ուշքի բերելու:

*

* *

Գաղթողների ամենավերջին քարավանը կրկին մերն էր, որն այդ օրը Մասիս լեռան լանջերով իջնում էր Արարատյան դաշտավայր: Իհարկե, Բերկրիի ձորում տեղի ունեցած կոտորածներից հետո մեր գյուղի բնակչության զգալի մասը անհայտ կորել էր, և մեզնից ոչ ոք չգիտեր՝ նրանք կենդանի՞ էին մնացել, թե՞ ոչ:

Ընկերներիս հետ քարավանից առաջ անցնելով՝ սարալանջի մեծ խճուղու եզրին աչքիս երևաց վառ գույներով գործած մի գեղեցիկ կարպետ, որի տակից դուրս էին եկել նորդուզցու կոշիկներով երկու փոքրիկ ոտքեր: Առաջին պահին ինձ թվաց, թե մեռածներից մեկը կլինի, ուստի մի պահ դիտելուց հետո ուզեցի հեռանալ, բայց ահա կարպետի տակից դուրս եկած ոտքերը շարժվեցին ու մի ակնթարթում ծածկվեցին:

– Կենդանի է,– հայտարարեց կողքիս կանգնած Սարգիսը, որի ձեռքից բռնած՝ մինչ այդ պատմում էի Արարատյան դաշտի մասին նախորդ օրվա իմ տեսած անծանոթ մարդկանց զրույցները:

– Ստուգենք, գուցե քնած է,– առաջարկեցի ես՝ մոտենալով պառկածին և փորձելով արթնացնել նրան:

Սակայն մինչ կբարձրացնեի նրա վրա փռված կարպետը, մեր կարծեցյալ քնածը, մի ակնթարթում պառկած տեղից վեր թռչելով, ամուր գրկեց ինձ: Չնայած առաջին իսկ վայրկյանին չկարողացա իմանալ նրա ով լինելը, բայց երբ գլխից վայր բերի այծի մորթուց կարված բկավոր սև գլխարկը, ապա շատ անսպասելիորեն ես ինձ տեսա իմ եղբայր Վարդանի ջերմ գրկում:

Շատ հուզումնալի էր մեր հանդիպումը Վարդանի հետ: Մենք բոլորս հրճվանքից թռչկոտում էինք դեսուդեն, շարունակ գրկում մեկս մյուսին՝ չհավատալով մեր աչքերին:

Իսկապես մեզանից ո՞վ կարող էր հավատալ կամ ենթադրել, թե Օրգովից Իգդիր տանող ոլորապտույտ խճուղու եզրին կարպետով ծածկված անհայտ մարդը մեր հարազատներից մեկը կլիներ, որին շատերը ընդմիշտ կորած էին համարում:

Ասենք, հավատալու որևէ հիմք էլ չկար, քանի որ մեծ գաղթի ճանապարհներին ընկած էին բազմաթիվ մեռածների բաց կամ ծածկված մարմիններ, որոնք շատ դեպքերում իրենց վրա չէին գրավում մեր՝ պատանիների ուշադրությունը: Գտնելով եղբորս՝ մենք ութ ընկերներով այլևս առաջ չշարժվեցինք՝ սպասելով յուրայինների երևալուն նրանց նույնպես հանկարծակի ուրախացնելու համար:

Նույն օրվա երկրորդ կեսին, սարալանջի այգիներում Վարդանին առած, դիմավորեցինք յուրայիններին, որոնք իրենց հերթին գաղթողների վերջին քարավանների միջից գտել էին իրենց կորցրած հարազատներից որևէ մեկին և ուրախալի դեմքերով մոտենում էին Արարատյան դաշտի առաջին բնակավայրերից մեկին՝ Իգդիր գյուղաքաղաքին:

*
* *

Բերկրիի ձորում անհետացած յուրայիններին գտնելու համար շատ որոնեցինք, բայց դժբախտաբար ո՛չ Օրգովում և ո՛չ էլ դեպի Արարատյան դաշտ իջնող ճանապարհին որևէ մեկին հանդիպել չկարողացանք: Մեզ մնում էր մի ելք. առանց հանգստանալու դուրս գալ Իգդիր գյուղաքաղաքից և, որքան հնարավոր էր, շուտ հասնել մայր Արաքսի

ափերին ու սպասել կամրջի մոտ. գուցե այնտեղ պատահականորեն կհանդիպեինք նրանց:

Հաջորդ օրը՝ առավոտյան, երբ արևի առատ ճառագայթները դեռ նոր էին սփռվել Արարատյան լայնածավալ դաշտի վրա, մենք արդեն գտնվում էինք արծաթափայլ մայր Արաքսի աջ ափին՝ անհամբեր սպասելով կամարակապ կամրջին մոտեցող քարավաններին: Մեր պատանիների նոսրացած խումբը, գործելով առանց Մնոյի, այս անգամ Նիկոլի ղեկավարությամբ կտրեց գաղթողների ճանապարհը և դասավորվելով երկաթյա կամրջի չորս անկյուններում, արթուն հսկում էր տախտակամածին մոտեցող խռովահույզ մարդկանց խառնիճաղանջ շարքերը՝ աշխատելով աչքից բաց չթողնել նրանցից ոչ մեկին:

Չգտնելով յուրայիններիս՝ հաջորդ օրվա կիզիչ արևի տակ, քրտինքի ու փոշու մեջ կորած, հոգնածությունից ջարդված ոտքերով դանդաղորեն շարժվում էինք դեպի էջմիածին, դեպի այն վանքը, որի մասին դեռ Աբաղու դաշտում լսել էի ինձ փրկող հայ հեծյալից:

Այդ նույն օրը՝ երեկոյան ուշ ժամին, հասնելով երևացող խիտ անտառի եզրին, մեր քարավանի ղեկավար Հարություն Եղոյանի կարգադրությամբ կանգ առնելով, մթության մեջ տեղավորվեցինք առաջին իսկ պատահած ծառուղիներից մեկում ու պառկեցինք խոնավ հողակույտերի վրա: Չնայած քաղցած էի ու սոսկալի ծարավ, ջարդված մարմնով, միանգամից վայր ընկնելով, մյուսների հետ միասին քնեցի բաց երկնքի տակ՝ կրկին ընկղմվելով խռովահույզ երազների մեջ: Արևից ճաքճքված ձեռք ու ոտքերի ցավերից մերթընդմերթ զառանցելով՝ տեղից վեր էի թռչում, մեկ կանչում էի մեռած մայրիկիս, մեկ էլ կողքիս պառկած քույրիկիս, բայց չստանալով պատասխան, նորից կպչում խոնավացած հողաթմբին ու կրկին զառանցում: Պառկած տեղում լսում էի բազմաթիվ մարդկանց հառաչանքները, աղաչանքի ու բողոքի ձայները, ինձ թվում էր, թե անցած օրերի պես սոսկալի դեպքեր են կատարվում: Սակայն այդ օրվա չափից դուրս հոգնածությունը շուտով հաղթել էր ցավերիս, և ես նույնպես մյուսների օրինակով ընկղմվել էի խոր քնի մեջ:

Չնայած անտառի զով քամին ու գետնին թափված տերևների խոնավությունը թմրեցրել էին մարմնիս ցավերը, բայց լուսաբացին, անտառից ոչ հեռու վանքի զանգերի բարձր ղողանջները մեկ ակնթարթում արթնացրին ինձ գիշերվա խոր քնից:

– Վե՛ր կացեք՝ աղոթքի երթանք,– առաջարկեց կողքիս նստած Ոսկեհատ քույրիկը՝ ամրացնելով գլխին գցած փոշոտված լաչակը:

– Ո՞ւր,– հարցրին Շուշանիկի մայր Մարիամը և Աննայի սկեսուր Փառանձեմը ու խաչակնքելով տեղից վեր կացան:

– Վանք երթանք՝ Մայր տաճար, ուր հանգչում է Հայոց Հայրիկը,– գիտուն մարդու պես պատասխանեց Ոսկեհատը՝ իր սովորական տոպրակից հանելով հանգուցյալ վարպետ Սահակի պատմական ուրագն ու մի ուրիշ կապոց, որը շատ խորհրդավոր էր երևում բոլորիս:

– Երթանք միասին,– հայտարարեցին մյուսները ու տեղից վեր կացան:

– Իզուր ջանքեր միք թափի, վանքին շրջապատող պարիսպների դռները փակ են, դժվար թե կարողանաք ներս մտնել,– հայտարարեց մեզնից ոչ հեռու հողաթմբին նստած գաղթողներից մեկը, որը ջուր էր տալիս իր հիվանդ երեխային:

– Ինչո՞ւ են փակել,– դիմելով անծանոթին՝ հարցրեց Շուշանիկի մայր Մարիամը, նստած տեղից վեր կացավ՝ նայելով մահամերձ երեխային:

– Արդեն երեք օր է՝ թակում ենք փակ դռները, բայց իզուր. արգելված է մեզ ներս թողնել, – պատասխանեց մեկ ուրիշը, որը դանդաղորեն հավաքում էր գետնին փռած իր կարպետը ըստ երևույթին տեղից հեռանալու նպատակով:

– Ո՛չ, ուխտ եմ արել, պետք է երթամ,– ասաց Ոսկեհատ քույրիկը՝ արձակելով այն խորհրդավոր կապոցը, որը, հեռավոր Նորդուզի լեռնաշխարհից շալակած, հասցրել էր էջմիածնի հինավուրց խիտ անտառը, և այդ պահին պատրաստվում էր վանք տանել:

*

* *

1915 թվականի ապրիլյան ահավոր օրերին, երբ թուրք բարբարոսները քրդական աշիրների մասնակցությամբ սկսել էին Նորդուզ գավառի հայ բնակչության կոտորածը և թալանում էին նրանց հարստությունը, միաժամանակ պղծում ու ոչնչացնում այն բոլորը, ինչ ամենից թանկ էր յուրաքանչյուր հայ մարդու համար, Ոսկեհատ քույրիկը, իր զավակներին թողնելով հարևան քուրդ գյուղացիներից մեկի խրճիթում, վերցնում է նահատակված հոր՝ Սահակի պատմական ուրագն ու անհետանում գիշերվա խավարում: Բավականին շատ էր ուշացել Ոսկեհատը, իսկ անչափահաս զավակները, վախից դողալով, սկսել էին արտասվել՝ անհանգստացնելով քուրդ ընտանիքին:

– Ուշացավ, չլինի՞ թե անիրավները փախցրին նրան,– հարցնում է տանտիրոջ կինը՝ առաջարկելով աղքատ ամուսնուն օգնության հասնել:

Սակայն մինչ հայ գերդաստանին հովանավորող քուրդը կպատրաստվեր դուրս գալու, Ոսկեհատ քույրիկը, նորահարս Մայրանուշի ձեռքից բռնած, հևալով ներս է մտնում՝ կրծքին սեղմած մի կապոց, ու ընկնում խրճիթի չոր հատակին:

– Ո՞ւր գնացիր, ա՛յ քույրիկ, գիշերվա էս խավարին,– հարցնում է տանտերն անհանգստացած՝ աշխատելով գետնից վեր բարձրացնել երեսի վրա ընկած Ոսկեհատին:

– Գնացի, որ իմանամ, թե ինչ է կատարվում մերոնց հետ, միաժամանակ փրկեցի քույրիկիս,– պատասխանում է Ոսկեհատը՝ խույս տալով կրծքին սեղմած կապոցի մասին որևէ խոսք ասել:

Իհարկե, այդ ահավոր գիշերը կատարվող դեպքերը հայտնի էին բոլորին, այդ թվում նաև Ոսկեհատ քույրիկին. նրա հարազատներից շատերը ձերբակալվել ու շղթայակապ էին արվել նրա աչքերի առաջ, իսկ ինքը միայն պատահականությամբ կարողացել էր ազատվել և երկու անչափահաս զավակներին փախցնել քուրդ հարևանի խրճիթը, ճարպկորեն թաքցնել այնտեղ:

Նա այն խավար գիշերը, ուրագը ձեռքին բռնած, դուրս էր եկել խրճիթից մեծ նպատակներով: Նա մտել էր եկեղեցի և դուրս էր բերել խորանում եղած Ավետարանը, իսկ վերադարձի ճանապարհին փրկել էր նաև գեղեցիկ Մայրանուշին մարդասպանների ճանկերից:

Իհարկե, այդ պահից անցել էին կոտորածների ու հետապնդումների սարսափելի օրեր, բայց և այնպես Ոսկեհատ քույրիկը երբեք չէր լքել այդ ծանր բեռը, որը մշտապես անբաժան էր նրանից: Նա սրբությամբ էր պահել ու պահպանել այն, և այդ օրը, լսելով զանգերի ղողանջը, նա պատրաստվում էր աղոթքի գնալ, միաժամանակ էջմիածնի Մայր տաճարին հանձնել փրկած Ավետարանը:

– Գնանք, Մարիա՛մ քույրիկ,– առաջարկեց Ոսկեհատը՝ գետնից վերցնելով մետաքսյա շալով փաթաթած մեծ Ավետարանը ու ամուր սեղմելով կրծքին:

– Գնանք,– առաջարկեցին մյուսները՝ դուրս գալով անտառի ծառուղուց և ուղղություն վերցնելով դեպի սուրբ տաճար, որտեղ հանգչում էր Հայոց Հայրիկը՝ հաշվի չառնելով բարձր պարիսպների փակ դռների մասին անծանոթ գաղթականի զգուշացումը:

Փրկված Ավետարանը տաճարին հանձնելուց հետո, Եզնիկ վարդապետի քարոզից ոգևորված, Ոսկեհատ քույրիկը նույն օրվա կեսին ուրախ-ուրախ վերադարձավ անտառ և կարոտով գրկեց տեղում մնացած իր հարազատ զավակներին:

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՄԵԾ ՏԱՃԱՐՈՒՄ

Հայոց ձորը թողնելուց հետո երրորդ անգամ Շուշանիկին հանդիպեցի վաղ առավոտյան Գայանե վանքից ոչ հեռու՝ անտառի եզրին՝ բարդիների տակ, որտեղ պատսպարվել էին կոտորածից փրկված հայ գաղթականները: Վաղարշապատ հասնելու առաջին օրերին նրանցից շատերը զբաղված էին իրենց անչափահաս երեխաների խնամքով, հատկապես սնունդ և օթևան ճարելու մեծ հոգսերով, իսկ մեր նոսրացած խմբի տղաները, օգտվելով վիրավորված Մնոյի բացակայությունից, հակառակ ծնողների արգելքներին, ամբողջ օրը թափառում էին դեսուդեն: Չնայած հոգնած էի ու տկար, այնուամենայնիվ ես նույնպես տեղում մնալ չկարողացա: Առավոտյան, երբ հագնվելով պատրաստվում էի հեռանալ անտառից, ճանապարհս կտրեց Շուշանիկը:

– Ո՞ւր կերթաս,– հարցրեց նա՝ հետաքրքրությամբ նայելով նոր կարված ծաղկավոր վերնաշապիկիս, որը գնված էր քաղաքի շուկայում՝ Աննայի կողմից:

– Ասում են՝ անտառից դուրս լիճ կա, մեր Ծաղկասարի Կապուտակի պես ջինջ, իսկ նրանից ոչ հեռու՝ Էջմիածնի մեծ տաճարն է, որտեղ հանգչում է Հայոց Հայրիկը, գնում եմ տեսնելու,– պատասխանեցի ես՝ ավելի մոտենալով նրան:

– Գնանք միասին,– առաջարկեց նա՝ ցույց տալով պարանոցից կախված այն արծաթյա փոքրիկ խաչը, որն ինքս էի նվիրել նրան, դեռ Վարագա սարալանջի Լռիկ կոչվող աղբյուրի մոտ գերությունից վերադառնալու մեր հանդիպման պահին:

– Կտանեմ, եթե մայրիկդ թույլ տա,– պատասխանեցի ես՝ նայելով ծառուղում հավաքված մի խումբ կանանց, որոնք տագնապով խոսում էին անտառի խորքում բռնկված ինչ-որ հիվանդության մասին:

– Նա թույլ կտա, միայն թե քեզ հետ,– շիկնելով ասաց նա՝ նայելով հավաքվածներին, որտեղ կանգնած էին նաև իր մայրն ու երկու մեծ քույրերը:

– Ինչո՞ւ միայն ինձ հետ, այլ ոչ թե մեկ ուրիշի,– խայթելով հարցրի ես՝ միաժամանակ բուռն ցանկությամբ մտադրվելով վերականգնել մեր վաղեմի մտերմական անմեղ հարաբերությունները, որ ընդհատվել էին կոտորածների ահավոր օրերին:

– Չես ցանկանում՝ չեմ գա,– խռովկան երեխայի պես պատասխանեց նա շրջվելով, որ հեռանա ինձանից:

– Ո՛չ, ցանկանում եմ, որ ընկեր դառնաս, թեկուզ հավիտյան, միայն թե մայրիկդ չխոսի մեր մասին,– մտերմաբար ասացի ես՝ կտրելով նրա փախչելու ճանապարհը:

– Մայրիկս ուզում է միայն քեզ հետ, ուրիշ ոչ ոքի,– կտրուկ պատասխանեց նա՝ հետ դառնալով և ուղիղ նայելով աչքերիս:

Իսկ ես դեռ երեկոյան մտածում էի, թե ինչպես համոզեմ նրան, որ քաղաք գնայինք միասին: Ահա թե ինչու հպարտությունս շոյվեց, երբ ինքն արեց այն առաջարկը, որ մտադրվել էի ինքս անել: Տեսնելով նրա վառվռուն սև աչքերն ու զայրացկոտ լուրջ դեմքը՝ մի պահ կարծեցի, թե նա կարող է հրաժարվել ինձ ընկերակցելու մտադրությունից, այդ պատճառով էլ առանց մերոնց զգուշացնելու, ձեռքից ամուր բռնելով, դուրս բերեցի անտառից՝ առաջանալով դեպի երևացող փոքրիկ վանքի պարիսպները, որտեղից հնարավոր էր կողմնորոշվել մեծ տաճարի ու լիճը տանող ճանապարհի մասին:

Դուրս գալով ծառուղուց՝ մենք այնպես ամուր էինք բռնել մեկս մյուսի ձեռքը, որ թվում էր, թե բաց թողնելու դեպքում այլևս միմյանց տեսնել չէինք կարող: Մեր հանդիպումը շատ սրտառուչ էր և ուրախալի, քանի որ ահավոր դեպքերից հետո մենք իրար հանդիպում էինք միայնակ, այն էլ զարդարված տեղական նոր զգեստներով. ահա թե ինչու այդ գեղեցիկ զով առավոտյան, մեկս մյուսի սիրով տարված, գառնուկների պես թռչկոտում էինք այս ու այն կողմ, թփից թուփ, փոսերի մեջ՝ հաշվի չառնելով ծակող սուր փշերը: Վերջապես ուրախալի քրքիջով մի քանի րոպեից հետո հասանք առաջին իսկ պատահած բարձր պարսպին ու նրա կամարակապ բաց դռներից մեկով ներս մտանք:

Վանքի փոքրիկ գավիթը լիքն էր վասպուրականցի ուխտավոր հայ մարդկանցով: Նրանցից շատերը մատաղ անելու նախապատրաստությամբ էին զբաղված, ոմանք էլ մեծ հետաքրքրությամբ դիտում էին շրջապատի հուշարձանները, կարդում տապանաքարերի գրերը, իսկ երիտասարդ տղաներն ու աղջիկներն իրենց ապագա բախտը որոշելու նպատակով փոքրիկ քարեր էին կպցնում սրբատաշ մեծ քարասալի երեսին: Իհարկե, ես այդպիսի սրբավայրեր տեսել էի դեռ փոքր հասակից հայրենի ծննդավայրում, երբ տոնական օրերին Աննայի, Աչանի և մեր համագյուղացիների հետ ուխտատեղ էինք գնում մատաղ անելու, ուստի այդ տեսարանն առանձնապես մեծ զարմանք չէր պատճառում ինձ:

Ծանոթ լինելով այդ կարգի ծիսակատարություններին՝ մենք նույնպես մոտեցանք պարսպին ամրացրած սրբատաշ մեծ սալին ու մեր բախ-

տը փորձելու նպատակով սկսեցինք փոքրիկ քարերը կպցնել նրա լերկ երեսին: Չնայած ծիծաղելի էր այդ բոլորը, բայց և այնպես մոլեռանդ հավատացյալ մարդու կրքոտությամբ մենք նույնպես փորձում էինք գուշակել մեր ցանկությունը քարի երեսը քար կպցնելու միջոցով: Շատ չարչարվելուց հետո վերջապես քարասալի խորդուբորդ տեղերից մեկում հազիվ մի կերպ կպցրի իմ ձեռքում եղած փոքրիկ քարը:

– Ա՜խ երանի քեզ, իղձդ կատարվեց,– գորովանքով ասաց Շուշանիկը՝ ժպիտը երեսին նայելով աչքերիս:

– Քոնն էլ կկպչի, խելո՛ք, ինչո՞ւ ես մտածում,– ասացի ես՝ տալով նրան իմ ձեռքում եղած փոքրիկ ու տափակ քարերից մեկը:

Իսկապես շուտով նրա քարը նույնպես կպավ, և հենց այդ էլ առիթ էր, որ մենք սկսեինք բացատրվել միմյանց հետ:

– Ի՞նչ ուխտեցիր, որ քոնդ կպավ,– հարցրի ես՝ նրա փոքրիկ ձեռքերն առնելով ափերիս մեջ:

– Իմ գաղտնիքը չեմ ասի քեզ,– ժպիտով պատասխանեց նա:

– Այդ ի՞նչ գաղտնիք է, որ չես ուզում ինձ ասել:

– Առաջինը դո՛ւ ասա, հետո՝ ես,– շշուկով ասաց նա՝ գլուխը կախ գցելով և շիկնելով մինչև ականջների ծայրը:

– Ուրեմն չե՞ս ուզում ասել այն, ինչ ուխտեցիր,– ասացի ես՝ խռովկան երեխայի պես բաց թողնելով նրա ձեռքերը:

– Ինչքան էլ ստիպես, չեմ ասի,– կրկին համառեց նա, վայրի այծյամի պես մատուռի փոքրիկ դռնից դուրս փախավ, թաքնվեց պարսպի հակառակ կողմն ու սկսեց ինքնիրեն քրքջալ:

Իհարկե, իմ և նրա մտքերը նույնն էին, և մենք միմյանց լավ էինք հասկանում, բայց մի տեսակ կաշկանդված ու մեր զգացմունքների մասին արտահայտվել չէինք համարձակվում ըստ երևույթին մեր տարիքի պատճառով: Համարձակություն չունենալով որևէ խոսք ասել այդ մասին՝ այնուամենայնիվ ես սկսեցի հարցեր տալ նրան մեր երկուսի մտերմական հարաբերությունների վերաբերյալ ոչ հեռու անցյալից:

– Հիշո՞ւմ ես այն օրը, երբ հայրիկիս հետ ձեր տուն եկանք,– ժպտալով հարցրի ես՝ հիշեցնելով նաև Աննայի ու նրա մայրիկի խոսակցությունները մեր երկուսին իբր նշանելու մասին:

– Իսկ դու հիշո՞ւմ ես գոմեշների կռիվը, թե ինչպես կորցրիր քո պահած գառներին,– ծիծաղելով ասաց նա՝ խույս տալով իմ հարցին ուղղակի պատասխանելուց:

– Խոմ քեզ պես մոռացկոտ չեմ, որ չհիշեմ,– հեգնանքով պատասխանեցի ես՝ միաժամանակ ակնարկելով այն օրը, երբ Աննայի կողմից

շարված սադափե հուլունքները՝ որպես նշան, կապեցի նրա պարանոցին ու մազերն էլ հետը խառնեցի:

– Եթե չհիշեի, այդ քարն էլ նպատակին չէր հասնի,– վերջապես խոստովանեց նա և ամոթից կարմրելով՝ գլուխը կախ գցեց:

– Ես էլ հենց այդ դեպքը հիշեցի, դրա համար էլ քարս միանգամից պինդ կպավ սուրբ վանքի քարասալի ճակատին,– ավելացրի ես, մտերմաբար քաշեցի նրա շիկահեր խիտ մազերը՝ զգալով նրա անմեղ սիրո ջերմությունը:

Այդպես սիրո մանկական անմեղ զգացմունքներով տարված՝ վայելում էինք ամառային այդ գեղեցիկ առավոտը և ուրախանում մեկս մյուսով՝ անգամ չնկատելով մեզ շրջապատող բազմաթիվ հայ ուխտավորներին, որոնցից շատերին հանդիպել էի մեծ գաղթի փոշոտ ճանապարհին:

Գայանե վանքի շրջապատի հին հուշարձանները դիտելուց հետո, տեղում հավաքված գաղթականներից հարցուփորձ անելով, պարիսպի լերկ երեսին քար կպցնելու տպավորության տակ էլ մեզ հաջողվեց մի կերպ հասնել պատմական ճեմարանի մեծ բակը, որտեղից աղոթքի էր շտապում հավատացյալների խառնիճաղանջ ամբոխը:

Օրը կիրակի էր. մեծ զանգերի բարձր ղողանջները խլացնում էին վանքի պարիսպների կամարակապ դռներից ներս մտնող հարյուրավոր մարդկանց ձայները: Նրանք բոլորն էլ շտապում էին՝ տաճարում տեղի ունեցող կեսօրյա պատարագին ավելի շուտ հասնելու:

Շուշանիկին զարմացնելու նպատակով ես նույնպես արագացրի քայլերս՝ հետևիցս քաշելով նաև նրան ու ձևացնելով, որ իմ ընկերների մեջ ամենից ճարպիկը ես եմ եղել, այլ ոչ թե մեկ ուրիշը:

Վերջապես երևաց վանքի կամարակապ մեծ դուռը՝ գեղեցիկ քանդակներով ու փորագրություններով: Տեսնելով դռան երկու կողմերի սպիտակ ու դեղին մարմարից հղկված տապանաքարերը, ինչպես նաև պատերին փակցված սուրբ առաքյալների պատկերները՝ չգիտեմ վախից թե հուզմունքից մի պահ սիրտս սկսեց արագ խփել, իսկ թևիցս ամուր բռնած Շուշանիկը միանգամից կանգ առավ: Ես նույնպես մի տեսակ վախ զգացի մուտքի երկու կողմերից մեզ նայող մեծ սրբապատկերներից, բայց Շուշանիկի ներկայությամբ ոչինչ ցույց չտվեցի, շարունակեցի դանդաղորեն առաջ շարժվել՝ Շուշանիկի ձեռքից բռնած:

– Օ՜, վախենում եմ,– ասաց նա՝ ձեռքն ազատելով, և ուզեց վերադառնալ:

– Ինչի՞ց ես վախենում,– հարցրի ես՝ աչքս չկտրելով մեզնից ոչ հեռու մարմարյա տապանաքարերից:

– Պատից կպած տարօրինակ մարդկանցից,– պատասխանեց Շուշանիկը՝ ցույց տալով դռան երկու կողմերից ուղիղ մեզ նայող սրբապատկերները:

– Մեռածներից չեն վախենում, խելո՛ք,– շշնջացի նրա ականջին, բայց անկեղծորեն ասած ես ավելի շատ էի վախ զգում, քան թե նա:

– Եթե մեռած են, ապա ինչո՞ւ են մեզ նայում,– վախվխելով հարցրեց նա՝ ընդհանրապես պատկերացում չունենալով նկարներից:

– Նրանք մեռել են շատ վաղուց՝ մոտ հազար տարի առաջ, երբ դեռ չէին ծնվել իմ ու քո պապերը,– գիտուն մարդու պես պատասխանեցի ես, բայց ինքս էլ չհավատացի իմ ասածներին: Ինձ երևակայելու ու նրան զարմացնելու համար ուղղակի պատասխանում էի նրա հարցերին, իբր թե ինքս ավելի շատ բան գիտեի, քան նա:

Տեսնելով, որ ժողովուրդը, դռան երկու կողմերի խաչքարերը համբուրելով, հանդարտ ներս էր մտնում՝ ուշադրություն չդարձնելով իրենց նայող սրբապատկերներին, Շուշանիկը կարծես թե սիրտ առավ և շարունակեց հետևել ինձ: Ճեղքելով տաճարում աղոթող մարդկանց խիտ շարքերը՝ վերջապես մեզ հաջողվեց առանց որևէ դժվարության հասնել բեմի դեմ դիմաց կանգնած հոգևորականների և երգողների շարքերին, որոնք վաղուց սկսել էին պատարագը: Նրանցից երկու քայլ ոչ հեռու, երեսները խաչակնքելով, անընդհատ ծունկի էին գալիս տղամարդ ու կին՝ աղոթելով աստծուն պահպանել կոտորածից փրկված իրենց զավակներին: Տեսնելով մեզ շրջապատող մարդկանց՝ ես ու Շուշանիկը նույնպես սկսեցինք աղոթել ճիշտ այնպես, ինչպես նրանք՝ խաչակնքելով, մտքի մեջ անընդհատ մրմնջալով, միաժամանակ մեծ հետաքրքրությամբ նայում էինք տաճարի կամարակապ առաստաղի սրբապատկերներին: Մի պահ մենք այնքան տարվեցինք աղոթքով, որ կարծես մրցում էինք մեկս մյուսի հետ, թե ով ավելի արագ ծունկի կգա, շուտ կխաչակնքի իր երեսը: Եվ իրոք, շատ շուտով մեր ոչ սովորական աղոթքով շատերի ուշադրությունը գրավեցինք մեզ վրա, նույնիսկ շարական երգող ուսանողների, որոնք աչքի տակով հետաքրքրությամբ նայում էին կողքիս կանգնած Շուշանիկին:

Բավական ժամանակ էր անցել, և ահա մի խումբ երիտասարդ ուսանողներ, բուրվառներն ու ոսկեգույն մոմակալների մեջ վառված հաստ մոմերը ձեռքներին, պատարագիչ վարդապետի գլխավորությամբ պահպանիչ երգելով, բեմից ցած իջան՝ վառված խունկի հոտը տարածելով ամբոխի մեջ:

Բեմահարթակից ցած իջնող երկու շարք թափորի հետևից գնում էր հասակավոր տիրացուներից մեկը՝ իր ձեռքում պահած արծաթյա մի ափսե, որի մեջ չորս կողմից թափվում էին մանր դրամներ՝ որպես պատարագի խաչհամբույր: Որքան շատ էր ափսեի մեջ թափվող դրամների քանակը, ինչպես նաև սուրբ Քրիստոսին աղոթող հավատացյալ ամբոխի հառաչանքները, այնքան բարձր էր հնչում թափորի միջից քայլող ոսկեգույն շուրջառով զարդարված ալեհեր վարդապետի թավ ձայնը: Պատարագիչ հոգևորականի հուժկու ու խռպոտ ձայնի հետ չխկչխկում էին հոտավետ խունկով լցված բուրվառները, երիտասարդ հոգևորականների ձեռքերում եղած ձնձուղակները[59], փայլում էին իրենց գլուխներից վեր բարձրացրած խաչ ու խաչվառները[60], և այդ բոլորին միախառնվում էին հայրենի հողից զրկված պանդուխտ մարդկանց հեկեկոցներն ու հառաչանքները: Երիտասարդների ձայները, որոնք զանգի ղողանջների պես արձագանք տալով տարածվում էին տաճարի կամարակապ գմբեթների դատարկ տարածության մեջ, ինչպես նաև ամպերի միջից դեպի երկինք խոյացող Քրիստոսի մեծ պատկերն ամբողջապես գերել էին ինձ ու Շուշանիկին: Այն շքեղ տեսարանների ազդեցության տակ մենք երկուսս էլ կարծես թե կախարդվել ու ընկել էինք խորը ինքնամոռացության մեջ՝ չզգալով անգամ մեկս մյուսի ներկայությունը: Այնուամենայնիվ, ես ավելի շուտ սթափվեցի՝ մոտենալով Շուշանիկին, որը բնազդաբար բավականին հեռացել էր ինձանից: Տեսնելով ինձ՝ նա մի բառ անգամ չկարողացավ ասել, ըստ երևույթին դեռ գտնվում էր պահի ազդեցության տակ:

Կյանքում առաջին անգամ էի գտնվում այդպիսի մի պատմական սրբավայրում, ինչպիսին էր Էջմիածնի Մայր տաճարը, որի մասին դեռ հայրենի գյուղում մեծ հետաքրքրությամբ լսել էի հանգուցյալ քեռի Պտուտանի զրույցներից: Եվ ահա այդ օրն առաջին անգամ Շուշանիկի հետ գտնվեցինք այդտեղ, այն էլ կիրակնօրյա պատարագի ժամին:

Պատարագին մասնակցող մարդկային հոծ բազմությունը տեղից շարժվել չէր կարողանում նորանոր հավատացյալների ներս գալու պատճառով, իսկ մենք երկուսով բացի վանքի կամարակապ բարձր առաստաղի սրբապատկերներից այլևս ուրիշ ոչինչ տեսնել չէինք կարող: Վերջապես հոգևորականների թափորը, ճեղքելով հավատացյալ

---

[59] ձնձուղակ, տե՛ս ծնծղա – երաժշտական գործիք՝ կազմված մետաղե զույգ սկավառակներից, որոնց բախյունը ղողանջ է առաջացնում՝ խորհրդանշորեն աղոթքը հասցնելով առ Աստված

[60] խաչվառ – Քրիստոսի չարչարանքներից մեկի պատկերով եկեղեցական դրոշակ

ամբոխի շարքերը, ընդհուպ մոտեցավ տաճարի մեծ դռանը և այնտեղից մի մեծ պտույտ կատարելով՝ կրկին վերադարձավ դեպի խորանը, հենց այն սյունի մոտով, որտեղ կանգնած էինք ես ու Շուշանիկը:

Երիտասարդ երգիչներից մեկը, մի պահ կանգ առնելով, չգիտեմ թե ինչու ուղիղ նայեց աչքերիս ու ժպտաց, սակայն մյուսներից հետ չմնալու համար արագացրեց իր քայլերը և անմիջապես բարձրացավ բեմահարթակի ձախակողմյան աստիճանների վրա ու կանգ առավ՝ շարունակելով պատարագի համար սերտած շարականը: Երիտասարդի տարօրինակ հայացքն ու նրա ժպիտը նկատել էր նաև Շուշանիկը, որի պատճառով էլ, մի պահ սթափվելով, ինքն էլ զարմացավ:

– Ինչո՞ւ քեզ նայեց այն երգիչը,– հարցրեց նա՝ թեթևակի հպվելով թևիս:

– Ծանոթ դեմք երևաց աչքերիս, բայց ճանաչել չկարողացա,– պատասխանեցի ես՝ ոտքերիս թաթերին կանգնելով. այս անգամ բուռն ցանկությամբ ուզեցի իմանալ նրա ով լինելը, բայց դժբախտաբար մեկ ակնթարթում նա անհայտացավ իմ տեսադաշտից: Իհարկե, հետաքրքրությունից համբերությունս հատեց, ուստի տեղում թողնելով Շուշանիկին՝ քայլ առ քայլ առաջ անցա՝ նպատակ ունենալով անպայման ճանաչել երիտասարդին: Չնայած առաջ անցնելով շատ որոնեցի, բայց տեսնել նրան չկարողացա, ուստի ստիպված էի կրկին վերադառնալ Շուշանիկի մոտ՝ այս անգամ պատարագի ժխորից դուրս գալու մտադրությամբ:

– Ճանաչեցի՞ր,– շշուկով հարցրեց Շուշանիկը՝ աչքը չկտրելով երևացող սրբապատկերներից:

– Նա անհայտացավ իմ տեսադաշտից,– անտարբեր պատասխանեցի ես:

– Այդ դեպքում դուրս գնանք,– առաջարկեց նա՝ թևիցս բռնելով, որ կրկին չհեռանամ իրենից:

– Գնանք,– ավելացրի ես ու միասին շրջվեցինք դուրս գալու համար, բայց դժբախտաբար առաջ շարժվել չկարողացանք ելք չգտնելու պատճառով: Վանքից դուրս գալու Շուշանիկի առաջարկությունից հետո ես այլևս չէի լսում ո՛չ հոգևորականներին և ո՛չ էլ երիտասարդ երգիչների բարձր ձայները:

Մի քանի անգամ փորձեցի մեզ շրջապատող մարդկանց արանքով դուրս պրծնել, բայց Շուշանիկին հետևիցս քաշել չկարողացա:

– Կանգնե՛ք, շուտով պատարագն ավարտվելու է,– ասաց դուրս գալու ելքը փակած տղամարդկանցից մեկը՝ ուշադրությամբ հետևելով խորանի բեմահարթակի վրա տեղի ունեցող պատարագի արարողությանը:

Անծանոթ տղամարդու զգուշացումից կարմրելով՝ մենք էլ շուռ եկանք՝ երեսներս դարձնելով դեպի խորանը՝ սպասելով շարունակվող պատարագի ավարտին:

Վերջապես վանքի մեծ ու ընդարձակ դահլիճը դատարկվեց, և մենք նույնպես առանց որևէ դժվարության մթնշաղից դուրս եկանք լույս աշխարհ: Իսկապես դա մեզ համար լույս աշխարհ էր, որովհետև հայրենի երկրից հեռանալուց հետո առաջին անգամն էր, որ մենք օր ցերեկով գտնվում էինք հարկի տակ, այն էլ այնպիսի մի կամարակապ ծածկի տակ, որի գոյության մասին երազել անգամ չէինք կարող:

Ժողովրդի զգալի մասը աստիճանաբար դուրս էր գալիս պարիսպների կամարակապ բաց դռներից, իսկ ես ու Շուշանիկը պատանեկան մեծ հետաքրքրությամբ դեռ շարունակում էինք դիտել վանքի մեծ դռան երկու կողմերի տապանաքարերը: Մոտենալով սպիտակ մարմարից հղկված շիրմաքարին՝ ինձ շատ դժվարությամբ հաջողվեց ընթերցել նրա վրա փորագրված հայերեն տառերը: Դա հանգուցյալ Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկի շիրմաքարն էր, որի մասին լսել էի քեռի Պտուտանի զրույցներից:

Մեր գյուղի տիրացու Ավագի մոտ քիչ սովորելու ժամանակամիջոցում ես դեռ այնքան էլ գրագետ չէի դարձել, որ շիրմաքարի վրա փորագրված տառերն ու թվերը ճշտորեն ընթերցեի մինչև վերջ: Սակայն ինձ չմատնելու և Շուշանիկին զարմացնելու նպատակով սկսեցի վարժ հոլովել մտքիս մեջ նախօրոք սերտած հանգուցյալի ազգանունը՝ կուլ տալով այն թվերը, որի մասին դեռ գաղափար չունեի:

Համենայն դեպս երկուսով էլ այնքան էինք տարվել տապանաքարի գրերով, որ չէինք նկատում մեզ շրջապատող մարդկանց ներկայությունը:

– Դա ո՞ւմ շիրմաքարն է,– դիմելով մեզ՝ հարցրեց հավաքվածներից մեկը, որը մնացածներից ավելի պատկառելի էր երևում. ըստ երևույթին աչքերից խեղճ լինելու պատճառով փորագրված տառերը կարդալ չէր կարող:

– Խրիմյամ Հայրիկն է, մորեղբա՛յր,– պատասխանեցի ես՝ բաց թողնելով Շուշանիկի ձեռքն ու ոտից գլուխ կարմրելով: Լսելով իմ պատասխանը՝ դեմքից ծանոթ այդ պատկառելի մարդը, փոշով պատած գլխարկը հանեց, ծունկի գալով համբուրեց տապանաքարն ու երկու անգամ երեսը խաչակնքելուց հետո ոտքի կանգնեց:

– Վե՛ր կաց, ո՛վ հայոց Հայրի՛կ, տե՛ս, թե ինչ է կատարվել քո հայրենակիցների հետ, որոնց մի ժամանակ ոգեշնչում էիր համախմբվելու մի հարկի տակ՝ մեր հայրենիքը ծաղկեցնելու քո մեծ պատգամներով,–

ասաց նա՝ սրբելով արտասուքից խոնավացած ու մի տեսակ մարած աչքերը: Նա մի պահ լռեց, կրկին ծունկի եկավ, համբուրեց տապանաքարի վրա փորագրված խաչն ու առանց մյուսներին նայելու՝ լռությամբ հեռացավ:

– Ո՞վ էր այդ պատկառելի ու խորհրդավոր մարդը,– հարցրեց տեղում կանգնածներից մեկը՝ դիմելով մյուսներին:

– Հայոց ձորից է՝ հանգուցյալի վաղեմի աշակերտներից մեկը, դեռ փոքր հասակից աշխատել է Վարագա վանքում, շրջել է Արևելյան Հայաստանով,– պատասխանեց մի ուրիշը՝ խորը հոգոց հանելով:

– Որտե՞ղ է ապրում նա,– այս անգամ հարցրեց մի ուրիշը՝ նայելով գնացողի հետևից:

– Վանքին պատկանող մեծ անտառում՝ բաց երկնքի տակ, իր համագյուղացիների հետ,– պատասխանեց նույն մարդը՝ չգիտեմ ինչու հետաքրքրությամբ նայելով մեր երեսին:

– Տխուր էր և մռայլ, երևի ինքը նույնպես դժբախտ է, ինչպես մյուսները,– կարեկցանքով ասաց տեղացի գյուղացիներից մեկը, որը հետաքրքրությամբ լսում էր գաղթական մարդկանց խոսակցական բարբառը:

– Կոտորվել են նրա ընտանիքի բոլոր անդամները, սիրասուն զավակները, և այժմ նա ապրում է իր համագյուղացիների հետ, մխիթարվում նրանցով, բայց ինքն էլ ոգևորում է բոլորին, որպեսզի չընկճվեն, – պատասխանեց անծանոթ մարդը՝ ինքը ևս հետևելով իր երկրացուն, որը դեռ դուրս չէր եկել մեծ բակից:

Հայոցձորցու խոսքերից ազդվելով՝ շիրմաքարերի մոտ հավաքվածները դադարեցրին իրենց հարց ու պատասխանները, ցրվեցին դեսուդեն, իսկ մենք երկուսով, դեռ կանգնած նույն տեղում, սպասում էինք հոգևորականների թափորի դուրս գալուն վանքի ներսում ինձ նայող երիտասարդին տեսնելու նպատակով:

Վերջապես վանքից դուրս եկավ հոգևորականների մեծ թափորը, որի մեջտեղով, ոսկեզօծ գավազանը ձեռքին բռնած, դանդաղորեն առաջ էր շարժվում ինքը՝ վեհափառ կաթողիկոսը: Թափորի առջևի աջ ու ձախ կողմերից գնում էին նրա երկու շաթիրները՝[61] ձեռքերում ունենալով արծաթազօծ և երկար գավազանները, իսկ սևազգեստ վարպետներն իրարից բացազատված երկշարքով դանդաղորեն ուղեկցում էին նրան: Ալեհեր կաթողիկոսին հասցնելով մինչև վեհարանի շքամուտքը՝

[61] շաթիր – գավազանակիր

հոգևորականների խումբը, հերթականությամբ գլուխ տալով նրան, անմիջապես հետ դարձավ, իսկ տեղում հավաքված հավատացյալ ամբոխը, վանքի պարիսպների կամարակապ բաց դռներից աստիճանաբար դուրս գալով, ցրվեց:

ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԹՇՆԱՄԻ

Խրիմյան Հայրիկի շիրմաքարին խոնարհվող հայոցձորցին, որի դեմքը ծանոթ էր երևում, դեռ կանգնած էր վեհարանի շքամուտքից ոչ հեռու՝ հուշաղբյուրի մոտ՝ զրուցելով իրեն բախտակից մարդկանց հետ: Իմանալով, որ նա նույնպես տեղավորված է անտառում, առաջարկեցի Շուշանիկին, որ լիճն ու անտառ գնալու համար դիմենք նրա օգնությանը:

– Ամոթ է նրա հետ գնալ,– ասեց Շուշանիկը՝ առաջարկելով վերադառնալ մեր եկած ճանապարհով:

– Առանց լիճը տեսնելո՞ւ,– հարցրի ես:

– Վաղը միասին կտեսնենք,– ժպտալով ասաց նա:

Համաձայնվելով Շուշանիկի հետ՝ այնուամենայնիվ ուզեցի մոտենալ աղբյուրին՝ ջուր խմելու պատրվակով անծանոթ մարդուն կրկին տեսնելու: Տեղում թողնելով Շուշանիկին՝ ես մոտեցա ցայտաղբյուրին՝ ջուր խմելու, միաժամանակ աչքի տակով նայեցի այն մարդուն, որին անպայմանորեն ուզում էի ճանաչել:

– Շատ մի՛ խմիր, զավա՛կս, կհիվանդանաս,– խորհուրդ տվեց նա՝ նկատելով իմ հետաքրքրությունը իր նկատմամբ:

– Չեմ հիվանդանա, մորեղբա՛յր,– պատասխանեցի ես՝ հետաքրքրությամբ նայելով նրա նիհարած դեմքին:

– Որտեղացի՞ ես,– հարցրեց նա՝ ավելի մոտենալով ցայտաղբյուրին:

– Նորդուզի լեռնաշխարհից,– պատասխանեցի ես աշխուժացած:

– Ո՞ր գյուղից եք:

– Տիգրիս գետից ոչ հեռու Դիմ գյուղից:

– Ե՞րբ եք գաղթել:

– Վեց օր առաջ այստեղ ենք եկել:

– Որտե՞ղ եք բնակվում:

– Անտառի եզրին:

– Հիվանդներ կա՞ն ձեր մեջ:

– Ո՛չ:

– Այդ շատ լավ է, որ չկան, տղա՛ս,– ասաց նա և ավելացրեց,– ծնողներիդ ասա՛, թող հեռանան անտառից դեպի Ալագյազի լանջերը, քանի ուշ չէ, փրկվեցե՛ք համաճարակից:

– Ծնողներ չունեմ, մորեղբա՛յր, – կիսաձայն պատասխանեցի ես՝ գլուխս կախ գցելով:

– Իսկ ո՞վ է ձեր խնամակալը,– հարցրեց հայոցձորցին՝ գորովանքով շոյելով գլխիս խիտ մազերը:

– Մեծ քույրիկիս ամուսինը:

– Այդ լավ է, որ հովանավորող ունեք, թեկուզ փեսա,– ասաց նա և ավելացրեց, – զգուշացրո՛ւ մեծ քույրիկիդ՝ թող համոզի ամուսնուն շուտ հեռանալ անտառից:

– Ո՞ւր, մորեղբա՛յր, և ինչո՞ւ,– հարցրի ես զարմացած:

– Հեռու շեներում՝ հյուրասեր ժողովրդի մեջ, որտեղ հովն է փչում լեռներից, այնտեղ դուք կփրկվեք անտեսանելի թշնամուց, – ասաց նա և ուզեց հեռանալ ձորաղբյուրի ծորակից: Սակայն մինչ նա կբաժանվեր իրեն բախտակից մարդկանցից, որոնց հետ զրուցում էր, ես ավելի մոտեցա նոր ծանոթիս և շիկնելով ասացի.

– Հանդիպել եմ Ձեզ, մորեղբա՛յր...:

– Որտե՞ղ ես հանդիպել, տղա՛ս,– հարցրեց նա կանգ առնելով և հետաքրքրությամբ նայեց աչքերիս:

– Առաջին անգամ հանդիպեցի Աբաղու լայնածավալ մեծ դաշտում առավոտյան լուսաբացին, երբ բաժանվում էի ինձ փրկող հայ հեծյալից, իսկ երկրորդ անգամ Մասիս լեռան լանջին, Արարատյան դաշտը նայելիս,– պատասխանեցի՝ միաժամանակ հիշեցնելով հայոց լեռնաշխարհի ու դաշտերի մասին նրա արած պատմությունը:

– Ճիշտ ես ասում, տղա՛ս, եղել ենք միասին մեծ գաղթի ճանապարհին, բայց այդ ի՞նչ պատմություն է, որ մինչ այժմ էլ չես մոռացել,– համեստորեն հարցրեց նա:

– Մեր հայրենիքի, որի մասին դեռ երբեք չէի լսել ոչ մեկից և միայն այդ օրն իմացա Ձեզանից,– պատասխանեցի ես՝ մինչև ականջներիս ծայրը կարմրելով իմ համարձակության համար:

– Այդ լավ է, որ հիշում ես այն ամենը, ինչ լսել ես մեր հայրենիքի մասին, ու չես մոռացել:

– Ընդհակառակը, Մասիսի լեռնալանջին լսածիս մասին պատմել եմ նաև իմ ընկերներին, մորեղբա՛յր,– ժպտալով ասացի ես, ամաչելուց մի պահ գլուխս կախեցի:

– Ապրե՛ս, տղաս, յուրաքանչյուր հայ պատանի պետք է իմանա իր հայրենիքի և իր ժողովրդի պատմությունը, նրա հերոսական անցյալը, – ասաց նա, միաժամանակ ավելացրեց,– աշխատե՛ք լավ սովորել. չէ՞ որ ապագան նոր սերնդինն է, գոնե դուք լինեք երջանիկ մեր մայր հողի վրա,– եզրափակեց այդ հայրենասեր մարդը, որին կարծես թե տասը տարի ճանաչում էի:

Իսկապես, Մասիս լեռան լանջին այդ պատկառելի հայ գաղթականից լսած պատմությունը կապել էր ինձ նրան. նրա ասածները կարծես թե ամուր մեխվել էին իմ պատանեկան ուղեղում ու դուրս չէին գալիս: Չնայած ես դեռևս այնքան էլ մեծ չէի, որ ամբողջովին հասկանայի նրա կողմից արտահայտած մտքերի բուն իմաստը, այնուամենայնիվ Մասիսի բարձունքին մեր հանդիպելու պահից հետո անընդհատ կրկնուն էի նրա հետևյալ խոսքերը.

– Երևացող լայնածավալ հովիտն իր լեռնաշխարհով մեր հայրենի երկիրն է, որի դաշտերով դարեր ի վեր մրրիկի պես եկել ու տրորելով անցել են բազմաթիվ չար ոսոխներ, օտար զավթիչներ: Դա կատարվել է բազմաթիվ անգամներ, մեր նահատակված պապերի կենդանության ժամանակ և դեռ շարունակվում է տեղի ունենալ ներկայում մեր սեփական աչքերի առաջ:

Իմ կողմից բերանացի արված ոգևորիչ խոսքերի հեղինակն այն պատկառելի հայ շինականն էր, որին տեսել էի մեծ գաղթի ճանապարհին և այդ օրը հուշաղբյուրի մոտ կրկին հանդիպելով՝ ծանոթացա ու խոսեցի նրա հետ: Դա այն հայրենասեր մարդն էր, որը թուրք դահիճների հետապնդումից ազատվելու նպատակով բազմիցս խախտել էր Օսմանյան պետության սահմաններն ու անցել Արևելյան Հայաստան: Իհարկե, օտարության մեջ նա երկար ապրել չէր կարողացել: Հայրենի ծննդավայրի կարոտը ստիպել էր նրան նորից վերադառնալ հենց այն ժամանակ, երբ սուլթանական արյունարբու մարդասպանները պատրաստվում էին սրի քաշել հայ ժողովրդին: Դժբախտաբար, հայոցձորցին իր ընտանիքով նույնպես կորուստներ էր ունեցել: Այն ահավոր օրերին սպանվել էին նրա կինը, սիրասուն զավակները ու բարեկամներից շատերը:

Շրջելով վանքի հարակից տարածքում և առնչվելով մեզ շրջապատող մարդկանց հետ՝ այդ օրերին ես շատ ու շատ նորություններ իմացա:

Հուշաղբյուրի մոտ հավաքված մեր բախտակից մարդկանցից լսեցի նաև այն, որ իմ նոր ծանոթը, որին Թորգոմ էին անվանում, որպես

հայրենասեր հայ շինական՝ ոչ միայն ոգևորել ու ոգևորում էր իր հայրենակիցների պայքարը ընդդեմ թուրք բարբարոսների, այլև կոտորածի օրերին ակտիվորեն մասնակցել է Վասպուրականի հինավուրց Վան քաղաքի հերոսական պաշտպանությանը: Ահա թե ինչու այդ օրը, մի պահ մոռանալով իմ առաջին սիրո զգացումները Շուշանիկի նկատմամբ, բուռն ցանկությամբ ուզեցի ծանոթանալ ու խոսել այդ պատկառելի հայ շինականի հետ:

*
* *

Դժվարությամբ թողնելով նոր ծանոթիս հուշաղբյուրի մոտ՝ ես վազեցի՝ Շուշանիկին կանչելու, որպեսզի նրա ուղեկցությամբ անտառ վերադառնայինք.

– Անծանոթ մարդու հետ չեմ գնա,– կտրականապես հրաժարվեց Շուշանիկը՝ թաքնվելով պարսպի անկյուններից մեկում, կանգնած մարդկանցից հեռու մնալու նպատակով:

– Իմ վաղեմի ծանոթն է, տեսել եմ նրան,– ասացի Շուշանիկին՝ պատմելով Մասիսի լանջին մեր հանդիպման ժամանակ տեղի ունեցած զրույցի մասին:

– Ի՞նչ անեմ, որ ծանոթ ես նրան, անտառ գնալ չեմ ուզում,– կրկին համառեց նա:

– Ինչո՞ւ, ի՞նչն է պատճառը,– հարցրի ես՝ նայելով նրա տարօրինակ ու փոփոխված դեմքին:

– Անտառի խորքում շրջում է անտեսանելի թշնամին, վախենում եմ նրանից,– վերջապես խոստովանեց նա՝ հայացքը գետնից չկտրելով:

– Ո՞վ ասաց քեզ այդ մասին:

– Առավոտ շուտ մայրիկս ասաց, որ հեռու մնանք անտառից,– պատասխանեց նա ու մի պահ տխրեց:

Նրա կցկտուր խոսակցությունից ու այլայլված դեմքից ես անմիջապես հասկացա, որ խոսքը անտառում բռնկված համաճարակի մասին է, ինչը հենց նոր լսեցի նաև հուշաղբյուրի մոտ հավաքված մարդկանցից: Չկարողանալով համոզել Շուշանիկին հայոցձորցու հետ անտառ գնալ՝ ես ստիպված էի համաձայնվել նրա հետ ու մեր եկած հին ճանապարհով վերադառնալ յուրայիններիս մոտ, որոնցից բաժանվել էինք նույն օրվա արևածագին: Կրկին մոտենալով իմ նոր ծանոթ Թորգոմին՝ ես խոնարհաբար գլուխ տվեցի ու մնաս բարև ասելով՝ հեռացա նրանից: Սակայն ես ու Շուշանիկը դեռ դուրս չէինք եկել վանքը շրջապատող

բարձր պարսպի կամարակապ մեծ դռնից, երբ հանկարծ անցորդներից մեկն իր ծանր ձեռքը դրեց թիկունքիս:

– Ո՞ւր կերթաս, բաբոյի՛ լաճ,– հարցրեց նա՝ հետաքրքրությամբ նայելով մեզ երկուսիս:

– Գնում ենք Ճեմարանի մեծ բակը, իսկ այնտեղից անտառ՝ մերոնց մոտ,– պատասխանեցի ես՝ միևնույն հետաքրքրությամբ նայելով նրա սև զգեստներին:

– Գուցե Մնոյի մոտ երթանք,– ասաց նա՝ առաջարկելով իրեն հետևել:

– Մնոյի մո՞տ,– զարմանքով հարցրի ես ու միանգամից կանգ առա՝ ուղիղ նայելով նրա գեղեցիկ սև աչքերին:

– Այո՛, Մնոյի մոտ՝ քո լավ ընկերոջ, որին որոնում էիր դեռ Բերկրիի ձորից, – ժպտալով պատասխանեց նա:

Ահավոր ձորի և Մնոյի անունը լսելուց մի պահ կարծես թե քնած տեղից արթնացա՝ հիշելով Օրգովի լճի ափին իմ տեսած վիրավոր պատանուն, որից հարցուփորձ էի անում անհայտ կորած ընկերոջս մասին:

Իսկապես դա այն երիտասարդ տղան էր, որին հանդիպել էի Օրգովի լճի ափին, այն քաջասիրտ հայ պատանին, որը Բերկրիի ահավոր ձորում տեղի ունեցած կոտորածի ժամանակ, զենքը ձեռքին մագլցելով քարափների մեջ, բոլորի աչքերի առաջ լռեցրեց դարանակալ թշնամու գնդացրի ճարճատյունը: Դա հոգևորականի երկար շապիկ հագած այն երիտասարդ երգիչն էր, որը պատարագի ժամանակ ժպտալով ինձ նայեց:

Խիստ հուզմունքից, գլուխս կախ գցելով, մի պահ լռեցի:

– Հը՞, հիշեցի՞ր ինձ,– հարցրեց նա ու երկու ձեռքերիցս պինդ բռնելով՝ ծիծաղեց:

– Այո՛, հիշեցի, ամեն ինչ հիշեցի,– մեղմորեն պատասխանեցի ես՝ միաժամանակ հարցնելով Մնոյի առողջության մասին:

– Դե որ հիշեցիր, այժմ երթանք Մնոյի մոտ,– առաջարկեց նա ու մեզ հետ վերադարձրեց դեպի Կարմիր խաչի այն հիվանդանոցը, որտեղ տեղավորված էր վիրավոր ընկերս:

*

* *

Կարմիր խաչի հիվանդանոցի հերթապահ բուժքույրը, քրքրելով տեղում պառկած վիրավորների անվանացուցակը, չգիտեմ թե ինչու խուսափեց Մնոյի մասին մեր հարցերին ճիշտ պատասխանել, իսկ քիչ խորհելուց հետո մեզ համար միանգամայն անսպասելիորեն հայտնեց, որ իրենց բուժարանում Մնո անունով վիրավոր մարդ չկա:

– Ինչպե՞ս թե չկա,– զարմացած հարցրեց Տաճատն ու ավելացրեց, որ մեկ օր առաջ ինքն անձամբ տեսակցություն է ունեցել վիրավորի հետ այդ նույն հիվանդանոցի բժիշկներից մեկի ներկայությամբ, որի անունը չի հիշում:

– Այդ դեպքում դիմե՛ք պարոն բժշկին,– առաջարկեց նիհար, բայց դուրեկան դեմքով նույն հերթապահը՝ ցույց տալով մոտիկ գտնվող մի այլ շենք, որտեղ պետք է լիներ կառավարիչը բուժող բժշկի հետ: Դրսում թողնելով Շուշանիկին՝ շուտով ես ու Տաճատը բուժքրոջ ցույց տված շենքի դռնից ներս մտանք: Տաճատը որքան գեղեցիկ էր և դուրեկան, նույնքան էլ քաղաքավարի՝ իր խոսակիցների նկատմամբ:

Շենքից ներս մտնելուն պես նա գլուխ տալով բարևեց ակնոցավոր բժշկապետին և խնդրեց նրան թույլ տալ մեզ՝ տեսակցելու վիրավոր Մնոյին՝ որպես մեզ հարազատ ընկերոջ:

– Վիրավորը գաղթողների՞ց է,– հարցրեց պարոն բժշկապետը՝ աչքը չկտրելով սեղանին փռված թղթերից:

– Այո, նորդուզցի է: 14–16 տարեկան պատանի, վիրավորվել է Բերկրիի ձորում կոտորածի ժամանակ,– պատասխանեց Տաճատը:

– Այն դեպքում դիմե՛ք բուժող բժշկին, թող Ձեզ ուղեկցի հիվանդի մոտ,– առաջարկեց բժշկապետը՝ ցույց տալով միջանցքի հակառակ կողմի ապակեպատ դռներից մեկը:

Շնորհակալություն հայտնելով պարոն բժշկապետին՝ մենք դուրս եկանք դեղատանը նմանվող նրա խառնիճաղանջ սենյակից և անմիջապես թակեցինք դիմացի դուռը, որտեղ պետք է լիներ ինքը՝ բուժող բժիշկը:

– Ի՞նչ եք ցանկանում, երիտասարդնե՛ր,– հարցրեց ծղոտե բազկաթոռին նստած բժիշկներից մեկը՝ ձեռքում բռնած գրիչը վայր դնելով:

– Վիրավոր մեր ընկերներից մեկը գտնվում է հիվանդանոցում, խնդրում ենք՝ թույլ տաք տեսակցել նրան,– ասաց Տաճատը՝ մոտենալով բժշկի սեղանին:

– Ասե՛ք վիրավորի անուն-ազգանունը,– հարցրեց բժիշկը՝ հետաքրքրությամբ նայելով Տաճատի գեղեցիկ կեցվածքին ու նրա ուսանողական սև զգեստներին:

– Մկոյի լաճ Մնո,– Տաճատի փոխարեն նորդուզցու կոշտ բարբառով պատասխանեցի ես՝ մինչև ականջներիս ծայրը կարմրելով:

– Երևի դուք էլ Մնոյի պես չար եք ու անհանգիստ,– ասաց բժիշկը և ծիծաղելով նայեց ինձ. ըստ երևույթին չհասկացավ իմ պատասխանի իմաստը:

– Պարո՛ն բժիշկ, նրանք լեռներում ծնված ու ապրած գյուղացու զավակներ են, այն էլ վռշիկներից, ուստի մեղադրել չի կարելի,– ժպտալով պատասխանեց Տաճատը՝ թեք նայելով աչքերիս:

– Իսկ դուք ո՞ր գավառից եք,– դիմելով Տաճատին՝ հարցրեց երկրորդ բժիշկը՝ քրքրելով սեղանի վրա կուտակված թղթերը:

– Ինքս շատախցի եմ, իսկ պատերազմից առաջ փոխադրվել եմ Վան վարժարանում ուսանելու համար,– կարճ կտրեց Տաճատը:

– Ուսումն ավարտե՞լ եք, թե՞ ոչ, – հարցրեց բժիշկը՝ հետաքրքրությամբ դիտելով Տաճատի ձախ թևի վիրակապը:

– Այո՛, ավարտել եմ մեծ պատերազմի նախօրյակին:

– Իսկ Մկոյի լաճ Մնոյին որտե՞ղ եք հանդիպել,– ծիծաղելով հարցրեց բուժող բժիշկը, տեղից վեր կացավ, մոտեցավ ինձ՝ զննելով արևից ու քամուց ճաքճքված այտերս:

– Մեծ գաղթի ճանապարհին՝ Բերկրիի ձորում տեղի ունեցած կոտորածի ժամանակ,– պատասխանեց Տաճատը:

– Երևի միասին եք եղել:

– Այո՛, միասին:

– Իսկ ինչո՞ւ բաժանվեցիք,– հարցրեց բժիշկը, միաժամանակ կողքին կանգնած բուժքրոջից խնդրեց հարևան սենյակից կանչել Մնոյի գործին իրազեկ մեկին, որը նույնպես եղել էր Բերկրիի մեծ ձորում:

– Մենք նրան հանձնեցինք Կարմիր խաչի բժշկական ջոկատին օգնություն ստանալու նպատակով,– պատասխանեց Տաճատը՝ խուսափելով պատմել տեղի ունեցած ահավոր դեպքերի մանրամասները:

Մինչ բժիշկն ու Տաճատը հարցուփորձ կանեին Մնոյի մասին, հենց նոր դուրս եկած բուժքրոջ ուղեկցությամբ ներս մտավ զինվորական հագուստով մի գեղեցիկ օրիորդ, որին տեսնելուն պես ճանաչեց ինքը՝ Տաճատը: Իհարկե, նրանց հետագա խոսակցություններից պարզվեց, որ նա Կարմիր խաչի սանիտարական ջոկատի բուժքույրերից մեկն էր, որը Բերկրիի ձորում տեղի ունեցած ահավոր դեպքերի հաջորդ օրվա առավոտյան օգնել էր վիրավորներին և զինվորական ձիասայլերով փոխադրել Աբաղու դաշտը, իսկ Մնոյին իրենց հետ բերել էջմիածին ու տեղավորել հիվանդանոցում:

– Ինչո՞ւ հրաժարվեցիր մեր օգնությունից,– ժպտալով հարցրեց բուժքույրը՝ սեղմելով Տաճատի ձեռքը:

– Չուզեցի բաժանվել ընկերներիցս, օրիո՛րդ,– միևնույն ժպիտով պատասխանեց Տաճատը:

– Երևում է, որ վերքդ ամոքվել է,– գորովանքով ասաց բուժքույրը՝ իր հայացքը չկտրելով Տաճատի դեմքից:

– Ամոքվել է, բայց դեռ այցելում եմ բժշկին վիրակապերս փոխելու համար,– պատասխանեց Տաճատը՝ խույս տալով օրիորդի ժպտադեմ սուր հայացքից:

Ծանոթ լինելով Բերկրիի ձորում տեղի ունեցած ահավոր դեպքերի ու Տաճատի վիրավորվելու մանրամասներին՝ զինվորական բուժքույրը մեծ ոգևորությամբ պատասխանում էր այն հարցերին, որոնք տրվում էին ներկա գտնվողների կողմից: Տարվելով իրենց խոսք ու զրույցով՝ նրանք կարծես թե մոռացել էին Մնոյին տեսակցելու մեր խնդրանքի մասին: Ծանոթ չլինելով նրանց խոսակցության բարբառին՝ ես խիստ ճնշված էի զգում ինձ և սրտատրոփ սպասում էի, թե երբ մենք կտեսնենք վիրավոր Մնոյին:

Վերջապես բուժող բժիշկը դիմեց վիրավորներին ուղեկցող օրիորդ Լուսիկին՝ խնդրելով նրան պատմել Մնոյի մասին:

*
* *

Օրվա վերջին ռուսական հեծյալ ջոկատը, օգնության հասնելով պաշարման մեջ ընկած վասպուրականցիներին ու սրերի շաչյունով փախուստի մատնելով Բերկրիի ձորում թաքնված արյունարբու թշնամուն, լեռնալանջի քարափների մեջ դիրքավորված Մնոն ու Տաճատը, մյուս հայ տղաների հետ դուրս գալով իրենց դիրքերից, սկսում են հետապնդել ձորից փախչող թուրքական բանդաներին:

Պոկվելով քարափներից՝ տղաները ոչ մի քայլ հետ չէին մնացել հարձակվող ռուսական հեծյալ ջոկատից և, վրեժխնդրության բուռն ցասումով լցված, ոչնչացրել էին սարալանջի թփուտների մեջ թաքնված քրդական բանդաների մնացորդներից շատերին: Պատանի Մնոն շատ էր ոգևորվել. նա ուզել էր Բերկրիի ձորում ընկած անմեղ նահատակների վրեժը լուծել իր կյանքի գնով: Սակայն անփորձ տղան չէր նկատել թփերի մեջ դարանակալ թշնամուն ու շարունակել էր մագլցելով շարժվել դեպի Բանդիմահի գետի աջ կողմի լեռան բարձունքը: Թուրքերին հետապնդելու այդ թեժ պահին վիրավորվել էր Տաճատն ու մի պահ կանգ առել՝ սպասելով ընկերների մոտենալուն: Նկատելով Տաճատին՝ Մնոն վազելով ուզել էր նրան օգնության հասնել, սակայն հենց այդ պահին էլ ինքը նույնպես վիրավորվել էր դարան մտած թշնամու գնդակից: Բարեբախտաբար երկուսի վերքերն էլ թեթև էին եղել ու անվնաս, ուստի ոգևորված ռուսական հեծյալ ջոկատի արշավով՝ նրանք նույն-

պես չէին դադարել թշնամուն հետապնդել: Սակայն մեծ ոգևորությունը կարող էր կորստաբեր լինել անփորձ հայ պատանիների համար, եթե չլիներ վրա հասնող հայ կամավորների երկրորդ ջոկատը, ու ժամանակին չոչնչացնեին թփերի մեջ թաքնված թշնամու մնացորդներին: Բերկրիի ձորը մաքրելով թուրքական ու քրդական բանդաներից՝ հարձակվող հայ կամավորներն առաջարկել էին Մնոյին ու Տաճատին իրենց ընկերների հետ վերադառնալ դեպի մեծ գաղթի ճանապարհը, որն արդեն ազատվել էր դարանակալ թշնամու սև օղակից:

*
* *

Կարմիր խաչի անձնակազմը, որի մեջ էր բուժքույր Լուսիկը, լուսաբացին հանդիպել էր Մնոյին ու Տաճատին: Կապելով նրանց վերքերը՝ Լուսիկն առաջարկել էր երկուսին էլ իրենց ձիասայլերով թիկունք մեկնել, բայց Տաճատը, վիրավոր լինելով հանդերձ, հրաժարվել էր բաժանվել իր ընկերներից և շատ-շատերի հետ շարունակել էր առաջ շարժվել մեծ գաղթի ճանապարհով դեպի Արևելյան Հայաստան: Ռազմաճակատից նահանջող զորքերի սանիտարական ջոկատը, լուսաբացին օգնելով բազմաթիվ վիրավոր հայ գաղթականների, տարել էր նաև Մնոյին և երկու օրից հանձնել էջմիածնի հիվանդանոց: Օրիորդ Լուսիկի խոսքից պարզվեց նաև, որ չնայած Մնոյի վերքը անհամեմատ թեթև էր եղել, բայց հիվանդանոցում գտնվելու օրերին շատ մռայլ էր ու անհանգիստ: Գիշերները չէր քնում, իսկ նիրհելու դեպքում էլ զառանցելով անընդհատ ընկերներին էր կանչում: Հիվանդանոցում գտնվելու յոթ օրվա ընթացքում նա բազմաթիվ անգամներ փորձել էր պալատից դուրս փախչել, բայց հերթապահ քույրերի խիստ հսկողության պատճառով չէր կարողացել:

– Մի օր առաջ լսելով իր ընկերների կենդանի լինելու լուրը՝ Մնոն ուրախությունից ու հրճվանքից կարծես թե ավելի էր խենթացել,– ասաց բուժող բժիշկը՝ հայացքը չկտրելով Տաճատից:

– Մենք երեկ պատահականորեն հիվանդանոցի միջանցքում հանդիպեցինք նրան. գիտեմ, որ շատ ուրախ էր, բայց ընկերների կենդանի լինելու մասին ոչինչ չասաց,– զրույցի մեջ մտավ Տաճատը՝ համբերատարությամբ սպասելով, թե երբ կվերջանա Մնոյի մասին պատմությունը:

– Ահա այս գիշեր հիվանդանոցի նոր և անծանոթ հերթապահի միամտությունից օգտվելով՝ ձեր չար ու անհանգիստ Մնոն մեզ համար միանգամայն անսպասելի անհետացել է, բայց թե ո՞ւր, ոչ ոք չգիտի,– ասաց օրիորդ Լուսիկը՝ վերջացնելով իր պատմությունը:

*
* *

Ջերմ հրաժեշտ տալով Տաճատին՝ ես և Շուշանիկն այդ օրվա անցուդարձի հարուստ տպավորություններով այս անգամ համարյա թե առանց որևէ խոսք փոխանակելու վերադարձանք անտառ՝ մեր նոսրացած քարավանի հավաքատեղին, որտեղից հեռացել էինք առավոտյան վաղ ժամին: Տեսնելով մեզ՝ Աննայի և Շուշանիկի մայր Մարիամի ուրախությանը չափ ու սահման չկար, մանավանդ երբ իմացան, որ մենք երկուսով էլ ներկա ենք գտնվել մեծ վանքի կիրակնօրյա պատարագին ու աղոթել: Նրանք բուռն հետաքրքրությամբ լսեցին այն ամենը, ինչ տեսել ու լսել էինք ամբողջ օրվա ընթացքում: Սակայն նրանք միաժամանակ շատ վշտացան, երբ իմացան անտառում շրջող համաճարակի և անտառից շուտ հեռանալու վերաբերյալ հայոցձորցի Թորգոմի հետ տեղի ունեցած մեր զրույցի մասին: Մենք պատմում էինք ոգևորված՝ մեկին տասն ավելացնելով, հերթ չտալով մեկս մյուսին:

Անշուշտ, այդ օրվա մեր տպավորությունների մասին կարելի էր անվերջ պատմել, եթե նրանք երկուսով էլ հանկարծակի տրտմության մեջ չընկնեին: Իմանալով անտառում շրջող անտեսանելի թշնամու մասին՝ կանայք հուզմունքից միանգամից դադարեցին մեզ լսել, իսկ ես՝ որպես օրվա անցուդարձին ավելի տեղյակ, խուսափելով տեղի ունեցած մանրամասնություններից, նույնպես դադարեցի պատմել և խնդրեցի Աննային ուտելու որևէ բան տալ մեզ, քանի որ ամբողջ օրը քաղցած էինք մնացել:

– Օ՜, մայրիկիդ աչքը քոռանա, առավոտվանից մինչև երեկո քաղցած եք մնացել,– գորովանքով ասաց Շուշանիկի մայրը և անմիջապես տեղից վեր կացավ՝ մեզ համար ուտելու բան բերելու:

Ըստ երևույթին մեր ընթրիքը վաղուց էր պատրաստ, ուստի մինչ Աննան կրկին հարցեր կտար վանքում տեղի ունեցած պատարագի մասին, Մարիամը մեր առջև դրեց բարեգործական ինչ-որ ընկերության խոհանոցից ստացած մեծ պնակով լի ջրալի վռիկ՝ որպես այդ օրվա մեզ հասանելիք նպաստ:

Գիշերվա խավարը վաղուց էր տարածվել առանց այն էլ մթնած խիտ անտառում, այնպես որ ձեռքումս եղած փայտե գդալից բացի ուրիշ ոչինչ չէի տեսնում: Այնուամենայնիվ մեր քաղցը հագեցնելու նպատակով ես ու Շուշանիկը մեծ ախորժակով կերանք համեղ վռիկը, այն էլ առանց հացի:

Չնայած օրը կիրակի էր, բայց անտառում ամենուրեք լռություն էր տիրում, միայն լսվում էր հյուսիսից փչող մեղմ քամուց շարժվող տերևների խշշոցը, իսկ հաճախակի էլ փայտփորիկի թխկթխկոցի ձայները: Իհարկե մենք գոհ էինք, որ այդ երեկոյան բացի Աննայից և Մարիամից մեր երկուսին այլևս հարցուփորձ անող չեղավ:

Քրոջս ամուսին Բալաբեկն ու Հարություն Եղոյանը դեռ առավոտյան լուսաբացին հեռացել էին անտառից՝ գավառի որևէ շենքում օթևան ճարելու մեծ հույսերով, բայց դեռ չէին վերադարձել: Տեղում չէին նաև իմ ընկերները. ըստ երևույթին առավոտյան տեղում չգտնելով ինձ՝ նրանք նույնպես ցրվել էին դեսուդեն՝ մեծ մտահոգություն պատճառելով իրենց մայրերին: Չսպասելով նրանց վերադարձին՝ վերջապես շատ դժվարությամբ բաժանվեցի Շուշանիկից և այդ օրվա երկարատև թափառումներից խիստ հոգնած լինելով՝ անմիջապես քնեցի՝ ընկնելով անհանգիստ երազների գիրկը մինչև հաջորդ լուսաբաց:

*
* *

Դեռ խոր երազների մեջ էի, երբ հանկարծ չորս կողմից վրաս թափվեցին մեր խմբի տղաները՝ Ատոմը, Նիկոլը, Սարգիսը, Հայկը և ուրիշները:

– Վե՛ր կաց, հերիք է խռմփացնես, տեղ ենք գնալու,– առաջարկեց Սարգիսը ու ձեռքիցս բռնելով՝ պառկած տեղից բարձրացրեց:

Տեսնելով նրանց ուրախ ու զվարթ տրամադրությունները՝ ես անմիջապես զգացի, որ նրանք անպայմանորեն խանգարելու են Շուշանիկի հետ այդ օրվա հանդիպումը. առանց ինձ նրանք ոչ մի տեղ չէին գնա: Նրանցից ազատվելու ելք չգտնելով՝ ես հարկադրված էի արագորեն հագնվել, որպեսզի բոլորս միասին անտառից դուրս գայինք, սակայն հաստատ համոզված էի, որ նույն առավոտյան չհանդիպելով Շուշանիկին՝ ես կորցնելու էի նրա վստահությունը իմ հանդեպ, մանավանդ որ խոստացել էի այդ օրը կրկին զբոսնել միասին: Համոզված էի նաև, որ չտեսնելով ինձ՝ նա խիստ կվշտանար, գուցե խռովեր ու ընդմիշտ հետս չխոսեր, այնուամենայնիվ այդ օրը ընկերներիս առաջարկը մերժել չկարողացա անկախ նրանից, թե ինչ կմտածի Շուշանիկն իմ մասին: Բայց մի՞թե կարող էի մերժել իմ լավ և հավատարիմ ընկերներին, որոնց հետ ապրել ու շնչել էի հայրենի լեռներում դեռ մանուկ հասակից:

Հաշվի առնելով այդ բոլորը՝ ես առանց որևէ առարկության ենթարկվեցի նրանց և շտապ հագնվելով՝ դիմեցի Սարգսին:

– Ո՞ւր ենք գնալու,– հարցրի ես՝ միաժամանակ հիշելով Մսրեին ազատելու համար Հայոց ձորից դեպի Նորդուզ ուղևորվելու մեր հին պատմությունը:

– Գնալու ենք Իգդիր, իսկ այնտեղից դեպի Օրգով,– պատասխանեց նա՝ առաջարկելով տղաներին գաղտագողի դուրս գալ ծառուղուց:

– Ինչո՞ւ,– հարցրի ես զարմացած:

– Կորած յուրայիններին գտնելու,– ավելացրեց Սարգիսը՝ գետնից վերցնելով ճանապարհի համար ուտելիքներով լցված ջանթիկը:

– Առանց Մնոյի գնալ չենք կարող,– խստությամբ հայտարարեցի ես՝ հասկացնելով, որ ինքս՝ որպես խմբի պետի օգնական, համաձայն չեմ նրանց որոշմանը:

– Գուցե նրան էլ գտնենք Իգդիրում,– ինձ հանգստացնելու համար ասաց Նիկոլը:

– Մնոն կենդանի է և մեզ է որոնում,– ժպտալով հայտնեցի ես՝ պատմելով այն ամենի մասին, ինչ լսել էի Տաճատից ու հիվանդանոցի բուժաշխատողներից:

Իհարկե, Մնոյի մասին իմ հայտնած լուրը մեծ ուրախություն պատճառեց ընկերներիս և միանգամից փոխեց Իգդիր գնալու նրանց մտադրությունը:

– Անցած օրն առանց մեզ Շուշանիկի հետ քաղաք ես գնացել, դավաճա՛ն,– կշտամբանքով ասաց Սարգիսը և պահանջեց, որ մանրամասնորեն պատմեմ տեսած ու լսածներիս մասին:

– Պատմելու շատ բան կա, բայց այժմ պետք է Մնոյին գտնենք, քանի որ շուտով հեռանալու ենք անտառից,– ավելացրի ես՝ խուսափելով մանրամասնություններից:

– Ո՞վ հայտնեց քեզ այդ մասին,– հարցրին տղաները զարմացած:

– Անտառում շրջում է ինչ-որ համաճարակ, և մահանում են շատերը,– լուրջ կերպով պատասխանեցի ես՝ պատմելով տեղից շուտ հեռանալու վերաբերյալ հայոցձորցի Թորգոմի հետ եղած խոսակցության բովանդակությունը:

Լսելով Մնոյի կենդանի լինելու և հիվանդանոցից անհայտանալու վերաբերյալ իմ կողմից հաղորդած նորությունները՝ մենք նույն օրը՝ վաղ առավոտյան, դուրս եկանք անտառից ու անմիջապես սկսեցինք շրջել քաղաքում ու ամեն տեղ, որտեղ հնարավոր էր մուտք գործել մեր խմբի ղեկավարին գտնելու համար:

*
* *

Անծանոթ գյուղաքաղաքում երկար թափառելուց հետո վերջապես օրվա երկրորդ կեսին մտանք վանքապատկան մեծ անտառի խորքը հիվանդանոցից անհայտացած Մնոյին գտնելու համար:

Ընդարձակ ու մեծ անտառը շատ խիտ էր, տարբեր տեսակի հաստաբուն ծառերով: Նրա երկարությունը սկսվում էր մեծ վանքի հարավային պարիսպներից ու վերջանում էր հեռավոր, ամայի ղռերով[62]: Անտառի սկզբից մինչև վերջ ձգվում էին ուղղահայաց մի շարք ծառուղիներ, որտեղով հնարավոր էր առանց մոլորվելու դուրս գալ դեպի ղռեր ու հարևան գյուղերի կանաչ մարգագետիններ: Երևում էին նաև խաչաձևված առանձին նեղ արահետներ, որտեղով անտառի բնակիչները դուրս էին գալիս դեպի Իգդիր տանող մեծ խճուղին ու Ս. Գայանե վանքը:

Ահա ամառային այդ շոգ օրերին այնտեղ էին պատսպարվել հայրենի հողից ու ջրից զրկված հազարավոր տառապյալ հայ գաղթականները, որոնց միակ օթևանը դեպի երկինք խոյացող բարձր բարդիների խիտ ճյուղերն էին: Անտառի սկզբից մինչև վերջը զբաղեցված էր անօթևան մնացած հազարավոր հայ մարդկանցով:

Հետաքրքրությամբ դիտելով տերևախառն կանաչների վրա տեղավորված ժողովրդին՝ մեզնից ոչ մեկը սիրտ չէր անում որևէ մեկից հարցնել հիվանդանոցից անհետացած վիրավոր Մնոյի մասին: Նրանց մի զգալի մասը, հիվանդ պառկած, տնքալով ուղղակի հառաչում էր խոր ցավերից, իսկ ոմանք էլ, հարազատների մահիճների վրա անընդհատ մորմոքելով, անիծում էին ահավոր չարիքների պատճառ դարձած եղեռնագործ բիրտ թշնամուն:

Անտեսանելի թշնամու մասին լսած տեղեկությունները դեռ երեկ անհավատալի էին թվում ինձ, սակայն այդ օրը իմ սեփական աչքերի առաջ պարզ երևացին անտառում բռնկված համաճարակի սարսափելի հետևանքները: Եվ իրոք, այդ հիվանդությունը նման էր անտեսանելի թշնամու, որի դեմ երես առ երես պայքարի մեջ մտնել չէր վիճակված ոչ մեկին: Իսկապես, արագորեն տարածվող խոլերային հնարավոր չէր դիմակայել ոչ մի կերպ, մանավանդ մարդկանցով խիտ տեղավորված խոնավ անտառում, այն էլ բաց երկնքի տակ, բուժող բժիշկների լրիվ բացակայության պայմաններում:

---

[62] ղռեր – ամայի, անշեն տարածք

Այդ օրը՝ մեր որոնումների ժամանակ, մենք ականատես եղանք նաև մի շարք այլ տեսարանների, որոնք խորը վիշտ պատճառեցին մեզ բոլորիս: Մենք տեսանք ծառերի թարմ ճյուղերով ծածկված հարյուրավոր մարդկանց անշնչացած մարմիններ, որոնց դիակները մնացել էին անտառում՝ դեռ հողին չհանձնված: Մի տեղ հիվանդ մայրը, պառկած մահացած զավակների կողքին, հրաժարվում էր բաժանվել նրանցից՝ համոզված լինելով, որ շուտով ինքը նույնպես փչելու է իր վերջին շունչը: Այնքան սարսափելի էր այդ հիվանդությունը, որ շատերը ճիշտ կերպով այն համարում էին անտեսանելի թշնամի, որը, արագորեն տարածվելով, հնձում էր հարազատ հողից զրկված հարյուրավոր հայ գաղթականներին ու մեկ-երկու օրվա ընթացքում գետին տապալում ՝ չնայելով ո՛չ ծնողին և ո՛չ էլ սիրասուն զավակին:

Ձարհուրելի տեսարաններից խիստ հուզված՝ մենք այլևս դադարեցինք շրջել ու առաջին իսկ պատահած ծառուղով դուրս եկանք անտառից՝ ուղղություն վերցնելով դեպի հեռավոր ղռերը, որից հետո պետք է որ սկսվեին մարգագետինները: Դուրս գալով անտառում պատսպարված մարդկային այդ հեղեղից՝ մեր առջև բացվեց մի ավելի սարսափելի նոր տեսարան, որը նկատելուն պես մեզնից շատերը սարսռելով կարծես թե կանգնած տեղում փայտացան:

Անտառի վերջին մենածառերից ոչ հեռու՝ ազատ տարածության վրա, փորված էին քառանկյունի խորը փոսեր, որոնց մեջ էին նետում սայլակներով բերված մահացածների մարմինները: Ճիգերի մեծ լարումով փորձեցի դանդաղորեն մոտենալ երևացող հողաթմբերից մեկին այնտեղ կատարվող թաղման արարողությունը դիտելու նպատակով: Սակայն նկատելով երկար ու լայն փոսերի մեջ լցված տարբեր հասակի երկսեռ մարդկանց կույտերը՝ մի պահ սարսուռ անցավ մարմնովս, աչքերս մթնեցին, ու քիչ էր մնացել գլխի վրա վայր ընկնեի փայտացած դիակների վրա: Մի կերպ զսպելով ինձ՝ վերջապես հողաթմբերից հեռացա, դողդողալով մոտեցա ընկերներիս, որոնք հուզմունքից բոլորովին սիրտ չարեցին տեսնելու այն, ինչ կատարվում էր մեծ հողաթմբերի հետևում: Բոլորովին անշուք էր արյունակից մարդկանց թաղման արարողությունը: Տեղում եղած մի խումբ գերեզմանափորներից շատերը զբաղված էին նորանոր փոսեր փորելով, իսկ ոմանք էլ սայլապանների հետ հողին էին հանձնում անտառից հենց նոր բերված դիակները: Հայկը, Ատոմը, Նիկոլը չկարողացան գեթ մի վայրկյան դիտել այդ սոսկալի սրտաճմլիկ տեսարանը, ուստի հուզված շրջվեցին, որքան հնարավոր է, այդտեղից շուտ փախչելու նպատակով:

Սակայն մենք դեռ չէինք հեռացել անտառի եզրից, երբ հանկարծակի մեր դեմ դիմաց կանգնեցին մի խումբ տղամարդիկ, որոնց մեջ էր նաև ինձ հանրածանոթ հայոցձորցի Թորգոմը:

Տեսնելով մեզ՝ նա մի պահ զարմացած հարցրեց.

– Ո՞ւմ եք որոնում, տղանե՛ր:

– Որոնում ենք մեր խմբի ղեկավարին՝ հիվանդանոցից անհետացած Մնոյին,– պատասխանեցի ես՝ ավելի մոտենալով ծանոթիս:

– Տեսա՞ք, զավակնե՛րս, թե ինչ է կատարվում անտառում,– ասաց նա՝ առաջարկելով մեզ անմիջապես հեռանալ այդտեղից:

Ըստ երևույթին, նա ինձ չճանաչեց. ուստի մոտենալով նրան՝ ես հիշեցրի երեկվա մեր հանդիպման մասին;

– Այդ դո՞ւ ես, տղա՛ս, և ինչո՞ւ ես եկել այստեղ, չէ՞ որ ասացի՝ համոզես քույրիկիդ հեռանալ այստեղից,– դիտողություն արեց նա՝ մոտենալով հաստաբուն մենածառի շվաքին:

– Հեռանալու ենք, մորեղբա՛յր, երբ պատսպարվելու որևէ օթևան ճարենք,– ինձանից շուտ պատասխանեց Ատոմը:

– Տեսե՛ք, հայրենակիցնե՛ր, տեսե՛ք պատերազմի ու գաղթի հետևանքները,– ասաց նա՝ կրկին առաջարկելով մեզ շուտ հեռանալ այդտեղից, իսկ ինքը մյուսների հետ մոտեցավ եղբայրական գերեզմանոցի բարձր հողաթմբին, որի հետևում կատարվում էր թաղման հերթական արարողությունը:

*

* *

Լսելով հայոցձորցի Թորգոմին՝ մենք լռությամբ հեռացանք՝ ուղղություն վերցնելով դեպի Իգդիր տանող մեզ հանրածանոթ լայն խճուղին՝ հիվանդանոցից անհայտացած Մնոյին գտնելու մեծ հույսով:

Ամառվա կիզիչ արևից շիկացած ղռերի ավազախառը հողն այրում էր մեր կիսամերկ ոտները: Չնայած հանդիպող բոլոր տեսակի դժվարություններին՝ այնուամենայնիվ Մնոյին գտնելու համար մեզնից ոչ մեկը չհրաժարվեց հետագա որոնումներից, թեկուզ օր ու գիշեր, միայն թե տեսնեինք նրան կենդանի:

Մեծ խճուղին դեռ լիքն էր Վասպուրականի տարբեր գավառներից գաղթած հայ մարդկանցով, որոնցից շատերը հենց նոր էին իջել Մասիս սարի լանջերից, իսկ ոմանք էլ ըստ երևույթին նույնպես որոնում էին գաղթի ճանապարհին անհայտ կորած իրենց հարազատներին: Եկողները բոլորն էլ հոգնած էին ու մռայլ, բայց և այնպես չէին խուսափում մեր

հարցերին պատասխանելուց: Նրանցից շատերը նույնպես դիմում էին մեզ իրենց հետաքրքրող հարցերով, հատկապես Վաղարշապատում բնակություն հաստատող գաղթականներին ցույց տվող օգնության ու նրանց վիճակի մասին:

Երբ լսեցին անտառում բռնկված համաճարակի մասին, նրանցից շատերը հանկարծակիի գալով միանգամից կանգ առան՝ իրենց հայացքներն ուղղելով դեպի անտառն ու ամայի ղռերը, որը դարձել էր մահացած գաղթականների եղբայրական գերեզմանոցը: Հարցուփորձ անելով նրանք ոչ միայն լսեցին, այլ սեփական աչքերով տեսան այն, ինչ կատարվում էր վանքապատկան մեծ անտառում:

– Մնալ այստե՞ղ, թե՞ շարունակել ճանապարհը դեպի լեռները,– բարձր ձայնով հարցրեց քարավանի ղեկավարը՝ ցույց տալով հեռվից երևացող Արագածի լանջերը, որտեղ դեռ պատանի հասակում ինքն էր ապրել Սուլթան Համիդի մարդասպանների հետապնդումից ազատվելու ժամանակ:

– Կամքը քոնն է, քեռի՛ Մալխաս, որտեղ՝ դու, այնտեղ էլ՝ մենք,– պատասխանեցին մյուսները:

– Լավ է հեռանալ, տանջանքներին դիմանալ, քան թե մեռնել վանքապատկան անտառում,– ասաց քեռի Մալխասը՝ առաջարկելով յուրայիններին շարունակել ճանապարհը:

– Ո՞ւր եք գնալու, մորեղբա՛յր,– ամոթխածությամբ հարցրեց Սարգիսը՝ սովորականի պես գլուխը կախ գցելով:

– Դեպի վեր, Ալագյազի լանջերը, որտեղ հովն է փչում ձյունապատ սարերից և շատ նման է մեր հայրենի լեռներին,– պատասխանեց նա ու նայելով մեզ՝ ավելացրեց,– ապրե՛ք, տղանե՛ր, որ զգուշացրիք մեզ ահավոր չարիքի մասին:

Երևում էր, որ քեռի Մալխասը մեծ հեղինակություն էր վայելում յուրայինների շրջանում, ուստի նրա առաջարկությունից հետո նորեկները հանգստանալու նպատակով սկսեցին բեռնաթափել իրենց բարձած անասունները և տեղավորվեցին խճուղու եզրի չորացած խոտերի մեջ: Դրանից հետո մեր զրույցը կարճ տևեց, ուստի հրաժեշտ տալով նրանց՝ մենք անմիջապես հեռացանք:

*
* *

Հաջորդ առավոտյան արթնացա հեռվից լսվող մեծ վանքի զանգերի ղողանջների հետ և մեր պայմանավորվածության համաձայն՝ վազեցի մեզնից ոչ հեռու մենածառի տակ: Արթնացնելով Սարգսին՝ մենք եր-

կուսով լուսաբացի մթնաշաղի մեջ ուզեցինք հավաքել տղաներին երեկվա մեր որոնումները շարունակելու նպատակով: Այդ օրը կրկին պետք է որոնեինք Մնոյին, սակայն մինչ կպատրաստվեինք տեղից հեռանալ, լսվեց ջրից վերադարձող Աննայի ձայնը:

– Ո՞ւր կերթաս,– հարցրեց նա՝ վայր դնելով մեծ կուժը:

– Ընկերներիս արթնացնելու,– մեղմորեն պատասխանեցի ես՝ նայելով քույրիկիս խոնավացած աչքերին:

– Մի՛ գնա, հիվանդ են նրանք,– համարյա թե աղերսանքով խնդրեց նա:

– Ովքե՞ր,– զարմացած հարցրի ես ու ավելի մոտեցա նրան:

– Ատոմը, Նիկոլը և Հայկը, իսկ երեկվանից նաև Շուշանիկը, նրա երկու քույրերը,– համարյան թե արտասվելով պատասխանեց Աննան՝ աղաչելով՝ չհեռանամ իրենից:

Ստուգելով Աննայի տեղեկությունների ճշտությունը՝ իրոք, ես ու Սարգիսը նրանց գտանք անկողնում պառկած, ծանր վիճակում: Իսկապես դեպքերն այնքան անսպասելի էին մեզ համար, որ մենք երկու ընկերներով այդ օրը հանգիստ մնալ չէինք կարող: Նրանք հիվանդացել էին շատ հանկարծակի, այն էլ անցնող գիշերվա ընթացքում, որի մասին նրանց ծնողներն անգամ տեղեկություն չունեին: Այդ անսպասելի դեպքերից հետո մեզ համար պարզ դարձավ, որ բռնկված համաճարակն ընդարձակվելով՝ արդեն հասել էր անտառի հեռավոր եզրը, որտեղ պատսպարվել էինք մենք մեր համագյուղացիների հետ: Շրջելով ծառուղու երկու կողմերում՝ ես ու Սարգիսը խիստ ջերմության մեջ գտանք բավականին թվով ծանր հիվանդների, որոնցից չորսը մեր խմբի տղաներից էին, և որոնք անկողին էին ընկել հենց նույն գիշերը: Բալաբեկը, Մովսեսն ու Հարություն Եղոյանը մեզ համար օթևան ճարելու երկար որոնումներից դեռ չէին վերադարձել, իսկ Նիկոլի և Ատոմի դրությունը ժամ առ ժամ վատանում էր: Հաշվի առնելով հիվանդների այդ ծանր վիճակը՝ մենք երկու ընկերներով առավոտից մինչև ուշ երեկո չհեռացանք նրանցից և ամբողջ ժամանակ զբաղված էինք հեռավոր աղբյուրից ջուր բերելով: Դժբախտաբար մեր բերած սառը ջուրը ոչ մի բանով չէր թեթևացնում հիվանդների դրությունը:

Վերջին անգամ, երբ վերադառնում էի աղբյուրից, մահացան Հարություն Եղոյանի կինը և նրա երկու զավակները՝ Ատոմն ու Նիկոլը, նրանք, որոնց հետ անց էի կացրել իմ ամբողջ մանկությունը: Երրորդ օրվա լուսաբացին մահացան Շուշանիկի մայրը, իսկ երեկոյան նրա երկու մեծ քույրերը:

Օ՜, որքա՜ն ցավալի էր հարազատ զավակին բաժանել իր սիրելի մայրիկից: Որբացած Շուշանիկը ամուր գրկել էր իր մահացած մորը ու չէր անջատվում նրանից: Տեսարանն այնքան վշտալի էր, որ հուզմունքից տեղում մնալ չկարողացա: Սակայն երբ կրկին վերադարձա մեր հավաքատեղին, այլևս չկային ո՛չ մահացած Մարիամի դին և ո՛չ էլ սևաչյա Շուշանիկը, որի հետ դեռ երեք օր առաջ շատախոսում էինք մեր ապագա երջանկության մասին:

Նրան տարել էին անտառից դուրս, բայց թե ո՞ւր, այդպես էլ չիմացա:

Բոլորն էլ տրտմության մեջ էին, քանի որ ժամ առ ժամ նոսրանում էին անտառի բնակիչների շարքերը: Մեկ-երկու օրվա ընթացքում մահացան բավականին թվով կանայք ու երեխաներ, այդ թվում նաև մեր խմբի չորս տղաները:

Վերջապես տեղում մնալն անհնարին էր, և ահա դժբախտության վրա հասած Բալաբեկն ու Հարություն Եղոյանը կարգադրեցին կենդանի մնացածներին պատրաստվել՝ լուսաբացին հեռանալու անտառից: Հարազատների կորստից խիստ վշտացած՝ այդ գիշեր մեզանից ոչ մեկը աչքն անգամ չփակեց, բոլորն էլ, իրար անցած, կարծես թե գտնվելիս լինեին Բերկրիի ձորում, այն էլ թուրքական մարդասպանների պաշարման սև օղակի մեջ՝ սպասելով իրենց օրհասական վախճանին:

Չնայած ամառվա կարճ գիշեր էր, բայց այն լուսացավ շատ դանդաղ, և ինձ թվում էր, թե ընդամենը վեց ժամ տևող ժամանակը երկարել է ավելի քան մեկ տարով: Վերջապես լույսը բացվեց, և մենք բոլորս, արդեն ոտքի կանգնած, սպասում էինք մեր քարավանի ղեկավարների՝ Հարություն Եղոյանի ու Բալաբեկի կարգադրություններին, որոնք հենց նոր էին վերադարձել ղռերում եղած եղբայրական գերեզմանոցից:

– Վե՛ր կացեք,– բարձր ձայնով ազդարարում էր Բալաբեկը՝ հավաքելով գետնին փռված մեր աղքատիկ իրերը:

Հինգ օրվա երկարատև թափառումներից վերադարձած Բալաբեկն ու Հարություն Եղոյանը չհանգստացան այնքան ժամանակ, մինչև վերջին մարդը դուրս չբերեցին անտառից:

Նրանց կարգադրությամբ՝ տղամարդիկ մեծից մինչև վերջին պատանին, օրվա սննդի պաշարը շալակած, դանդաղորեն հեռացան անտառից, իսկ զրկանքների մեջ հյուծված մայրերն իրենց զավակների ձեռքերից բռնած, արտասվաթոր աչքերով հետևում էին նրանց՝ անընդհատ անիծելով եղեռնագործ չար թշնամուն:

ՆՈՐ ՕԹԵՎԱՆ

Դեռ գյուղաքաղաքին չհասած՝ գաղթածների նոսրացած քարավանը, առանձնանալով մի քանի խմբերի, շատ դժվարությամբ բաժանվեցին միմյանցից, արտասվալի աչքերով ցրիվ եկան դեսուդեն: Իհարկե, այդպիսի խմբերի միմյանցից բաժանվելը եզակի դեպքեր չէին: Հայրենի հողից զրկված հազարավոր հայ ընտանիքներ գաղթի առաջին իսկ օրից՝ Արարատյան դաշտ հասնելուն պես, մի քանի օրվա ընթացքում ցրիվ եկան երկրով մեկ՝ տարբեր ուղղություններով: Նրանցից շատերը հեռացան դեպի զովաշունչ լեռները՝ հյուրասեր շինականների մոտ, որոշ մասը պատսպարվեց Արարատյան դաշտում սփռված բնակավայրերում, իսկ ոմանք էլ՝ հեռու՝ ցարական Ռուսաստանի խորքերում, այլ ազգերի շրջանում աշխատելու, ապրելու և իրենց ֆիզիկական գոյությունը պահպանելու համար:

Մենք երկու եղբայրներով ո՛չ հայր ունեինք և ո՛չ էլ մայր: Թշնամու գերությունից վերադառնալու առաջին իսկ օրից գտնվում էինք մեծ քույրիկիս խնամքի տակ և անսահմանորեն գոհ էինք նրանից: Նա ոչ միայն հարազատ քույր էր մեզ համար, այլև մայր՝ բառիս լայն իմաստով:

Բաժանվելով մյուս խմբերից՝ Հարություն Եղոյանի և մեր ընտանիքի կենդանի մնացած անդամներս, որոնց թիվը հասնում էր տասնհինգի, շարժվեցինք դեպի քաղաքի կենտրոն, որտեղ մինչ այդ մեզնից ոչ ոք չէր եղել: Թափառելով գյուղաքաղաքի նեղլիկ, ծուռումուռ փողոցներով՝ մենք փակված շատ դռներ թակեցինք: Ամառվա կիզիչ արևի տակ մինչև ուշ երեկո բազմաթիվ դուռ-դարպասներով ներս մտանք, ամեն կարգի մարդկանց հանդիպեցինք, բայց և այնպես այդ օրը տեղավորվելու համար որևէ հարմար օթևան գտնել չկարողացանք:

Ամառվա երկար օրը վաղուց էր մթնել՝ դժվարացնելով մեր հետագա որոնումներն այն էլ անծանոթ քաղաքում, ուստի տարբեր մարդկանց խորհրդով ստիպված էինք շտապել եկեղեցու գավիթը՝ նրա պարիսպների տակ պատսպարվելու մինչև հաջորդ օրվա լուսաբաց:

– Ինչո՞ւ միայն եկեղեցու գավիթը, այլ ոչ թե մի այլ տեղ,– հարցրեց Բալաբեկը՝ միաժամանակ հիշեցնելով հայրենի գյուղի եկեղեցին չհաճախելու պատճառով տեր Օհանի և ռես Մանուկի կողմից իրեն տված պատժի հին պատմությունը:

– Գնանք այնտեղ, որդի՛, գուցե մեզ հաջողվի մասնակցել եկեղեցու առավոտյան աղոթքին,– միջամտեց նրա մայր Փառանձեմը՝ նախատելով որդուն անհավատության համար:

– Ճարներս ինչ, ուզենք-չուզենք, պետք է գնանք,– քմծիծաղով ավելացրեց Բալաբեկը՝ անիծելով իր բախտը:

Իհարկե, խոսակցություններն ավելորդ էին. մենք պետք է որևէ տեղ գնայինք, քանի որ այն ժամանակ չկար պետական մի այնպիսի հոգատար մարմին, կազմակերպություն, որին դիմեինք մեզ անհրաժեշտ օգնություն ցույց տալու համար: Այնպես որ յուրաքանչյուր գաղթած հայ ընտանիք իր ճարն էր տեսնում սեփական նախաձեռնությամբ, բայց մեծ մասամբ տեղական աշխատավոր հայ մարդկանց անկաշառ օժանդակությամբ: Մենք գնում էինք այնտեղ՝ համոզված լինելով, որ գիշերելու համար տեղ կունենանք:

Մեր քարավանի ղեկավար Հարություն Եղոյանը իր կյանքի դառը փորձից լավ գիտեր, որ օտարության մեջ գտնվելիս հայ մարդկանց վերջին հանգրվանը հայ եկեղեցին էր, և հենց այդ պատճառով էլ շտապեցինք այնտեղ. գուցե որևէ հայրենասեր ու բարի մարդ մեզ օգնության կհասներ: Չնայած այդ օրը մեր որոնումների ժամանակ տեղացի մարդկանց հետ տեղի ունեցած հարցուփորձին անձամբ չէի մասնակցում, բայց և այնպես տեսնում էի, թե ով ինչ վերաբերմունք ուներ հայրենի հողից զրկված հայ մարդկանց նկատմամբ:

Այդ օրը մեզ համար որոշակիորեն պարզ դարձավ, որ ով հարուստ էր, նա բնակարանային հարմարություններ ավելի շատ ուներ, բայց տարբեր պատճառներով նրանք գաղթականներին տեղ չէին տալիս: Հակառակն էր հասարակ շինականի կամ տեղացի բանվորի վերաբերմունքը մեր նկատմամբ: Մենք մտնում էինք նրանց բաց դռներով ներս ու մեծ հյուրասիրության արժանանում. տեսնում էի, որ, իրոք, չկար հասարակ շինականի մի շինություն կամ հացատուն, որտեղ տեղավորված չլիներ հայ գաղթականի թեկուզ մեկ ընտանիք: Չգտնելով պատսպարվելու որևէ օթևան՝ նրանցից շատերը խորհուրդ էին տալիս մեզ տեղ չգտնելու դեպքում կրկին վերադառնալ իրենց մոտ, թեկուզ միասին ապրելու մեծ ցանկությամբ:

*
* *

Գյուղաքաղաքի կենտրոնում եղած եկեղեցու գավթին հասնելուն պես սարսափելի հոգնածությունից շատերի վայր ընկնելն ու քնելը մեկ եղավ: Եկեղեցու ընդարձակ բակը շրջապատված էր տուֆ քարերով շարված բարձր պարսպով, ուներ երկու կամարակապ մեծ դռներ, որոնք մեր ներս մտնելուց հետո անմիջապես փակվեցին տեղում բնակվող ժամհարի կողմից:

Խաղաղ էր ողջ շրջապատը: Այն բոլորովին չէր նմանվում վանքապատկան հինավուրց մեծ անտառին, որտեղ ծովի ալիքների պես անընդհատ խշշալով ծփում էին դեպի երկինք խոյացող բարձր բարդիների տերևախիտ ճյուղերը: Այլևս չէին լսվում ցավերից տառապող հիվանդների տնքոցներն ու հառաչանքները: Ականջներիս չէին հասնում հարազատներից զրկված մայրերի լաց ու անեծքի ձայները: Չէին լսվում նաև փայտփորիկների գիշերվա թխկթխկոցներն ու ծառից ծառ թռչող չղջիկների թփթփոցները, որոնք պակաս անհանգստություն չէին պատճառում մեզ բոլորիս:

Չնայած շատ խաղաղ էր այդ գիշեր, բայց արթուն էին տղամարդիկ, կանայք, որոնք, սոսկալի վշտի մեջ, դեռ մորմոքում էին այն թանկագին կորուստների համար, որ ունեցան բոլորը անտառում՝ մեր սեփական աչքերի առաջ:

Նրանց մորմոքից խիստ ազդված՝ ես նույնպես քնել չկարողացա, քանի որ անտառում տեղի ունեցած սարսափելի տեսարանները կինոժապավենի նման պատկերվում էին աչքերիս առաջ, և այն մտաբերելիս անընդհատ ջղաձգորեն պառկած տեղից վեր էի թռչում՝ մտահոգություն պատճառելով կողքիս նստած քույրիկիս: Այդպես երկար տանջվելով՝ վերջապես գիշերվա երկրորդ կեսին մի կերպ քնեցի՝ ընկնելով խռովահույզ երազների մեջ, մինչ եկեղեցու զանգերի՝ ականջ ծակող ղողանջները կհնչեին կամարակապ բարձր գմբեթից: Գիշերվա խաղաղ միջավայրին շուտով փոխարինեցին հոգևորականների ժամերգության ձայներն ու եկեղեցի հաճախող հավատացյալ մարդկանց լուսաբացի բարեմաղթությունները:

Տղամարդիկ ու կանայք, վաղուց ոտքի վրա կանգնած, անընդհատ խաչակնքելով, աղոթում էին Աստծուն հեռու պահել իրենց զավակներին պատահած չարիքներից: Այն երեխաները, որոնք մինչ այդ խոր քնի մեջ էին, նույնպես արթնացան՝ հետաքրքրությամբ լսելով մեզ շրջապատող տեղացի մարդկանց ոչ սովորական խոսակցական բարբառը:

Ժողովրդական առածն ասում է, որ չկա չարիք, առանց բարիք, և իրոք, լուսաբացին եկեղեցի այցելողների մեջ մենք հանդիպեցինք շատ բարի մարդկանց, որոնք ցուցաբերեցին իրենց մարդասիրությունը մեր նկատմամբ:

– Գնանք, եղբայրնե՛ր, գնանք, ձեզ համար օթևան ճարեմ,– ասաց նրանցից մեկը՝ առաջնորդելով Բալաբեկին ու Հարություն Եղոյանին դեպի եկեղեցու արևելյան կամարակապ դուռը, որի դեմ դիմաց երևում էր շրջապատի նեղլիկ փողոցներից մեկը:

Այդպես մեզ հանդիպող բարի մարդկանց վարմունքն անմիջապես փոխեցին նաև մեր տրամադրությունը դեպի լավը: Աննայի և մյուս կանանց դեմքերից աստիճանաբար անհետանում էր երկար օրերի ընթացքում կուտակված թախիծը, իսկ մենք՝ երեխաներս, սովորականի պես ուրախ-ուրախ թռչկոտում էինք դեսուդեն. երբեմն նույնիսկ թվում էր, թե իրականում առանձնապես ոչինչ չի պատահել:

Լուսաբացի արևի առաջին շողերի հետ ուրախության ժպիտ երևվաց անխտիր բոլորի դեմքերին: Իսկապես ուրախացանք, որ քաղցր ու բարի խոսքեր լսեցինք: Ուրախանում էինք, որովհետև բարի մարդիկ տեղավորելու, աշխատելու և ապրելու հույս ներշնչեցին մեզ բոլորիս: Առանձնապես մենք՝ պատանիներս, հրճվանքի մեջ էինք: Տեղացի մարդկանց լավ վարմունքից ոգևորված՝ ուրախ խանդավառության մեջ թռչկոտում էի դեսուդեն, երբ հանկարծ Բալաբեկը, կամարակապ դարպասից ներս մտնելով, առաջարկեց մեզ վերցնել մեր իրերը և իրեն հետևել:

Շատ հեռու չէր այն խրճիթը, որը բնակվելու համար տրամադրված էր մեր երկու ընտանիքներին: Մենք, համարյա թե վազելով, հետևում էինք մեզ առաջնորդող Բալաբեկին ու հևալով հասանք այնտեղ՝ վայր դնելով մեր շալակած իրերը:

Խրճիթն իրենից ներկայացնում էր մի ցածրիկ հացատուն՝ երկու փոքրիկ լուսամուտներով, բայց բավականին ընդարձակ, որի միջից դեռ չէր հանվել տանտիրոջ ձմեռվա վառելիքի մեծ պաշարը: Հացատունը տանտիրոջ մեկհարկանի բնակարանից ու ընդարձակ պարտեզից անջատված էր անտաշ քարերով շարված բարձր ցանկապատով, ուներ փոքրիկ բակ՝ երկու դռներով, որից մեկը բացվում էր դեպի փողոց, իսկ երկրորդն ուղղակի պարտեզի մեջ՝ մեծ ջրհորի դեմ դիմաց:

Ուշադրությամբ զննելով խրճիթի առաստաղն ու պատերը՝ պարզվեց, որ նա ժամանակին օգտագործվել էր որպես անասնագոմ: Մեզ օգնող տեղացի հարևանների ասելով՝ տանտիրոջ ամուսնու՝ տեր Ասատուրի մահանալուց հետո աստիճանաբար վերացել էին նրանց եղջյուրավոր անասունները, իսկ ախոռը, դատարկ մնալով, փաստորեն դարձել էր ցախատուն:

– Ոչինչ, հո հավիտյան չե՞նք մնալու այստեղ, մի քանի ամիս հետո նորից վերադառնալու ենք մեր երկիր,– փորձեց հուսադրել Հարություն Եղոյանը՝ առաջարկելով եղբայրներին փողոցից ներս բերել վայր դրված իրերը:

– Ախոռ է թե պալատ, մեզ ձեռնտու է,– ավելացրեց Բալաբեկը՝ շնորհակալություն հայտնելով տեղում կանգնած տանտիրոջը, որը համոզում էր Աննային, թե ամեն ինչ լավ կլինի մեր տեղավորվելուց հետո:

Ներկարացնելով խոսակցությունը տանտիրոջ հետ՝ մենք բոլորս միասին անմիջապես ձեռնամուխ եղանք խրճիթի ներսում եղած ձմեռվա վառելիքը դուրս բերել և փոխադրել ցանկապատի հակառակ կողմը՝ դարսելով Եղոյանի կողմից հապճեպ կառուցված ծածկի տակ, իսկ կանայք սկսեցին մաքրել առաստաղի գերանները պատած սարդոստայնների ցանցերը, ինչպես նաև պատերին նստած փոշու հաստ շերտը: Մաքրասեր Աննան, իր սովորության համաձայն, չզլացավ անգամ լվանալ հատակին շարված քառակուսի մեծ սալերն ու երկու փոքրիկ լուսամուտների մրոտված փեղկերը: Կանանց և տղանարդկանց օգնելու համար մեծ եռանդով ու ջանասիրությամբ աշխատում էինք նաև մենք՝ պատանիներս՝ արժանանալով մեծերի գովասանքներին: Շատ չարչարվելուց հետո վերջապես ներս քաշվելու համար պատրաստ էր մեր երազած օթևանը: Խրճիթի ընդարձակ տարածությունը պայմանականորեն բաժանվեց առանձին մասերի, որտեղ տեղավորվեցին մեր երկու ընտանիքների տասնհինգ անդամները: Երկարատև թափառումներից հետո այդ աղքատիկ խրճիթով այնքան էինք ուրախացել, որ քաղց ու հոգնածություն անգամ չզգացինք: Մութը վաղուց էր ընկել, բայց կանայք դեռ մաքրում էին խրճիթի շրջապատն ընդհուպ մինչև փողոց: Մեր ունեցած իրերը տեղավորելուց հետո ձեթի ճրագի աղոտ լույսի տակ բոլորս միասին նստեցինք ընթրիքի:

Չնայած մեր տանտերն արտաքուստ աղքատ էր երևում, բայց և այնպես նա մեզ հյուրասիրեց ուտելիքի բոլոր տեսակներով, ինչպես նաև մեկական բաժակ կարմիր գինիով: Իհարկե, նրանից հետ չմնացին նաև մեզ անծանոթ, բայց հյուրասեր հարևանները, որոնք հյուրասիրում էին մեզ ոչ միայն տարբեր տեսակի մրգերով, այլև գոտեպնդում իրենց բարի խորհուրդներով:

Այդպիսով, մեծ գաղթի ճանապարհին կրած անասելի տանջանքներից ու երկարատև օրեր բաց երկնքի տակ մնալուց հետո վերջապես այդ գիշեր առաջին անգամ հանգիստ քնեցինք, այն էլ արյունակից հայ մարդկանց շրջապատում և նրանց հարկի տակ, առանց անցած օրերի տագնապալի կանչերի:

Չնայած օգոստոս ամսվա տոթ գիշեր էր, բայց ընկղմվել էի խոր քնի մեջ, այն էլ առանց պատկերավոր երազների: Քնել էի մեռելի պես՝ չլսելով ո՛չ լաց, ո՛չ բողոք և ո՛չ էլ գաղթող մարդկանց տագնապալի ձայ-

ները, չզգալով անգամ ճաքճքված ոտքերիս սարսափելի ցավն ու մրմուռը:

ԽԱՌԸ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

Համաշխարհային առաջին պատերազմի սկսվելու երկրորդ տարվա վերջին ամիսներն էին: Իմպերիալիստական գիշատիչ պետությունների կողմից սանձազերծված այդ արյունալի պատերազմը էլ ավելի էր բորբոքվել՝ իր ճիրանների մեջ առնելով նորանոր պետությունների ու տարբեր ժողովուրդների:

Ցարական Ռուսաստանի՝ պատերազմի մեջ մտնելու առաջին իսկ օրից զորահավաքի էին ենթարկվել նաև տեղացի հայ ժողովրդի տասնյակ հազարավոր զավակներ և ուղարկվել ռազմաճակատ: Այնպես որ, չկար մի շեն, մի տուն, մի հայ ընտանիք, որի հարազատները նույնպես չգտնվեին այդ արյունալի պատերազմի հորձանուտում: Նրանք զորահավաքի էին ենթարկվել Նիկոլայ թագավորի հրովարտակի համաձայն:

– Թող Նիկոլ թագավորի թախտը փլվեր, ու վիզն էլ հետը կոտրվեր, որ մեր զավակներին կրակների մեջ չգցեր,– խոր ատելությամբ խոսում էին ծառերի ստվերներում՝ պատերի տակ, նստած հասարակ մարդիկ՝ մեկը մյուսին պատմելով իրենց ցավն ու դարդերը:

– Թող հավիտյան անիծվեն արյունարբու թագավորներն իրենց սերունդներով, որ մեզ այս օրին չհասցնեին,– հաճախակի խոսակցության մեջ էր մտնում նաև Հարություն Եղոյանը՝ պատմելով թուրք բարբարոսների անասելի ոճրագործությունների մասին:

Ներկա գտնվելով մեծահասակների այդ կարգի հավաքներին՝ ես մեծ ուշադրությամբ լսում էի նրանց հետաքրքիր զրույցներն ու ինձ համար բոլորովին անհասկանալի նոր պատմություններ ու մտքեր, որոնց մասին անցյալում երբեք չէի լսել:

Նրանցից շատերը պատմում էին պատերազմը սանձազերծող գիշատիչ պետությունների միջև տեղի ունեցող արյունահեղ կռիվների իսկական պատճառների մասին և խորը զայրույթով անիծում նրանց՝ որպես չարագործ մարդասպանների: Հավաքվածներից շատերը մեծ հուզմունքով պատմում էին, թե ռազմաճակատ գնացած համագյուղացիներից ովքեր են զոհվել, և ովքեր՝ կենդանի մնացել, քանի ընտանիքի զավակներ խեղանդամ դարձած տուն էին վերադարձել, և ովքեր թշնամու շրջապատման մեջ ընկնելով՝ գերի էին հանձնվել: Պատմում էին

ռազմաճակատից ստացած նամակներում գրված ցավալի այլ դեպքերի մասին՝ միաժամանակ չմոռանալով հայտնել, թե ովքեր իրենց քաջագործությունների համար ինչ կարգի պարգևներ են ստացել: Այս խոսակցությունների ընթացքում ոմանք էլ ցավով հայտնում էին, թե քանի հայ ընտանիքների հողը անցած տարվանից խոպան է մնացել, քանի մարդկանց խաղողի այգիներն անթաղ մնալու հետևանքով ցրտահար են եղել, դալար մատերը՝ չորացել:

Նրանք միաժամանակ խոսում էին այն մասին, թե քանի-քանի հարուստների զավակներ կաշառքի միջոցով տանն էին մնացել, քանի չքավոր գյուղացիների խոպան մնացած հողակտորներ ու այգիներ, բռնագրավվելով պարտքի դիմաց, հարուստների սեփականություն էին դարձել:

Լսելով ունևոր դասակարգի այդ կարգի խարդախությունների մասին հասարակ մարդկանց խոսակցություններն ու դժգոհությունները՝ ես բնազդաբար մտաբերում էի Դիմ գյուղի հարուստ քուրդ Օմար աղային, թե ինչպիսի դաժանությամբ էր կեղեքում նա մեր գյուղի աշխատավոր մարդկանց իր ունեցած հազարավոր եղջերավոր անասունների թիվը կրկնապատկելու և եղած կալվածքն էլ ավելի ընդարձակվելու համար:

Հիշում էի մեր գաղթի ճանապարհին տեղացի վաշխառու առևտրականների խաբեբայական արարքները հայ գաղթականների նկատմամբ, վերջիններիս կողմից փրկված ամենավերջին ունեցվածքն էժան գներով կորզելու, ինչպես նաև Օրգովի լճափին ինձ կողոպտելու ոչ հեռու անցյալի տխուր պատմությունը:

Իսկապես փոթորիկների այդ դաժան օրերին հարուստները ոչ միայն չտուժեցին պատերազմից, այլև էլ ավելի հարստացան՝ դրանով իսկ խորացնելով աշխատավոր մարդկանց ատելությունը իրենց նկատմամբ:

Հիշեցի նաև օթևան ճարելու նպատակով մեր որոնումների թարմ պատմությունը և լրիվ համոզվեցի, որ, իսկապես, ով հարուստ էր, նա տունուտեղ ավելի շատ ուներ, բայց բոլորովին միտք չուներ հայ գաղթականներին տեղավորելու առանց շահադիտական նպատակների:

*

* *

Տեղավորվելով մեզ տրամադրված խրճիթում՝ մեր շրջապատի աշխատավոր մարդկանց շրջանում մենք ավելի շատ կարեկցողներ ունեցանք և նրանց օժանդակությամբ շուտով սկսեցինք աշխատել ու ապրել՝ հայրենի ծննդավայր վերադառնալու մեծ հույսը սրտներումս:

Բալաբեկը, իր սովորության համաձայն, երկար ժամանակ պարապ մնալ չկարողացավ: Մեր տեղավորվելու չորրորդ օրվա առավոտյան, դուրս գալով շուկայի հրապարակ, որտեղ սովորականի պես հավաքվում էին հարյուրավոր գործազուրկ հայ գաղթականներ, նա վարձվեց տեղացի մի հարուստ աղայի կողմից, որպես ցեխ շաղախող սևագործ բանվոր, իսկ հաջորդ օրերին աշխատանքի գնացինք նաև ես ու Վարդանը մեր օրվա հացը վաստակելու համար: Աշխատում էինք դառը քրտինքով օրական 16–18 ժամ՝ ստանալով ամենաչնչին աշխատավարձ, այնքան, որով կարելի էր ձեռք բերել մեր ընտանիքի օրվա միայն ցամաք հացն ու տաք կերակուր պատրաստելու համար 1–2 գրվանքա[63] ձավարից ոչ ավելի:

Աշխատանքի 5-րդ օրը՝ մեզ երեքիս տաք կերակուր բերելու ժամանակ, Աննան ինձ տեսավ քրտինքի ու ցեխի մեջ կորած, կավախառն շաղախը տրորելիս:

Տեսնելով մեզ՝ նա մի պահ կանգ առավ այգու պարսպից ոչ հեռու կուտակված հողաթմբի մոտ ու հուզմունքից սկսեց արտասվել:

Իհարկե, Բալաբեկը, կնոջ արտասուքներից խիստ ազդված, չտեսնելու տեղ դնելով, երեսը շրջեց հակառակ կողմը՝ շարունակելով իր աշխատանքը, իսկ ես, ընդհակառակը, քույրիկիս տեսնելուն պես նոր եռանդով մինչև ծնկներս մերկացած ոտքերով սկսեցի արագորեն տրորել մեծ տարածությամբ փռված կավախառը ցեխի թանձր շաղախը՝ նպատակ ունենալով ցրելու նրա դեմքին կուտակված թախիծը: Տեսնելով իմ առույգությունը՝ նա ավելի հուզվեց, բայց այս անգամ, ժպիտը երեսին, արտասվալի աչքերով մոտեցավ ինձ ու ձեռքիցս բռնելով՝ դուրս քաշեց ինձ պնդացած ցեխի շաղախից:

Նայելով նրա խոնավացած աչքերին՝ ես իսկույն հասկացա, որ նա արտասվում էր իմ՝ ուժից վեր ծանր աշխատանք կատարելու պատճառով, բայց ինքս, չտեսնելու տալով, վազեցի ու մտա ծառախիտ այգու եզրից հոսող արագավազ ջինջ առվակի մեջ՝ ցեխոտված ոտքերս լվանալու: Թույլտվություն վերցնելով մեզ վարձած հաստափոր աղայից՝ մենք չորսով նստեցինք մենածառի շվաքում և սկսեցինք ագահաբար ճաշակել Աննայի պատրաստած համեղ բորանին: Սակայն մեզ վարձող աղայի սուր հայացքը ստիպեց Բալաբեկին ժամանակից շուտ նստած տեղից վեր կենալ և վերսկսել աշխատանքը, իսկ ես ու Վարդանը հետևեցինք նրան: Այս անգամ պնդացած կավը շալակելով՝ արագ մոտեցնում էինք պարիսպ կանգնեցնող որմնադիրներին այնքան ժամա-

[63] գրվանքա – ծանրության չափ = 409,5 գրամի, ֆունտ

նակ, մինչև արևմուտքի հեռավոր հորիզոնը լրիվ կկարմրեր մայր մտնող պայծառ արևի վերջին շողերից:

*
* *

Կատարվող ֆիզիկական աշխատանքներն իմ ուժերից վեր լինելու պատճառով Աննան կտրականապես արգելեց ինձ հետագա օրերին գործի գնալ:

– Նրա սովորելու ժամանակն է, այլ ոչ թե աշխատելու,– զայրանալով ինքն իրեն խոսում էր նա՝ մեղադրելով ամուսնուն:

– Նա ինձանից էլ լավ է աշխատում,– ծիծաղելով ասեց Բալաբեկն ու ավելացրեց,– պարապ մնալը լավ բան չէ, թող աշխատի, որ մարդ դառնա ու մեզնից հետո ուրիշների հույսին չմնա:

– Քանի նրա քույրը կենդանի է, նա չպետք է աշխատի, մինչև հասուն դառնա,– կրկին խոսեց Աննան՝ ստիպելով ինձ, որ հաջորդ օրը գործի չգնամ:

– Չէ՛, պետք է գնամ,– համառեցի ես՝ շարունակելով Փառանձեմ մայրիկի տված այծի ճարպը քսել ճաքճքված ոտքերիս:

– Քրոջդ պետք է լսես, որդի՛,– միջամտեց մեր խոսակցությանը Բալաբեկի մայրը՝ Փառանձեմը, որը նույնպես խորհուրդ տվեց, որ հետագա օրերին աշխատանքի չգնամ:

Չնայած ոտքերս սաստիկ ցավում էին, համարյա թե տեղից շարժվել չէի կարողանում, այնուամենայնիվ ինձ կոտր չգցելու համար կրկին պնդում էի աշխատանքի գնալու վերաբերյալ իմ ասածը:

– Լա՛վ, լա՛վ, քնե՛ք,– առաջարկեց Բալաբեկը՝ նստած տեղից վեր կենալով:

Բալաբեկի դուրս գնալուց հետո էլ Աննան զայրացած դեռ շարունակում էր խոսել սկեսրոջ հետ, իսկ ես, օրվա ծանր աշխատանքից հոգնած, մի ակնթարթում ընկղմվեցի խորը քնի մեջ՝ մոռանալով ճաքճքած ոտքերիս ցավն ու մրմուռը:

*
* *

Աշխատանքը թողնելուց անմիջապես հետո ես սկսեցի որոնել քաղաքում ցրված իմ ընկերներին: Իհարկե, նրանց գտնելու համար առանձին դժվարությունների չհանդիպեցի, քանի որ մեր բաժանման պահին նախօրոք պայմանավորվել էինք քաղաքում մնալու դեպքում ամեն օր որոշակի ժամերի մեծ տաճարի գլխավոր մուտքից ոչ հեռու՝ ցայտաղ-

բյուրի մոտ, սպասել մեկս մյուսին: Առաջինը հանդիպեցի Սարգսին, որին տեսնելուն պես ուրախությունից գրկեցի նրան, իսկ հետագա երկու օրերին հայտնվեցին նաև քաղաքում մնացած մեր մյուս ընկերները:

Թուրք ասկյարների գերությունից փրկված 8 տղաներից և ոչ մեկին գտնել չկարողացանք, քանի որ Ոսկեհատ քույրիկի օգնությամբ նրանք դեռ անտառում եղած ժամանակ հանձնվել էին Կարմիր խաչի որբանոցներից մեկին, որի տեղն այդպես էլ չիմացանք:

Ընտելանալով քաղաքին և նրան սահմանակից գյուղերին՝ մենք շուտով սկսեցինք մեր որոնումները անհայտ կորած Մնոյին գտնելու համար: Որոնում էինք ամեն տեղ, որտեղ հնարավոր էր մուտք գործել: Է՛լ հիվանդանոց չմնաց, որ ստուգելով հարցուփորձ չանեինք, է՛լ որբանոց չեղավ, որ տակնուվրա չանեինք, բայց և այնպես նրան գտնել չկարողացանք:

Մի օր էլ վաղ առավոտյան՝ մեծ վանքի կիրակնօրյա պատարագից դուրս գալու պահին, երես առ երես հանդիպեցինք Տաճատին:

Տեսնելով մեզ՝ նա շատ ուրախացավ, որ անտառում տարածված համաճարակից փրկված՝ կրկին Մնոյին էինք որոնում, այն էլ ընկերներով:

– Երևի տեղավորվել եք քաղաքում,– հարցրեց նա ու ժպտալով սեղմեց իմ ձեռքը.

– Այո՛, եկեղեցուց ոչ հեռու՝ նեղլիկ փողոցում,– շտապեցի պատասխանել նրան:

– Լավ է, որ հանդիպեցի ձեզ, տղանե՛ր,– ասաց Տաճատը՝ ոտից գլուխ չափելով իրեն շրջապատող չորս ընկերներիս և ավելացրեց.

– Դուք իզուր Մնոյին մի՛ որոնեք, նա ինքը ժամանակին ձեզ կգտնի, իսկ այժմ հետևե՛ք ինձ՝ դպրոց գնալու,– առաջարկեց նա՝ դուրս բերելով մեզ վանքի գավիթից:

ԴՊՐՈՑՈՒՄ

Չորս ընկերներով Տաճատի ուղեկցությամբ մոտավորապես կես ժամից հետո մտանք վարդագույն աղյուսից կառուցված մեկհարկանի վարժարանի ընդարձակ բակը՝ մեզ վրա հրավիրելով դասարաններից հենց նոր դուրս եկած տղա-աղջիկների ուշադրությունը: Ըստ երևույթին Տաճատը ծանոթ էր վարժարանի ելումուտին, ուստի առանց կողմնակի մարդկանց հարցնելու՝ մի ակնթարթում քարե սանդուղքներով բարձրացավ շենքի ընդարձակ պատշգամբն ու առաջին իսկ հանդիպած դռնով ներս մտավ՝ թողնելով մեզ բակում հավաքված հետաքրքրասեր

աշակերտների շրջապատման մեջ: Մոտենալով մեր խմբին՝ աշակերտներից մեկը, որն ավելի շքեղ էր հագնված, ծաղրանքով հարցրեց.

– Հա՞յ եք, թե՞ գաղթական:

– Գաղթական ենք,– միամտորեն պատասխանեցի ես՝ աչքս չկտրելով այն դռնից, որտեղից ներս էր մտել Տաճատը:

– Ուզում եք վարժարա՞ն ընդունվել,– հեգնանքով հարցրեց նա՝ հայացքը չկտրելով արևից ճաքճքված ոտքերիցս:

– Ուզում ենք շարունակել կիսատ թողած ուսումը,– մեղմորեն պատասխանեց Սարգիսը՝ ցուցադրաբար շրջվելով մեզ հեգնող տղայից:

– Գաղթականների համար վարժարանում տեղ չկա,– խայթելով հայտարարեց նա ու սկսեց ծիծաղել:

– Վարժարանը խոմ ձերը չէ, որ տեղ չտան,– զայրացած պատասխանեցի ես՝ միաժամանակ առաջարկելով ընկերներիս հեռանալ մեզ շրջապատող աշակերտներից:

– Այո՛, մերն է, գլխավոր տեսուչը իմ մորեղբայրն է, նա վճռել է, որ ոչ մի գաղթական մեր վարժարանում տեղ չունենա,– գոռոզամտությամբ հայտարարեց նա ու թևիցս ամուր բռնելով՝ ուզեց դուրս անել դպրոցի բակից:

– Ա՛յ թե Մնոն այստեղ լիներ, էս չար տղեն մի լավ ծեծ կուտեր,– նորդուզի բարբառով ինքնիրեն արտասանեց Սարգիսը, բարկությունից բռունցքը դեմ արեց նրա կրծքին, որ համառորեն չէր ուզում պոկվել ինձանից:

Տեսնելով Սարգսի համարձակությունը՝ ես նույնպես ոգևորվեցի՝ ազատելով թևս գոռոզամիտ տղայի ձեռքից, և որքան ուժ ունեի, հրեցի նրան ու զայրացած ցույց տվեցի իմ ձեռքի՝ եղբորս որսացած մեծ արջի սուր եղունգը, որը շատ վաղուց մնացել էր գրպանումս, և որն օգտագործում էի որպես սառը զենք ինքնապաշտպանության համար:

– Տե՛ս, տե՛ս, Գրիգո՛ր, քեզ հրողը ձեր այգու պարսպի կավը շաղախող տղան է,– ասաց ուռած այտերով աշակերտներից մեկը՝ մատնացույց անելով ինձ:

– Գիտեմ, գիտեմ, նրա հայրն ու եղբայրը մշակություն են անում մեր այգում,– պարծենկոտությամբ հայտարարեց Գրիգոր անունով տղան՝ ակնարկելով Բալաբեկին ու Վարդանին, որոնք դեռ շարունակում էին աշխատել հաստափոր աղայի այգու պարսպի կառուցման վրա, որտեղ մի քանի օր առաջ քրտնաթոր կավ էի տրորում նաև ես:

Իմ ձեռքում եղած արջի սուր եղունգը տեսնելով՝ մեր հակառակորդներն ավելի զայրացած սկսեցին հավաքել իրենց համախոհներին՝

վարժարանի բակից մեզ դուրս հանելու: Ղոչիներին[64] նմանվող չար տղաները դեռ չէին սկսել իրենց հարձակումը մեզ վրա, երբ աշակերտներից մեկը, որը մինչ այդ հեռու կանգնած դիտողի դերում էր, մոտենալով մեր խմբին՝ ցածր ձայնով հարցրեց.

– Ձեզանից բացի այլ ընկերներ ունե՞ք:

– Ինչո՞ւ ես հարցնում,– հարցրի ու նայեցի նրա նիհար, բայց շատ բարի երևացող դեմքին:

– Ուզում եմ ասել, որ քիչ եք և նրանց հետ կռվել չեք կարող,– մտերմաբար պատասխանեց տղան՝ ավելի մոտենալով մեզ:

– Մենք եկել ենք վարժարան ընդունվելու, սիրելի՛ բարեկամ, այլ ոչ թե որևէ մեկի հետ կռվելու,– ասաց Հայկը, որը մինչ այդ, իր սովորության համաձայն, հանգիստ կանգնած էր և մեր վիճաբանությանը չէր մասնակցում:

– Նրանք հարուստների զավակներ են, գաղթականներին տեսնելուն պես սկսում են ձեռ առնել, իսկ հակառակվելու դեպքում ծեծի են ենթարկում,– ցածր ձայնով պատասխանեց նա՝ ճգնելով աննկատ մնալ վարժարանի բակից մեզ դուրս անել ցանկացող գոռոզամիտ տղայից:

Իսկապես, չարից հեռու մնալու մասին անծանոթ տղայի բարի խրատն իզուր չէր: Շուտով հաստափոր աղայի տղան ավելի լկտիացավ, և ինքն ու իր համախոհները սկսեցին ուժ գործադրել՝ նպատակ ունենալով մեզ հեռացնել վարժարանի բակից, սակայն նկատելով պատշգամբի աստիճաններից իջնող վայելչակազմ ու բարձրահասակ Տաճատին՝ անմիջապես շրջվեցին մոտիկ գտնվող ցանկապատի հակառակ կողմը և մի ակնթարթում անհայտացան:

*

* *

Շրջապատելով Տաճատին՝ մենք նրա ուրախ տրամադրությունից հասկացանք, որ մեզ վարժարանում ընդունելու հարցը լուծվել է դրական: Շնորհավորելով մեզ՝ նա հայտնեց, որ Ոսկեհատ քույրիկի՝ գերությունից փրկած Ավետարանը մեծ տաճարին հանձնելու պատմությունը կարևոր դեր է խաղացել մեր չորս ընկերներին վարժարան ընդունելու գործում:

Բավական էր եղել, որ Տաճատը վարժարանի գլխավոր տեսուչին ցույց տար Եզնիկ վարժապետի միջնորդությունը, մանավանդ հայ եկե-

[64] ղոչ – արու ոչխար, խոյ

ղեցու Ավետարանը թուրք բարբարոսների ճանկերից փրկելու հանգամանքները մեր տղաներին վերագրելու մասին նրա երկտող նամակը, որպեսզի վերջինս առանց որևէ առարկության համաձայնվեր մեզ ընդունել վարժարան:

Մենք Տաճատի ուղեկցությամբ, ոտից մինչև գլուխը կարմրելով, մտանք վարժարանի գլխավոր տեսուչ պարոն Բաղդասարյանի առանձնասենյակը: Աչքերից վայր բերելով արծաթագույն շրջանակով իր փայլփլուն ակնոցը՝ պարոն Բաղդասարյանը նախ հայացքի տակով զննեց մեզ և ապա խնդրեց, որ յուրաքանչյուրս պատմի իր մասին, թե մինչ գաղթելը ով որտեղ և որ դասարանում է սովորել: Լսելով մեր կցկտուր պատասխանները՝ նա հարևան սենյակից կանչեց ուսուցիչներից մեկին, որի հետ սկսեցին թեթևակի հարցեր տալ մեզ: Չնայած մենք լարված լսում էինք նրանց, բայց անկեղծորեն ասած տրված հարցերից և ոչ մեկին ճիշտ պատասխանել չկարողացանք: Օրորելով իր ճաղատ գլուխը՝ այնուամենայնիվ վարժարանի գլխավոր տեսուչ պարոն Բաղդասարյանը հայտնեց Տաճատին՝ եզնիկ վարդապետի խնդրանքը կկատարվի, և տղաները կարող են վաղվանից մասնակցել դասերին:

Ահավոր կոտորածներից և հիվանդություններից փրկված հայ պատանիներս, ընդունվելով վարժարան, միմյանցից մշտապես անբաժան, այս անգամ նույնպես գտնվում էինք միևնույն դասարանում՝ կողք կողքի նստած:

Մենք այնքան էինք տարվել դասերով, որ ամբողջապես մոռացության էինք տվել վարժարանի բակ մտնելու առաջին օրը մեր նկատմամբ դրսևորված ծաղրն ու վիրավորանքը տեղացի առանձին աշակերտների կողմից: Մենք արդեն ընտելացել էինք պայմաններին, վարժարանի շրջապատին, նամանավանդ մեր նոր դասարանի աշակերտներին, որոնց մեծ մասը հասարակ մարդկանց զավակներ էին: Կարճ ժամանակամիջոցում մենք արդեն աչքի էինք ընկել ոչ միայն ուսման մեջ, այլև մեր կարգապահությամբ ու ընկերասիրությամբ:

Գաղթելով այստեղ՝ մենք ապրում էինք շատ մոտիկ՝ միևնույն թաղամասում, սովորելու ընթացքում օգնում էինք մեկս մյուսին, միայն շատ էինք ափսոսում, որ կորցրել էինք մեր խմբի ղեկավար Մնոյին: Չնայած մեզ շրջապատող մարդկանց դեռ անծանոթ խոսակցական բարբառին՝ այնուամենայնիվ վարժարան ընդունվելու առաջին իսկ օրվանից շրջապատը դարձավ մեզ համար մի հարազատ միջավայր, ինչպիսինն էր մեր հայրենի գյուղի նախկին մեծ խրճիթն իր բոլոր բնակիչներով:

Մենք մեծ պարտաճանաչությամբ կատարում էինք ուսուցիչների տված հանձնարարությունները: Գիտակցորեն սովորում էինք շատ լարված՝ նպատակ ունենալով հագեցնելու ուսման այն ծարավը, որը միշտ կարոտով երազում էինք իրականացնել դեռ հայրենի գյուղում:

Ինքս նույնպես սովորում էի ջանասիրաբար, բայց այդ երջանիկ պահերը երկար չտևեցին. շատ շուտով նյութական ծանր պայմանները ստիպեցին ինձ հաջորդ տարվանից նորից աշխատել՝ չկտրվելով, սակայն, դպրոցից: Շատ դժվար էր համատեղել աշխատանքն ուսման հետ, սակայն ուրիշ ելք չկար. կարիքը ստիպում էր դեռ փոքր հասակից վարձվել տեղացի հայ ունևոր մարդկանց կողմից և կատարել ինձ համար միանգամայն անսովոր ամեն տեսակ ծանր, շատ հաճախ էլ սև աշխատանք:

Վարձվելու առաջին օրերին ստանում էի ամենաչնչին աշխատավարձ՝ օրական 15-20 կոպեկից ոչ ավելի, իսկ որոշ դեպքերում էլ օգնում էի Բալաբեկին առանց վարձատրության՝ ի օգուտ գործատերերի: Մի խոսքով, ամեն օր աշխատանք, և այդպես շարունակ:

Չնայած ծանր էր սովորել և աշխատել միաժամանակ, սակայն երեկոյան, երբ բոլորս հավաքվում էինք մեկ հարկի տակ օրվա ձեռք բերված համեստ վաստակով, ամենքս էլ գոհ էինք և ուրախ, որ այդ գիշեր ևս քաղցած չենք մտնի անկողին:

Բայց հազիվ էինք հունի մեջ ընկել, երբ գարնանային մի առավոտ՝ աշխատանք գտնելու համար շուկայի մեծ հրապարակը գնալիս, Բալաբեկի ու Հարություն Եղոյանի հետ ընկանք ցարական ոստիկանների շուրջկալի մեջ, և շատ ուրիշների հետ մեզ տարան մոտակա երկաթուղային կայարանը՝ էրզրումի ռազմական ճանապարհաշինարարության վրա աշխատանք կատարելու: Ըստ երևույթին այդպես էր կարգը. ցարական ոստիկանները, առանց մարդկանց ցանկության, բռնի ուղարկում էին հարկադիր աշխատանքի, այն էլ ընտանիքից կտրված, հեռավոր երկրամասերում: Որպես անչափահասի՝ ինձ հետ ուղարկեցին, իսկ մյուսներին նույն գիշեր զինվորների հսկողության ներքո ճանապարհ դրին:

Իրենց կանանց ու երեխաներին անօգնական չթողնելու նպատակով Բալաբեկն ու Հարությունը հարկադրված էին փախուստի դիմել: Այն ժամանակ, երբ մարդկանցով լի ապրանքատար գնացքն իր ուժեղ ընթացքով սուրում էր դեպի էրզրում, նրանք, դեռ Կարս քաղաք չհասած, վտանգելով սեփական անձը, վագոններից իրենց վայր էին նետել, ստանալով մարմնական լուրջ վնասվածքներ: Ուշքի եկած փախստականները, թաքնվելով կայարանամերձ մարգագետինների մեջ, փախուստի միայն վեցերորդ օրվա կեսգիշերին բարի մարդկանց օգնու-

թյամբ իրենց ջարդված մարմիններով տուն վերադարձան: Երկար օրեր թաքնվելով ու բուժվելով՝ Բալաբեկն ու Հարությունը Եղոյանը նորից սկսեցին աշխատել, սակայն երկրորդ անգամ արդեն նույն ոստիկանների շուրջկալից ազատվել չկարողացան: Այս անգամ նրանք մի շարք մարդկանց հետ, որոնք մեծ մասամբ գաղթականներ էին, ցարական զինվորների խիստ հսկողության ներքո՝ էտապով ուղարկվեցին Էրզրումի ռազմաճակատ՝ ցարական Ռուսաստանի համար երկարատև սև աշխատանք կատարելու:

Անչափ ծանր էր մեկ տասնյակից ավելի կանանց ու անչափահաս որբ երեխաներին խնամել, այն էլ օտարության մեջ, կողոպտիչ դաժան պատերազմի ժամանակաշրջանում, առանց որևէ ապրուստի միջոց ունենալու: Այսուհանդերձ, անցան օրեր, ամիսներ և վերջապես 1917թ. փետրվարի վերջերին, նրանք տուն վերադարձան՝ այս անգամ հայրենի ծննդավայրը վերադառնալու ուրախալի լուրերով ու մեծ հույսերով:

Այդ օրերին մեր բոլորի տրամադրությունն արագորեն փոխվեց խինդ ու ծիծաղի: Երկու «աքսորյալները», Էրզրումի ռազմական ճանապարհաշինարարության վրա սև աշխատանք կատարելով, որոշ գումար էին վաստակել, որով ձեռք բերվեց ոչ միայն օրվա սնունդ, այլև մեր ցնցոտիների փոխարեն նոր հագուստ ու կոշիկներ:

Առանձնապես մենք՝ պատանիներս, ինչպես դպրոցում, այնպես էլ նրանից դուրս, մեծ խանդավառության մեջ էինք:

Գարնանային գեղեցիկ օր էր. առաջին անգամ մեր վարժարանի ողջ աշակերտությունը խիտ շարքերով դուրս եկավ փողոց՝ երգելով հայրենասիրական երգեր, որոնք մեծամասամբ նվիրված էին հայ զորավար Անդրանիկին: Այդ օրերին շատերն էին երգում, ուրախանում, հատկապես հասարակ մարդիկ, շարքային զինվորները, բայց թե որն էր պատճառը, ես սկզբից չէի հասկանում, մինչև օր դասամիջոցին մեր երգեցողության երիտասարդ ուսուցիչը, որին մենք՝ աշակերտներս, շատ էինք սիրում, հայտնեց, թե հեղափոխություն է կատարվել, իսկ ժողովուրդը տապալել է ցարական կառավարությանը: Չնայած մեզնից շատերը կատարված հեղափոխության մասին գաղափար կազմել չէին կարող, բայցևայնպես լսելով Նիկոլայ թագավորի գահընկեցության մասին լուրը՝ շատ սրտաբուխ երեք անգամ *ուռա* կանչեցինք:

Այդ օրերին առանձնապես շատ ուրախ էր մեր երիտասարդ ուսուցիչը. ուրախ էինք նաև մենք բոլորս: Այս ուրախ օրերին ես այնքան էի տարվել երգելով, որ ձայնս համարյա թե կտրվել էր: Ինչպես դպրոցում, այնպես էլ նրանից դուրս, սովորելով բերանացի էի արել զորավար Անդ-

ռանիկին նվիրված համարյա բոլոր երգերը: Այդ օրերին երգում էի այնպիսի ոգևորությամբ, որ զարմացնում էի անգամ մեր հարևաններին: Սովորական երգերի հետ երգում էինք նաև այլ երգեր, որոնք շատ անսովոր և տարօրինակ էին թվում բոլորին. սովորել և երգում էինք Նիկոլայ թագավորի կնոջ ու Ռասպուտինի վերաբերյալ հորինված հետևյալ երգը՝

Ասեղ մատնոցով,
Ոսկե թելերով,
Ռասպուտինի շապիկը
Նկարի Նիկոլի կնիկը:

Շատ ծիծաղելի էր, բայց երգում էինք մեծ եռանդով, երգում էինք ամեն օր ու ամեն տեղ՝ ուրախություն պատճառելով մեզ շրջապատող մեծ թվով մարդկանց: Այդ օրերին մեր ուսուցչի օգնությամբ սովորեցինք նաև այլ երգեր, որոնք այն ժամանակ արգելված էին համարվում, բայց մենք՝ պատանիներս, անարգել երգում էինք: Մենք ուրախանում էինք, իսկ Բալաբեկն ու Հարությունը անհամբեր սպասում էին նոր լուրերի:

Վերջապես հայրենի ծննդավայր վերադառնալու ուրախալի լուրեր ստացվեցին: Չնայած այդ առիթով որոշ չափով տխրեցի, որովհետև կտրվելու էի իմ սիրած դպրոցից, բայց միաժամանակ հրճվանքի մեջ էի. պատրաստվում էի հայրենի ծննդավայր վերադառնալ՝ չկասկածելով որևէ արգելքի մասին, ուրախությունից թռչկոտում էի դեսուդեն, գրկախառնվում ընկերներիս հետ, երգելով խլացնում ամենքին:

Սակայն այդ ժամանակ, երբ մեր փոքրաթիվ քարավանը նախապատրաստվում էր հաջորդ առավոտ ճանապարհ ընկնել, Աննան անսպասելիորեն առաջարկեց ամուսնուն ինձ ու սկեսրոջը ժամանակավորապես թողնել տեղում դպրոցից չկտրվելու համար: Ըստ երևույթին Փառանձեմ մայրիկը տեղյակ էր տղայի ու հարսի մտադրությանը, սակայն նա նույնպես, խորամանկորեն լռություն պահպանելով, չէր ուզել վաղօրոք որևէ խոսք ասել այդ մասին: Ասենք, կապկպված իրերից էլ երևում էր, որ նրանք այդ որոշումը վաղուց էին կայացրել, որին տեղյակ էին Վարդանն ու Փառանձեմ մայրիկը, բայց իմ ուրախությունը տրտմության չփոխարինելու նպատակով ոչ մի խոսք որևէ մեկին չէին հայտնել: Իմանալով քրոջս առաջարկի մասին՝ ջղաձգորեն սկսեցի ընդդիմանալ, բայց ամեն անգամվա պես իմ համառությունը առաջ տանել չկարողացա: Այնպես որ, հակառակ իմ առաջարկություններին, նրանք ուղղակի ստիպեցին ինձ մնալ Փառանձեմ մայրիկի մոտ՝ խոստանալով հաջորդ

տարվա սկզբներին մեզ նույնպես տանել՝ հավատացնելով, թե այդ ժամանակամիջոցում հայրենի երկրում դպրոցներ կբացվեն, և ես հնարավորություն կունենամ շարունակել ուսումս:

Ժամանակ այլևս չկար. վերջապես մեծ հուզմունքով ու արտասվալի աչքերով այդ օրվա լուսաբացին, երբ նոր էին հնչում մեծ վանքի բազմաթիվ զանգերի բարձր ղողանջները, մենք բաժանվեցինք միմյանցից, իսկ շատ-շատերն՝ ընդմիշտ:

*
* *

Չափազանց կարճ տևեցին մեր մեջ եղած ուրախալի նամակագրություններն և հուսադրումները: Շարունակվող ահավոր պատերազմն էլ ավելի էր բորբոքվել:

Վասպուրականի հինավուրց Վան քաղաքը՝ որպես մի խաղալիք, մշտապես ձեռքից ձեռք էր անցնում, և հենց այդ պահից էլ դադարեց մեր նամակագրությունը նրանց հետ: Ռազմաճակատից վերադարձած զինվորների միջոցով շուտով ստույգ տեղեկություններ ստացվեցին ռուսական զորքերի նահանջի մասին, իսկ մեր հարազատները կրկին սպանդի մեջ չընկնելու նպատակով կյանքի ու մահվան գնով ճեղքել էին թշնամու գերազանց զորքերի սեղմ օղակը և անընդհատ կռվելով՝ նահանջել էին դեպի պարսկական սահման: Նրանց ճակատագրի մասին այլևս ոչ մի տեղեկություն չունեցանք:

Տեղի ունեցած երկրորդ գաղթից հետո շուտով վրա հասան սով ու համաճարակային հիվանդություններ, որի հետևանքով մի զարհուրելի գիշեր մահացավ հարազատ որդուց և թոռներից կարոտ մնացած իմ միակ պաշտպան Փառանձեմ մայրիկը:

Լուսաբացին ծանոթներից որևէ մեկին լուր տանելու համար դուրս եկա անմարդաբնակ խրճիթից, բայց վերադառնալիս ես այլևս նրա անշնչացած մարմինը չտեսա: Փողոցներից մարդկային դիակներ հավաքողներն իրենց սայլակներով նրան տարել էին դեպի մեծ անտառից այն կողմ՝ հեռավոր ղռեր, որտեղ սովորաբար հողին էին հանձնում մահացած հարյուրավոր հայ գաղթականների աճյունները:

Թե որքան ծանր էր Փառանձեմ մայրիկի անդառնալի կորուստը ինձ համար, չեմ կարող պատմել, սակայն դա ցույց է տալիս իմ կյանքի հետագա դառնագին օրերի համառոտ նկարագրությունը:

Չնայած որբ էի մնացել դեռ եղեռնի ահավոր օրերից, բայց այս անգամ որբ էի բառիս լայն իմաստով: Եթե մինչ այդ Փառանձեմ մայրիկի

դառը քրտինքով վաստակած մի կտոր չոր հացով ապրում էի անխռով, ապա նրա մահից հետո մնացել էի մենակ, այն էլ կիսաքաղց:

Հարկավոր էր աշխատել, առանց որի ապրել և գոյատևել անհնարին էր: Այլևս չկար Բալաբեկի հետ կատարվող մեր նախկին համաձայնեցված աշխատանքը, որպեսզի մի կտոր հաց վաստակելու համար քրտինք թափեի: Ճիշտ կլիներ ասել, որ անչափահաս լինելուս համար որևէ մեկը չէր ցանկանում ինձ վարձել, թեկուզ քիչ վարձատրությամբ:

ՈՐԲԱՆՈՑՈՒՄ

Վարժարան էի հաճախում սարսափելի ընկճված, հաճախ էլ՝ ամբողջովին քաղցած:

Ապրուստի միջոց վաստակելու նպատակով ամեն օր՝ լույսը բացվելուն պես, թափառում էի դեսուդեն, բայց նպատակիս չհասած՝ հուսախաբ տուն էի վերադառնում: Այսպես կարող էր երկար շարունակվել, եթե մի օր էլ իմ զբաղեցրած մեծ ցախատան նմանվող գոմը տանտիրոջ կողմից չառաջարկվեր դատարկել և այն մաքրել հանգուցյալ Փառանձեմ մայրիկին պատկանող ավելորդ իրերից:

Տանտիրոջ առաջարկության դեմ առարկել չէի կարող, որովհետև գանգատ լսող չկար, ուստի ստիպված էի ազատել այն ու թափառաշրջիկի պես թրև գալ այստեղ-այնտեղ…

Բայց ահա օրերից մի օր, խիստ տենդի մեջ, աչքերս բացվեցին, և ես ինձ տեսա դալկահար որբ երեխաներով շրջապատված որբանոցի մեծ ննջարանի չոր հատակին պառկած, առանց խնամքի:

Չգիտեմ՝ քանի օր էր անցել, բայց դեռ տենդի մեջ զառանցելով՝ կանչում էի մահացած մայրիկիս, սակայն չլսելով որևէ մեկին՝ սկսում էի դառնորեն հեկեկալ: Վերջապես ծանրացած մարմնով տեղից շարժվեցի և մի գեր մայրապետի օգնությամբ ոտքի կանգնելով՝ վերջինիս ուղեկցությամբ դանդաղ քայլերով մտա որբերով լի ճաշարանն ու շատ դժվարությամբ ճաշակեցի այդ օրվա՝ ինձ հասանելիք կորեկից եփած ջրալի վռիկը:

Ճաշարան կոչվածում այնպիսի մի ժխոր էր ու իրարանցում, որ անհնարին էր միանգամից հեշտությամբ ստանալ մեզ հասանելիք օրվա սննդաբաժինը առանց որևէ ազդեցիկ մարդու օգնության: Փայտյա երկար սեղանին դրված ճաշը ամենից շուտ հափշտակելով՝ հաղթում էր

նա, ով ուժեղ էր կամ ճարպիկ, իսկ թույլերը շատ դեպքերում մնում էին կիսաքաղց: Լավ էր, որ մայրապետի աջակցությամբ ստացա օրվա սնունդը, թե չէ առաջիկա գիշերը կրկին քաղցած պետք է զառանցեի: Չնայած արդեն կուշտ էի, բայց ճաշարանից հեռացա տրտմությամբ՝ երանի տալով անցած օրերին: Բաժանվելով մայրապետից՝ ես, ինձ վատ զգալով, նորից պառկեցի ննջարանի չոր հատակին մինչև հաջորդ առավոտ:

Օ՜, որքան տխրալի էր դալկահար որբ մանուկների կյանքը այդ օրերին. բարեբախտաբար, իմ առողջ կազմվածքի շնորհիվ ես շատ շուտով կազդուրվեցի և ինքնուրույն մտնում էի ճաշարան ու առանց որևէ մեկի օգնության ստանում այն չնչին սնունդը, որին տիրանալը այնքան էլ հեշտ չէր ինձ համար: Չնայած ճարպիկ էի աշխատանքի և խաղերի մեջ, բայց ուտելու հարցում՝ ամաչկոտ ու դանդաղ, որի համար էլ շատ դեպքերում քնում էի կիսաքաղց:

Ինչևիցե, լավ էր թե վատ, անցնում էին տխրալի օրեր, շաբաթներ, սակայն ոչ մի կերպ չէի կարողանում ընտելանալ ու հաշտվել որբանոցի կյանքին, նրա միջավայրին, որի մեջ ընկել էի պատահաբար, առանց իմ կամքի և ցանկության:

Չընտելանալով ինձ շրջապատող միջավայրին՝ շուտով սկսեցի միտքս փոխել և հարմար առիթ էի որոնում՝ որբանոցից փախչելու: Իհարկե, կարելի էր փախչել թեկուզ օրը ցերեկով, բայց գիտակցորեն մտածում էի հետևանքների մասին, թե ինչ կլիներ իմ վերջը հետագայում: Չէ՞ որ ո՛չ տեղ ունեի գնալու և ո՛չ էլ ապրուստի որևէ միջոց, առանց որի կարող էի սովամահ լինել, այն էլ չվերջացող ատելի պատերազմի պայմաններում, որն արագորեն մոտենում էր բուն Հայաստանին:

Հաճախ տարբեր պատրվակներով ծպտված դուրս էի գալիս որբանոցից՝ թրև գալով դեսուդեն: Շրջում էի ամեն տեղ, որտեղ հնարավոր էր մուտք գործել, միայն աշխատում էի, որ որբանոցի կառավարչի կողմից նշանակված մարդկանց ձեռքը չընկնեմ: Թափառում էի փողոցներում, անգամ ամենահեռու այգիներում, մարգագետիններում, ամաչկոտությամբ հարցուփորձ անում ամենքին՝ նպատակ ունենալով որևէ գործ գտնել, ապրուստի համար հանրօգուտ աշխատանք կատարել, միայն թե որբանոցից դուրս փախչեի:

Լինելով դրսում՝ ես հաճախ զրույցի էի բռնվում զբոսայգիներում, շուկայի հրապարակներում ցայտաղբյուրի սառը ջուր, թերթեր վաճառողների, ինչպես նաև հոգևորականների մոտ ծառայության մտած իմ հասակակից տղաների հետ, որոնցից շատերին բախտակից էի համարում:

Այդ խոսակցությունների ժամանակ նրանցից մեկը, որն իմ դասընկերներից էր, առաջարկեց ինձ ծառայության մտնել հոգևորականներից մեկի մոտ, որին նա Գյուտ վարդապետ անվանեց: Իհարկե, սկզբում չհամաձայնեցի, բայց հետո հետևեցի նրան: Նա ինձ ուղեկցեց վանքի մեծ գավթում եղած խցերից մեկը:

Մտնելով ինձ ուղեկցող տղայի փոքրիկ խոհանոցը՝ նա մտերմաբար առաջարկեց նստել և հետո հյուրասիրեց ձկան համեղ մսով, որը վերջին երեք տարվա ընթացքում ոչ միայն չէի ճաշակել, այլև երազում անգամ չէի տեսել: Քիչ սպասելուց հետո, ըստ երևույթին ինձ զարմացնելու նպատակով, տղան տանու մարդու պես հարևան սենյակի դուռը բացելով, համարձակորեն ներս մտավ:

Երբ բացվեց սենյակի դուռը, մի պահ խունկի անուշահոտ բուրմունքը մեկ ակնթարթում թափանցելով տարածվեց շենքի ընդարձակ միջանցքում և այն փոքրիկ խոհանոցում, որտեղ նստել էի: Չնայած հաճելի էր շնչել ներսից դուրս թափանցող խունկի հոտն ու բուրմունքը, բայց ինձ թվում էր, թե ես ասեղների վրա եմ նստած, մանավանդ այդ խորհրդավոր և օտար միջավայրում, որտեղ գտնվում էի ընդամենը տասը րոպեից ոչ ավելի: Մի պահ ուզեցի առանց տղային տեսնելու շտապ հեռանալ, ուղղակի փախչել, քանի դեռ ինձ չէին համոզել մնալ բերդանման և արտաքին աշխարհից կտրված հոգևորականների այդ նեղ խցում: Ճիգերի մեծ լարումով քիչ էլ մնացի՝ շարունակելով ագահաբար հագեցնել իմ քաղցը տապակած ձկան համեղ մսով:

Չսպասելով տղայի վերադարձին՝ մի պահ նստած տեղիցս վեր կացա, որ դուրս փախչեմ, սակայն հենց այն պահին էլ բացվեց դեղին վարագույրով ծածկված դիմացի մեծ դուռը, որտեղից դուրս եկավ ինքը՝ Գյուտ վարդապետը: Դեռ մի տարի առաջ հեռվից տեսել էի նրան մեծ վանքի պատարագից դուրս գալու պահին, մոտավորապես հիշում էի նաև նրա դիմագծերը. նա բարձրահասակ և փարթամ մի հոգևորական էր՝ կարճ ու սև մորուքով: Ասում էին, թե նա ցարական բանակի նախկին սպաներից մեկն է եղել, իսկ պատերազմի սկզբներին, ռազմաճակատից վերադառնալով էջմիածին, չգիտես ինչու ձեռնադրվել էր վարդապետ: Հենց այդ անձնավորության մոտ էլ ինձ հյուրասիրող տղան խորհուրդ էր տալիս ծառայել: Կանգնելով դրսից թափանցող լույսի շողքից լուսավորված խոհանոցի դռան շեմքին՝ վարդապետը, հարևանցիորեն ոտքից գլուխ զննելով ինձ, սկսեց մատներով սանրել իր թուխ մորուքը և մի արհամարհական հայացք գցելով վրաս ու առանց որևէ խոսք փոխանակելու՝ շրջվեց. ըստ երևույթին ես նրան

դուր չեկա: Վարդապետը մռայլ դեմք ընդունեց ու գլխի նշանով հասկացրեց կողքի կանգնած տղային, որ անմիջապես հեռանամ:

Մոխրագույն, բայց շքեղ սքեմ հագած Գյուտ վարդապետի հեռանալուց հետո դասընկերս անհարմար վիճակում էր, իսկ ես առավել հուզված էի և ընկճված, պատրաստվում էի թակարդի մեջ ընկած որսի պես թպրտալով դուրս փախչել:

– Մի՛ մտածիր, գուցե հաջողվի ուրիշի մոտ...,– ցանկացավ համոզել ինձ տղան:

–Չէ՛, չէ՛, մշակություն կանեմ ցանկացած գյուղացու մոտ, բայց վարդապետի ծառա չեմ դառնա,– նույն տոնով պատասխանեցի ես նրան:

Իսկապես, բարի ընկերս շատ էր ցանկանում օգնած լինել ինձ, բայց իր նպատակին չհասավ. վերջիվերջո, Գյուտ վարդապետի կարգադրությունը կատարելու նպատակով տարբեր ձևերով հասկացրեց, որ խցից հեռանամ:

Չնայած վարդապետի մռայլ հայացքից ու նրա արհամարհական վերաբերմունքից ես ինձ վիրավորված զգացի, սակայն շատ ուրախ էի, որ նրա մոտ ծառա մտնելու գործը խափանվեց, ուստի առանց շնորհակալական որևէ խոսք ասելու տղային, համարյա թե վազելով՝ դուրս փախա այնտեղից:

Դուրս գալով վանքի գավիթից՝ դեռ օրը ցերեկով չուզեցի որբանոց վերադառնալ, մանավանդ այդպես հուզված վիճակում: Մի պահ կանգ առա ճեմարանի մեծ բակում՝ նպատակ ունենալով հարցումների միջոցով իմանալ իմ վաղեմի ծանոթ Տաճատի մասին, որին չէի տեսել երկար ժամանակ: Այդ օրերին, երբ ես ազատ ապրելու ելք էի որոնում, նախկին ընկերներիս, նամանավանդ Տաճատի օգնության խիստ կարիքն էի զգում: Խորհելով այդ մասին՝ համարձակ մտա ճեմարան և առանց որևէ դժվարության Տաճատի նախկին ընկերներից իմացա, որ դեռ մի տարի առաջ նա՝ որպես կամավոր, մեկնել է ռազմաճակատ: Բայց միայն այդքանը:

Լսելով ռազմաճակատ կամավոր մեկնելու մասին ինձ շրջապատող աշակերտների խոսակցությունները՝ մի պահ միտքս փոխեցի ու զգաստացա: Չէ՞ որ կարող էի ինքս էլ՝ որպես կամավոր, ռազմաճակատ գնալ թեկուզ անչափահաս. գիտեի կրակել, այն էլ անվրեպ, ձիու վրա նստում էի շատ ազատ՝ առանց որևէ մեկի օգնության, մի խոսքով, ես իմ ուժերի վրա վստահ էի. միայն հարկավոր էր որևէ մեկի միջնորդությունը կամ բարի խորհուրդը, և ես իմ նպատակին հասած կլինեի: Մտածում էի՝ ով

կարող էր լավ խորհուրդ տալ և օգնել ինձ. իհարկե իմ ընկերները, ծանոթներն ու համագյուղացիները, եթե միայն նրանք կենդանի լինեին: Դժբախտաբար նրանցից շատերը վաղուց չկային: Մեր խմբի ղեկավար Մնոն, որն ամենից հավատարիմ ու ընկերասերն էր, երկու տարի առաջ անհայտացավ. նրա հետքն անգամ չէի գտնում: Ատոմը, Նիկոլն ու Արբակը զոհ էին գնացել բռնկված համաճարակին: Համագյուղացիների մի զգալի մասը մեկնել էր հայրենի ծննդավայր, իսկ մյուսները ցրվելով ապաստան էին գտել հեռավոր գավառներում, որոնց տեղի ու գոյության մասին որևէ տեղեկություն չունեի: Ծանոթներիցս ամենաճարպիկը Ոսկեհատ քույրիկն էր, բայց դժբախտաբար նա նույնպես չկար:

Կենդանի էին մնացել միայն Սարգիս և Տիգրան եղբայրները, որոնց դիմել չէի ցանկանում՝ ինքնասիրությունից դրդված, քանի որ նրանց մոր՝ Սանամի ուղղակի միջամտությամբ ես հիվանդ վիճակում ընկել էի որբանոց և եթե այնտեղ էլ մնայի, ապա միևնույնն էր, որևէ օգնություն ստանալ չէի կարող:

Հաջորդ օրը խռովագին մտքերով նորից թափառեցի քաղաքով մեկ, բայց այս անգամ վճռական, որպես կամավոր ռազմաճակատ գնալու մտադրությամբ:

Լուսաբացից մինչ ուշ երեկո տարբեր տեղեր գնացի, բազմաթիվ մարդկանց հանդիպեցի, անգամ զինվորականներին դիմեցի, բայց դժբախտաբար որևէ արդյունքի հասնել չկարողացա: Առանձնապես այդ օրը հարցումների մեջ համարձակ էի, սակայն ամոթ և շատ վիրավորական էր ինձ համար, երբ կամավոր գնալու համար որևէ մեկին լուրջ խնդրանքով դիմելիս ծաղր ու հեգնանքից բացի այլ պատասխան չէի ստանում:

Իհարկե, ես հասկանում էի, որ նրանք ծաղրում էին ինձ իմ մտադրության, առանձնապես նորդուզցու խոսակցական կոշտ բարբառի համար, իսկ ես, ամոթից կարմրած, թողնում էի նրանց ու հեռանում՝ նպատակիս դարձյալ չհասած:

*
* *

Թափառելով դեսուդեն՝ օրվա կեսին շուկայում հանդիպեցի Սարգսի փոքր եղբայր Տիգրանին, որից ճշգրիտ իմացա նրանց ծանր վիճակի մասին: Ավելի քան մեկ ամիս հիվանդ պառկած էր Սարգիսը, քաղցած վիճակում էին նաև նրա մայրը և ամենափոքր եղբայրը: Նրանք չունեին ոչ միայն օրվա սնունդ, այլև ցրտից պատսպարվելու համար գիշերվա անկողին: Մեր հուզումնալից զրույցից պարզվեց, որ երկու օր առաջ

պատահական հրդեհի հետևանքով այրվել և մոխիր էին դարձել նրանց անկողինները ու մնացած ցնցոտիները: Իմանալով այդ մասին՝ ես մինչև հոգուս խորքը հուզվեցի՝ մտածելով, թե ինչով կարող եմ օգնած լինել ընկերոջս այդ ծանր վիճակից դուրս բերելու համար:

– Ինչո՞ւ ես եկել շուկա,– տխրությամբ հարցրի ես՝ փաղաքշելով նրա գանգուր սև մազերը:

– Մայրիկիս վզի արծաթե խաչը բերել եմ ծախելու, որ Սարգսի համար բարձի երես գնեմ,– պատասխանեց Տիգրանը՝ հետաքրքրությամբ նայելով շուկայի բաց խանութներին:

– Ե՛կ միասին շրջենք, գուցե ծախենք հարուստներին,– առաջարկեցի ես՝ արծաթե խաչը ցույց տալով հրապարակում թափառող մարդկանց:

Մոտավորապես երկու ժամից ավելի թափառեցինք շուկայի հրապարակում, բայց խաչը ծախել կամ կտավով փոխանակել չկարողացանք:

Ընկերոջս օգնելու նպատակով այդ օրը ստիպված էի որբանոց չգնալ, չնայած քաջ գիտեի, որ քաղցած մնալուց բացի, կարող էի նույնիսկ խիստ պատժվել:

Ուշ էր արդեն, բայց և այնպես, որոշեցինք միասին գնալ բամբակազտիչ արհեստանոց՝ ձրի աշխատելու, գուցե վերջինիս տերը մեզ թույլ տար բակում թափված բամբակները հավաքել հիվանդ ընկերոջս բարձի համար: Գնում էինք վախվխելով ու չգիտես ինչու համոզված, որ արհեստանոցի տերը կմերժեր մեր խնդրանքը, չնայած մեր ուզածը միայն արհեստանոցի շրջապատում թափված, այն էլ գործածության համար ոչ պիտանի բամբակի մնացորդներն էին: Բարեբախտաբար, արհեստանոցի տերը բացակայում էր. չկային նաև խանգարող կողմնակի մարդիկ, ուստի առանց հապաղելու սկսեցինք արագորեն հավաքել փողոցի առվակների մեջ թափթփված բամբակի մնացուկները:

Արևը դեռ մայր չէր մտել, իսկ մենք շտապում էինք շուտ հեռանալ, քանի չէր երևացել արհեստանոցի տերը: Մեր հավաքած բամբակն էլ բավական էր մեկ բարձ պատրաստելու համար: Վերջացնելով մեր գործը՝ հավաքած բամբակը պահեցինք մոտակա աղբանոցում և կրկին վերադարձանք շուկա՝ դարձյալ փորձելու մեր արծաթյա խաչը կտավով փոխանակել, սակայն ոչինչ չստացվեց: Դուրս գալով խառնիճաղանջ ամբոխի միջից՝ մենք գնում էինք դեպի վանքապատկան մեծ անտառ՝ հայացքներս չկտրելով փողոցի երկու կողմի շենքերից: Շրջապատը երկուսիս էլ ծանոթ էր. ճեմարանի դեմ դիմաց եղած երկհարկանի շենքերից մեկը դաշնակցականների տունն էր՝ նրանց հավաքատեղին, հակա-

ռակ կողմում՝ ամերիկյան հյուպատոսարանի շենքը, որի վրա մշտապես ծածանվում էր զոլավոր մեծ դրոշակ: «Այդ երկու շենքերի վրա ծածանվող դրոշները ոչ միայն բարձի երես, այլև վերմակ պատրաստելու համար շատ հարմար կտորներ են», – մտածում էի ես:

– Ա՛յ թե միայն մի դրոշակի չափով կտավ ունենայինք, ապա այս գիշեր Սարգիսը իր գլուխը հատակին չէր դնի,– ասացի ես՝ դիմելով Տիգրանին:

– Եթե դրոշակը բարձին հարմար է, ապա այս գիշեր ես այն տուն կտանեմ, – պատասխանեց Տիգրանը:

– Ինչպե՞ս, – հարցրի ես զարմացած:

– Ես շատ անգամ եմ բարձրացել վեհարանի տանիքը, հետապնդել աղավնիներին, եթե ուզենայի, կարող էի դրոշն իր կոթով ցած բերել, – պատասխանեց Տիգրանը աշխուժացած:

– Այդ դեպքում մութն ընկնելուց հետո երկուսով կբարձրանանք ամերիկյան հյուպատոսարանի շենքի տանիքը և դրոշակը վար կբերենք,– առաջարկեցի ես՝ Տիգրանի հետ կազմելով մեր գործողության ծրագիրը:

Լսելով զանգակների ղողանջները՝ մենք հրաժարվեցինք անտառ գնալուց և կես ճանապարհից հետ վերադառնալով՝ մտանք վանքի մեծ գավիթը՝ երեկոյան պատարագին մասնակցելու:

Նախքան վանքը մտնելը Տիգրանի մոտ եղած արծաթյա խաչը նվիրեցինք ժամհարին՝ նրանից վերցնելով տասը բարակ մոմ՝ պատարագին մեր զոհված ծնողների հոգու հանգստության համար վառելու:

Չնայած ժամերգությունը դեռ նոր էր սկսվել, բայց չսպասելով նրա ավարտին՝ մենք հապճեպ դուրս եկանք վանքից: Նախ մի պտույտ կատարեցինք մեծ լճի շուրջը և ապա երեկոյան մթնաշաղին մտանք նորակառույց վեհարանի շենքի մեծ բակը, որն այն ժամանակ զբաղեցնում էր ամերիկյան հյուպատոսը իր աշխատակիցներով: Հետազոտելով շենքի չորս կողմը՝ վերջապես հակառակ կողմից անձրևաջրերի խողովակի օգնությամբ ճարպիկ Տիգրանը բարձրացավ դեպի վեր և առաջին հարկի լուսամուտներից մեկով ներս մտավ: Շատ ժամանակ չանցած՝ շուտով վերադաձավ և զգուշացրեց, որ տեղից չհեռանամ, իսկ ինքը կրկին անհայտացավ մեծ շենքի խավարում: Կես ժամից ավելի սպասելով՝ վճռեցի ինքս էլ բարձրանալ, սակայն հենց այդ պահին ինձանից ոչ հեռու շենքի բարձր տանիքից դրոշակը ծածանվելով վայր ընկավ: Վերցնելով մեծ ծավալ ունեցող զոլավոր դրոշակը՝ ես դանակով կտորը անջատեցի երկար փայտից և վայրկենապես վազեցի դեպի հեռավոր պա-

րիսպը՝ բակից դուրս փախչելու: Չանցավ մի քանի րոպե, և ահա երևաց նաև Տիգրանը՝ մի սև կտորի մեջ փաթաթված:

– Այդ ի՞նչ կտոր է,– հարցրի ես զարմացած:

– Դատարկ սենյակում եղած մահճակալի վրայից եմ վերցրել,– պատասխանեց նա հևալով:

Խոսելու ժամանակ չկար. դրոշակն ու ծածկոցը շպրտելով պարիսպի հակառակ կողմը՝ սկզբում Տիգրանը կանգնեց թևերիս, բարձրացավ պարիսպի վրա, իսկ հետո ես՝ նրա օգնությամբ մի ակնթարթում շրջվեցի հակառակ կողմը, ու անհետացանք վանքապատկան մեծ անտառում: Մենք երկուսով էլ շատ ուրախ էինք, մանավանդ դրոշակից բացի վերմակ էլ ունեցանք:

Վերջապես մեկ ժամից հետո հասանք այնտեղ, որտեղ պահ էինք տվել բամբակազտիչ արհեստանոցի բակում մեր հավաքած բամբակը, որը լցնելով մեծ դրոշակի մեջ, տվեցի Տիգրանին, իսկ ինքս շտապեցի որբանոց՝ մոռացության տալով դաշնակցականների ակումբի վրա ծածանվող դրոշակի գոյությունը:

*
* *

Թափառումների ու դեպքերի տպավորության տակ վերջապես երեկոյան ուշ ժամին, այն էլ չափազանց հոգնած, վերադարձա որբանոց ճիշտ այն պահին, երբ մեր բաժանմունքի մայրապետը մի խումբ տղաների հետ բացակա որբերին էր որոնում: Տեսնելով ինձ՝ նա թևից ամուր բռնեց և իր սովորության համաձայն ձայնը գցելով գլուխը՝ սկսեց գոռգոռալ.

– Ո՞ւր էիր կորել, անաստվա՛ծ... Լուսաբացից մինչև այժմ քեզ ենք որոնում,– բղավում էր նա՝ անիծելով բոլոր որբերին անխտիր:

– Գնացել էի Գյուտ վարդապետի մոտ,– պարծենկոտությամբ պատասխանեցի ես՝ աշխատելով թևս ազատել նրա փափուկ ձեռքերից, մինչդեռ նա ամուր բռնել էր ինձ և չէր ուզում բաց թողնել:

– Դու կարող ես պապիկիդ խաբել, այլ ոչ թե մայրապետիդ, անպիտա՛ն,– շարունակեց նա գոռգոռալով ու քարշ տալով ինձ դեպի շենքի ընդհանուր միջանցք, որտեղ գտնվում էր կառավարչի մեծ ու լուսավոր սենյակը:

– Մորաքո՛ւյր, ես ո՛չ պապիկ ունեմ և ո՛չ էլ մայրիկ, որ խաբեմ,– հեգնանքով պատասխանեցի ես՝ աշխատելով դանդաղեցնել քայլերս:

– Հիմա ճիշտ կպատասխանես պարոն Թորոսյանին,– զայրացած ասաց նա՝ քարշ տալով ինձ իր հետևից:

Մտնելով լուսավոր և ընդարձակ սենյակը՝ ես հանեցի իմ հնամաշ գլխարկը և անմիջապես կանգ առա, ինչպես դա սովորաբար կատարվում էր ամեն անգամ՝ պարոն Թորոսյանի մոտ լինելու պահերին: Ուշադրություն չդարձնելով մայրապետի ճղճղոցներին՝ ես ավելի մոտեցա պարոն Թորոսյանին՝ չկասկածելով, որ նա որևէ չար մտադրություն կարող էր ունենալ իմ նկատմամբ: Նայելով վրաս՝ նա Գյուտ վարդապետի պես ոտից գլուխ զննեց ինձ, ապա, կկոցելով ճարպի մեջ կորած իր մանրիկ աչքերը, մայրապետից հարցրեց:

– Վաղո՞ւց է ընդունվել մանկատուն այս անիծված թափառաշրջիկը:

– Մեկ ամսից ավելի, պարո՛ն Թորոսյան, բայց թե ով է հանձնել մանկատուն, հայտնի չէ,– պատասխանեց մայրապետը՝ առաջ մղելով ինձ դեպի գրասեղանը, որի շուրջը բացի կառավարչից նստել էին նաև երկու այլ անձնավորություն, որոնց ես առաջին անգամ էի տեսնում:

– Ո՞վ է ասել, որ այս արջի քոթոթը կամավոր է գրվում,– հարցրեց պարոն Թորոսյանը:

– Սկաուտները նրան տեսել են Շողակաթ, Գայանե, Հռիփսիմե վանքերի գավիթներում, վեհարանի շրջապատում, ճեմարանի ու աստղադիտարանի բակերում տեղավորված զինվորների մեջ, որոնց նա դիմել է՝ իրեն որպես կամավոր վերցնելու,– պատասխանեց մայրապետը՝ հեգնական ժպիտը երեսին:

– Եթե նա վեհարանի շրջապատում է եղել, նշանակում է՝ ամեն ինչ հասկանալի է,– ասաց պարոն Թորոսյանը և տեղից վեր կացավ ու առանց որևէ բացատրություն պահանջելու՝ սկսեց ինձ ապտակել: Անակնկալի գալով նրա ուժեղ ապտակներից՝ մի պահ ես ինձ կորցրի և երերալով վայր ընկա չոր հատակին, բայց մայրապետի օգնությամբ անմիջապես ոտքի կանգնեցի:

– Հիմա կարո՞ղ ես ասել, թե ուր էիր գնացել և ինչու,– չարությամբ բղավեց կառավարիչը՝ այս անգամ քաշելով ականջներս:

– Վանքի խուց՝ ընկերոջս մոտ,– պատասխանեցի ես՝ չասելով օրվա իմ արկածների ու որոնումների մասին:

– Իսկ ո՞ւմ հետ էիր վայր բերել ամերիկյան հյուպատոսարանի դրոշակը, և որտե՞ղ ես թաքցրել,– զայրացած հարցրեց նա՝ ուղիղ նայելով աչքերիս:

– Ե՞ս, ես դրոշակ չեմ տարել,– արտասվելով պատասխանեցի կառավարչին՝ մաքրելով ապտակի հետևանքով քթիցս թափվող արյան հետքերը:

– Իսկ ո՞վ է տարել, պարո՛ն կամավոր,– հեգնանքով հարցրեց նա՝ միաժամանակ ստիպելով ինձ ասել տանողների անուններն ու տեղը:

– Չգիտեմ՝ ով է տարել և որտեղ,– այս անգամ համարձակ պատասխանեցի ես՝ ուժ գործադրելով, որպեսզի թևս ազատեմ հաստամարմին մայրապետի ձեռքերից, որը, դեռ ամուր բռնած ինձ, չէր ուզում բաց թողնել:

– Չե՞ս ասի, ուրեմն կպատժվես խստությամբ,– ասաց նա՝ կրկին քաշելով ականջներս:

Այն ժամանակ, երբ կառավարիչն ու մայրապետը ամերիկյան հյուպատոսարանի աշխատակիցների ներկայությամբ շարունակում էին իրենց հարցերով ուղղակի ինձ համբերությունից հանել, երկու սկաուտների ուղեկցությամբ սենյակ մտան ևս երեք որբ երեխաներ, որոնք համարյա թե իմ օրին էին արժանացել: Սկաուտներից մեկի համառոտ զեկույցից հետո պարոն կառավարիչը հրամայեց մայրապետին ինձ դուրս տանել, իսկ ինքը սկսեց բերված որբերի հարցաքննությունը՝ ըստ երևույթին նույն դրոշակի անհայտանալու կապակցությամբ:

Դուրս գալով կառավարչի առանձնասենյակից՝ մայրապետը, թևիցս բաց չթողնելով, միջանցքի վերջում դրված փայտյա աստիճաններով ինձ վեր բարձրացրեց շենքի ձեղնահարկը և այնտեղ էլ՝ մի մութ պահեստանման խցիկում, բանտարկեց:

Բարձրանալով շենքի ձեղնահարկը՝ ես դեռ չգիտեի մայր կոչվող մայրապետի մտադրությունը, բայց երբ նա ինձ հրելով ներս տարավ, նոր միայն հասկացա, որ բարձրացել էի այնտեղ, որպես դրոշակը գողացողների մեղսակից: Տեսնելով, որ իսկապես մենակ եմ մնալու այդ մութ խցիկում, հետ դարձա, որ դուրս փախչեմ, բայց մայրապետը ավելի ճարպիկ գտնվեց. նա իր հետևից արագորեն դուռը պինդ փակեց ու անիծելով բոլորին՝ հեռացավ:

*

* *

Մայրապետի հեռանալուց հետո թակարդն ընկած վայրի գազանի պես ճանկռում էի պահեստի չորս պատերը, ուժ գործադրելով՝ ցանկանում էի տեղահան անել դռան փայտյա շրջանակը, մեկ էլ շրջվում դեպի երդիկանման լուսամուտի խաչաձև շարված երկաթե հաստ ճաղերը՝ նպատակ ունենալով որևէ կերպ պոկել, դուրս փախչել:

Երկար չարչարվելուց հետո վերջապես հոգնած ու քրտինքի մեջ կորած՝ վայր ընկա՝ որևէ արդյունքի չհասած:

Դեռ երեկոյան ապտակ ստանալուց խիստ զայրացած՝ ջղաձգորեն գալարվում էի խոնավությունից բորբոսնած կեղտոտ հատակին՝ անընդհատ լուտանքներ թափելով ինձ բանտարկող մայրապետի ու որբանոցի կառավարիչ պարոն Թորոսյանի հասցեին: Իհարկե, իզուր էին և ավելորդ այդ հայհոյանքները, քանի որ ոչ ոք ինձ լսել չէր կարող, իսկ լսելու դեպքում էլ, միևնույնն էր, մեղավորը մենակ ես կլինեի: Զգալով, որ այդ խավար գիշերին որևէ մեկը օգնության հասնել չի կարող, ստիպված էի ձայնս կտրել՝ ընկնելով խռովահույզ մտքերի մեջ:

Գիշերվա կեսը վաղուց անցել էր. դրսից ոչ մի ծպտուն չէր լսվում, բացի տանիքի թիթեղներին զարնվող անձրևի խոշոր կաթիլների միապաղաղ հարվածներից ու խողովակներով դեպի ցած թափվող անձրևաջրերի ուժեղ խշշոցից, իսկ հաճախ էլ որբանոցի շենքից ոչ հեռու դանդաղ հոսող առվակի մշտական բնակիչների՝ գորտերի կռկռոցներից:

Աշխույժ էր միայն իմ «բնակարանը»՝ բանտի խցիկը: Բազմաթիվ կրծողները ծվծվալով անարգել շրջում էին դեսուդեն, իսկ հաճախ էլ մտնում էին բաց թևերիս մեջ, սողում մերկ մարմնիս վրա ու նորից հետ քաշվում: Տզտզում էին անձրևի հետևանքով դրսից դեպի ներս փախած մոծակներն ու բզեզները, որոնք իրենց հերթին հանգիստ ու դադար չէին տալիս: Եթե այնտեղ իմ փոխարեն մի անփորձ այլ պատանի լիներ, ապա գուցե հուսահատությունից խելագարվեր, սակայն ես դեռ վաղուց էի ընտելացել նման իրավիճակներին, երբ դրանք մահվան էին հավասար, նամանավանդ, թուրքական կոտորածների ահավոր օրերին: Օրվա դեպքերից սաստիկ հոգնած՝ ուղղակի փակվում էին աչքերս, բայց մի՞թե կարելի էր քնել այդ դժոխային պայմաններում:

Որբանոցի կառավարչի կողմից ստացած ուժեղ ապտակների հետևանքով քթիցս թափված արյան շիթերին շուտով ավելացավ մարմնիս վրա ջարդված փայտոջիլների գարշահոտը: Սարսափելի միջատները այնպես էին քրքրում մարմինս, որ ինձ թվում էր, թե ահա շուտով արյունաքամ կլինեմ: Ըստ երևույթին խցիկը հին իրերի օժանդակ պահեստ էր, որտեղ կուտակված էին ամեն տեսակ ցնցոտիների մնացուկներ՝ ծածկոցներ, վերմակի երեսներ, փտած բամբակյա գործվածքներ, անգամ քրքրված կոշիկներ, որոնք դեռ շատ վաղուց բյուրավոր միջատների իսկական բույն էին դարձել:

Մի պահ գրպանիս խորքից հանեցի լուցկու մետաղյա տուփը. բարեբախտաբար, այն դատարկ գտնվեց: Ստացվում էր իսկական մոլլա Նասրեդինի պատմությունը. նստել էի ծառի ճյուղին, կտրում էի այն. այրելով պահեստի մեջ եղած իրերը՝ պարզ էր, որ նրանց հետ այրվելու էի նաև

ինքս: Այդպիսի մտքերով տարված՝ ուղղակի խելահեղության էի հասել և չգիտեի, թե ինչ միջոցներով կարելի էր ազատվել այդ դժոխքից: Ո՞ր հանցանքիս համար էի հայտնվել այդ անասելի դրության մեջ: Գուցե ամերիկյան հյուպատոսարանի դրոշակը վայր բերելո՞ւ համար: Խորհելով այդ մասին՝ մի պահ կարծես թե դադարում էի տանջվել՝ քաջ գիտակցելով, որ դրոշակը տարել էի բարի նպատակի համար: Եթե իրոք հյուպատոսարանի շենքից դրոշակի վայր բերելը հանցանք էր, ապա այդ մասին ոչ ոք չգիտեր, ուրեմն էլ ինչո՞ւ, ո՞ր հանցանքի համար էին ինձ բանտարկել: Գուցե ինձ պատժում էին կամավոր գնալու իմ ցանկությա՞ն համար, բայց մի՞թե հանցանք էր այդ օրերին ռազմաճակատ մեկնել որպես կամավոր, թեկուզ տասնչորս տարեկան հասակում: Մի՞թե արգելվում էր կռվել մեր երկիրը ներխուժած թուրք զավթիչ ոճրագործների դեմ:

Տեղացի չինովնիկներից լինելով՝ որբանոցի կառավարիչը և նրա նման շատ ճիվաղներ ինչ գիտեին թշնամուց վրեժ լուծելու, զոհված եղբորս թարմ գերեզմանի վրա տված իմ վաղեմի երդման մասին:

Չհետաքրքրվելով հասակ առած հարյուրավոր հայ որբերի դառն անցյալով ու նրանց ապրումներով՝ տեղացի ռուսախոս չինովնիկները բոլորովին չգիտեին, թե ինչ էր կատարվում հոգումս այդ փոթորկալի օրերին:

Որբանոցի միջավայրը, սպասարկող անձնակազմի կոպիտ ու արհամարհական վերաբերմունքը մեր նկատմամբ բառացիորեն դուրս էին բերել ինձ հավասարակշռությունից, և այդ պատճառով էլ ուզում էի, որքան հնարավոր էր, շուտ փախչել այդտեղից, թեկուզ թափառաշրջիկ դառնայի, անգամ սովամահ լինեի:

Վերջապես լսվեցին վանքի՝ լուսաբացի մեծ զանգերի բարձր ղողանջները, որոնք կանչում էին ամենքին առավոտյան աղոթքի: Քիչ հետո խցիկի փոքրիկ պատուհանից պարզ երևաց երկնակամարից հենց նոր թափանցած արևի վառվռուն շողերի առաջին փունջը՝ աստիճանաբար լուսավորելով նաև այն խցիկը, որտեղ տանջվելով անց էի կացրել մի ողջ գիշեր:

Չնայած ոչ մի վայրկյան աչքերս չէի փակել, բայց և այնպես ջերմի մեջ զառանցող հիվանդի պես պառկած տեղիցս վեր կացա՝ մոտենալով երդիկանման պատուհանին առավոտյան զովաշունչ օդը շնչելու համար:

Պահեստը, որտեղ բանտարկվել էի, գտնվում էր որբանոցի ճաշարանի և խոհանոցի ձեղնահարկում: Գյուղական խրճիթի երդիկին նմանվող նրա փոքրիկ պատուհանից ոչինչ չէր երևում, բացի կապույտ երկնքի մի փոքրիկ շերտից: Կրծողների գիշերվա ծվծվոցները վաղուց

կտրվել էին, անհետացել էին նաև փայտոջիլները, բայց ասեղների նման ծակող լվերի թիվը էլ ավելի էր շատացել: Համենայն դեպս, լուռ էր հին ցնցոտիներով լի «բնակարանս». միայն լսվում էին բակում երթևեկող մայրապետների՝ որբերին կանչող հրամայական ձայները, իսկ հեռվից էլ դեպի Իգդիր շարժվող ձիաքարշ սայլերի անիվների ճռճռոցները:

Գիշերվա կրծողների ու միջատների թիվը անհամեմատ պակասել էր, միայն կեսօրյա վառ արևից ջերմացած թիթեղապատ տանիքի տաքությունից սկսել էի առավել շատ նեղվել: Շնչահեղձ էի լինում նաև տեղում կուտակված ցնցոտիների գարշահոտությունից: Այդ վիճակում ջղաձգորեն սպասում էի որևէ մեկի երևալուն, բայց դժբախտաբար ոտնաձայներ դեռ չէին լսվում, և խորը լռություն էր տիրում տանիքի ամբողջ երկարությամբ:

«Մի՞թե մոռացել են ինձ»,– մտածում էի ես՝ ավելի նյարդայնացած: Տեսնելով, որ այցելողներ չկան, որոշեցի խցիկից դուրս փախչելու ելք որոնել, հակառակ դեպքում երկրորդ գիշերը կրկին պետք է տանջվեի սարսափելի միջատների մեջ, այն էլ քաղցած վիճակում: Մտածելով այդ մասին՝ սկսեցի մանրազնին ստուգել պահեստի դուռը, ապա պատուհանի վրա ամրացրած երկաթյա ձողերի ամրությունը, անգամ ցեխով շարված քառանկյունի պատերի հաստությունը: Ստուգում էի նաև խոհանոցից դեպի տանիք բարձրացող հում աղյուսից շարված ծխնելույզի պատերը, որը խցիկի միջից ուղիղ բարձրանում էր վեր՝ շրջապատված լինելով թիթեղի բարակ շերտերով: Իհարկե, դուռն իր շրջանակով տեղահան անել չէի կարող, իսկ պատուհանից դուրս գալ նույնպես դժվար էր, քանի որ երկաթե ձողերն ամրացված էին հաստ փայտերի մեջ, որոնց վրա ամուր նստած էր թիթեղապատ տանիքի ամբողջ ծանրությունը: Մի խոսքով, վանդակում փակված գազանի պես զարնվում էի պատից պատ, բայց արդյունքի չհասած, կրկին թավալվում կեղտոտ հատակին:

Արևի վառվռուն մեծ գունդը ուղիղ կանգնած էր երկնակամարի կենտրոնում, և նրա պայծառ շողերը թափանցում էին աղտոտված պահեստ, բայց տանիքում ոտնաձայներ դեռ չէին լսվում, իսկ ես անընդհատ ուսումնասիրում էի պատի ճեղքերը՝ նպատակ ունենալով որևէ տեղից անցք բացել, որի միջով հնարավոր լիներ դուրս փախչել: Չգիտեի՝ վերջապես ինչ հնարքով կարող էի այդ անել, քանի դեռ չէր մոտեցել գիշերվա սարսափելի խավարը:

Չգտնելով դուրս գալու որևէ ելք՝ զայրույթից ու մենակությունից հայհոյում էի ամենքին, առաջին հերթին իմ ոխերիմ թշնամիներին, երկրորդը՝ պարոն Թորոսյանին, աշխարհի վրա ապրող բոլոր չար մարդ-

կանց, այդ թվում նաև հաստամարմին մայրապետին՝ այդ անիծված ջադու պառավին, որի օգնությամբ բանտարկության ենթարկվեցի: Չգիտեմ որևէ մեկը լսում էր ինձ, թե ոչ, բայց և այնպես մենակության մեջ բացի իմ հառաչանքներից, այլ ձայներ չէին լսվում, իսկ ես, անընդհատ գալարվելով կեղտոտ հատակին, ավելի էի նյարդայնանում:

Իմ կյանքի կարճատև պատմության ընթացքում շատ դժվարությունների էի հանդիպել, բայց յուրաքանչյուր անգամ էլ որևէ հնարամտությամբ դուրս էի պրծել անվնաս, իսկ այդ օրը տանջվում էի ձեղնահարկի մենակության մեջ, կարծես թե նստած լինեի քարե զնդանում: Համբերությանս բաժակը ուղղակի լցված էր:

Դիտելով ծխնելույզի մրոտված պատերը՝ մատներս արյունլվա անելու չափ սկսեցի փորփրել կավով շարված հում աղյուսները՝ աշխատելով թեկուզ նրանցից մեկը տեղահան անել, սակայն նորից արդյունքի չհասա:

Դադարելով պատերի ծեփերը փորփրելուց՝ այս անգամ զննեցի ծխնելույզի վերին շարվածքի՝ տանիքին նստած թիթեղները, որոնց տեղահան անելը այնքան էլ դժվար չէր թվում, եթե միայն ձեռքս տեղ հասներ: Այդ մտքով էլ առանց հապաղելու բարձրացա ծխնելույզի մոտ կուտակված հին ցնցոտիների կապոցների վրա. վերջապես ինձ հաջողվեց ամուր բռնել տանիքի ժանգոտված թիթեղներից մեկից ու, որքան ուժ ունեի, ցած քաշել: Չնայած վայր ընկած թիթեղների ուժեղ հարվածից դեմքս արյունլվա եղավ, այնուամենայնիվ ուրախությանս չափ չկար, երբ վերևում երևաց մի մեծ բացվածք, որտեղից առատորեն ներս թափանցեցին դեպի արևմուտք թեքվող դեղնագույն արևի վերջին շողերը: Քանդելով տանիքի թիթեղները՝ միանգամից պարզ երևաց պահեստի ներսում եղած ողջ հնոտիքը՝ իր անհրապույր տեսքով: Ես անմիջապես ձեռնամուխ եղա պատերի տակ կուտակված կապոցներից հենարան պատրաստել տանիք բարձրանալու համար: Վայր բերված մի քանի թիթեղների օգնությամբ վերջապես ինձ հաջողվեց առանց դժվարության բարձրանալ տանիք, բայց շենքի շրջապատում եղած մարդկանցից աննկատ մնալու նպատակով մի պահ թաքնվեցի ներքևից դեպի վեր բարձրացող ծխնելույզի հետևում՝ միաժամանակ շնչելով անտառից փչող մեղմ քամու բերած սառը զովը:

Օրը ցերեկով շենքի տանիքից իջնել չէի կարող. որբանոցի մայրապետներն անմիջապես կնկատեին և այդ կարգի փախուստի համար կարող էին նորից բանտարկել գուցե ավելի երկար ժամանակով: Ուստի ինձ չմատնելու համար կրկին տանիքից ցած իջա՝ սպասելով մութն

ընկնելուն: Վերջապես ինձ փրկված էի համարում և երկրորդ գիշերը չէի տանջվի կծող միջատներից, իսկ սովածության մասին բոլորովին չէի մտածում: Փախչելու համար անցք բաց անելուց հետո այս անգամ մտածում էի, թե ինչ հնարքով տանիքից վայր իջնեմ, այն էլ սրբատաշ քարով շարված պատի երեսով: Հանկարծ հեռվից լսվեցին ոտնաձայներ, որ ձեղնահարկի երկարությամբ աստիճանաբար մոտենում էին պահեստին: Մոտենալով պահեստին՝ եկողն առանց որևէ ձայն հանելու կամացուկ դուռը թակեց ու մթության մեջ սկսեց շարժել նրա հետևի օղակավոր փականը:

– Ո՞վ է,– չհամբերելով ձայն տվեցի՝ միաժամանակ դռան փոքրիկ ճեղքից նայելով դեպի դուրս, բայց մթության մեջ եկողին նշմարել չկարողացա:

Եկողի քայլվածքից ու շնչառությունից էլ պարզ երևում էր, որ նա մայրապետը չէր, իսկ թե ով էր, հարկավոր էր իմանալ:

– Ո՞վ է,– կրկին ձայն տվեցի ու այս անգամ ներսից դուռը հրեցի, սակայն նպատակիս չհասած՝ մի քայլ հետ քաշվեցի, որպեսզի նոր ուժով հրեի: Երրորդ անգամ ձայն տալն ու դռան բացվելը մեկ եղավ:

Դուրս գալով պահեստից՝ կիսամութ ձեղնահարկում ես ոչ ոքի չտեսա: Դուռը բացողը մի կողմ քաշվեց. կարծես թե մի ակնթարթում չքացավ: Կարևորություն չտալով անտեսանելի անձնավորությանը՝ ես ինքնաբերաբար շարժվեցի դեպի ելքը, որտեղ պետք է դրված լիներ փայտյա երկար աստիճանը, բայց դեռ այնտեղ չհասած՝ անտեսանելին իմ հետևից ձայն տվեց.

– Կա՛ց, մի՛ գնա, մայրապետը հետևում է մեզ,– լսեցի մի աղջկա ձայն ու մնացի զարմացած:

– Ո՞վ ես, մո՛տ եկ,– կանչեցի ես՝ մնալով անշարժ:

– Ես եմ՝ Շուշանիկը,– եղավ պատասխանը:

Լսելով նրա ծանոթ ձայնը՝ ես մի պահ զարմանքից ապշեցի. ինձ թվում էր, թե լսածս ու տեսածս երազ էր, այլ ոչ թե իրականություն, քանի որ երկու տարուց ավելի չէի տեսել նրան և չգիտեի՝ մեռած էր նա, թե կենդանի:

Ես անմիջապես հետ դարձա, և, իսկապես, իմ կողքին կանգնած էր ինքը՝ Շուշանիկը, որին ես վաղուց մեռած էի համարում:

– Ո՞ր քամին բերեց քեզ այստեղ, ինչպե՞ս դու իմացար իմ տեղը,– հարցրի ես՝ ուրախացած բռնելով նրա ձեռքը:

– Այդ մասին հետո, իսկ այժմ շուտ հեռանանք այստեղից, քանի մայրապետները չեն տեսել ինձ,– ասաց նա՝ իր հերթին սեղմելով իմ ձեռքը:

*
* *

Վանքապատկան մեծ անտառում համաճարակ հիվանդության հետևանքով բազմաթիվ մահացածների հետ օրը ցերեկով անտառից դուրս տարան նաև Շուշանիկի մոր և նրա երկու մեծ քույրերի դիակները, իսկ նրան մահամերձ փոխադրեցին Կարմիր խաչին պատկանող մեծ վրանը: Նրա վիճակն այն աստիճան ծանր էր, որ մեզանից ոչ մեկը չէր հավատում, թե նա մինչև լուսաբաց կարող էր կենդանի մնալ:

Անցել էր բավական ժամանակ, և ահա ինձ պատժելու փոթորկալի օրվա վերջին անսպասելիորեն հանդիպում եմ նրան՝ չհավատալով աչքերիս: Մեր հանդիպման պահին, իրոք, ժամանակ չկար խոսելու, հարցուփորձ անելու, ուստի նրա առաջարկությամբ իսկական բանտի նմանվող պահեստից անմիջապես դուրս եկանք՝ գիշերվա մութ խավարի մեջ շենքի տանիքից վայր իջնելով հենց այն նույն անցքով, որտեղով անցած երեկոյան մայրապետն ինձ ներքևից վեր բարձրացրեց:

Վերջապես, ազատվելու մեծ հույսով, ուրախ-ուրախ մոտեցանք խորհրդավոր անցքին, բայց, ավա՜ղ, փայտյա մեծ ու երկար աստիճանը հեռացված էր իր տեղից: Շատ հավանական էր, որ աստիճանը հեռացրել էր ինքը՝ հաստամարմին մայրապետը: Տեսնելով այն՝ մենք նույն վայրկյանին հետ դարձանք այս անգամ տանիքի անցքից փախչելու: Ես առանց հապաղելու մի ակնթարթում ծխնելույզի քանդված աղյուսների օգնությամբ վեր բարձրացա, իսկ շենքի շրջապատը դիտելուց հետո բարձրացրի նաև Շուշանիկին:

– Ի՞նչ ենք անելու,– հարցրեց աղջիկը՝ սրբելով աչքերից առատորեն թափված արցունքները.

– Իջնելու ենք ցած փախչելու համար,– պատասխանեցի ես՝ մոտենալով շենքի սրբատաշ քարե հաստ քիվին:

Այդ վայրկյանին Շուշանիկն ահից ուղղակի դողում էր, իսկ ես, ջղաձգորեն շենքի տանիքից ցած իջնող ջրատար խողովակից բռնած, սահելով մի ակնթարթում վայր իջա՝ ընկնելով անձրևաջրերից գոյացած լճակների մեջ:

– Հերթը քոնն է, կարող ես վայր իջնել,– շշուկով ձայն տվեցի ես՝ զգուշության նպատակով նայելով դեսուդեն:

– Չեմ կարող,– պատասխանեց նա՝ շարունակելով արտասվել:

Տեսնելով, որ նա չի համաձայնվում մենակ վայր իջնել, իսկ այնտեղ երկար մնալ հնարավոր չէր, ուստի նրան համոզելու նպատակով ստիպված էի նույն խողովակի օգնությամբ կրկին վեր բարձրանալ:

– Որբանոցից չեմ փախչի,– կտրականապես հրաժարվեց նա և ուզեց հետ դառնալ:

– Չեմ ստիպում, որ փախչես, բայց տանիքում մնալ, այն էլ մութ գիշերով, չես կարող,– համարյա թե աղաչելով՝ համոզում էի ես նրան:

Ժամանակն անցնում էր, իսկ նա դեռ տատանվում էր՝ վստահ չլինելով իր ուժերի վրա, վախենում էր վայր ընկնել, մանավանդ գիշերվա խավար մթության մեջ:

Վերջապես համոզելով նրան՝ ես, երկրորդ անգամ գրկելով ջրատար խողովակը, պատրաստվեցի վայր իջնել, իսկ նա, իր հերթին բռնելով հին սավաններից նախօրոք պատրաստված պարանից, ոտքը դրեց ուսիս՝ որպես հենարան, ու ձայն տվեց, որ իջնեմ: Այդպիսով պատի լերկ երեսից իջնելու մեր առաջին փորձը կարծես թե հաջող անցավ, սակայն դեռ գետին չհասած՝ երկուսիս ծանրության ներքո խողովակներից մեկը մյուսից դուրս եկավ, և խողովակի հետ բավականին բարձրությունից մեծ աղմուկով գետին տապալվեցինք:

Շուշանիկի ճիչն ու թիթեղյա խողովակների շխկշխկոցը արթնացրել էին մեզնից ոչ հեռու քնած պահակին: Մինչև ես փորձ կանեի ընկած տեղից ոտքի կանգնել, դեպքի վայր հասած պահակն ինձ բռնեց.

– Ո՞ւր կփախչեք իմ ձեռքից,– խստությամբ բղավեց նա՝ ստուգելով գրպաններս:

Պահակը, ըստ երևույթին մեզ գողի տեղ դնելով, սկզբում ստուգում էր, թե ինչ է մեր գողացածը՝ ուշադրություն չդարձնելով երեսի վրա ընկած Շուշանիկին, բայց նկատելով մայթի վրա ուշաթափ եղած աղջկան, մի պահ շփոթվելով՝ ինձ բաց թողեց և արագորեն մոտեցավ նրան: Բարեբախտաբար, հենց այդ էլ հնարավորություն տվեց ինձ անմիջապես դիմել փախուստի:

*
* *

Գիշերվա մթության մեջ փախչում էի գնդակի արագությամբ՝ անգամ չիմանալով, թե ուր, բայց քիչ հետո, երբ ուշքի եկա, արդեն գտնվում էի քաղաքից դուրս՝ մարգագետինների մեջ՝ երեսի վրա վայր ընկած: Այդ սարսափելի վիճակում հիշելով Շուշանիկի ճիչն ու նրա վայր ընկնելը՝ մի պահ դող անցավ մարմնովս, ու ջղաձգորեն միանգամից պառկած տեղից վեր բարձրացա:

«Մի՞թե նա վնասվեց, այն էլ իմ պատճառով»,– մտքումս հարցնում էի ինքս ինձ՝ հաշվի չառնելով սեփական մարմնիս սուր ցավերը: Ոտքիս

ցավից մի պահ նորից նստեցի թաց հողաթմբերի վրա, որպեսզի խորհեմ, թե փախչելուց ուր գնամ այդ մութ գիշերով: Քրտինքս կամաց-կամաց սառչում էր, իսկ մարմինս՝ աստիճանաբար ծանրանում. քիչ հետո միանգամից դող անցավ մարմնովս, հոդերս սկսեցին սաստիկ ցավել, իսկ գլուխս՝ առավել:

Շոշափելով գլխիս կեղտոտված մազերը՝ ձեռքս միանգամից խոնավացավ. սկզբում ինձ թվաց, թե դա սովորական քրտինք է, բայց կրկին ստուգելուց պարզվեց, որ արյուն է: Իհարկե, արյունն այնքան սարսափելի չէր, որքան ջարդվածքների մրմուռը. որբանոցի շենքի տանիքից վայր իջնելու պահին պատից պոկված թիթեղյա խողովակների ուժեղ հարվածից երկու տեղից ջարդվել էր գլուխս, իսկ արյունը չէր դադարում: Քաղաքին մոտիկ բաց դաշտում մնալը վտանգավոր էր. նամանավանդ առավոտյան նկատելու դեպքում ինձ՝ որպես փախստականի, կրկին որբանոց կտանեին: Այդ մտքով էլ տարված՝ ծանրացած մարմնով վեր կացա վանքապատկան մեծ այգին գնալու մտադրությամբ:

Ծանոթ լինելով վանքի մեծ այգուն՝ ես կարող էի նրա բարձր թմբերի մեջ օրերով թաքնված մնալ և սնվել թեկուզ թարմ կանաչով, սակայն այն վայրկյանին իմ մտադրությունը միայն իմ մասին չէր, այլ Շուշանիկի, մտածում էի, թե ինչ պատահեց նրան:

Ուշքի գալով վերջապես վճռեցի մինչ այգին գնալը վերադառնալ դեպքի վայր, որպեսզի ստույգ տեղեկանայի Շուշանիկի վիճակի մասին. առանց այդ իմանալու ես հանգիստ սրտով տեղից հեռանալ չէի կարող:

Այդ մտադրությամբ էլ գիշերվա մթության մեջ մեծ անտառի նեղ արահետներով վերադառնում էի որբանոց, այնտեղ, որտեղ վայր էինք ընկել երկուսով միասին: Չնայած մարմնիս սուր ցավերին, այնուամենայնիվ առանց վտանգի անտառի եզրով հասա դեպքի վայրն ու անկատ մոտեցա ինձ հանրածանոթ մեծ շենքին: Ընդհուպ մոտեցա շքամուտքին, որտեղ սովորաբար նստում էր որբանոցի պահակը: Մոտենալով պահակատան շրջապատի հաստաբուն ծառերին, ես խնամքով թաքնվեցի նրանցից մեկի ստվերում՝ ուշադրությամբ լսելով տեղի ունեցած դեպքի մասին ներկա գտնվողների խոսակցությունները: Վերջապես ականջիս հասան անձրևաջրերի մեջ վայր ընկած Շուշանիկին ուշքի բերելու և նրան հերթապահ մայրապետի սենյակը փոխադրելու մասին վերջիններիս հարց ու պատասխանները:

Ինձ համար պարզ դարձավ, որ նրանք դեռ չգիտեին որբանոցի կառավարչի կողմից ինձ բանտարկելու մանրամասնությունները, չգիտեին նաև շենքի տանիքից մեր երկուսի վայր իջնելու պատմությունը: Միայն

պահակը խորամանկորեն հավատացրել էր ներկա գտնվողներին, թե ինքը, քաջաբար կռվելով մի ավազակի հետ, իր արյան գնով ազատել է որբանոցից հափշտակված շատ սիրունիկ աղջկան: Իհարկե, կարելի էր հավատալ ինքնահավան պահակի պատմությանը, քանի որ այդպիսի դեպքերը սովորական էին այն ժամանակներում: Չկար մի օր կամ գիշեր, որ այդպիսի հափշտակումներ տեղի չունենային ինչպես որբանոցում, այնպես էլ նրա շրջապատից դուրս: Ես շուտով դադարեցի նրանց լսել, քանի որ ինձ անհրաժեշտ էր իմանալ միայն Շուշանիկի դրության մասին. այլ խոսակցություններն այլևս հետաքրքիր չէին, ուստի դուրս գալով ճահճացած առվակից՝ անմիջապես հեռացա:

*
* *

Այգին ծանոթ էր ինձ, եղել էի ես այնտեղ դեռ շատ վաղուց, աշխատել, այգեկութին մասնակցել, արքադ[65] հավաքել, Բալաբեկի հետ միասին խոտ հնձել, սակայն այդ օրվա մութ գիշերին կարծես թե ամեն ինչ օտար լիներ, և ինձ թվում էր, թե երբեք այդ այգում չեմ եղել: Տեղում շատ կանգնելուց քերված ոտքերս հոգնեցին: Ուշադրություն չդարձնելով վերահաս վտանգին, պարսպի երկայնքով առաջ շարժվելով՝ մտա խաղողի բարձր թփերի մեջ: Մի պահ հանգիստ առնելով՝ սկսեցի արագորեն հավաքել օրվա ընթացքում հնձված թարմ խոտերը նրանց մեջ թաքնվելու համար, սակայն հենց այդ պահին էլ լսվեցին դեպի ինձ շարժվող մարդկանց տագնապալի ձայները.

– Բռնե՛ք, գող է մտել մեր այգին, – ամբողջ ձայնով գոռում էր նրանցից մեկը և արագորեն շրջանցելով ինձ՝ մոտենում կամարակապ մեծ դռանը: Լսելով նրա ձայնը՝ այս անգամ ես տագնապով դիմեցի փախուստի՝ հաշվի չառնելով ո՛չ մարմնիս ցավերը և ո՛չ էլ քերծվածքների մրմուռը: Վազելով դեպի պարիսպը՝ այս անգամ իմ բախտից առանց դժվարության շրջվեցի հակառակ կողմը՝ ընկնելով ինձ համար միանգամայն անսովոր մեծ քարե բեկորների մեջ և այդպես էլ երեսի վրա ընկած՝ զառանցելով քնեցի:

Զով էր գիշերը ու հանգիստ, բայց անասելի ցավերից զառանցելով՝ անընդհատ կանչում էի մահացած մայրիկիս, անհայտ կորած քույրիկիս, ըստ երևույթին օգնություն էի խնդրում, սակայն քամուց շարժվող տերևների մեղմ խշշոցից բացի, այլ շշուկ չէի լսում:

---

[65] արքադ – խաղողի վազերից էտած, չորացած մատեր, որ գործածում են իբրև վառելիք

Վերջապես լուսադեմին քնելով տագնապալի դեպքերի տպավորությունների ներքո՝ ընկել էի հակասական խառնաշփոթ երազների մեջ: Երազների մեջ էլ էի փախչում, հարձակվում էին ինձ վրա ամեն կողմից, մանավանդ իմ վաղեմի թշնամին՝ շեյխ Խդիրը: Նա մերկացրել էր իր կեռ դաշույնը ու պատրաստվում էր հարվածի, սակայն հենց այդ պահին էլ ճչալով արթնացա: Բաց անելով աչքերս՝ ես ինձ տեսա գյուղի գերեզմանատան մեծ տապանաքարերի արանքում, որտեղ գլխիս կանգնած էին երկու մարդ, որոնցից մեկը սև սքեմ հագած վարդապետ էր:

– Բռնի՛ր, Օհա՛ն, գող է,– ասաց վարդապետը՝ անիծելով գողերին:

– Չեմ հավատա՝ գող լինի, սրբազա՛ն,– պատասխանեց Օհանը՝ ձեռքս բռնելով:

Լսելով նրանց՝ ես դեռ չգիտեի՝ քնած եմ, թե արթուն, տեսածս երա՞զ էր, գուցե իրականությո՞ւն: Այդ մտածմունքով էլ կրկին ճչալով նստած տեղիցս վեր թռա, որ փախչեմ, բայց թևս Օհանի ձեռքից ազատել չկարողացա:

– Որ ասում եմ գող է, չես հավատում,– կրկնեց վարդապետը՝ առաջարկելով Օհանին թևերս կապել:

– Հոգուդ մեղք մի՛ անի, սրբազա՛ն, երեխան թպրտալով վառվում է ձեռքերիս մեջ,– պատասխանեց Օհանը՝ շոյելով ջարդված գլուխս:

– Ինչո՞ւ ես գերեզմանոցում քնել,– հարցրեց Օհանը մեղմորեն:

– Չգիտեմ,– կարճ պատասխանեցի ես՝ խնդրելով, որ թևս բաց թողնի:

– Կթողնեմ, տղաս, միայն թե ասա՝ ինչն է ստիպել քեզ քնել ամայի գերեզմանոցում,– կրկին հարցրեց նա՝ թևս բաց թողնելով:

Տեսնելով Օհանի մեղմ վերաբերմունքը իմ նկատմամբ՝ տեղում կանգնած վարդապետը, կարծես թե դժգոհ մնալով դրանից, շրջվեց ու դանդաղ հեռացավ, իսկ ես, բարի մարդու լավ վարմունքից ազդված, սկսեցի արտասվել:

– Մի՛ լաց, տղա՛ս, գնանք ինձ մոտ,– առաջարկեց նա՝ ձեռքիցս բռնելով, ու դանդաղորեն շարժվեց դեպի այն այգին, որտեղ գիշերվա կեսին պատսպարվելու նպատակով մտել էի ինքս:

*
* *

Վանքապատկան մեծ այգին գտնվում էր Հռիփսիմե վանքից ոչ հեռու, որի արևմտյան կողմի պարսպի երկարությամբ տեղակայված էր գյուղի գերեզմանոցը, իսկ արևելյան հատվածում՝ գյուղի այգիները:

Ընդարձակ էր պատմական այդ այգին ու հարուստ ամեն տեսակ պտուղներով: Այգու կենտրոնական մասում բարձրանում էին երկու հսկա տերևախիտ չինարի ծառեր, որոնց հավասար որևէ ծառ չէի տեսել և ոչ մի տեղ: Երկու ծառերի մեջտեղում գտնվում էր արհեստական մի փոքրիկ լիճ, իսկ նրանից ոչ հեռու՝ մեծ հնձան, որտեղ տեղավորված էին այգեպանի գյուղատնտեսական գործիքները ու տարբեր իրեր:

Նստեցնելով ինձ չինարի մեծ ծառի տերևախիտ ստվերի տակ՝ Օհան բիձեն սկզբում խնամքով մաքրեց գլխիս մազերի մեջ չորացած արյան հետքերը և ապա հնձանից դուրս բերեց իր օրվա սննդի կապոցը, հանեց գարեհացի մի քանի կտոր ու խնամքով դասավորեց թարմ տերևների վրա, իսկ սպիտակ սփռոցը խոնավացնելով դրեց այրվող ճակատիս:

– Դե՛հ, պառկի՛ր այս փափուկ խոտերի վրա, տղա՛ս, մինչև ուտելիքդ պատրաստ կլինի,– առաջարկեց նա՝ մտնելով խաղողի խիտ թփերի մեջ:

Խոնավացած սպիտակ սփռոցը վիրավորված ճակատիս դնելուց հետո մի պահ վերքերս հանգստացան, աչքերս աստիճանաբար փակվեցին, և մինչև Օհան բիձեն խաղողի թփերի միջից հետ կդառնար, ես, արդեն խոր քուն մտած, կրկին ընկել էի խառնաշփոթ երազների մեջ: Երբ երկար ու խորը քնից հետո արթնացա, մարմինս լրիվ հանգստացել էր, բայց քաղցից ուղղակի սիրտս էր մաղվում:

– Արթնացա՞ր, տղա՛ս,– հարցրեց Օհանը՝ մոտենալով օջախին, որի վրա դրված էր ճաշի փոքրիկ պղինձը:

– Այո՛, մորեղբա՛յր,– պատասխանեցի ես աշխուժացած:

– Հիմա միասին կճաշենք, իսկ երեկոյան տուն կերթանք,– ասաց Օհանը, ճաշով լի ամանի վրա դրեց հաց ու թարմ կանաչի և առաջարկեց, որ ուտեմ:

Չնայած սարսափելի քաղցած էի, բայց և այնպես, իմ սովորության համաձայն, սկզբում չեմուչում արեցի, սակայն նրա երկրորդ հրավերքից հետո, սոված գայլի պես վրա տալով, ճաշով լի կավե ամանը միանգամից դատարկեցի:

Հարուստ էր այդ օրվա իմ նախաճաշի ցանկը՝ հաց, պանիր, թարմ բանջարեղենով պատրաստված համեղ բորանի, իսկ նախաճաշելուց հետո հյուրասիրվեցի նաև տարբեր տեսակ քաղցր մրգերով:

Քաղցս հագեցնելուց անմիջապես հետո Օհան բիձեն տեղից վեր կացավ ու սկսեց երկու օրվա հնձած խոտերը խորոմել: Տեսնելով այդ՝ ես նույնպես նստած տեղից վեր կացա և ծառի հաստ բնին դեմ առած

փայտյա մեծ փոցխով ճիշտ նրա օրինակով սկսեցի հավաքել՝ աշխատելով աննկատ մնալ նրա աչքերից: Աշխատեցի այնքան ժամանակ, քանի դեռ չէր նկատել ինձ, իսկ երբ նկատեց, արգելեց:

– Պառկի՛ր, տղա՛ս, դու դեռ տկար ես,– ասաց նա՝ ձեռքիցս վերցնելով փայտի մեծ փոցխը, որի ծանրությունից հազիվ էի շարժվում:

– Հիվանդ չեմ, մորեղբա՛յր,– պատասխանեցի ես ու այս անգամ հնձած խոտը սկսեցի հավաքել երկճյուղանի պողպատե եղանով:

Այդպես երկուսով միասին աշխատեցինք մինչև օրվա կեսը ու կրկին վերադարձանք չինարի մեծ ծառի տակ՝ նրա ստվերում հանգստանալու:

Երկուսով էլ լուռ նստել էինք զովաշունչ այգու խորքում՝ պատմական չինարի մեծ ծառի տերևախիտ ստվերում: Նա, մանրացնելով ծխախոտի չորացած լայն տերևները, գլանակներ էր պատրաստում, իսկ ես խաղում էի փոքրիկ լճակի երեսին լողացող տերևների հետ՝ մի պահ մոռանալով անցած երկու գիշերների անասելի տանջանքներս:

– Դու չասացիր քո մասին, թե ինչու էիր քնել գերեզմանոցում,– վերջապես հարցրեց Օհան բիձեն՝ դադարելով ծխախոտի գլանակներ պատրաստել:

– Ուրիշ տեղ չունեի, մորեղբա՛յր,– պատասխանեցի ես՝ խուսափելով մանրամասնությունների մեջ մտնելուց:

– Ճի՛շտ պատմիր, տղա՛ս, իմացի՛ր, որ քո ծնողն եմ,– առաջարկեց նա՝ մեղմորեն նայելով աչքերիս:

Իհարկե, նրա բարի ու մտերմական վարմունքից հետո այլևս թաքցնելու ոչինչ չունեի, բացի մանրամասնորեն և ճիշտ պատմելուց գլխովս անցած այն բոլոր դեպքերի մասին, սկսած կոտորածի ահավոր օրերի սկզբից մինչև վանքապատկան մեծ այգու մեջ մտնելու նախորդ գիշերը: Պատմում էի ամենայն մանրամասնությամբ՝ չթաքցնելով նաև ամերիկյան հյուպատոսարանի շենքի վրայից զոլավոր մեծ դրոշակը վայր բերելու եղելությունը՝ չասելով միայն Տիգրանի անունը և նրա տեղը:

Պատմելուս ամբողջ ժամանակ նա լռության մեջ գլուխն էր օրորում՝ աշխատելով չխանգարել ինձ շարունակելու մինչև վերջ:

Գլխովս եկած պատմությունը վերջացնելուց հետո, շատ նստելուց հոգնած, տեղիցս վեր կացա, իսկ Օհան բիձեն շարունակում էր խորհել չգիտեմ ինչի մասին:

Նա կրկին գրպանից հանեց ծխախոտի կարմիր տոպրակը ու հաստ գլանակ պատրաստելով՝ սկսեց ծխել, քթանցքից դուրս տալով ծխի թանձր քուլաները:

– Դժվար է եղել անցյալդ, լավ չէ նաև ներկադ, բայց ոչինչ, տղա՛ս, դեռ փոքր ես, կմեծանաս և ամեն ինչ կմոռանաս,– ասաց նա՝ աշխատելով ոգևորել ինձ:

– Անցած ահավոր օրերը մոռանալու բան չեն, մորեղբա՛յր,– պատասխանեցի ես՝ կարմրելով համարձակ պատասխանելուս համար:

– Ճիշտ է, տղա՛ս, իսկ այդ բոլորից հետո ի՞նչ ես մտադիր անել,– հարցրեց Օհան բիձեն՝ հավաքելով կանաչի վրա փռված հացի սպիտակ սփռոցը:

– Պետք է աշխատեմ, մորեղբա՛յր,– համարձակորեն պատասխանեցի ես՝ խուսափելով հայտնել որպես կամավոր ռազմաճակատ գնալու իմ մտադրության մասին:

– Երևում է, որ աշխատել գիտես, և դա շատ լավ է, բայց ո՞ւմ մոտ, անհրաժեշտ է այդ մասին մտածել,– ասաց նա ու տեղից վեր կացավ:

Ուշ էր արդեն: Արևի մեծ սկավառակը վաղուց իջել էր հայկական լեռնապարի կատարներին, իսկ այգու արևմտյան պարսպի երկարությամբ դեպի երկինք խոյացող բարձր բարդիների խիտ ստվերներն ամբողջապես ծածկել էին շրջապատի ընդարձակ տարածությունը:

Օհան բիձեն, նայելով երկնքին, շտապ-շտապ հավաքեց երկրագործական իրերը, տեղավորեց հնձանում և ապա դուռն ամուր փակելուց հետո դիմեց դեպի այգու խորքը:

Կանչելով հարևան երկու այգեպաններին, նրանց, որոնք գիշերը բղավելով հետապնդում էին գողերին, ինչ-որ հանձնարարություն տվեց, հետո կրկին վերադարձավ մեծ չինարի ծառի տակ:

– Գնանք, տղա՛ս, ուշ է արդեն,– առաջարկեց նա՝ շալակելով վաղօրոք հավաքված ձմեռվա վառելիքի կապոցն ու սկսեց դանդաղորեն շարժվել դեպի այգու մեծ դուռը, իսկ ես հետևեցի նրան:

*
* *

Վանքապատկան մեծ այգին գյուղից այնքան էլ հեռու չէր. դա ամենամոտիկ այգիներից մեկն էր, որ կար:

Այգիներից դեպի գյուղ տանող ճանապարհի աջ կողմում հուշարձաններով ու մեծ տապանաքարերով հարուստ գերեզմանատունն էր: Ձախ կողմում Հռիփսիմե վանքի բարձր պարիսպն էր, որի հետևում հանգրվանում էր Արիստակես վարդապետը՝ այն սևազգեստ հոգևորականը, որին լուսաբացի երազախառը տեսիլքներում նկատելով՝ միանգամից ճչացի:

Հանրածանոթ էր այդ ճանապարհը. երկու տարի առաջ՝ Բալաբեկի հետ աշխատանքից տուն վերադառնալիս, նույն պարսպի մոտ մշտապես հանդիպում էինք երկու մեծ շահմար օձերի, սակայն ո՛չ նրանք էին մեզ անհանգստացնում, և ո՛չ էլ մենք՝ նրանց հետապնդում: Ճիշտ այդ օրն էլ՝ նույն տեղում, Օհան բիձու հետ հանդիպեցինք ոչ միայն նույն օձերին, այլև Շողակաթ վանքից հենց նոր դուրս եկած Արիստակես վարդապետին և հաստափոր Ադամ աղային: Տեսնելով վառելափայտը շալակած Օհան բիձուն՝ նրանք մի պահ կանգ առան:

– Այգին թողած ո՞ւր կերթաս,– խռպոտ ձայնով հարցրեց վարդապետը՝ փակելով երկուսիս ճանապարհը:

– Այգին պահ եմ տվել հարևան այգեպաններին, իսկ ես այս գիշեր ջրելու եմ սեփական պարտեզս,– պատասխանեց Օհանը՝ մեջքից վայր բերելով վառելիքի ծանր կապոցը:

– Վերադարձի՛ր, Օհան, վերադարձի՛ր, թե չէ այգին կկողոպտեն,– հրամայողական տոնով առաջարկեց վարդապետը՝ քրքրելով կրծքին փռված սև մորուքը:

– Ապահով եմ այգու համար, սրբազա՛ն, ուստի որոշել եմ այս գիշերը ընտանիքիս մոտ մնալ,– մեղմ ձայնով պատասխանեց Օհանը՝ շալակելով վառելիքի կապոցը:

– Ո՞ւմ այգուց ես գողացել վառելիքի մեծ կապոցը,– հարցրեց Ադամ աղան՝ ոտից գլուխ չափելով Օհանին:

– Գողացած չէ, աղա՛, դա աշխատանքիս քրտինքն է,– մեղմորեն պատասխանեց Օհանը՝ քարացած մնալով բեռան տակ:

– Որտեղից գողացել եք, այնտեղ էլ կտանեք,– հրամայեց աղան, մատով ցույց տվեց սեփական այգու բարձր պարիսպը, որ գտնվում էր հանգստարանի հակառակ կողմը:

– Թող Ձեր ասածը լինի, աղա՛, հակառակվելու բան չունեմ,– ասաց Օհանը՝ հետ դառնալով դեպի հաստափոր աղայի այգին, իսկ ես հետևեցի նրան:

*
* *

Օհան բիձեն Ադամ աղայի նախկին այգեպանն էր եղել, բայց չկարողանալով տանել տիրոջ սարսափելի վատ վարմունքը՝ երեք տարի առաջ հեռացել էր նրանից և հենց այդ օրվանից էլ դարձել էր վերջինիս թշնամին:

– Պարսպի երկայնքով սողացող օձը երբևիցե խայթե՞լ է քեզ,– հարցրեց Օհան բիձեն՝ նայելով երեսիս:

– Ո՛չ, մորեղբա՛յր,– հանկարծակիի եկած պատասխանեցի:

Նա գլխից հանած գլխարկով սրբեց ճակատից թափվող քրտինքը: Հասնելով այգու մեծ դռանը՝ Օհան բիձեն, վառելիքի կապոցը վայր դնելով, ձայն տվեց այգեպան Հովնանին:

Բացելով դուռը՝ Հովնանը, ժպիտը երեսին, բարեկամաբար ներս հրավիրեց մեզ երկուսիս:

– Ուշ է, արդեն տուն կերթանք,– ասաց Օհան բիձեն ու վառելափայտը դռնից ներս շպրտեց:

– Ի՞նչ է պատահել, Օհա՛ն եղբայր,– հարցրեց Հովնանը զարմացած:

– Ոչինչ, վառելիք է, Ադամ աղայի հրամանով բերեցի:

– Չլինի՞ նորից վիրավորել է քեզ,– հարցրեց Հովնանը՝ տխուր դեմք ընդունելով:

– Խայթել է օձի պես,– պատասխանեց Օհան բիձեն՝ բարի գիշեր մաղթելով Հովնանին ու հետ դարձավ:

– Գնանք, տղա՛ս, ուշ է արդեն,– ասաց նա՝ արագացնելով քայլերը:

Գերեզմանից հեռու մնալու նպատակով այս անգամ քայլում էինք հաստափոր Ադամ աղայի նորատունկ այգու պարսպի երկարությամբ, այն պարսպի, որի կառուցման վրա երկու տարի առաջ Բալաբեկի և մի խումբ այլ գաղթականների հետ քրտինք թափելով կավ էինք շաղախում համարյա թե հացփորի: Հիշելով անցած հին օրերը՝ բնազդաբար միանգամից ընկղմվեցի խոր տրտմության մեջ, որից հետո առանց որևէ խոսք փոխանակելու նոր ծանոթիս հետ, շարունակեցի հետևել նրան մինչև գյուղ հասնելը:

Արևը վաղուց մայր էր մտել, իսկ գյուղաքաղաքն ամբողջովին ընկղմվել էր թանձր խավարի մեջ: Ծայրամասի ոլորապտույտ, նեղլիկ փողոցի երկու կողմերի վրա՝ բաց դռների առջև նստած իր համագյուղացիներին բարի երեկո մաղթելով, Օհան բիձեն՝ առաջնորդում էր ինձ դեպի սեփական խրճիթը, որին հասնելուն մի քանի քայլ էր մնացել: Չնայած մութ էր արդեն, բայց փողոցն անհամեմատ աշխույժ էր երևում: Պատերի տակ նստած գյուղացիները զրուցում էին միմյանց հետ, իսկ երեխաները թռչկոտում էին դեսուդեն, նրանց խնդագին քրքիջները հիշեցնում էին իմ մանկական հին ընկերների հետ անցկացրած երջանիկ օրերը, ոչ հեռու անցյալը:

– Վերջապես հասանք, – ասաց Օհան բիձեն՝ թակելով փողոցի վրա բացվող փոքր դռնակը:

Կրկին թակելուց այն անմիջապես բացվեց, և մենք երկուսով դանդաղ քայլով ներս մտանք: Օհան բիձու կինն ու երեխաները դեռ չէին քնել. ըստ երևույթին սպասելիս են եղել իրենց գլխավորի գալուն: Մտնելով հողածածկ մեկհարկանի փոքրիկ խրճիթը՝ նա ինձ ներկայացրեց իր կնոջը:

– Ծանոթացի՛ր, Շողակա՛թ, տղա եմ բերել քեզ,– ասաց նա՝ նստելով պատի երկայնքով դրված փայտյա մեծ թախտին ու արձակելով իր կարկատած կոշիկների կապերը:

– Իբր թե քիչ ունես, մեկն էլ ավելացրո՛ւ,– պատասխանեց կինը՝ դանդաղ քայլերով մոտենալով ինձ:

– Քաղցած է, կերակրի՛ր,– հրամայողական տոնով կարգադրեց Օհանը՝ թիկն տալով թախտին դրված հնամաշ կլոր բարձերին, ջղաձգորեն շոյելով իր թավ ունքերը:

– Ո՞վ է, որտեղի՞ց հանդիպեցիր դու նրան,– կարեկցաբար հարցրեց Շողակաթ մայրիկը կարծես թե ուրախացած:

– Կերակրի՛ր, հետո կպատմեմ,– կարճ կտրեց տանտերը՝ դժգոհ լինելով կնոջ հարցումից:

Չնայած այդ պահին անհարմար վիճակում էի, այնուամենայնիվ տանտիկնոջ պատասխանն իր ամուսնուն ինձ չվշտացրեց, քանի որ ես նրա բարի երևացող դեմքից ու մեղմ վարմունքից ամեն ինչ հասկացա: Տեսնելով իմ աննախանձելի վիճակը՝ Շողակաթ մայրիկը երեկոյան այդ մութ ժամին, բացի ինձ կերակրելուց, տաք ջրով լվաց ոտուձեռս, իսկ անկողին մտնելուց հետո՝ նաև արյունով ներկված ցնցոտիներս:

Ընթրիքից քիչ հետո ինձնից ոչ հեռու՝ պատշգամբի երկարությամբ փռված թախտի վրա, կողք կողքի քնեցին նաև տանտիրոջ չորս զավակները, իսկ Շողակաթ մայրիկը գյուղական ճրագի աղոտ լույսի տակ շարունակում էր ավարտել կիսատ թողած տնային աշխատանքները:

*

* *

Առավոտյան վաղ քնից արթնանալով՝ ես Օհան բիձուն տեսա փոքրիկ պարտեզի պտղատու ծառերի տակ, իսկ Շողակաթ մայրիկին՝ բացօթյա դրված աղքատիկ սեղանը պատրաստելիս:

Տեսնելով նրանց՝ ես նույնպես վեր կացա, հագնելով Շողակաթ մայրիկի կողմից լվացված ու խնամքով կարկատած շորերս՝ պատշգամբից ուրախ տրամադրությամբ ցած իջա՝ մոտենալով տանտիրոջը: Երևում էր, որ Օհան բիձեն պարտեզը ջրել էր գիշերը, իսկ վաղ առավոտյան դեմ փորփրում էր նաև նորատունկ ծառերի բները:

Նկատելով ինձ և քնից արթնացած իր զավակներին՝ նա բահը դեմ արեց թթենու ծառի հաստ բնին ու դանդաղորեն մոտեցավ կնոջ գցած սեղանին:

– Նստի՛ր, տղա՛ս,– ասաց նա՝ գրպանից հանելով ծխախոտի կարմիր քսակը և սկսեց գլանակ պատրաստել:

Լսելով նրան՝ ես, քիչ հետ քաշվելով, նստեցի ոչ հեռու՝ ջրհորի բերնին դրված տախտակյա կափարիչին՝ հետաքրքրությամբ նայելով նրա կոշտացած մատների արագ շարժումներին:

– Ինչպե՞ս քնեցիր,– հարցրեց Օհան բիձեն՝ հայացքն ուղղելով կարկատած շորերիս:

– Լա՛վ, մորեղբա՛յր,– գոհունակությամբ պատասխանեցի ես աղջկա ամաչկոտությամբ:

Իսկապես այդ գիշեր՝ Օհան բիձու, նրա բարեհամբույր կնոջ՝ Շողակաթ մայրիկի սիրալիր հյուրասիրությունից հետո, առաջին անգամ քնել էի շատ հանգիստ ու անխռով, այն էլ առանց վախի և տագնապալի որևէ երազ տեսնելու: Շուտով տանտիրոջ բոլոր անդամները լվացված, մաքուր ձեռքերով մոտեցան սեղանին, իսկ Շողակաթ մայրիկը, փոքրիկ հացատնից դուրս գալով, առավոտյան մեր ուտելիքը դրեց սեղանին և առաջարկեց մեզ ճաշակել:

Չնայած աղքատ էր տանտիրոջ սեղանը, բայց մեծ էր Շողակաթ մայրիկի սիրտը: Նա ինձ հյուրասիրեց ոչ միայն ցորենի ալյուրից թխված լավաշ հացով, այլև դրսից գնված թանձր մածունով, որոնք առանձնապես հազվագյուտ էին ձեռք բերվում պատերազմի այդ դաժան օրերին:

Օհան բիձեն շտապում էր՝ այգին գնալու, ուստի վերցնելով օրվա սննդի իր բաժինը՝ նա տեղից վեր կացավ:

– Գնանք, տղա՛ս,– առաջարկեց նա՝ դիմելով դեպի դրսի դուռը, իսկ ես հետևեցի նրան:

Ըստ երևույթին Շողակաթ մայրիկը գիշերը ամուսնուց լսել էր իմ գլխով անցած դաժան ու վշտալի պատմությունը, դրա համար էլ առավոտյան միմյանցից բաժանվելու պահին արտասվեց:

Չնայած շատ քիչ մնացի աշխատավոր հայ գյուղացու այդ աղքատ ընտանիքում, բայց և այնպես Շողակաթ մայրիկի բարի վարմունքը, նրա մայրական վերջին հայացքը մի անջնջելի ու խոր տպավորություն թողեցին ինձ վրա, որն ամեն անգամ հիշելիս թվում էր, թե բաժանվել եմ հարազատ մայրիկից:

Իրոք, Փառանձեմ մայրիկի մահվանից հետո ես դեռ այդպիսի քնքշանքի չէի արժանացել, ինչպես այդ օրը, վանքապատկան մեծ այգու այգեպան Օհան բիձու և նրա կնոջ՝ Շողակաթի կողմից: Անժխտելի է, որ ես բարի և հյուրասեր մարդկանց շատ էի հանդիպել, օգնություն ստացել, մանավանդ գաղթի այն փոթորկալի ահեղ օրերին, սակայն այդ օրն Օհան բիձեն և նրա կինը՝ Շողակաթ մայրիկը, գերազանցեցին ամենքին:

Դուրս գալով փոքրիկ խրճիթից՝ Օհան բիձեն այգին գնալու փոխարեն, ձեռքերս բռնեց և թեքվեց դեպի գյուղի եկեղեցին տանող նեղլիկ փողոցը:

– Աղոթենք Աստծուն, տղա՛ս, որ գործերս հաջող վերջանան,– ասաց նա՝ արագ-արագ քայլելով:

Երկուսով միասին մտանք եկեղեցի, որտեղ դեռ նոր էր սկսվել հոգևորականների առավոտյան ժամերգությունը:

Օհան բիձեն շտապում էր, ուստի աստծուն աղոթելու իմ ու իր պարտականությունը կատարելուց հետո՝ դեռ ժամերգությունը չվերջացած, եկեղեցուց դուրս եկանք՝ ուղևորվելով դեպի շուկայի մեծ հրապարակը՝ գյուղաքաղաքի պատմական այն հրապարակը, որտեղ երկու տարի առաջ Բալաբեկի և Հարություն Եղոյանի հետ ցարական ոստիկանների հանկարծակի շուրջկալի մեջ ընկանք հարկադիր աշխատանքի ուղարկվելու նպատակով:

Հասնելով այնտեղ՝ Օհան բիձեն առանց որևէ տեղ կանգ առնելու, արագորեն մոտեցավ խանութներից մեկին ու անմիջապես ներս մտավ՝ իր հետևից քարշ տալով նաև ինձ:

Վայր բերելով իր հնամաշ գլխարկը՝ այգեպանը բարևեց խանութի տիրոջն ու որպեսզի չխանգարի գնորդներին, քիչ հետ քաշվեց՝ կանգնելով պատի մոտ, որտեղ կանգնել էի նաև ես:

– Բարով ես եկել, Օհա՛ն բիձա. էդ ո՞ր քամին քեզ բերեց իմ խանութը,– ասաց տերը՝ մի պահ ձեռքում եղած արշինը վայր դնելով:

– Բարի գործով եմ եկել Ձեզ մոտ, Կարապե՛տ աղա, չարից միշտ հեռու եմ,– ասաց Օհանը՝ մոտենալով սեղանին, որի վրա թափված էին բազմատեսակ գույներով վաճառվող կտորներ:

– Գիտեմ, որ բարի մարդ ես, դրա համար էլ միշտ էժան ու լավ կտորները քեզ եմ տվել,– ասաց Կարապետ աղան՝ բարձրաձայն գովելով իր խանութի ապրանքը:

– Գոհ եմ Ձեզանից, Կարապե՛տ աղա, և պարտական Ձեր արած լավության համար:

– Երևի կնիկդ կտավի կարիք ունի,– հարցրեց Կարապետը՝ նայելով Օհանին:

– Առայժմ ոչ, աղա՛, իսկ աշնան շեմին նորից կգամ, ինչ որ հարկավոր է, կգնեմ,– պատասխանեց Օհան բիծեն՝ աչքի տակով դիտելով տիրոջ ձեռքում արագ շարժվող արշինի ծայրերը:

– Ասա՛, ի՞նչ է գալուդ նպատակը,– հարցրեց խանութի տերը՝ արագ-արագ փաթաթելով չափված կտորները:

– Լսել էի, որ ծառայի կարիք ունեք, դրա համար էլ բերել եմ Ձեզ մի որբ տղա, ահա և նա,– ասաց Օհան բիծեն՝ ներկայացնելով ինձ Կարապետ աղային:

– Քանի՞ տարեկան է,– հարցրեց աղան՝ ոտքից գլուխ չափելով ինձ:

– Տղան չգիտի իր տարիքը. երևի տասնչորս տարեկան լինի,– պատասխանեց Օհան բիծեն՝ գովելով իմ աշխատասիրությունը:

Կարապետ աղան իմանալով, որ մայր և փոքր եղբայրներ չունեմ, համաձայնվեց ինձ վերցնել իրենց տուն՝ աշխատելու, միայն թե առանց վարձատրության, այսինքն՝ հացփորի:

– Տղան առողջ է, մանավանդ աշխատասեր, եթե որևէ պակասություն կունենա, ներողամիտ կլինեք,– ասաց Օհան բիծեն ու մի քանի խրատական խոսքեր ինձ ասելով ու աղային հրաժեշտ տալով, անմիջապես հեռացավ:

*
* *

Օհան բիծու հեռանալուց հետո Կարապետ աղան, ճանապարհ դնելով հաճախորդներին, դադարեցրեց իր առևտուրը: Նա արագ-արագ հավաքեց երկար սեղանին փռված կտորները, իսկ ծախված ապրանքի դիմաց ստացված գումարը գրպանը դնելով դուրս եկավ խանութից՝ առաջարկելով ինձ հետևել իրեն:

Երևում էր, որ ապագա տերս շատ աշխույժ էր, մանավանդ արագաշարժ: Խանութից դեպի տուն տանող նեղլիկ փողոցով քայլում էր երիտասարդի ավյունով, նա գնում էր այնպես, որ ինձ թվում էր, թե վազում է:

– Հասի՛ր, տղա՛ս, շտապում եմ,– ասաց նա՝ հարցնելով անունս:

– Սևուկ, Ձեզ ծառա,– պատասխանեցի ես՝ աշխատելով հետ չմնալ նրանից:

– Ապրե՛ս, տղա՛ս, խելոք ես երևում,– ասաց նա՝ մոտենալով կարմիր տուֆից կառուցված կամարակապ մեծ դռանը ու երկաթե բռնակով սկսեց հարվածել:

Դուռը բացեց դժգույն դեմքով տանտիկինը:

– Ինչո՞ւ այդպես անժամանակ տուն եկար,– հարցրեց նա զարմացած:

– Ծառա եմ բերել քեզ,– պատասխանեց աղան, բացված դռնից ներս մտավ՝ իր հետևից ներս տանելով նաև ինձ:

– Որտեղի՞ց բերեցիր այս տղային,– հարցրեց տիկինը՝ ավելի դժգոհ դեմք ընդունելով:

– Որբ տղա է, գիտի աշխատել,– պատասխանեց ամուսինը՝ հանգստացնելով ինչ-որ բանից զայրացած տիկնոջը:

– Որբ է, թող գնա որբանոց, իսկ ինձ ծառա է հարկավոր,– հրամայողական տոնով ասաց տիկինը՝ ոտքից գլուխ չափելով ինձ:

– Օհան բիձեն է երաշխավորել և շատ դրական էր խոսում տղայի մասին,– ասաց աղան՝ ավելի մոտենալով հաստամարմին խանումին:

– Ինչքա՞ն չարչարվեմ, որ սրան մարդ դարձնեմ,– կրկին համառեց նա՝ միաժամանակ աչքի տակով զննելով ինձ:

– Խելոք տղա է, մանավանդ պարոն Բաղդասարյանի վարժարանումն է սովորել,– համբերատար կերպով համոզում էր Կարապետ աղան իր տիկնոջը:

– Այդ տղան ի՞նչ է, որ ի՛նչ սովորի,– խայթելով պատասխանեց տիկինը՝ կարծես թե քիչ մեղմացած:

Տանտիկնոջ խոսքերից վիրավորված՝ մի պահ հետ նայեցի դեպի դուռը, որ դուրս փախչեմ այդ հարուստ ու օտար միջավայրից, բայց Կարապետ աղան, կռահելով մտադրությունս, խորամանկորեն շուտ կանխեց:

– Կա՛ց, տղա՛ս, խանումի խոսքերից չեն նեղանա,– ասաց նա՝ աշխատելով սիրաշահել ոչ միայն ինձ, այլև մռայլ դեմք ընդունած իր տիկնոջը:

Զգալով, որ տանտիկնոջ զայրացկոտ պատասխաններն անախորժ տպավորություն են թողնում ինձ վրա, Կարապետ աղան սկսեց խոսել այլ լեզվով, որի բովանդակության մասին հասկանալ չկարողացա: Իրոք, այդ պահին խոսակցությունը անախորժ էր և վիրավորական, սակայն սենյակից դուրս եկած բարեհամբույր մի գեղեցիկ օրիորդի հայտնվելը միանգամից փոխեց ամուսինների հարց ու պատասխանի բնույթը:

– Մի՛ առարկիր, մայրի՛կ, գեղեցիկ աչքեր ունի տղան, կօգնենք նրան սովորելու նաև դպրոցում,– ասաց օրիորդն ուրախ-ուրախ՝ գրկելով դժգույն դեմք ունեցող իր մայրիկին:

Իսկապես աղջկա միջամտությունը և ուրախ տրամադրությունը կարծես թե միանգամից փոխեցին տիկնոջ վարմունքը, որի շնորհիվ էլ վերջապես նա համաձայնվեց ինձ ընդունել որպես ծառա:

*
* *

Կարապետ աղան բավականին ունևոր էր, բայց ոչ շատ հարուստ: Նա ուներ մեկհարկանի սեփական տուն՝ իր բոլոր հարմարություններով: Վեց սենյակներից բաղկացած այդ տունը ուներ նաև մեծ պատշգամբ, որի տարածությունը հավասար էր չորս սենյակների լայնությանը: Տնից ոչ հեռու՝ հինգ աստիճան դեպի ցած, գտնվում էր մեծ մառանը, որտեղ տեղավորված էր տանտիրոջ ձմեռվա ուտելիքի ողջ պաշարը: Մառանի երկու պատերի երկարությամբ շատ խնամքով դասավորված էին գինով լի կարասները, իսկ մյուս կողմում հացահատիկով լցված պարկերն էին ու տարբեր տեսակի կահ-կարասիք:

Մառանի բարձր առաստաղի հեծաններից կախված լայն տախտակների վրա դարսված էր ցորենի ալյուրից թխված լավաշ հացը, որը սովորաբար թխվում էր չորս ամիսը մեկ անգամ: Հացատան նույն հեծաններից կախված էին նաև մեծ քանակությամբ խաղողով ծանրաբեռնված կախանները: Մառանից դեպի աջ՝ բակի խորքում, գտնվում էր բարձր առաստաղ ունեցող հացատունը՝ իր մեծ թոնրով, որի տանիքում դարսված էին տանտիրոջ ձմեռվա վառելափայտի պաշարն ու այգուց բերված արքադի չոր կապոցները:

Հացատնից ոչ հեռու գտնվում էր ջրհորը, որի բերանին խնամքով ամրացված էր օղակաձև մի մեծ քարասալ. վերջինս մշտապես ծածկված էր տախտակից պատրաստված քառակուսի կափարիչով: Բնակարանի ձախ կողմում գտնվում էր խոշոր եղջերավոր անասունների գոմը, վերջինս բակից կտրված էր բարձր ցանկապատով: Գոմն ուներ փոքրիկ բակ՝ երկու դռներով, որից մեկը բացվում էր դեպի մեծ պարտեզը, իսկ երկրորդը՝ անմիջապես փողոցի վրա: Աղայի տան մնացած օժանդակ հարմարությունների դեմ դիմաց փռված էր երեք կողմից պարսպով շրջապատված մրգատու ծառերով հարուստ այգին, որի խնամքը մեծ մասամբ ծանրացած էր ուսերիս:

Կարապետ աղան շատ հարուստ չէր, բայց լավ ապրելու համար ուներ խաղողի մեծ այգի, որի մշակումը կատարվում էր լեռնային շրջաններից եկած աղքատ գյուղացիների կողմից ամենաչնչին վարձատրությամբ, իսկ այգեկութը կատարվում էր գրեթե ձրի: Կարապետ

աղայի երեք մեծ հողակտորներում ցանվում էր ցորեն, որի մշակումը նույնպես կատարվում էր վարձու բանվորների օգնությամբ: Տիրոջս սեփական խանութը հարուստ էր Ռուսաստանից ստացված տարբեր տեսակի կտորներով, իսկ վաճառողն ինքը՝ Կարապետ աղան էր:

Կարապետ աղան ուներ բավականին թվով եղջյուրավոր անասուններ, որոնց խնամքը նախիրից վերադառնալուց հետո անմիջապես ծանրացած էր ուսերիս: Անասունների թվում կար նաև մի ձի, վերջինս մշտապես գտնվում էր իմ հսկողության տակ հարկ եղած դեպքում աղային սպասարկելու համար:

Տիրոջս ընտանիքը բաղկացած էր չորս շնչից, ինքը՝ Կարապետ աղան, կինը՝ Եսթերը, աղջիկը՝ օրիորդ Կարինեն, և տղան՝ Գաբրիելը. վերջինս՝ որպես սպա և զինվորական բժիշկ, պատերազմի առաջին իսկ օրերին մեկնել էր արևմտյան ռազմաճակատ, բայց դեռ չէր վերադարձել:

Տանտիրոջ հինգ սենյակներից երկուսը տրված էին վարձով, որոնցից մեկը զբաղեցնում էր Վանից գաղթած մի այրի կին՝ իր վեց զավակներով (երեք տղա և երեք աղջիկ), երկրորդ սենյակը վարձել էր ամերիկյան հյուպատոսարանի աշխատակից ամերիկուհի օրիորդ Մարին, վերջինս ուներ բազմաթիվ երկրպագուներ, այնպես որ Կարապետ աղայի հարկի տակ ապրողները շատ էին, և նրանցից յուրաքանչյուրն ուներ իր ուրույն բնավորությունն ու դիրքը շրջապատում: Քանի որ նրանք բոլորն էլ հարուստ էին՝ առաջինը՝ դրամով և ունեցվածքով, իսկ մյուսները՝ միայն դրամով, ուստի ամենքն էլ հրամայողների դերում էին:

Կարապետ աղայի տան բոլոր բնակիչներից ամենաազդեցիկն ու հրամայողը տիկին Եսթերն էր, որի յուրաքանչյուր խոսքն ու արտահայտությունը օրենք էին բոլորի համար անխտիր: Իսկապես, ո՞վ կարող էր այդ ազդեցիկ տիկնոջ թանին թթու ասել: Բառացիորեն ոչ ոք, անգամ տանտիրոջ մոտիկ ու ամենահեռու բարեկամները խիստ կերպով քաշվում էին նրանից ու նրան հանդիպելիս խոնարհվելով գլուխ էին տալիս:

Օրիորդ Կարինեն իր մայրիկի ճիշտ հակապատկերն էր՝ վերին աստիճանի համեստ ու քաղաքավարի ինչպես ընտանիքում, այնպես էլ նրանից դուրս: Նա միաժամանակ շատ բարի սիրտ ուներ, մանավանդ իմ նկատմամբ:

Ծանոթանալով Կարապետ աղայի կալվածքին, նրա ընտանիքին՝ շատ շուտով ես դարձա նրանց համար տան «տղա» և հավատարիմ ծառայող: Աշխատում էի լուսաբացից մինչև ուշ երեկո՝ կատարելով ամեն տեսակ անսովոր, նաև սև աշխատանք: Հրամայում էին բոլորն էլ,

ով առավոտյան շուտ էր արթնանում, ով պահանջ ուներ կամ որևէ բանի կարիք: Առանձնապես մշտական հրամայողը տիկին Եսթերն էր: Աշխատանքը շատ էր ու բազմազան: Լուսաբացին ջրում էի պարտեզը, մշակում մարգերը, թեյ պատրաստում, անասուններին խնամում, ջուր բերում, օգնում էի հացթուխին ու լվացք անողին, իսկ ամառվա շրջանում կատարում էի նաև գյուղատնտեսական բոլոր տեսակի աշխատանքները: Մի խոսքով՝ տանտիրոջ ընտանիքի յուրաքանչյուր անդամի բոլոր հանձնարարություններն ու կարգադրությունները կատարում էի անխոս ու ճշտությամբ:

Իմ աշխատասիրության շնորհիվ շատ շուտով ձեռք բերեցի նրանց վստահությունը, որի համար էլ տանտիրոջ սենյակների, մառանի, խոհանոցի ու մնացած բոլոր փակ դռների մուտքը ազատ էր ինձ համար:

Իհարկե, այդ վստահությունը ես երբեք չէի չարաշահում, և նրանք այդ բանում համոզված էին իրենց կողմից կազմակերպված փորձերով ու այլանդակ ձևերով:

Ծառայությանս առաջին մի քանի ամիսների ընթացքում սենյակներում և նրանցից դուրս, անգամ մեծ այգու տարբեր տեղերում հաճախակի նկատում էի դրամներ, թանկարժեք իրեր, բայց յուրաքանչյուր դեպքում էլ վերցնելով հանձնում էի տանտիկնոջը կամ Կարապետ աղային՝ ասելով՝ թե որտեղ և ինչ պայմաններում եմ գտել այն: Այդպես մի օր՝ առավոտյան վաղ ժամին՝ ծաղկազարդ պարտեզը ջրելիս, մեծ ծառից ոչ հեռու՝ վարդի թփերի տակ, նկատեցի դրամով լի մի քսակ, թե ինչքան էր նրա մեջ եղած գումարը, այդպես էլ չկարողացա հաշվել, ավելի շուտ համարձակություն չունեցա ձեռք տալու: Այնուամենայնիվ վճռեցի այն վերցնել, սակայն մի պահ մարմնովս սարսափելի դող անցավ, և ինձ թվաց, թե Կարապետ աղան, թփերի արանքից տեսնելով, դատապարտում է արարքս: Հողի մեջ խրելով ձեռքիս բռնած մեծ բահը՝ մի պահ նստեցի թարմ կանաչին, որ հաշվեմ քսակի մեջ եղած դրամը, սակայն խիստ անհանգիստ լինելու պատճառով կրկին չկարողացա:

– Չլինի՞ թե Կարապետ աղան նորից փորձում է իմ հավատարմությունը, այն էլ պարտեզի մեջ,– մտածում էի ես՝ չհամարձակվելով գետնից վերցնել քսակը. վերջապես համարձակություն ունեցա քսակը գրպանս դնել և դանդաղորեն դուրս գալ ջրած պարտեզից:

Գարնանային առավոտվա վաղ ժամին էր, երբ տան բնակիչներից շատերն արթնացել էին՝ շնչելով գիշերվա ընթացքում ջրված ծառախիտ պարտեզից փչող ծաղիկների հոտավետ բուրմունքը, իսկ ես հուզ-

ված մեկ վազում էի դեպի մեծ ջրհորը՝ այնտեղից ջուր հանելու, մեկ շրջվում ինքնաեռի կողմը՝ ծխացող ածուխը թեժացնելու, մի պահ էլ գոմի դռները բացելով՝ նախրի տավարներին դուրս բերում: Այդպես արագ-արագ կատարում էի սովորական իմ պարտականությունները, երբ հանկարծ հնչեց տիկին Եսթերի բարակ, հրամայողական ձայնը:

– Սևո՛ւկ, լվացարանը ջո՛ւր լցրու, կեղտաջուրը թափի՛ր, ինքնաեռը բե՛ր, հացթուխին կանչի՛ր ու գնա՛ ջրի:

Այդպես հրամայելով՝ ուղղակի ժամանակ չէր տալիս, որ շունչ քաշեմ, վերջապես գրպանումս ծանրացած չարաբաստիկ այդ քսակն իրեն հանձնեմ: Արագ-արագ կատարելով տիկնոջ կողմից տրված հանձնարարությունները՝ վերջապես մի պահ ինձ հաջողվեց դրսից ներս մտնել և ձեռքումս բռնած քսակն անմիջապես իրեն հանձնել: Տեսնելով տարբեր գույների նուրբ թելերով գործված քսակը՝ տիկինը սկզբում կարծես թե վարանեց, բայց տնտղելուց հետո սառնասրտորեն ինձ նայեց:

– Ո՞ւմն է, որտեղի՞ց դու գտար այդ քսակը,– հարցրեց նա զարմացած:

– Պարտեզում՝ վարդի թփերում,– պատասխանեցի ես, մի քայլ հետ քաշվեցի, որ հանգիստ սրտով հեռանամ:

– Ո՞վ համարձակվեց վարդերիս մեջ մտնել,– հարցրեց նա՝ այս անգամ զայրացած:

– Որևէ մեկին չեմ տեսել,– պատասխանեցի աննկատ զայրույթով:

– Իսկ ո՞ւմն է քսակը, ո՞վ է պահ տվել վարդերին,– հարցրեց նա՝ շոշափելով սեղանին թափված տարբեր տեսակի ու գույնի դրամները:

– Կարծեցի, թե աղայի քսակն է, դրա համար էլ Ձեզ հանձնեցի,– պատասխանեցի ես ու դուռը բացելով՝ կրկին փորձեցի սենյակից դուրս փախչել:

– Սպասի՛ր, Սևո՛ւկ,– ձայն տվեց նա՝ այս անգամ մեղմացած:

– Լսում եմ, խանո՛ւմ:

– Իմացի՛ր, որ քսակը գտնելու մասին որևէ մեկին ոչ մի խոսք... այդ թվում՝ նաև աղային,– կարգադրեց նա, ու ինքն էլ նստած տեղից վեր կացավ:

– Լավ,– խոստացա ես ու անմիջապես տիկնոջ մոտից հեռացա:

Դուրս գալով սենյակից՝ ես, առանց տանտիկնոջ թույլտվությունն առնելու, վազեցի դեպի Սանամ մայրիկենց տուն՝ Սարգսի մոտ, որին հիվանդության պատճառով չէի տեսել դեռ վաղուց: Գնում էի նրա մոտ, որովհետև իմ նախկին ընկերներից կենդանի էր մնացել միայն նա, ում հետ կիսվում էի:

Ընկերոջս տունը գտնվում էր դեպի այգիներ տանող ճանապարհից ոչ հեռու՝ մենատներում, որտեղից պարզ երևում էին գյուղի մարգագետիններն ու տարբեր ուղղություններով գնացող նեղ արահետները: Հասնելով տուն՝ ես ընկերոջս տեղում չտեսա: Խոսելով Սանամ մայրիկի հետ՝ պարզեցի, որ Սարգիսն էլ իր հերթին ինձ է որոնել, բայց տեղում չգտնելու պատճառով ինքը նույնպես գնացել է այգիներ, իսկ թե ում այգին էր գնացել, այդ մասին նա ոչինչ ասել չկարողացավ:

Ես առանց խորհելու դուրս եկա դաշտ և առաջին իսկ հանդիպած ձիասայլը նստելով՝ մեկնեցի դեպի հեռավոր այգիներ: Մինչև տիրոջս այգուն մոտենալը ճանապարհին ես ոչ ոքի չհանդիպեցի. օրվա այդ պահերին երթևեկողներ համարյա թե չէին լինում, քանի որ բոլոր աշխատավորները աշխատանքից տուն էին վերադառնում միայն երեկոյան ուշ ժամերին:

Վայր իջնելով ձիասայլից՝ ես գնացի դեպի տիրոջ այգու օժանդակ դուռը, որտեղից և ներս մտա: Այգին արգելափակված էր կավե բարձր ցանկապատով և ուներ միայն երկու ելք: Առաջինը գլխավոր դուռն էր, որը միշտ կիսաբաց էր, իսկ այգու հակառակ կողմից կար ցանկապատի մի փոքրիկ բացվածք, որտեղից մարդիկ կարող էին ոչ դժվարությամբ դրսից ներս մտնել. հենց դա էլ կոչվում էր օժանդակ դուռ:

Տիրոջ այգին գիտեի հինգ մատիս պես, յուրաքանչյուր ծառ ու թուփ, անգամ խաղողի տարբեր տեսակի առանձին թմբերը: Մոտենալով այգու կենտրոնական մասին՝ հանկարծ աչքիս երևացին երկու դեմքեր, որոնցից մեկը հովանոցը գլխին բռնած ամերիկուհի օրիորդ Մարին էր, իսկ երկրորդը նրա երկրպագուներից մեկը՝ պարոն Քալաշովը: Նրանցից քիչ հեռու՝ բաց դռան առջև, կանգնած էր նաև Քալաշովի մշտական կառքը: Ինձ համար գաղտնիք չէր նրանց միջև եղած սիրային կապը, տեսակցություններն անգամ գիշերվա մութ ժամերին: Նրանք օր ու գիշեր շրջում էին միասին, և ըստ երևույթին երկուսն էլ չէին համարձակվում տիկին Եսթերի ներկայությամբ բացահայտել իրենց սիրային գաղտնիքները:

Օրիորդ Մարին իր երկրպագուների հետ սովորաբար այգի էր գալիս միշտ գարնան զվարթ ամիսներին, իսկ մեկ-մեկ էլ խոր աշնան տերևաթափին, որպեսզի շատ մարդկանց չհանդիպեր: Նրանք գալիս էին այգու խիտ ծառերի մեջ միայն օրվա զովաշունչ ժամերին ազատորեն գրկախառնվելու, մասամբ էլ գարնանային բյուրավոր ծաղիկների բուրմունքը շնչելու համար: Մինչդեռ այդ օրերին ես նրանց տեսա միմյանցից բաժան, այն էլ մտահոգ վիճակում: Նկատելով նրանց՝ մի պահ ինձ

չմատնելու նպատակով թաքնվեցի այգու խիտ թմբերի մեջ՝ հետևելով նրանց տարօրինակ շարժումներին: Օրը համարյա թե կես էր դարձել, այնինչ նրանք դեռ շարունակում էին շրջել դեսուդեն, ըստ երևույթին ինչ-որ բան էին որոնում: Թե ինչ էին կորցրել նրանք Կարապետ աղայի այգում, այն էլ նոր աճող խիտ թփերի մեջ, սկզբում հանելուկային թվաց ինձ: Հետևելով նրանց շարժումներին՝ ես արդեն մոռացել էի Սարգսին որոնելու իմ մտադրությունը՝ քաջ գիտենալով, որ ընկերս օրվա այդ ժամին այգում մնալ չէր կարող, ուստի առանց երկու սիրահարներին խանգարելու՝ վճռեցի անմիջապես հեռանալ: Մոտենալով այգու օժանդակ դռանը՝ ճիշտ այնտեղ, որտեղից քիչ առաջ ներս էի մտել, հանդիպեցի հարևան այգեպան քեռի Սեթոյին:

– Ինչո՞ւ հետ դարձար, Սևո՛ւկ,– հարցրեց նա՝ բարեկամաբար ձեռքս սեղմելով:

– Եկա, որ ընկերոջս հանդիպեմ, բայց նա այգում չերևաց, դրա համար էլ տուն եմ վերադառնում:

– Չհանդիպեցի՞ր աղայիդ տնվորին,– հարցրեց քեռի Սեթոն հեգնական ժպիտով:

– Ո՛չ:

– Ինչո՞ւ:

– Չուզեցի խանգարել:

– Ի՞նչ են կորցրել թփերի մեջ,– հարցրեց քեռի Սեթոն լրջորեն:

– Չգիտեմ:

– Մեկ օր առաջ գրկախառնված շրջում էին ծաղիկների մեջ, իսկ այսօր ինչ-որ բան են որոնում,– ասաց նա՝ ցանկապատի հետևից նայելով թփերից դուրս եկող երկուսին, որոնք դանդաղորեն շարժվում էին դեպի այգու մեծ դուռը, որտեղ իրենց էր սպասում ձիերով լծված կառքը:

Չպատասխանելով քեռի Սեթոյին՝ ես հրաժեշտ տվեցի նրան, համարյա թե վազելով՝ հասա տուն, դասագրքերս վերցրի ու շարժվեցի դեպի վարժարան:

*
* *

Վարժարանից վերադարձա սովորական ժամին և անմիջապես նախապատրաստեցի ինքնաեռը տանտիկնոջը թեյ մատուցելու համար, միաժամանակ պարապ չմնալու նպատակով սկսեցի սերտել հաջորդ օրվա դասերը: Մինչև դասերիս սերտելն ու քնելը դեռ կատարելու շատ աշխա-

տանք ունեի, ուստի ինքնաեռը թողնելով տեղում՝ ես մտա մեծ հացատունը, որտեղ ինձ էր սպասում տանտիրոջ հացթուխ Սիրանուշ բաջին:

Մեկ շաբաթվա ընդմիջումից հետո Սիրանուշ բաջին, տեսնելով ինձ, իր սովորության համաձայն, սկսեց շատախոսել օրվա նորություններից և տեղի ունեցած դեպքերից, իսկ ես լսում էի նրան լրջությամբ:

– Դու այսօր տեսե՞լ ես ամերիկուհի օրիորդին,– հարցրեց նա՝ նայելով աչքերիս:

– Այո՛,– պատասխանեցի ես զարմացած:

– Վարդի թփերի մե՞ջ:

– Ո՛չ, մեծ այգում, պարոն Քալաշովի հետ:

– Ի՞նչ գործ ունեին նրանք մեծ այգում:

– Ինչ-որ բան էին կորցրել, որոնում էին թփերի մեջ:

– Ի՞նչ կարող էին կորցնել այդ անառակները, բացի իրենց անպատիվ անունից,– ասաց Սիրանուշ բաջին՝ արագ-արագ քանդելով ալյուրի մեծ ջվալի բերանը:

– Չգիտեմ:

– Ինչո՞ւ Անթառամը քեզ որևէ բան չի ասել,– հարցրեց նա լրջորեն:

– Ինչի՞ մասին:

– Կորցրած քսակի մասին:

– Ի՞նչ քսակ,– հարցրի ես ու հանկարծակիի եկած նստածս տեղից վեր կացա:

– Ամերիկուհի օրիորդը պարոն Քալաշովի հետ գրկախառնվելու պահին կորցրել է դրամով լիքը մի քսակ, – ասաց Սիրանուշ բաջին՝ կրկին կապելով կիսատված ջվալի բերանը:

– Որտե՞ղ:

– Երևի մեծ այգում:

– Քեզ ո՞վ ասաց այդ մասին,– հարցրի ես այլայլված:

– Օրիորդ Մարիի աղախին Անթառամը:

– Որտե՞ղ տեսար նրան,– ջղաձիգ շարունակեցի հարցուփորձս:

– Ամերիկուհու հետ օրը ցերեկով մեր տուն եկան:

– Ինչի՞ համար:

– Խորհուրդ առնելու, թե ինչպես գտնեն կորցրած քսակը:

– Ի՞նչ խորհուրդ տվեցիր դու նրանց,– հարցրի ես հեգնական ժպիտով:

– Ես հո դատավո՞ր չեմ, որ խորհուրդ տամ ուրիշի,– ասաց Սիրանուշ բաջին, նստած տեղից վեր կացավ ու բարի գիշեր մաղթելով՝ հեռացավ:

Կատարելով հացթուխին օգնելու իմ պարտականությունը՝ ես նույնպես հետևեցի նրան՝ մտնելով մեծ խոհանոցը, որը միաժամանակ իմ մշտական օթևանն էր:

Մութ էր արդեն: Օրվա ծանր աշխատանքներից հոգնած՝ այդ երեկո սովորականից ավելի շուտ մտա անկողին, բայց հացթուխի հարցուփորձի տպավորության տակ մինչև կեսգիշեր քնել չկարողացա: Անկողնում տարվել էի հազար ու մի հակասական մտքերով՝ չկենտրոնանալով որևէ մի հարցի:

Աշխատելով Կարապետ աղայի տանը՝ ես դեռ տակավին չէի մոռացել որպես կամավոր ռազմաճակատ մեկնելու իմ մտադրությունը, մի երազանք, որի մասին մտածում էի համարյա թե օր ու գիշեր: Սակայն այդ գիշեր ուղեղս զբաղված էր նաև օրիորդ Մարիի և նրա երկրպագու, բարձրաստիճան սպա պարոն Քալաշովի օրվա որոնումներով, որն անմիջականորեն առնչվում էր իմ գտած չարաբաստիկ քսակի հետ:

Հիմա էի հասկանում, թե ինչու անցած օրը երկու սիրահարները սովորականի պես միմյանց թևանցուկ չէին արել, այլ այգու բազմատեսակ ծաղիկներից շատ հեռու, ինչ-որ բան կորցրած, շրջում էին՝ զննելով ամեն մի թուփ, անցնում էին ծառից ծառ, և նորից վերադառնում միևնույն տեղը՝ մի տեսակ հուսահատված, բայց զարմանքս շուտով ի չիք դարձավ: Օրվա վերջին՝ Սիրանուշ բաջիին հանդիպելուց հետո, ինձ համար արդեն անհերքելի էր, որ իմ գտած դրամով լիքը քսակը պատկանում էր երկու սիրահարներին, այլ ոչ թե տիկին Եսթերին: Իհարկե, մինչ հացթուխին հանդիպելը մտքովս անգամ չէր անցնում, որ վարդերի մեջ ընկած քաշմիրի նուրբ թելերով գործած քսակը տանտիկնոջը չլիներ: Այդ մտքերով տարված՝ վերջապես կեսգիշերին քնեցի՝ նորից ընկնելով հակասական խոր երազների մեջ մինչև հաջորդ առավոտ, երբ դրսից լսվեց տիկին Եսթերի կանչը.

– Սևո՛ւկ…

ՃՈՒՂԱԿԻ ՄԵՋ

Եսթեր խանումի հերթական հանձնարարությունը տհաճորեն կատարելուց հետո՝ օրվա առաջին կեսին, դուրս եկա փողոց, շտապ մեկնեցի վանքի գավիթ այն հույսով, որ այնտեղ կգտնեմ իմ ընկերներին: Չէի կասկածում, որ կհանդիպեմ նրանց, քանի որ մեր պայմանավորվածության համաձայն՝ նրանք պետք է լինեին լճափին, եթե ոչ՝ վանքի ցայտաղբյուրի մոտերքում:

Չնայած մեծ ջանքեր գործադրեցի, այնուամենայնիվ ցայտաղբյուրի մոտ հասնել չկարողացա: Այնտեղ անսովոր մեծ թվով զինվոր և սպաներ էին հավաքվել: Այդքան շատ զինվորների առկայությունը վանքի շուրջբոլորը 1917 թվի փետրվարյան հեղափոխությունից հետո առաջին անգամ էր նկատվում: Երկար որոնելուց հետո վերջապես շատ դժվարությամբ գտա միմյանցից միշտ անբաժան իմ երեք ընկերներին՝ Սարգսին, Աղասուն և հացթուխ Սիրանուշի որդի Վաղարշակին: Վերջինիս հետ մտերմացել էի Կարապետ աղայի տանը ծառայելու ժամանակ՝ ընդամենը երկու տարի առաջ: Իմ մանկության նախկին ընկերներից շատերը վաղուց չկային. նրանց մի մասը զոհվել էր թուրք դահիճների ձեռքով, իսկ մի զգալի մասն էլ՝ սովից ու սարսափելի համաճարակից:

Միասին ճեղքելով հավաքված զինվորների շարքերը՝ ընկերներով ընդհուպ մոտեցանք վանքի վեհարանի պարսպին, որտեղ հավաքվել էին մեծ թվով սքեմավոր հոգևորականներ, ճեմարանի դասախոսներ և ուրիշ այլ պարոններ: Կանգնելով կարմիր աղյուսից շարված վեհարանի պարսպի անկյուններից մեկում՝ պատանեկան մեծ հետաքրքրությամբ հետևում էինք տեղի ունեցող անցուդարձին՝ սպասելով, թե ինչ է կատարվելու այդ խռովահույզ օրը:

Վերջապես մի խումբ զինված մարդիկ վանքի գլխավոր մուտքի ու վեհարանի միջև եղած փոքր հրապարակը մաքրեցին կողմնակի մարդկանցից, որոնք նույնպես հետաքրքրությամբ սպասում էին, թե ինչ է կատարվելու վանքի գավիթում: Հրապարակը կողմնակի մարդկանցից ազատվեց, ու լսվեցին վանքի բազմաթիվ զանգերի՝ ականջ ծակող ղողանջները, որին հետևեց զինվորների շարքերի դասավորումը. նրանց դեմքերը ուղղված էին վեհարանի կամարակապ մեծ դարպասին. ըստ երևույթին սպասում էին կաթողիկոսի շքախմբի դուրս գալուն: Տեղում եղած ժողովուրդն ու զինվորների շարասյունը սպասողական դրության մեջ էին: Հենց այդ պահին Ամենայն հայոց ալեհեր կաթողիկոսը՝ Գևորգ Սուրենյանը, իր շքախմբով դուրս գալով վեհարանի կամարակապ բաց դռնից, դանդաղորեն բարձրացավ պարսպի երկարությամբ նախօրոք պատրաստված բեմահարթակ և հայացքն ուղղեց զինվորների խիտ շարքերին: Մինչ զորահանդեսի սկսվելը մի քանի պաշտոնական անձինք, այդ թվում կաթողիկոսը, հայրենասիրական կրքոտ ճառեր արտասանեցին: Հռետորներից յուրաքանչյուրը կոչ էր անում դուրս գալ կռվի, կրծքով պաշտպանել հայրենի հողն ու մեր սուրբ տաճարը թշնամիներից:

Գարնանային գեղեցիկ օր էր. հրապարակում կանգնած զորասյուները սևազգեստ հոգևորականների առաջնորդությամբ, խաչվառներով անցնում էին կաթողիկոսի շքախմբի առջևից և այնտեղից էլ զանգերի ղողանջների ներքո հեռանում էին հրապարակից՝ ուղղություն վերցնելով դեպի Սարդարապատի ռազմաճակատ, արյունռուշտ թուրք դահիճների դեմ կենաց-մահու պայքար մղելու: Ռազմաճակատ մեկնող այդ զորամասերի շարքերում կային Հայաստանի բոլոր բնակավայրերից, մեծամասամբ կամավորներ, նրանց թվում՝ ղարաբաղցիներ, սասունցիներ, մշեցիներ, վանեցիներ, շատախցիներ, անգամ էջմիածնի ճեմարանի աշակերտներ ու մեծ թվով հոգևորականներ: Պոկվելով վեհարանի պարսպից՝ մենք չորս ընկերներով մյուս պատանիների ու քաղաքացիների հետ միասին Իգդիր տանող խճուղու երկու կողմերից դանդաղորեն ուղեկցում էինք ռազմաճակատ մեկնող զինվորներին, իսկ շատերը՝ նաև իրենց հարազատներին: Քաղաքից դուրս եկող զինվորների ամենավերջին շարքերը հրանոթաձիգներն էին. նրանցից շատերը, կարճ կարաբին հրացաններով զինված, նստել էին հրանոթների լաֆետների[66] վրա, աշխուժորեն երգում էին զորավար քաջ Անդրանիկին նվիրված հայրենասիրական խրոխտ երգեր՝ աստիճանաբար հեռանալով մեզանից ու քաղաքից, իսկ մենք՝ խճուղու երկու կողմից գնացող պատանիներս, ձայնակցում էինք նրանց երգին.

Դարձյալ փայլեց Սասնա գլխին
Ազատության դրոշակ,
Կեցցե՛ Հայրենիք կոչելով՝
Բարձրացրին աղաղակ…

Ռազմաճակատ մեկնող զորամասերի վերջին վաշտերը հեռանում էին քաղաքից, իսկ մենք դեռ չէինք ուզում բաժանվել նրանցից մինչև վանքապատկան մեծ անտառի վերջը, որից հետո տրտմությամբ կանգ առանք: Այս անգամ էլ կամավոր գնալու մեր ցանկությունն ապարդյուն անցավ, քանի որ զորամասերի հրամանատարներից ոչ մեկը չուզեց մեզ իրենց հետ ռազմաճակատ տանել:

*
* *

Կարապետ աղայի բակի մեծ դարպասը կամաց թակեցի. բացեց ինքը՝ Եսթեր խանումը: Տեսնելով ինձ՝ նա խիստ դեմք ընդունեց ու հարցրեց.

[66] լաֆետ – հրետասայլ

– Ո՞ւր էիր գնացել, Սևո՛ւկ,– հարցրեց նա՝ հեզորեն նայելով դեմքիս. կարծես թե առաջին անգամ էր տեսնում ինձ:

– Վանքի գավիթ,– պատասխանեցի՝ մեղավոր մարդու պես գլուխս կախ գցելով:

– Ի՞նչ կար վանքի գավիթում այսքան ժամանակ:

– Ռազմաճակատ մեկնող զինվորներին էի ուղեկցում:

– Ի՞նչ գործ ունեիր դու ռազմաճակատ մեկնող զինվորների հետ,– ասաց նա խստությամբ:

– Նրանք իմ հայրենակիցներն են:

– Ովքե՞ր են քո հայրենակիցները,– հեգնեց նա քմծիծաղով:

– Սասունցիներ, մշեցիներ, շատախցիներ, վանեցիներ և բոլորը,– համարձակորեն պատասխանեցի ես՝ առաջին անգամ ուղիղ նայելով նրա կապույտ ու խոշոր աչքերին:

– Չգիտեի՞ր, որ աղայի հետ այգին պետք է գնայիր,– ասաց նա՝ բակի մեծ դուռը ամուր փակելով իմ հետևից:

– Ինձ այդ մասին աղան ոչինչ չէր ասել,– պատասխանեցի ես ջղաձգորեն:

– Դե լավ, այս անգամ ներում եմ, իսկ կրկնվելու դեպքում վարժարան հաճախելուց կզրկվես,– ասեց խանումը՝ կարգադրելով իր մոտ կանչել հացթուխ Սիրանուշին:

*
* *

Գարնանային այդ օրերին մշտապես անհանգիստ վիճակում էի և ամեն կերպ աշխատում էի դուրս պրծնել Կարապետ աղայի տնից: Հատկապես այն օրերին, երբ ամենուրեք խոսում էին հայ-թուրքական պատերազմի մասին, մի պատերազմ, որի շորշոփները ընդհուպ մոտեցել էին Արարատյան լայնածավալ դաշտավայրին:

Դուրս գալով տիրոջը պատկանող կանաչապատ մեծ պարտեզից՝ յուրաքանչյուր քայլափոխի հանդիպում էի ռազմաճակատից վերադարձող մեծ թվով վիրավոր զինվորների, նոր գաղթականների խմբերի, որոնք երկրորդ անգամ էին գաղթել մեծ մասամբ Կարսից, Ալաշկերտից, Կաղպիից և այլ վայրերից: Գաղթողները մեծ վշտով պատմում էին իրենց զրկանքների ու կրած տառապանքների մասին: Նրանք զրկվել էին թե՛ հայրենական հողից ու ջրից, թե՛ ունեցվածքից, իսկ շատ-շատերն էլ՝ նաև հարազատներից: Ճեմարանի Կարմիր խաչի հիվանդանոցի բակում շատ էին վիրավոր զինվորները: Թափառելով դեսուդեն՝ վեր-

ջապես ինձ հաջողվեց անսպասելիորեն հանդիպել համագյուղացի զինվորներից մեկին: Տեսնելով նրան՝ ուրախությանս չափ ու սահման չկար: Գաբրիելը իմ համագյուղացին էր՝ զոհված մեծ եղբորս անբաժան ընկերը:

1917 թվականին քույրս նույնպես Վարդանի հետ էջմիածնից վերադարձել էր երկիր՝ հայրենի գյուղ, բայց շատ շուտով մեր կապը խզվեց նրանց հետ և այն օրից չգիտեի՝ նրանք ողջ են, թե մեռած: Գաբրիելի հետ սրտաբուխ ողջագուրվեցինք. նա մանրամասն պատմեց Վան քաղաքում ապրող բնակչության երկրորդ նահանջի մասին և ավելացրեց, թե եղբայրս՝ Վարդանը, ողջ է և տվյալ պահին գտնվում է Վանսկի (Վանի – *խմբ.*) գնդում, որի հրամանատարը Տիգրան Բաղդասարյանն է: Գաբրիելի հետ զրույցից պարզվեց նաև, որ նշված գունդը 1918 թվի սկզբներին գտնվելիս է եղել Վան քաղաքում, իսկ թուրքերի հարձակման ու քաղաքի պաշարման ժամանակ նրանք նույնպես, ճեղքելով թշնամու սեղմ օղակը, նահանջել են Օրգով՝ բնաջնջումից ազատելով գաղթող ժողովրդի մի զգալի մասին:

Լսելով Վարդանի ու Արմենակի ողջ լինելու լուրը՝ հուզված և ուրախացած հրաժեշտ տվեցի նրան ու անմիջապես հեռացա Կարմիր խաչի հիվանդանոցի տարածքից, որտեղ հավաքվել էին նաև այլ մարդիկ՝ հետաքրքրվելով իրենց անհույս կորած հարազատների ճակատագրով:

Նույն երեկոյան հանդիպեցի Սարգսին, որի մեծ եղբայր Արմենակը Վարդանի հետ գտնվում էր Օրգովում:

Մտնելով Սանամ մայրիկի խրճիթ՝ ես նրանց բոլորին շատ ուրախ տրամադրության մեջ տեսա:

– Գիտե՞ք, որ Վարդանն ու Արմենակը գտնվում են Օրգովում, – հայտնեցի ես՝ ջերմորեն գրկելով ընկերոջս:

– Մենք քեզնից ավելի շուտ ենք լսել,– ասաց Սարգսի մայրն ուրախացած և սրբելով աչքերից թափվող ուրախության արտասուքները՝ ավելացրեց,– ա՜խ, երանի թե տեսնեի իմ սիրելի որդուն:

– Օրգովը շատ մոտ է, կարող ենք գնալ այնտեղ՝ նրանց տեսության ու շուտ վերադառնալ,– ասաց Սարգիսը՝ նայելով մորը, որն այդ օրը շատ ուրախ տրամադրության մեջ էր:

– Ես ու Վաղարշակը պատրաստ ենք մեկնելու թեկուզ վաղը, միայն թե Սանամ մայրիկը համաձայն լինի,– հուշեցինք Սարգսին՝ սպասելով, թե ինչ կասի մայրը: Որպեսզի համոզի իր տարակուսած մայրիկին, Սարգիսը նաև ավելացրեց, թե Օրգով մեկնողներ շատ կան.

– Մենք էլ կարող ենք միանալ նրանց և երկու օրից վերադառնալ, նամանավանդ ճանապարհներին ծանոթ ենք:

Լսելով որդուն՝ Սանամ մայրիկը մի պահ մռայլվեց, ըստ երևույթին չուզեց, որ զավակն այդ փոթորկալի ու դաժան օրերին իրենից հեռու գնա, այն էլ ռազմաճակատին շատ մոտ, անիծված հին հետքերով, որտեղից սարսափելի տանջանքներով փրկել էր իր չորս զավակներին. միջնեկը Սարգիսն էր:

– Չեմ թողնի, որ զավակս նորից դաժան թուրքերի գերության մեջ ընկնի,– ասեց Սանամն արտասուքն աչքերին:

– Մենք գնալու ենք Օրգով՝ յուրայինների մոտ, այլ ոչ թե հայրենի գյուղ, որտեղ թուրքերն են տիրում,– պատասխանեց Սարգիսը՝ հանգստացնելով մորը:

Շատ խոսելուց հետո Սանամ մայրիկը սկսեց տատանվել, չեմ-չում անել, այնուամենայնիվ մեզ հաջողվեց համոզել նրան երկու օրից հետո ճանապարհ ընկնել դեպի Օրգով, որն ըստ տեղեկությունների դեռ գտնվում էր հայկական զորքերի ձեռքում: Հաջորդ օրը՝ երեկոյան, կրկին հավաքվեցինք Սանամ մայրիկի տանը, այս անգամ Վարթոյի ու Աղասու մասնակցությամբ:

Վարթոն (Վարդան) մեր հին ընկերներից մեկն էր, մեզնից երկու տարով մեծ: Նա դեռ հայրենի երկրում ակտիվորեն մասնակցում էր մեր խաղերին, կազմակերպված արշավներին, մեզ հետ երկու անգամ թուրքերին գերի էր ընկել, շատ զրկանքներ կրել, բայց երբեք չէր ընկճվել: 1915 թվի օգոստոս ամսին՝ մեծ գաղթի ժամանակ, էջմիածնի վանքապատկան ծառախիտ անտառում բռնկված խոլերայից մահացան նրա մայրը, երկու քույրերն ու փոքր եղբայրը, իսկ ինքը Մնոյի պես հանկարծակի անհայտացավ, և ահա 1918 թվի սկզբներին մենք նրան կրկին տեսանք Վաղարշապատի որբանոցի շրջակայքում՝ որպես թափառաշրջիկ:

Ահա մեր նախկին ընկերը՝ այդ թափառաշրջիկը, իրեն բախտակից ընկերոջ՝ Աղասու հետ մեծ ցանկությամբ միացավ մեր խմբին, ու երկու օրից հետո դուրս եկանք Վաղարշապատից՝ ուղղություն վերցնելով դեպի Օրգովի ռազմաճակատ: Դուրս գալով քաղաքից՝ մենք գնում էինք Իգդիր տանող մեծ խճուղով, այն էլ գիշերով:

Առաջին օրը գնում էինք շատ հանգիստ՝ հանդիպելով գաղթականների փոքրաթիվ խմբերի, որոնք տեղահան էին եղել ընդամենը երկուսից չորս օր առաջ: Հասնելով Մարգարա գյուղի ծայրամասի այգինե-

րին՝ մենք մի պահ կանգ առանք՝ նպատակ ունենալով գաղթողներից իմանալու, թե ինչ է տեղի ունենում Սալմաստ գավառում: Զրուցելով գաղթողների և այգիներում աշխատող գյուղացիների հետ՝ մեզ համար պարզ դարձավ, որ Արաքս գետի վրա եղած երկաթյա մեծ կամուրջը գտնվում է զինվորների հսկողության տակ, ուստի դժվար թե մեզ հաջողվի անցնել հակառակ կողմը: Լսելով այդ մասին՝ մենք ստիպված պետք է վերադառնայինք: Հակառակ դեպքում պետք է լողալով անցնեինք փրփրահոս Արաքս գետի մյուս կողմն ու շարունակեինք մեր ճանապարհը դեպի Իգդիր: Դժբախտաբար մեր մտադրության իրականացումը դժվարացավ, քանի որ Վաղարշակը վախենալով կտրականապես հրաժարվեց գետը մտնելուց ու ցանկություն հայտնեց վերադառնալ իր հացթուխ մայրիկի տուն:

– Ինչո՞ւ եք բերել այդ վախկոտին,– զայրացած ասաց Վարթոն և առաջարկեց նրան հետ ուղարկել, այլապես նա կարող էր մեծ չարիք պատճառել:

Հետճաշյա պարզ երեկո էր. արևը դեռ մայր չէր մտել. Իգդիրից շարունակ գաղթողներ էին գալիս: Կանայք ու երեխաները, սայլերին նստած, դանդաղորեն շարժվում էին դեպի Վաղարշապատ ու Երևան: Գաղթողների երթը դեպի Վաղարշապատ հնարավորություն տվեց մի կերպ անփորձ Վաղարշակին հանձնել նրանցից մեկին՝ խնդրելով նրան ողջ և առողջ տեղ հասցնել, իսկ մենք չորս ընկերներով նստեցինք մեծ խճուղու եզրին՝ սպասելով բախտի քմահաճույքին: Վաղարշակից ազատվելով՝ մեր տրամադրությունը կարծես թե բարձրացավ, ուստի նստած տեղից վեր կենալով՝ ընդհուպ մոտեցանք գետափին, բայց հենց այդ պահին էլ խճուղու ամբողջ երկարությամբ երևացին մեծ թվով ձիաքարշ սայլեր, որոնք շարժվում էին դեպի ռազմաճակատ:

Գետափից վերադառնալով խճուղու եզր՝ մենք փորձեցինք հաշվել սայլերի թիվը: Նրանք բավականին շատ էին, բոլորն էլ բեռնավորված ռազմանյութերով և խնամքով ծածկված բրեզենտե հաստ ծածկոցներով: Վերջապես մոտենում էր վերջին ձիաքարշը: Այդ սայլը նույնպես ծածկված էր կամարաձև ծածկոցով, և հենց այդ սայլի հետևից վեր բարձրացավ Վարթոն, նրան հետևեցին Սարգիսն ու Աղասին, և մենք երեքով, օգտվելով առիթից, մի ակնթարթում հայտնվեցինք սայլում: Սայլի հետևի դուռը հաստ բրեզենտով փակելուց հետո մենք հանգիստ պառկեցինք ռազմամթերքներով լի արկղերի վրա ու խիստ հոգնած լինելու պատճառով որոպեներ հետո քնեցինք: Չգիտեմ արագ էինք շարժ-

վում, թե դանդաղ, այնուամենայնիվ մայիսյան գիշերը կարճ տևեց: Սայլի կամարաձև ծածկոցի անցքերից շուտով երևացին լուսաբացի փայլող պարզ շողերը, բայց գումակի երկար շարանն իր հուժկու դղրդոցներով դեռ շարունակում էր առաջ շարժվել՝ հետևում թողնելով Արաքս գետն իր երկաթյա մեծ կամուրջով: Գարնանային լուսաբացի զովաշունչ հովն էր փչում: Սայլերի համաչափ դղրդոցների ազդեցության ներքո կրկին ընկել էինք խոր քնի մեջ՝ բոլորովին չմտածելով, թե վերջապես որտեղ ենք հասել, և ուր են գնում մեզ տանող սայլերը: Առավոտյան ամբողջ գումակը կանգ էր առել, դադարել էին սայլերի դղրդոցները, ձիերի սմբակների դոփյունները: Այդ վայրկյանին կարծես թե ամենուրեք խաղաղություն էր տիրում. միայն խուլ լսվում էին առանձին սայլապանների խոսակցությունները: Վարթոն ծածկոցի ճեղքից դուրս նայեց ու միանգամից մեզ պառկած տեղից վեր բարձրացրեց:

– Իջե՛ք, հասել ենք արդեն,– ասաց նա՝ սայլի ծածկոցի կապերն արձակելով:

Սայլից առաջինը ցած թռավ Սարգիսը, նրան հետևեցին Վարթոն և Աղասին, սակայն մինչև ես կպատրաստվեի իջնել, սայլապանը թևիցս պինդ բռնեց:

– Որտեղի՞ց եք և ինչո՞ւ եք մտել իմ սայլի մեջ,– հարցրեց նա՝ պատրաստվելով մտրակով հարվածելու:

– Մի՛ ծեծիր, մորեղբա՛յր,– խնդրեց Վարթոն՝ մոտենալով սայլապանին:

– Ովքե՞ր եք և ինչո՞ւ եք չորսով նստել իմ ֆուրգոնի մեջ,– հարցրեց նա՝ այս անգամ մեղմացած:

– Էջմիածնից ենք գալիս, կես ճանապարհին նստեցինք քո ֆուրգոնը, կամավոր ենք գրվել, գնում ենք թուրքերի դեմ կռվելու,– ասաց ընկերս՝ կրկին խնդրելով, որ մեզ ների:

Ըստ երևույթին Վարթոյի չհիմնավորված պարծենկոտ հայտարարությունը որոշակի ազդեցություն թողեց սայլապանի վրա, այդ պատճառով նա, դեռ զայրույթը չանցած, առաջարկեց, որ շուտ հեռանանք սայլից, քանի դեռ հեծյալ զինվորներից որևէ մեկը մեզ չի նկատել: Շնորհակալություն հայտնելով բարի սայլապանին՝ մենք շտապ հեռացանք այդտեղից և առաջին իսկ պատահած նեղլիկ փողոցով մտանք Իգդիր կոչվող գյուղաքաղաքի կենտրոնական թաղամասը:

ԱՐՇԱՎ ԴԵՊԻ ՕՐԳՈՎ

Մենք դեռ վաղուց՝ առաջին գաղթի ժամանակ, եղել էինք այդ կանաչապատ գյուղաքաղաքում, զգացել նրա բնակիչների հյուրընկալ և հոգատար վերաբերմունքը հայ գաղթականների նկատմամբ, իսկ այժմ նախկինում այնքան խաղաղ Իգդիրն ամբողջովին կորցրել էր իր տեսքն ու անդորրը: Ամեն կողմից լսվում էին լացի ու անեծքի ձայներ: Կանայք ու հասակավոր տղամարդիկ դուրս ու ներս էին անում՝ կանչելով իրենց երեխաներին ու մերձավորներին, հորդորելով հեռու չգնալ: Մի այլ փողոցում իրենց ունեցվածքը խրճիթներից դուրս բերելով՝ բարձում էին սայլերին ըստ երևույթին քաղաքից գաղթելու համար: Մի խոսքով՝ միևնույն պատկերն էր կրկնվում, ինչ տեղի էր ունեցել 1915 թվի մեծ գաղթի ճանապարհին: Տեսնելով այդ իրարանցումը՝ մի պահ ցանկացա համոզել ընկերներիս վերադառնալ՝ խուսափելու երրորդ անգամ թուրքերին գերի ընկնելուց, սակայն Սարգիսը, կռահելով իմ միտքը, ուղղակիորեն համառեց:

– Մենք տանջանքներով հասել ենք այստեղ Վարդանին ու Արմենակին տեսնելու նպատակով, այլ ոչ թե վերադառնալու,– ասաց նա՝ միաժամանակ հարցնելով Վարթոյի և Աղասու կարծիքը:

– Համաձայն եմ գնալու թեկուզ մինչև Վան քաղաք,– պարծենկոտությամբ պատասխանեց Վարթոն և առաջարկեց անմիջապես դուրս գալ քաղաքից ու մեծ խճուղով բարձրանալ դեպի Օրգով, որտեղ պետք է լինեին հայ զինվորների դիրքերը:

Այդպիսով՝ մինչ Օրգով մեկնելը տեղի առատածեռն բնակիչներից մեզ անհրաժեշտ ուտելիքի պաշար մուրալով, առանց լրջորեն դատելու, ճանապարհ ընկանք՝ համոզված լինելով, թե կգտնենք մեր հարազատներին: Շարժվում էինք առաջ՝ չմտածելով գալիք լուրջ վտանգների մասին: Օրվա ամենաշոգ ժամերն էին. քրտինքի մեջ կորած՝ շարունակում էինք քայլել դեպի խիստ թեքություն ունեցող սարալանջը: Սկզբում քայլում էինք լայն խճուղով, իսկ որոշ հատվածներում ճանապարհը կարճացնելու նպատակով՝ նեղ արահետներով: Շարժվում էինք դեպի սարը իսկական հետախույզների պես: Առաջ էինք գնում՝ մանրազնին ստուգելով շրջապատը՝ փոքրիկ ձորակները, խճուղու երկու կողմերի փոսերը, քարափները, կամուրջների տակերը, և զարմանալին այն էր, որ այդ բանուկ մեծ խճուղիով գնալիս մենք որևէ կենդանի էակի չէինք հանդիպում:

Մեծ համբերությամբ էլի մի քանի կիլոմետր առաջ շարժվելով՝ վերջապես սարալանջի թեք հատվածի ոլորապտույտ խճուղու երկու կողմերում ականատես եղանք ոչ թե դատարկության, այլ կատարյալ մի ժխորի: Այնտեղ կային ջարդուփշուր արված բազմաթիվ սայլեր, տնային իրեր, հացահատիկով լի պարկեր, մեծ թվով կոտորված եղջյուրավոր անասուններ, իսկ խճուղու երկու կողմերի առվակների ու թփերի մեջ նաև դիակներ: Այս տեսարանից պարզ երևում էր, որ այդտեղ տեղի է ունեցել ահեղ մարտ, բայց և այնպես կռվող ընդդիմադիր կողմերից որևէ մեկին չհանդիպեցինք: Տեսնելով դեպի Օրգով տանող խճուղում և սարալանջում տեղի ունեցած կոտորածների հետքերը՝ մեզ ոչինչ չէր մնում անել, քան անհապաղ այդտեղից հեռանալ, այն էլ դեպի էջմիածին, հակառակ դեպքում ընկնելու էինք թուրք զորքերի կողմից պատրաստված ծուղակը: Այդպես Օրգով գնալու կես ճանապարհից վերադառնում էինք համարյա թե վազելով, փախչում էինք՝ անգամ հետ չնայելով:

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՎԻՐԱՎՈՐ ԶԻՆՎՈՐԻՆ

Վերադառնում էինք ոչ թե մեծ խճուղով, այլ նեղ արահետներով, միաժամանակ կողմնորոշվելու նպատակով մեր տեսադաշտից բաց չթողնելով նաև Իգդիր տանող ճանապարհը: Սարալանջից իջնելիս խճուղուց ոչ հեռու՝ քարաբեկորների մոտ, հանկարծ մի անսովոր խորը տնքոց լսվեց: Զգուշության նպատակով մենք անմիջապես թաքնվեցինք բարձր, կանաչ խոտաբույսերի մեջ՝ հետևելով աղերսանքի նմանվող հառաչանքին:

– Մոտենանք, տղանե՛ր, գուցե կոտորածից ազատված հայ գաղթականներից մեկը լինի,– ասաց Վարթոն և տեղից վեր կացավ, իսկ մենք հետևեցինք նրան:

Մոտենալով քարաբեկորին՝ մենք այնտեղ գտանք թիկունքի վրա պառկած մի հայ զինվորի: Մեզ տեսնելով զինվորը ձեռքը մեկնեց կողքին դրված հրացանին, բայց տեղից վերցնել չկարողացավ:

– Ովքե՞ր եք,– հազիվ արտասանեց զինվորը՝ միաժամանակ ձեռքը մոտեցնելով շուրթերին:

– Ծարավ է,– ասաց Սարգիսը՝ բաց անելով իր մոտ եղած ջրով լի զինվորական տափաշիշը, ու զգուշորեն մոտեցրեց զինվորի շուրթերին:

Խմելով Սարգսի տված մի քանի կում ջուրը՝ վիրավորի երեսին կարծես թե ժպիտ երևաց, բայց աչքերը կրկին փակեց՝ խորը հոգոց հանելով: Մենք չորս ընկերներով սպասում էինք, թե ինչ կասի վիրավորը,

բայց քիչ հետո դարձյալ գլուխը թեքեց դեպի մեզ ու նորից ջուր խնդրեց: Այս անգամ ես մոտս եղած տափաշիշը մոտեցրի նրան և առաջարկեցի խմել որքան որ ցանկանում է, բայց նա կրկին երկու կումից ավել չխմեց: Ջուրը խմելուց հետո գոհունակությամբ հետ տվեց տափաշիշը և հասկացրեց, որ շատ խմելով՝ մեզ կթողնի առանց ջրի: Իհարկե, մենք ջուր ունեինք, այն էլ յոթ տափաշիշ: Այն օրերին ամեն մեկս ուներ ոչ միայն տափաշիշ, այլև դանակ, լուցկի, աղ, թել ու ասեղ, մի խոսքով այն ամենը, ինչ հարկավոր էր մի թափառաշրջիկ որբ պատանու համար, այն էլ 1915-1918 թվականների սարսափելի օրերին:

Մեզ տեսնելուց և ջուր խմելուց հետո վիրավոր զինվորը կարծես թե մի պահ աշխուժացավ, բայց մեր հարցերին պատասխանել չկարողացավ: Որևէ խոսք անգամ չասաց. գուցե չուզեց խոսել: Նրա մարմնի վրա եղած վերքերից մեկը ոտքից էր, իսկ մյուսը՝ ձախ թևից, այն էլ առանց վիրակապի: Չնայած շտապում էինք, բայց մարդկային խիղճը թելադրում էր մեզ օգնել նրան նախ վերքը կապելու, իսկ սարալանջից դեպի Իգդիր տանելու մասին դեռ տատանվում էինք՝ վիճելով իրար հետ, թե արդյոք կարո՞ղ ենք այդ դժվար ճանապարհներով, առանց հարմարանքի, զինվորին տեղ հասցնել:

Արևն արդեն մայր էր մտնում՝ թողնելով իր ծիրանագույն շողքերը սարալանջի վերին մասերում, իսկ մենք դեռ չէինք որոշել վիրավորին մեզ հետ տանելու շատ դժվարին հարցը: Մեզ անհրաժեշտ էր առաջին հերթին վիրակապել նրա վերքերը, բայց դա ձեռնարկելու համար որևէ միջոց չկար: Այդ վտանգավոր պահին յուրաքանչյուրս ի սրտե ցանկանում էր ամեն կերպ օգնած լինել հայ զինվորին, նրան այդ ծանր դրությունից դուրս բերելու, որպեսզի չմնար այդպես արյունաքամ, այն էլ թշնամու ծուղակում:

Հիշեցի, թե ինչպես տարիներ առաջ քուրդ ավազակների գնդակից վերքեր էր ստացել հայրս: Այն սարսափելի օրերին մեր մեծ ընտանիքը գիշեր ու ցերեկ սգի մեջ էր, և բոլորն էլ համոզված էին, որ նա այլևս չի ապրի: Բարեբախտաբար գտնվեց մի պառավ հեքիմ, որը շատ շուտով բույսերի միջոցով բուժեց նրա վերքերը: Բուժումը կատարվում էր շատ հասարակ ձևով: Մեր բարեխիղճ հեքիմը օրական մի անգամ կտավի լաթով մաքրում էր վերքի երկու կողմերից դուրս եկած թարախն ու կրկին վրան դնում դաշտից բերված եզան լեզվի թարմ տերև, որն ամենուրեք աճում էր գյուղի շրջապատում: Մեծ ցավով հիշելով այդ դեպքերի տխուր պատմությունը՝ ես Վարթոյից պահանջեցի բերել եզան լեզու, և իսկապես, շատ շուտով մեծ քանակությամբ այդ բույսից գտնվեց:

Վիրավորը սպիտակեղեն համարյա թե չուներ, իսկ եղածն էլ ներկված էր տիրոջ արյունով, ուստի Աղասին ստիպված էր իր շապիկի կես մասը կտրատել, և հենց դրանով էլ կապեցինք նրա վերքերը: Այժմ մեզ մնում էր անմիջապես հեռանալ սարալանջից, բայց վերահաս գիշերվա պատճառով ստիպված էինք գիշերել քարափներում, այն էլ բաց երկնքի տակ: Վաղ առավոտյան արթնանալով՝ պատրաստվեցինք, որքան հնարավոր է, շուտ հեռանալ այդտեղից, քանի դեռ չէինք ընկել ծուղակի մեջ: Որքան շտապում էինք շուտ հեռանալ, այնքան նկատվում էր զինվորի հուզմունքը. ըստ երևույթին նա նկատում էր մեր մտադրությունը տեղից հեռանալու մասին, դրա համար էլ պառկած դիրքից դանդաղորեն թեքվեց կողքի՝ մի պահ ընկնելով մտածմունքի մեջ, ապա խնդրեց, որ իրեն մենակ չթողնենք: Մենք չորս ընկերներով նստել էինք քարաբեկորներից ոչ հեռու՝ կանաչ խոտերի մեջ, խորհում էինք, թե ինչ հնարքով կարելի կլինի վիրավորին հասցնել թեկուզ մինչև Իգդիր քաղաքի ծայրամասերի այգիները, որտեղ դեռ մեկ օր առաջ գյուղացիներից շատերը հող էին փորում:

– Նրա վերքերը թեթև են, մեր օգնությամբ կարող է քայլել,– ասաց Աղասին՝ նայելով վիրավորին:

– Կարող եմ քայլել, միայն թե օգնեք,– աղերսանքով պատասխանեց վիրավորը աշխուժացած:

Իրոք, նրա վերքերը այնքան էլ ծանր չէին, որ չկարողանար քայլել: Սակայն երեք օրվա արյունահոսությունից ու քաղցած մնալուց լրիվ թուլացել էր և տեղից շատ դժվարությամբ էր շարժվում. միայն մեկ օրվա մեր խնամքի շնորհիվ կարծես սկսել էր աշխուժանալ: Լսելով վիրավորի ցանկությունը տեղից հեռանալու մասին՝ մենք նրան երրորդ անգամ կերակրեցինք մեզ մոտ եղած ուտելիքի չնչին պաշարով, ապա կարգի բերելով նրա վերնազգեստը՝ առավոտ վաղ շատ դժվարությամբ հասցրինք Իգդիրի արևմտյան ծայրամասի այգիներ: Չնայած վիրավորը մեզ շատ չարչարեց, այնուամենայնիվ մենք անչափ ուրախ էինք, որ փրկել ենք մի հայ զինվորի կյանք և ազատել նրան թուրքերին գերի ընկնելուց: Սարալանջից վայր իջնելով, այն էլ ոլորապտույտ արահետներով՝ վիրավորը լրիվ թուլացել էր, բայց նա այդ մասին չէր արտահայտվում: Հասնելով մեծ խճուղու եզրին գտնվող այգիներից մեկին՝ նրա խնդրանքով կանգ առանք՝ միանգամից ընկնելով կանաչ խոտերի մեջ: Թվում էր, թե հանգստանալուց հետո շուտով կմտնենք քաղաք, վիրավորին Կարմիր խաչի կազմակերպությանը կհանձնենք, սակայն ծանր հոգնածությունից դեռ շունչ չառած՝ մի խումբ ձիավորներ շրջապատեցին մեզ ու հրամայեցին ձեռքներս վեր բարձրացնել:

– Ովքե՞ր եք,– հարցրեց նրանցից մեկը՝ ընդհուպ մոտենալով կանաչների մեջ պառկած վիրավոր զինվորին:

– Հայ ենք,– պատասխանեց Վարթոն:

– Ո՞վ է կանաչների մեջ պառկած մարդը,– անմիջապես հարցրեց հեծվորը՝ ձեռքը մեկնելով դեպի վիրավորը:

– Վիրավորված հայ զինվոր է,– այս անգամ պատասխանեց Աղասին՝ մոտենալով ձիավորին:

– Որտե՞ղ եք հանդիպել նրան,– հարցրեց հեծյալը՝ ձիուց վայր իջնելով:

– Օրգովի սարալանջում, երբ կես ճանապարհից վերադառնում էինք,– պատասխանեց Վարթոն՝ ձեռքը մեկնելով դեպի Մասիս սարի ու Օրգովի միջև ընկած հատվածը:

Տեղի ունեցած հարց ու պատասխանի պահին մեզ մոտեցան այլ հեծյալներ ևս ու անմիջապես ձիերից վայր իջան: Երևում էր, որ մեզ շրջապատող հեծյալները դասալիքներ էին որոնում, բայց չէին գտել, և ահա, շրջապատելով մեզ, ըստ երևույթին դասալիքների տեղ դնելով, շարունակ հարցեր էին տալիս: Հեծյալներից մեկը՝ սպայի համազգեստով, ոտքից գլուխ զննում էր մեզ. նախ մի պահ գլուխը շարժեց և ապա դիմելով Վարթոյին՝ հարցրեց, թե քանի տարեկան ենք:

– Չգիտեմ, – պատասխանեց ընկերս, որն ավելի մեծ ու փարթամ էր, քան մնացածս:

– Ի՞նչ նպատակով և ինչպե՞ս եք հասել այստեղ, որտեղ մարտեր են մղվում թուրքերի դեմ, – հարցրեց հեծյալը՝ կրկին գլուխը շարժելով:

Մեզ շրջապատող հեծյալներին պատմելով Օրգով գալու մեր նպատակի մասին՝ միաժամանակ խնդրեցինք, որ մեզ զենք տան՝ որպես կամավոր թուրքերի դեմ կռվելու:

– Երբևիցե կռվե՞լ եք թուրքի դեմ,– հարցրեց սպան՝ կրկին զննելով մեզ:

– Չենք կռվել, բայց մի թշնամի քուրդ շեյխի սպանել ենք,– պատասխանեց Սարգիսն ուրախացած:

– Եթե զենք չեք ունեցել, ապա ինչո՞վ եք սպանել,– հարցրեց նա զարմացած:

– Սկզբում քարերով, իսկ հետո թոնրի երկար շշով ծակեցինք անհավատի մարմինը,– համարձակորեն պատասխանեց Վարթոն:

– Ե՞րբ եք սպանել անհավատ շեյխին,– հարցրեց նա՝ ժպիտը երեսին:

– 1915 թվի մեծ գաղթի ճանապարհին:

– Ապրե՛ք, տղանե՛ր, հիմա վիրավոր զինվորը կմնա մեզ մոտ՝ բուժվելու, իսկ դուք ուղիղ կգնաք էջմիածին,– ասաց սպան՝ ցույց տալով ճանապարհը:

Ձիավորների հեռանալուց հետո մենք չորս ընկերներով, արդեն առանց վիրավոր զինվորի, հոգնած հետևեցինք նրանց մինչև ամայի դարձած գյուղաքաղաքի ծայրամասի ծառախիտ այգիները: Անջատվելով ձիավորներից ու գերությունից փրկված վիրավոր զինվորից՝ մենք առանց քաղաք մտնելու տեղավորվեցինք այգիներից մեկի դատարկ հնձանում ու քաղցած ստամոքսով անմիջապես քնեցինք մինչև հաջորդ լուսաբաց:

Վաղ առավոտյան արթնանալով՝ մենք անմիջապես դուրս եկանք մեծ այգու հնձանից և մի քանի րոպեից մտանք քաղաքի կենտրոնական փողոցներից մեկը՝ նպատակ ունենալով նախ ուտելու որևէ բան գտնել, իսկ հետո վերջին գաղթողների հետ վերադառնալ էջմիածին, որտեղից դուրս էինք եկել ընդամենը մի քանի օր առաջ: Մի փողոցից անցնելով հաջորդը՝ դժբախտաբար քաղաքը գտանք ամբողջովին դատարկ: Բնակիչների վերջին մասը ընդամենը մեկ օր առաջ էր ընդմիշտ հեռացել հարազատ վայրերից՝ թողնելով իրենց տունը, պարտեզն ու այգին: Միայն երևում էին ոչ մեծ թվով զինված մարդիկ, որոնք հապճեպորեն բարձում էին իրենց սայլերն ըստ երևույթին քաղաքից դուրս գալու համար: Միանալով գաղթողների վերջին քարավանին՝ մենք օրվա երկրորդ կեսին դուրս եկանք քաղաքից ու դանդաղորեն շարժվեցինք դեպի արևելք:

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՒՄԱԿՈՒՄ

Չգիտեմ շատ էինք գնացել, թե քիչ, հանկարծ մեր դիմաց երկու հեծյալներ երևացին, որոնց մի ամբողջ շարան ձիասայլեր էին հետևում: Մոտենալով գաղթողների առաջին քարավանին՝ հեծյալները մի պահ կանգ առան և անսպասելիորեն հրամայեցին անմիջապես հետ դառնալ:

– Ինչո՞ւ հետ դառնալ, ո՞րն է պատճառը,– հարցրեց քարավանի առջևից գնացող հասակավոր մարդը՝ սայլից վայր իջնելով:

– Դեպի Մարգարա գյուղ տանող ճանապարհը կտրված է, ծուղակի մեջ ենք մնացել,– պատասխանեց հեծյալ զինվորը և ավելացրեց, թե թուրքերը գրավել են Դաշբուռուն գյուղը, իսկ գլխավոր խճուղին ուժեղ կրակների տակ է առնված, ուստի Արաքս գետի մեծ կամրջով անցնելն անհնարին է:

– Իգդիր վերադառնալն ավելի վտանգավոր է,– ասաց հասակավոր մարդն ու առաջարկեց,– միակ ելքն է փոխել քարավանների առաջ-շարժման ուղղությունը. գուցե որևէ հնարքով դուրս գանք ծուղակից, հակառակ դեպում բոլորս կկոտորվենք,– վերջացրեց նա:

Այդ ծայրահեղ պահին երկու հեծյալներն իրենց հետևից շարժվող գումակի հետ կանգ էին առել: Նրանք հավաքվել էին գումակի առաջապահ ֆուրգոնների մոտ՝ որոշելու, թե ինչ հնարքով կարելի է դուրս գալ ծուղակից ու սայլերին բարձած ռազմամթերքը շուտափույթ կերպով հասցնել կռվող զորքերին:

Մինչ գումակին ուղեկցող հեծյալ զինվորները կորոշեին ծուղակից դուրս գալու ելքը, դադարից օգտվելով՝ մենք խճուղու երկարությամբ մի պտույտ կատարեցինք և մեծ ամոթխածությամբ կարողացանք մեզ անհրաժեշտ ուտելիքի պաշար մուրալ: Հոգատար էին ու առատաձեռն հատկապես կանայք ու մեզ հասակակից աղջիկները: Նրանք տալիս էին այն, ինչ որ ունեին՝ ցորեն, գարի, անգամ կորեկից թխած հաց, որ թխել էին նախորդ գիշերվա ընթացքում:

Մի քանի օրվա ուտելիքի պաշար ապահովելով՝ մենք դուրս եկանք գաղթողների շարքերից՝ ուղղություն վերցնելով դեպի Արաքս գետի մեծ կամուրջը, հույս ունենալով, որ թուրքերից աննկատ կարող ենք եթե ոչ կամրջով, ապա գետանցներից մեկով անցնել հակառակ կողմը: Կռահելով մեր խելահեղ մտադրությունը՝ հեծյալները, որոնք ձիերից վայր չէին իջել, նկատեցին մեզ ու ստիպեցին անմիջապես վերադառնալ:

– Ձեզ ասացինք, որ ճանապարհը փակ է, և կամրջով անցնելն անհնար է,– ասաց նրանցից մեկը՝ խորհուրդ տալով միանալ գաղթող քարավանին:

Զինվորականի հրամանից հետո, իհարկե, մեզ ոչինչ չէր մնում, քան նրանց ուղեկից դառնալ:

– Որտեղ՝ սայլերն, այնտեղ էլ՝ մենք,– ասաց Աղասին և առաջարկեց նստել՝ հանգստանալու:

Արևը վաղուց թեքվել էր լեռների հակառակ կողմը, միայն նրա ծիրանագույն վերջին ճառագայթներն էին երևում մեզնից ոչ հեռու Մասիսի ձյունապատ գագաթին, որ, իր հերթին փայլատակելով, լուսավորում էր թուրք զավթիչներից փրկված ժողովրդի փշոտ ճանապարհը: Մենք՝ չորս թափառաշրջիկներ, հանգիստ հետևում էինք երկու հեծյալների գլխավորած սայլերի շարասյանը, սակայն չգիտեինք, թե որտեղ ենք գտնվում և ուր ենք գնում այդ մութ գիշերով: Այնուամենայնիվ գնում էինք, իսկ շատ դեպքերում էլ, ընկնելով կավախառն ցեխերի մեջ, ամ-

բողջապես ջուր դառնում: Դեռ երեկոյան՝ մթնշաղի թափանցիկ լույսի տակ, կարողանում էինք շատ թե քիչ կողմնորոշվել, բայց շուտով այլևս չկարողացանք:

Ամենուրեք խավար էր. չէր երևում ոչ մի ծառ ու թուփ, անգամ Արարատյան լայնածավալ դաշտերում եղած գյուղերից որևէ մեկը: Միայն շատ հեռվից թույլ կերպով նշմարվում էր կապույտ հորիզոնը: Թվում էր, թե երկինքը ամուր նստել է լեռների բարձր գագաթներին. կարծես թե նա իր բյուրավոր աստղերով վահանի պես պաշտպանում է մեզ գալիք փոթորիկներից: Երկար գնալուց բավականին հոգնեցինք, ուստի մեր ղեկավար Վարթոյի առաջարկությամբ նստեցինք հանգստանալու, մինչև հետ մնացած ձիասայլերը կհասնեին առաջ շարժվողներին: Հեծյալ զինվորներից մեկը, որը հետախուզում էր ճանապարհները, առջևից վերադառնալով, շտապեցնում էր հետ մնացողներին արագ շարժվել ժամանակին տեղ հասնելու համար, բայց թե որն էր այդ տեղը, մեզ հայտնի չէր:

Հաղթահարելով գյուղական ճանապարհներին հանդիպող դժվարությունները՝ վերջապես զինամթերքով բարձված բոլոր սայլերը անցան, մնում էր վերջինը, որի տերը գոռալով մտրակում էր հոգնած անասուններին՝ նպատակ ունենալով մյուսներից առաջ անցնել: Օգտվելով սայլապանի գոռգոռոցից՝ մենք անմիջապես սայլի հետևի կամարակապ դռան կապերն արձակեցինք և առանց որևէ դժվարության բարձրացանք նրա մեջ ու հոգնածությունից շատ շուտով քնեցինք:

*
* *

Արթնացանք լուսաբացին, ճիշտ այն պահին, երբ հեծյալ զինվորների հրամանով սայլապանները պատրաստվում էին դատարկել իրենց ծանր բեռը:

Այն պահին, երբ սայլապանը պատրաստվում էր առաջ տանել իր սայլը, որի մեջ էինք գտնվում, նրանից աննկատ մեկս մյուսի հետևից դուրս ցատկեցինք՝ խառնվելով շրջապատում եղած մարդկանց:

– Շատ էժան պրծանք,– ծիծաղելով ասաց Սարգիսը և ավելացրեց,– դուք թաքնված մնացե՛ք, իսկ ես որևէ մեկից իմանամ, թե որտեղ ենք գտնվում:

Սարգիսը դանդաղում էր, ավելի շուտ չէր ուզում, որ գումակի հեծյալ զինվորներից որևէ մեկը մեզ նկատի, ուստի շրջանցելով սայլերը՝ նա մոտեցավ տեղում կանգնած զինվորներից մեկին՝ հարցում անելու:

Մինչ Սարգիսը կվերադառնար եղեգնուտները, սայլապանները շատ շտապ դատարկեցին ռազմամթերքը ու հերթականությամբ սկսեցին հեռանալ: Իհարկե, առավոտյան այդ ժխորում որևէ տեղեկություն ստանալ մեզ չհաջողվեց: Միայն սայլերի ու հեծյալ զինվորների հեռանալուց հետո տեղում եղած քաղաքացիական հագուստով հատուկենտ մարդկանցից իմացանք, որ մեծ հրաշքով դուրս ենք եկել ծուղակից և գտնվում ենք երկաթգծի Կամշլու կոչվող կայարանից ոչ հեռու՝ եղեգնուտներով շրջապատված մի ամայի վայրում, իսկ թե ինչպես և որ ճանապարհներով ենք անցել Արաքս գետի հակառակ կողմը, այդպես էլ չիմացանք:

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏՈՒՄ

Մենք դեռ թաքնված էինք եղեգների մեջ. մեզ ոչ ոք չէր նկատում, և կարող էինք այդտեղից հեռանալ դեպի էջմիածին, մանավանդ կողմնորոշվում էինք տեղանքում, սակայն մեր մտադրությունն այլ էր. մնալ այդտեղ ու որպես կամավոր կռվել թուրքերի դեմ:

Մեզնից ոչ հեռու իրար վրա կուտակված ռազմամթերքով լի արկղեր էին գտնվում, որից այն կողմ՝ մի զինվորական ու մեզ հասակակից քսանից ավելի պատանիներ: Նկատելով նրանց՝ մենք, շրջանցելով ռազմամթերքի պահեստը, դանդաղորեն մոտեցանք:

– Ովքե՞ր եք,– հարցրեց տեղում կանգնած զինվորներից մեկը՝ նայելով մեր ցեխոտված ու աննախանձելի տեսքին:

– Վաղարշապատից ենք գալիս, ուզում ենք կռվել թուրքի դեմ,– պատասխանեց Վարթոն՝ նայելով ինձ ու Աղասուն:

– Հրացաններ ունե՞ք,– հարցրեց երկրորդ զինվորը հեգնական ժպիտով:

– Չունենք,– կտրուկ պատասխանեց ընկերս և ավելացրեց, թե կամավոր գրվելուց հետո հրամանատարները կտան մեզ հրացան և փամփուշտ:

– Կրակել գիտե՞ք,– հարցրեց երրորդ զինվորը՝ շարժելով իր երեքգծանի հրացանը:

– Գիտենք,– պատասխանեցի ես՝ պատմելով, թե մեծ գաղթի ճանապարհին ինչպես Ոսկեհատ քույրիկի կողմից ուրագով գլխատված օնբաշու հրացանով Մնոյի հետ սպանեցինք երկու թուրք ասկյարի:

– Լավ, եթե այդպես քաջ եք եղել, ապա սպասե՛ք ձեր մասին զեկուցեմ մեր պարոն սպային,– հեգնանքով ասաց զինվորն ու հեռացավ դեպի ռազմամթերքից ոչ հեռու՝ հողաթմբի հակառակ կողմը:

Մի քանի րոպեից հետո ուրախ-ուրախ վերադառնալով՝ երիտասարդ զինվորը մեզ տարավ հայ սպաներից մեկի մոտ, իհարկե նախօրոք զգուշացրեց, որ նրան ներկայանալիս զինվորականի պես պատվի առնենք և խոսենք համարձակ, միաժամանակ խնդրենք, որ չորսիս էլ ուղարկեն ռազմաճակատի առաջին գիծ: Անցնելով հողաթմբի հակառակ կողմը՝ մենք այնտեղ տեսանք ոչ միայն բարձրաստիճան սպային, այլև մի ամբողջ խումբ հոգևորականների, որոնց թվում էին էջմիածնի վանքի երկու վարդապետներ, ճեմարանի նախկին ուսանողներ, մեր հին բարեկամ շատախցի Տաճատը, դասախոսներ ու մի շարք այլ մարդիկ. ինչո՞ւ էին նրանք հավաքվել այդտեղ՝ հայտնի դարձավ հաջորդ օրվա ընթացքում, երբ դարձյալ հանդիպեցինք Տաճատին:

Սպային առաջինը մոտեցավ Վարթոն. նա զեկուցեց ճիշտ այնպես, ինչպես թելադրել էր մեզ ուղեկցող զինվորը: Նույն զգաստ վիճակում մոտեցանք նաև մենք երեքով: Տեսնելով ինձ ու Սարգսին՝ ըստ երևույթին վարդապետներից մեկը ճանաչեց մեզ և աչքերը խեթ հառելով երկուսիս՝ զայրացած հարցրեց.

– Ինչո՞ւ եք թողել վարժարանն ու եկել այստեղ,– հարցրեց նա ու ավելացրեց, որ մենք անմիջապես վերադառնանք՝ հասկացնելով, որ ռազմաճակատը մեր տեղը չէ:

Մինչ մեզ ուղեկցող զինվորը կկատարեր հոգևորականի ցանկությունը, քարաբեկորի վրա նստած Գրիգոր անունով երիտասարդն ասաց.

– Հա՛յր սուրբ, այս պատանիները հարկավոր են մեզ և շատ կօգնեն զինվորներին:

– Ճիշտ է,– նկատեց պարոն Գրիգորյանը, – նրանք ոչ միայն կապավոր կարող են լինել, այլև փամփուշտ ու ջուր կհասցնեն խրամատներում կռվող զինվորներին, – ասաց սպան և ավելացրեց, որ ռազմաճակատի առանձին հատվածներում մեզ նման պատանիներ և կանայք շատ կան, որոնցից շատ գոհ են:

Լսելով ճեմարանավարտ Գրիգորյանին՝ վարդապետը փոխեց իր զայրացած խրատական տոնը, միանգամից մեղմացավ և ուրիշ ասելիք չունենալով՝ համաձայնեց նրանց հետ:

Տեղում նստած վարդապետը իմ և Սարգսի հին ծանոթներից մեկն էր, որին 1915 թվի ամռանը մենք Ոսկեհատ քույրիկի հետ հանձնեցինք գերությունից փրկված Հայոց ձորի գյուղերից մեկի եկեղեցու Ավետա-

ռանը: Նա Վան քաղաքի հերոսամարտերի մասնակիցներից մեկն էր՝ շեղ աչքերով Դանիել վարդապետը: Իսկ Տաճատը ճեմարանի աշակերտն էր, որին ծանոթ էինք դեռ 1915 թվականից, երբ Մնոյի հետ նրան հանդիպեցինք մեծ գաղթի ճանապարհին՝ Բերկրիի ձորում: Տեսնելով Դանիել վարդապետին ու Տաճատին՝ մենք ավելի աշխուժացանք՝ համոզված լինելով, որ նրանք թույլ կտան մեզ մնալ ռազմաճակատում, կռվել թուրք զավթիչների դեմ: Ուրախ-ուրախ հեռանալով հրամանատարական կետից՝ մենք կրկին մոտեցանք այն նույն խմբին, որտեղից զինվորի ուղեկցությամբ քիչ առաջ հեռացել էինք: Այդ պահին սաստիկ քաղցած էինք ու հոգնած. հացով լի մեր ուսապարկերը դատարկվել էին դեռ անցած գիշեր. դրա համար էլ ստիպված եղանք ուտելիք խնդրել ուրիշներից: Արդեն ուշ գիշեր էր. ուտելուց հետո մեզ հովանավորող զինվորի թույլատրությամբ պառկեցինք ցերեկվա արևից տաքացած փափուկ ավազին ու մի ակնթարթում քնեցինք:

Հանկարծ զինվորներից մեկը մեզ արթնացրեց ու հրամայեց հետևել իրեն: Մութ և ամպամած գիշեր էր, գնում էինք Կամշլու կայարանից Խաթունարխ տանող երկաթգծի հատվածով: Խմբին ուղեկցող զինվորը, ծանոթ լինելով տեղանքին, մեզ տարավ այնտեղ, որտեղ հավաքվել էին մեզ հասակակից պատանիներ, որոնք նույնպես սպասում էին մարտական հանձնարարություն ստանալուն:

Հավաքվելով ռազմամթերքի մի այլ պահեստի մոտ, որտեղ կողք կողքի շարված էին նաև ջրով լի տակառներ, առաջավոր գծի հատվածների բաժանում կատարեցին, թե ով որտեղ պետք է մեկնի՝ որպես ջրկիր ու փամփուշտի մատակարար: Ստանալով զինվորականի հրամանը՝ մենք չորս ընկերներով խնդրեցինք, որ մեզ նույն հատվածը հատկացնեն, թեկուզ որքան էլ հեռու ու դժվարին լինի, միայն թե մեկս մյուսից չբաժանվենք:

Առարկության չհանդիպելով՝ մենք արագորեն շալակեցինք փամփուշտներով լի զինվորական ուսապարկերը և շարժվեցինք երկաթգծի հյուսիսային կողմի հատվածով դեպի ռազմական գործողությունների առաջին գիծ, մի ամայի դաշտ, այն էլ առանց բուսականության: Գնում էինք բացազատված, մեկս մյուսից տասից տասնհինգ քայլ հեռավորությամբ, մշեցի զինվորի ուղեկցությամբ, որի թույլտվությամբ պարբերաբար հանգստանում ու կրկին շարունակում էինք առաջ շարժվել դեպի պաշտպանական առաջին գիծ:

Խորը գիշեր էր, ու թեև ցերեկվա արևից շիկացած ավազից վառվում էին ոտքերս, այնուամենայնիվ գնում էինք՝ հաղթահարելով մեր

ճանապարհին ընկած բոլոր դժվարությունները: Գնալով աստիճանաբար ուժեղանում էին հրանոթային արկերի պայթյունի ձայները, իսկ քիչ հետո՝ նաև հրացանային կրակոցներն ու գնդացիրների համազարկերը: Գնում էինք շատ արագ՝ առանց փոքր-ինչ վախ զգալու:

Արկեր էին պայթում, ճարճատում գնդացիրները, բայց առաջին անգամ չէր, որ ընկնում էինք կռիվների մեջ: Ես արյուն էի տեսել շատ վաղուց՝ դեռ տասներկու տարեկան հասակում: 1915 թվի ապրիլյան ահավոր օրերին թուրքերի դաժան կրակոցներից, մեր հայրերի ու եղբայրների դիակների տակ մնալով, մեծ հրաշքով ողջ մնացինք ես ու Սարգիսը: Նույն ընկերներով երկու անգամ գերի ընկանք, բայց յուրաքանչյուր դեպքում էլ փախուստի դիմելով՝ դարձյալ ողջ մնացինք:

Ընդհուպ մոտենալով կռվող զորամասերից մեկի հրամանատարական կետին՝ մենք հենց այդտեղ էլ առաջին անգամ դատարկեցինք փամփուշտներով լի զինվորական մեր ուսապարկերն ու առանց հանգիստ առնելու՝ անմիջապես վերադարձանք նույն վայրը, որտեղից հեռացել էինք ընդամենը չորս ժամ առաջ: Վերադառնալով թիկունք՝ շատ ուրախ էինք, որ առաջին մարտական առաջադրանքը կատարեցինք, այն էլ առանց դժվարությունների ու արտառոց պատահարի:

Հաջորդ օրը մեզ հրամայեցին խմելու ջուր տանել, այն էլ նույն զորամասին, որտեղ նախորդ օրը փամփուշտներ էինք տարել, բայց այս անգամ առանց ուղեկից զինվորի: Ջրկիրներից շատերը ջուրը տեղափոխում էին Երևանից բերված նոր սափորներով՝ կուժերով, իսկ մենք չորս ընկերներով, զինվորների համաձայնությամբ, խրամատներից հավաքում էինք նրանց պատկանող դատարկ տափաշշերը և ջրով լի կրկին վերադարձնում խրամատներ, յուրաքանչյուրն իր տիրոջը: Ոգևորված լինելով մեզ տրված մարտական առաջադրանքի կատարման արդյունքով՝ մենք՝ չորս ընկերներով տանում էինք ավելի շատ ջուր ու փամփուշտ, քան մյուս զորամասերին կցված ջրկիրները, որոնց թիվն աստիճանաբար նվազում էր՝ ծանրությունը թողնելով մեզ վրա:

Չնայած թշնամու ուժեղ կրակին ու եղած այլ դժվարություններին՝ այնուամենայնիվ մենք այնքան էին ոգևորվել, որ անգամ մոռացել էինք մեր անձնական ապահովությունը: Մի անգամ հրամատարական կետում սպաներին ջուր մատակարարելու ժամանակ խնդրեցինք, որ մեզ հրացաններ տան՝ թուրքերի դեմ կռվելու, խոստանալով նաև մշտապես ջուր ու փամփուշտներ մատակարարել խրամատներում կռվող զինվորներին: Սակայն ավելորդ զենք չկար:

Չորս ընկերներով մշտապես անբաժան էինք միմյանցից: Խմելու ջուր ու փամփուշտ տանում էինք համատեղ, գրեթե ամենահեռու դիրքերը: Հաճախ նստում կամ պառկում էինք զինվորների կողքին, լսում նրանց հետաքրքիր ու լուրջ խոսակցությունները պատերազմի մասին:

Մի օր՝ երեկոյան դեմ ջուր տանելիս, մոտեցանք մեծ հողաթմբի հետևում զինվորների խմբին, որոնք դժգոհությամբ խոսում էին բարձր կարգի հրամանատարների ինչ-որ դավաճանության մասին, նրանց մասին, ում հրամաններով իբրև թուրքերին հանձնվեց Արևմտյան Հայաստանը՝ Էրզրում, Կարս, Սարիղամիշ և այլ քաղաքներ: Առանձնապես կրքոտ դժգոհում էր բարձրահասակ մի զինվոր, որին դեռ վաղուց էջմիածնում էի տեսել: Զինվորը ղարաբաղցի էր, անունը՝ Բախշի: Խոսելով ռազմաճակատներում տեղի ունեցող ծանր մարտերի մասին՝ նա ասաց.

– Էրզրում, Կարս, Վան քաղաքները, վերջապես Սուրմալու գավառը թողնելուց հետո այլևս նահանջելու տեղ չի մնացել, հայրենիքը գտնվում է անասելի ծանր վիճակում: Մեզ՝ զինվորներիս, մնում է միայն կռվելով հաղթել թշնամուն կամ մեռնել պատվով. այլ ելք մենք չունենք:

– Կարսը թողնելուց հետո էլ զինվոր չմնաց, որ կռվի,– հեռվից լսվեց մի այլ ձայն՝ մոտենալով ճառախոսին:

– Թուրքերի դեմ թող կռվեն տաքուկ տեղերում նստած գեներալներն ու երկրի մեծերը,– խոսեց մեկ ուրիշը՝ ամրացնելով ոտքի փաթաթանը:

– Զինվորները ժողովրդի հետ պետք է պայքարեն, թե չէ գեներալներից լավ բան սպասել չենք կարող,– ասաց Բախշին և ավելացրեց, որ ներկա պայմաններում մեր զինվորների օգնությամբ երկիրը կործանումից կարող են փրկել միայն բոլշևիկները:

– Ո՞ւր են այդ բոլշևիկները, որոնք կարող են փրկել երկիրը,– խոսակցության մեջ մտավ մի այլ զինվոր, որը մինչ այդ հետաքրքրությամբ լսում էր Բախշի անունով զինվորին:

– Նրանց թիվը շատ է, բայց առայժմ թաքուն են գործում: Մեզ մնում է ամուր կանգնել թշնամու դեմ, մինչև մեր երկրի վրա կբացվի ազատության արշալույսը,– ավելացրեց ճառախոսի կողքին նստած մի այլ զինվոր, որը միայն անցած գիշեր էր հայտնվել այդ զորամասում՝ որպես դասակի հրամանատար:

Մեծ ուշադրությամբ լսելով տեղում հավաքված զինվորների հետաքրքիր զրույցները՝ մենք շուտով թողեցինք նրանց խրամատներում և նույն գիշեր վերադարձանք մեր հավաքատեղին, որտեղ զինամթերքն ու ջրով լի տակառներն էին: Հեռանալով առաջապահ դիրքերից՝ ճանապարհին Վարթոյին հարցրի.

– Ովքե՞ր են այդ բոլշևիկները, որոնք կարող են փրկել մեր երկիրը:

– Նրանք խաչապաշտներ են, դրա համար էլ գալու են մեզ փրկելու,– պատասխանեց Սարգիսը:

Գաղափար չունենալով բոլշևիկների մասին՝ ամեն մեկս գլխից վերացական մի բան էր հորինում, միայն թե պատասխանած լիներ իրեն տրված հարցերին: Մի խոսքով, խրամատներում հավաքված զինվորների՝ այդ օրվա խոսակցությունները բոլշևիկների մասին խորապես տպավորվել էին ուղեղումս, բայց չէի հասկանում, թե վերջիվերջո ովքեր են նրանք, որ կարող են և պետք է փրկեն մեր երկիրը: Հասնելով մեր սովորական հավաքատեղին՝ մենք զինվորների տված հացն ու պահածոն ուտելուց հետո պառկեցինք արևից տաքացած ավազախառն հողերի վրա ու անմիջապես քնեցինք՝ հաշվի չառնելով թնդանոթներից արձակած արկերի պայթյունները, որոնց վաղուց ընտելացել էինք:

Հաջորդ լուսաբացին, զինվորներից հավաքած ջրով լի տափաշշերը շալակած, թշնամու ուժեղ կրակի տակ սկսեցինք առաջ շարժվել դեպի մեզ կցված զորամասի դիրքերը: Արագացնելով մեր քայլերը՝ շտապում էինք շուտ տեղ հասնել, որպեսզի կրկին լսեինք զինվորների հետաքրքիր զրույցները պատերազմի ընթացքի և առանձին գումարտակների մարտական գործողությունների մասին:

Ի տարբերություն անցած օրերի՝ այդ գիշեր ավելի էին սաստկացել հրանոթների համազարկերը, իսկ լուսաբացին՝ նաև հրացանների ու գնդացրային կրակի ճարճատյունը: Կրակում էին շղթայի բոլոր հատվածներում ամեն տիպի զենքով, որոնց որոտալի ձայներից կարծես թե ականջներս խլացել էին: Էլի մի վազք դեպի առաջ, և հանկարծ լսվեց հուժկու ուռա՜, ուռա՜, ու պոկվեցին իրենց դիրքերից հետևակ զորամասերի աշխարհազորայինները: Նրանց հետևեցին թիկունքից քառատրոփ արշավող հեծելազոր միավորումները՝ հետապնդելով նահանջող թուրք զորքերին: Ուռայով արշավում էին զորքերի բոլոր տեսակները՝ տեղի աշխարհազորայինը, նրանց թվում հոգևորականներ, անգամ մեզ հասակակից պատանիները, որոնք մինչ այդ ջրկիրների ու փամփուշտատարների դեր էին կատարում:

Զորքերի հարձակման այդ պահին ուրախությունը պատել էր ամենքին՝ զինվորներին, տեղում եղած գյուղացիներին, որոնք նույնպես ծառայություններ էին մատուցում զորքերին:

– Ա՜խ, երանի թե միշտ այսպես լինի, միշտ հաղթության մեջ լինենք,– արտասուքն աչքերին՝ խոսում էր կողքիցս առաջ գնացող հոգևորականներից մեկը՝ ձեռքում եղած խաչով խաչակնքելով զինվորներին:

Հարձակվող զինվորներից հետ չմնալու համար մեզ մոտ եղած ջրով լի տափաշշերի մի մասը թողեցինք կես ճանապարհին, իսկ մենք, քրտինքի մեջ կորած, շարունակում էինք առաջ շարժվել՝ հետապնդելով փախչող թուրքերին:

– Ա՜խ, երանի թե միշտ այսպես լինի,– կրկնեցի հոգևորականի ասածը՝ խաչակնքելով կողքիցս քայլող Աղասու երեսը:

Վերջապես հասնելով Սարդարապատի քարուքանդ եղած կայարանին՝ կանգ առանք. Վարթոյի մոտ եղած սվինով ծակծկում էինք երկաթգծի երկու կողմերում վայր ընկած թուրք զինվորների կիսակենդան մարմինները: Հայ մարտիկների հզոր հարձակումը շարունակվում էր, իսկ մենք՝ պատանիներս, մի հեծյալ սպայի ու երկու հոգևորականների խորհրդով Արաքս կայարանից ոչ հեռու՝ երկաթգծի մեծ կամրջի մոտ, կանգ առանք: Ճակատամարտի հաղթանակի մայիսյան այդ գեղեցիկ օրը շրջապատի գյուղական ազգաբնակչությունը հրճվանքի մեջ էր: Շատերը, արտասուքն աչքերին, գրկում էին մեկը մյուսին և ուրախանում, իսկ մեր խմբի տղաները՝ առավել, քանի որ ինքներս անձամբ մասնակցել էինք այդ մեծ հաղթանակին:

Հարձակումից հետո տեղում հավաքվեցին մոտակա գյուղերի մեծ թվով բնակիչներ, անգամ թեթև վիրավորված զինվորներ, որոնք նույնպես հետապնդում էին նահանջող թշնամուն: Մտերմանալով նրանց հետ՝ պատահաբար իմացա, որ Տիգրան Բաղդասարյանի հրամանատարության տակ գտնվող գունդը Օրգովից նահանջելով փոխադրվել է Ղամարլուի[67] ռազմաճակատ առանց որևէ կորստի: Իմանալով այդ մասին՝ մեր ուրախությանը չափ ու սահման չկար: Չէ՞ որ Սարդարապատի հաղթանակից հետո իմացանք նաև հարազատների տեղն ու ողջ լինելու լուրը: Ուրախ էինք նաև, որ այլևս չէին լսվում հրանոթների արկերի պայթյունները, հրացանային համազարկերը, ծանր վիրավորների հառաչանքները: Մի պահ թվում էր, թե կռիվն ընդմիշտ վերջացել է, բայց դժբախտաբար այդպես չէր. այն շարունակվում էր, այն էլ մեզնից ոչ հեռու:

Գարնան վերջին ամսվա պայծառ արևը վաղուց թեքվել էր դեպի արևմուտք, իսկ մենք դեռ չէինք որոշել, թե ինչ ենք անելու և ուր ենք գնալու: Հարձակման ժամանակ հացով ծանրաբեռնված զինվորներից մեզ անհրաժեշտ ուտելիքի պաշար էինք հավաքել, որը կբավականացներ 3-4 օր, դեռ ավելին:

---

[67] Այժմ՝ Արտաշատ

Սարդարապատի ամայացած կայարանի շրջապատում թափառելուց հետո հանկարծ նկատեցինք դեպի մեզ շարժվող մի ստվար զորամաս, որը, մոտենալով կայարանամերձ հրապարակին, միանգամից կանգ առավ: Դա թուրքերին հետապնդող զորամասերից մեկն էր, իսկ թե ինչու էին վերադարձել և ուր էին գնում, անհրաժեշտ էր իմանալ: Մոտենալով հանգստացող զինվորներից մեկին՝ հարցրի ռազմաճակատից նրանց վերադառնալու պատճառի մասին, բայց գոհացուցիչ պատասխան չստացա:

Հարցումներ արեցինք նաև այլ զինվորներից շատերին՝ բայց պատասխանը կտրուկ էր:

– Չգիտենք,– պատասխանեց նրանցից մեկն ու առաջարկեց զորամասից հեռու մնալ:

Սակայն մեզ հաջողվեց կայարանից ոչ հեռու գտնվող ձիակառքի մեջ նստած վարդապետից իմանալ, որ նշված զորախումբը մեկնելու է Բաշ-Ապարան, թե ինչու և ինչ նպատակով, այդ մասին նա խուսափեց որևէ ճիշտ բան ասել: Ես անձամբ ծանոթ էի այդ վարդապետին, նրան դեռ շատ վաղուց էի հանդիպել: Ըստ երևույթին նա ինձ չճանաչեց կամ չուզեց ծանոթ ցույց տալ:

– Ո՞ր գյուղից եք,– հարցրեց վարդապետը՝ նայելով զինվորների կողմից ինձ նվիրած մեծ կոշիկներին:

– Էջմիածնից ենք եկել թուրքերի դեմ կռվելու համար,– պատասխանեցի հպարտությամբ:

– Կռվեցի՞ք, զավա՛կս, ո՞ր խմբում:

– Մեզ հրացան չտվին, հանձնարարեցին, որ զինվորներին ջուր և փամփուշտ մատակարարենք:

– Ձեզ տրված հրամանը կատարեցի՞ք:

– Այո՛, կատարեցինք մինչև զորքերի ընդհանուր հարձակումը,– այս անգամ պատասխանեց Սարգիսը:

Լսելով Սարգսի պատասխանը՝ նա, հայացքը կրկին ուղղելով մեր չորս ընկերներին, մի պահ մեղմ ժպտաց ու խոստովանեց.

– Հիշեցի ձեզ, զավակնե՛րս, հիշեցի, հայ եկեղեցու Ավետարանի փրկողներիդ, ապրե՛ք, զորանա՛ք, զավակնե՛րս, իսկ այժմ այստեղ դուք այլևս անելիք չունեք, այսօր ևեթ կվերադառնաք Սուրբ Էջմիածին,– ասաց վարդապետը ու ձեռքը մոտեցրեց շուրթերիս համբուրելու համար:

– Ճանապարհներին ծանոթ չենք, որ մեկնենք,– ասացի ես՝ համբուրելով վարդապետի աջը:

– Տեսե՛ք, կայարանի հրապարակում հանգստացող զորախումբը մեկնելու է Բաշ-Ապարան,– ասաց նա և ավելացրեց,– կարող եք նրանց հետ մեկնել մինչև Օշական կամ մոտակա գյուղերից մեկը, իսկ հետո հարցնելով կերթաք էջմիածին: Գնացե՛ք, օրհնյա՛լ լինեք,– վերջացրեց բարի վարդապետն իր խոսքը՝ կառապանին առաջարկելով առաջ շարժվել:

ՎԵՐԱԴԱՐՁ

Սարդարապատի կայարանում հավաքված զինվորները բավականին հանգստանալուց հետո վեր կացան ու երիտասարդ սպայի հրամանով առաջ շարժվեցին: Դուրս գալով Սարդարապատից՝ զինվորները քայլում էին շատ արագ, իսկ մենք ամեն կերպ աշխատում էինք չկտրվել նրանցից: Վերջապես գիշերվա մի երկար հանգստի ժամանակ, կանաչ խոտերի մեջ պառկելով, խոր քնի մեջ էինք ընկել և արթնացանք միայն այն պահին, երբ առավոտյան պայծառ արևի վառ շողերը թեքությամբ ծակծկում էին քնից հենց նոր բացված աչքերս: Բաշ-Ապարան մեկնող զինվորներն իրենց հերթական հանգստից հետո ըստ երևույթին վաղուց էին հեռացել՝ թողնելով մեզ քնած վիճակում:

Արթնանալով՝ մի պահ չկարողացանք կողմնորոշվել, թե որտեղ ենք գտնվում, բայց մտնելով գյուղացիների այգիները՝ տեսանք բավականին թվով մարդկանց, որոնք զբաղված էին այգեփորով, և հենց նրանցից էլ իմացանք այն, ինչ անհրաժեշտ էր մեզ: Այգեգործները մեզ ցույց տվեցին Վաղարշապատ տանող ճանապարհը, նաև ամեն մեկիս տվեցին մեկական գարեհաց ու ճանապարհ դրին մինչև Քասաղ գետի մեծ կամուրջ: Գետն անցնելուց հետո էջմիածին հասնելն այնքան էլ դժվար չէր մեզ համար, նամանավանդ ծանոթ էինք տեղանքին, միայն խիստ կերպով նեղվում էինք ցերեկվա սարսափելի շոգ ու ծարավից:

Քայլում էինք դանդաղ ու ալարկոտ, կարծես անցած օրերի փամփուշտատարները չլինեինք:

Մոտենալով Վաղարշապատի սահմանին՝ մի տեսակ մտահոգության մեջ էի ընկել, դադարել էի անգամ խոսել:

Քայլում էի՝ մտածելով, թե ինչ պետք է անեմ հետագայում, որ Վարթոյի ու Աղասու նման թափառաշրջիկ չդառնամ: Վերջապես գիշերվա կեսին հասանք Վաղարշապատ ու անակնկալ մտանք Սանամ մայրիկի նեղլիկ ու մաքուր խրճիթը:

Մեր երևալն ու Սանամ մայրիկի ուշաթափվելը մեկ եղավ, և դրանում զարմանալի ոչինչ չկար: Որդու վերաբերյալ Վաղարշակի բերած հակասական տեղեկությունները խիստ կերպով ազդել էին խեղճ կնոջ վրա, դրա համար էլ առաջին իսկ հանդիպման պահին ուշաթափվեց և մի բառ անգամ չկարողացավ արտասանել: Մի կերպ նրան ուշքի բերելով՝ վերջապես հանգստացրինք, բայց նրա կշտամբանքից խուսափել չկարողացանք:

– Դուք՝ երեք թափառաշրջիկներ, խելքահան եք արել իմ խեղճ տղային՝ կտրելով նրան վարժարանից ու հարազատ մորից,– արտասվելով բղավում էր նա ու չէր հանգստանում:

– Սանա՛մ մայրիկ, Սարգիսը ողջ և առողջ տուն է հասել, իսկ Արմենակը, թուրքերի շրջապատումից ազատված, գտնվում է Արաքս գետի այս կողմը, էլ ինչո՞ւ եք արտասվում,– համոզում էր Վարթոն՝ հանգստացնելով չափազանց ալեկոծված Սանամին, միաժամանակ ցանկանալով խրճիթից դուրս գալ, բայց Սարգիսն արգելեց:

– Կա՛ց, մայրիկս հիմա կհանգստանա, և նրան կպատմենք Արմենակի և Վարդանի մասին,– ասաց Սարգիսն ու աչքի տակով հասկացրեց մեզ, որ հաստատենք իր ասածները:

Լսելով մեծ որդու ողջ լինելու մասին Սարգսի տպավորիչ, բայց ոչ հիմնավորված պատմությունը՝ Սանամն ավելի բորբոքվեց՝ ուրախության արտասուք թափելով, ու աստիճանաբար սկսեց հանգստանալ՝ այս անգամ որդուն թողած իր կրծքին սեղմելով ինձ ու Վարթոյին: Սանամ մայրիկի հետ գրկախառնվելուց հետո մեր զրույցը շատ երկար տևեց, այնպես որ քնեցինք միայն լուսաբացին:

Հաջորդ օրվա կեսին, իրենց խիստ կաշկանդված զգալով, Վարթոն և Աղասին մեզ հրաժեշտ տվին ու խրճիթից դուրս եկան՝ հասելով, թե ուր են գնում: Մեր ընկերների մեջ առանձնապես Վարթոն անասելի զգայուն տղա էր. շատ համարձակ իր խառնվածքով նմանվում էր մեր խմբի ղեկավար Մնոյին: Ավագ ընկերս բոլորովին չէր հանդուրժում իր հասցեին արված ամենափոքր կշտամբանքն ու վիրավորանքը, չնայած որ նա մշտապես թափառաշրջիկ կյանք էր վարում. ո՛չ տեղ ուներ, ո՛չ էլ կայուն որևէ աշխատանք: 1915 թվից մինչև 1918 թիվը Վարթոն, որբանոցից փախչելով, շրջել էր ոչ միայն Հայաստանի տարբեր շրջաններում ու քաղաքներում, այլև եղել էր Բաքվում, Ղազախում, Ղարաբաղում, վերջապես ընկերների կարոտը քաշել էր նրան Երևան և ապա Էջմիածին:

Հաշվի առնելով Սանամ մայրիկի անասելի աղքատիկ վիճակը՝ ըստ երևույթին Վարթոն չուզեց որևէ նեղություն պատճառել նրանց՝

քաջ գիտենալով, որ այդ ընտանիքը մշտապես քաղցած վիճակում է գտնվում:

Վարթոյի և Աղասու հեռանալուց հետո՝ հաջորդ առավոտյան, Սարդարապատից բերված սննդի մնացորդը տվեցի Սարգսին ու նրա երկու փոքր եղբայրներին՝ պատրաստվելով դուրս գալ, երբ հանկարծ խրճիթ մտավ հացթուխ Սիրանուշն իր որդի Վաղարշակի հետ:

Մեզ տեսնելով՝ նա նույնպես Սանամ մայրիկի պես սկսեց ինձ ու Սարգսին նախատել՝ մեղադրելով, թե մենք գլխահան ենք արել նրա մինուճար զավակին՝ հետներս տանելով ռազմաճակատ:

Սիրանուշը մեզ խիստ նախատելուց հետո միաժամանակ սկսեց գովաբանել՝ հաշվի առնելով, որ մենք Վաղարշակին ողջ և առողջ ռազմաճակատից հետ ենք ուղարկել, իսկ ինքներս էլ, փառք տիրոջը, Արաքս գետում չենք խեղդվել: Հացթուխ Սիրանուշի հետ տեղի ունեցած զրույցի ժամանակ պարզվեց, որ Վաղարշակը, Մարգարա գյուղից վերադառնալով տուն, պատմել է, թե մենք երեք ընկերներով Արաքս գետն անցնելու պահին կուլ ենք գնացել փրփրած ջրի հոսանքին, իսկ ինքը ողջ մնալով վերադարձել է:

Վերջացնելով իր պատմությունը՝ Սիրանուշը հայտնեց, թե Կարապետ աղան մինչև այժմ ինձ անհայտ կորած է համարել, իսկ մեկ օր առաջ իմանալով իմ վերադարձի մասին՝ առաջարկել է, որ գնամ իր մոտ:

– Քանի դեռ եղբորս չեմ գտել, Կարապետ աղայի մոտ չեմ վերադառնա,– ասացի ես՝ հասկացնելով, որ կրկին մեկնելու եմ ռազմաճակատ, բայց այս անգամ Ղամարլուի հատված:

– Եսքեր խանումը խիստ զայրացած է ամուսնու վրա տանը աշխատող չունենալու պատճառով,– ասաց Սիրանուշը՝ խնդրելով, որ չհամառեմ:

– Ինձ նման որբ թափառաշրջիկներ շատ կան, թող նրանցից որևէ մեկին ընդունի,– հայտարարեցի ես ու վեր կենալով ուզեցի հեռանալ:

– Վաղարշակի վերադարձից հետո մեկին ընդունեցին,– ասաց Սիրանուշը հեգնական ծիծաղելով:

– Եթե վերցրել են, ապա ինչու են ինձ հետ կանչում:

– Վերցրին, բայց չարաչար սխալվեցին,– պատասխանեց հացթուխն ու ավելացրեց, որ բատրակը սարի գյուղացիներից մեկն էր ու շատ փորձված: Նա իր գալու վեցերորդ օրը գիշերով գողանում է Կարապետ աղայի դրամով լի քսակը, ինչպես նաև մառանում եղած յուղն ու ձավարը ու միանգամից անհայտանում այնպես, որ չարագործի հետքն անգամ չեն գտնում:

Ճիշտն ասած, մինչ այդ պահը տատանվում էի երկար բացակայությունից հետո նորից վերադառնալ Կարապետ աղայի տուն, սակայն մտածեցի, որ այլ ելք չունեմ, մանավանդ էջմիածնում ապրելու և գոյությունս պահպանելու ոչ մի հույս չունեի: Աննայի կողմից թողած մեծ խրճիթը վաղուց գրավել էր տերը, այլ օթևան ինձ հատկացնել որևէ մեկից սպասել չէի կարող, իսկ որբանոց վերադառնալու մասին խոսք լինել չէր կարող: Մնում էր միայն մի ելք. համաձայնվել հացթուխ Սիրանուշի հետ ու վերադառնալ իմ նախկին տիրոջ մոտ: Ժողովրդական առածն ասում է.«Լավ է փորձված թանը, քան թե անփորձ մածունը»:

Ավարտելով զրույցը՝ երկուսով միասին նույն երեկոյան մեկնեցինք Կարապետ աղայի տուն:

*
* *

Կամարակապ մեծ դարպասը բացվելուն պես մեզ դիմավորեց ինքը՝ Կարապետ աղան:

– Ա՛յ որդի, ո՞ւր էիր կորել այսքան ժամանակ,– ասաց աղան ու ձեռքիցս բռնելով՝ տարավ մեծ ճաշասենյակ, որտեղ գորգերով ծածկված թախտի վրա նստած էր Եսթեր խանումը:

– Վերջապես եկար, ի՛մ Սևուկ,– ասաց նա քմծիծաղով՝ ձեռքում եղած ձեռագործը վայր դնելով:

Չնայած նրանք հացթուխից վաղուց էին լսել մեր չորս ընկերների ռազմաճակատ մեկնելու մանրամասնությունները, այնուամենայնիվ ամուսիններով հարցեր էին տալիս՝ միաժամանակ կշտամբելով ինձ, որ առանց իրենցից խորհուրդ հարցնելու, դեռ տակավին պատանի ռազմաճակատ եմ մեկնել:

Կարապետ աղան և իր կինը՝ Եսթեր խանումը, շատ լավ գիտեին, որ ես նրանց տնտեսության մեջ աշխատում էի հասակ առած մեծ մարդուն հավասար, դեռ ավելին, օրական 16-18 ժամ:

Աշխատում էի ոչ միայն տանը, այլև տանից դուրս՝ այգում՝ երեք մեծ հողամասերում, մի խոսքով ամեն տեղ, որտեղ բանվորական ուժի կարիք էր զգացվում:

Այդ բոլորը ծանրութեթև անելով էլ՝ մարդ ու կին բավականին մեղմ էին իմ նկատմամբ. կեղծ կարեկցությամբ խոսում էին այն վտանգավոր ծուղակի մասին, որտեղ ընկել էի ես ռազմաճակատում եղած ժամանակ:

Հանգամանորեն խրատելուց հետո Կարապետ աղան ասաց.

– Գնա՛, որդի՛, միայն թե այսուհետև առանց խանումի գիտության ու թույլատրության քաղաքից չբացակայես:

*
* *

Անցնող ամառվա շոգ օրերին զովանում էի միայն այն ժամանակ, երբ որևէ հարմար առիթով գնում էի այգի՝ համոզված լինելով, որ տնից դուրս գալով, անպայման կհանդիպեմ ընկերներիս:

Եվ իսկապես, երեկոյան՝ այգուց վերադառնալիս, ծայրամասի փողոցներից մեկում ես անսպասելիորեն հանդիպեցի թափառաշրջիկ Վարթոյին ինչ-որ մարդկանց համար ծանր բեռ տանելիս: Սարդարապատի ճակատամարտից հետո ընկերներիս չէի տեսել, նրանց թվում՝ նաև Վարթոյին: Քաշվելով փողոցի անկյուններից մեկը՝ ես նրան խնդրեցի պատմել մեր կորած ընկերների մասին՝ հավատացած լինելով, որ թափառաշրջիկ Վարթոն ամեն ինչ կիմանա:

Պարզվեց, որ մեր պատանիների խմբի նախկին ղեկավար Մնոն, որին անհայտ կորած էինք համարում, գտնվում է Բաքվում և այնտեղ աշխատում է նավթահանքերում՝ որպես սևագործ բանվոր, իսկ Սարգիսը ծանր հիվանդ է ամենայն հավանականությամբ քաղցած մնալուց:

Լսելով Վարթոյին՝ մի պահ ուրախությունից թռչկոտում էի դեսուդեն՝ գրկելով ընկերոջս ուրախալի լուրի համար, իսկ Սարգսի մասին եղած տեղեկությունը անհավատալի համարեցի: Բաժանվելով Վարթոյից՝ ես այդպես ուրախ տրամադրությամբ նույն երեկոյան գնացի քաղաքի ծայրամասում գտնվող Սանամ մայրիկի տուն՝ ընկերոջս տեսնելու, միասին ուրախանալու Մնոյի ողջ լինելու առթիվ: Մտնելով նրանց աղքատիկ խրճիթ՝ ես Սարգսին համարյա թե մահամերձ գտա: Ավելի քան մեկ շաբաթ նա չէր սնվել ուտելիք չլինելու պատճառով. նրանց ընտանիքի բոլոր անդամները պառկած էին խոնավ հատակին առանց որևէ խնամքի: Տեսնելով իմ ամենամոտ ընկերոջը այդ վիճակում՝ դեմքիս ուրախության ժպիտը փոխարինվեց խորը տրտմությամբ: Այդ վայրկյանին սիրտս ուղղակի մղկտում էր, տակնուվրա լինում, և չգիտեի, թե ինչպես ու ինչ հնարքով օգնեմ անհուսալի վիճակում գտնվող այդ ընտանիքին, որոնց հետ սերտ կապված էի դեռ մանուկ հասակից: Տեսարանից խիստ ազդված՝ տխրությամբ խրճիթից դուրս եկա, երկար ժամանակ կանգնեցի երկնքից թափվող անձրևի տակ:

Վերադառնալիս ճանապարհին վճռել էի հանդիպել հացթուխ Սիրանուշի որդի Վաղարշակին: Չնայած նա մեզ հետ լավ ընկերություն չարեց, սակայն կարիքը ստիպեց ինձ խոնարհվել նրան և խնդրել, որ

հնարավորության սահմաններում քիչ հաց ճարի՝ համոզված լինելով, որ Սիրանուշի հացատունը մշտապես լի էր նոր թխած հացով:

Վաղարշակը, հացթուխի միակ զավակը լինելով, մշտապես լիության մեջ էր. մայրը ոչինչ չէր խնայում իր միանուագար որդու համար:

Լսելով ինձ՝ Վաղարշակը առանց երկար-բարակ խոսելու անմիջապես հեռացավ և չանցած մի քանի րոպե՝ բերեց այն հազվագյուտ նվերը, որը խնդրել էի: Լավաշ հացով լի կապոցը հանձնելով ինձ՝ Վաղարշակն ասաց.

– Մայրս տանը չէր, թե չէ ավելի շատ կբերեի, տա՛ր, Սարգիսն արժանի է ամեն բանի,– և ավելացրեց, թե նա վարժարանում մեծ օգնություն է ցույց տվել ոչ միայն իրեն, այլև իր ընկերներին:

Ես ուրախությունից ցանկացա գրկել նրան, բայց մի պահ հիշելով նրա վարքը ընկերների նկատմամբ՝ միայն բավարարվեցի նրան շնորհակալություն հայտնելով ու անմիջապես հեռացա:

Սանամ մայրիկի տնից հեռանալուց հետո բավականին ժամանակ էր անցել: Գիշերային զինվորական հերթապահ պարեկներն արդեն շրջում էին մութ փողոցներում՝ կատարելով իրենց պարտականությունները:

Գիշերվա անձրևոտ եղանակին, այն էլ զինվորական պարեկներից աննկատ հասնել քաղաքի ծայրամաս շատ դժվար էր ու վտանգավոր: Նախ պարեկների ձեռքն ընկնելուն պես Վաղարշակի տված լավաշ հացերը կհափշտակվեին, և ապա այն ժամանակվա ռազմական դրությունը խախտելու համար կբանտարկվեի ու խիստ կպատժվեի: Վճռեցի՝ ինչ գնով էլ լինի, իմ հայթայթած հացը հանձնել սովյալներին:

Զինվորական հերթապահ պարեկներից աննկատ մնալու համար գնում էի ոլորապտույտ նեղ փողոցներով՝ հաղթահարելով անձրևից գոյացած լճակներն ու ցեխերը և վերջապես գիշերվա կեսին մտա Սանամ մայրիկի խրճիթ:

Տեսնելով գրկիս սեղմած հացի կապոցը՝ Սանամ մայրիկը ուրախությունից արտասվեց և գլուխս առնելով իր կրծքին՝ սկսեց համբուրել:

– Որտեղի՞ց, զավա՛կս, այսքան հաց,– հարցրեց Սանամ մայրիկը արտասվելով:

– Կարևոր չէ, թե որտեղից է,– պատասխանեցի ես՝ խնդրելով նրան՝ արթնացնի Սարգսին, որ նրան տեսնեմ հաց ուտելիս:

Կատարելով իմ ցանկությունը՝ Սանամը փափուկ լավաշներից մեկը կտրտելով բաժանեց երեք որդիներին:

Չնայած չէի ուզում, բայց և այնպես հրաժեշտ տվեցի նրանց՝ խոստանալով կրկին այցելել, իսկ հնարավորության դեպքում բերել նաև ուտելիք:

Սովից (բառիս լայն իմաստով) ամենուրեք մեռնում էին հազարավոր գաղթականներ, անգամ տեղացի չքավոր մարդիկ, մինչդեռ կային հարուստներ, որոնք ուղղակի տրաքում էին շատ ուտելուց. վերջիններիս թվին էր պատկանում նաև Կարապետ աղայի ընտանիքը: Նրանց հիմնական ունեցած դրամը ոսկի էր, իսկ մնացածը՝ ուտելիք, որը տեղավորված էր մառաններում՝ սկսած անուշահամ գինիներից վերջացրած տարբեր սննդամթերքով՝ ցորեն, ձավար, բրինձ, ալյուր, ցորենից թխած հացի մեծ պաշար: Կարապետ աղայի մառանի դռները միշտ բաց էին ինձ համար, սակայն ես ոչ մի անգամ նրանց վստահությունը չէի չարաշահում և հետագայում էլ մնացի այդպիսին, չնայած ինքս նույնպես շատ ժամանակ մնում էի քաղցած: Սովի այդ սարսափելի օրերին ես կարող էի օգնել իմ ընկերներին, հատկապես Սարգսին ամեն ինչով, իհարկե, Կարապետ աղայի մառանից, այն էլ գողություն անելով: Սակայն «գողություն» բառը բոլորովին խորթ էր ինձ, և այդ ճանապարհով սովյալներին օգնել ես չէի կարող:

«Լավ է մեռնեմ, քան թե գողությամբ ապրեմ: Բայց որևէ զոհաբերությամբ պետք է օգնեմ Սարգսին, որ նա սովից չմահանա»,– մտածում էի ես: Այլ ճանապարհ չգտնելով՝ որոշեցի ինձ հասանելիք օրվա հացն ու մնացած ուտելիքի բաժինը երկու օրը մեկ հասցնել հիվանդ ընկերոջս, իսկ ինքս բավարարվել միայն տանտիրոջ սեղանի մնացուկներով, անգամ ծառերի վրա գոյացած խեժերով, պարտեզում աճած կանաչով:

Այդպես տարբեր ճանապարհներով տանում էի ամեն բան, ինչ որ պատահում էր, միայն թե ընկերս սովից չմահանար, և դա մեծ զրկանքներով տևեց երկար օրեր ու ամիսներ: Աշնան վերջին օրերին Կարապետ աղան, խանութը փակելով, մեկնեց խաղողի մեծ այգին՝ իր հետ տանելով նաև ինձ. այդ իսկ պատճառով մի քանի օրվա իմ ուտելիքի պաշարը չկարողացա հասցնել Սարգսին:

Սովի այդ նույն օրերին Սանամ մայրիկն ուրիշ այլ սովյալների հետ դուրս էին գալիս փողոց՝ ուտելու որևէ բան ճարելու, և իսկապես, նրանց հաջողվում է որսալ թափառական մի շուն, որին մորթելուց հետո յուրաքանչյուրը, իր բաժինն առնելով, գնում է տուն: Սանամ մայրիկը ուրախությունից շատ է շտապում, դժբախտաբար ճանապարհին խիստ հոգնածությունից վայր է ընկնում, իսկ գետնին ընկած շան մսի կտորը հափշտակում է մի այլ սովյալ:

Լսելով այդ մասին՝ հաջորդ օրվա երեկոյան՝ այգուց վերադառնալուն պես, ինձ հաջողվեց կուտակված ուտելիքիս պաշարը տանել ընկերոջս տուն, բայց ցավալին այն էր, որ ես Սանամ մայրիկին տեսա ուշաթափված, իսկ տասը տարեկան ապերիկին՝ մեռած: Հաջորդ առավոտյան՝ նույն տեղը գնալիս, ես նրանց խրճիթը բոլորովին դատարկ տեսա: Կարմիր խաչի կողմից ուղարկված սայլակը տարել էր Սանամ մայրիկի ու նրա փոքրիկ զավակի դիակները, իսկ մահամերձ վիճակում գտնվող Սարգսին ու Տիգրանին տեղափոխել էին մոտակա հիվանդանոց: Կտրվելով հավատարիմ ընկերոջիցս՝ այլևս անտարբեր էի ամեն բանի նկատմամբ, նույնիսկ վարժարանի կողմից տրված հանձնարարությունները կատարում էի տհաճորեն:

Ինձ թվում էր, թե այլևս չկա Սարգիսը, նա, որի հետ անց եմ կացրել իմ մանկության ու վաղ պատանեկության տարիներս՝ ինչպես ահավոր կոտորածների արյունալի դեպքերը, այնպես էլ մեծ գաղթի օրերը և հետագայում վարժարանում սովորելու օրերը՝ միևնույն դասասեղանի առջև նստած: Իմ լավ ու հավատարիմ ընկերոջը կորցնելուց հետո վարժարան էի հաճախում անտրամադիր ու անպատրաստ, և եթե Երևանից հենց նոր եկած օրիորդ Կարինեի միջամտությունը չլիներ, ապա դադարել էի ուսումս շարունակել:

Հաջորդ օրերին փորձեցի գտնել այդ հիվանդանոցը, որտեղ տարել էին ընկերոջս, բայց դժբախտաբար որևէ տեղ նրան գտնել չկարողացա:

Այդպես օրերով թափառում էի դեսուդեն, միաժամանակ լսում էի նորանոր գաղթականների խոսակցություններ պատերազմի մասին ու տխրությամբ վերադառնում էի իմ խղճուկ կացարանը՝ միանգամայն հուսահատված:

Այդ նույն օրերին որևէ տեղ պատսպարան գտնելու ակնկալությամբ էջմիածին քաղաքում թափառում էին հարակից գյուղերի հազարավոր գաղթականներ, որոնք, մի քանի օր առաջ քրտինք թափելով, աշխատում էին մայր հողի վրա: Այնպես որ չկար մի տուն կամ բնակարան, որ տեղավորած չլիներ հայ գաղթականի:

Կարապետ աղան բացի իր ընդարձակ պարտեզից ուներ նաև բավականին ազատ տարածություն, որտեղ ժամանակավորապես ուղղակի բաց երկնքի տակ պատսպարվել էր Իգդիրից գաղթած բազմամարդ ընտանիքներից մեկը՝ մեծ մասամբ կանայք ու երեխաներ, որոնց գլխավորում էր պատերազմում վիրավորված շատ համակրելի մի սպա:

Ծանոթանալով ինձ հետ՝ չգիտեմ թե ինչու, սպան սկսեց հետաքրքրվել իմ անցյալով՝ միաժամանակ համակրանքով խոսելով

բատրակների ու աղքատների մասին, որոնք անխղճորեն շահագործվում էին հարուստների կողմից՝ ակնարկելով նաև Եսթեր խանումի վերաբերմունքը իմ նկատմամբ:

Նկատելով պարոն Խշտոյանի (այդպես էր համակրելի սպայի ազգանունը) անսովոր համակրանքը իմ նկատմամբ՝ ես նույնպես աշխատում էի ամեն կերպ օգտակար լինել նրանց ամենօրյա գործերում:

Շփվելով կիրթ ու զարգացած իգդիրցի այդ ընտանիքի և համակրելի դեմքով սպայի հետ՝ Եսթեր խանումն առաջին օրերին ամեն կերպ օգնում էր նրանց տնտեսական գործերի կարգավորման խնդրում: Սակայն տասներորդ օրվա կեսին պատկերը միանգամայն փոխվեց, երբ իմացավ, որ սպան պաշտպանում է բանվորների ու աղքատ գյուղացիների շահերը և դաշնակներին չի համակրում:

Արևոտ մի պայծառ օր էր. բակում բոլոր տնվորները հավաքվել էին պարտեզի մեջտեղում եղած ազատ հրապարակում, որտեղ գտնվում էր նաև իգդիրցի սպայի կացարանը, իսկ Եսթեր խանումը ջղաձգորեն անընդհատ ներսուդուրս էր անում՝ մեղադրելով տարբեր մարդկանց բակում կարգուկանոն չպահպանելու համար: Մի խոսքով՝ տանտերը ցանկանում էր որևէ առիթ գտնել ընդհարվելու այդտեղ նստած սպայի հետ և վերջին օրերին կուտակված իր զայրույթը թափել նրա վրա:

– Տիկի՛ն, մեզնից որևէ մեկը Ձեր անդորրը չի խանգարել, ինչո՞ւ եք անտեղի վիրավորում մարդկանց,– ասաց սպան և նստած տեղից վեր կացավ:

– Ես թույլ չեմ տա, որ ամեն մի դասալիք իմ չորս պատերի ներսում կարգուկանոնը խախտի ու անգամ աղքատների շահերի պաշտպանությամբ հանդես գա,– պատասխանեց Եսթերն ավելի բորբոքված:

– Իզուր եք բորբոքվում, տիկի՛ն, խնդրում եմ, թողեք մեզ հանգիստ և Ձեր անհիմն մեղադրանքները հասցեագրե՛ք ուրիշներին, որոնց Դուք ավելի մոտ եք գտնվում,– ասաց սպան մեղմ ձայնով:

– Ձեզ պես անհավատ սպաները, պարո՛ն Խշտոյան, անզոր գտնվեցին դասալիքների դեմն առնելու, և ինքներդ դարձաք դասալիք՝ վտանգելով Հայաստանի նորաստեղծ պետության սահմանները,– ջղաձգորեն համարյա թե բղավում էր տիկին Եսթերը:

– Տիկի՛ն, դասալիքները ոչ թե զինվորներն են, որոնք կռվում են հերոսաբար ու զոհվում, այլ Ձեր, այսպես կոչված, անկախ Հայաստանի պետության պարագլուխները, նրանք, ովքեր դավաճանեցին հայ ժողովրդին, թուրքերին ծախեցին Արևմտյան Հայաստանը՝ Էրզրում, Կարս, Ալեքսանդրապոլ, Սուրմալու, իսկ այժմ էլ անամոթաբար սիրաշահում

են թուրք փաշաներին, որ Երևանն ու Էջմիածինը նույնպես ծախեն,– ասաց սպան ու կրկին նստեց ծղոտից պատրաստված բազկաթոռին:

Ոչինչ չգտնելով իր ախոյանի մեղադրանքները հերքելու՝ Եսթեր խանումը՝ որպես անհյուրընկալ տանտեր, պահանջեց սպայից հավաքել իրերն ու անմիջապես հեռանալ:

– Մի՛ շտապեք, տիկին, մենք չենք մնա այստեղ,– հեգնանքով ասաց սպան:

Այդ ասելով՝ նա վերցրեց իր երկու հենակներն ու մի պատանու ուղեկցությամբ դուրս եկավ փողոց:

Մինչ Եսթեր խանումն իր բորբոքված կրքերը կհանդարտացներ, փողոցում կանգնեցին երեք ձիաքարշ սայլեր, որոնց բարձեցին իգդիրցի սպայի տնային իրերը, նստեցրին ընտանիքի անդամներին ու առանց մնաս բարով ասելու՝ անմիջապես հեռացան:

Իգդիրցի սպայի հետ ունեցած վեճի պատճառով տիկին Եսթերը մռայլ վիճակում գրեթե իր սենյակից դուրս չէր գալիս. անգամ դադարել էր ինձ հանձնարարություններ տալ: Օգտվելով դրանից՝ հաճախակի դուրս էի գալիս քաղաքի շուկա՝ իմանալու, թե ինչ է կատարվում դրսում, ռազմաճակատներում: Իսկ ի՞նչ կարելի էր իմանալ այդ փոթորկալի օրերին, բացի հասարակ մարդկանց օրինական բողոք ու դժգոհությունից, որոնք ամբողջապես ուղղված էին երկրի իշխող կարգերի դեմ: Անասելի անօրինականությունները տարածված էին ամենուրեք:

Երկրի դրությունը կրիտիկական էր. մի կողմից պատերազմն էր, որի վերջը չէր երևում, մյուս կողմից՝ սովն ու համաճարակը: Այդ պայմաններում Վաղարշապատի բնակչությունը նույնպես պատրաստվում էր գաղթել, նրանց թվում՝ նաև Կարապետ աղայի ընտանիքը:

Լուծարելով ապրանքով լի իր խանութի գործունեությունը՝ նա երեք օրվա ընթացքում կապկպեց տնտեսության թանկարժեք ունեցվածքն ու պատրաստվեց Էջմիածնից գաղթելու, բայց թե ուր, ինքն էլ չգիտեր այդ մասին. Հայաստանում այլևս ապահով տեղ չկար:

Այդպես սպասողական վիճակում վրա հասավ ցրտաշունչ ձմեռը: 1918-1919 թվերին գաղթած մարդիկ, անելանելի դրության մեջ գտնվելով, մի քանի օրվա ընթացքում հիմնովին կտրտեցին վանքապատկան մեծ անտառը՝ որպես վառելափայտ: Հինավուրց խիտ անտառը չքացավ ընդամենը մի քանի օրվա ընթացքում:

Այնուամենայնիվ այդ էլ չփրկեց գաղթած ժողովրդին: Սով էր ամենուրեք, և իմ բախտակից տղաներն ու աղջիկները, որոնք գտնվում էին որբանոցներում, նույնպես քաղցած էին, իսկ շատերն էլ սովից մահանում էին:

Թվում էր, թե դաշնակների նորաստեղծ պետության պարագլուխները կհոգան նրանց մասին, բայց ավա՜ղ, այդպիսի օգնություն չկար: Պատահական չէր, որ հասակ առած որբերը շատ տեղին մի երգ էին հորինել ու երգում էին.

Սիա եկավ ձմեռը,
Պետոն փռեց թևերը,
Ասաց. – Պահե՛ք որբերը,
էլ փող չկա ջեբերս:

Պետոն դաշնակցականների կառավարությունն էր, իսկ գրպանում փող չունենալու պատճառով որբերին հանձնում էին ուրիշներին: Իրոք երգը շատ դիպուկ էր և ամբողջապես համապատասխանում էր իրականությանը:

Այդ օրերին ընկեր չունենալու պատճառով ոչ մի տեղ չէի գնում, բացի Եսթեր խանումի «հույժ կարևոր» հանձնարարությունները կատարելուց: Թափառաշրջիկ Վարթոն անհայտացել էր, և չգիտեի՝ արդյոք նա ողջ է, թե՞ մեռած:

Իհարկե, Վարթոն մեռնող պտուղ չէր: Գարնան մի օր՝ Կարապետ աղայի հանձնարարությամբ քաղաքի մեծ շուկա գնալիս, հանկարծ մեկը, հետևիցս աչքերս փակելով, ամուր գրկեց ինձ. թափառաշրջիկ իմ ընկերն էր՝ Վարթոն:

Նա քաղցածությունից այնքան էր հյուծվել ու խեղճացել, որ թվում էր, թե ընկերս էջմիածին է եկել ոչ թե Իջևանից, այլ մեզ անհայտ հանդերձյալ աշխարհից:

Չնայած նա շատ բնակավայրեր էր շրջել, տարբեր քաղաքներում եղել, անգամ Իջևան էր հասել, այնուամենայնիվ մնացել էր քաղցած՝ սնվելով բացառապես դաշտերում բուսած կանաչով ու այգիներում ցանված ցորենի հատիկներով, մի խոսքով, ապրել էր մուրացիկի կյանքով:

Տեսնելով Վարթոյի աննախանձելի վիճակը՝ վճռեցի ինձ հասանելիք օրվա սննդի մեծ մասը տալ նրան՝ հույս ունենալով, որ նա կկազդուրվի և վերջ կտա թափառաշրջիկի կյանքին ու կաշխատի որևէ հարուստի մոտ գոնե սովից փրկվելու համար:

Չնայած դրան, այնուամենայնիվ Վարթոն չփոխեց իր սովորությունն ու ապրելակերպը. ընդհակառակը, կազդուրվելով՝ նա կարճ ժամանակամիջոցում կարողացավ ինձ համոզել մեկնել Երևան, իսկ այնտեղից էլ ռազմաճակատ՝ թուրքի դեմ կռվելու:

Տատանվում էի, բայց Վարդանին որոնելու ու թուրքի դեմ կռվելու նպատակով անսպասելի համաձայնեցի ընկերոջս հետ:

Նախապատրաստելով հինգ օրվա մեզ անհրաժեշտ սննդի պաշարը՝ մեծամասամբ Վաղարշակի տված թարմ լավաշը՝ գարնանային ամպամած մի առավոտ, ուսապարկն ու տափաշիշը վերցնելով, գնացի վանքապատկան մեծ այգու դարպասի մոտ, որտեղ և, մեր պայմանավորվածության համաձայն, պետք է հանդիպեի Վարթոյին:

Դուրս գալով Վաղարշապատից՝ օրվա երկրորդ կեսին արդեն Երևանում էինք:

Վարթոն լավ ծանոթ էր քաղաքին. գիտեր զորանոցների, որբանոցների, Կարմիր խաչի, բարեգործական և այլ հիմնարկների տեղերն ու ճիշտ հասցեները, իսկ ղանթարը՝[68] մեծ շուկան՝ ինչպես իր նախկին սեփական տունը: Իհարկե, մենք բավականին ուտելիք ունեինք. ուրիշ բան գնելու համար փող էր հարկավոր, իսկ դա ո՛չ ես ունեի և ո՛չ էլ Վարթոն:

Չնայած հոգնած էինք, բայց մինչև ուշ երեկո անիմաստ թափառեցինք քաղաքի փողոցներում, իսկ վերջում մտանք «Անգլիսկի սադ» կոչվող ծառախիտ մեծ այգին և հենց այնտեղ էլ՝ բաց երկնքի տակ, քնեցինք մինչև հաջորդ առավոտ:

Այգին մեծ էր, տերևախիտ, բավականին հաստ ու բարձր ծառերով, բայց վերին աստիճանի կեղտոտ էր ամեն տիպի թափթփուկներով: Յուրաքանչյուր ծառի հաստ բնի տակ քնած էին Վարթոյի պես մեծ թվով թափառաշրջիկ տղաներ ու շրջմոլիկ աղջիկներ, այն էլ կիսամերկ:

Ինձ համար այդ անսովոր միջավայրը տեսնելով՝ ես Վարթոյին առաջարկեցի այդտեղից շուտ հեռանալ:

Մենք գրեթե կես օր անիմաստ շրջում էինք քաղաքի փողոցներով, ոչ միայն տեսնելու նրա տեսարժան վայրերը, այլև իմանալու Վանսկի գնդի տեղը. դժբախտաբար ոչ մի արդյունքի չհասանք:

Շատ միամիտ էինք ու թրև էինք գալիս դեսուդեն՝ հարցնելով այն զինվորական միավորման տեղը, որտեղ ծառայում էր եղբայրս:

Վերջապես պատերազմական այդ խառը ժամանակներում ո՞վ կարող էր ասել կամ որևէ ճիշտ տեղեկություն տալ, թե այս կամ այն զորամասը որտեղ է գտնվում, իսկ իմանալու դեպքում էլ չէր պատասխանի մեզ պես դեռ տակավին պատանի թափառաշրջիկներին:

Գարնանային օրը կես էր դարձել, իսկ ռազմաճակատ գնալու հարցը վերանում էր, քանի որ մեր այցելած որևէ զորամաս կամ զինվորական մարմին մեզ զինվորագրելու ցանկություն չհայտնեց:

---

[68] ղանթար – շուկա

ՄԻ ԳԻՇԵՐ ԳԵՐԵԶՄԱՆՈՅՈՒՄ

Որպեսզի երկրորդ գիշերը «Անգլիսկի սադում»՝ բաց երկնքի տակ չքնեինք, Վարթոյի խորհրդով փորձեցինք գտնել մեր նախկին համագյուղացիներից մեկի այրի կնոջ տունը, որը գաղթի սկզբից բնակություն էր հաստատել Երևանում և այնտեղ էլ երկրորդ անգամ ամուսնացել:

Քաղաքի մեծ շուկայում տարբեր արհեստներով զբաղված մարդկանցից հարցնելով՝ վերջապես մեկից իմացանք, որ մեր ծանոթ Փարիշան անունով կինը ապրում է Գետառ գետի հակառակ կողմում՝ թուրքերի թաղամասում:

Շատ որոնելով ու հարցնելով, բարեբախտաբար օրվա երկրորդ կեսին գտանք Փարիշանին իր հողածածկ խրճիթի դռան առջև նստած արտասվելիս:

Տեսնելով մեզ՝ նա հուզմունքից ավելի բորբոքվեց ու գլխին կապած լաչակով անընդհատ սրբում էր աչքերից հոսող արտասուքը:

Շատ լավ ծանոթ լինելով գյուղի նախկին գեղեցկուհի Փարիշանին՝ Վարթոն հարցրեց.

– Ի՞նչ է պատահել, Փարիշա՛ն մորաքույր:

Վարթոյի հարցին պատասխանեց Փարիշանի կողքին նստած մի անծանոթ կին.

– Ամուսինը երկու օր առաջ տիֆ հիվանդությունից մահացել է, բայց մինչև այժմ հողին չի հանձնվել հարազատներ չունենալու պատճառով:

Լսելով անծանոթ կնոջը՝ Վարթոն առաջարկեց Փարիշանին որևէ մեկի միջոցով ցույց տալ մեզ գերեզմանատունն ու գործիքներ տալ գերեզմանափոս պատրաստելու համար:

Ըստ երևույթին մեռելատերը հենց այդ առաջարկին էր սպասում, ուստի այդպես արտասվալի աչքերով դիմեց իրեն բախտակից հարևաններից մեկին՝ ցույց տալու այն գերեզմանատունը, որտեղ պետք է թաղեին իր ամուսնուն:

Ցույց տրված գերեզմանատունը շատ մոտ էր, այն գտնվում էր երկաթգծի կայարանից դեպի հարավ-արևելք գտնվող փոքրիկ բլրակի ստորոտում:

Հասնելով այնտեղ՝ մեզ դիմավորեց մի հասակավոր մարդ, ըստ երևույթին նա ոչ միայն գերեզմանափոր էր, այլև տեղում եղած շինարարական գործիքներով լի փայտաշեն տնակի պահակը:

Լսելով Վարթոյին՝ նա տհաճորեն ցույց տվեց այն վայրը, որտեղ պետք էր փորել գերեզմանափոսը:

Տեղի հողն ավազոտ էր ու փափուկ, բայց, այնուամենայնիվ, այն փորելը երկար տևեց, քանի որ չգիտեինք գերեզմանափոսի խորության ու լայնության չափերը:

Մի խոսքով, որպեսզի հանգուցյալը լրիվ տեղավորվեր գերեզմանափոսում և մեզնից դժգոհ չլինեին, փորեցինք այնքան, որտեղ հնարավոր էր թաղել երևի երեք մեռածի:

Կատարելով մեզ վրա վերցրած կամավոր պարտականությունը՝ շտապ վերադարձանք մեռելատուն՝ Փարիշան մորաքրոջը հայտնելու գերեզմանափոսի պատրաստ լինելու մասին:

Մեզ դիմավորող հարևաններից մեկը հայտնեց, թե մեր գնալուց հետո Կարմիր խաչի կողմից ուղարկած դիասայլակը բարեբախտաբար հանգուցյալի դիակը տարավ, իսկ Փարիշան մորաքույրը, իր խրճիթի դուռն ամուր փակելով, հեռացավ, բայց ո՞ւր՝ ինքը չգիտեր այդ մասին:

Օրն աստիճանաբար մթնում էր, իսկ մեր գիշերելու միակ հույսը Փարիշան մորաքրոջ տունն էր. դժբախտաբար այն էլ փակված էր անսովոր մի մեծ կողպեքով:

Մոտենում էր մութ գիշերը. որևէ քարվանսարայում պատսպարվելու նպատակով քաղաքի կենտրոնական մաս գնալ հնարավոր չէր ռազմական դրության պատճառով, իսկ մոտակա տներում գիշերելու մեր հույսերն ի չիք դարձան, քանի որ համաճարակ հիվանդության տարածվելու պատրվակով բնակիչներից ոչ ոք մեզ տեղ չտվեց:

Այդ ամենից հետո մնում էր մի ելք, վերադառնալ գերեզմանոց և այնտեղ եղած փայտաշեն տնակում պատսպարվել մինչև լուսաբաց:

Փարիշանի տունը մոտ էր գերեզմանոցին. մենք մի քանի րոպեից հասանք այնտեղ՝ հույս ունենալով, որ պահակը կթույլատրի մեզ պատսպարվել իր փայտաշեն տնակում:

Չնայած ընդամենը երկու ժամ էր անցել, բայց և այնպես, գիշերվա մթության մեջ մի քանի պտույտ տալուց հետո վերջապես գտանք տնակը, որի դուռը դժբախտաբար փակ էր:

Գերեզմանոցի ամայի շրջապատում բացի փայտաշեն տնակից այլ տներ չկային, որպեսզի պատսպարվեինք:

Այդ պահին երկաթգծի կայարան գնալ բոլորովին հնարավոր չէր, իսկ փորձելու դեպքում անպայման կընկնեինք զինվորական պարեկների ձեռքը ու օրենքը խախտելու համար խիստ պատժի կենթարկվեինք:

Բոլոր ճանապարհները փակ էին քաղաքի կենտրոնական մաս գնալու համար, ուստի մեզ մնում էր մի ելք. ջարդել տնակի դուռն ու գիշերել այնտեղ:

Շատ չարչարվելուց հետո առաջինը ինձ հաջողվեց բարակ տախտակներից պատրաստած դուռը տեղահան անել՝ առանց փակ կողպեքին ձեռք տալու:

Դեն դնելով կիսաջարդ արված դուռը՝ ուրախ-ուրախ ներս մտանք, բայց դժբախտաբար մեր ներս մտնելն ու դուրս գալը մեկ եղավ այնտեղ քնած մարդկանց առկայության պատճառով: Թե ովքեր էին և ինչ հնարքով էին մտել այնտեղ, այն էլ մեծ կողպեքով փակված, գիշերային մթության պայմաններում, առաջին իսկ պահին պարզել հնարավոր չէր:

Եղանակը անձրևային ու ցուրտ էր. դրսում մնալ հնարավոր չէր, ուստի տնակի դռնից կրկին ներս մտնելով՝ Վարթոն փորձեց քնածներին արթնացնել և խնդրել, որ մեզ ներս թողնեն:

– Քեռի՛, քեռի՛,– սկզբում կամացուկ ձայն տվեց ընկերս:

Պատասխան չստանալով այս անգամ ավելի բարձր ձայնով կանչեց.

– Քեռի՛, քեռի՛:

Բայց քեռին համառորեն լռում էր:

– Երևի շատ են խմել, որ չեն պատասխանում,– ասացի ես, ու ինքս էլ ներս մտա:

– Շանորդիները խլացել են, մի լուցկի վառի՛ր,– քրդերեն լեզվով առաջարկեց ընկերս՝ այս անգամ ոտքով հրելով մեր կարծեցյալ խմածներին:

Գրպանումս եղած լուցկու տուփը խոնավացած լինելու պատճառով չէր վառվում, իսկ բորբոքված Վարթոյի ձայնը կտրվում էր քեռի գոռալով:

Շատ չարչարվելուց հետո վերջապես ինձ հաջողվեց տուփում մնացած լուցկիներից մեկը վառել՝ լուսավորելով փոքրիկ տնակի ներսն ու ինչ… մեր կարծեցյալ խմածները մեռած մարդկանց դիակներ էին, որոնք շատ խնամքով փաթաթված էին կտավից կարված պատանքների մեջ:

– Գնանք, սրանց հերն եմ անիծել, ձայնս կտրվեց՝ քեռի կանչելով,– ասաց Վարթոն՝ ձեռքիցս բռնելով, ու դուրս եկանք տնակից:

Այդ սարսափելի տեսարանից հետո մեզ մնում էր տնակից շուտ հեռանալ, բայց անձրևոտ ցուրտ եղանակին ո՞ւր կարող էինք գնալ:

Շատ մտածելու հարկ չեղավ, ընկերս, ինչպես միշտ, այս անգամ էլ ճարպիկ գտնվեց: Նա շատ սառնասրտորեն, առանց իրեն կորցնելու, տեղահան արված տնակի դուռը տեղը դրեց, ու նրա առաջարկությամբ մտանք ցերեկվա մեր փորած գերեզմանափոսի մեջ: Խիստ հոգնած լինելով՝ մի քանի րոպեից հանգիստ քնեցինք, իսկ բարձի փոխարեն գլխներիս տակ դրեցինք անշուք գերեզմաններից մեկի վրա եղած փոքրիկ տապանաքարերից երկուսը:

Ավազախառն թարմ հողի մեջ այնպես էինք քնել, կարծես թե փոսը մեր նախկին սեփական խրճիթը լիներ:

Այդպես խորը քնի մեջ էինք, երբ հանկարծ անձրևից խոնավացած սարսուռ հողը թափվեց մեզ վրա:

Մի պահ ինձ թվաց, թե դա փոսի խոնավացած պատերի փլվածքն էր, բայց երբ լսվեցին շարժվող բահերի զրնգոցները, առաջինը Վարթոն բղավելով արագորեն տեղից վեր թռավ և իմ օգնությամբ մեկ ակնթարթում գերեզմանափոսից դուրս եկավ:

Լսելով ներոջս բղավոցն ու տեսնելով փոսից նրա դուրս թռչելը՝ գերեզմանափորները, դեսուդեն նետելով իրենց բահերը, անմիջապես փախուստի դիմեցին:

Ինքս դեռ փոսի մեջ էի՝ սպասելով Վարթոյի վերադարձին, իսկ նա շարունակում էր բղավել՝ հետապնդելով սրտաճաք եղած գերեզմանափորներին:

Վերջապես վերադարձած Վարթոն հեգնական ժպիտով փոսից ինձ դուրս հանեց և առանց ժամանակ կորցնելու վերցրեց գերեզմանոցից փախչողների գործիքները, ու մենք էլ դիմեցինք փախուստի:

Բարեբախտաբար թաքնվելու հարկ չեղավ, քանի որ մեզ հետապնդողներ նույնպես չկային:

Սարսափելի գիշերվա անձրևոտ եղանակին փոխարինել էր մի պարզ, գեղեցիկ առավոտ: Արդեն երևում էին փողոցներում անցուդարձ անող քաղաքացիները, որոնցից շատերը, իրենց երկրագործական գործիքներն ուսերին դրած, գնում էին դեպի քաղաքի այգիներ, իսկ շատերն էլ շտապում էին շուտ հասնել հարավային ամայի շրջանը՝ խրամատներ փորելու:

Վարթոն ծանոթ էր քաղաքին, նրա փողոցներին. դրա համար էլ առանց որևէ դժվարության շատ շուտ հասանք մեծ շուկան, որն առևտրականների գլխավոր կենտրոնն էր:

Քաղաքի այդ սև շուկայում ամեն ինչ կար՝ հագուստից սկսած մինչև ուտելիքի վերջին տեսակները: Հասկանալի է, որ ապրանք գնում

էին նրանք, ովքեր փող ունեին, ով հարուստ էր, իսկ փող չունեցողները զրկված էին որևէ բան գնելու հնարավորությունից:

Բարեբախտաբար մեր ուսապարկերում դեռ կար Վաղարշապատից բերված մեզ անհրաժեշտ ուտելիքի պաշար, և մենք կարող էինք էլի մի օր ևս մնալ Երևանում. գուցե նոր ծանոթներ գտնեինք: Սակայն հիշելով Փարիշան մորաքրոջ հետ հանդիպելու տխուր պատմությունը՝ ես կտրականապես հրաժարվեցի մնալ Երևանում թեկուզ մի օր:

Վարթոն որբանոցից փախչելուց հետո արդեն հոգնել էր թափառաշրջիկ կյանքից և ցանկություն հայտնեց մնալ Երևանում, իսկ հնարավորության դեպքում մեկնել լեռնային գյուղերից մեկը՝ որևէ աշխատանք գտնելու:

Լսելով ընկերոջս ցանկության մասին, ես իմ ուսապարկում եղած ուտելիքի մնացորդն ու գրպանումս դեռ հնուց մնացած կոպեկները տվի նրան, ինչպես նաև վաճառված երեք բաների գումարը ու նրան համբուրելուց հետո դուրս եկա Երևանից և նույն օրվա մայրամուտին ներկայացա Կարապետ աղային:

ԿԱՐԱՊԵՏ ԱՂԱՅԻ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՂԲԱՆՈՑՈՒՄ

Թուրք զավթիչները, հարձակման անցնելով, ընդհուպ մոտեցել էին Երևանին ու Էջմիածնին, անընդհատ գնդակոծում էին քաղաքի շրջապատում եղած հայ զորքերի դիրքերը, այդ իսկ պատճառով էլ Էջմիածնից գաղթելու Կարապետ աղայի որոշումը ուժի մեջ էր մնում:

Նրա թանկարժեք իրերն ու խանութից հանված բոլոր արժեքավոր բաները վաղուց կապկպված էին և պատրաստի վիճակում դասավորված մեծ ճաշասենյակի անկյուններում և պատի երկարությամբ, այդ թվում նաև կաղնու փայտից պատրաստված մի ծանր պահարան:

Օրվա առաջին կեսն էր: Կարապետ աղան պարտեզում զբաղված էր լիմոնի տնկիներով. հենց այդ պահին էլ տիկին Եսթերը կարգադրեց ինձ մեծ սենյակը մաքրել ավելորդ իրերից ու դուրս թափել աղբանոց:

Այդ պահին դժվար էր պատկերացնել, թե այդ ավելորդ իրերից որն է պետքական, և որը՝ անպետք, հատկապես մեծ պահարանի տակ եղած աղբակույտի նմանվող ցնցոտիները:

Կատարելով Եսթեր խանումի կարգադրությունը՝ ես հիմնովին մաքրեցի սենյակի բոլոր անկյունները, այդ թվում նաև մեծ պահարանի

տակ գտնվող ավելորդ իրերը, լցրի ծղոտե աղբարկղի մեջ ու տարա պարտեզի հեռավոր անկյունը, որտեղ գտնվում էր աղբանոցը:

Թափելով աղբը՝ հանկարծ մի տարօրինակ զրնգոց լսվեց: Ուշադրությամբ նայելով՝ աչքիս ընկավ փոշու ու կեղտի մեջ կորած և թելով փաթաթած մի կապոց: Գետնից վերցնելով աղբի հետ թափված այդ կապոցը՝ ես բնազդաբար սկսեցի փաթեթի կապերն արձակել: Սակայն թելի արձակելն ու ոսկեդրամների ցրվելը մեկ եղավ: Տեսնելով աղբարկղի մեջ ցրիվ եկած դեղին ոսկիները՝ մի պահ դող անցավ մարմնովս:

Կապոցի մեջ եղած դրամների մեծ մասը թափված էր գետնին դրված աղբարկղի մեջ, իսկ մնացածը, թե ինչքան էր կազմում, անգամ չուզեցի հաշվել, մնացել էր կապույտ կտորից կարված տոպրակում, որը իմ ձեռքում էր:

Վայր դնելով կիսով չափ դատարկ տոպրակը՝ ես արագորեն հավաքեցի ցրիվ եկած ոսկիները, լցրի այն քսակի նմանվող միևնույն տոպրակի մեջ ու կապելուց հետո դիմեցի դեպի մեծ սենյակ, ճիշտ այնտեղ, որտեղից վերցրել էի Կարապետ աղայի ողջ հարստությունը:

Սենյակի միջանցք մտնելով՝ քայլում էի ուղղակի դողդողալով, այն էլ ոտքերիս թաթերի վրա, շարժվում էի այնպես, կարծես թե ահից վայր կընկնեմ:

Ներխուժելով մեծ ճաշասենյակ, առանց նախօրոք դուռը ծեծելու ես տիկին Եսթերին տեսա պահարանի մեջ եղած իրերը քրքրելիս, հենց այնտեղ, որտեղից տարել էի տիրոջ կուտակած գանձը՝ ոսկի, ցարերի նկարներով հսկայական քանակությամբ թղթադրամներ և այլն:

Ինձ նկատելով՝ տիկին Եսթերը, գլուխը դուրս բերելով պահարանից, հարցրեց.

– Մաքրեցի՞ր սենյակը, Սևո՛ւկ: Եթե լրիվ մաքրել ես, կարող ես գնալ,– կարգադրեց նա՝ պահարանի դուռը ծածկելով, ու մտավ օրիորդ Կարինեի սենյակը:

Նրա բացակայությունից օգտվելով՝ ես նույն վայրկյանին արկղի մեջ դրված դրամի կապոցը մի ակնթարթում դրեցի միևնույն տեղն ու հոգեպես թեթևացած՝ անմիջապես հեռացա:

Դեպքից հետո հաճախ մտածում էի, թե Կարապետ աղային որտեղից այդքան ոսկի ու թղթադրամ. չէ՞ որ նա ընդամենը մի այգի ուներ ու երեք բաժին հողակտոր, որոնցից ստացված բարիքը ծախսվում էր միայն իր ընտանիքի վրա, ուրեմն այդ ոսկիները կուտակել էր մեծ խանութի առևտրից, այլապես նա այդքան շատ ոսկի չէր կարող ունենալ:

*
* *

Դեպքից բավական ժամանակ էր անցել. ինքս էլ համարյա թե մոռացության էի տվել կապույտ տոպրակի մեջ եղած գանձի պատմությունը: Մի օր սովորական գործով մտա մեծ սենյակ, որտեղ ամուսինները, մեկը մյուսից հեռու նստած, զայրացկոտ հայացքով խոսում էին իրար հետ: Անհարմար զգալով՝ անմիջապես հետ դարձա՝ միաժամանակ ոտս կախ գցելով այն մտադրությամբ, որ տեսնեմ, թե ինչպես կվերջանա նրանց վեճը:

Լսողությունս սրելով՝ ականջիս հասան տիկին Եսթերի հետևյալ խոսքերը.

– Պարո՛ն, ոսկիներդ հո չե՞ն պակասել, որ այդպես զայրացած խոսում ես ինձ հետ:

– Լրիվ են թե՛ ոսկիները և թե՛ թղթադրամները,– պատասխանեց Կարապետը:

– Եթե գանձդ լրիվ է, ապա ինչո՞ւ ես մեղքս առնում,– ասաց տիկինն ավելի զայրացած:

– Կապոցն արձակված է, իսկ թղթադրամները՝ խառնված,– պատասխանեց Կարապետ աղան:

Լսելով ամուսինների վեճը, որի պատճառը ես էի, լրիվ համոզվեցի, որ նրանց խոսակցությունը վերաբերում էր իմ կողմից վերցված ոսկու կապոցին, ուստի առանց տատանվելու դրսից ներս մտա, բայց առաջին պահին խոսել չկարողացա:

– Ի՞նչ կա, Սևո՛ւկ, որևէ բա՞ն ունես ասելու,– հարցրեց Եսթերը:

– Այո՛, ուզում եմ ասել, որ դրամի կապոցը պահարանի տակից սխալմամբ ինքս եմ տարել:

– Ինչո՞ւ էիր տանում,– հարցրեց Կարապետ աղան՝ առաջարկելով ինձ նստել աթոռին:

– Սենյակի անկյուններն ու պահարանի տակը եղած ավելորդ իրերը մաքրելու ժամանակ տարել էի նաև կապոցը:

– Իսկ ինչո՞ւ հետ բերեցիր,– հարցրեց տիկին Եսթերը քմծիծաղով:

– Ավելորդ իրերն աղբանոցում թափելու պահին զգացի, որ կապոցում ծանր բան կա,– պատասխանեցի ես,– կապոցի փաթեթն արձակելու միջոցին նրա պարունակությունը ցրվեց աղբարկղի մեջ: Տեսնելով ոսկիները՝ ստիպված էի հավաքել և կրկին փաթաթելով՝ դրեցի պահարանի տակ՝ ճիշտ այնտեղ, որտեղից վերցրել էի մաքրման ժամանակ:

– Ինչո՞ւ այդ մասին չհայտնեցիր խանումին,– ասաց Կարապետը մեղմացած ձայնով:

– Քանի որ ոչ մի ոսկի չմնաց աղբանոցում, դրա համար էլ չուզեցի ձեզ անհանգստացնել:

– Ապրե՛ս, զավա՛կս, գնա՛, հալալ կաթ ես կերել,– ասաց Կարապետ աղան՝ տալով ինձ հինգ ռուբլի նոր կոշիկներ գնելու համար:

ՕՐԻՈՐԴ ՄԱՐԻՆ ՀԱՄՈԶՈՒՄ Է ԻՆՁ ԱՄԵՐԻԿԱ ՄԵԿՆԵԼ

Կարապետ աղան իր ընդարձակ բնակարանի գողտրիկ սենյակներից երկուսը վարձով էր տվել, որից մեկը Ամերիկայի հյուպատոսարանի աշխատակցուհի օրիորդ Մարիին:

Ասում էին, թե ամերիկուհին 28 տարեկան էր, բայց վերջինս իրեն միշտ քսանից էլ պակաս էր ձևացնում:

Ռուսերենին տիրապետելով՝ օրիորդ Մարին իր գալու առաջին իսկ օրերին ծանոթություն էր հաստատել ռուսախոս բնակիչների հետ՝ նպատակ ունենալով նրանց օգնությամբ հայերենին նույնպես տիրապետել:

Իսկապես, շատ ժամանակ չանցած՝ օրիորդ Մարին սկսեց մտքերը արտահայտել հայերեն անհասկանալի բառերով: Ամերիկուհին շատ ճարպիկ էր. նա հայերեն սովորելու նպատակով կոտրատված խոսում էր բոլորիս հետ, բացի տանտիրուհի Եսթերից, որին տեսնել անգամ չէր ուզում:

Այդպիսով, հայերեն սովորելու միտքն առիթ դարձավ, որ մենք մտերմանայինք միմյանց հետ:

Մեր ծիծաղելի ու դժվարին խոսակցություններից բացի, ես հաճախ կատարում էի նրա հանձնարարությունները, իսկ նա իրեն պատկանող պահեստներից կիսամաշ զգեստներ էր բերում՝ որպես նվեր, միաժամանակ կարեկցանքով խոստանում էր, որ Ամերիկայի Միացյալ Նահանգներ վերադառնալու դեպքում ինձ էլ է տանելու այնտեղ, որտեղ կլինեմ բախտավոր, մանավանդ շատ հարուստ:

Մեր մեջ եղած այդ կարգի հարաբերությունները երկար չտևեցին: Ամառվա մի գիշեր՝ տիրոջ պարտեզը ջրելիս, անսպասելիորեն գտա դրամով լի մի քսակ, որը սխալմամբ հանձնեցի Եսթեր խանումին՝ կարծելով, թե այն պատկանում է Կարապետ աղային: Հաջորդ երկու օրերին

պարզվեց, որ նշված քսակը Կարապետինը չէր. դա Մարիի երկրպագու, ցարական սպաներից մեկի՝ պարոն Քալաշովինն էր: Նրանք վարդերի փարթամ պուրակում գիշերվա իրենց հերթական սիրաբանության ժամանակ թողել էին քսակն այնտեղ, իսկ ես, գտնելով այն, առանց ինձ հաշիվ տալու հապճեպորեն հանձնել էի Եսթեր խանումին:

Տեղի ունեցած այդ անախորժ դեպքից հետո իմ և օրիորդ Մարիի միջև եղած անշահ հարաբերությունները փաստորեն խզվեցին, իսկ դրանից օգտվեց միայն Եսթեր խանումը՝ յուրացնելով ուրիշին պատկանող դրամով լի քսակը, միաժամանակ արգելելով ինձ ամերիկուհու որևէ հանձնարարություն կատարել:

Այդ օրվանից անցել էր ավելի քան մեկ տարի, երբ աշնան մի օր՝ տիրոջ մեծ այգուց վերադառնալու կես ճանապարհին, հանկարծ մի շքեղ կառք կողքիս կանգնեց, որից անմիջապես դուրս եկան օրիորդ Մարին, նրա երկրորդ երկրպագուն՝ ամերիկացի մայոր Կլարկը, և որբանոցի նախկին կառավարիչ պարոն Թորոսյանը:

Կառքից վայր իջնելով՝ նրանք երեքով կանգնեցին խճուղու եզրին ու, ժպիտը երեսներին, աստիճանաբար մոտեցան ինձ: Իհարկե, նրանք երեքն էլ գիտեին հինգ մատի պես, թե ով իրենից ինչ էր ներկայացնում:

Տեսնելով նրանց՝ մի պահ ուզեցի փախչել՝ ենթադրելով թե ինձնից կպահանջեն վարդերի պուրակում գտած Մարիին պատկանող դրամով լի քսակը կամ ամերիկյան հյուպատոսարանի շենքի վրայից դեռ վաղուց գողացած դրոշակը: Սակայն նկատելով հաստափոր մայոր Կլարկի կողքին կապած ատրճանակը՝ սիրտ չարեցի տեղից շարժվել: Շրջապատելով ինձ՝ նրանցից առաջինը խոսեց որբանոցի նախկին կառավարիչ պարոն Թորոսյանը, այն մարդը, որի կողմից երկու տարի առաջ անմարդկայնորեն պատժվեցի ծածանվող զոլավոր մեծ դրոշը գողանալու համար, նա, որի կարգադրությամբ առանց դատ ու դատաստանի բանտարկության ենթարկվեցի, այն էլ որբանոցի շենքի ձեղնահարկի՝ կեղտի մեջ կորած նեղ խցիկում: Ձեռքս բռնելով՝ նա մի կեղծ ժպիտով առաջարկեց նստել կառապանի կողքին, որբանոց գնալու համար:

– Որբանոց չեմ գա,– կտրականապես հրաժարվեցի՝ ազատելով թևս նրա ձեռքից:

– Մի՛ զայրանա, լավ է՝ այստեղ խոսենք,– ասաց պարոն Թորոսյանը՝ նայելով օրիորդ Մարիին, և անգլերեն լեզվով խոսքեր փոխանակեցին միմյանց հետ:

– Ինչի՞ մասին է ձեր խոսակցությունը, պարո՛ն Թորոսյան,– հարցրի ես համարձակորեն:

– Դու վաղուց խոստացել ես օրիորդ Մարիի հետ մեկնել Ամերիկայի Միացյալ Նահանգներ,– հայտարարեց նա և ավելացրեց, թե օրիորդը չորս օրից հետո պետք է մեկնի իր հայրենիք, պատրաստ է նաև իմ վկայականը, որով ես իրավունք ունեմ առանց արգելքի նրա հովանավորության ներքո նույնպես մեկնել:

Լսելով պարոն Թորոսյանի ճառը՝ կարծես թե մի ծանր բեռ մեջքիցս վայր բերին, քանի որ իմ կողմից հափշտակված դրոշակի ու դրամով լի քսակը տիկին Եսթերին հանձնելու մասին որևէ խոսք չեղավ:

Թեթևություն զգալով՝ ես պարոն Թորոսյանին հայտնեցի, որ իրոք խոսք եմ տվել օրիորդ Մարիի հետ մեկնել Ամերիկա, բայց այժմ խնդրում եմ ժամանակ տալ խորհրդակցելու ծանոթներիս հետ:

– Ինձ վաղուց հայտնի է, որ դու ծնողներ չունես, ուստի կողմնակի մարդկանցից խորհուրդ հարցնելն ավելորդ է,– ասաց որբանոցի նախկին կառավարիչը՝ մի արհամարհական սառը հայացք գցելով վրաս, կարծես թե առաջին անգամ էր ինձ տեսնում:

– Ես ունեմ նաև ընկերներ, առանց նրանց խորհրդի Ամերիկա մեկնել չեմ կարող,– կտրուկ պատասխանեցի ես և ցանկացա հեռանալ:

– Խորհրդակցիր ում հետ կամենում ես, սիրելի՛ Սևուկ, բացի Կարապետ աղայի ընտանիքի անդամներից, իսկ տեսակցելուց հետո կգաս մեզ մոտ հյուպատոսարան, որտեղից մենք միասին կմեկնենք Ամերիկա, – եզրափակեց օրիորդ Մարին՝ կարգադրելով կառապանին վերադառնալ հյուպատոսարան:

Բաժանվելով նրանցից՝ ես խռովահույզ փախստականի պես մի քանի րոպեից համարյա թե վազելով հասա տուն ու գնդակի վերք ստացած վիրավորի պես պառկեցի անկողնում՝ ընկնելով խոր մտածմունքների մեջ: Հայրենի երկրից հեռանալու մտորումներով տարված՝ ամբողջ գիշեր համարյա թե չքնեցի, չնայած որ սարսափելի հոգնած էի: Այդ օրվա անսպասելի հանդիպմանը բոլորովին չէի սպասում, քանի որ Ամերիկա գնալու մասին վաղուց էի մոռացել, բայց այդ օրը ամերիկուհի Մարին ինձ միանգամից հանկարծակիի բերեց, ուստի առաջին հանդիպման պահին տատանվելով՝ չկարողացա ուղղակի պատասխան տալ նրան:

Ժամանակը խառն էր ու վատ. որևէ տեղ գնալ չէի կարող, նամանավանդ ընկերներիս կորցնելուց հետո Վաղարշապատում ո՛չ հարազատ ունեի և ո՛չ էլ բարեկամ, իսկ ծանոթներիս վաղուց չէի հանդիպել ու չգիտեի՝ նրանք ողջ են, թե մեռած: Չնայած դրան՝ այնուամենայնիվ չէի կասկածում, որ նրանց մի մասն անպայման նույն քաղաքում կլինի, բայց երկիր ներխուժած թուրք զավթիչների դեմ շարունակվող պատե-

ռազմի այդ օրերին նրանցից որևէ մեկին գտնել ու խորհուրդ հարցնել, այն էլ երեք օրվա ընթացքում, շատ դժվար էր:

Կարապետ աղայի հանձնարարությունը գիշերվա ընթացքում կատարելով՝ վաղ առավոտյան այգի գնալու պատրվակով դուրս եկա փողոց ու ճանապարհս փոխելով՝ մտա քաղաքի կենտրոնական խառնիճաղանջ մեծ շուկան: Որոնելով մտնում էի ամեն տեղ՝ խանութներից սկսած մինչև վերջին արհեստանոցը՝ նպատակ ունենալով գտնել թեկուզ մեկ ծանոթի ու խորհուրդ հարցնել Ամերիկա մեկնելու մասին: Շուկայում որևէ մեկին չհանդիպելով՝ այս անգամ ճանապարհս փոխեցի դեպի գյուղի եկեղեցին՝ հույս ունենալով, որ առավոտյան ժամերգության մասնակիցների մեջ կգտնեմ իմ հին ծանոթ շատախցի Ավետիսին կամ նրա եղբայր Հովիկին, որոնց հետ մտերմական հարաբերություն էի հաստատել դեռ վաղուց՝ առաջին մեծ գաղթի ճանապարհին, և այն շարունակվում էր նաև այժմ:

Եկեղեցու դռնից ներս մտնելով՝ նախ մյուս հավատացյալների ճիշտ օրինակով սկսեցի խաչակնքել ու ծունկի եկա՝ աղոթելով բոլոր սրբերին զորավիգ լինել ինձ ու երկրով մեկ ցրիվ եկած ընկերներիս, որոնց մասին տեղեկություն էլ չունեի: Աղոթքի հետ փորձեցի նաև աչքի տակով զննել շրջապատում կանգնած մարդկանց. միգուցե նրանցից մեկն է շատախցի Ավետիսը, որից կարելի էր բարի խորհուրդ հարցնել ու ստանալ սպառիչ պատասխան: Դժբախտաբար այդ վայրկյանին եկեղեցու ներսի մեծ պատից դեպի մյուսը շարժվել, այն էլ մարդկանց խիտ շարքերի միջով շատ դժվար էր, մանավանդ անպարկեշտ արարք կհամարվեր, ուստի ստիպված էի դուրս գալ ամբոխի միջից՝ սպասելով աղոթքի արարողության ավարտին:

Վերջապես արարողությունն ավարտելուց հետո ինձ հաջողվեց հանդիպել ոչ թե շատախցի Ավետիսին, որին այնքան ուզում էի տեսնել, այլ վանքապատկան մեծ այգու այգեպան Օհան բիձուն, նրան, որի միջնորդությամբ երկու տարի առաջ ծառայության էի ընդունվել Կարապետ աղայի տուն: Չնայած մեր հանդիպումն առավոտյան վաղ ժամի էր, բայց ծանոթս խիստ շտապում էր այգի մտնել, այն էլ վարդապետներից մեկի հետ, այդ պատճառով էլ մեր միջև եղած խոսակցությունը կարճ տևեց:

Օրիորդ Մարիի հետ Ամերիկա մեկնելու իմ հարցին նա պատասխանեց նույնպես կարճ:

– Խորհուրդ չեմ տա, տղա՛ս, հեռու գնալ, հազար ծովերից այն կողմ, ապրել օտարության մեջ, լավ չէ, մանավանդ քեզ պես հայ պատանու համար:

Օհան բիձու այդ կտրուկ պատասխանից խիստ ազդված՝ այլևս դադարեցի կրկին հարցեր տալ ու հրաժեշտ տալով՝ եկեղեցու բակից հեռացա: Օհան բիձու խորհրդից հետո էլ դեռ տատանվում էի. դրա համար էլ որոշեցի ուրիշ մարդկանց էլ հանդիպել ու խորհուրդ հարցնել, որպիսիք էին ճեմարանի նախկին աշակերտ Տաճատը կամ Դանիել վարդապետը. հավատացած էի, որ նրանք ճիշտ ճանապարհ ցույց կտային ինձ:

Հեռանալով եկեղեցու բակից՝ այս անգամ սկսեցի թափառել մեծ վանքի շրջակայքում, ուր տարվա գրեթե բոլոր եղանակներին զբոսնելու էին գալիս քաղաքում բնակվող բոլոր խավերը՝ հարուստներից սկսած մինչև ամենավերջին աղքատը:

Օրը կիրակի էր, մեծ տաճարում արդեն սկսվել էր ցերեկվա պատարագի արարողությունը: Տաճարն ամբողջովին լի էր հավատացյալ մարդկանցով: Փորձ չարեցի դռնից ներս մտնել՝ հավատած լինելով, որ այնտեղ՝ հոծ բազմության մեջ, որևէ մեկին գտնել չեմ կարող, ուստի հին փորձից ելնելով՝ վճռեցի սպասել դրսում մինչև պատարագի արարողության ավարտը: Երկար սպասեցի մոտակա կանաչ պուրակում. վերջապես հավատացյալների բազմությունը դանդաղորեն դուրս եկավ՝ցրվելով տարբեր ուղղություններով, ամեն մեկը՝ իր գործին, իսկ ես հետախույզի սուր աչքերով հասակավոր մարդկանց մեջ զննում էի, թե նրանցից ով է ինձ ծանոթ:

Վերջապես տաճարը լրիվ դատարկվեց: Ալարկոտ քայլերով դուրս էին գալիս վերջին մարդիկ, իսկ ես մտքումս ափսոսում էի, թե իզուր ժամանակ կորցրի: Այդ մտածմունքների մեջ էի, երբ հանկարծ տաճարի գլխավոր մուտքից դանդաղ քայլերով դուրս եկավ մի կորացած մեջքով մարդ, որի դեմքը շատ ծանոթ երևաց, բայց առաջին պահին չկարողացա հիշել, թե որտեղ եմ տեսել նրան: Պատկառելի մարդը, ձեռնափայտին հենված, դանդաղ մոտեցավ մարմարյա տապանաքարերից մեկին ու կանգ առավ: Նրա խոհուն հայացքն ուղղված էր շիրմաքարի վրա փորագրված խաչին ու մեսրոպյան տառերին, ըստ երևույթին աչքերի լույսից խեղճ լինելով՝ չէր կարողանում ընթերցել այն, ինչի համար դիմեց իմ օգնությանը:

– Ո՞ր սրբազանի տապանաքարն է, տղա՛ս,– հարցրեց նա՝ ուշադրությամբ երեսիս նայելով:

– Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկի շիրմաքարն է, քեռի՛ Թորգոմ,– պատասխանեցի ես՝ ուրախ ժպտալով:

– Որտեղի՞ց գիտես իմ անունը, տղա՛ս,– հարցրեց նա և կարծես թե աշխուժացավ:

– Շատ վաղուց:

– Ծերացել եմ, տղա՛ս, հիշել չեմ կարող,– ասաց քեռի Թորգոմը՝ ավելի մոտենալով ինձ:

– Առաջին անգամ Ձեզ հանդիպել եմ մեծ գաղթի ճանապարհին՝ Աբաղու դաշտում, Մասիս լեռան լանջին, իսկ երկրորդ անգամ հենց այստեղ՝ այս տապանաքարի մոտ, որտեղ խորհուրդ տվեցիք համաճարակ հիվանդությունից զերծ մնալու համար հեռանալ վանքապատկան մեծ անտառից:

– Ո՞ր թվին, զավա՛կս,– հարցրեց քեռի Թորգոմը:

–1915 թվականի օգոստոսի ահավոր օրերին,– պատասխանեցի ես:

Մտաբերելով՝ արտասանեցի նաև Մասիս լեռան ստորոտում նրա արտասանած ոգևորիչ խոսքերը.

– Երևացող լայնածավալ տարածությունը մեր հայրենի երկիրն է, որի դաշտերով ու լեռներով դարեր շարունակ մրրիկի նման տրորել ու սրբելով անցել են բազմաթիվ չար ոսոխներ, օտար զավթիչներ ստրկացնելու և բնաջնջելու նպատակով, բայց հայ ժողովուրդը Մասիս, Ալագյազ, Սիփան լեռների պես միշտ հպարտ ու կանգուն է մնացել, նա ապրել է, ապրում է ու դեռ կապրի հավիտյան:

– Հիշեցի, տղա՛ս, հիշեցի, տխուր էին անցած օրերը, լավ չէ նաև այժմ,– ասաց Թորգոմ քեռին և ցանկացավ հեռանալ:

Հին ծանոթս իջնում էր դեպի տպարանի շենք, իսկ ես հետևում էի նրան:

– Որտե՞ղ ես ապրում,– հարցրեց նա՝ մի պահ կանգ առնելով:

– Օթևան չունեմ, քեռի՛ Թորգոմ, ծառայում եմ հարուստների մոտ՝ որպես բատրակ, բայց մտադրվել եմ մեկնել Ամերիկայի Միացյալ Նահանգներ:

– Ո՞ւմ հետ ես մեկնում,– հարցրեց ծանոթս:

– Ամերիկյան հյուպատոսարանի աշխատակցուհի օրիորդ Մարիի հետ:

– Ո՞վ է համոզել քեզ նրա հետ մեկնել:

– Ինքը՝ օրիորդ Մարին, և որբանոցի նախկին կառավարիչ պարոն Թորոսյանը. նրանք համոզում են, թե այնտեղ ես բախտավոր կլինեմ, մանավանդ շատ հարուստ:

– Այդ ո՞ր հայ պանդուխտն է բախտավոր եղել օտարության մեջ, որ դու լինես, տղա՛ս,– կծու ասաց Թորգոմը՝ մռայլ դեմք ընդունելով:

– Քեռի՛ Թորգոմ, խորհո՛ւրդ տվեք, թե ինչ պատասխանեմ նրանց:

– Քեզ համոզող այդ «բարի» օրիորդին և պարոնին ասա՛, թե հազար անգամ լավ է բատրակ լինել հայրենիքում՝ յուրայինների մեջ, քան թե հարուստ օտար երկրում, ու կմերժես նրանց առաջարկը,– կարճ կապեց քեռի Թորգոմը:

Օհան բիձու ու քեռի Թորգոմի այդ իմաստուն խրատներից հետո այլևս ավելորդ համարեցի նոր ծանոթներ գտնել ու կարծիքներ հավաքել, ուստի շնորհակալություն հայտնելով նրան՝ անմիջապես հեռացա:

Թողնելով հին ծանոթիս՝ սկզբում արագ էի գնում, հետո աստիճանաբար դանդաղեցրի քայլերս, մտա ճեմարանի մեծ բակն ու կանգ առա: Նայելով շենքի շրջապատում հավաքված մի խումբ մարդկանց՝ հետաքրքրության համար ես նույնպես սկսեցի դիտել գլխավորապես աստղադիտարանի հրապարակում հրանոթաձիգների զինվորական վարժությունները: Բավական ժամանակ կանգնելով՝ ուղղակի հոգնեցի. այն էր, ուզում էի հեռանալ, հանկարծ մեկը թևիցս ամուր բռնեց. դա Բախշի անունով ղարաբաղցի զինվորն էր իր երկու ընկերների հետ, որոնց տեսել էի մեկ տարի առաջ՝ Սարդարապատի ճակատամարտի օրերին՝ խրամատներում խմելու ջուր և փամփուշտներ մատակարարելիս:

– Ի՞նչ գործ ունես դու այստեղ, մեր փոքրի՛կ զինվոր,– հարցրեց նա՝ ծանոթացնելով իր ընկերների հետ, որոնցից մեկին տեսել էի Կամշլու կայարանի մոտերքում եղած զինվորական հրամանատարական կետում, նա, որի խորհրդով ներկայացանք հրամանատարին մեզ ռազմաճակատ ուղարկելու համար:

– Ծանոթներիս եմ որոնում,– պատասխանեցի:

– Ահա և ես՝ քո ծանոթներից մեկը՝ Բախշի Պետրոսյան. հո չե՞ս հրաժարվում ինձնից,– ծիծաղելով ասաց նա, իր կոշտացած ձեռքով խառնեց գլխիս սև մազերը:

– Ո՛չ, ի՞նչ եք ասում, շատ ուրախ եմ, որ կրկին հանդիպեցի Ձեզ,– ամաչկոտությամբ պատասխանեցի ես՝ ուշադրությամբ նայելով սպիտակ փաթաթանով կապած նրա կախ թևին:

Ղարաբաղցի զինվորի այդ կարգի ջերմ հանդիպումը նախ ուրախություն պատճառեց ինձ և ապա զարմանք. Սարդարապատի խրամատներում մենք չորս ընկերներով նրա հետ ծանոթություն չէինք հաստատել, բացի խմելու ջրի մատակարարումից, իսկ փամփուշտների հանձնումը կռվող զինվորներին կատարվում էր ավագների խիստ հսկո-

ղության տակ, այնպես որ անձնական մոտ ծանոթություն հաստատելու համար ժամանակ էլ չենք ունեցել:

Այդուհանդերձ, ես շատ ուրախ էի, որ վերջապես մի նոր ծանոթ ևս ունեցա, այն էլ անվանի ու հեղինակություն վայելող քաջ զինվոր:

Այդ պահին Բախշի զինվորն ըստ երևույթին շտապում էր դեպի Կարմիր խաչի հիվանդանոց՝ վերքը վիրակապելու, այնուամենայնիվ, նա չզլացավ հարցնել իմ ընկերների՝ Սարգսի, Աղասու և Վարթոյի առողջության մասին, որոնց տեսել էր, բայց անձամբ ծանոթ չէր եղել: Վերջապես ես իմ հերթին համարձակություն ունեցա նրան հարցնելու Ամերիկա մեկնելու վերաբերյալ օրիորդ Մարիի և պարոն Թորոսյանի առաջարկի մասին:

– Ո՞վ է այդ Մարի կոչեցյալ օրիորդը, որի հետ մտադրվել ես Ամերիկա մեկնել,– հարցրեց նա՝ գլուխը շարժելով:

– Ամերիկյան հյուպատոսարանի աշխատակցուհին է, բնակվում է իմ տիրոջ բնակարանում,– պատասխանեցի ես՝ պատմելով նաև որբանոցի նախկին կառավարիչ Թորոսյանի մասին:

– Գործ չունես, ախպե՛ր, դու այդ օրիորդի հետ, այն էլ օտար երկրի աղջիկ, որի ո՛չ ազգանունը գիտես և ո՛չ էլ ճիշտ տարիքը,– ասաց Բախշին լրջորեն և կրկին հարցրեց.

– Ո՞վ է համոզել քեզ նրա հետ մեկնել:

– Հենց ինքը՝ օրիորդ Մարին, և որբանոցի նախկին կառավարիչ պարոն Թորոսյանը, որոնք նախկինում միշտ կարեկցում էին ինձ՝ որպես բատրակի, իսկ այժմ հանդես են եկել խնամակալի դերում:

– Ի՞նչ են խոստացել քեզ այդ «բարեհոգի հովանավորները»,– հարցրեց Բախշին քմծիծաղով:

– Եթե օրիորդ Մարիի հետ մեկնեմ Ամերիկա, ապա այնտեղ ես ազատ կլինեմ ու «բախտավոր», մանավանդ շատ հարուստ,– պատասխանեցի ես:

– Մի՛ հավատա դու օտարի կեղծ խոստումներին. ամերիկուհին առանց որևէ օգուտի չի կարեկցի քեզ և ոչ էլ քո խնամակալը կդառնա,– ասաց Բախշին ու ավելացրեց,– ինչ վերաբերում է բատրակությանը, ապա նրանց ասա՛, որ այժմ մենք բոլորս ներկա տիրող դասակարգի բատրակներն ենք, բայց հեռու չէ այն գեղեցիկ օրը, երբ ինքներս ենք դառնալու այս երկրի տերերը: Հասկացա՞ր, ախպե՛ր,– ասաց ղարաբաղցի զինվորն ու մնաս բարով ասելով՝ ընկերների հետ հեռացավ:

Գնացի տուն ճիշտ այն պահին, երբ Կարապետ աղան և տիկին Եսթերը սրտաբուխ գրկախառնությամբ դիմավորում էին Ռուսաստանից

հենց նոր վերադարձած իրենց որդուն. դրա համար էլ ըստ երևույթին հարկ չհամարեցին հարցնելու, թե ուր էի գնացել և ինչի համար:

Իրենց որդու՝ Գաբրիելի գալու կապակցությամբ տիկին Եսթերը զբաղված էր հյուրեր ընդունելով, իսկ Կարապետ աղան սենյակից բոլորովին դուրս չէր գալիս: Չէր երևում նաև օրիորդ Մարին. մի խոսքով ներսում ժխոր էր տիրում, իսկ դրսում՝ խաղաղություն և դատարկություն: Այդ պայմաններում հաջորդ երեք օրերին ամերիկուհուն հանդիպելուց խուսափելու նպատակով վճռեցի թաքնվել հացթուխ Սիրանուշի տանը՝ Վաղարշակի մոտ, մինչև օրիորդի մեկնելը:

Դժբախտաբար մինչ իմ բացակայության համար թույլտվություն կվերցնեի Կարապետ աղայից, դրսից ներս մտան Մարին, պարոն Թորոսյանը և մայոր Կլարկը: Նրանց գալուց դեռ չէր անցել մի քանի րոպե, երբ սենյակիս դռնից ներս մտավ օրիորդի աղախին տիկին Անթառամը:

– Ի՞նչ է պատահել, Անթառա՛մ քույրիկ,– հարցրի՝ նայելով նրա մռայլված դեմքին:

– Օրիորդ Մարին խնդրում է քեզ իր մոտ գնալ:

– Ինչի՞ համար է կանչում:

– Այսօր մեկնելու է Ամերիկա, որոշել է քեզ էլ հետը տանել,– տխրությամբ պատասխանեց Անթառամ քույրիկը:

– Ինչքան ուզում է, թող կանչի. ես նրա հետ գնացող չեմ,– պատասխանեցի զայրացած:

– Շատ լավ կանես, Սևո՛ւկ ջան, իսկը իմ սրտից խոսեցիր. ի՞նչ գործ ունես դու օտար աղջկա և նրա երկրի հետ, որտեղ գնալ կա, բայց հետ գալ չկա:

Անթառամի ուղեկցությամբ շուտով մտա օրիորդի սենյակ, որտեղ սեղանի շուրջ նստած էին Մարին, պարոն Թորոսյանը և զրուցում էին իրար հետ անգլերեն, իսկ մայոր Կլարկը թերթում էր գրակալի վրա դրված անբարո նկարներով լի ալբոմը՝ հարկ չհամարելով գլուխն անգամ բարձրացնել:

Ինձ տեսնելով՝ կրկին առաջինը խոսեց պարոն Թորոսյանը:

– Պատրաստվի՛ր, Սևո՛ւկ, այսօր մեկնում ենք,– ասաց նա՝ ձեռքում եղած թերթը վայր դնելով:

– Ո՞ւր ենք մեկնելու,– հարցրի՝ անտեղյակ ձևանալով:

– Ամերիկայի Միացյալ Նահանգներ, հենց վաղն առավոտյան. մի՞թե մոռացել ես այդ մասին:

– Գնացողին բարի ճանապարհ, իսկ ես իմ հայրենիքից հեռանալու մտադրություն չունեմ:

Ըստ երևույթին օրիորդ Մարին չէր սպասում իմ կտրուկ պատասխանին. մի պահ կարծես թե այլայլվեց, իսկ հետո ասաց.

– Չէ՞ որ դու այստեղ՝ Հայաստանում, քաղցած ես, մշտապես ուրիշի բատրակ, ինձ հետ Ամերիկա մեկնելու դեպքում կլինես բախտավոր, մանավանդ շատ հարուստ,– ասաց նա՝ կրկնելով միևնույն խոսքերը, ինչ լսել էի նրանից երկու տարվա ընթացքում:

Ամերիկուհու մշտապես կրկնվող առաջարկին պատասխանելու համար մտքումս արդեն սերտել էի քեռի Թորգոմի խրատական խոսքերը, բայց մի պահ լռեցի, մինչև պարոն Թորոսյանը կավարտեր իր խրատական անտեղի ճառը:

– Մտածի՛ր, Սևո՛ւկ, մտածի՛ր, օրիորդ Մարին ցանկանում է քեզ լավություն անել, այն էլ փրկել սովից ու ամենակարևորը՝ բատրակությունից, իսկ դու անգիտակցորեն համառում ես,– հայտարարեց պարոն Թորոսյանը՝ ցույց տալով ինձ այն վկայականը, որով ամերիկուհու հովանավորությամբ պետք է մեկնեի Ամերիկա:

Արդեն խիստ նեղվում էի, և որպեսզի վերջ տրվեին այդ ավելորդ խոսակցություններին, վճռեցի անաղմուկ դուրս գալ սենյակից, բայց օրիորդ Մարին դարձյալ կրկնեց իր առաջարկը մեկնելու մասին:

Ինձ ևս ոչինչ չէր մնում անելու, քան կրկնելու քեռի Թորգոմի հետևյալ խոսքերը.

– Հազար անգամ լավ է բատրակ լինել հայրենիքում՝ յուրայինների մեջ, քան շատ հարուստ օտար երկրում,– ասացի ու կաղնու փայտից պատրաստված սենյակի դուռը հետևիցս ամուր չխկացնելով՝ դուրս եկա:

Այդ խոսակցությունից մի քանի րոպե հետո ամերիկուհին իր մանկլավիկների հետ առաջ ընկած երկու սկաուտների ուղեկցությամբ, ճամպրուկները ձեռքին, առանց որևէ մեկին մնաս բարով ասելու դուրս եկավ Կարապետ աղայի տնից ու ընդմիշտ հեռացավ: Նրանց հետևից դրսի դուռը փակելն ու Եսթեր խանումի իմ դիմաց դուրս գալը մեկ եղավ:

– Սևո՛ւկ, ազատված սենյակի դուռն ու լուսամուտները բա՛ց արա, թող օդը մաքրվի,– ասաց նա և կրկին մտավ մեծ ճաշասենյակ:

ԱՆՍՊԱՍԵԼԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Գարնանային մի գեղեցիկ առավոտ էր: Ձին թամբելով՝ դուրս էի եկել դիմացի նեղլիկ փողոց՝ տիրոջ այգին գնալու, սակայն դեռ ոտքս

ասպանդակին չդրած՝ հանկարծ մեկը լուսադեմի այդ մթնշաղին պոկեց ինձ ձիուց ու պինդ գրկելով՝ սկսեց ագահորեն համբուրել արևից խանձված այտերս:

– Ո՞վ ես,– ջղաձգորեն հարցնում էի ես՝ համառորեն ուզելով պոկվել նրանից:

Զարմանալին այն էր, որ ինձ գրկողն առաջին պահին որևէ ձայն չհանեց. լսվում էր միայն նրա հուզումնալի մորմոքը: Երբ վերջապես հաջողվեց մի կերպ պոկվել նրա կրծքից, հոգնած աչքերիս առաջ մի ծանոթ դեմք երևաց: Ո՞վ կարող է լինել ինձ գրկող անծանոթ մարդը, մտածում էի՝ դեռ բոլորովին ուշքի չեկած: Կրկին բաց-խուփ անելով քնից հենց նոր բացված աչքերս՝ վերջապես տեսա և զգացի հարազատ եղբորս ջերմ համբույրները: Դա կոտորածներից փրկված իմ հարազատ եղբայր Վարդանն էր, որին մինչ այդ անհետ կորած էի համարում, նրան, որին մեկ տարի առաջ թշնամու սև օղակում տեղատարափ կրակի տակ որոնում էի Մասիս լեռան քարոտ լանջերին, Իգդիր քաղաքի նեղլիկ փողոցներում, Սարդարապատի անջրդի ավազուտներում, այն վայրերում, որտեղ օրհասական մարտեր էին մղվում Արարատյան դաշտ ներխուժած թուրք զավթիչների դեմ:

Ահա գարնանային այդ զովաշունչ լուսաբացին, ուղղակի շատ անսպասելի հանդիպելով միմյանց, որքան ուժ ունեինք, գրկել էինք իրար, համբուրում էինք, արտասվում ու բաց չէինք թողնում իրար՝ զարմանք պատճառելով փողոցով անցնող անծանոթ մարդկանց, որոնք հետաքրքրասիրությամբ դիտում էին հուզումնալի տեսարանը:

Այն ահասարսուռ կոտորածից փրկվելով և մեծ գաղթից հետո՝ 1917 թվականի սկզբին, Վարդանը, Աննայի ընտանիքի հետ հայրենի ծննդավայր վերադառնալով, ժամանակավորապես բնակություն է հաստատում Վան քաղաքում: Դժբախտաբար պատերազմական գործողությունների այդ փոթորկալի շրջանում Վան քաղաքը՝ որպես կռվախնձոր, շարունակ ձեռքից ձեռք էր անցնում, իսկ 1918 թվականի սկզբներին շրջապատվում է թուրքերի կողմից: Մահվան այդ սպառնալիքից դուրս գալու համար քաղաքում բնակվող հայ բնակչության մի զգալի մասը, ճեղքելով թշնամու շրջապատման օղակը, անընդհատ մարտեր մղելով, Պարսկաստանի արևմտյան սահմանի վրայով անցնում է Իրաք և այնտեղ էլ բնակություն հաստատում Բասրա քաղաքի շրջանում. այդ ընտանիքների թվում էր նաև Աննայի ընտանիքը:

Այդ նույն ժամանակ էլ Վարդանը՝ որպես կամավոր, գտնվում էր Վանսկի գնդում՝ նույնպես վտանգավոր ծուղակի մեջ, բայց հայ մար-

տիկները, իրենց անձնազոհ քաջությամբ երկար ժամանակ դիմադրելով թշնամու գերազանց ուժերին, կարողանում են կոտորածից փրկել հազարավոր խաղաղ բնակիչների, մարտնչելով հասնում են մինչև Օրգով, որտեղ միանում են հայկական զորքերին: Թողնելով Օրգովի ամրությունները՝ գունդը փոխադրվում է ուրիշ ռազմական հատված: Որոշ ժամանակ այնտեղ մնալով՝ մեկնում են Դիլիջան: Այդտեղ դաշնակցական կառավարության ղեկավարները թուրք փաշաների պահանջով զորացրում են հայ զինվորներին, այդ թվում նաև Վարդանին[69]: Զորացրվելուց հետո թափառումներից հոգնած՝ Վարդանը վերադառնում է Էջմիածին, որը 1915 թվի մեծ գաղթից հետո համարվում էր իսկական հայրենիք:

Էջմիածնում մենք երկու եղբայրներով բառիս լայն իմաստով ոչինչ չունեինք՝ ո՛չ օթևան և ո՛չ էլ ապրելու համար որևէ միջոց:

Այնուամենայնիվ, Վարդանը երկար անգործ չմնաց և ոչ էլ քաղցած:

Իր առողջությամբ, մանավանդ աշխատասիրությամբ Վարդանը շատ շուտով աչքի ընկավ և ընդունվեց մի հարուստի մոտ աշխատելու որպես այգեպան, բայց նա էլ առանց վարձատրության: Ճիշտ այնպես, ինչպես ինքս էի աշխատում ավելի քան երեք տարի, և դա մեծ առավելություն էր համարվում, մանավանդ այն ժամանակվա պայմաններում: Մենք չնայած ապրում էինք մեկս մյուսից հեռու, բայց սերտորեն կապված էինք իրար, հաճախ հանդիպում էինք՝ միասին երազելով մեր ապագայի մասին:

[69] Հեղինակը նկատի ունի 1918 թ. հունիսի 4-ի Բաթումի պայմանագրով Հայաստանին պարտադրված կետը՝ հայկական զորքի զորացրումը:

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ[70]

Աբաղա – Համանուն դաշտն ընդգրկող գավառակ Վանի նահանգի հյուսիսում՝ Ծաղկանց և Վասպուրականի լեռնաշղթաների միջև: Կենտրոնը նույն անունը կրող բերդաքաղաքն էր՝ Բերկրի (այժմ՝ Բանդիմահու) գետի վերին հոսանքի շրջանում:

Ալաշկերտ (պատմական՝ Վաղարշակերտ, թրք.՝ Թոփրախկալե) – Գյուղաքաղաք, Էրզրումի նահանգի Բայազետի սանջակի համանուն գավառի կենտրոնը: Գտնվում էր Էրզրումից շուրջ 150 կմ արևմուտք՝ Արածանու (Արևելյան Եփրատ, Մուրադ) վերին ավազանն ընդգրկող Բագրևանդի կամ Ալաշկերտի դաշտի հյուսիսային հատվածում, Հայկական պար լեռնաշղթայի արևմտյան ճյուղավորումը կազմող Սուկավետ (Ջրաբաշխ) լեռների ստորոտին: Կառուցել և անվանակոչել է Հայոց Վաղարշ Ա Արշակունի արքան (117-140 թթ.): Կարնո առաջնորդարանի 1914թ. վիճակագրության տվյալներով Ալաշկերտի հայերի թիվը կազմում էր 160 տուն (1400 բնակիչ): Հայերն ունեին եկեղեցի (Սուրբ Աստվածածին) և վարժարան (Բագրատունյան): Գյուղաքաղաքի արևմտյան կողմում պահպանվել էին Վաղարշակերտի բերդի ավերակները: Ալաշկերտի հայերի հիմնական մասը 1914 թ. վերջին կարողացել է տեղափոխվել Արևելյան Հայաստան և փրկվել կոտորածից:

Աղբակ (Մեծ Աղբակ, քրդերեն և թուրքերեն՝ Սերալբակ) – Գավառ Վանի նահանգի Հաքքարիի (Հեքյարի) սանջակում (գավառում), Տիգրիսի վտակը համարվող Մեծ Զաբ գետի վերին ավազանում: Հնում եղել է Արծրունյաց նախարարության տոհմական տիրույթը: Կենտրոնը՝ Բաշկալա (պատմական Հադամակերտ) բերդաքաղաքն էր:

Անկշտանց (Անգշտանց) – Գյուղ Վանի նահանգի Հայոց ձոր գավառում, Վան քաղաքից 45 կմ հարավ-արևելք, Հայոց ձոր (Խոշաբ) գետի ձախափնյակում: Վանի առաջնորդարանի 1914 թ. վիճակագրության տվյալներով ուներ 67 տուն հայ բնակիչ: Գյուղն ուներ Սուրբ Ստեփանոս անունով եկեղեցի:

---

[70] Գրքում հիշատակվող տեղանունների բառարանը կազմել է պատմաբան և քարտեզագիր Գեղամ Բաղալյանը:

Անգղ – Գյուղ Վանի նահանգի Հայոց ձոր գավառում, Վան քաղաքից շուրջ 25 կմ հարավ, Հայոց ձոր (Խոշաբ, այդ հատվածում նաև՝ Անգղաջուր) գետի գետաբերանի մոտ: Վանի առաջնորդարանի 1914 թ. վիճակագրության համաձայն ուներ 108 տուն հայ բնակիչ (այլ տվյալներով՝ 150 տուն): Գյուղն ուներ եկեղեցի (Սուրբ Գևորգ Զորավար): Մոտակայքում գտնվում էր Անգղավանքը (Սուրբ Աստվածածին):

Աստվածաշեն – Գյուղ Վանի նահանգի Հայոց ձոր գավառում, Վան քաղաքից շուրջ 40 կմ հարավ-արևելք՝ Հայոց ձոր (Խոշաբ) գետի աջափնյակում: Գյուղի մոտ է բարձրանում նշանավոր Հայկաբերդը, որի մերձակայքում Հայկ նահապետը հաղթանակ տարավ բռնակալ Բելի դեմ: Ըստ Մովսես Խորենացու, Հայկաբերդի բարձունքում էլ Հայկը հուղարկավորեց Տիտանյան Բելի աճյունը: Վանի առաջնորդարանի 1914 թ. վիճակագրության տվյալներով Աստվածաշենն ուներ 48 տուն (այլ տվյալներով՝ 61 տուն) հայ բնակիչ: Գյուղում կար եկեղեցի (Սուրբ Ստեփանոս Նախավկա):

Արջաձոր – Գտնվում է Վանի նահանգի Նորդուզ գավառի Դիմ հայաբնակ գյուղի հարևան Արջ (պատմական Արճուճք) բնակավայրի մոտ:

Արջասար – Լեռնագագաթ (բարձությունը՝ 2602 մ) Վանի նահանգի Նորդուզ գավառում, Դիմ և Արջ գյուղերի միջև:

Արատենց (նաև՝ Հարատենց, Նանիկ) – Գյուղ Վանի նահանգի Հայոց ձոր գավառում, Վան քաղաքից շուրջ 50 կմ հարավ, Հայոց ձոր (Խոշաբ) գետի աջ ափին: Ժողովրդական ավանդության համաձայն գյուղի մոտակայքում Հայկ նահապետը նետահարել է («հարատել է») բռնակալ Բելին, որտեղից էլ՝ գյուղանունը: Վանի առաջնորդարանի 1914 թ. վիճակագրության տվյալներով ուներ 40 տուն (այլ տվյալներով՝ 51 տուն) հայ բնակիչ: Գյուղում կար Սուրբ Լուսավորիչ անունով եկեղեցի:

Բաբանիս (նաև՝ Պապանս, Բաբանց) – Գյուղ Վանի նահանգի Նորդուզ գավառում՝ վերջինիս հարավային հատվածում՝ Դիմից արևելք: Ժամանակին հայաբնակ էր, սակայն XIX դ. կեսերից հաստատվել էին քրդեր:

Բանդիմահու (պատմական Բերկրի, Առեստ) – Գետ Արևմտյան Հայաստանում, Վանա լճի ավազանում: Սկիզբ է առնում Ծաղկանց լեռների հարավային ստորոտից՝ Թոնդրակ հրաբխից ոչ շատ հեռու:

Բաշկալա(ե) (պատմ. Հադամակերտ) – Բերդաքաղաք Վանի նահանգում, Վան քաղաքից շուրջ 120 կմ հարավ-արևելք՝ Մեծ Զաբ գետի

(Տիգրիսի օժանդակներից) աջափնյակում: Պատմական Մեծ Աղբակ (ավելի ուշ՝ Աղբակ) գավառի կենտրոնը: XX դ. սկզբին Վանի նահանգի հարավային ընդարձակ հատվածն ընդգրկող Հաքքարիի (Հեքյարի) սանջակի կենտրոնն էր: Վանի առաջնորդարանի 1914 թ. վիճակագրության տվյալներով ուներ 200 տուն 1645 հայ բնակիչ (ողջ բնակչությունը՝ 1100-1200 տուն): Հայերն ունեին Սուրբ Ստեփանոս անունով եկեղեցի, կից՝ դպրոց: Բաշկալեում բնակվում էին նաև քրդեր, հրեաներ, թուրքեր:

Բերկրի – Գյուղաքաղաք Վանի նահանգի Բերկրի-Աբաղա գավառում, վերջինիս կենտրոնը: Գտնվում էր Վան քաղաքից ավելի քան 80 կմ հյուսիս-արևելք, Վանա լիճ թափվող Բանդիմահու (Բերկրի) գետի ձախ ափին: Միջնադարյան Հայաստանի նշանավոր քաղաքներից էր: Հռչակված էր հատկապես մոտակա Սուրբ Ստեփանոս (Տեր Հուսկան որդի) վանքը: XX դ. սկզբին նկատելիորեն անշքացել էր: Վանի առաջնորդարանի 1914 թ. վիճակագրության տվյալներով Բերկրին ուներ 25 տուն հայ բնակիչ (շուրջ 200 անձ): Կար եկեղեցի (Սուրբ Աստվածածին):

Գյավաշ (Գավաշ, պատմ. Ռշտունիք) – Գավառ Վանի նահանգում, Վանա լճի հարավարևելյան ափին: Համապատասխանում է Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի (նահանգ) Ռշտունիք գավառին, որի կազմի մեջ էին նաև Աղթամար և Առտեր (պատմական Արտի) կղզիները: Կենտրոնը միջնադարում նշանավոր Ոստան քաղաքն էր: Գավառի անունն առաջացել է Ռշտունիքի հնագույն կենտրոն Կավաշուց կամ Գավաշ բերդաքաղաքից, որի ավերակները գտնվում էին Ոստանից շուրջ 12 կմ արևմուտք: Վանի նահանգի առավել հայաշատ գավառներից էր (1914 թ. շուրջ 12000 մարդ): Գյավաշի առավել նշանավոր հայկական հուշարձաններից էին Աղթամարի Սուրբ Խաչ և Նարեկավանք հռչակավոր մենաստանները, Կապուտկող բերդը: Գավառի տարածքում էին գտնվում նաև Սպիտակվանքը, Սուրբ Թովմա, Սուրբ Հարություն, Սուրբ Հակոբ (Ընձակի վանք), Եղիշե պատմիչի գերեզմանն ամփոփող Չարահան Սուրբ Նշան վանքերը: 1915թ. Գյավաշի հայ բնակչության հիմնական մասը, դիմելով ինքնապաշտպանության, կարողացել է փրկվել կոտորածից և տեղափոխվել Արևելյան Հայաստան:

Դաշբուռուն – Գյուղ Արևելյան Հայաստանում, Երևանի նահանգի Սուրմալուի գավառում՝ Արաքսի աջափնյակում: Գտնվում էր Իգդիր գյուղաքաղաքից շուրջ 20 կմ հյուսիս-արևելք: Մոտակայքում նշմարվում էին ուրարտական Մենուախինիլի քաղաքի ավերակները: Դաշբու-

ռունը նույնացվում է Հայկից սերող Փառոխի կողմից կառուցված Փառախոտ (Փառոխոտ) հնագույն բնակավայրի հետ, որի շուրջը տարածվող «որսի և զորավարժանքների» դաշտը կոչվում էր Փառական: 1914թ. գյուղն ուներ շուրջ 2400 հայ բնակիչ, որոնք ունեին եկեղեցի և դպրոց: Քեմալական Թուրքիայի կողմից Սուրմալուի գավառի բռնազավթումից հետո Դաշբուռունը հայաթափվել է:

Դիմ (Տիմ) – Գյուղ Վանի նահանգի Նորդուզ գավառում, Արևելյան Տիգրիս (Բոհտան) գետի ակունքների շրջանում, Հաքքարիի (Այգառք) լեռների հյուսիսային ստորոտին: Վանի առաջնորդարանի 1914 թ. վիճակագրության տվյալներով ուներ 37 տուն հայ բնակիչ (այլ տվյալներով՝ մինչև 50 տուն): Գյուղում կար եկեղեցի (Սուրբ Աստվածածին):

Էրեմերի (նաև Էրեմերու) – Գյուղ Վանի նահանգի Հայոց ձոր գավառում, Վան քաղաքից շուրջ 60 կմ հարավ-արևելք, Հայոց ձոր (Խոշաբ) գետի ձախ ափին: Վանի առաջնորդարանի 1914 թ. վիճակագրության տվյալներով ուներ 85 տուն հայ բնակիչ: Գյուղն ուներ եկեղեցի (Սուրբ Աստվածածին): Շրջակայքում էին գտնվում Ծիծաղաբեր (Ծիծաղենից) Սուրբ Աստվածածին վանքը, Սպարտավազի ավերակ եկեղեցին, Կռասար բլուրն իր հնություններով:

Էրզրում (Արզրում, պատմական՝ Կարնո քաղաք կամ Թեոդուպոլիս) – Նշանավոր քաղաք Մեծ Հայքի Բարձր Հայք աշխարհի (նահանգ) Կարին գավառում, Քարվոր և Ծաղկավետ (Դումլու) լեռների հարավային փեշերին փռված Կարնո դաշտում, Արևմտյան Եփրատի (Կարասու) ձախափնյակում: Էրզրումի (Կարնո) նահանգի կենտրոնն էր: Կարնո առաջնորդարանի 1914 թ. վիճակագրության տվյալներով ուներ շուրջ 14000 հայ բնակիչ: Հռչակված էր իր ուսումնական հաստատություններով (առաջին աշխարհամարտի նախօրեին ունեին ավելի քան 2000 աշակերտ), որոնց շարքում առանձնանում էին Սանասարյան և Արծնյան վարժարանները: Քաղաքի Միաբան Սուրբ Աստվածածին մայր եկեղեցին միաժամանակ Կարնո թեմի առաջնորդանիստն էր: 1909-1914 թթ. Էրզրումում հրատարակվել են մի շարք հայկական պարբերականներ: Քաղաքի հայ բնակչությունը գրեթե ամբողջությամբ բնաջնջվել է 1915 թվականին:

Թաղ (Շատխու թաղ) – Գյուղաքաղաք Վանի նահանգում, արևելյան Տիգրիս (Բոհտան) և վերջինիս աջակողմյան Սևտիկին (Սուրբ Տիկին) վտակի միախառնման վայրում: XVII-XIX դդ. կեսերին եղել է հայկական կիսանկախ մելիքության, իսկ XX դ. սկզբին՝ Շատախի գավառի

կենտրոնը: Զուտ հայաբնակ Թաղի բնակիչները հմուտ գզրարներ և ջուլիակներ էին: 1914 թ. գյուղաքաղաքն ուներ 250-300 տուն բնակիչ, 2 եկեղեցի՝ Սուրբ Աստվածածին և Սուրբ Ստեփանոս, վարժարան, տպագրվում էին հայկական թերթեր: Թաղի հայերը 1915 թ. շուրջ 50 օր հերոսաբար դիմադրել էին թուրք և քուրդ ջարդարարներին ու հաղթանակ տարել:

Իգդիր – Գյուղաքաղաք Արևելյան Հայաստանում, Երևանի նահանգի Սուրմալուի գավառում, վերջինիս կենտրոնը: Գտնվում էր Արարատյան դաշտի հարավային հատվածը կազմող Իգդիրի դաշտի (Սեբեոսի մոտ՝ Փառական դաշտ) կենտրոնում, Արաքսից շուրջ 10 կմ հարավ: Նույնացվում է հնագույն հայկական Ցոլակերտ բնակավայրի հետ, որն ըստ Մովսես Խորենացու հիմնադրել է Հայկից սերող «կայտառ» Ցոլակը: 1914 թվականին ուներ շուրջ 5600 հայ բնակիչ: Գյուղաքաղաքն ուներ 2 դպրոց (տղաների և աղջիկների), երկդասյա քաղաքային ուսումնարան, 2 եկեղեցի (գլխավորը՝ Սուրբ Սահակ): Գյուղաքաղաքը 1921 թ. զավթել է քեմալական Թուրքիան:

Իլ – Գյուղ Վանի նահանգի Բաշկալայի գավառակում՝ Բաշկալա գյուղաքաղաքից հարավ՝ Տիգրիսի աջակողմյան Ականից ջուր (Ակեռ-ջուր) վտակի հովտում:

Իլիս – Գետակ Աղբակ գավառի տարածքում, Մեծ Զաբ գետի աջակողմյան Ականից-ջուր վտակի օժանդակը: Այդպես է կոչվել Իլ գյուղի մոտակայքով հոսելու համար:

Խաթունարխ – Նույնանուն 2 գյուղ (Վերին և Ներքին) Արևելյան Հայաստանում՝ Երևանի նահանգի էջմիածնի գավառում: Խոսքը հավանաբար վերաբերում է այժմ Գայ վերանվանված Ներքին Խաթունարխին (ՀՀ Արմավիրի մարզում):

Խանասոր (Խանաձոր) – Գյուղ Վանի նահանգի Աղբակի գավառում, Բաշկալա բերդաքաղաքից հյուսիս-արևելք՝ ժամանակակից թուրք-իրանական սահմանից ոչ շատ հեռու: Խանասորը հռչակվել է 1897 թ. հուլիսին հայ ֆիդայիների կողմից կազմակերպված արշավանքի շնորհիվ, որի ընթացքում ջախջախվեց Վանի 1896 թ. հայկական զինված ջոկատների դավադիր ոչնչացմանն ակտիվորեն մասնակցած քրդական մազրիկ ցեղը:

Խեք (պատմ. Հայք) – Գյուղ Վանի նահանգի Հայոց ձոր գավառում, Վան քաղաքից շուրջ 62 կմ հարավ-արևելք, Հայոց ձոր (Խոշաբ)

գետի աջ ափին: Ըստ Մովսես Խորենացու, հիմնադրել է Հայկ Նահապետը՝ ի նշանավորումն Բելի դեմ տարած հաղթանակի: Վանի առաջնորդարանի 1914 թ. վիճակագրության տվյալներով ուներ 34 տուն հայ բնակիչ: Գյուղն ուներ եկեղեցի (Սուրբ Սարգիս): Շրջակայքում գտնվում էին կիսավեր Խեքուց (Սուրբ Գևորգ) և Սուրբ Աբրահամ վանքերը:

Խոշաբ – Միջնադարյան բերդաքաղաք Վանի նահանգում: Գտնվում էր Վան քաղաքից շուրջ 60 կմ հարավ-արևելք՝ Հայոց ձոր կամ Խոշաբ գետի աջ ափին: XVI-XIX դդ. կեսերին համանուն իշխանապետության կենտրոնն էր: Մինչև 1840-ական թթ. գերազանցապես հայաբնակ էր (1000-1500 տուն): Ավերվելով օսմանյան բանակի կողմից՝ վերածվեց քրդաբնակ անշուք գյուղի: XX դ. սկզբին համանուն գավառի կենտրոնն էր:

Խոսպ – Գյուղ Վանի նահանգի Հայոց ձոր գավառում, Վան քաղաքից շուրջ 40 կմ հարավ՝ Հայոց ձոր (Խոշաբ) գետի ձախափնյակում: Վանի առաջնորդարանի 1914 թ. վիճակագրության տվյալներով ուներ 52 տուն հայ բնակիչ: Գյուղում կար 2 եկեղեցի (Սուրբ Հակոբ և Սուրբ Հարություն):

Ծաղկասար – Լեռնագագաթ Վանի նահանգի Նորդուզ գավառի հարավային սահմանագլխին: Հավանաբար ժամանակակից Կալամերիկ լեռն է (բարձ. 3250 մ), որի հյուսիսարևելյան փեշերին է գտնվում Դիմ հայաբնակ գյուղը:

Կալահյան (նաև՝ Քալխիան) – Քրդաբնակ փոքրիկ գյուղակ Դիմից շուրջ 5 կմ հարավ՝ Հաքքարիի (Այգառքի) լեռներում:

Կաղպի (Կաղբի) – Գյուղ Վանի նահանգի Շատախ գավառում, Թաղ գյուղաքաղաքից 10 կմ հարավ-արևմուտք՝ Արևելյան Տիգրիսի (Բոնտան) աջակողմյան Վանից-ջուր (Սոքանից ձոր) վտակի ափին, միջնադարյան Ակոռովանքի մոտ: Շատախի երևելի բնակավայրերից էր, եղել է հայկական մելիքության կենտրոն: Վանի առաջնորդարանի 1914 թ. վիճակագրության տվյալներով ուներ 66 տուն (այլ տվյալներով՝ մինչև 90 տուն) հայ բնակիչ: Գյուղում կար 2 եկեղեցի (Սուրբ Խաչ և Սուրբ Գևորգ): Բնակիչները մասնակցել են Շատախի 1915 թ. հերոսամարտին:

Կամշլու (նաև՝ Ղամըշլի) – Գյուղ Արևելյան Հայաստանում, Երևանի նահանգի Սուրմալուի գավառում՝ Արաքս գետի աջակողմյան Ագարակ վտակի ափին, նշանավոր Կողբ գյուղաքաղաքի մոտ: XX դ. սկզբին թրքաբնակ էր:

Կապուտակ – Լճակ Նորդուզի Դիմ գյուղի շրջակայքում:

Կարմրաքար (թրք. Կզըլթաշ) – Գյուղ Վանի նահանգի Հայոց ձոր գավառում, Վան քաղաքից շուրջ 30 կմ հարավ, Հայոց ձոր (Խոշաբ) գետի ձախափնյակում: Վանի առաջնորդարանի 1914 թ. վիճակագրության տվյալներով ուներ 51 տուն հայ բնակիչ: Գյուղում կար Ամենափրկիչ (կամ Սուրբ Երրորդություն) անունով եկեղեցի:

Կարս (բարբառային՝ Ղարս) – Նշանավոր քաղաք Մեծ Հայքի Վանանդ գավառում, Կարսագետի (պատմական՝ Ախուրյան) աջ ափին, հնագույն Երևյալ դաշտում (այժմ՝ Կարսի սարահարթ): 929-1061 թթ. եղել է Բագրատունյաց թագավորության մայրաքաղաքը: 1878 թվականից Ռուսական կայսրությանն անցած Կարսի մարզի կենտրոնն էր: 1914 թ. ուներ ավելի քան 30000 բնակիչ, որից շուրջ 25300-ը՝ հայեր: Վերջիններս ունեին 3 եկեղեցի (Սուրբ Նշան, Սուրբ Աստվածածին, Սուրբ Գրիգոր), վարժարան՝ Լուսավորչյան (տղաների), Ս. Շուշանկյան (աղջիկների), թեմական և քաղաքային ծխական դպրոցներ: Կարսի պատմական հուշարձաններից նշանավոր են առ այսօր կանգուն Սրբոց Առաքելոց եկեղեցին (կառուցվել է Աբաս Բագրատունի արքայի կողմից X դ. 1-ին կեսին), միջնադարյան բերդը (Կարուց բերդ), Վարդանի կամուրջը: Կարսը 1918 և 1920 թթ. զավթել են թուրքերը: Քեմալական Թուրքիային է անցել 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի խորհրդա-թուրքական անօրինական պայմանագրով:

Հաթնին (Խաթիան) – Հավանաբար խոսքը վերաբերում է Վանի նահանգի Նորդուզի գավառի Խաթիան քրդաբնակ գյուղին, գավառակենտրոն Մարվանայից 15 կմ հյուսիս-արևմուտք (Շատախի սահմանագլխին):

Հայոց ձոր (բարբառային՝ Խավուձոր) – Գավառ Վանի նահանգում, ընկած էր Վան քաղաքից հարավ՝ ընդգրկելով համանուն (նաև՝ Խոշաբ) գետի ստորին ավազանի գետահովիտը մինչև լիճ: Կենտրոնը Կղզի գյուղն էր՝ Հայոց ձոր գետի և հռչակավոր Շամիրամի ջրանցքի (Մենուայի ջրանցք) միախառնման մոտ: Գավառի անունը, ըստ Մովսես Խորենացու, առաջացել է Հայկ նահապետի կառուցած Հայք դաստակերտից, որի մոտ Հայոց անվանադիր հերոսը սպանեց բռնակալ Բելին՝ ջախջախելով բաբելական զորքը: Հայոց ձորը Վանի նահանգի ամենահայաշատ գավառներից էր: 1914 թ. հայ բնակչության թիվը հասնում էր 15000-ի: Հայոց ձորի հայերն ամենագործուն կերպով մասնակցել են Վասպուրականի 1915 թ. ապրիլյան հերոսամարտին: Հայոց ձորի

լճափնյա Խորգոմ գյուղում է ծնվել աշխարհահռչակ նկարիչ Արշիլ Գորկին (Ոստանիկ Ադոյան, 1904-1948):

Հիրճ (նաև՝ Հիռչ) – Գյուղ Վանի նահանգ Հայոց ձոր գավառում, Վան քաղաքից շուրջ 30 կմ հարավ, Հայոց ձոր (Խոշաբ) գետի ձախ ափին: Ըստ ժողովրդական ստուգաբանության, այստեղ էր հաստատվել Բելից հալածված Կադմոսը, որը, ստանալով պապի՝ Հայկ նահապետի հաղթանակի լուրը, «հրճվել» է, որտեղից էլ՝ գյուղի անունը: Վանի առաջնորդարանի 1914 թ. վիճակագրության տվյալներով Հիրճը ուներ 30 տուն հայ բնակիչ: Գյուղը նշանավոր էր իր Սուրբ Ստեփանոս գեղեցիկ եկեղեցիով և Սուրբ Աստվածածին վանքով:

Հոսթայան (Հոստիան) – Գյուղ Վանի նահանգի Նորդուզ գավառում, Դիմ գյուղից շուրջ 3 կմ հյուսիս-արևմուտք, Արևելյան Տիգրիս (Բոհտան) գետի ձախափնյակում: Վանի առաջնորդարանի 1914 թ. վիճակագրության տվյալներով ուներ 27 տուն հայ բնակիչ: Գյուղում կար Սուրբ Ստեփանոս անունով եկեղեցի:

Մոսուլ (հին հայկական աղբյուրներում՝ Մուծղ) – Հնագույն քաղաք Հյուսիսային Միջագետքում, Տիգրիս գետի աջ ափին: Այժմ՝ Իրաքի կազմում:

Նորգյուղ (Նորգեղ) – Գյուղ Վանի նահանգի Հայոց ձոր գավառում, Վան քաղաքից շուրջ 19 կմ հարավ-արևելք, հռչակավոր Վարագ լեռնագագաթից հարավ, Հայոց ձոր (Խոշաբ) գետի աջակողմյան Տոնի գետակի ափին: Գավառի առավել խոշոր բնակավայրերից էր (որոշ տվյալներով՝ մինչև 200 տուն հայ բնակիչ): Գյուղն ուներ Սուրբ Ստեփանոս Նախավկա անունով եկեղեցի, դպրոց:

Նորդուզ (նաև՝ Քարբահ) – Գավառ Վանի նահանգում, Արևելյան Տիգրիսի (Բոհտան) վերին ավազանում: Համապատասխանում է պատմական Վասպուրական աշխարհի Անձևացիք գավառին: Վերջինիս միջնադարյան կենտրոն Նորբերդ ամրոցի անվան աղավաղումից էլ առաջացել է Նորդուզ գավառանունը (պարսկերեն՝ «դեզ» կամ «դուզ»-«բերդ»): Կենտրոնը՝ Մարվանա (Մերվանա) ավան: XIX դ. կեսերից Նորդուզի տարածք ներթափանցած քրդական ցեղերի ճնշման տակ Նորդուզի հայերի զգալի մասը ստիպված հեռացել է Աբաղա: Սրանով հանդերձ XX դ. սկզբին մեծաթիվ հայեր էին ապրում գավառի Դիմ, Շամանիս (Շամանց), Նորաբեր, Սկունիս, Կողան, Հոսթայան, Հեքյան, Աղսին (պատմ. Աղզի), Փիրբադալան և այլ գյուղերում (3500-4000 բնակիչ): Նորդուզի տարածքում էին գտնվում Հոգվոց (Սուրբ Աստվածածին), Առազի (Սուրբ Հովհաննես) և Ալեկանի հայկական վանքերը:

Շամանիս (հայերեն՝ Շամանց, Շահմանց) – Գյուղ Վանի նահանգի Նորդուզ գավառում, Արևելյան Տիգրիս (Բոհտան) գետի աջակողմյան Շամանից-ջուր վտակի ափին՝ Ագրակ լեռան ստորոտին: Նորդուզի առավել հայաշատ գյուղերից էր (1914 թ. շուրջ 60 տուն բնակիչ): Գյուղն ուներ Սուրբ Ստեփանոս անունով եկեղեցի, դպրոց:

Շամիրամի ջրանցք – Վանի թագավորության (Ուրարտու) նշանավոր արքա Մենուայի կողմից Ք.ա IX դ. վերջին կառուցած ջրանցքի ժողովրդական անվանումը: Գործում է առ այսօր, ունի 55 կմ (այլ տվյալներով՝ 72 կմ) երկարություն: Սկիզբ է առնում Հայոց ձորի հարավից՝ Վերին Մժնկերտ գյուղի մոտակայքից և, ոռոգելով ավելի քան երկու տասնյակ բնակավայրերի (այդ թվում՝ Վան քաղաքի) դաշտերն ու այգիները, թափվում Վանա լիճ:

Շատախ – Գավառ Վանի նահանգում: Ընկած էր Արևելյան Տիգրիս (Բոհտան) գետի վերին ավազանում՝ ներառելով վերջինիս բազմաթիվ վտակների ձորահովիտները (տեղացիների բարբառով՝ «գյալի»): Արևելքից անմիջապես սահմանակից էր Նորդուզին: Տարածքն ամբողջովին լեռնային է, տեղ-տեղ՝ անտառապատ: Կենտրոնը՝ Թաղ (Շատխու թաղ) գյուղաքաղաք: Շատախում մինչև XIXդ. կեսերը պահպանվել էին կիսանկախ հայկական մելիքություններ, որոնցից առավել նշանավորը գավառի միջնադարյան կենտրոնատեղի Շատախ բերդի շրջակայքում իշխող Շատախցիների իշխանությունն էր: Շատախը Վանի նահանգի առավել հայաշատ գավառներից էր, ուր հայերը մինչև 1915 թ. կազմել են բնակչության գերակշիռ մեծամասնությունը (10000-12000 բնակիչ): 1915 թ. Շատախի հայությունը հերոսական ինքնապաշտպանությամբ ոչ միայն փրկվեց ջարդից, այլև կարողացավ ազատագրել իր բնօրրանը թուրքական լծից:

Ոզմի (Ոզիմ, Ոզմ) – Հայաբնակ ավան Բիթլիսի (Բաղեշ) նահանգում: Նախապես Մոսկի գավառի կազմում էր, սակայն XIX դ. 2-րդ կեսին փոխանցվել է հարևան Բարվարիին: Գտնվում էր Մոկս գյուղաքաղաքից շուրջ 20 կմ հարավ-արևելք Տիգրիսի (Բոհտան) աջակողմյան Մոկաց-ջուր (պատմ. Որբ) վտակի ձախ ափին: Հռչակված էր իր քաջասիրտ բնակիչներով, որոնք գրեթե բոլորն էլ հմուտ արհեստավորներ էին (գզրարներ կամ «լպուտներ»): Հարևան քրդական ցեղերի դեմ մշտական կռիվներ մղելով՝ ոզմեցիները կարողացել էին պահպանել իրենց ինքնավար վիճակը: Խիզախությամբ աչքի էին ընկնում նաև տեղացի կանայք, որոնք վարժ էին զենքի օգտագործման և ձիավարու-

թյան մեջ: 1914 թ. Ոզմին ուներ շուրջ 200 տուն բնակիչ: Ավանի շրջակայքում պահպանվել են հայկական բազմաթիվ բերդերի (Գումռվա, Մարամոտի, Սմբիտա, Սուրբ Ատոմ), վանքերի (Խումարի վանք, Սուրբ Գևորգ) մնացորդներ: Գյուղն ուներ եկեղեցի (Սուրբ Ստեփանոս), դպրոց: 1915 թ. ոզմեցի ռազմիկները նշանավոր հայդուկ Լաթոյի գլխավորությամբ մասնակցել են Շատախի հերոսամարտին:

Ոչխարանց – Գյուղ Վանի նահանգի Հայոց ձոր գավառում, Վան քաղաքից շուրջ 30 կմ հարավ-արևելք, Հայոց ձոր (Խոշաբ) գետի աջ ափին: Գյուղանունը կապված է Սրբոց Ատովմյանց նահատակման հետ: 1914 թ. վիճակագրության տվյալներով ուներ 14-15 տուն հայ բնակիչ: Գյուղն ուներ եկեղեցի՝ Սուրբ Ատովմյանց անունով (կոչվել է նաև Ոչխարանից վանք):

Պլթենց (նաև՝ Բլթենց) – Գյուղ Վանի նահանգի Հայոց ձոր գավառում, Վան քաղաքից 38 կմ հարավ: Վանի առաջնորդարանի 1914 թ. վիճակագրության տվյալներով գյուղն ուներ 65 տուն հայ բնակիչ: Գյուղում էին գտնվում Սուրբ Ստեփանոս եկեղեցին և Սուրբ Հովհաննես վանքը:

Սարայ (Սարա) – Ավան Վանի նահանգի Մահմուդի գավառում, վերջինիս կենտրոնը: Գտնվում էր թուրք- պարսկական սահմանագլխի մոտ, Վան քաղաքից շուրջ 180 կմ հյուսիս-արևելք, Արճակ (Մահմադիկ) գետի ակունքների շրջանում: XX դ. սկզբին ուներ ավելի քան 150 տուն բնակիչ, գերազանցապես՝ ասորիներ: Ապրում էին նաև հայեր: Տեղի, ինչպես նաև շրջակա բնակավայրերի հայերն ու ասորիները 1914 թ. վերջին ենթարկվել են կոտորածի: Փրկվածներն ապաստանել են Արևելյան Հայաստանում:

Սարիղամիշ (Ներքին Սարիղամիշ) - Գյուղաքաղաք Կարսի մարզում, Կարս քաղաքից շուրջ 50 կմ հարավ-արևմուտք՝ Կարսագետի (պատմական՝ Ախուրյան) ակունքների մոտ ձգվող Մեծրաց (Սողանլուղ) անտառաշատ լեռների շրջանում: Վանյան (ուրարտական) սեպագիր արձանագրություններում հիշատակվող հնագույն Ախուրիանի բնակավայրն է: 1914 թ. ուներ ավելի քան 3000 բնակիչ՝ գերազանցապես հայեր: Սարիղամիշում կային հայկական եկեղեցի և դպրոց: Սարիղամիշը 1921 թ. զավթել է քեմալական Թուրքիան:

Սեբաստիա (նաև՝ Սվազ) – Նշանավոր քաղաք պատմական Փոքր Հայքի տարածքում, Սև ծով թափվող Հալիս գետի ափին: Հայաշատ էր

(1914 թվականին՝ շուրջ 30000 բնակիչ): Հայերն ունեին 6 եկեղեցի, 10-ից ավելի դպրոց ու վարժարան, մի քանի վանքեր, որոնցից նշանավոր էր մոտակայքում Վասպուրականի Սենեքերիմ թագավորի կողմից XI դ. կառուցված Սուրբ Նշանը: Սեբաստիայում առաջին աշխարհամարտի նախօրյակին տպվել են մի շարք հայկական պարբերականներ:

Սիփան (Նեխ-Մասիք) – Լեռնագագաթ Վանա լճից հյուսիս-արևմուտք, Հայկական լեռնաշխարհում՝ երկրորդն իր բարձրությամբ (4434 մ):

Վան (Տուշպա) – Հայոց հինավուրց մայրաքաղաքը: Հիմնադրել է Վանի թագավորության (Ուրարտու) առաջին արքան՝ Սարդուրին (Ք.ա. 835-825 թթ.): Գտնվում է Վանա (Բզնունյաց) լճի հարավարևելյան ափամերձ շրջանում, հռչակավոր Վարագ լեռնագագաթի արևմտյան ստորոտին: XX դ. սկզբին Վանի նահանգի կենտրոնն էր: Վանն Արևմտյան Հայաստանի առավել հայաշատ քաղաքներից էր (1914 թ. 28000-30000 հայ բնակիչ կամ քաղաքի բնակչության 75%-ը): Քաղաքում կային 10 գործող եկեղեցի, 2 վարժարան (Կեդրոնական և Երամյան), 6 թաղային դպրոց՝ ավելի քան 4500 աշակերտով և 259 ուսուցիչ: XX դ. սկզբին քաղաքում տպագրվում էին բազմաթիվ պարբերականներ, որոնցից առավել հայտնիներն էին ՀՅԴ «Աշխատանք» և Սահմանադիր ռամկավար ազատական կուսակցության «Վան-Տոսպ» թերթերը: Վանը հայ ազատագրական շարժման կարևորագույն կենտրոններից էր: 1896թ. համիդյան ջարդերի ժամանակ քաղաքի հայերը դիմել են հերոսական ինքնապաշտպանության: 1915 թ. ապրիլի 7-ից մայիսի 3-ը Վանի հայությունը կրկին դիմելով հերոսամարտի, կարողացել է հաղթել թշնամուն, որը հարկադրված նահանջել է: Մայիսի 6-ին քաղաք են մտել ռուսական զորքերն ու հայ կամավորները: Ստեղծվել է Վանի հայկական նահանգը՝ Արամ Մանուկյանի գլխավորությամբ: Ցավոք, նույն թվականի հուլիսին ռուսական բանակի անսպասելի նահանջի հետևանքով տեղի հայերը հարկադրված գաղթել են Արևելյան Հայաստան, իսկ Վանը հիմնովին ավերվել է:

Վասպուրական – Մեծ Հայքի ամենամեծ աշխարհը (նահանգ): Ընդգրկում էր Վանա լճից (Բզնունյաց ծով) մինչև Արաքսի (Երասխ) գետահովիտն ընկած ընդարձակ տարածքը: Ըստ «Աշխարհացույց»-ի (5-րդ դ.) ուներ 35 գավառ: Վասպուրականի հիմնական՝ արևմտյան մասում հետագայում ձևավորվել է Վանի նահանգը: 1914 թ. վերջին ուներ 219000-ի հասնող հայություն, որի մեծ մասը հերոսական ինքնապաշտպանության շնորհիվ փրկվեց, իսկ հետո տեղափոխվեց Արևելյան Հայաստան:

Վարագա սար (Վարագ) – Լեռնագագաթ (3250 մ) Վան քաղաքի արևելյան մասում: Հին հայերի առավել նշանավոր սրբավայրերից մեկն էր (անունը կապվում է Վահագն (Վարհագն) աստծո պաշտամունքի հետ): Քրիստոնեություն ընդունելուց հետո լեռան վրա կառուցվեց հռչակավոր Վարագավանքի համալիրը (Վարագա Սուրբ Նշան, որը կազմված էր 7 եկեղեցիներից): Այժմ հիմնովին ավերված է (պահպանվել է միայն փոքր հատվածը):

Ուրթուկ (նաև՝ Հուրթուկ, պատմական Որտոք) – Գյուղ Վանի նահանգի Հայոց ձոր գավառում, Վան քաղաքից շուրջ 80 կմ հարավ-արևելք, Հայոց ձոր (Խոշաբ) գետի աջ ափին բարձրացող Աբլասաթ լեռան հարավային ստորոտին: Գավառի ամենահեռավոր բնակավայրն էր՝ Խոշաբի սահմանագլխին (այդ իսկ պատճառով երբեմն հիշվում է վերջինիս կազմում): 1914 թ. ուներ 60 տուն հայ բնակիչ: Գյուղում կար եկեղեցի:

Փիրբադալան (Փիրբադալա) – Գյուղ Վանի նահանգի Նորդուզ գավառում, գավառակենտրոն Մարվանայից շուրջ 10 կմ հյուսիս-արևմուտք, Արևելյան Տիգրիսի (Բոհտան) ձախափնյակում: Գավառի ամենամեծ գյուղն էր: 1890 թ. Փիրբադալանն ուներ 120 տուն հայ բնակիչ, որոնց զգալի մասը, քրդական բռնությունները չտանելով, հեռացել է Աբաղա: 1914 թ. գյուղում ապրում էր շուրջ 50 տուն հայ: Ուներ եկեղեցի Սուրբ Սարգիս անունով:

Ֆարաշին (նաև՝ Փառաշին) – Գյուղ Վանի նահանգի Հաքքարիի (Հեքյարի) սանջակում, համանուն լեռների հարավային ստորոտին՝ Արևելյան Խաբուր գետի Ֆարաշին վտակի ակունքների մոտ: Համանուն գավառակի կենտրոնն էր: Ասորաբնակ էր:

Օրգոֆ (նաև՝ Օրգով, պատմական Որկովի) – Գյուղ Արևելյան Հայաստանում՝ Երևանի նահանգի Սուրմալուի գավառում: Գտնվում էր Իգդիր գյուղաքաղաքից 15 կմ հարավ՝ Հայկական պար լեռնաշղթայի հյուսիսային ստորոտին, ոչ շատ հեռու Չընգլի լեռնանցքից: XX դ. սկզբին քրդաբնակ էր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 5
Հրաչյա Գևորգյանի ուշագրավ հուշագրությունը 7
Քելե՛, լաո՞ (*Միլվա Կապուտիկյան*) 12
Մեր գյուղը 13
Մայրիկիս մահը (1906) 16
Օտարության մեջ (1912) 19
Քուրդ բեկի ամառանոցում (1913) 25
Օտար քաղաքում 34
Առևանգում 41
Վերադարձ հայրենի գյուղ 46
Արջի որս 50
Թուրք ոստիկանների պատիժը 60
Հարսանյաց նվերներ 73
Հարկահավաքներ 85
Գոմեշների կռիվը 90
Իմ խորթ մայրը 102
Արոր 109
Հնձվոր 116
Ամառանոցում (1914) 119
Արևի խավարում 123
Առաջին համաշխարհային պատերազմը 133
Ահավոր գիշեր 158
Հետապնդում 176
Երդում եղբորս գերեզմանին 185
Վերջին անգամ տաք ջրերում 193
Գերության մեջ 201
Փախուստ 206

Վրեժ 223
Հանդիպում 230
Մեկ օր ամայի գյուղում 240
Հայոց ձորում 249
Մեծ գաղթի ճանապարհին 310
Հայ հեծյալի օգնությունը 325
Առաջին անգամ մեծ տաճարում 350
Անտեսանելի թշնամի 359
Նոր օթևան 377
Խառը միջավայրում 382
Դպրոցում 386
Որբանոցում 394
Ծուղակի մեջ 431
Արշավ դեպի Օրգով 439
Օգնություն վիրավոր զինվորին 440
Ռազմական գումակում 444
Սարդարապատի ճակատամարտում 447
Վերադարձ 455
Մի գիշեր գերեզմանոցում 467
Կարապետ աղայի հարստությունը աղբանոցում 471
Օրիորդ Մարին համոզում է ինձ Ամերիկա մեկնել 474
Անսպասելի հանդիպում 483
Տեղանունների բառարան 486

ՀՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՀԱՎՈՐ ՕՐԵՐԻ ԻՄ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

(վեպ – հուշագրություն)

Հրատ. խմբագիր՝
Տեխ. խմբագիր՝
Համակարգչային ձևավորող՝ **Ն.Օ. ԽՆԿԻԿՅԱՆ**

Ստորագրված է տպագրության 2014 թ.:
Չափսը՝ 60x84 1/16 : Տպաքանակ՝ :
Պատվեր՝ :

500

89-րդ Թամանյան դիվիզիայի հրամանատարական կազմը: Առաջին շարքում աջից չորրոչդը՝ Հայկական 89-րդ Թամանյան դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանը: Երկրորդ շարքում աջից երկրորդը՝ մայոր Հրաչյա Գևորգյանը

Հրաչյա Գևորգյանը Հայրենական մեծ պատերազմի ժամանակ

Հրաչյա Գևորգյան, 1985թ., մայիս, Երևան

Հրաչյա Գևորգյանի կնոջ՝ Գոհարի գերդաստանը (Վան, 1915թ.)

ગુજરાતી સાહિત્ય પરિષદ પત્રિકા ૧૮મું વર્ષ, ૨૦૪૧ ના દીપોત્સવી અંકમાં પ્રગટ થયેલ નિબંધ

"આ સાંભળી મેં પૂછ્યું કે ઉંઝાનું નામ ઉંઝા કેમ પડ્યું? ત્યારે તેઓશ્રીએ જણાવ્યું કે ઉંઝાનું મૂળ નામ ઉમાનગર હતું. ઉમાનગર એટલે ઉમાનું નગર, ઉમાનું ગામ. ઉમા એટલે પાર્વતી. પાર્વતી એટલે શિવની પત્ની. શિવ એટલે કલ્યાણ. કલ્યાણ એટલે સુખ. સુખ એટલે આનંદ. આનંદ એટલે ઉંઝા. ઉંઝા એટલે ઉમાનગર. ઉમાનગર એટલે કલ્યાણનગર. કલ્યાણનગર એટલે સુખનગર. સુખનગર એટલે આનંદનગર. આનંદનગર